Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

**Правила пользования**
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

**О программе**
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

Digitized by Google

A. or. 7880 ^o^

Digitized by Google

Digitized by Google

ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

Digitized by Google

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

ՀԱՆ Ի ՀԱՅ

Հ. ԱՐՍԷՆ ԿՈՄԻՏԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1864

Digitized by Google

Bayerische
Staatsbibliothek
München

Digitized by Google

Digitized by Google



G. Bernasconi inc.

ՀՈՄԵՐՈՍ

Digitized by Google

# ՀՈՄԵՐՈՍ

Անունս այս մեծ եւ փառաւորեալ յերկից դողցես հազարաց ամաց հետէ, եւ երբեւ Ոգի իմն եւ Դիք բանաստեղծութեան գրեթէ պաշտեցեալ յամենայն հանճարեղաց ազգաց եւ ազանց, ոչ է անիրաւ ինչ որ եւ մտացածին յարձարձանք եւեթ՝ որում 'ի քնաց հանճարեալ իցեն քերթուածքն երկոքին դիւցազնականք, զԻլիականն ասեմ եւ զՈդիսականն, որպէս ախորժեցին եւ կարծեցին ուսուցանել յանուրջս քննարանք ոմանք յետին դարուցս, եւ այսօր անկեալք են յայնմ աթոռոյ: Զի պատճառանք նոցին եւ բարուրք ոչ զօրեցին կալ առաջի փայլար փութեան գիտաւորութեան մտաց քերթողին, արարուածոյն եւ ոճոյ բովանդակ քերթուածոցն ծայր 'ի ծայր, զորս նկատեն 'ի նոսա՝ մանաւանդ յԻլիականն՝ խորագէտն ողջամիտ եւ անմոլար բանիբունք, եւ չփոխեն 'ի մտացն: Ասաց իսկ Կիկերոն. Որպէս տիեզերք յայտ առնեն զմի ոմն արարիչ, նոյնպէս Իլիականն՝ զմի որ քերթողահայր բանին:

Բայց կեանք եւ վարք առնս մեծի, որպիսի ինչ աւանդեալ գտանի 'ի հնոցն ինչ մատենս, լի են առասպելեօք եւ չփարանութեամբք, մինչեւ չգիտելոյ մեզ ցայսօր ժամանակի եւ ոչ զհայրենի աշխարհն եւ զքաղաք ծննդեան իւրոյ. Եօթանց քաղաքաց Հելլադայ 'ի հակառակս մտեալ 'ի միմեանց յափշտակել զպարծանս խանձարրոց նորա, որ հաւանելի է թէ Զմիւռնիոյ պատշաճի՝ լինել նմա տառիացի, եւ Լուկիանոսի յայն մտանէնադրի առնել զնա մինչեւ 'ի խորս անդր եւ առնել Տիգրան բաբելոնացի:

Անծանօթութիւն է եւ զժամանակէ կենաց նորա, եւ հաւանական եւեթ կարծեօք կարգի 'ի հնոց եւ յարդեաց իբրեւ տասն դարուք յառաջ քան զհասարակ Թուականս:

Թող զԻլիական եւ զՈդիսական ստոյգ քերթուածս նորա, որ ճարտարագոյն եւ գեղեցկագոյնք են, մանաւանդ առաջինն, վկայեալ ցայսօր 'ի դիւցազներգութիւնս՝ 'ի վաղնջուց արանց բանաստեղծաց կարգեալս մինչեւ առ մեզ, եւ օրինակ համարեալ եւ կաղապար արկեալ արուեստի վիպասանութեան, ընծայեն նմա եւ այլ ինչ ինչ յորոց կանն առ մեօք, բայց չեն ստոյգ գիտակաւ:

Երկոքին քերթուածքդ, պատուել Յունական աշխարհին, որպէս և բարբառ նոցին վկայէ, ընդ երկար ժամանակ առ ասիական Յոնան միայն ծանօթ էին եւ յերգ առեալ 'ի դրուագս դրուագս՝ Հագներգութեան անուամբ, որոց եւ երգիչքն՝ Հագներգուք կոչէին: Լիկուրգոս նախ, Սպարտացւոցն մեծ օրէնդիր, դարձ արարեալ 'ի տարաշխարհական ուղեւորութեանցն՝ եբեր զայնս 'ի բուն Հելլադա, եւ առ Պիսիստրատեամբք յԱթէնս յօդեալ եւ յեռեալ ընդ միմեանս դրուագքն բառ մտաց Սոլոնի իմաստուն օրէնդրի ազգին՝ 'ի մի ամբողջ մարմին պատշաճեցան, որպէս կանն ցայսօր. յորս թուի՝ սակաւ ինչ ուրեք եւեթ խառնուրդ իմն եկամուտ ասս անդ լեալ հաւանաբար 'ի յետնոց ոմանց Հոմերականնացն կոչեցելոց, կամ 'ի Հագներգուաց:

Digitized by Google

Այլա յետոյ զկնի գալուց բազում ազգ աւագաց, ընդ որս և Արիստոտէլ Հանճարոյն չնաշխարհիկ, աշխատ եղեն յընտրել զգրել եւ յարդարել զնոսա, մանաւանդ ըստ գրչագրական մասին։ Հուսկ ուրեմն զնոյն արարին եւ Ալեքսան-դրացի ճարտարքն քննաբանք, Արիստարքոս մանաւանդ, որք եւ 'ի քսան եւ 'ի չորս Հոմերդութիւնս կամ երգս բաժանեցին զիւրաքանչիւր քերթուածն ըստ թուոյ յունական ալփաբետաց ժամանակին. զորոց եւ զանուանսն եդին միում միում յերգոց անուն, որովք եւ յորջորջին իսկ մինչեւ ցայժմ 'ի հելլէն բնագրին. յաւելեալ առաս հակիրճ 'ի գլուխս նոցին սուղ ինչ բանիւք եւ զերեւելի պատմութիւնս անցնիւր երգոց։ Եւ զոգցես իմն ահա սոյն այս օրինակ է զոր ունիմքս ցայսօր։

Քերթուածքն երկոքին թարգմանեցան յառաջ քան զմեզ եւ 'ի լոյս ելին նոյնաձայնիկ եւ նմանաձայնեալ տաղաչափութեամբ գալոյցն վերջնոց։ Երկամտութիւն՝ որ ունի զիւրն յարգ 'ի քիմս ճաշակելեաց, եւ մեզ չէ ինչ անկ խօսել զնմանէ, կամ դատաւոր նստել առաջարկից այլոց։ Սակայն առ 'ի մերկանալ լաւութեամբ զմիտս մեր եւ զյոգունց բանասիրաց ազգայնոց, յանձն առաք զհետեւել 'ի հայցուածս նոցին, եւ նորոգ յեղուլ 'ի հայ զիլիականն՝ ըստ Հոյնէի եւ Վոլֆեայ առաջնութեանցն՝ մերով այժմ ծանօթ գիւտագիտական չափովք նախնեացս, որպէս եւ խնդրեցին, եւ նովին հելլէնացի հին պարզութեամբ եւ բնական ճշգրտութեամբ բնագրին ըստ կարի լեզուիս եւ չափոցս. կամ թերեւս աւելի իցէ՝ ըստ մերում կարի, որ իցէ՛ թէ առաւել լինէր։ Անշուշտ համարեալ թէ այս շնորհք հոմերական քերթութեան, ըստ ըղձից անուշատ խնդրելեացն, հաճոյագոյն ըն-ծայեսցի սիրելեաց պարզ եւ մերկ բնութեան. զոր կամիլն եւ կարծել մերովս իւիք 'ի լաւագոյն փոխել կամ պաճուճել կորուսանել է զբնիկ նախնական զեղն եւ զինքնազարդ վայելչութիւն։ Նա զի եւ երկար մտադիւր պարապումն յայս քերթուած անմահական՝ ինչ ինչ առաւել իմն կամ այլազգագոյնս տայցէ ար-դեօք իմանալ եւ թարգմանել յունիկն մատաղերժ հմտից, եւս եւ յետ նոցին իսկ եւրոպէականացն մեկնչաց եւ թարգմանչաց. զոր եւ բանիբուն հելլէնագիտաց եւ անաչառ քննաբանից իցէ հաւաստել։ Ցուցանք չկարօտել այլ եւս ինչ 'ի չքմե-ղելիս լինելոյ յանդգնութեանս՝ որ մղեաց զմեզ յայս թարգմանութիւն։

Եւ զայդ ոչ 'ի սագիւս ինչ ասեմք կամ եղեւ ակնարկել, այլ 'ի ցուցանել՝ թէ միայ ինչ միշտ աղաւաղեցան 'ի խուզել եւ 'ի վեր բերել՝ 'ի խորս յաղթանդարեան վաղեմի եւ զիւցազին քերթուածոյ արեւելանշանն Հոմերի, եւ 'ի վկայել բազ-մահմուտ Քերթողահօրն մերում, որոյ կանխեալ եւ կնքեալ է, թէ «Մեծն Հոմերոս այնքան կարաց գերազանցել զամենեքումբք՝ ծայրացուցանելով զին-քեան հմտութիւն, մինչ զի 'ի վերջէ եկեալքն եւ ոչ լոկ անգամ արժանաւո-րապէս նորայն կարացին լինել քերթութեանց, թող թէ զուգահաւասար նմա գտանիլ»։ — Բայց առ սմին եւ զՈրատիոսն 'ի դէպ իցէ թերեւս յիշել զմեծա-այնքանեայ քերթողի եւ վարժապետի, թէ ուրեք երբեք եւ զիւցազնացեալն քաջն Հոմեր նիրհէ իբրեւ զաստուածսն իւր։

Մեկնութիւն եւ տեղեկութիւն եւ ոչ մի ունի թարգմանութիւնս. զի յի-մանալ եւեթ 'ի զուարճութիւն՝ 'ի խորս եւ 'ի սքանչումն, ամենայն հնութեանցն պարզ քան զամենայն է Հոմերոս, մանաւանդ 'ի կրկնելն եւ յերեքնել զմտա-ւորական ընթերցումն, զի նա իսկ ինքն զինքն մեկնէ։ Իսկ առ 'ի քննութեամբ հասանելոյ ճշգիւ զառակս յամենայն 'ի խորս նորա հանճարոյն, պէսպէս գե-ղեցկութեանց եւ թաքուն գիտելեաց, եւ խրթնանց բայից եւ բանից թարգմանու-թեանն, երկարայայտէս ճառից պէտք իցեն, նա մանաւանդ մատենից. զորս՝ ամ եւ իցէ զիւրագիւտ առ մեզ, բայց արժանաւոր՝ անդրագա եւ ոչ ամենեցուն ինչ առ 'ի պէտս պատկանաւոր կամ կարեւոր։

# ՊԱՏՃԱՌՔ ԻԼԻԱԿԱՆԻՆ

Կայր 'ի մէջ ազգին Հելլենացւոց, թէ Աղեքսանդրոս Պարիս, որդի Պրիամոսի արքային Տրովադայ, առեւանգեալ զՀեղինէ կին Մենելաւոսի արքային Լակեդեմոնի եւ Սպարտայ, պատճառս կամ բարուրս տուեալ յարոյց 'ի վրէժխնդրութիւն զինակակից Հելլենս, որ առ քինու տասնամեայց ինչ զրկանաց եւ նորոյն՝ տասնամեայ պաշարմամբ եւ պատերազմաւ աւերեցին զՏրոյա, այն իսկ է Իլիոն կամ Իլիոս, յորմէ առնու զանուն իւր այս վէպ հոմերական, զոր եւ ոչ իւիք օրինօք մարթ է Եղիոն ասել, բայց եթէ հնով իմն մրիպակաւ:

Աւանդութեամբ կարգեալ գայր մինչեւ ցՀոմերոս, իբրեւ ընդ ամս երկերիւր՝ կամ թէ քաջ՝ երեքարիւր, եւ անցք իմն անցեալ 'ի 'ի տասներորդ ամի անդ ընդ բանակն հելլենական, այսպիսի ինչ:

Ագամեմնոն արքայ Միկենաց եւ արգոսացւոց, եղբայր Մենելաւոսի, զօրագլուխ ընտրեալ եւ իշխանապետ բանակին, թշնամանէ զրկանօք իւիք զԱքիլլեւս՝ զպայազատն քաջ 'ի զօրավարաց, զպատուանի դիւցազն անպարտելի, որոյ սրտմտեալ ընդ անիրաւութիւնն եւ ընդ անարգանս պատուոյն՝ երդնու մի եւս մտանել 'ի մարտն, եւ մնայր 'ի խորանս իւր: Այնմ զպատճառ լեալ տրոյացւոց, խրախուսեալ հարկանեն զՀելլենս՝ մինչ մերձ յայրել լինել զնաւս նոցա: Յայնժամ Աքիլլեայ յեւեց իւրոյն ինքնին զանգիտեալ, եւ զիջեալ եւս յաղաչանս Պատրոկլի սրտի սիրելւոյ իւրոյ քաջին՝ տայր զնա իւրով զինուն 'ի կռիւն. սակայն մեռանի անդ Պատրոկլոս 'ի քաջէն Հեկտորէ: Աքիլլեւս՝ անողոքելին առ ամենայն փարելի մաղթանս իշխանացն, զարթնու 'ի վրէժ քինու արեան սիրելւոյն, անկանի 'ի տրոյացիսն, հարկանէ կոտորէ վանէ, մինչեւ սպանանէ զՀեկտոր՝ զպարսպէն քաղաքին, որով եւ մերձեալ իմն համարի անդ տրոյական պատերազմն: Բայց սա խոնարհեալ յաղերս ծերունւոյ հօր նորա Պրիամոսի՝ շնորհէ նմա ընդ փրկանաց զմարմին որդւոյն: — Դիւցազունք մասունք մե-

Digitized by Google

պէս այսպէս աւանդեալ կային յազգին, հանդերձ նկարագրօք բարուց անուանի դիւցազանցն ։

Հոմերի Թողեալ զայլ եւս վէպսն՝ զառաջինս եւ զվերջինս, զայս անցս եւեթ՝ իբրեւ յիսուն եւ երկուց կամ երից աւուրց՝ ամփոփ նիւթ խաղոց դիւցազնական տաղիցն ըստ օրէնս քաջի Ճարտարի, որ ոչ պատմիչ է, այլ քերթող եւ միմոսան՝ ստեղծիչ եւ յօրինիչ այնպէս բնական եւ պերճապանծ գեղեցկութեանց, որոց եւ գանձ իսկ է այս քերթուած սքանչելի, ծնունդ՝ պարզ մտաց եւ եռանդուն հանճարոյ. ընդ նոսին եւ պատմական եւ իմաստասիրական աւանդից շտեմարան, Ճշգրիտ նկարուք բարուց՝ հանգամանաց դիտաւորութեանց՝ կրօնից եւ օրինաց դիւցազնական դարուցն նախնեաց ։ Հանդերձ այդոքիւք՝ լի է սա միանգամայն եւ բարոյական խրատուց եւ հրահանգաց իմաստիւք եւ օրինակօք՝ որոց մտադիւրութեամբն ընթեռնուցուն, վկայեալ յԱրիստոտելէ եւ յՈրատիոսէ մինչեւ 'ի սուրբն անգամ Բասիլիոս, ուրեք պարզ եւ ուղիղ զխրատ բարւոյն ստեղծանելով, եւ ուրեք՝ մեաւ 'ի հակառակէն ընծայեցուցեալ ։

---

# ՀՈՄԵՐԻ

# Ի Լ Ի Ա Կ Ա Ն

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հրաւիրեալ զՄուսայն նուագել զոխն Աքիլլեայ եւ զորս անտի հարուածք բանակին, հարցանէ ապա թէ զինչ եղեւ սկիզբն ոխերցն, եւ պատմել տանու իրրեւ 'ի գլխոյ նորա:

Քրիսէս քուրմ Ապողոնի եկեալ 'ի նաւբանն Յունաց փրկանաւորել զգերեալ դուստրն Քրիսէիս՝ մերժի յԱգամեմնոնէ առ որում կայր 'ի պարգեւ. 'ի վրէժ նորին մահ արձակէ Ապոլոն նետիւքն 'ի բանակ անդր: Աքիլլէս ժողով խմբէ՝ խնդրել եւ տեսանել զհնարս փրկութեան. Կալքաս գուշակ՝ պատգամ տայ դարձուցանել զդուստր քրմին. զայրացեալ կռուին Ագամեմնոն եւ Աքիլլէս. յանձն առնու Ագամեմնոն տալ զՔրիսէիս, բայց պատանդ առնուլ փոխարէն զմրցանակն Աքիլլեայ զաղջիկն Բրիսէիս. Աքիլլէս ծանրացուցեալ՝ թշնամանեալ զնա եւ երդուեալ ձեռնթափ 'ի պատերազմէն լինել վասն անիրաւ զրկանաց պատուոյն, մեկնի գնայ, տայ զաղջիկն: Ի ձայն ողբոց նորա հասանէ մայրն Թետիս, խոստանայ նմա վրէժխնդրութիւն եւ հատուցումն արհամարհանացն: — Քրիսէիս յուղարկի առ հայրն, եւ մահն դադարէ 'ի զօրուէն: — Թետիս ելեալ յերկինս՝ աղաչէ զԱրամազդ տալ զվրէժ որդւոյն, եւ հատուցանել զպատիւ նորա՝ տալով զօրութիւն տրովացւոց 'ի վերայ Յունաց. եւ նա հաճեալ ակնարկէ: Հերա աստուածուհի ամուսին նորա կասկածեալ զերան, քանզի սիրելի տրովացւոց էր, խոժոռի եւ գժտի ընդ Արամազդայ. այլ Հեփեստոս որդին 'ի մէջ անցեալ՝ խաղաղէ զնա, եւ մատռուակեալ ամենեցուն զուարթութեան բաժակ երկնորին, երթան 'ի քուն:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

### ՍՐԱՏՈՒԹԻՒՆ · ՈԽՔ

ԶԱքիլլեայ Պելեանծնին, աստուածուհիդ, ըղձէնն երգեա
Զկորուսիչ եւ բիւր ցաւոց աքայեցւոցն ախտաբեր,
Որ զդիւցազանց 'ի դժոխս արի անձինս ընկեց բազումս,
Եւ զէշ արկ ըզնոսին շանց եւ հաւուց առ հասարակ,
Եւ կամացն Արամազդայ գայր ելանէր խորհուրդ 'ի գլուխ,
Յորմէհետէ միանգամ 'ի վէճ եկեալ երկփեղկեցան
Ատրիդէս արանց արքայ եւ Աքիլլեւս աստուածազարմ։
Իսկ արդ ո՞ զնոսին 'ի դից արկ ընդ միմեանս հեռիւ 'ի մարտ։ —
Լետոյեայ Ձեւսն որդեգրեան · որ բարկացեալ ընդ Թագաւորն
Ախտ եռացոյց ժանտ 'ի զօրն, եւ ժողովուրդք սատակէին,
Զի Ատրիդէս անարգեալ արհամարհեաց ըղՔրիսէս քուրմ ·
Որ եկըն ու եհաս յերագաթեւ նաւս աքայեանց
Ի դըստերըն գերեդարձ անհուն բերեալ գին փրկանաց ·
Ոսկի գաւազանաւն ըղդիպաղեղն Ապոլոնի
Զապարօշն 'ի ձեռս առեալ՝ աքայեցւոց մատեաւ յաղերս,
Առ երկոսին մանաւանդ Ատրեանս՝ իշխանըն զօրավարս ·
Ատրիդայք, եւ համազգունք այլ ամրաբարձք աքայեցիք,
Տացեն ձեզ աստուածք ողիմպական յարկաց բընակք
Քանդել զքաղաք Պրիամու եւ դարձ 'ի տուն առնել բարեաւ։
Արձակէք ըղսիրելի դուստր իմ, զփրկանս ընկալարուք,
Ակն ածեալք յորդւոյն Դիւոյ 'ի դիպաձիգն Ապոլոնէ։
Անդ այլք ամենեքին հաւան գըտան աքայեցիք
Պատկառել 'ի քըրմէն եւ ընդունել զպայծառ փրկանսն,
Իսկ Ատրեանն Ագամեմնոնի ոչ թըւեցաւ մըտացն հաճոյ,



Digitized by Google

Այլ չարաւ դարձուցեալ՝ յաւէտ եւ սաստ ըսպառնալեաց ·
Մի՛ ես, ծեր, առ գոգաւոր նաւացս ընթեր գըտից ըզքեզ
Դեգերեալ աստանօր կամ միւսանգամ եկեալ այսրէն,
Գուցէ ցուպ աստուածոյդ եւ վարսակալ քեզ չօգնեսցէ ։
Չանձնեմ նըմա ես գերեդարձ մինչեւ հասցէ 'ի ծերութիւն
Անդ 'ի տան մերում յԱրգոս 'ի գաւառէն իւրմէ հեռի
Ցստայնին գործ պարապեալ եւ անկողնոյըս լեալ հաղորդ ·
Ե՛րթ աղէ, մի՛ զիս գըրգռեր՝ զի ողջանդամ դարձցիս անդրէն ։
Զայս ասաց, եւ ծերունւոյն զահի հարեալ անսաց բանին,
Եւ ելեալ գընայր լըռիկ ըզբազմաղմագոչ ծովուն եզերբ ·
Անցեալ ապա մեկուսի՝ հեղոյր մաղթանս յոյժ ալեւորն
Առ արքայն Ապոլոն՝ որդի Լատով վարսագեղին ·
Լուր ինձ, արծաթաղեղն, որ ըզՔրիւսէ շուրջ պահպանես
Եւ զդիւցականըն Կիլլա, եւ Տենեդեայ իշխես հըզօր,
Զմինթեանդ, թէ քեզ երբեք պըսակեցի շըքեղ տաճար
Կամ թէ բնաւ ցըլուց ուայծից ճենճերեցի քեզ յոյր ազդերս,
Օն արդ դու եւ ինձ ըղձոյն կատարեա զուխտ պաղատանաց ·
Տուժեսցին դանայեցիք զիմ արտասուս քով սըլաքօք ։
Զայս կացեալ նորա յաղօթս, եւ Ապոլոն լըւաւ Գուշակին ·
Ի գագաթանց Ողիմպեայ յարեաւ եւ էջ նա սըրտմըտեալ,
Զլայնալիճն առկեալ զուսովքն եւ ըզկապարճաւըն զամրափակ ։
Շաչեցին նետք 'ի շարժել անձինն 'ի յուսս զայրացելոյն,
Եւ դիմեալ խաղայր գընայր իբր գիշերոյ հանգունաւոր ։
Չոգաւ նըստաւ բացէ նաւուցն եւ ըզփըքինն արձակեաց,
Եւ ճայթումն հընչեաց ահեղ յարծաթափայլ աղեղանէն ։
Ընդ ջորիս նախ ընդհարաւ եւ ընդ բարակս երագոտունս ·
Իսկ ապա եւ 'ի նոսին իսկ առաքեալ նետ դառնութեան,
Հար, եւ ցանդ խիտ առ խիտ բորբոքէին մարմնոց խարոյկք ։
Աւուրս ինն ընդ ճամբարն ընթանային նետք աստուածոյն,
Եւ 'ի տասնին Աքիլլէս ըզբազմամբոխն յատեան կոչեաց ·
Զի սմա 'ի միտ արկ Հերա սպիտակածղին աստուածուհի,
Խնամ ածեալ դանայեանց՝ զորոց մահուանըն տեսանէր ։
Որ յորժամ ժողովեալ գումարեցան ակըմբահոյլ,
Անդէն քաջոտն Աքիլլէս յարուցեալ կաց եւ խօսեցաւ ·
Ատրիդէս, մեզ այժմ անդրէն ծովայածուկ ընդ կրունկ դառնալ
Հասցէ կարծեմ, թէ միայն 'ի մահուանէս ճողոպրեսցեմք ·
Զի համայն պատերազմ եւ մահ պարտէ զաքայեցիս ։
Այլ արդ աւէք հարցանեմք ըզձայնպատում զոք կամ թէ քուրմ,
Եւ կամ երազագէտ, — զի եւ երազն յԱրամազդայ, —
Ասել՝ առ ինչ ցասուցեալ այսչափ Գուշակն է Ապոլոն ·
Զի կամ ուխտիցս ինչ արգեօք կամ թէ զոհից գըտէ նա մեզ ։
Վայելեալ թերեւս յըմուխ ընտիր գառանց ուայծից ճենճերս՝

Հաճեսցի այնուհետեւ ըղատատակումն 'ի մէնջ կարճել:
Արդ սա զայս խօսեցեալ՝ նըստաւ, յարեաւ յերասաս նոցին
Թեստորեանըն Կալքաս՝ հաւահմայիցն յոյժ վեհագոյն,
Քաջահմուտ որոց կային, որ հանդերձեալքն եւ որ անցեալք,
Եւ նաւացն յԻլիոն աքայեցւոց էր առաջնորդ
Առ խորհուրդ գուշակութեան, զի նմա Գուշակն ետ Ապողոն.
Որ ընդ բարին կամեցեալ նոցա եւ զայս ճառեալ ասէ.
Աքիլլէս, Արամազդայ սիրուն, պատուէր տաս ինձ պատմել
Ըզզայրումն Ապողոնի զհեռաւորաձիգ արքային մեծ.
Բայց ցուցից արդ ես զայն. սակայն ուխտեա դու եւ երդուիր,
Ճըշմարտիւ յօրդորամիտ օգնել բանիւք ինձ եւ ձեռօք.
Զի անշուշտ համարիմ՝ թէ բարկասցի այր մեծազօր
Բռնաւոր տէր արգիացւոց, որում անսան աքայեցիք:
Քանզի բուռն է թագաւոր՝ ցասուցեալ առն անաւագի.
Զի թէպէտ եւ առ օրին ամոքեսցէ զըմբռնմըտութիւն,
Ոխս ապա 'ի սըրտին պահէ մինչեւ հանցէ 'նդ կատարածն.
Արդ դու տես եւ խորհեա՝ թէ արդեօք զիս ապրեցուսցես:
Առ որ քաջոտն Աքիլլէս պատասխանի ետ եւ ասէ.
Զոր գիտեսդ՝ ծն դու խրախոյս առեալ պատմեա զգուշակութիւն.
Զի երդուեալ յԱպողոն 'ի սիրելին Արամազդայ,
Յորմէ դու, Կալքաս, հայցեալ՝ դանայեցւոց հանես պատգամս,
Ոչ ոք 'ի քեզ՝ կենդանեաւս եւ մինչեւ աչքս հային յերկրի՝
Ձեռըն ծանր արկցէ երբեք առ գոգախոր լաստափայտիւքս,
Յամենայն 'ի դանայեանցս, ոչ Ագամեմնոն իսկ թէ ասես,
Որ արդ հըզօր վեհապետ պանծայ լինել աքայեցւոց:
Յայնժամ քաջալերեալ բարբառեցաւ հմայօղն ամբիծ.
Ոչ ուխտեցս ինչ ըղձաւ եւ ոչ զոհից զըմէ նա մեղ,
Այլ 'ի պատճառս քըրմին զոր անպատուեաց Ագամեմնոն,
Ըզդուստըրն չարձակեաց եւ ըզփըրկանսն ոչ ընկալաւ.
Սըմին իրի ցաւս աւասիկ ետ քաջաղեղն եւ տացէ եւս,
Եւ դարձուսցէ ոչ 'ի մէնջ ըզծանր օրհասըս սրածութեան,
Մինչեւ խայտակն օրիորդն հատուսցի հօրըն սիրայնոյ
Առանց գընոց փըրկանաց, եւ տարցի զոհ սուրբ 'ի Քրիսէ.
Թերեւս յայնժամ ողոքեալ յուսասցուք հաշտ առնել ըզնա:
Սորա զայս ասացեալ՝ նըստաւ, յարեաւ յակումբ նոցին
Դիւցազն Ատրիդէս Ագամեմնոն ամենիշխան,
Տըրտմագին՝ լի բարկութեամբ սըրտմըտութեան սիրտ թըլփայորդ,
Եւ աչք իւր նըմանեալ փայլակնացայտ հրոյ կայծականց:
Եւ նախ առ Կալքաս խեթիւ զիմօք բարբառեցաւ.
Չարեաց գուշակ, ինձ երբեք հաճոյական ինչ չասացեր.
Սիրելի քեզ հանապազ չարիք 'ի սիրտդ են գուշակել,
Իսկ բան բարի չխօսեցար ըղձաւ եւ ոչ հաներ 'ի գլուխ:



Digitized by Google

Դանայեանց եւ արդ յատեան ըղձապատում եղեալ ճառես,
Որպէս այն թէ ամին իրի գընէ մեզ վէրս Աղեղնաւորն,
Իբրեւ զի ես ընդունել յանձին չկալայ զըճքեղ փրրկանս
Օրիորդին Քրիսէիսի, յոյժ տըռփեալ զնմին 'ի տան ունել՝
Առաւել նախամեծար քան զկին ընտրեալ Կլիտեմնեստրէ
Ջհարազատ իմ ամուսին, զի չէ ստորեւ ինչ քան զնա
Ոչ մարմնովն եւ ոչ բարուք ինչ ոչ մըտօք եւ ոչ գործովք։
Այլ եւ այնպէս տալ 'ի դուրս, այդ թէ բարւոք թըւի, կամիմ.
Իմ կամք՝ ժողովրրդեանս է փրրկութիւն, եւ ոչ կորուստ։
Բայց ինձ պարգեւ 'ի պատիւ վաղվաղակի պատրաստեսջիք,
Մի անշուք միայն մնացից յարգեւացուց, որ չէ արժան.
Տեսանէք ամենեքին՝ զի մրրցանակս յինէն գընայ։
Առ այս քաջոտն Աքիլլէւս աստուածազարմ կըրկնեաց անդրէն.
Մեծափառդ Ատրիդէս, ժըլատ քան զըմաւս եւ ընչաքաղցդ,
Զիա՞րդ քեզ մեծանձինքն աքայեցիք տացեն պարգեւս։
Ոչ ուրեք ինչ գիտեմք հասարակաց մըթերս 'ի դէզ,
Այլ որ էրն ինչ քաղաքաց հարեալ աւար՝ բաժանեցաւ,
Եւ զօրուս ոչ ինչ 'ի դէպ բերել կուտել զայն վերըստին։
Սակայն դու զմանկամարդն արձակեսջիր այժմ առ աստուածն,
Եւ աքայեկքս երեքկին եւ չորեքկին քեզ հատուսցուք,
Թէ Արամազդ տացէ քակտել զամրապարիսպ Տրոյա քաղաք։
Առ այս պատասխանեալ Ագամեմնոն ասէ արքայ.
Մի այդպէս, թէպէտ ճարտար ես, Աքիլլէւս աստուածանման,
Գողանար զմիտսըդ, զի ոչ երցես զինեւ, ոչ պատրեսցես։
Քեզ պատիւ կամիցիս, իսկ ինձ նըստել այսպէս թափուր,
Եւ պատուէր 'ի վերայ դընես ինձ տալ ըզսա 'ի դուրս . . .
Բայց եթէ զմիտս իմ հաճեալ աքայեցիքըն մեծանձինք՝
Մատուսցեն փոխարէն արժանաւոր ինձ պատարագ։
Իսկ թէ չտայցեն, ես ինքնին իմով գըլխով եկեալ առից
Կամ ըզքոյդ կամ զԱյասայն պարգեւ, եւ կամ զՈդիսեւսին
Հանեալ տարայց, և դառնասցի որում երթայցն ես 'ի վերայ։
Այլ զիրացըդ միւսանգամ ըզկնի ուրեմն աւցուք խորհուրդ.
Իսկ այժմ մն ըզսեաւ մակոյկն արկեալ 'ի ծովն աստուածային,
Առարեալ եւ աջողակ նաւաստս 'ի ներքս, եւ զզոհն հանեալ,
Ամբարձցուք եւ զնա ինքն ըզգեղեցկայտըն Քրիսէիս.
Եւ մի ոմն իշխան լիցի առաջնորդ այր խորհըրդական,
Այաս, կամ Իդոմեն, կամ Ոդիսեւսըն դիւցազարմ,
Կամ թէ դու Պելեանծինդ՝ ահեղագոյն քան զըմաւս որեարդ,
Զի մատուցեալ զոհս՝ ընդ մեզ ըզհաստատեղն առնիցես հաշտ։
Առ այս խեթիւ ակնարկելով ասէ քաջոտն Աքիլլէւս.
Ո՛ զգածեալ լըրբութեամբ եւ զօշաքաղ միտք եւ խորհուրդք,
Զիա՞րդ ոք յաքայեցւոց սըրտի մըտօք լուիցէ բանից՝

Ճանապարհ ուրեք երթալ կամ քաղաքս կենալ ընդ արս։
Չեկի ես 'ի գերեզման ընդ տրտմեցելոց ախտաւորաց
Պատերազմել աստանօր՝ որոց յիս չէք ինչ մեղուցեալ.
Զի չստեղծ երբեք զանդիկայս իմ յաւարի և ոչ ըղձիս,
Եւ ոչ համբուն 'ի Փթիա գալարաբեր մարդադարման
Զարտօրայս աղարտեցին, քանզի բազում ինչ են ընդ մէջ
Լերինք հովանաւորք եւ մեծագոչ ծովուն անդունդք.
Այլ քեզ ով ժպիրհ եւ լիրբ, եկաք ըղձեա՝ զի խընդասցես,
Ի խնդրել զՄենելայեայ վրէժն և զքոյդ 'ի տրովացւոց,
Ա՛յ շընկընձիթ, զոր չածես ինչ ըղձմտաւ, չառնես ինչ փոյթ.
Նա 'սպառնիս եւ ըզպարգեւս անձամբ յինէն սպառնաս շորթել,
Յոր բազում եղէ վաստակ, աքայեցւոց ետուն մանկունք։
Ոչ երբեք հաւասար ընդ քեզ պարգեւս ինչ ժառանգեմ
Մինչ աքայիկք քանդեսցեն ըզբարեշէն տրովացւոց ոստան.
Եւ սակայն զառաւելն ահագնաստանդն արշաւանին
Պաշտեն ձեռքս իմ այսպիսիկ. իսկ ժամ յորժամ գայցէ բաշխել,
Քեզ պարգեւք մեծամեծք, իսկ իմ սակաւ ինչ սիրասահեղ
Ընկալեալ գընամ 'ի նաւս յետ տաժանմանց գուպարածին։
Այլ դարձայց այժմ 'ի Փթիա, զի լաւ է յոյժ երթալ 'ի տուն
Մահիկաձեւ հանդերձ նաւուք, եւ ոչ աստէն կալ անպատիւ
Ժողովել քեզ կուտել մըթերս ընչից եւ ստացուածոց։
Եւ անդէն պատասխանի արքայն արանց Ագամեմնոն.
Օ՛ն արդ արի երթ ուրեմն, եթէ քո յայդ յօժարի սիրտ.
Զաղաչեմ ըզքեզ մընալ վասն իմ, կան շուրջ զինև եւ այլք
Որ զինեն պատուեսցեն, եւս առաւել զգօնն Արամազդ։
Ատելի քան զամենայն զիւցազնունդ արքայս ես ինձ.
Զի միշտ կռիւք քեզ եւ կրուիւք եւ պատերազմք են սիրելի։
Թէ հզօր ես զօրութեամբ, աստուած սակայն շնորհեաց քեզ զայն։
Ե՛րթ շըւեա 'ի տուն քոյով նաւօք եւ քով ամխախիւք,
Միրմիդոնեաց անդ իշխեա, զի ես չառնեմ ինչ փոյթ ըզքէն,
Եւ ոչ յախիցըդ խիթամ, նա եւ սպառնամ քեզ առաւել։
Քանզի Գուշակն Ապոլոն հանէ յինէն ըզՔրիսեանայ,
Ըզնա ես իմով նաւաւ եւ ընկերօքս իմով յղեցից.
Եւ եկեալ ինքնին 'ի վրանդ, առեալ տարայց ըզքո պարգեւ՝
Զգեղեցկայարն Բրիսէիս, որպէս զի քաջ տացես 'ի միտ՝
Քանի՛օն վեհ քան ըզքեզ իցեմ, եւ այլ ոք սարսեսցէ
Դընել զանձն իւր հաւասար ինձ եւ ընդ իս գալ 'ի կշիռս։
Զայս ասաց եւ ցաւք հարան 'ի Պէլէոսեանն, և սիրտ նորա
Ի լանջսն թաւամածիս 'ի կըրկնակի հերձաւ խորհուրդ.
Թէ արդեօք յազդերէն զյեսանաստուրն հանեալ սուսեր
Պողեսցէ զնոսին 'ի բաց, եւ զԱտրիդէս անդէն սպանցէ,
Թէ ցածուսցէ զբարկութիւնն եւ ըզզայրոյթս արգելուցու։

Մինչ դեռ նա մտատայոյզ ծփէր 'ի սիրտ իւր եւ յոգի
Եւ զմեծ Թուրն 'ի պատենից ձգէր, յերկնուստ հաս Աթենաս
Առաքեալ 'ի Հերայ սպիտակածզի աստուածուհւոյն,
Որ 'ի սրտէ զերկոսին սիրէր սերտիւ եւ խնամարկէր ։
Կաց յետոյ, կալաւ զՀերայցին խարտեշից ըզՊելեանն,
Երեւեալ նմին եւեթ, իսկ աւասնէր ոչ ոք յայլոց ։
Սոսկացաւ Աքիլլէս, եւ 'ի Թիկունս դարձեալ կոյս՝
Ծանեաւ զՊալլասն Աթենաս, զի ետես զաչսն զահաւորս ․
Եւ առ նա բարբառեալ զերագաթեւ արձակեաց ձայնս ․
Իսկ առ ի՞նչ եկիր, դուստր ասպարակիրն Արամազդայ,
Զի՞ զԹըշնամանսըն տեսցես զատրէոսեանն Ագամեմնոնի ․
Բայց սակայն ասեմ քեզ, որ եւ 'ի լրումն հասցէ կարծեմ,
Իւրոյ գոռոզութեամբ կորուսցէ զանձն իւր դա Թերեւս ։
Անդրէն խաժակն Աթենաս աստուածուհին ասէ առ նա ․
Ցերկնուստ եկի զբարկութիւն քո հանդարտել՝ Թէ անսայցես,
Եւ առաքեաց զիս Հերա սպիտակածզին աստուածուհի
Որ 'ի սրտէ զերկոսեանս սիրէ սերտիւ եւ խնամարկէ ։
Լռեսջիր արդ 'ի կռուոյդ եւ մի՛ ձգեր ձեռն 'ի սուսեր ․
Այլ բանիւք չափ խախտեսջիր՝ որպէս զիարդ եւ արժէ դէպ ։
Ահա զայս ինչ քեզ ասեմ՝ որ ո՛ն եւ ո՛ն կատարեսցի ․
Զօնեսցին քեզ երբեմն երեքպատիկ շըքեղ պարգեւք
Փոխարէն Թըշնամանացդ ․ այլ զանձն արգել եւ լուր դու մեզ ։
Աքիլլէս քաջոտն առ նա պատասխանի տուեալ ասէ ․
Պարտ է զձերդ եւ արժան, աստուածուհի, պահել զպատուէր,
Թէպէտ յոյժ եմ սրտմտեալ ․ զի մեծապէս լաւ այնպէս է ։
Որ աստուածոց հաւանի՝ եւս առաւել լսիցեն նմա ։
Ասաց՝ խըթեաց զարծաթին երախակալ ծանր ձեռամբն,
Եւ անդրէն արկ 'ի պատեանն ըզսուրըն մեծ, եւ ոչ հեստեաց
Ի խրատուցն Աթենասայ, եւ նա գնաց եւ յՈլիմպոս՝
Ցակումբ այլոց դիցն 'ի յարկս ասպարաւորն Արամազդայ ։
Իսկ Պելեանն անդրէն կըրկին կըսկըծելի լուտանաց ձայնս
Արձակեալ առ Ատրիդէս՝ լըռէր ինչ ոչ 'ի ցասմանէն ․
Ո՛վ զըմպեալդ 'ի գինւոյ, շընաչեայ դու եղջերուասիրտ,
Ոչ դրոհիւ արիաբար զրահել ուրեք 'ի պատերազմ,
Ոչ երԹալ դարանամուտ ընդ նահատակս աքայեցւոց
Իշխեցեր դու երբեք, զի յաչըս քո մահ Թըւի այդ ։
Լաւ եւս նըստել է առպաքէն յաքայեցւոցն 'ի մեծ բանակ
Եւ զպարգեւսն յափըշտակել՝ զոյր ինչ ընդ քեզըն վիճիցի ։
Աղջակեր Թագաւոր, ոչընչաքեայց հրամանատար,
Թէ ոչ, հաստատ, Ատրիդէս, յետին նըւաղ զըղուէիր զայս ։
Այլ ասացից քեզ ահա, նա եւ երդումըն մեծ երդուայց ․
Այո՛ յայս մականն երդուեալ, որ ոչ եւս այլ բողբոջեսցէ

Ոչ ըստեղծ եւ ոչ անբեր՝ զամ մ՚ 'ի լերին լըքեալ գիլըրօնն ;
Եւ այլ ոչ զալարտացի, զի ազնիւ եղերծ շուրջ ըղնօվա
Ըղատղարթ իւր եւ զկեղեւ, եւ այժմ որդիք աքայեցւոց
Իրատարարը՝ օրինապահք Ագամեմնոն՝ կրեն զայն 'ի ձեռս.
Եւ արդ այս ատաւսեկ երդումըն մեծ եղեցի քեզ.
Աքիլլեայ կայցի անշուշտ երբեմն անձուկ զաքայեցւոց գունդ՝
Որոց Թէպէտ սըրտառուչ՝ ոչ մարթասցես լինել նըպաստ,
Բազմակոյտ անկոխութիւն յորժամ Հեկտոր մարդախոշոշ
Սատակեալս արկցէ տապաստ, եւ դու զքո սիրտ պատառեսցես
Մոլմըքեալ մըղձկեալ զի զքաջն աքայեցւոց պատուեցեր ոչ։
Զայս ասաց Պելեանն եւ զզաւազանն ընկեց յերկիր
Զոսկեպալար բեւեռազինդն, եւ ինքն անդրէն անց բազմեցաւ.
Բայց անդուստ Ատրիդէս ծանրացաւումըն քինանայր։
Անդ ալիլեանց Ճարտար խօսնակն յարեաւ Նեստոր քաղցրաբարբառ,
Ցոյր 'ի լեզուէն քան զմեղր անոյշ ծաւալ ծորան բանքն հոսէին,
Ում անցեալ արդէն երկրորդն էր ազգ մարդկան յօդաձայնից՝
Ոյց ընդ իւր 'ի դիւցային Պիլոս սընեալ կեցեալ կանխաւ,
Իսկ յերրորդացն 'ի մէջի Թագաւորէր նա ինքն յայնժամ։
Ի սոցուն խորհուրդ բարեաց ատենախօս եղեալ ասէ.
Ո՛վ աղէտք, սուգ արգարն մեծ հասանէ յաքայեան մարզ,
Ցընծասցէ Պրիամ անշուշտ եւ պրիամեանըն մանկերամ,
Եւ որ այլ եւըս տրովեանք՝ 'ի սիրտս իւրեանց խընդասցեն յոյժ,
Թէ վասն այսր ամենայնի լուիցեն ըզձէնջ 'ի վսեր եկեալ,
Որ 'ի վերդ էք խորհըրդիւ՝ 'ի վեր կըռուով 'ի դանայեանց։
Այլ ունկըն դիք, զի յինէն կըրտսերագոյն էք երկոքեան։
Ի իմ է՛նդ այըընաւիր քան զձեզ որեար կեցեալ երբեմն ;
Եւ նոքին իսկ երբեք առ արհամարհս ոչ կալան զիս։
Զի չտեսի համբուն ուրեք արս այնպիսիս եւ տեսից ոչ,
Որպիսի Պիրիթոոսն էր եւ Դրիաս՝ հովիւքն ազգաց,
Եւ Կենեւս, Եքսադիոս եւ Պոլիփեմ աստուածանման,
Եւ էգեանըն Թեսեւս՝ հանդունանատիպ անմահից այր։
Զի սնուցիւ նոքա հըզօրք քան զերկրաւոր ըռնան մարդիկ,
Ինքեանք իսկ հըզօրք, եւ ընդ հըզօրըս մարտուցեալք՝
Ընդ գազանըս լեռնորդեայս, եւ սոսկալէս սատակեցին։
Եւ արդ ես ընդ սոսին կենցաղեցայ՝ յերկրէ եկեալ
Հեռաստանէ 'ի Պիլեայ՝ նոցուն ինքեանց հրաւիրանաւ,
Եւ իմովանըն զօրութեամբ խառն ընդ նոսին մըղէի զմարտս,
Իսկ յայժմուս ոք երկրածին մահկանացուաց՝ կըռուել չէկէր։
Եւ սակայն՝ իմ խորհըրդոց միտ դընէին եւ բանից ունկն.
Ունկընդիր լերուք եւ դուք, զի լաւ է յոյժ ունկընդրութիւն։
Ի անանէ, դու Թէպէտ վեհ, մի՛ զօրիորդն յափըշտակեր,
Այլ Թողցես՝ իբր աքայեանց ետուն որդիք զամ մի պարգեւ.



Digitized by Google

Եւ մի՛ դու, Գեղխամածեան, 'ի կռիւ կացցես ընդ արքայիս,
Քանզի ոչ հաւասարակ ընդ քեզ պատուոյ վիճակեցաւ
Թագաւոր մականակիր՝ որում շնորհեաց փառս Արամազդ։
Իսկ եթէ դու քաջ իցես, յաստուածուհւոյ ծնեալ մօրէ,
Զօրագոյն է սակայն սա, քանզի բազմաց է իշխեցող։
Ատրիդէս, եւ դու լռեա 'ի մաղձնչելոյդ. ես աղաչեմ
Ցածուցանել յԱքիլլեայ զըրտմըրութեանդ մըռմըռութիւն,
Որ պատուար մեծ աքայեանցս ամենեցուն է չար մարտին։
Ցրուեալ առ սա պատասխանի ասէ արքայն Ագամեմնոն.
Քաջ իսկ 'ի դէպ, ծերունիդ, բարբառեցար զայդ ամենայն.
Բայց ձգտի անցուցանել այդ այր զայլովք ամենեքումբք,
Իշխել կամի համայնից, ինքնակալել բոլորեցունց,
Եւ բնաւից տալ հրաման, յոր ոչ կարծեմ յանկուսցէ զոք։
Իսկ թէ զնա պատերազմօղ եդին աստուածքն յաւերժականք,
Մի՞ եւ թո՛յլ ինչ տան նմին՝ եպերանաց լուեալ բանիւք։
Իսկ դիւցազն Աքիլլեւս հատեալ ընդխօսան անդրէն կըրկնեաց.
Արդարեւ իսկ վատասրտանց եւ թարմատար ոք կոչեցիմ,
Հըպատակ թէ քեզ կացցեմ յամենայնի զոր ասիցես.
Զայդ այլոց պատուիրեսջիր, եւ մի՛ առ իս տացես հրաման.
Իմ ո՛չ եւս յայսմհետէ հնազանդել քեզ եդեալ 'ի մտի։
Ասացից ինչ քեզ եւ այլ, եւ դու 'ի խորս արկ զայն սըրտիդ.
Վասն աղջկանն աղագաւ՝ ձեռօք ինչ ես կըռուեցայց ոչ,
Ոչ ընդ քեզ, ոչ ընդ այլում, զի զառեալս ձեր յինէն հանէք.
Իսկ որ ա՛յլ ինչ կան առ իս յերագաթռիչ 'ի սեաւ նաւէն,
Ցայնցանէ եւ ոչ ինչ առեալ տարցիս բըռնի յինէն.
Թէ ոչ՝ փո՛րձ արէ փորձեա, զի եւ սոքա լիցին հասու,
Անդէն եւ անդ թուխ արիւնդ ըզգեղարդեամբըս ցայտեսցի։
Այսպէսնակ աղեղնաբան սոցա խօսիւք պատերազմեալ՝
Ցարեան եւ լուծին զատեանն առ նաւս աքայեցւոց։
Գեղխեանն ելեալ գընաց 'ի վրանս ու'ի նաւս հարթայարմարս
Որդւովն հանդերձ Մենիտեայ եւ իւրոյին զինուորակցօք։
Իսկ Ատրիդէս անդր 'ի ծով զմակոյկն երագ խաղացուցեալ,
Նաւավարս ընտրեալ քըսան 'ի նոյն, մուծեալ զոհ աստուածոյն,
Անդր ածեալ զետեղեցոյց եւ զգեղեցկայտըն Քրիսանոյշ,
Եւ առաջնորդ՝ Ոդիսեւս լիահանճարն ամբարձաւ յայն։
Արդ ելեալ նաւէին սոքա 'նդ շաւիղսըն խոնաւուտ.
Եւ հրաման սըրբելոյ ժողովրդեանն ետ Ատրիդէս,
Եւ նոքա սըրբէին եւ ամայրին զխոհերան 'ի ծով,
Եւ ըսպանդըս զենուին Ապողոնի զընտիր ընտիր
Զուարակաց եւ նոխազաց՝ զամուլ զանբիծ ծովուն ափամբ,
Եւ ճենճերըն ծըխախառն ոլորտացեալ յերկին կըցէր։
Ցայս ընդ ճամբարն ըզբաղնուին սոքա, սակայն Ագամեմնոն



Digitized by Google

Ի սաստկեցն առ Աքիլլէս ընդդիմանալեաց կասէր ինչ ոչ·
Այլ որ իւրն էին անդէն քարոզք եւ ժիր ըմպասաւորք՝
Զերկոսին՝ զՏալթիբիոս եւ զԵւրիբատ ձայնեալ ասէ·
Արիք երթայք 'ի խորանն Աքիլլեսի՝ որդւոյն Պելեայ,
Զձեռանէն առեալ ածէք ըզգեղեցկայօնն Բրիսէիս·
Իսկ թէ ոչ տայցէ, ինձէն եկեալ առից անձամբ իսկ,
Բազմամբոխ զօրութեամբ, որ առաւել լիցի նըմա։
Զայս ասացեալ յուղարկեաց, յաւել եւ սաստ պատուհասի։
Գնացին նոքա յակամայս առ անբերրի ծովուն ափամբ
Եւ հասին 'ի վրանս եւ 'ի նաւակայար Միրմիդոնաց,
Եւ գտին ըզնա նըստեալ առ խորանաւն եւ սեաւ նաւուն։
Աքիլլէս 'ի տեսանելն անդ ըզնոսին չեղեւ ուրախ։
Ցարքայէն սոսկացեալ եւ պատկառեալ կային նոքա,
Չհանէին ձայն իսկ անգամ եւ զնա ինչ ոչ հարցանէին։
Սակայն նա խելամուտ եղեալ 'ի միտս իւր ասէ·
Ողջոյն, քարոզքդ, հրեշտակք Արամազդայ՝ նա եւ մարդկան·
Մերձ մատիք· չէք ինչ առ իս դուք վնասապարտ, այլ Ագամեմնոն,
Որ ըզձեզն առաքեաց զօրիորդէն Բրիսէիսէ։
Արի, քաջդ Պատրոկլէս, երթ ած 'ի դուրս այսր զաղջիկն
Եւ տացես դոցա տանել· եւ երկոքին կացցեն վկայք
Առ աստուածսն երջանկափառս եւ առ մարդիկ մահկանացուս,
Եւ առ ժանտ Թագաւորին, եթէ երբեք յետ այսորիկ
Եղէց պէտոյ փրկել զայլս 'ի դըժընդակ կորստենէ·
Զի հաստատ մոլեգնոտի նա 'ի խորհուրդս մահաբերս,
Եւ համբուն ինչ ոչ գիտէ հայել յառաջ համայն եւ զկնի,
Զի նմա զնաւուքն մարտեացին աքայեցիք պատերազմեալք։
Զայս ասաց, լըւաւ Պատրոկլ ընկերական սիրելւոյ,
Եւ ածեալ 'ի վրանէն զգեղեցկադէմըն Բրիսանոյշ
Ետ տանել, եւ նոքա յաքայեցւոց դառնային նաւս·
Եւ կինըն յակամայ կամս ընդ նոսին գնայր հետեւեալ։
Իսկ Աքիլլէս յընկերացն ուրոյն միայն նըստաւ եւ լայր
Զըսպիտակ ծովուն եզերբ՝ ակընկառոյց 'ի լուրթ անդունդս։
Եւ ըզձեռսըն կարկառեալ սիրայնոյ մօրն աղաչէր յոյժ·
Ո՛վ մայր, զի կարճակեաց սակաւօրեայ ծընար դու զիս,
Պարտ էր գէթ որոտաձայն ովլիմպականն Արամազդայ
Պարգեւել ինձ պատիւ· արդ ոչ եւ դոյզն ինչ զիս պատուեաց·
Աւասիկ Ատրիդէս իշխանապետ Ագամեմնոն
Անգոսնեաց զիս եւ եբարձ տարաւ զպարգեւս՝ իւր վըտարեալ։
Զայս ասաց արտօսրաթոր, լըւաւ նըմա նազելին մայր
Որ նըստէր յալըս ծովուն առ ալեւոր հարամբ իւրով։
Նոյն ժամայն ել 'ի սպիտակ ալեաց անտի զերդ շամանդաղ,
Եկն եհաս, յանդիման նորա նըստաւ մինչ աշխարէրն,

Եւ ձեռամբ գրգռեալ ըղնա՝ ձայն արձակեալ բարբառեցաւ.
Որդեակ իմ, զի՞ լաս, եւ զի՞նչ 'ի միտսդ անկաւ սուգ.
Մի ծածկեր 'ի սիրտ՝ խօսեաց, զի երկոքեան լիցուք տեղեակ:
Դառնահառաչ յոգւոց ելեալ ասէ ցնա ժիրն Աքիլլեւս.
Գիտես, զի՞ է ասել գիտողիդ քեզ զայս ամենայն:
Ի քաղաքն Էտիոնեայ 'ի նուիրական չոգաք Թեբէ,
Եւ յաւեր եդեալ զայն՝ զաւարն ողջոյն ածաք այսրէն,
Զոր ուղիղ բաժանեալ յինքեանս որդիք աքայեցւոց,
Ընտրեցին Ատրիդեայ գեղեցկագեղըն Քրիսէիս:
Բայց ապա կորովաձիգն Ապոլոնի քուրմըն Քրիսէս
Եկն 'ի նաւսըն սրարշաւս աքայեցւոց զինազգեստից՝
Անպայման բերեալ փրկանս առ 'ի թափել ըզդուստրըն իւր,
Վարսակալ 'ի ձեռս առեալ զաղեղնաւորն Ապոլոնի
Ոսկեղէն գաւազանաւն, աղերս հանոյց սրրկ աքայեանց,
Մանաւանդ առ երկոսեան պետս ամբոխին առ Ատրորդիս:
Անդ այլոց առ հասարակ հաճոյ թուեցաւ աքայեցւոց
Ակն ածել 'ի քուրմըն եւ յանձն առնուլ զշքեղ փրկանսն.
Իսկ Ատրեանն Ագամեմնոնի ոչ հեշտալի եղեւ մտացն,
Այլ չարաւ արձակեալ՝ ըսպառնալեաց եւս յաւել սաստ:
Սրրտմտեալ ալեւորին՝ ել եւ գնաց դարձեալ անդրէն.
Լուաւ ուխտեցն Ապոլոն, զի սիրելի յոյժ էր նմա.
Առաքեաց յարգիւացիս ըղչարաշուք զնետըն սըլաք.
Զօրք չեղջաշեղջ մեռանէին, ընթանային նետք աստուածոյն
Համօրէն ընդ ճամբարըն աքայեցւոց լայնածաւալ:
Իսկ հըմուտ մեզ գուշակ պատմէր զպատգամս հաստաղեղան,
Ցայն նախ ես իսկոյն պատուէր՝ ածել զաստուածն 'ի հաշտութիւն:
Բարկութիւն կալաւ զԱտրիդ, եւ յարուցեալ վաղվաղակի
Սպառնալիս բարբառեցաւ՝ որ վըճարեալ իսկ են ահա:
Քանզի զնա երագաթեւ նաւաւ խայտակն աքայեցիք
Ցըղարկեն 'ի Քրիսէ, ածեն եւ Ցեառնըն դահամուտս.
Եւ զդա դեռ եւս 'ի վրանէս առեալ գնացին նուիրակապետք,
ԸզԲրիսեայն զդստրիկ՝ զոր ինձ աքայեցւոց ետուն մանկունք:
Այլ թէ դու կարող ինչ ես, քաջի որդւոյդ հաս 'ի թիկունս.
Աղերս յՈլիմպ երթ յԱրամազդ, եթէ բանիւ ինչ կամ արդեամբք
Օճան ինչ հեշտութեան եղեր երբեք սրրտի նորուն:
Զի բազում անգամ լըւեալ եմ քեզ պարծել յապարանս հօր
Ասելով թէ դու եւեթ ըզՋրրոսանեանն ամպրոպային
Դու լոկ յանմահսըն պահեցեր 'ի դըժընդակ եղերանէ,
Մինչդեռ այլ ոլիմպականք նըկըրտէին կապել ըղնա,
Եւ Հերա եւ Պոսիդոն եւ Աթենաս ինքնին Պալլաս:
Իսկ երթեալ աստուածուհիդ լուծեր ըղնա 'ի կապանաց,
Կոչեալ յերկայնն Ոլիմպոս անդէն եւ անդ զհարիւրձեռնեայն,

Զոր Բրիսեւս կարգած դիք, խոկ ամենայն աղբ Էդկանի · —
Քանզի սա զօրութեամբ ըղձարդն իւրում զանցուցանէր, —
Որ եկեալ առ Զբօսանմանցն պերճացեալ բազմի փառօք,
Ցորմէ գեղն երջանկաց զանհի հարեալ՝ չէջխեն կալեալ.
Այդ քո զայս յուշ տարարեալ՝ նիստ մեծ եւ բուռն հար ըղձընդացն,
Որ Թերեւս համբուրեալ արտմաղագոյն կալ զօրավիգն,
Եւ զաքայեանն ՚ի նուաստելս եւ առ ծովուն շուրջ փոթորկեալս
Ստատկել, զի դժամ՝ ասացեն բաղորեքեան զԹագաւորին,
Ծանիցէ եւ Ատրիդէան Ագամեմնոն իշխանաւոր
Զիւր մոլոր, զի զքաջերրորդն աքայեցւոց ոչ մեծարեաց :
Եա նրան պատասխանի անդէն Թետիս արտասուաթոր.
Ո՛հ որդեակ, եւ զի՞ երկնեալ ըղձեր մնուցի ծննդեամբ Թշուառ :
Ո՛ այր քեզ անարատս եւ անվշտար նստել առ նաւս,
Զի մնացելում քեզ օրհաս առ կամքդ կայ եւ ոչ հեռի.
Այդ դլուսար մաղամեալ եւ վշտատես քան զամենայն,
Քանզի զքեզ ՚ի վատաբախտ ժամու ծնայ յապարանս :
Այլ զայդ բան՝ փայլակնազուարճն Արամազդայ յուշելն պատմել
Ես ինձէն ՚ի ձիւնափայլն երթայց յՈլիմպ, եթէ լուիցէ :
Սակայն դու նստեալ այժմիկ առ արշաւաց լաստափայլիւքդ
Ոխացիր աքայեցւոց եւ ՚ի մարտէն լեր հեռընթաց :
Զի երէկ յՈվկիան առ անպարտելու եթովպացիսն
Ի խրախուճս չոգաւ Որմիզդ եւ զինի նորա դիք համօրէն.
Բայց յաւուրն երկոտասան դարձեալ այսրէն գայ յՈլիմպոս :
Նոյնժամայն երթամ՝ ՚ի տունն ոսկեզօծեան ՚ի պղնձակերտ,
Եւ առ ծունկան անկեալ՝ աղաչեմ ակն ՚ի հաւան ածել զնա :
Զայս խօսեալ մեկնեցաւ, Թողեալ անդէն զինքն ՚ի սրտնեղուժն
Ի զայրոյթ սրտամտութեան՝ պերճեցկամէջ կնոջն ՚ի սակս
Ակամայ եւ բռնաբար առ ՚ի նմանէն հափշտակելոյ : —
Իսկ Ոդիսեւս ՚ի Քրիսէ եհաս ածեալ ըղձահեղն սուրբ :
Արդ իբր այն ինչ մտեալ նաւահանգիստն ՚ի խորադոյդ՝
Զառագաստս ամփոփեալ զետեղեցին ՚ի սեաւ լաստին,
Իջուցեալ հապա պարանօք յեցուցին զկայմն ՚ի կայմընկալն,
Եւ ըղձա Թեւամկեքըն վարեցին ՚ի նաւահանգիստն :
Ընկեցեալ ըղխարիսխսն եւ կապեալ զապաւանդակս,
Ելին եւ ինքեանք առ հասարակ յեզր ՚ի ծովուն,
Եւ ըղձահն արտաքս հանեին հեռաձգողն Ապողոնի :
Ել եւ ինքըն Քրիսէիս ՚ի ծովաչու լաստափայլէն,
Զոր հանձարեղն Ոդիսեւս տարեալ անդէն ՚ի բագին անդր
Եւ ՚ի ձեռս աւանդեալ սիրելւոյ հօրն՝ ասէ ցնա ·
Ո՛ Քրիսէս, Ագամեմնոն արանց արքայն զիս առաքեաց
Բերել քեզ ըղձըղբաբեկդ եւ Փոյբոսին զենուլ զոհ սուրբ
Ի վերայ դանայեցւոց, զի քաւեսցէ զմեզ արքայն տէր,



Digitized by Google

Որ զարդէր բազմահաւաչ սուրբ արձակեաց յարդկացն :
Զայս ասացեալ եւ 'ի ձեռան, եւ ընկալաւ նա խընդութեամբ
Ըզդըլխաւորին իւր սիրասուն. իսկ Նոքա զգոհն աստուածոյն զմեծ
Կացուցեալ անդէն կարգաւ զգեղեցկաշէն բագնաւորն շուրջ,
Ապա զձեռսն լըւացեալ՝ առին բարձին ըզմուրհկըն սուրբ :
Մեծաբարբառ աղօթէր Նոցա Քրիստոս բազկատարած.
Լուր ինձ, արծաթաղեղդ, որ ըզՔրիսէ շուրջ պահպանես
Եւ զգիւղականըն Կիլլա, եւ Տենեդեայ տիրես հզօր.
Լըւար զնու եւս առաջքէն յառաջագոյն պաղատանացս,
Եւ զանձն իմ մեծարեալ՝ հարեր ուժգին զաքայեանց ազգ.
Օ՜ն արդ դու ինձ եւ ըզայս կատարեա զուխտ խընդրըրուածոց,
Վերացո 'ի դանայեանց ըզժանտ մահուն եղեռնաւոր :
Զայս յաղօթսն իւր ասաց, եւ Ապօլոն լըւաւ Գուշակին :
Իսկ ապա յետ աղերսիցն եւ ցանելոյ զարբըռութեան մուրկ,
Զըրապանդին ուլն յողն ածեալ եւ փողոտեալ մորթեցին նախ,
Եւ զազդերսըն յօշեալ՝ ճարպոյն համակ պատեցին շուրջ,
Եւ երկպատկեալ՝ արկին զնոքօք պատառ պատառ կտորս հում հում :
Ծերն 'ի շերտս այրեր փայտից եւ սեաւ գինի զնոքօք հեղոյր,
Իսկ մանկունքն առ իւր 'ի ձեռան ունէր շամփուրըս հընգարձէնս :
Եւ ազդերըքն յորժամ կիզան եւ զփորոտին ճաշակեցին,
Զայլըն մանըր կտորեալ՝ հարեալ 'ի տէգս անդըր շամփրոց
Խորովեցին հըմտաբար, եւ զամենայն առին 'ի բաց :
Ի գործոյն իբրեւ հանգեան եւ ըզխընջոյսն յօրինեցին,
Ճաշեցին՝ մինչ զուգաչափ խորտկաց այլ ոչ կարօտէր սիրտ :
Զըմպելեաց եւ զկերակրոց իբրեւ զքաղցն հանին փափաք,
Զխառնարանսըն մանկըտւոյն լըցեալ գինեաւ մինչեւ 'ի վեր՝
Բաժակօք մատուըւակեալ բաժանեցին ամենեցուն :
Եւ ապա զտիւն ողջոյն զաստուածն երգով հաշտ առնէին
Գեղեցիկ օրհնութիւն հանեալ մանկունքըն աքայեցւոց,
Նուագելով զԱղեղնաւորն, եւ նա լըւեալ խընդայր 'ի սիրտ :
Իսկ արեւն իբրեւ դարձաւ 'ի մայրն եւ եկն եհաս նըսեմ,
Առ նաւին ապաւանդակս յայնժամ ննջեցեալ 'ի քուն մրափին :
Այգածին մինչ Արշաւօտըն վարդամատն երեւեցաւ,
Ելեալ անդէն չուէին 'ի մեծ բանակն աքայեցւոց,
Եւ յաջողակ զհետ արձակեաց հողմ Ապօլոն կորովաձիգ :
Զկայմըն կանգնեալ՝ զառագաստսըն պարզեցին Նոքա սպիտակս.
Ելից հողմ զառագաստին ծոց եւ ծըփանքըն ծիրանիք
Առ կողիւք նաւուն ուժգին գոչէին շուրջ 'ի գնալ իւրում,
Նա զալեօքըն սահարկէր հատեալ անցեալ ըզճանապարհն :
Իսկ յորժամ յաքայեցւոց ժամեան եղեն 'ի մեծ ճամբար,
Ի ցամաք ձըգեալ հանին ըզլաստափայտըն թըխաթոյր
'Դաւաղն 'ի վեր, եւ զերկայն նեցուկս արկին մոյթս 'ի ներքոյ,

Եւ ճիչեանք ողբակցաց ընդ նաւաստորմն եւ ընդ վերանս։
Սակայն նա սըրտամըտէր առ ճեպընթաց նըստեալ նաւուք
Պէլէեան Դիածընեալ որդին՝ Թեթեւն ոտիւք քաջն Աքիլլէւս.
Ոչ ուրեք երթայր եւ գայր յատեանս արանց փառաւորարգեւ,
Եւ ոչ 'ի պատերազմ, այլ 'ի սըրտաւն հալէր մաշէր՝
Անդ կացեալ, եւ 'ի խօշիւն ցանկայր մարտից եւ 'ի գուպար։
Իսկ յորժամ յետ այնորիկ երկոտասաներորդն եղ առաւօտ
Եւ գնային յՈլիմպոս յաւէրժ աստուածքն ամենեքին՝
Արամազդ 'ի գլուխ պարուն, ոչ մոռացաւ յայնժամ Թետիս
Ըղձպատուէրս խըրատու որդւոյն, այլ 'ի միջնանց ելացեալ ծովուն
Ել ընդ այգն առաւօտեալ 'ի մեծ երկինս եւ յՈլիմպոս.
Եւ եգիտ զամենատեսըն Զրուանեան նըստեալ ուրոյն
Ի բարձրածայր գագաթան սարաւանդեանն Ոլիմպոսի։
Անդ նըստաւ դէմ յանդիման, եւ ահեկաւ կալեալ զծընգացն
Եւ աջովըն կարկառեալ մատամբք 'ի կզակ նորա ներքեն,
Աղերս զայս առ Զրուանեանն արքայ մատոյց առ Արամազդ.
Արամազդ հայր, թէ երբեք օգնեցի քեզ յանմահից դասս
Բանիւ ինչ կամ գործով, լից ըղձալըրտիս զայս ցանկութիւն.
Պատուեսջիր ինձ զիմ որդեակ՝ սակաւակեաց գըտեալ քան զայլս,
Զոր եւ արդ արհամարհեաց Ագամեմնոն արանց արքայն,
Զի գըրաւեալ ունի զպարգեւն անձամբ անձին յափըշտակեալ։
Այլ դու զվըրէժ իւր, Ոլիմպեանդ ամենիմաստ հայր Արամազդ,
Տուր տրովեանց ըղյաղթութիւն, մինչեւ գեցեն աքայեցիք
Ըոյք ուրեմն որդեկիս եւ ըզպատիւն աճեցուսցեն։
Զայս ասաց, բայց Արամազդ ամպրոպայինն չխօսեցաւ ինչ,
Այլ յերկար նըստէր անմռունչ. իսկ բուռն 'ի ծունկսն հարեալ Թետիս՝
Նոյնպէս կայր մընայր փարեալ, եւ միւսանգամ դարձեալ ժըտէր.
Արդ խոստումն ինձ հաստատուն տուեալ ուրեմն ակնարկեսջիր,
Կամ յուրաստ կաց, քանզի չիք ինչ քեզ երկեւղ. զի ծանեայց քաջ
Քանիօն ամենանարգագոյն 'ի դիցանուշս իցեմ 'ի բնաւս։
Մեծ հառաչեալ Արամազդ ամպրոպայինն՝ ասէ ցնա.
Գործ գըժնեայ՝ թէ գըրգըռեսցես զիս զալ հերայ յատելութիւն,
Եւ նա զիս սանդատակաց բանիւք գըրգըռեալ զայրացուսցէ.
Որ եւ այսպէս խակ յանմահս զիս 'ի հեննգնի կայ մըշտ ընդ իս,
Ասել զինեն թէ 'ի մարտըս տըրովացւոց լինիմ նըպաստ։
Այլ արդ դու դարձիր 'ի բաց, մի՛ զքեզն հերա գիտասցէ ինչ.
Ցիմ վերայ հոգդ ամենայն՝ մինչեւ սարքեալ հանից 'ի յանդ։
Այլ ահա եւ գըլխով ակնարկեսցից քեզ յերաշխիս,
Որ այն ինչըն է մեծագոյն նըշան յանմահս յինէն կուսէ,
Զի չէ իմ ինչ յեղյեղուկ, եւ ոչ պատիր, ոչ անկատար
Զոր եւ ինչ միանգամ գըլխով իմով ակնարկեցից։
Ասաց, եւ ակնարկեաց կապոյտ յօնիւքըն Զրուանեանն.

Ցանկամ գրչոյ Թագաւորին աստուածեղէն շարժեցան փառքն ,
Եւ ըղձերըն տառապեալ գըղըրդեցոյց զՈղիմպոս ։
Զայս աւետաւ նոցա խորհուրդ՝ ելեալ փութացին առ 'ի մեծամեծաց ,
Նա 'ի ծով խոր սուրացեալ յարփիաձեմն Ողիմպոսէ ,
Արամազդ յիւր ապարանս . յորում բոլոր դիք յաթոռոցն
Հօրն ելեալ ընդ առաջ , համարձակեալ եւ ոչ ուրուք
Գալըստեան նորա մնալ՝ յառաջն կացին իւր առաջի ։
Ոչ բաղձեցաւ անդ նա 'ի գահ , բայց 'ի Հերայ ծածկեցաւ ոչ .
Զի ետես եթէ եկն եւ 'ի խորհուրդ ընդ իւր եմուտ
Արծաթթաթիկըն Թետիս , դուստրն ծերոյն ծովականի ։
Առ Զրուանեանն Արամազդ անդէն սրտակեղ բանիւք ասէ .
Ո՞վ ընդ քեզ , է՛ նենգամիտ , 'ի դէց անտի մուտ 'ի խորհուրդ .
Միշտ է քեզ սիրելի՝ առանձնաբար յինէն կալով
Սահմանել գաղտնի խորհուրդս , եւ ոչ յանձին կալար երբեք
Պատմել ինձ ինքնախորժ՝ զոր խորհեան ինչ միանգամ ։
Եւ նմա պատասխանի հայրըն մարդկան եւ աստուածոց .
Մի կամիր ամէն ինչ , Հերա , գիտել ըղձիւս իմ զամենայն ,
Դըժուարին քեզ եղիցի , թէպէտ եւ իմ ես ամուսին ։
Իսկ թէ 'ի դէպ ինչ է լսել , ոչ ոք յայնժամ այնմ ոչ 'ի դէց
Եւ ոչ 'ի մարդկանէ լիցի յառաջ քան զքեզ գիտակ .
Բայց զոր ես ինչ ինքնուրոյն զատ յաստուածոց արկից ընդ միտ ,
Զամենայն ինչ զայնպիսի մի՛ հարցաներ եւ մի՛ քըններ ։
Աչաւեղն արդոյն Հերա դարձոյց անդրէն պատասխանի .
Անողորմդ Զրուանեան , բան զինչպիսի բարբառեցար .
Իմ վաղուց իսկ յառաջնմէ ոչ ինչ հարցեալ եւ ոչ խուզեալ ,
Այլ՛ անհոգ եւ անկասկած որ ինչ կամիս 'ի միտ դընես . .
Բայց զանգիտեմ յոյժ 'ի սիրտ՝ եթէ գուցէ խաբեաց ըզքեզ
Արծաթթաթիկըն Թետիս , դուստրն ծերոյն ծովականի ։
Զի կանխեալ առաւօտեալ նըստաւ առ քեւ , կալաւ զծընգացդ ,
Որում անշուշտ ակնարկեցեր կարծեմ պատուել զԱքիլլէս ,
Եւ սատակել առ նաւուք զաքայեցւոցն ըզբազմութիւն ։
Զայս առ նա պատասխանի ամպըռոպայինն եւ Արամազդ .
Ա՛յ թըշուառ , միշտ 'ի կարծիս եւ 'ի կասկած , չեմ քեզ թաքուն .
Սակայն ոչ ինչ կարասցես հանել 'ի գլուխ , նա մանաւանդ
Ի սրտէս անկանիցիս , եւ դառնագոյն լիցի քեզ այն ։
Եւ թէ այդպէս ինչ իցէ , այն եւ հաճոյ ինձ եղիցի ։
Այլ՛ կարկեա , նիստ լըռիկ , եւ հրամանիս լեր ունկընդիր ,
Գուցէ ո՛չ ինչ օգնեսցեն քեզ որչափ դիք են յՈղիմպոս՝
Ի դիմել յորժամ ըղձեաս անհըպելիս արկից 'ի քեզ ։
Զայս ասաց , եւ մեծարոյն զահի հարաւ աչեղն Հերա ,
Եւ կարկեալ նըստաւ անմռունչ՝ 'ի կոր ըզսիրտն կործանեալ .
Հեծեցին 'ի տաճարին Արամազդայ դիքն երկնաւորք ։



Digitized by Google

Հեփեստոս պղնձեղջերաւոր ընկերին արար նոյն խօսից,
Ի հաճոյս լուսածիրքն Հերայի մօրըն սիրոյնոյ.
Դըժընդակ այս աղաքէն լըցեն գործեան անբերելիք,
Երկնքեան մահկանացուաց վասն եթէ դուք 'ի կռիւ կայցէք,
Եւ աղաղակ արկջիք յանհամանհս, եւ ոչ համեղ ինչ կերակրոց
Եղիցի հեշտութիւն, քանզի գըլեն վատթարագոյնք:
Եւ ես մօրըս տամ խրատ, թէպէտ ինքնին է իմաստուն,
Քաղցրութեամբ ըղձիւն հաճել զԱրամազդայ հօր սիրելոյ,
Զի մի դարձեալ եկեալ 'ի վէճ հայրըն ըզխընջոյս մեր խառնեսցէ,
Զի թէ կամ լինիցի ոլիմպական շանթընկեցին
Ցաթոռոցըս վըրդընկել... զի մեծազօր իսկ յոյժ է նա:
Այլ դու զնա կակուղ բանիւք ողոքելով ամոքեսցես,
Եւ անդէն հաշտ եւ համբայր ընդ մեզ դարձցի Ոլիմպականն:
Ասացեալ, եւ յարուցեալ սա ըզբաժակըն կըրկնաստաշտ,
Եւ 'ի մօրըն սիրոյնոյ եդեալ մատուցն՝ ասէ ցընա.
Ժուժեա, մայր իմ, եւ համբեր, թէպէտ 'ի հոգ սըրտաճըմլիկ,
Գուցէ զքեզ ըզսիրելիդ աչօք 'ի դանից տեսցեն հարուած,
Եւ յայնժամ ոչ բաւեսցեմ, սիրտ տըրտմագին, օգնել ինչ քեզ,
Զի դըժնէ եւ դըժընդակ է Ոլիմպեանն 'ի դիմամարտ:
Զի եւ այլ երբեմըն զիս, 'ի ժամանելըս յօգնութիւն,
Ա՛ռ զոտիցս ընկէց 'ի բաց յաստուածական սեմոց տանի:
Զօրն 'ի բուն հոլովս անկեալ, եւ յարեւուն 'ի մըտանել
Ի Լեմնոս անկայ նըւաղ շընչով յոգիս իմ ապաստան.
Անդ զիս արք Սինտացիք զանկեալս անդէն առեալ բարձին:
Ցայն բան Հերա ժըպտեցաւ աստուածուհին սպիտակածղի,
Եւ ժըպտելով ընկալաւ յորդւոյն ձեռաց ըզգաւաթուրանն:
Իսկ նա դիցն այլոց ընդ աջ մատուցանէր ամենեցուն
Զաստուածեղէն քաղցր ըմպելին 'ի թակուկէ անտի հանեալ:
Եւ անհնար զուարթեաւ քըրքիջ 'ի դիցն երանեալ երջանկափառ,
Իբրեւ տեսին զՀեփեստոս 'ի տաճարին ժըրացեալ 'ի սպաս:
Այսպէսանակ անդ զօրն ողջոյն մինչեւ 'ի մուտս արեգական
Խրախճանայքն՝ մինչ զուգաչափ այլ պարինի չկարօտէր սիրտ,
Ոչ չքնաղ ջութակին՝ որ 'ի ձեռինն Ապողոնի,
Ոչ Մուսայց՝ որ փոխ առ փոխ նըւագէին քաղցրաձայնիւք:
Իսկ 'ի մայր յորժամ դարձաւ արեւակին փայլուն ճաճանչ,
Մտքս մէն իւրաքանչիւր գնացեն 'ի ննջել 'ի յարկս իւրեանց,
Ուր միում միում սենեակս էր հանճարեղ մըտօք շինեալ
Հեփեստոսըն՝ հոյակապն կաղն յերկոցունց ոտից իւրոց:
Յիւր մահիճս եւ Արամազդ փայլատակողն երթ Ոլիմպեան՝
Ուր յառաջըն ննջէր, մինչ ըզնա նիրհ առնոյր անոյշ.
Անդր ելեալ 'ի քուն եղեւ, եւ ոսկեգահն առ իւր Հերա:





Digitized by Google

Digitized by Google

ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Լնուլ խորհելով զխոստումն առ Թետիս՝ առաքէ Արամազդ երազ չար եւ խաբեբայ առ Ագամեմնոն՝ 'ի յոյս յաղթութեան, ձեռն 'ի գործ ածել մարտին առ վաղիւ: Ցարուցեալ նորա՝ յատեան կոչէ զաւագանին 'ի խորհուրդ վաւերելոյ զզօրն 'ի կռիւ, բայց եւ զաղտ զեկուցանէ նոցա, թէ խիթացեալ ընդ կամս զօրականին՝ կամի կեղծեօք փորձել զնոսա. եւ գումարեալ զամբոխն՝ պաճառէ զփախուստ 'ի պատերազմէն: Նոքա անգէտք մտաց նորա, դիմեն 'ի նաւսն՝ առնուլ եւ փախչել: Ոդիսեւս խրատեալ յԱթենասայ՝ խափանէ զնոսա, եւ դառնան անդրէն 'ի ժողով. Ոդիսեւս եւ Նեստոր յորդորեն զնոսա մղել զպատերազմն. Ագամեմնոնի քաջալերեալ զնոսա՝ մատուցանէ զոհ Արամազդայ, հրաւիրէ զաւագորեարն 'ի կոչունս: Ապա հանդէս համարոյ գնդացն Յունաց եւ նաւաց: Ծանուցեալ տրովացւոց զկազմութիւն եւ զարշաւանն նոցա հանդերձին եւ նոքա փութանակի, որոց եւ հանդէս առնի կարգ 'ի կարգոյ:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

### ԵՐԱԶ. ԲԻՈՎՏԻԱ ԿԱՄ ՀԱՆԴԷՍ ՆԱՒԱՑ

Այլք 'ի դից եւ սպառազէն քաջնեկին այրք ընդ գիշերայն 'ի քուն,
Բայց սակայն Արամազդայ հատեալ էր քաղցրը քուն յաչաց,
Եւ Աքիլլեայ 'ի սրտին խորհէր նօթանել պատիւ եւ փառս
Եւ զամբոխ աքայեցւոց կորուսանել զնաւատորմիւն:
Իմաստուն այս խորհուրդ նորա թուեցաւ 'ի միտըս իւր,
Առաքել զՆըրազըն չար առ Ատրիդէսն Ագամեմնոն.
Եւ առ նա ձայն արարեալ՝ երագաթեւ ասէ բանիւք.
Արի երթ, Երազ չար, յաքայեցւոց ձեպընթաց նաւս,
Եւ մըտեալ 'ի խորանն առ Ատրիդէսն Ագամեմնոն՝
Զամենայն որպէս ինչ եսըն պատուիրեմ ճառեա ստուգիւ:
Համախուռն ըղձերապանծ աքայեցիս վառել շտապաւ
Տուր հրաման, զի արդ առցէ զլայնափողոց տրովէացւոց ոստան.
Քանզի ոչ եւս յերկպառակս ինչ են անմահքն ովլիմպականք.
Հերայի աղերս արկեալ ած 'ի հաւան զամենեսեան,
Եւ եղերըն մօտալուտ ընդոստուցեալ գոյ տրովացւոց:
Արդ նա գայր, եւ Երազըն առեալ զպատգամն էլ եւ գնաց,
Եւ հասեալ փութանակի յերագ քաջոխս աքայեցւոց,
Եւ մըտեալ առ Ատրիդէսն Ագամեմնոն՝ եգիտ ըզնա
Զի ննջէր 'ի խորանին՝ քուն անուշակ հեղեալ զնովաւ:
Եւ կացեալ 'ի սնարից՝ Նէլեան որդւոյն համանըման
Նեստորի՝ զոր Ագամեմնոն պէր զհամօրէն մեծարէր ծերս,
Նըմանեալ նըմին Երազըն աստուածեղէն ասէր առ նա.
Ի քուն կաս, Ատրեւսի ձիավարժին քաջի որդիդ.
Ոչ է պարտ խորհըրդական առն ըզգիշերն 'ի գլուխ քնանել՝



Digitized by Google

Որում յանձն են ժողովուրդք եւ այդքան հոգք տառապանաց։
Արդ ինձ միտ դիր փութով. յԱրամազդայ գամ քեզ հրեշտակ՝
Որ ըղձքէն 'ի բացուստ անտի խնամ ունի եւ գութ։
Համագունդ ըղվարսապեղ աքայեցիս վառել ձեռով
Եւ քեզ պատուէր, զի արդ առցես ըզլայնուղին քաղաք տրովեանց,
Քանզի ոչ եւս 'ի հերձիս ինչ են անմահքն ողիմպաբնակք.
Ողոքեալ Հերայի զամենեսեան ած 'ի մի կամս,
Եւ չարիք ըսպառնացեալք հասցեն տրովեանց յԱրամազդայ։
Բայց դու լեր այդմ ուշակալ, եւ մի լիցին քեզ մոռացօնք
Ի մեկնել եւ թողանալ քաղցր եւ անոյշ քընոյդ 'ի քէն։
Զայս ասաց եւ անց գընաց, թողեալ ըզնա ինքն անդանօր
Ածել զայն ինչ ըզմըտաւ որ չէր 'ի գլուխ ելանելոց։
Զի Պրիամու քաղաքին կարծէր հասու լինել այն օր,
Տըխմար, եւ չէր խելամուտ՝ զինչ Արամազդ գործել խորհէր.
Զի ցաւըս տակաւին եւ հեծութիւնս էր ածելոց
Տրովացւոց եւ դանայեանց 'ի քաջամարտ ճակատամարտս։
Ի քնոյն զարթեաւ, բայց բակ ունէր զիւրեւ բարբառն աստուածեղէն,
Ցարուցեալ նըստաւ կանգուն, եւ ըզգեցեալ փափուկ շապիկ՝
Գեղեցիկըս նորակերտս, արկաւ զիւրեւ ըզլիկ մի մեծ.
Ի մաքուր ոտիցըն թաթս արկ կապեաց մոյկըս վայելուչս,
Եւ զուսովքըն արծաթագամ ուսընդանութ ածեալ կախեաց։
Ա՛ռ 'ի ձեռն ըզգաւազանըն հայրենի զյաւէրժ անեղծ,
Եւ նովաւ պատենազէն աքայեցւոց չոգաւ 'ի նաւս։
Առաւօտըն դիցանոյշ ելեալ յերկայնն եկն Ողիմպոս
Արամազդայ եւ անմահից այլոց լուսոյն աւետաւոր։
Նա պատուէր հրամանի քաջաձայնից ետ քարոզաց
Ազդ առնել գիսախտաղեղ աքայեցւոց 'ի հրապարակ.
Որոց անդէն քարոզեալ, ժողովեցին նոքա հապճեպ։
Բայց առեան նախ խորհըրդոյ նըստաւ ծերոցըն մեծանձանց
Առ նաւքն նեստորեան՝ պիլոսածնին թագաւորի.
Զորըս նա հըլածեալ՝ խոհեմազարդ կազմէր խորհուրդ.
Լըւարուք, սիրելիք. աստուածային եկն յիս Երազ
Ի քուն քաղցըր գիշերիս, յոյժ Նեստորի քաջին նըման
Երեսօք՝ կերպարանօք եւ հասակաւ համեմատեալ.
Եւ կացեալ 'ի վերայս՝ առ իս բան զայս բարբառեցաւ.
Ննջես, ձիավարժին քաջի որդիդ Ատրէոսի.
Ոչ է պարտ խորհրդական առն ըզգիշերն 'ի բուն քնանել
Որում յանձն է սաղաւարտեայ եւ այդքան հոգ տառապանաց։
Արդ դու ինձ միտ դիր փութով. յԱրամազդայ գամ քեզ բանբեր
Որ առ քեզ 'ի հեռաստ անտի խնամ ունի եւ գութ։
Զհերապանծ աքայեցիս ետ քեզ հրաման վառել համօրէն
Ճեպ 'ի ճեպոյ, զի այժմ առցես ըզլայնափողոց ոստան տրովեանց,

Զի այլ ոչ եւս են անմահքն ոխերիմաբանակք անմիաբան.
Աղաչեալ համոզեաց Հերա 'ի մի զբոլորեսին,
Եւ վրդովմունք առ դուրս հասեալ կայ տրովայեցւոց յԱրամազդայ։
Այլ դու կա՛լ զայդ 'ի մտի։ Զայս ասացեալ՝ Թռուցեալ գնաց,
Եւ քունըն քաղցրանիրհ առ 'ի յԱքէն Թօթափեցաւ։
Բայց տեսէք՝ Թէ վառեցուսցուք արգելք զորդիս աքայեցւոց.
Այլ 'ի փորձ մատնայց ես նախ՝ որպէս արժան իսկ է բանիւք,
Եւ հրաման տաց եղանել փախչել 'ի նաւս յոլովաթիաւ.
Իսկ դուք այլ ըք այլուստ յորդոր ձայնիւք լերուք խափան։
Զայս խօսեալ նորա՝ նստաւ, եւ 'ի նոսա յարեաւ Նեստոր
Աւազինին Պիղոսի հրամանատարն եղեալ ցօղ,
Որ 'ի սէր բարեաց նոցին՝ ճառեալ ասէ յատենի անդ.
Ո՛վ սիրելիք, զօրապետուք արգեացւոց եւ խնամակալք,
Եթէ այլ ուրուք զերազդ յաքայեցւոց լինէր պատմեալ,
Սուտ զատեալ ապաքէն բացէ 'ի բաց հրաժարէաք.
Իսկ որ մեծն յաքայեցիս պանծայ լինել՝ արդ նա ետես։
Օ՛ն եկայք զի վառեցուք Թերեւս զորդիս աքայեցւոց։
Ասացեալ զայս՝ յատենէ անտի սկսաւ երԹալ 'ի բաց.
Եւ նոցա յարեն կացեալ՝ հնազանդին տարանց եղեն հլու
Մականակիր Թագաւորքն. եւ ժողովուրդն ընԹանային։
Զոր օրինակ գունդագունդ մեղուաց դըրոհք ասպատակեն
Ես զեռէ զեռալէ 'ի քարածերպ դիմեալ մենէ,
Եւ ալեաւ Թռչունազօրէն 'ի գարնայնին վերայ ծաղկանց՝
Կիտաց այսր եւ կիտաց անդր խուռնախուռն սաւառնելով.
Այսպէս ազգք նոցա բազումք 'ի նաւակերոյն եւ 'ի վրանաց՝
Լայնախոր ծովափանցն 'ի հանդիպոյ տողեալ գնային
Ցարմատարամ 'ի հրապարակ, եւ 'ի նոսին եռայր Շշուկն՝
Հրեշտակն Արամազդայ՝ ձեռն տալ գնացիցն, եւ խռնեցին.
Կուտակէր հանդիսարանն եւ 'ի ներքոյ հեծէր երկիր
Ի բազմել ամբոխիցն, եւ էր շըշուկ անդ խառնաձայն։
Քարոզք ինն մեծագոչ արգելուին յաղաղակէն,
Լռել եւ ունկըն դնել Թագաւորացըն դիւցազանց։
Հազիւ հող բազմեալ խուժանըն զետեղ առեալ 'ի նըստարանսն,
Հանդարտեալ 'ի շըշընջմանց, յարեաւ արքայն Ագամեմնոն
Ի ձեռին կալեալ զգաւազըն՝ մեծաջան գործ Հեփեստեայ.
Հեփեստոս ետ զըրուաննեան Արամազդայ Թագաւորի,
Արամազդ պարգեւեաց Արգոսապան պատուիրակին,
Եւ արքայն շնորհեաց Հերմէս ձիավարժիկըն Պելոպեայ,
Ապա Պելոփս աւանդեաց Ատրէոսի հովուին աղանց,
Եւ Ատրեւս 'ի մեռանելն 'ի խաշնաւէտն եԹող Թիէստ,
Եւ Թիեստ եԹող ապա յԱգամեմնոն՝ կրել 'ի ձեռս
Եւ տիրել կըղզեաց կըղզեաց եւ Արգոսի համայնոլոր։

Արդ նորա 'ի նոյն յեցեալ՝ բան զայս ճառեաց արդիւնացուց.
Ո՛վ սիրելիք, քաջազունքդ գանայեան, Արեայ մանկունք,
Զրրուանեանն Արամազդ պաշարեաց ծանր 'ի զըմբաղ զիս,
Անօգնամն, որ յառաջ խոստուամն ետ ինձ եւ ակնարկեաց
Զիլիոն ամբարտաւանակ յաւէր եղեալ՝ երթալ 'ի տուն.
Իսկ զարդիս, նենգ չարաբանեաստ նիւթեալ զինեւ, տայ ինձ հրաման
Ձեռս 'ի գլուխ դառնալ յԱրգոս, յետ ծախելոյ բազում ամբոխ:
Այսպէս հաճոյ լեալ արդեօք գերագոյն Արամազդայ
Որ զքաղաքաց յոգունց բարձանս հիմն 'ի յարեւ ընկէց տապալ,
Եւ տակաւին տապալեսցէ, զի բուռն է յոյժ իւր զօրութիւն:
Իսկ կորանք են այս եւ յունկն ապագայից թէ լու լիցի՝
Այսպէս զուր այսչափ եւ այսց աքայեցւոց գումարտակաց
Պատերազմ անկատար պատերազմեալ եւ մաքառեալ
Ընդ որեար սակաւաւոր, եւ չեւ ինչ ցայժմ եղեալ զըրաւ:
Զի թէ կամ լինիցի աքայեցւոցս եւ տրովադեանց
Կնքեալ դաշն հաւատարիմ առնել հանդէս մեզ համարոյ,
Տրովացւոց զալ ժողովել՝ որչափ իցենն աստ երդաբնակք,
Իսկ մեք 'ի տասնեակս չոկեցեմք աքայեցիքս
Եւ մէն մի այր 'ի տրովեանց 'ի մատուցակ մեզ առնուցումք,
Շատ եւ շատ ինչ տասնեակք մնայցեն կարօտ մատուցակի:
Այսչափ ասեմ աւաւել լինել զորդիսդ աքայեցւոց
Քան զտրովեանս որ բնակաւորքն իցեն բնիկք 'ի քաղաքիդ.
Բայց յոլով աւանաց նիզակաճօճ արանց թիկունք
Կան հասեալ, որ ընկըրկեալ զիս չըտան թոյլ խորախտակելումս
Հարկանել սասանել ըղքաղաքաբնակդ Իլիոն բերդ:
Ամք իննեակ անցին գնացին ահա մեծին Արամազդայ,
Փըտեցան նաւափայտից գերանք, լուծան եւ առասանք.
Ամուսինք մեր, աղածրի տըղայ մանկունք մատաղօրեայք
Նստ 'ի տունս ակընկալեալ նըստին, եւ մեզ գործոյս հանդէս
Յոր եկեալ եկաք այսրէն՝ այսպէս զընի ցարդ անվըճար:
Այլ եկայք յոր ինչ ասեմս հաւանեսցուք բոլորեքեան.
Փախիցուք 'ի քաղցր երկիր մեր հայրենի՝ նաւալուղակք,
Զի ոչ եւս այլ յայսմհետէ զՏրոյա կալցուք ըղլայնուղի:
Զայս ասաց եւ ըղսիրտս ամենեցուն անդէն 'ի խուռնն
Համ շարժեաց 'ի լանջս եւրեանց ոյց չէր զգաղտնին լըւեալ խորհուրդ:
Փոթորկեցաւ հրապարակն իբրեւ զալեաց ծովու կուտակ
Զիկարեանն անդընդոց՝ զորըս Հարաւ եւ Հիւսիւս
Յարոյց՝ հըրոս ոստուցեալ յամպըրապաց հօրն Արամազդայ:
Եւ զօրէն իմըն Զեփիւռ ծածանէ զխոր ինչ անդաստան
Թափ անկեալ մըրըրկաբեր եւ ըղհասկօքն տապատակեալ,
Հրապարակին ամբոյն համայն տատանեցաւ, եւ զիմէին
Ի նաւակնեայսն աղաղակաւ, եւ ընդ ոտիւք նոցա փոշի

Փողեալ ելեալ ծառանայր, նոքա միմեանց տային խրախոյս
Բուռն 'ի նաւսն արկանել, յաստուածային հրդել 'ի ծով,
Եւ ըղձոտաղին հորդեցին. ձայնիցն յերկինս եհաս գոչիւն
Ի տուն 'ի տուն ձեռակերտ, եւ ըղձաւոցն ատենուէին մոյթս:
Անդ անհրաժան 'ի բախտէն աքայեցւոց հասանէր դարձ,
Եթէ չէր հերայի առ Աթենաս բան զայս խօսեալ.
Աւա՛ղ, վեհանձնադրոշն Արամազդայ դուստր անվըկանդ,
Ի տուն այսպէս ուրեմն՝ 'ի հայրենի բընիկ երկիր
Փախնուցուն արգիւացիք ընդ անդընդոց լայն մըկանուս,
Եւ պարծանքս Թողուցուն Պրիամոսի եւ տրովադեանց
Զհեղենէն արգիւուհի, յոյր սակս յոլովք յաքայեցւոց
Ի Տրոյա կորեան, 'ի բուն եւ յանձկալի երկրէն նըշդեհք:
Այլ արի արդ 'ի բանակս աքայեցւոց զինազգեստից,
Ողջէն քոյով բանիւք՝ զայր այր արգել զիւրաքանչիւր,
Եւ թո՛յլ մի տացես 'ի ծով զճօճձեմական վարել նաւկնեար:
Զայս ասաց եւ Աթենաս լըւաւ խաժակն աստուածուհին.
Վաղս ատեալ Թափառնակի էջ յՈ՛ւղիմպեայ 'ի գագաթանց,
Եւ հասեալ փութապէս յաքայեցւոցն երագ քաջախ՝
ԶՈդիսեւս ըղձանձարեղն եգիտ նըման Արամազդայ,
Զի կայր ձեռն ինչ չարկեալ 'ի նաւըն սեաւ զեղեցկատախտ,
Զի անկեալ 'ի սիրտ նորա եւ 'ի յոգին էր ցաւըն սուգ:
Իսկ խաժակն Աթենաս մատուցեալ մերձ ասէ առ նա.
Մաղգեղնդ Լայերտեան, բազմահընար քաջդ Ոդիսեւս,
Իսկ արդ այսպէս 'ի տուն, 'ի բնագաւառդ անձկակարօտ
Փախչիցիք ուրեմն՝ 'ի նաւսդ անկանելով 'ի յոգնատախտ,
Եւ պարծանքս Թողուցուք Պրիամոսի եւ տրովադեանց
Զարգիւուհին հեղենէ՝ որ վասն յոլովք յաքայեցւոց
'Ի Տրոյա կորեան՝ 'ի քաղցր հայրենական երկրէն հեռի:
Այլ դու մի՛ դլար դադարեր, արի յամբոխն էլ աքայեանց
Եւ խօսիւքդ ողոքանօք զիւրաքանչիւր ոք խափանեա,
Եւ տացես մի՛ թո՛յլ 'ի ծով զճօճձեմականսն արկանել նաւս:
Զայս ասաց, եւ նա ծանեաւ զաստուածուհւոյն ձայնի բարբառ.
Ընթանալ դէմ եդ, ընկէց յանձնէ զկըրկնոցն, առ եբարձ զայն
Քարոզն Եւրիբատէս իթակեցին որ զհետն երթայր:
Ատրիդէան Ագամեմնոնի անցեալ գնացեալ ինքն ընդ առաջ՝
Ա՛ռ ըզցուպն 'ի նմանէ զհայրենաւանդ պաւէրժ անեղծ,
Եւ չոգաւ նովիմբ 'ի նաւըս պղնձազրահ աքայեցւոց:
Զո՛ր եւ ոք թագաւոր կամ պատուաւոր գըտանէր այր,
Ըզնոսա մատուցեալ ամոք բանիւք յետ նահանջէր.
Դիւցազինդ, ոչ վայելէ քեզ իբր ըզվատ ոք վեհերել.
Այլ ինքնին դու նիստ քեզէն եւ բազմեցո զայլս ժողովուրդն.
Զի հրամուտ չես հաւաստեաւ՝ Ատրիդեսի զինչ միտք իցեն.

Փորձէ արդ, ո՛ գիտէ հարցէ զորդիս աքայեցւոց։
Ոչ լուաք ամենեքին զոր ինչ ասացն 'ի խորհրդեան,
Գուցէ չարիս՝ սրտմտեալ՝ աքայեցւոց որդւոցս անցէ.
Քանզի մեծ է բարկութիւն դիւցազնութեանդ թագաւորի.
ՅԱրամազդայ է պատիւն, եւ սիրէ զնա դգօնն Արամազդ։
Իսկ զոր յռամիկ արանց տեսեալ յաղաղակելն անդ ըմբռնէր,
Հարկանէր գաւազանաւն եւ կշտամբէր 'ի սաստ բանից.
Ա՛յ չքնաղ, նիստ անխռովիր, այլոց ձայնի լեր ունկնդիր՝
Որ 'ի վեր են քան զքեզ, դու վատասիրտ եւ տկար,
Ոչ մարտից ինչ ուրեք, ոչ խորհրդոյ 'ի համարի։
Ոչ բոլոր աքայեցիքս արքայասցուք աստ ապաքէն.
Չէ բարւոք յոգունցն իշխել, մի ոք եւեթ իշխան լիցի,
Մի թագաւոր, ում շնորհեաց կորովամտին Զրուանայ Ճետ
Իրաւունս եւ գաւազան՝ թագաւորել տիրել նոցա։
Այսպէս սա ճոխճեմելով ըզզօրականսն տնօրինէր,
Որ դարձեալ 'ի հրապարակ անդր 'ի նաւուց եւ 'ի վրանաց՝
Դիմէին 'ի ձայն հրնչման, որպէս յորժամ դոչօղ ծովուն
Մորնչեն ալիք 'ի մեծ ափունս եւ գոռան խորք անդընդոց։
Արդ բազմեալ կային այլք 'ի նըստարանսն եւ ընկաղձեալք։
Թերսիտէս գեռ միայնակ շաղակրատութեան կարկաչէր,
Որ հմուտ էր 'ի սրտին շաղփաղփ խօսից եւ խառնաղանձ՝
Առաւել եւ անհեթեթ ճամարտակել ընդ թագաւորսն
Որ զինչ եւ ծաղրածուն թուէր նըմա յարգիացիս։
Ոչ քան զայս ոք լեպեշտ 'նդ Իլիոնիւ եկեալ էր այր,
Խեղ աչօք եւ միով ոտամբըն կաղ եւ սապատողն,
Ուսքն 'ի լանջսն կորովեալք, իսկ 'ի վերուստ կուռէ սրագլուխ,
Եւ 'ի լերկըն կառափին ցրցուէր անօսր աղուամաղ սուղ։
Ատելի էր մանաւանդ Աքիլլէսի եւ Ոդիսեայ,
Զորս ցանգ թշնամանէր. այլ արդ դիւցազն Ագամեմնոնի
Սուր ճիչիւ ձըգէր լուտանս, իսկ ընդ նմին աքայեցիքն
Անհնարին ոխացեալ ըզչարեէն 'ի սիրտս իւրեանց.
Սակայն նա բարձրաբարբառ զԱգամեմնոն անէր գըլոռով.
Ատրիդէս, արդ զի՞ տըրտունջ կամ եւ իւիք իցես կարօտ,
Պղընձով լի են վըրանքդ, եւ 'ի խորանսդ ընտիր ընտիր
Կանայք կան բազումք, զորըս յառաջ քան զամենայն
Քեզ շնորհեմք աքայեցիքս՝ յորժամ զաւար ինչ առնուցումք։
Միթէ ոսկւո՞յ եւս կարօտիս՝ զի ոք բերեալ մատուսցէ
Ի տրովեանց քաջաձիոց յԻլիոնէ, որդւոյն փըրկանս՝
Զոր ածիցեմ ես կալ եւ կապ, եւ կամ թէ այլ ոք յաքայեցւոց.
Կամ թէ զկին ոք աղջկամարդ՝ զի տըռփութեամբ յօծնուցուս զայն,
Եւ 'ի քեզ տարցիս ուրոյն. այն իշխանի չէ ինչ պատշաճ
Ի չարիս վարել հանել մըղել զորդիս աքայեցւոց։



Digitized by Google

Է՛ ըրոցք բըծկանք չարակներ, աքայուհիք՝ ոչ աքայինք,
Օ՛ն 'ի տուն դարձցուք նաւուքս, և զդա լքեալ թողցուք այսրէն
Ըմբոշխնել հալել զպարգեւսն աստ 'ի Տրոյա, զի գիտասցէ
Թէ իցեմք ինչ արդեօք օգուտ նմին մեք, եթէ ոչ։
Որ և այժմ զԱքիլլեսս՝ ազնուագոյն յոյժ քան զինքն այր,
Անարգեաց, քանզի զպատիւն անձամբ կորզեալ յինքըն եհան։
Բայց 'ի սիրտ Աքիլլեայ բընաւ չիք մաղձ, այլ կայ յորսայս.
Թէ ոչ, Ատրիդ, ո՛ն և ո՛ն՝ յետին նըւաստ զայս խըռէիր։
Զայս ասաց նախատելով զԱգամեմնոն զհովիւն ազանց
Թերսիտէս՝ առ որ իսկոյն հասեալ Ոդիսևսն հաւասար դիւցազն
Եւ խեթիւ հայեցեալ 'ի նա սաստեաց ծանըր բանիւ.
Թերսիտէս լեզուադար, թէ և ճըռուող ճառամաքան,
Կարկեաջիր, մի՛ դու միայն ընդ թագաւորս խեռել ժըտիր։
Ոչ կարծեմ քան ըզքեզ վատթարագոյն զայլ ոք լինել
Ցընդհանուրս որ եկին ընդ Ատրիդեանս այսր յԻլիոն։
Մի՛ արդ յանեալ 'ի բերան ըզթագաւորսըն՝ ճառատեր,
Մի՛ եպեր չըփեր զնոքօք, և մի՛ դարձի ակն ունիցես.
Զի չգիտեմք ըստուգիւ զիարդ այս գործք վըճարեսցին,
Թէ բարեա՛ւ եթէ չարաւ դարձցուք որդիքս աքայեցւոց։
Արդ այժմիկ Ատրիդեանն Ագամեմնոնի՝ հովուին ազգաց՝
Զուր նըստեալ պարսաւադէտ, թէ նմա պարգեւս առատ շնորհեն
Դիւցազունքըն դանայեանք, և թըրթռակես բան ըղկըծիչ։
Սակայն յայտ ասեմ քեզ, որ և եղեալ հասցէ յամբողջ.
Եթէ այլ ևս ինչ ըզքեզ զըտից շամբըշեալ՝ իբր աստ արդէն,
Մի՛ ևս այլ այնուհետև յուսս իւր կացցէ գլուխ Ոդիսեայ,
Եւ ոչ յայնմ ինչ հետէ Տելեմաքեայ կոչեցիմ հայր,
Եթէ ոչ կալեալ ըզքեզ և 'ի ձորձոց այտի լերկեալ՝
Ի մեկնոցէդ ցըշապիկդ և որ ծածկենըն զամօթոյդ,
Այնպէս ըզքեզ վարեցից յերագաթեւ նաւս յատենէս
Գանալից կականաւոր չարակոչկոծ խայտառակեալ։
Զայս ասացեալ՝ ըզթիկունսն և զուսս եհար գաւազանաւն,
Ինքն կարկամեալ կըծկեցաւ, յաչացն անկան յորդ արտասուք։
Երաշխեաղ արիւնաներկ կապուտակեալ եղ 'ի միջնոցն
Ընդ ցըպովն ոսկեղինաւ. 'ի նիստ եղեւ նա պակուցեալ,
Եւ կըսկըծեալ՝ այլանդակ հայեցուածով ջընջէր զարտօսր.
Իսկ նոքա, թէպէտ ծըմբեալք, ծաղր իմըն քաղցր հեղին զնովաւ,
Եւ այր յընկեր նայելով՝ այսպէս ինչ մին ասէր ցըմիւս.
Բարերա՛ր դիք, արդարեւ բիւրս Ոդիսևս գործեաց բարիս,
Քաջութեան առեալ խորհուրդս և պատերազմ յարդարելով.
Իսկ արդ զայս ինչ լաւագոյն յարգիացւոց կատարեաց գունդ,
Զի զըրբախօս հայհոյիչդ 'ի կաճառացս արգել կարճեաց։
Ոչ ևս ըզնա միւսանգամ ժըմերտ ոգին ընդոստուսցէ

Բամբասել ըղձապաւորս երգիծանօղ լեզուանուԹեամբ ։
Զայս ամբոխն ասացին, իսկ Ոգիսեւս քաղաքաւորն
Ցոյն եկաց մական 'ի ձեռս, եւ ԱԹենաս մեղուակն առ իւր
Ի նմանուԹիւն քարոզի սաստեաց լռել ժողովրդեան,
Զի առաջինք եւ վերջինք աքայեցւոց մանկունք համօր
Ըզպատգամսըն լուիցեն եւ ըզխորհուրդն առցեն 'ի միտ ։
Եւ նա նոցին 'ի բարիս առեալ խօս եղեալ ասէ.
Ատրիդէս արքայ, զարդիս կամին ըզքեզ աքայեցիք
Բազմաբարբառ մահկանացուաց առնել առակ նշաւակի.
Ոչ առնեն զխոստումն 'ի գործ, զոր յանձն առեալ ուխտեցին քեզ
Ի սկըզբան արշաւանիս 'ի ձիաբոյծն արգոսացւոց,
Մինչ զԻլիոն չեւ քանդեալ զամրապարիսպ՝ չառնել քեզ դարձ ։
Զի զորէն մատաղերամ մանրիկ մանկատղ այրի կանանց
Ողբս առեալ ընդ միմեանս կողկողին դառնալ 'ի տուն ։
Տառապելոյն խրատումս համէ 'ի դարձ վիշտ վըտանգին.
Զի ամսով չափ եւեԹ 'ի տար անկեալ ոք յամուսնոյն՝
Ի յոգնալըւած ծընգի նաւին, զոր փոԹորիկք ձըմեռնատանջք
Եւ խռովռ մըրըրկայոյզ ծով պաշարեալ պըտուտքիցեն ։
Իսկ արդ մեզ, այս իններորդ է աւասիկ բոլորեալ ամ
Զի աստէն կամք գեղերեալ. արդ ոչ սըրտնեամ աքայեցւոց
Տըխրատել առ մահկաձեւ նաւուք, սակայն ոչ ինչ ընդհատ
Ծանականք են յամենալ, եւ դարձ առնել ունայնաձեռն ։
Համբերեցէք, սիրելիք, ժամանակին ակըն կալայք,
Զի ուսցուք՝ եԹէ Կալքաս ըստոյգ Թէ ոչ գուշակիցէ ։
Քաջ իսկ զայս ունիմք 'ի միտ, եւ էք վըկայք ամենեքին
Զորս երէկ եւ յեռանդ օրհաս մահուն չառ եւ գընաց.
Մինչ յԱւլիս աքայեցւոցըս գումարէր նաւահանգէս
Եղեռըն Պրիամու եւ տրովացւոց հասուցանել,
Եւ մեք շուրջ զաղբերականբ եւ 'ի բագինըն նուիրականս
Անմահիցըն զոհէաք զընտիր ընտիր սպանդեկ զենմունս
Ընդ վարսագեղըն սօսեաւ ուստի բըղխէր աղբիւրն յըստակ,
Անդ նըշան մեծ երեւեալ վիշապ մի օձ Թիկնակարմիր,
Սոսկալի, զոր ինքըն նոյն իսկ Ոլիմպեանն եհան 'ի լոյս,
Ի ներքուստ բագնին ընդոստ ել եւ դիմեաց սողոսկ 'ի սօսն ։
Անդ էին ձըղձըղկի փափկիկ ձագուկք՝ մանկտի մանրիկ՝
Ի ծայրի անդ դիտակայն ընդ սաղարԹիւքըն սալարեալք,
ՈւԹ մ՚ 'ի Թիւ՝ ընդ որում մայրն էր իններորդ՝ ծընողն որդւոց ։
Անդ նա ինքն եկեր զնոսին՝ մինչ ձըձուէինն ողորմ ողորմ.
Մայրըն ծիչ բարձեալ Թըրթռէր ըզմանկըտեանցըն սիրասուն.
Եւ զնովաւ զալար տըւեալ կալաւ զԹեւոյն 'ի գուժելն անդ ։
Իսկ զորդեական իբրեւ կերաւ ըզձըղձըղկին եւ զնա ինքնին,
Եւ ըզնա նըշանակերտ կացոյց աստուածն որ զայն եցոյց.

Քանզի զնա վիմատատեաց կործանմամբ Զըրուանեայն ձեռն ,
Եւ կայաք մեք ընդ հրաշն պատահմանն ըղձանշացեալք :
Այսպէս անդ գըժնէ նըշանք գեց 'ի վերայ հասին զոհիցս ,
Եւ Կալքաս եա ընդ եա ասէր անդէն հըմայելով . —
Զի՞ անշըշունչ համրացայք , աքայեցիքդ վարսագեղունք .
Զայս Արամազդ խորհրդական երեւեցոյց մեզ նըշան մեծ ,
Անագան , յամրահաս , որ ոչ երբեք կորիցեն փառք :
Որպէս սա զճընճըղկին եկեր մանկունս եւ ըզնա ինքն ,
Ութ մ' 'ի թիւ՝ ընդ որում մայրն էր ինններորդ՝ ծընողն որդւոց ,
Նոյն եւ մեք ամըս նոյնչափ պատերազմեալ մարտիցուք անդ ,
Իսկ ասա 'ի տասներին առցուք զքաղաքն արձակափողոց : —
Նորա զայս ինչ ճառեալ՝ արդ ամենայն 'ի լըռումըն գայ :
Բայց աղէ զանեղի կացջիք , աքայեցիքդ քաջասրունք ,
Աստ համօրէն՝ մինչեւ ըզմեծն առցուք ոստան ըզՊրիամու :

Զայս ասաց , մեծ գոչեցին արգիւացիք , — եւ նաւքըն շուրջ
Հընչեցին ընդդէմ ահեղ յաքայեցւոց աղաղակէն , —
Ի գովեստ առեալ ըզբանն աստուածայնոյն Ոդիսեւսի :
Առ որս ասաց Գերենեանըն խօսեցաւ Նեստոր ասպետ .

Աստուածազգն երդուեալ , համօրէն շաղակրատէք խօլ մանկըտւոյ
Որոց չէ ինչ փոյթ բընաւ իրաց մարտի պատերազմաց :
Իսկ յո՞ զուխտս մեր տարցուք եւ ըզդաշանց մերոց երդմունս .
Արդ 'ի հո՞ւր երթիցեն խորհուրդք մարդկան եւ անաշութիւնք ,
Անապակէք հեղեալ նուէրք ., եւ աջք յուսով վըստահացեալք .
Քանզի զուր բանակռուէ լինիմք եւ ոչ ինչ ժամանեմք
Մարթել խնել ինչ հընարից` հարուստ մի լեալ աստ ժամանակ :
Ատրիդէս , դու իբր յառաջին անդրդուելի կալեալ խորհուրդ՝
Ի զօրաւոր գուպարածս արգիւացւոց լեր առաջնորդ ,
Եւ թողցես հաշել մաշել սոքա առանձինն յաքայեցւոց
Մի կամ երկուք առանձին խորհուրդ , — եւ ոչ յարդիւնս ինչ եկեսցեն , —
Զի դարձցին յԱրգոս մինչ չեւ զասպարակիրն Արամազդայ
Ծանուցեալ զաւետիսն՝ եթէ իցէ սուտ եւ թէ ոչ :
Արդ ասեմ թէ ակնարկեաց ամենազօրըն Զըրուանեան
Յաւուրն՝ յորում ելին արգիւացիք 'ի սրընթաց նաւս
Նախճիրս եւ օրահաս ածել բերել տրովադացւոց .
Զի յաջմէ փայլատակեալ երեւեցոյց նըշան յաջող :
Վասն որոյ , մի՛ եւ մի՛ ձեռնեսցի ոք դառնալ 'ի տուն՝
Չեւ ուրուք ընդ ումեք 'ի տրոյացւոց կանանց քունեալ ,
Եւ վրէժ խնդրեալ զՀեղինեայ զառեւանգին եւ զհեծութեանց :
Իսկ թէ ոք անհընարին է խանդակաթ դառնալ 'ի տուն ,
Թող բուռն հարցէ զգեղեցկատախտ եւ զթոյրաթուխ նաւէն իւրմէ ,
Զի քան զայլս յառաջագոյն հասցէ մահուն եւ օրհասի :
Բայց , արքայ , եւ դու քեզէն խորհեսջիր քաջ , ունկնում անսա .

Մի խոտան ինչ եղիցի քեզ որ ինչ եւս ասացից բան ։
Ընտրեսջիր, Ագամեմնոն, զարս ըստ ցեղից եւ ըստ տոհմից,
Զի տոհմի՝ տոհմ 'ի Թիկունս հասանիցէ, եւ ցեղի՝ ցեղ ։
Որ թէ այսպէս առնիցես եւ անսայցեն քեզ աքայեանք,
Ծանիցես՝ ով վատն իցէ 'ի զօրագլխաւորս եւ ո յազգաց,
Եւ ով քաջն իցէ արդեօք· զի իւրովանքն մրցիցեն·
Եւ թէ զքաղաքն յաստուածուստ ինչ չունիցես վանել վանդել,
Թէ յարանցդ անարիութեանց եւ 'ի մարտի խամութենէն ։
Եւ նըմա պատասխանի Ագամեմնոն իշխան, ասէ·
Օ՜ն եւ ծն, ծեր, յաւետին գլես զորդիս աքայեցւոց ։
Օ՛շ թէ, հա՛յր Արամազդ եւ Աթենաս եւ Ապողոն,
Տա՛ն ինձ էին այսպիսիք աքայեցւոց խորհրդակիցք·
Յայնժամ մերձ ընդ մերձ քաղաքըդ Պրիամու Թագաւորին
Կործանէր 'ի ձեռաց մերոց առեալ եւ աւերեալ ։
Բայց Զրուանեանն Արամազդ ապարաղէն՝ խառնեաց յիս ցաւս
Որ յումպէտ զիս 'ի կագ եւ 'ի կռիւ խարդաւանէ ։
Ահա ես եւ Աքիլլեւս 'ի գոռութեան բանս ողորեալ
Գըժտեցաք զօրինորդէն, եւ զառնութեանն ես եղէ սկիզբն·
Իսկ թէ զամ մի համամիտ գըտցուք, այլ ոչ եւս յայնմհետէ
Յապաղումն ինչ կործանումն անկցի տրոյեանց եւ ոչ խուն մի ։
Այլ արդ ծն երթայք 'ի ճաշ, զի խմբեսցուք ընդ պատերազմ·
Այր ըղանէդ իւր սուր սրեսցէ, յօրինեսցէ կազմ եւ զասպարն,
Առատապէս արկցէ բուս օգտակարին երիվարաց,
Եւ մանր ըղկառքն զննեալ՝ 'ի գուպարած արասցէ ուշ,
Զի ահեղ պատերազմաւ զօրըն ցերեկ տացուք ճակատ ։
Զի ոչ դուլ ինչ եւ դադար անկցի կըրճիմ եւ ոչ դոյզն ինչ,
Եթէ ոչ եկեալ գիշեր որոշեսցէ զարանց կորովս ։
Ըզլանջըք առն անձնապաշտ վահանին փոկ ընդ քըրտն հարցի,
Եւ ձեռն իւր զնիզակաւն աշխատ լիցի վաստակաբեկ,
Քըրտնեսցի եւ երիվար ձըգել ըղկառսն ողորկաշէն ։
Իսկ զոր ես ոք 'ի մի կողմ 'ի ճակատէն տեսանիցեմ
Ի մընալ մէտ եւ յօժար առ գալարուն կարկուրէիւք,
Ոչ գըտցի իւր բաւական փըրկիլ 'ի շանց եւ 'ի հաւուց ։
Զայս ասաց, եւ 'ի ձայն արգիւացիք գոչեցին մեծ
Իբր ալիք 'ի բարձր ափունս, յորժամ դիմեալ շարժէ հարաւ
Ի քաղաժայռ գահաւանդ, զոր ոչ երբէք թողուն կոհակք
Ի խուժել ըսպէսպէս հողմոց յարձակելոց աստի անտի ։
Յարուցեալ ընթանային զբաղեալ սփռեալք 'ի նաւս իւրեանց·
Հրատ արկեալ՝ ծուխ ըստ վըրանս հանէին վըրանս եւ ճաշեցան ։
Այլ այլում 'ի դից զոհէր յաւէժաբար միշտագոյից,
Հայցէր ապրել 'ի մահուանէ եւ 'ի խաղձ մարտակըռուին ։
Իսկ արանց արքայն մատոյց Ագամեմնոն եզըն մի սպանդ.



Digitized by Google

Գարարակ հենդեանն առ Զրուանեանն անհնազոր,
Եւ ըղձերըն հրաւիրեաց՝ ըղդեաս հանուր աքայեցւոց.
Նախ քան զայլս ըղնեստոր եւ զԹագաւորն Իդոմենեւս,
Եւ ապա 'առ նոցանէ զերկին Էաաս, զորդին Տիդեայ,
Եւ վեցերորդ զՈդիսեւս զԱրամազդայն զուգահանճար:
Ինքնակամ եհաս առ նա Մենելաւոս ահեղագոռ,
Զի գիտէր յանձին իւրում՝ յինչ գործ եղբայր իւր պարապէր:
Գոր զեզամբըն բոլորեալ առին բարձին ըղմուրկն 'ի ձեռս,
Ցորս յաղօթս Ագամեմնոն կացեալ արքայ՝ բարբառեցաւ.
Մեծափառ վեհդ Արամազդ՝ ամպրոպաթուխ՝ արփիափնակ,
Մի մըտցէ արեգակն եւ մի հասցէ նըսեմ խաւար,
Մինչեւ ես ըղՊրիամեան հարթայատակ այրեցաւէր
Փլուզից ըղատուն, եւ ըղդրունսըն յոխերիմ դառնեցայց հուր,
Եւ զհեկտորեան լանջապանակն 'ի կուրծըս իւր խորտակեցից
Գատապեալ 'ի սայր պղնձի, եւ յոգնախուռն զեւրեւ հանհարգք
Բերանսեալ 'ի փոշւոջ՝ ատամամբ առցեն զերկիր:
Ասաց զայս, սակայն նըմա զայն Զրուանեանն ոչ կատարեաց,
Ըղպատարագսն ընկալաւ, բայց երկս յաւել Թըշուառագունս:
Իսկ ապա յետ աղօթիցն եւ ցանելոյ զողբրդութեան մուրկ
Զըպատանդըն ալն յողն անձեալ եւ փողոտեալ մորթեցին նախ,
Եւ զազդերսն յօշեալ ըղթամբ՝ ճարպովն համակ պատեցին շուրջ,
Եւ երկպատկեալ՝ արկին զնոքօք պատառ պատառ կառոյս հումհում:
Եւ զնոսա խարուկէին անտապարթուն փայտից շերտիւք,
Եւ զընդերըսն շամփրեալ՝ ըղկայծակամբք ունէին հրոյն:
Իսկ ազդերըն խորեւ եկզան եւ զփորոտին ճաշակեցին,
Զայլըն մանըր կոտորեալ, հարեալ 'ի սայրս անդըր շամփրոց՝
Խորովեցին հըմտաբար եւ զամենայն առին 'ի բաց:
Ի գործոյն դադարեալ եւ յօրինեալ ապա զխրախճանս,
Ճաշեցան մինչ զուգաչափ խորտկաց այլ ոչ կարօտէր սիրտ:
Զըմպելեաց եւ զկերակրոց իբրեւ զքաղցեն հարին փափագ,
Ասեղ սկըսաւ առ նոսա Նեստոր ասպետըն Գերենեան.
Ատրիդէս վեհափառ, արանց արքայդ Ագամեմնոն,
Մի եւս այլ ձեզ ըղբանիւք անկանիցիմք, եւ մի 'նդ երկար
Ըղգործս յապաղեսցուք զոր ինքն աստուած 'ի ձեռըս տայ:
Օ՜ն աւեալ քարոզից բարձեալ ըղձայն գումարեսցեն
Ըզ նաւկնեաըն ըղժողովուրդ պատենաւէն աքայեցւոց.
Իսկ մեք՝ միահաղոյն այսպէս ընդ մեծ զօրն աքայեանց
Դիմեսցուք վաղվաղակի յարուցանել ըղքուռն Արէս:
Զայս ասաց. արքայն արանց Ագամեմնոն չարար ապախտ,
Իսկ եւ իսկ ետ հրաման քաջաձայնիցըն քարոզաց
Ձայնել 'ի մարտ պատերազմի գեղանագուրսագեղ աքայեցիս.
Կարգացին սոքա քարոզ, նոքա ձեպով խուռն առին հաւաք:

Որ զԱտրիդեաւըն կային՝ ընթանային մաղթեղն արքայք
Կարգս ընտրել, եւ խաժաչեայն Աթենաս 'ի մէջ նոցա
Մեծազին ասպարն 'ի ձեռս՝ անծերականն՝ անմահացուն ,
Յոր կախէին ծոպք հարիւր 'ի վերջաւորս՝ համակ ոսկիք ,
Մէն քաջոլոր փողփողեալ, մին մ' 'ի հարիւր արջառոյ գին ,
Իւ ոստուցեալ ասպատակէր ընդ բազմամբոխն աքայեցւոց՝
Յորդորել վարել յառաջ . եւ արկ հանուրց 'ի սիրտ կորով
Կալ անդուլ անդադար մղել ճակատ եւ գուպարել :
Եւ անդէն պատերազմըն քաղցրացաւ նոցա քան դդարձ
Ի նաւակսըն գոգաձեւս 'ի հայրենի սիրուն գաւառ ։
Զոր օրինակ հուր ծախէ 'ի բարձրածայր լերին կատար
Հըրդեհէ զանտառ մայրի եւ փայլակնն նշոյլըն 'ի բաց ,
Նոյն եւ սոցա 'ի խաղալն՝ յանհաղահրաշ 'ի պղընձոյն
Ճառագայթ բոցաձաձանչ արփաթեւեալ գընայր յերկին ։
Եւ զօրէն խմըն հաւուց թռչնոց գըրոհք՝ հոյլ խուռներամ,
Սագուց կամ թէ կռընկանց՝ երկայնավզից կամ կարապից ,
Ի մարգին ասիական ըզկայստրեան շուրջ հոսանացն
Այսր եւ անդըր սաւառնեալք թեւապարեալ խայտան շողան
Ցիջանել հարօրանօք կարկաչաձայն , եւ մարգն հընչէ .
Սապէս սոցին բազմամբոխք 'ի նաւէններոյն եւ 'ի վրանաց
Ի դաշտ անդր յորդորեալ ծաւալէին 'ի Սկամանդրեան ,
Եւ ահագին թընդէր գետին 'ոտիւք նոցուն ու երիվարացն :
Եւ կացին 'ի Սկամանդրեան մարգագետնին 'ի ծաղկաւէտ
Բիւրք բիւրուց , որչափ փըլթթին տերեւք՝ ծաղկունք գարնանաբուսիք ։
Եւ համայն թանձրախիտ ճանճնոյ ճեռ բազմաժողով
Որ 'ի գաւիթն հովուական շուրջանակի շըրջին թափառ
Ընդ ժամանակ գարնայնոյ , մինչ կաթն ըղդոյլսն ոռոգանէ .
Նոյնքանիք ընդդէմ տրովեանց աքայեցիք գիսակագեղք
Ի դաշտի անդ կային խանձեալք յարիւն՝ լըղել զնոսա ։
Եւ զոր օրէն բազմաբոյլ այծից հօրանս արք խաշնարածք
Դիւրաբար ընտրեալ մեկնեն՝ թէ խառնեսցին յարօտս ուրեք ,
Նոյն եւ զսոսին պետք 'ի ռազմ յօրինէին յայս կոյս եւ յայն՝
Ի գուպար շահատակել . ընդ որս արքայն Ագամեմնոն՝
Աչք եւ գլուխ իւր համայն փայլակնազուարճն Արամազդայ ,
Եւ Արեայ՝ միջոյն կամար , կուրծք քաջալանջ՝ Պոսիդոնի ։
Օրինակ խմըն զուարակ քան զամենայն է պերճ յանդեայս ,
Զի յերընջուցն 'ի նախրացն երամակին շըքեղ նազի ,
Զոյգ նըմին զԱտրիդէս յաւուրն յայնմիկ եդ Արամազդ
Գանձալի եւ գերափառ 'ի բազմազունդ դիւցազանց պար ։
Ողեցէք ինձ արդ , Մուսայք՝ ոլիմպեան տանցըն բնակաւորք , —
Քանզի դուք աստուածուհիք էք մերձակայք՝ բնաւից հըմուտք ,
Մեք շըշունջ եւեթ լըսեմք , եւ ոչ ինչ ոչ գիտեմք համբուն , —

Ո՛յք ոմանք զօրագլուխք դանայեցւոցն էին եւ պետք ։
Իսկ ամբոխին չասանիցեմ եւ ոչ անուամբ չափ յիշատակ,
Ոչ եւս տասըն թէ լեզուք եւ բերանք տասն յիս լինիցին,
Եւ բարբառ անհատական, եւ պղընձի գուցէ յիս սիրտ ․
Բայց թէ Մուսայք ողիմպուհիք վահանապրոշ Դիոսյ դըստերք
Յուշարարք լեցին հանուրց զԻլիոնիւ գումարելոց ։
Արդ զիշխանսըն նաւապետս եւ զհամօրէն ասացից նաւս ։
Բիովտացւոց Պենելեւս եւ Լէիտոս էին իշխանք,
Ընդ նոսին Արկեսիլաւ, Պրոթոյենովր եւ Կլոնիոս ․
Եւ որ բնակէին 'ի Հիրիէ եւ որ յԱւլիսն էին քարուտ,
Ի Սքենոս եւ 'ի Սկոլոս եւ յԵտէոնէ 'ի բլրազարդ,
Ի Թեսպիա, 'ի Գրէա եւ յընդարձակ Միկալեսոս,
Որ նըստէին զՀարմայիւ եւ զԻլեսեաւ եւ զԵրիթրիւք,
Որ զԵլէոնէ ունէին եւ ըզՀիլէ եւ զՊետէոն,
ԶՈվկալէ եւ զՄեդէոնէ ըզգաստակերտըն բարեշէն,
ԸզԿոպայս եւ զԵւտրեսիս եւ ըզԹիսբէ աղաւնաւէտ,
Որ զարձեալ զԿորոնիա եւ զխոտաւէտն Հալիարտոս,
Որք ունէին զՊլատէայն, որ 'ի Գլիսաս էին բնակեալք,
Որ զՆերքնաթեբս ունէին զգեղեցկաշէն զիւղաքաղաքն,
Եւ զՕնքեստոս նուիրական՝ պոսիդոնեան շքեղն անտառ,
Որ զԱռնէ ողկուզալիցըն բնակէին, որ զՄիդիա,
Եւ զՆիսա դիւցական եւ զԱնթեդոնէ ըզհուսկ վերջին ․
Սոցա նաւք գնային յիսուն, 'ի մէն միում յիւրաքանչիւր
Պարմանիք բիովտացւոց հարիւր քըսան ելեալ մարտիկք ։
Որ յԱսպլեդոնէ բնակէին ու'ի մինիեանն Որքոմենոս,
Ասկալափոս իշխէր նոցա եւ Յալմենոս՝ ձետք Արէսի,
Զորս Արեայ քաջին ծընաւ Աստիոքէ կոյս ամօթխած
ՅԱզիդեանն Ակտորիսեանն ելեալ մեկնեալ 'ի վերնայարկ ․
Զի նա ննջէր ընդ նըմին անկեալ քունեաց գաղտագողի ․
Եւ սոցա նաւք երեսուն գոգեալք՝ կարգեալ ընթանային ։
Փոկկէացւոց Սքեդիոս եւ Եպիստրոփ կային իշխանք՝
Ուստերք մեծանձինն Իփիտոսի Նաւբոլիդեան ․
Որ զԿիպարիսն ունէին եւ ըզՊիթոնէ քարակոչկոռ,
ԸզԿրիսայն աստուածեղէն եւ ըզԴաւլիս եւ զՊանոպեւս,
Եւ որ շուրջըն բնակէին զԱնեմոռեաւ, զՀիամպոլիւ,
Եւ որ մերձ առ դիւցայինըն նըստէին Կեփիսոս գետ,
Որք ունէին զԼիլէայն՝ ըզԿեփիսեայ զաղբերականքն ․
Եւ սոցա քառասուն գնային ընդ հետ նաւք սեւաներկք ։
Եւ սոքին զփոկկէացւոց կազմէին ռազմ անցեալք 'ի կարգ
Բիովտացւոց առընթեր յահեակ թեւին 'ի զէն վառեալք ։
Լոկրացւոց՝ Ոյիլեանն առաջնորդէր երագն Այաս,
Կրտսերն, եւ ոչ որչափ Այասն էր մեծ Տելամոնեան,

Այլ յոյժ նիհար, վասն զի փոքր էր հասակաւ, կտաւազրահ,
Քաջատեգ քան զհամօրէն Հելլէն որեար եւ զաքայիկ.
Որ զԿինոսն ունէին, զԿալլիարոս եւ զՈպոյես
Եւ զԲեսա եւ Սկարփէ եւ զցանկալեալն զԱւգիէս,
ԸզՏարփէ եւ զԹրոնիոն՝ ըզԲոյագրեայ շուրջ յորձանօքն.
Եւ սոքա սեւաթոյր գնային ըզհետ նաւք քառասուն
Լոկրացւոցն բնակելոց յայնկոյս Եւբեայ նուիրականի:
Իսկ զառուլթեան փորաստոցք Աբանտք՝ Եւբեայ ըզնին բնակք,
Քալկիսի, Իրետրիոյ ողկուզաւէտն Հիստիեայ,
Կերինթեայ ծովափնէի եւ բարձրաբերձ Դիոն շինին,
Որք ունէին զԿարիստոն եւ 'ի Ստիրա կային բնակեալ,
Ճառաւիղն արիական իշխէր նոցա Ելեփենովր,
Քալկոդոնտեան, մեծանձանցն աբանտացւոց ըսպարապետ.
Զհետ իւր գնային ժիր Աբանտք գիսակաւորք ընդ ծոծրակ,
Արք կըռուոյ՝ նիզակօք դիմել հացեօք կարկառելովք
Բեկանել ըզլանջապահ զըրահս 'ի կուրծս ախոյենաց.
Քառասուն նաւք եւ սոքա գնային ըզհետ Թըխատեսակք:
Եւ որ զԱթէնս ունէին զգեղեցկակազմն աւանաշէն,
Զազգ մեծանձինն Երեքթեւսի, զոր անդ ուրեմն Աթենաս
Սընոյց դուստր Արամազդայ՝ զտորենաբեր երկրին ծընունդ,
Եւ յԱթէնըս նըստոյց 'ի պարարտուն իւր մեհենին,
Ուր ըզնա ինքն հաշտ առնեն գառանց յաշտիւք եւ զուարակաց
Ի դառնալ եւ բոլորել տարեաց մանկունք աթենացւոց,
Առաջնորդ սոցուն որդին Պետէոսի էր Մենեսթեւս՝
Որում չէք ոք գըտեալ համանըման այր երկրակոխ
Ցարդարել զերիվարս 'ի ռազմ եւ զարս ասպարակիրս.
Նեստոր եւեթ գուպարէր ընդ իւր, զի էր երիցագոյն.
Եւ ըզսորին նաւք յիսուն սեւաթորմիք գնային ըզհետ:
Եւ Էաս 'ի Սալամնէ երկոտասան ածէր քաշտիս.
Եւ տարեալ կացոյց ուր գունդք լաստեալ կային աթենացւոց:
Իսկ որ զԱրգոսն ունէին եւ ըզՏիրինս պարըսպաւոր,
ԶԵրմիոնէ եւ զԱսինէ 'ի խորագոյն ծոցին նըստեալս,
ԸզՏրիզէն եւ զԷիոնս եւ զայգեւէտն Եպիդաւրոս,
Որք ունէին զԷգինա՝ զՄասէս՝ մանկտին աքայեցւոց,
Էր նոցա զօրապետ Դիոմեդէս ահեղագոռ,
Եւ Սթենելոս՝ մեծանուն Կապանեւսի սիրուն զաւակ.
Ընդ սոսին երրորդ գընայր Եւրիալոս այր դիւցատիպ՝
Համբակըն Մեկիստեայ տալայոնեան Թագաւորին.
Սոցա գլուխ էր համօրէն Դիոմեդէսն ահեղագոռ,
Եւ ութսուն ըզսոցա գնային ըզհետ սեաւ լաստափայտք:
Իսկ որ զՄիկէնս ունէին ըզբարեշէնըն դաստակերտ
Եւ ըզՃոխըն Կորինթոս եւ ըզԿլէոնս վայելչակազմ,



Digitized by Google

Որ յՈռնիայ նստանէին եւ յըղձալին Արեթիրէ ,
Եւ յորում նախ Ադրաստոս թագաւորեաց՝ 'ի Սիկիոն ,
Եւ որ անդ յՀիպերեսի եւ 'ի բարձունս Գոնոյեսսա
Բնակէին ու'ի Պելլենէ , զԵգիոնիւ գաւառին շուրջ ,
Ըզբոլոր Ծովեզերն եւ զմեծանիստն Հելիկեիւ ,
Սոցին նաւաց հարիւրոց իշխէր արքայն Ագամեմնոն
Ատրիդէսն՝ ում յաղթանակուն եւ հոյակապ ազանց ժողով
Գնայր ըղձեա , յոր նա զգենոյր պղընձեայ փայլուն զանձամբ 'ի փառս .
Զի յամենայն դիւցազանց երեւէր շքեղ փառօք ,
Քանզի էր վեհապետ եւ բազմագոյն ածէր որեար :
Որ ըզխոր ունէին Լակեդեմոն անձաւախիտ ,
Ըզփարիս , զըՍպարտէ եւ ըզՄեսսէ աղաւնեւէտ ,
Ի Բրիսէիս գաղափարեալքն եւ յԱւգէիս զըւարճալից ,
Որք ունէին զԱմիկլայս եւ զծովափնեայ Հելոսն աւան ,
Որ զԼաասայն ունէին , եւ յԷտիլոս բնակեալքն շուրջ ,
Սոցա եղբայր էւր էր պետ՝ Մենելաւոսն ահեղագոչ՝
Վաթսուն կարկուրեաց , եւ ուշոցի զինուորէին .
Եւ խաղայր ինքն ընդ նոսա յորդորմամբ քաջախիզախ
Խրախոյս բարձեալ 'ի պատերազմ , եւ ըղձայր էր մանաւանդ
Զհելենեայ հանել ըզքէնն տառապանացն եւ զհեծութեանցն :
Որ 'ի Պիլոս բնակք էին եւ յԱրինէ հեշտաւէտ ,
Ի Թրիոն՝ հունն Ալփեայ եւ 'ի յԷպի շքեղակերտ ,
Եւ ուր տուն էր բնակութեան Կիպարիսսա եւ Ամփիգենի ,
Պտելէոս եւ Հելոս եւ Դորիոն , յորում Մուսայք
Թամիրեայ Թրակեցւոյ դիպեալ՝ յերգոյն լռեցուցին
Զեկեալն յՈքալիայ՝ յԵւրիտոսէ իքալեցւոյ .
Զի խոստացաւ ձայնամբ եւ Մուսայիցն անգամ երգոց
Ցաղթօղ լինել՝ դստերաց վահանապրոշն Արամազդայ .
Որ սրտամըտեալ շըլացուցին , եւ հատին զերգն աստուածատուր ,
Եւ զարուեստն քնարերգակ 'ի մոռացումն ածին նըմա :
Եւ սոցա զօրավարէր Ներտոր ասպետն Գերենեան ,
Որում նաւք խորամէջք իննսուներեակ զհետ կարգէին :
Իսկ բնակեալքն յԱրկադիա 'նդ բարձու լերամբըն Կիլլենէ ,
Առ շիրմաւն Էպիտոսի՝ ուր են որեար մերձամարտիկք ,
Որք էին 'ի Փենեոս եւ յՈրքոմենոս 'ի խաշնաւէտ ,
Ի Հռիպէ , 'ի Ստրատիէ եւ յԵնիսպէ մըրըկածուփ ,
Ունէին եւ զՏեգէա եւ զսիրելին Մանտինէէ ,
Ստիմփելեայ էին տէրք եւ բնակաւորք Պարրասիոյ ,
Սոցա գլուխ՝ Անկէոսին էր ուստր՝ արքայն Ագապենովր
Վաթսուն նաւափայտից , յորս 'ի միում միում նաւի
Ամբարձեալ կայր խուռն որեար արկադացի՝ մարտից հըմուտ :
Զի նա ինքն արանց արքայն մատոյց նոցին Ագամեմնոն

Ըզմակոյկալն գեղատախտ ընդ լըրթագոյն խորան անցանել,
Առրիգէս ինքնին, զի չէր ինչ նոցին փոյթ ծովավաստակ:
Իսկ բնակչաց Բուպրասիոյ եւ Էլիսեայ նուիրականի,
Որչափ ինչ Հիրմինէ եւ Միրսինոս սահմանակալ
Եւ վէմն Ովլենեան ւԱլիսիոն բովանդակեն,
Սոցա չորք էին իշխանք, եւ տասըն տասըն նաւ երագ
Մէն միում զհետ խաղային՝ բարձեալ ամբոխ Եպէայց մեծ:
Կիտոցն Ամփիմաքոս եւ Թալպիոս կային իշխանք,
Մինն որդի Կտէատու, միւսն ակտորեանն Եւրիտոսի·
Իսկ այլոց՝ ամարինկեանն իշխէր քաջազնըն Դիովրէս,
Զօրորդացն էր իշխեցող Պօլիքսինոս աստուածակերպ՝
Զաւակն Ագասթենի աւգիասեան թագաւորին:
Որք էինն 'ի Դուլիքեայ, եւ յԷքինայց սրբափայլից՝
Ի կղզեաց որ կան յայնկոյս ծովուն հանդէպ Էլիսեայ գէմ,
Փիլեւսեանն առաջնորդէր նոցա Մեգէս արիաստեղ,
Զոր ծընաւ սիրելին Արամազդայ Փիլեւս ասպետ,
Որ խոժոռեալ հօրն երբեմն՝ 'ի Դուլիքի պանդըխտեցաւ·
Ընդ սմա սեւորակ վարեալ գային նաւք քառասուն:
Ոդիսեւս առեալ ածէր ըզմեծասիրտ կեփաղենեայս,
Որ գրաւէին զԻթակէ եւ զՆերիտոն տերեւաշարժ,
Որ բնակիչքըն Կրոկիլեայց եւ առապարն Էգիլիպայ,
Որ զԶակինթոս ունէին եւ 'ի Սամոս շըրջաբընակք,
Որք ունէին եւ զցամաքն եւ բնակէին 'ի հանդիպոյ,
Ոդիսեւս իշխէր սոցունց ըզգօնն հանգոյն Արամազդայ·
Նաւք ընդ հետ սորա գնային կարմրածընօտք երկոտասան:
Էտոլեանց առաջնորդէր Թոաս որդին Անդրեմոնի,
Որ 'ի Պլեւրոն բնակացեալք, 'ի Պիլինէ եւ յՈղլենոս,
Ի Քալկիս ծովափնեայ եւ յապառաժըն Կալիդոնի· —
Զի չէին 'ի միջի քաջասըրտին Ինեւսի ձետք,
Չէր եւ ինքն, եւ էր մեռեալ Մելէագրոս խարտիշագեղ· —
Ամենայն ինչ յանձն 'ի սոյն էին՝ տիրել Էտոլացւոց,
Եւ ըզկնի իւր սեւաթոյր անցանէին նաւք քառասուն:
Կրետացւոց զօրավարէր Իդոմենեւս նիզակաւոր,
Որ զԿնոսոս ունէին եւ ըզԿորտին պարըսպափակ,
ԸզԼիկտոս, ըզՄիլետոս եւ զԼիկաստոս սպիտակաթոյր,
ԸզՓեստոս եւ զՀռիտիոն ըզբնակաւէտն աւանաշէնս,
Եւս եւ այլք որ 'ի Կրետէ հարիւրքաղաք բնակէին շուրջ:
Արդ սոցա փառաշուքն Իդոմենեւս առաջնորդէր,
Եւ հանգոյն մարդախոշոշն Ենիալեայ Մերիոնէս·
Նաւք ութսուն ընդ սոսա հետեւէին սեւատեսակք:
Հերակլեան Տլեպոլեմոս ըսկայազօրն եւ յաղթանդամ
Ածէր նաւս ինն 'ի Հռոդեայ զքաջայանդուգըն Հռոդացւոց,

Որ 'ի Հռոդոս բնակէին յառաջն երիս կարգեալք կազմեալք,
Ի Լինդոս, 'ի Ցէլիսոս, 'ի Կամիրոս ամբոխակերանց:
Զօրապլուխ էր սոցա Տլեպողեմոս մեկընդամուր,
Զոր ծընաւ Աստիոքէ՝ հերակլիսեանն արուարութեան,
Որ ած ըզնա յԵփիրեայ 'ի Սելլէեայն վտակէ՝
Աւերեալ քաղաքս յոլով դիւցազներանց քաջորերոյ:
Զարգացեալ Տլեպողեմոս 'ի բարեկերտ անդ ապարանս՝
Ըզքեռին բապան անդէն ըզհօր իւրում ըզսիրելին,
Ըզյեցեալն յաւէտ զԼիկիմնիոս՝ սաստ արխեան:
Կառուցեալ նաւս խուն եւ խուն եւ հաւաքեալ ամբոխ բազում,
Փախըստեայ գընաց ընդ ծով. քանզի նըմա սպառնացան այլք
Ուստերք եւ Թոռունք հերակլիսեան արիութեան:
Իսկ եկըլն մոլորեալ՝ հասս 'ի Հռոդոս տառապագին..
Բնակէին ցեղք եռատոհմ, Արամազդայ լեալ սիրելիք՝
Որ աստուածոց եւ մարդկան առ հասարակ թագաւորէ.
Եւ մեծութիւն ստացուածայքանչ հեղ 'ի նոսա Զրոնեանն:
Իսկ Նիրեւս երիս ածէր նաւս 'ի Սիմեայ մակաւասարս,
Նիրեւս ուստր Ագլայիայ եւ արքային Քարոպոսի,
Նիրեւս՝ ամենագեղն այր յԻլիոն եկաւորեալ
Քան զայլ դանայեցիս՝ ըզկնի ամբիծ Պելիածնին.
Այլ կընաս էր եւ սակաւ երթայր ըզհետ իւր ժողովուրդ:
Որ զՆիսիրոսն ունէին եւ ըզԿրապաթ եւ ըզԿասոս
Եւ զԿոսն աւան Եւրիպիլեայ եւ ըզկըղզիսն Կալիդնեայս,
Փիդիպպոս եւ Անտիփոս բասպյառաղեաք էին նոցուն,
Երկոքին Թեսաղոսի հերակլիսեան արքային Ծնունդք,
Ոյց ըզհետ երեսուն գոգաւոր քաջողիք գնային առագեալք:
Իսկ որչափ էին միանգամ 'ի պելազգեան կայէին Արգոս,
Որք յԱլոս էին բընակք եւ յԱլոպէ եւ 'ի Տրէքիս,
Որք էինն 'ի Փթիա եւ Հելլադա գեղեցկակին,
Եւ կոչէին Միրմիդոնք, եւս եւ Հելլենք եւ աքայիկք,
Այսոցիկ Աքիլլեւս յիսուն նաւաց էր իշխեցող:
Բայց սոցունց ոչ պատերազմն անհեղադոչ գայր 'ի յուշ,
Զի եւ չէր որ նոցին զօրավարէր կարգեալ 'ի ռազմ.
Քանզի քաջոտն Աքիլլեւս դիւցազն 'ի նաւսն անկեալ դընէր
Վասն աղջկանըն սըրտմըտեալ՝ վարսագեղին Բրիսէիսի,
Զոր Թափեալ առեալ էր իւր 'ի Լիռնեսեայ բազում ճըգամբ,
Կործանեալ ըզԼիռնեսոս եւ ըզպարիսպսըն Թեբայեաց.
Արկ տապաստ եւ ըզՄինէս եւ զԵպիստրոփ մեկընդամոլս՝
Ուստերըս սելեպեանն Եւենոսի Թագաւորին.
Վասըն նորա նըստէր տըրտում, բայց յառնելոց էր հուպ ընդ հուպ:
Որք ունէին զՓիլակէ եւ զՊիրասոս ծաղկազըւարճ,
Ըզնուիրեալըն Դեմետրի զանդս եւ զԻտոնէ ըզմայր խաշանց,

Եւ զԱնտրոն ծովեզերեայ եւ զախոտաւէտն Պտելէոս ,
Այնոցիկ առաջնորդէր Պրոտեսիլեաւ արիական՝
Մինչ կենդանին էր , իսկ յայնժամ ունէր ընդ հողոյն սեաւ :
Կին նորա քըծքըծեալ ցլտեալ մընայր 'ի Փիղակէ
Եւ տուն նորա Թերակատար , զի սպան զինքն այր դարդանացի
Ի վազել իւր 'ի նաւէն յառաջ քան զայլ աքայեցիս :
Բայց չէին անիշխանք , թէ եւ 'ի գունդ պետոյն հաշեալք ,
Այլ շառաւիղն արիական կարգէր զնոցին ռազմ Պոդարկէս ,
Զաւակըն փիլակեանն Իփիկլեայ խաշնաւէտին ,
Եղբայր հարազատ մեծահոգւոյն Պրոտեսիլեայ ,
Ի տիոց կրտսերագոյն , իսկ նա երէց եւ քաջարի
Դիւցազն արիական Պրոտեսիլեաւ , սակայն ամբոխն
Ոչ կարօտէր սալարի , այլ փղձկէին յանձուկ քաջին ·
Եւ սոցա քառասնաթիւ գնային ըզհետ նաւք սեւորակք :
Բնակեալքն 'ի Փերէս առ ծովակին Բիբէական ,
Ի Բիբէ , 'ի Գլափիրայս եւ Յաւոլկոս գեղեցկաշէն ,
Պետ նաւուց մետասանից էր Ադմետի սիրուն որդին
Եւմելոս՝ զոր յԱդմետէ ծընաւ կանանց դիւցազնագոյնն ,
Ալկեստիս , չքնաղագեղն 'ի դստերաց Պելիասայ :
Ոյք էին 'ի Մեթոնէ ու'ի Թաւմակէ կալեալ կայանս ,
Ունէին զՄելիբէա եւ զՈլիզոնն առապարին ,
Փիլոկտետ իշխէր նոցա քաջահրմուտն աղեղնաւոր՝
Նաւուց եօթանց , նաւավարք 'ի մէն միում ելեալք յիսուն ,
Արք յաղեղըն քաջափորձք կալ եւ կռուել կարովարար :
Սակայն նա 'ի կղզին սաստիկ ցաւովք տանջեալ դընէր
Ի Լեմնոս դիւցական , ուր զինքն որդիք աքայեցւոց՝
Չարաչար հարուածեալ 'ի նենգամիտ օձէն՝ լըքին :
Անդ անկեալ կայր ցաւած , բայց Փիլոկտետ արքային ընդ հուպ
Էր 'ի յուշ արգիւացւոցն անդրէն գալոց առ նաւակըքն :
Անձկաբեկք թէպէտ 'ի պետոն , այլ եւ սոքա չէին անպլուխ ,
Զի Մեդոնն հարճազոյն Ոյիլեւսի կարգէր կազմէր ,
Զոր Հռենէ ծընաւ քաջին քաղաքաւերն Ոյիլեւսի :
Որ զՏրիկկէ ունէին եւ զԻթոմէ լեռնակուտակ ,
Որ զքաղաքն Էքալեցւոյն Եւրիտոսի զՕքալիա ,
Ասկլեպեայ կորիւն ուստերք ըսպարապետք նոցա կային ,
Բըժիշկք ճարտարագէտք՝ Պոդալիրիս եւ Մաքաւոն ·
Եւ սոցա երեսուն գնային ըզկնի նաւք գոգաւորք :
Որոց էրն Որմենիոն , որոց աղբիւրն Հիպերիա ,
ԶԱստերիոն որք ունէին եւ զՏիտանոս սարս ըսպիտակ ,
Եւրիպիլոս վարէր զնոսա՝ շըքեղ զաւակն Եւեմոնի ·
Եւ սորա Թոյրաթուխ ըզհետ գնային նաւք քառասուն :
Որ զԱրգիսսայն ունէին եւ բնակէին 'ի Գիրտոնէ ,

Յորթէ եւ յԻղոնէ եւ յՈլոսսոն սպիտակ աւան,
Էր նոցա զօրավար Պոլիպիտէս քաջամարտիկ,
Հարազատ Պերիթոսի զոր Արամազդ ծնաւ անմահն.
Իսկ զնա ծնաւ չքնաղն Հիպպոդամեա 'ի Պերիթեայ,
Յաւուրն՝ յոր նա զվրէժ 'ի թաւամազ յուշկապարկաց,
Եւ մերժեաց 'ի Պելիոնէ վանեաց մինչեւ յԷթիկեցիս:
Չէր միայն, այլ ընդ նմին արիականն շառաւեղ
Լէոնդեւս որդի մեծանձն Կորոնոսի Կենեիդեանն.
Եւ սոցա նաւք քառասուն թխատեսիլք գնային ընդ նոսա:
Իսկ Գունեւս 'ի Կիփոսէ ածէր քաշախս քսանեւերկուս,
Ում գնային զհետ Ենիենք եւ անահի մարտիկ Պերեբք,
Որոց եդեալ էր բնակութիւն 'ի Դոդոնէ ձմեռնաձեան,
Եւ որ յանդաստ բնակէին ընդ անձուկն Տիտարեսեաւ՝
Որ հոսէր 'ի Պենէոս ընդարձակեալս ջուրցն վտակս,
Եւ սակայն՝ ոչ 'ի Պենեայ խառնի յորձանսն արծաթափայլ,
Այլ վերուստ մերկանամբք ձիթոյ գունակ սահեալ զընթայ.
Զի Ստիգեայ ծանր երդմանն ուղխից ծորանք են խաղացեալ:
Մագնեսեանցն էր զօրավար Պրոթոոս ծնա Տենթրեդոնեան,
Բնակելոց զաներեւաշարժ Պելիոնիւ եւ ըզՊենեաւ.
Եւ սոցունց՝ ժրաձեռնականն Պրոթոոս էր առաջնորդ,
Ուր ընդ իւր երթային քառասներեակ նաւք սեւաներկք:
Այս էին զօրագլուխք դանայեցւոց պետք եւ իշխանք:
Ո՞վ 'ի նոսին գերագոյն էր, Մուսա, զայն դու ինձ ասեա,
Ի նոսին եւ յերիվարս որ խաղային զհետ Ատրիդեանց:
Երիվարք ընտանեկեալք 'ի բնաւս էին Փերետեադայք՝
Զոր վարէր Եւմելոս օդապարիկս հանգոյն թռչնոց,
Նոյնատարազք, համատիք եւ թիկնաբերձք կարահնաչափ,
Զոր սնոյց Ապողոն արծաթաղեղն 'ի Պերիէ,
Երկոքեանսն մատակք, ահեղ Արեայ երկիւղալիցք:
Իսկ յարանց՝ արիագոյն յոյժ էր Էաս Տելամոնեան,
Մինչ Աքիլլէս խեռայր քինու, զի քաջագոյն էր նա յոյժ յոյժ՝
Ինքն եւ ձիանն որ կրէին զՊելէեանն չնաշխարհիկ:
Այլ նա կայր 'ի կորածայր ծովայածուկ նաւաց առմիջն
Ոխացեալ ընդ Ատրիդէսն Ագամեմնոն հովուն ազանց:
Իսկ առ ափըն ծովուն՝ ժողովրդեանն ամբոխական
Ընկուզեղբք եւ աշտեամբք եւ յարդմնեկեց զբօսնուլն խաղ,
Եւ կառամուտ երիվարք ուրացանչիւր կայեալ առ կառսն
Ըղձերդիւն ճարակէին եւ զմարգասուն ձիալեխուր.
Կառքն 'ի վրանս իշխանաց անկեալ դնէին ամրածածուկք,
Եւ իշխանք, սիրեցեալն Արեայ՝ պետսն անձկակարօտք,
Այսր եւ անդր ընդ ճամբարն ըղջերմային չմարտեալք 'ի մարտ:
Իսկ նոքա, գնա, թէ երկիր ողջոյն 'ի հուր ճարակեցի,



Digitized by Google

Ընթանային , հեծէր գետինն՝ որպէս յորժամ Արամազդ
Բարկաձայթ փայլատակամբք զՏիփոէւսի թոպէ զերկիր
ՅԱրիմայս՝ ուր աւանդեն զՏիփոէւսի լինել խշտիս .
Ընդ ոտին նոցին տրոփել՝ այնպէս երկիր մեծ թառանչէր ,
Եւ սաստիկ յասպատակի հատեալ ընդ դաշտն անցանէին :
Իսկ տրովեանց եկն հրեշտակ յասպարակիրն Արամազդայ
Մըրըրկոտն երագ Իրիս՝ աղետաբեր բօթ 'ի բերան :
Նոքա 'ի դրունսըն Պրիամու յատեան կային եկեալ երասա
Համօրէնք միահամուռ երիտասարդք եւ ծերունիք :
Մատուցեալ երագոտն Իրիս եւ գոյժ արկեալ ասէր ,
Նմանեալ ձայնիւն որդւոյն Պրիամոսի Պօլիտեսեայ՝
Որ դէտ նըստէր տրովացւոց , վըստահ յոտիցն երագութիւն ,
Ի կատարըս շիրմի Էսիետի ալեւորին ,
Ուշ եդեալ՝ երբ 'ի նաւացն յարձակեսցին աքայեցիք .
Ի նորին նըմանութեան խօսեալ ասէ շուրթամբն Իրիս .
Հանապազ , ով ծերունիդ , քեզ սիրելի են բանք բազում
Իբր երբեմն 'ի հաշտութեան , բայց արդ յարեաւ մարտ անհրաժեշտ :
Ի բազում ռազմունս արանց բազում անգամ հասեալ է իմ ,
Այլ ոչ ուրեք այսպիսի եւ ոչ այսչափ տեսեալ հրոսակ .
Զի հանգոյն յոյժ տերեւոց կամ աւազոյն՝ թիւ խուռնախիտ
Դիմեալ ընդ դիւրն ասպատակեն տալ պատերազմ ըզքաղաքաւս :
Քեզ , Հեկտոր , մանաւանդ պատուէր դընեմ այսպէս առնել .
Զի յոլով նիզակակիցք 'ի մեծ ոստանս են Պրիամու՝
Այլք յայլոց այլալեզուք 'ի բազմացունդ մարդկան զարմից ,
Նոցին այր իւրաքանչիւր տացէ հրաման՝ որոց իշխէն ,
Նոցուն կացցէ զօրավար՝ քաղաքայնոցն արարեալ ռազմ :
Զայս ասաց , չեղեւ Հեկտոր աստուածուհւոյն ձայնի անհաս ,
Եւ անդէն լուծեալ զատեանն ընթանային 'ի զէն 'ի զարդ .
Բանային դրունք համօրէն եւ ժողովուրդն 'ի դուրս զեղոյր
Հետեւակք , կառամարտիկք , եւ շառաչիւն հատաւ ուժգին :
Քաղաքին յանդիման բըլուր մի է բարձրադիտակ
Ի դաշտին առոշոգի շուրջանակաւ պարաշըրջիկ ,
Զոր արք կոչեն Բատիիա , իսկ դիք շիրիմ ժիր Միւրինէ .
Անդ յայնժամ որոշեցան տրովադացիք եւ գունդ սատար :
Տրովեանց պետ էր պրիամեան մեծըն Հեկտոր սաղաւարտախրոխ ,
Ընդ նըմա յոգնախուռըն բազմագունդ քաջազօրք
Վառեալք ըսպառակոյտք նիզակաձօձ խրախուսանօք :
Իսկ գընդին դարդանացւոց ձեռն Անքիսեայ իշխէր արին
Էնիաս՝ զոր յԱնքիսեայ ծընաւ Աստղիկն աստուածերան ,
Աստուածուհի 'նդ մահկանացուին 'ի դարեւանդս Իդայ նընջեալ :
Ոչ միակ , այլ ընդ նըմին Անտենորի կըրկին մանկունք՝
Արքեղոքոս եւ Ակամաս՝ բոլոր մարտից քաջահըմուտք :

Որ առ Իդայ ստորոտով 'ի Զելիա բնակեալքն էին
Տրովեանք ճոխք, եւ ըմպէին ըզԹուխ վտակս Էսեպոսի,
Կայր նոցա զօրավար Լիկայոնեան ուստր հոյակապ՝
Պանդարոս՝ որում ինքնին ըզաղեղնակերտն ետ Ապողոն :
Ցորոց ձեռս Ադրեստիայն էր եւ քաղաքն Ապեսոսի,
Եւ զՊիտիայն ունէին եւ զբարձրըր լեառնըն Տերիայ,
Ադրեստոս իշխէր նոցուն եւ Ամփիոս կտաւաճօշ,
Զոյգ որդիք պերկոպեանըն Մերոպսի որ քան ըզբնաւս
Հըմտագոյն էր ըղձութեան, եւ ոչ տայր թոյլ որդւոց իւրոց
Ընթանալ 'ի պատերազմըն մարդասպան, եւ ոչ լըւան .
Զի սեաւ մահուն օրահաս ճակատագրի տանէր զնոսա :
Իսկ որ բնակք 'ի Պերկոտէ եւ Պրակտիոն շուրջանակի՝
ԸզՍեստոս եւ զԱբիդոս եւ զԱրիսբէ կալեալք ըզվէհ,
Նոցա գլուխ՝ հերոսական էր Ասիոս արանց իշխօղ,
Ասիոսն հերոսական՝ զոր բերէին անդր յԱրիսբեայ
Ձիք աշխէտք վիթխարիք 'ի Սէլլէիս գետոյն ափանց :
Ածէր Հիպպոթոոս նիզակաւորս Պելասգեանց գունդ,
Զայնոսիկ՝ որոց արգաւանդն Լարիսսա էր բնակավայր,
Ոյց իշխէրն Հիպպոթոոս եւ Պիլէոս Արեայ բողբոջ,
Երկոքեան տեւտամեան Լեթեայ զաւակք պելասգացւոյն :
Ակամաս ըզԹրակս ածէր ընդ դիւցազըն Պիրոոսի,
Զորս 'ի մէջ բովանդակէ Հէլլեսպոնտոս մըրըրկածուփ :
Եւփեմոս կիկոնացւոյն էր զօրավար տիգաւորաց,
Որդեակըն կեադեան դիւցազընսնունդ Տրիզենոսի :
Պիրէքմէս ածէր զՊէոնս ըզաղեղնալիճ աղեղնաւորօշս՝
Ի հեռուստ յԱմիդոնեայ, 'ի յորդահոսն Աքսիոսէ,
Աքսիոս, որոյ 'նդ երկիր՝ ականակիտ ծաւալըն ալիք :
Պափլագոնաց էր իշխան Պիլեմենի սիրտ քաջազօր,
Ցէնետաց՝ ուստի ջորւոցըն վայրենեաց է ազգատոհմ.
Կիտորոս սոցա էր, եւ բնակէին 'ի Սեսամոս,
Եւ զգետովըն Պարթենեաւ 'ի հոյակապ նըստէին յարկս,
Ի Կրոմնա, յԷգիալոս ու'ի բարձրաբերձ Երիթինայս :
Ոդիոս Հալիզոնեաց եւ Եպիստրոփ էին իշխանք,
ՅԱլիբեայ 'ի հեռուստ՝ ուստի ծընունդք են արծաթոյ :
Միսացւոց պետ էր Քրոմիս եւ Ենոմաս հաւահըմայն,
Բայց 'ի սեաւ օրհասէն հըմայութեամբքն ոչ ապրեցաւ,
Այլ 'ի ձեռս երագոտինն Էակիդեայ եղեւ նըկուն
Անդր 'ի գետն՝ ուր եւ զայլսն 'ի տրովացւոց խեթկէր 'ի մահ :
Փորկիս ածէր զփռիւգացիս եւ դիւցախառն Ասկանիոս
Ի տարէ յԱսկանիոյ, եւ տապէին խառնել 'ի մարտ :
Մէոնից էին Մեսթլէս եւ Անտիփոս ըսպասալարք՝
Զաւակունք Տալեմենի, զորըս Գիգեան ծընաւ ծովակ,

Որ ածէին եւ զՄէոնսըն սնուցեալս առ Տմողոսիւ ։

Իսկ Նաստէս էր գունդապետ կարիացւոց խժաձայնից
Որ զՄիլետոս ունէին եւ զԹաւալթուփ լեառըն Փթիրաց,
Եւ զհոսանսըն Մէանդրի եւ զբարձրայօն Միկալեայ սարս ։
Արդ սոցուն առաջնորդ Ամփիմաքոս էր եւ Նաստէս,
Նաստէս եւ Ամփիմաքոս, պայծառ մանկունք Նոմիոնեայ՝
Որ բարձեալ եւ ոսկի զընայր 'ի կռիւ զորէն աղջկան,
Խօլամիտ, ոչ ինչ օգտեալ ընդ գըժընդակ կորըստեան զէմ,
Այլ 'ի ձեռս Էակիդեայ երագոտին անկաւ տապաստ
Անդր 'ի գետն, եւ Աքիլլեւս մարտիկըն զոռ տարաւ զոսկին ։

Սարպեդոնն էր Լիկիացւոց պետ եւ Գլաւկոս ականաւոր
Ի բացուստ 'ի Լիկիոյ՝ 'ի յորձնեռանդըն Քսանթոսէ ։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ճակատն կողմանցն երկոցուն. Պարիս խոստացեալ 'ի մենամարտութիւն ընդ քաջին Յունաց՝ առեալ զՄենելաւոս զի ընդդէմ վարէր 'ի կառացն՝ յետս ընկրկի. յանդիմանեալ յեղբօրէն 'ի քաջէն Հեկտորէ, յանձն առնու պատահել ախոյենին, պայմանեալ յաղթողին ունել զՀեղինէ եւ զգանձս նորա: Հեղինէ 'ի վերին մենամարտին եկեալ՝ գայ 'ի դուռնն արեւմտից որ հայէր յասպարէզ մարտին, եւ հասեալ յաշտարակն՝ կոչի անդր 'ի Պրիամոսէ որ ծերովք ամամբք նստէր անդ. անդ ցուցանէ եւ յայտ առնէ նմա զգլխաւորսն յէլլանացն Յունաց: Պատրաստութիւն մենամարտին, եւ ուխտ եւ դաշինք հաստատեալք յԱգամեմնոնէ եւ 'ի Պրիամոսէ հրաւիրելոյ անդր: Մենամարտն: ԶՊարիս՝ պարտեալ եւ մերձ 'ի սատակիլ՝ թափէ Աստղիկ, եւ միգապատ առեալ տանի յապարանսն, ուր կոչէ եւ զՀեղինէ, որոյ եկեալ կշտամբէ զվատութիւն առն եւ հաշտին անդրէն ամուսնաբար: Ագամեմնոն՝ յաղթող քարոզէ զՄենելաւոս, եւ պահանջէ զպայմանս ուխտին:

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

ԵՐԴՄՈՒՆՔ. ՏԵՍԻԼ Ի ՊԱՐՍՊԷՆ. ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԵՒ ՄԵՆԵԼԱՒՈՍԻ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Իբրեւ կազմեալ կարգեցան իւրաքանչիւր զօրապետաւք,
Տրովայեանք արշաւեցին 'ի ձայն աղաղակի զօրէն հաւուց,
Որպունակ ընթանան ընդդէմ երկնից կռնկանց կռունկք'
Որ փախուցեալ 'ի ձմերայնոյ եւ յանհնարին թօնընկեցոց'
Թռչին առաւել ընդ հոսանս Ովկիանու գնեան կանչիւք,
Նախճիրս արանցն Թզկեաց եւ օրահաս տանել մահու,
Եւ 'ի բարձանց օդապարք ածեն նոցա մարտ դըժընդակ:
Իսկ բոցաշունչք բարկութեան աքայեցիք դառնէին լուռ,
Խրախուսեալք 'ի հոգւոյն օգնել միմեանց' կալ 'ի թիկունս:
Օրինակ իմն 'ի գլուխ լերին հեղու հարաւ զմէգ'
Ըշհովուաց դըժպըրհին, իսկ գողոց հեշտ քան զգիշեր,
Եւ այնչափ որք նշմարէ' որչափ թէ քար ինչ ընկենու,
Այնպիսի 'նդ ոտիւք նոցին փոշի մըրրկեալ յարուցեալ գայր
Ընթանալով իւրեանց ընդ դաշտն յառաջատակի անցանելով:
Իսկ իբրեւ այն ինչ մերձ էին յարձակ յարձակ խառնել յիրեարս,
Ի տրովեանց նախապատիկէր Աղէքսանդրոս աստուածաձեւն,
Ընձենի զուսովքն արկեալ եւ զկորովի աղեղն եւ զսուր,
Եւ կրկին գեղարդունս ճօճելով պղնձասայրս
Զայնատուր լինէր քաջացն արգիւացւոց առ հասարակ,
Ախոյեան գալ ելանել' կռուել ընդ իւր յանդուլթ գուպար:
Զոր տեսեալ եւ ծանուցեալ Մենելաւոս' Արեայ սիրուն,
Զի մեծաքայլ ընթացեալ յառաջէր գայր քան զզուամարտակն,
Որպէս առիւծ ուրախացեալ 'ի մեծ մարմին ինչ հանդիպեալ'
Եւ գըտեալ ցընծացեալ' կամ զեղջերու եւ կամ զայծեամն,

Զոր չարաչար լափլիզէ՝ Թէպէտ եւ յետին յարձակեցին
Երագոտունքըն զամփոփունք եւ եռանդուն երիտասարդք.
Սոյնպէս յակն արկանել զԱղէքսանդրոսն աստուածատիպ
Բերկրեցաւ Մենելաւոս, յուսայր առնուլ վրէժ 'ի ժամանէն.
Եւ անդէն 'ի կառացն հանդերձ զինուքն ոստեաւ յերկիր:
Այնմ ըղձատ լեալ եւ տեսեալ աստուածակերպն Աղէքսանդրոս
Զի 'նոյն նահատակն երեւէր, զարհուրեցաւ յանձին իւրում,
Ի մահուանէ խուսափելով ընկըրկեցաւ յընկերաց խումբ,
Զոր օրինակ 'ի լերին թէ ոք տեսեալ մացառս վիշապ՝
Փախեաւ յետս ոստուցեալ եւ ընդ անդամսըն գնաց դողումն,
Յետս ընդ կրունկըն դարձաւ եւ ներկան այտք իւր 'ի դալուկն.
Այսպէս յետս յամբոխն եմուտ յոխորտընթաց տրովադացւոց
ՅԱտրորդւոյն զահի հարեալ Աղէքսանդրոսն աստուածանման:
Զայն տեսեալ Հեկտոր՝ ձաղեաց բանիւք երգիծանաց.
Դըժ-Պարիս, գեղեցկադէմ, է կնամոլիդ դու հրապուրիչ,
Երանի թէ անծընունդ էիր եւ անկին կորընչէիր:
Ես ընդ այդ խոկ կամէի, եւ առաւել էր շահաւէտ,
Քան 'ի կեղտ այդպէս ու'ի խէթ կասկածանաց լինել այլոց:
Ի ծաղր անշուշտ հատանեն վարսաւորեալքդ աքայեցիք
Ախոյան զքեզ քաջ կարծեալ առ'ի տեսիլ կերպարանացդ,
Այլ չէք զօրութիւն յոգւոյդ եւ ոչ ոյժ եւ կորով:
Այդպիսիդ միթէ դու ծովագնացիկ լաստափայտիւք
Ընդ անդունդս հատեալ անցեալ սիրայօրդոր ընկերակցօք,
Եւ մըխեալ յօտարածինս հափշտակեցեր կին գեղապանծ
Յերկրէ հեռաստանէ՝ զպատերազմօղ արանցըն նու,
Հօրդ 'ի տոյժ մեծ, քաղաքիս եւ ամենայն ժողովրդեանն,
Իսկ թըշնամեաց խընդութիւն, եւ ծանր ամօթ քեզ կորանաց:
Զի՞ սիրելւոյն Արէսի չկացեր հանդէպ Մենելաւեայ.
Ծանուիր զայրն 'ի միտ, զոյր ամուսինն ունիս զաւակդ:
Ոչ օգնեսցեն ինչ քեզ քնար եւ ոչ պարգեւք Աստղկան,
Ոչ խոպոպք հերացդ, ոչ գեղ, մինչ ընդ փոշի թաթաւեսցիս:
Այլ երկչոտ յոյժ են տրովադացիք, ապա թէ ոչ՝ վաղուց արդեւք
Զգեցուցեր զքարեայ շապիկն ըստ արժանի չարեաց գործոցդ:
Եւ նըմա պատասխանի աստուածանմանն Աղէքսանդրոս.
Յիրաւի են կըշտամբանքդ, Հեկտոր, եւ ոչ յանիրաւի.
Յամենայն ժամ քո սիրտ իբրեւ զտապար է անվըկանդ
Որ ընդ բուն մըխի վարեալ 'ի ճարտարաց մայրեւորէն
Ի հարկանել զնաւափայտ, եւ զթափ բազկի առն յաւելու.
Այսպէս միտք են աներկիւղ եւ անսասան 'ի քում սըրտիդ:
Մի՛ զպանծալի ձիրս ոսկի Աստղկան ինձ պախարակեր.
Չեն բընաւ աստուածոց մեծապայծառ օժիտք խոտան,
Որ զինչ նոքին շնորհեցեն եւ չառնուցու ինչ ոք ըստ կամս:

Արդ թէ կամ է քեզ դառնալ ինձ 'ի պայքար եւ մաքառել,
Թողլեցո զայլ արտաքսեցեալդ եւ զաքսորեալս առ հասարակ,
Իսկ 'ի մէջ՝ զիս եւ զԱրեայ սիրասունդ Մենելաւոս
Արկէք 'ի կռիւ զՀեղինեայ եւ ստացուածոցն ամենեցունց.
Եւ որ այր ոք յաղթական եւ զօրաւոր ցուցցէ հանդէս,
Զբոլոր ստացուածսն առեալ հանգոյն եւ զկինն 'ի տուն իւր ածիցէ.
Իսկ այլոց՝ սէր եւ դաշինս հաւատարիմ կռեալ ուխտից՝
Բնակեսցէք դուք յարգաւանդ Տրոյա, նոքա դարձ առնիցեն
Անդրէն յԱրգոս 'ի ձիարած, յԱքայիս գեղեցկականս:
Զայս ասաց, եւ Հեկտորի զբանսն լուեալ՝ զուարթացաւ յոյժ,
Եւ 'ի մէջ անդր անցեալ եւ զնիզակն կալեալ միջոյ՝
Արգել զգնդունդս տրովադաց, որ եւ զտեղի առին անդէն:
Մտանէին հերապանծ աքայեցիք 'ի նա 'նդ աղեղն,
Ընդ նա դէմ կալեալ նետիւք եւ արձակեալ բրդնաքարամբք:
Բայց գոչեաց մեծաձայն՝ արքայն արանց Ագամեմնոն.
Արգելեցէք, կացէք՝ մանկունք աքայեցւոց, մի՛ դնէք ձիգ,
Զի ասել ինչ խոստանայ մեզ բան Հեկտոր սաղաւարտաձօձ:
Զայս ասաց, եւ նոքա հետայն 'ի կռուելոյն առեալ նահանջ
Կացին լուռ, եւ Հեկտոր ընդ երկոսին ճառս ասէ.
Լուարուք ինձ, տրովադեանք եւ քաջասրունք աքայեցիք,
Ըզբանս Աղեքսանդրի՝ յորոյ պատճառս յարեաւ այս խազմ:
Տայ տրովադեանց եւ աքայեցւոց այլոց պատուէր բոլորեցուն՝
Ընդ գետնին արօտաբուխ դնել ըզզէնսըդ գեղեցիկ,
Իսկ միայնոյ 'նդ Արիսի սիրեցելոյն Մենելաւեայ
ԶՀեղինեայ գալ 'ի մէջ եւ զհամօրէն ընչիցն 'ի վերայ.
Եւ որ յաղթօղ ոք գտցի եւ ուժգնագոյն 'ի հանդիսին,
Զստացուածսն առեալ բոլոր եւ զինքնին կինն 'ի տուն տարցի,
Իսկ այլք՝ սէր եւ դաշինս ուխտի կնքեսցուք անդրդուելիս:
Ասաց զայս, եւ կարկեալ կացին լռիկ առ հասարակ.
Բարբառեցաւ առ նոսա Մենելաւոս խրախուսաձայն.
Ունկնդիր լերուք արդ եւ ինձ. զի մեծն յիմ սիրտ հարկանի ցաւ.
Ակն ունիմ այժմ որոշել արգիւեցւոց եւ տրովադացւոց,
Զի բազում ժուժկալեցէք չարչարանս տառապանաց
Յերեսաց իմոյ կռուոյս եւ Աղեքսանդրի յանդգնութեան:
Ոյր ուրուք ճակատագիր եւ մահ 'ի մէնջ է պատրաստեալ,
Թող մեռցի, եւ այլքդ անդէն վաղվաղակի բաժանեսջիք:
Բայց ածէք բուծըս կրկին, գառն ըսպիտակ եւ սեաւ որոջ
Երկրի եւ Արեգական, ածցուք մեք գառն Արամազդայ,
Եւ զարքն Պրիամոս ածջիք կռել զդաշինսն անձամբ.
Զի որդիք են նորուն ամբարտաւանք եւ ուխտադրուժք,
Գուցէ զանց ոք արարեալ՝ զԱրամազդայ ջնջեսցէ զերդմունս:
Պատանեաց մանկագունեաց միտք ըղձօսեալ են հանապազ.

Իսկ յորժամ ծեր ոք գըտցի՝ նըկատեսցէ յետս եւ յառաջ,
Զի որ լաւն ինչ երկոցուն լիցէ կողմանց՝ գայցէ յարդիւնս։
Ասաց զայս, եւ խընդացին աքայեցիք եւ տրովադեանք,
Յուսացեալ զդադար լինել աղետաւոր պատերազմին։
Զերիվարսըն նահանջեալ կարգաւ՝ իջին ինքեանք 'ի վայր,
Եւ մերկացեալ 'ի զինուցն՝ եդին զնոսա յերեսս երկրի
Մօտ 'ի մօտ առ միմեանս, եւ սակաւ ինչ էր գետին ընդ մէջ։
Իսկ Հեկտոր պատուիրակս յղեաց երկուս 'ի քաղաք անդր
Ածել փութով ըզգառինսն եւ հրաւիրել ըզՊրիամոս։
Եւ արքայն Ագամեմնոն զՏալթիբիոս առ արձակեաց
Ի գոգաւոր նաւսն եւ նա պատուէր բերել գառինս երկուս.
Եւ նա չեղեւ անլըսող աստուածային Ագամեմնոնի։ —
Բայց Իրիս՝ ձիւնաթեւին եկն Հեղինեայ պատգամաւոր
Նըմանեալ տալոջ նորուն, կնոջ որդւոյն Անտենորի,
Զոր ունէր Թագաւորն Հելիկայոնն անտենորեան
Զգեղեցիկն 'ի դըստերացն Պրիամու զԼաւոդիկէ։
Եգիտ ըզնա յապարանսըն զի կըկէր ոստայն մի մեծ
Ի կրկնոց ծիրանեգոյն՝ նըկարեալ մարտս 'ի նմա բազումս
Ըզտրովեանց ձիավարժից եւ պղնձազրահ աքայեցւոց,
Զորս 'ի ձեռաց Արէսի վասն իւր կրեալ համբերէին։
Առ որ մերձ մատուցեալ թեթեւըռնթացն ասէ Իրիս.
Արի եկ, հարսըն սիրուն, եկ տեսանել սքանչելի գործս
Ըզտրովեանց քաջաձիոց եւ պղնձազգեստ աքայեցւոց.
Որ յառաջն 'ի միմեանս զարտօսրալից ածէին ռազմ
Ի դաշտի անդ՝ տենչացեալք սատակչական գուպարածին,
Արդ նըստեալ կան լըռելեայն, — եւ դադարեալ է խաղմին գոռ, —
Խոնարհեալք յեցեալք յասպարսն, երկայն արդունք յերկիր վարսեալ։
Բայց Արէսի սիրելին Մենելաոս եւ Աղեքսանդր
Երկայնաձիգ գեղարդամբք ըզքէն 'ի կախ անցանիցեն,
Եւ դու կին սեփական յաղթականին անուանեսցիս։
Զայս խօսեցեալ աստուածուհւոյն՝ էարկ 'ի սիրտ իւր քաղցր անձուկ
Առ այր իւր առաջին եւ առ քաղաքն եւ առ ծընողսն։
Եւ անդէն առեալ զանձամբ տեռ լուսաներկ եւ սքողարկեալ,
Դիմեաց էջ յապարանէն, գորովալիր ըզլեալ արտօսր.
Ոչ միայնիկ, այլ ընդ հետ նորա զնային նաժիշտք երկու,
Եթրէ դուստրն Պիտթեայ եւ աչաղեղն Կղիմենէ.
Եւ հապճեալ փութով հասին մինչ մօտ 'ի դրունսն Արեւմտեան։
Իսկ Պրիամոս, Պանթոոս եւ Թիմիտէս ընդ Լամպոսի,
Կղիտիոս, Հիկետաւոնն արիականըն շառաւիղ,
Ուկալեգոնն եւ Անտենովր՝ խոհեմազարդք եւ երկոքին,
Անդ առ դրունս Արեւմտից նըստէին ծերք ժողովըրդեանն,
Ի մարտից ալեօքըն լուծք, սակայն բանից քաջախօսանք,

Ի հրաշալեաց նըմանութիւն որ 'ի մայրիս անտառախիտ
Նըստեալ յստուերս ծառոյն ըղձափափկալանի արձակէին ձայնս :
Այսպիսիք կային նըստեալ յաշտարակին՝ տրտմեցանց խըղճանք .
Որոց աստեաւ զհեծեծանս զի գիմեալ անդր 'ի բուրգըն գայր ,
Բանիւս Թըռչունս առ միմեանս զաշըն ձայնիւ բարբառեցան .
Չէք պարտաս ինչ տրտմալեգեանց եւ քաղցրաբարձ աղբերցուաց
Այսպիսում վասըն կընոջ ցաւովք լըլկիլ անդր բաղըում .
Օ՛հ եւ ո՛հ , զանձանձկոյն աստուածուհեաց բերէ զայտակեր :
Բայց եւ այնպէս , այդպիսի թէպէտ եւ է , դարձցի նուագք ,
Մի՛ մեղ ինչ եւ սրդուոցս ըղձեր կընի թողցի եղեան :
Ասացին զայս , Պրիամոս ձայնեաց ասկայն ըղհեծեծանէ .
Այսր առ իս մատուցեալ , սիրուն դուստր , նիստ իմ հանդէպ ,
Զի տեսցես զայրդ առաջին եւ ըզխնամիքդ եւ զբարեկամս :
Չես դու յիս մեղապարտ , աստուածքըն են ինձ մեղաւոր պատճառք ,
Որ զաքայեանց զըրդեցին զարտասուաբեր յիս պատերազմ :
Զի եւ զայրըն զայն ինձ անուանեսցես զյաղթահասակ ,
Ո՛վ իցէ աքայեցւոց այն այր քաջազն եւ մեծանձնեայ :
Են են առաւելքն եւ այլք գըլխով չափ բարձրագոյնք ,
Այլ ոչ տեսի աչօք ուրեք զայնոր գեղոյ նըմանութիւն ,
Ոչ զանձնեանն ըղջուք փառաց . զի թուի լինել այր թագաւոր :
Հեծեծէ՝ կանանց չըքնաղն՝ արար բանիւքս առ նա դարձուած .
Պատկառելի ես , սիրելի սկեսրայր իմ , ինձ եւ ահաւոր .
Ո՛վ թէ մահ չարախառնեալ քաղցր էր լեալ ինձ 'ի ժամուն յայնմ
Յոր զհետ որդւոյդ այսր եկեալ՝ լըքի զեղբարս եւ զորդեկաղամն
Եւ զհըրաշալիկն իմ սիրամանուոյն եւ զանձկալի հասակակիցս :
Այլ այդմ ոչ պատահեալ , արդ հալեցայ ես յարտասուս :—
Բայց այժմ զայն ասացից՝ զոր հարցանես եւ որոնես .
Ատրիդէս է նա ինքն ամենիշխանն Ագամեմնոն ,
Յերկուս դէմս՝ եւ թագաւոր բարի եւ քաջ պատերազմօղ .
Նոյն եւ տայգր էր լըրբենուոյս , եթէ եղեւ երբեք զի էր :
Զայս ասաց , եւ ալեւորն ըզքանչացեալ ընդ նա՝ գոչեաց .
Ո՛վ երջանիկդ Ատրիդէս , բարեվիճակ եւ քաջափառ ,
Յարժանի 'նդ քեւ են հնազանդք աքայեցւոց մանկունք բազըում :
Միջամտելս եղէ երբեմն եւ յայգեւէտն 'ի Փռիւգիա ,
Ուր տեսի փռիւգացիս երագաձի ոսեար յոլով ,
Ոտրեւսի ժողովուրդք եւ դիւցախառըն Միգդոնի ,
Որ բանակ հարեալ կային յայնժամ առ ափըն Սանկարիոյ .
Զի հասեալ նիզակակից ընդ նոցին ես թըւեցայ գոլ ,
Յաւուրն՝ յորում եկին Միաստընիքըն անդր այրատիպք .
Այլ ոչ այսչափ ինչ էին՝ որչափ խայտաակն աքայեցիքդ :
Երկրորդ տեսեալ զՈդիսեւս ասէր ծերոյն՝ եհարց անդրէն .
Ե՛կ ասա ինձ եւ զայս , որդեակ սիրուն , ո՛վ իցէ դա

Գըլխով չափ նուաղագոյն քան զԱտրեկեան Ագամեմնոն ,
Իսկ ուսովք Թիկնաւէտ 'ի տեսանել՝ եւ լայնալանջ ։
Զէնք նորուն անկեալ զընէն ընդ բարեբեր երկրին երես ,
Սակայն ինքն հանգոյն խոյոյ 'ի ձեռն գընդոյ 'ի կարգս արանց .
Խոյոյ զինքն համեմատեմ ստուերագիւտակ գեղեցկաբարձի՝
Որ ընդ մեծ հօտ լուսակեղն օդեաց յածեալ երթեւեկէ ։
Առ այս ետ պատասխանի Հեղինէ ծնունդ Արամազդայ .
Իսկ դա՝ Լայերտեանն է Ոդիսեւս լիահանճար ,
Սնեալ 'ի ժողովուրդն ապառաժին Իթակէի ,
Ամէն ազգի հնարից հմուտ եւ խորհրդոց իմաստութեան ։
Խոհականն Անտենովր կրկնեալ անդուստ ասէ առ նա .
Արդարեւ, ով կին դու, զայդ ճշմարիտ յայտ ասացեր ։
Զի եւ այսր աստուածայնոյն Ոդիսեւսի եկեալ երբեմն
Հրեշտակութեամբ ըզքէն 'դ Արեայ սիրեցելոյն Մենելաւայ ,
Ես հիւրոյն ասպընջական եղէ 'ի տան պատուասիրեալ ,
Եւ ըզբարս երկոցուն ուսայ եւ զմտացն հանճարեղ ։
Արդ մինչ եկեալ խառնեցին 'ի տրովացւոց մեր երախանս ,
Ի կալ յոտին՝ լայն ուսովքն անցուցանէր Մենելաւոս ,
Բայց 'ի նըստել երկոցուն՝ շըքեղաճոխ էր Ոդիսեւս ։
Իսկ յորժամ բանս եւ խորհուրդըս հիւսէին 'ի հրապարակ ,
Ընդ ոլորտըս մըտեալ Մենելաւեայն ընթանայր ճառ ,
Կարճառօտ, այլ նըրբախօս . քանզի եւ չէր ճոխաբան նա ,
Նա եւ ոչ ընդվայրաճառ, կամ թէ կըրտսեր եւս էր տիօք ։
Այլ երբեւ յառն Ոդիսեւս բազմահանճար յարուցեալ կայր ,
Կայր հայէր 'ի խոնարհ, զաչսն 'ի գետնին կառուցեալ ,
Ոչ յառաջ ըզգաւազանն ոչ յետըս կոյս տարաբերէր ,
Այլ ունէր անշարժելի՝ տըխմարի առըն պէս գունակ ,
Մինչ կարծել ըզնա ցասկոտ ոք եւ պանդոյր ամենեւին ։
Իսկ յորժամ 'ի լանջաց անտի զուժգին արձակէր ձայն
Եւ ըզբանսն 'ի նմանութիւն ձըմերային ձիւնաբերաց ,
Ոչ եւս այլում մահկանացուի առն էր մըրցել ընդ Ոդիսեւայ ,
Ոչ եւս այլ ընդ Ոդիսեան կերպ հայեցեալ զարմանայաք ։
Ալեւորն՝ երրորդ զԱյաս տեսեալ՝ անդրէն հարցումն առնէր ..
Ո՞վ է միւս աքայեցիդ այդ այր քաջազն եւ յաղթանդամ ,
Գըլխով եւ լայն ուսովք չափ՝ յԱրգիւացւոց երեւելի ։
Այնժամ Հեղինէ երկայնատեսա , վեհն 'ի կանայս , կրկնեաց անդրէն .
Այն Այաս է վիթխարի՝ աքայեցւոց ամուր պատուար .
Իսկ անդուստ Իդոմենեւս կայ դիցանման 'ի կրետացիս ,
Եւ զհետ եւ կրետացւոց բազմապատիւք կան հոլովեալ ։
Ըզնա ստէպ սիրունն Արեայ Մենելաւոս հիւր ընկալաւ
Անդ 'ի մեր ապարանս՝ յորժամ հասեալ գայր 'ի Կրետեայ ։
Այլ արդ զայլըս տեսանեմ զըոլոր խայտակն աքայեցիս ,



Digitized by Google

Զորս յականէ ճանաչել եւ յանուանէ առել գիտեմ.
Բայց ոչ մարթեմ նշմարել զերկուս իշխանս ժողովրդոց,
Ըզկաստորն ձիամոլ եւ զբռնամարտ Պօլիդեւկէս՝
Զեղբարսն իմ զհարազատս, որ զմիոյ մօր լուծաք երկուսեան:
Արդեօք չեկի՞ն ընդ սոսա 'ի ցանկալի՛ն Լակեդեմոնէ,
Թէ եկեալ այսր ընդ սոսին անդրընդահերձ նաւատորմիւ՝
Այժմ ոչ կամին մտանել ընդ արս 'ի մարտ պատերազմի,
Խորշեցեալ յամօթոյ եւ 'ի յոգնուց որ յիս եղերք:
Ասաց զայս, բայց ըզնոսին ունէր երկիր կենդանատու
Անդ 'ի նոյն Լակեդեմոն 'ի բնագաւառին սիրատարփ: —
Իսկ ընդ քաղաքն նուիրակք զուխտի դաշնման ածէին զէց,
Գառինս երկուս, եւ գինի զուարթարար՝ անդոյ պտղոյ՝
Ի տիկ մի այծենի, եւ Իդէոս բերէր քարոզ
Խառնարան մի պաղպաջուն եւ ըմպանակս ոսկեաձոյլս.
Եւ զծերունին մատուցեալ յարուցանէր սովին բանիւք.
Ո՛ն արի, Լաւմեդոնեանդ. աւագանին կոչեն ըզքեզ
Ձիամարտիկըն տրովեանց եւ պղնձազէն աքայեցւոց՝
Գալ 'ի դաշտ անդր իջանել, զի կնքեսցեք դաշն անսասան երդմանց.
Եւ սիրելին Արէսի Մենելաւոս եւ Աղեքսանդր
Ըզկնոջէն մարտիցեն յերկայնաբուն աշտ նիզակաւ,
Եւ ըզհետ յաղթողին երթիցէ կինն եւ ընչացուածք.
Իսկ այլք սէր եւ դաշինս ուխտից կռուեալ վաւերականս,
Ի Տրոյա մեք բնակեսցուք յարգաւանդ, դարձցին նոքա
Անդրէն յԱրգոս ձիաբոյծ, յԱքայիս գեղեցկակին:
Զայս ասաց, եւ սոսկացեալ ծերոյն հրաման ետ ընտանեացն
Ըզկառսն լծել, զոր անդանդաղ ածին 'ի գործ:
Անդր ելեալ Պրիամոս՝ ձգեաց յետոյս զերասանակն,
Եւ առ նովին Անտենովր հեծաւ յերկձիւսն գեղեցիկ,
Եւ կալան ժիր զերիվարսն 'ի դաշտ ընդ դրունս Արեւմտեան:
Իսկ յորժամ ժամանեն եղեն առ տրովացիսն եւ աքայեցիս,
Ի վայր իջեալ 'ի կառաց անտի յերկիր ճարտակուշատ՝
Ի մէջ անդր անցին գնացին տրովադացւոց եւ աքայեցւոց:
Եւ անդէն եւ անդ յարեաւ արանց արքայն Ագամեմնոն,
Յառն եկաց եւ Ոդիսեւս բազմահանճար, եւ պերճ քարոզք
Զանձնենդ ուխտըս գէցն ածեալ, խառնեալ զգինին 'ի խառնարանն,
Առեալ ջուր ձեռնալուայ՝ թագաւորացն հեղին 'ի դաստս:
Եւ ձգեալ դաստակաւն Ատրիդեսի զդանակն հանեալ՝
Որ առ մեծաւ պատեններբք կախեալ կայր միշտ իւր սուսերին,
Մազս 'ի գըլխոց կըտրեաց գառանցն, եւ զայն առեալ ապա նուիրակք
Բաշխեցին յաւագորեարն աքայեցւոց եւ տրովադեանց,
Յորս Ատրիդէս մեծազօր յաղօթըս կայր ձեռս ամբարձեալ.
Արամազդ հայր, իշխանեալ յԻդայ՝ շքեղ եւ վեհափառ,

Եւ դու եւս Արեգակն՝ ամենատես, ամենալուր,
Եւ դուք Գետք եւ Երկիր, եւ որ 'ի խոր սանդարամետս
Ըզյոգնացեալսն պահանջէք, եւ զորս երդումն երդնուցուն սուտ,
Վկայք լերուք դուք եւ զերդմունսս պահեսջիք անդրդուելիս։
Զի թէ լիցէ Ալէքսանդր ըզՄենելաւ սպանանիցէ,
Նա կացցէ այնուհետեւ ըզՀեղինէ եւ զինչս ողջոյն,
Եւ մեք դարձ արասցուք 'ի լաստափայտայոցն ծովաչուաւ։
Իսկ խարտեաշ Մենելաւոս զԱլէքսանդրոս եթէ սպանցէ,
Զհեղինէ տրովացիք եւ զինչս ողջոյն տացեն 'ի դուրս,
Եւ տուգանս տուժեսցեն արգիւացւոց ըստ արժանի,
Որ եւ յապայս յազգ մարդկան հանդերձելոց եղիցի զրոյց։
Իսկ Պրիամոս եւ որդիք թէ Պրիամու չառնուցուն յանձն
Ինձ տուգանս հատուցանել՝ ուր Ալէքսանդր անկցի տապաստ,
Ես եւ յայնժամ իսկ հետէ փոխան տուժին տաց պատերազմ,
Կացեալ աստ՝ մինչեւ հասից 'ի կատարած այսօր կռուոյս։
Ասաց, եւ ըզզուարակացն փողոտեալ յանդգուն պղնձով՝
Ընդ գետնին արկ զայնոսիկ՝ որ թաւալգլոր խաղային անդ
Թափեալ անկեալ 'ի յոգւոց, զի պղինձ ըզզօրըն ջըլատեաց։
Իսկ առեալ ըզգինին 'ի թակուկէն դաշխուրանօք
Հեղուին նուէր, եւ դից մըշտընջենից աղերսէին,
Եւ մին մի ոք զայս ասէր 'ի տրովացւոց եւ յաքայեանց.
Արամազդ մեծ, գերափառ, եւ որ եւս այլ անմահ աստուածք,
Որ ոք նախ զըրժեալ դաշինն եւ ըստ երդմունս անցանիցեն,
Այնպէս որպէս գինիս այս՝ ուղեղ նոցին հեղցի յերկիր՝
Եւ նոցունցն եւ զաւակացն, եւ ամուսինքն ընդ այլս անկցին։
Ասացին զայս, այլ նոցա Զըրուանեանն ոչ կատարեաց զայն.
Իսկ առ նոսա Պրիամոս դարդանեան զայս բարբառեցաւ.
Ունկըն դիք ինձ, տրովադեանք եւ քաջասրունք աքայեցիք,
Զի դարձեալ ընդ կրուկ մեկնիմ գնամ 'ի հողմուտն ես Իլիոս,
Քանզի լինել չհանդուրժեմ ականատես սիրուն որդւոյս
Ընդ Արեայ սիրեցելում Մենելաւեայ մենամարտին։
Արամազդայ գիտելի եւ անմահից այլ աստուածոց,
Ո՛ւմ արդեօք կայ յերկոցունց մահուն վախճան ճակատագրեալ։
Ասաց այրն աստուածակերպ, առեալ 'ի կառսն եդ ըզգառինսն,
Ամբարձաւ եւ նա ինքն եւ զերասանսն յետկոյս ձըգեաց,
Եւ առ իւրեւ Անտենովք յերկձիան հեծաւ 'ի վայելուչ.
Արդ սոցա դարձ արարեալ գնային անդրէն յետս յԻլիոն։
Իսկ Հեկտոր՝ ձեռն Պրիամեան, եւ Ոդիսեւս աստուածային
Նախ ըզվայրըն չափեալ, ապա զվիճակսն առեալ 'ի ձեռս
Ի պղընձի մի արկեալ սասանէին 'ի գըլխանոց,
Թէ ո՛ նախ յառաջագոյն արձակեսցէ զաշտէն պղընձի։
Իսկ ամբոխըն պաղատէր՝ ձեռս առ աստուածսըն համբարձեալ,



Digitized by Google

Եւ այր այր յաքայեցւոց եւ 'ի տրովադեանց զայս ասէին .
Արամազդ հայր, իշխանակալ յԻդայ՝ շքեղ եւ վեհափառ,
Որ ոք զամ մի զբանիւք 'ի մէջ կողմանցս արկ երկոցունց՝
Ընդ սուր սատակեալ 'ի դժոխոց սուզանել տուն,
Իսկ մեզ սէր միաբանութիւն եւ դաշն ուխտի լինել անխաբ ։
Զայս ասացին, իսկ մեծն Հեկտոր սաղաւարտաձօձ՝ աչք 'ի Թիկունս
Շարժէր զվիճակսն, եւ ոստեաւ իսկոյն վիճակըն Պարիսի ։
Ապա կարգաւ բազմեցան ուր երիվարքն օդապարիկք
Կային խրոխտանճեալ եւ նկարէն զէնք եւ կազմածք ։
Բայց անդուստ առեալ զսուսերն ընդելեցիկ զէնսն ընդենոյր
Դիւցազն Աղեքսանդրոս՝ այրն Հեղինեայ գեղածամին ։
Յառաջ քան զամենայն արկ ընդ բարձիւքն ընդարձակագաւն
Ըստինս եւ աղխեալս ճարմանդօք արծաթեղէնք .
Եւ ապա 'ի վերայ լանջացն ընդ զրահովն ագանէր
Զեղբօր եղբօր զԼիկայոնի, եւ իւր 'ի ձեռն պատշաճեցաւ ։
Ապ՝ արկաւ ուսովն ընդ պղնձի թուրն արծաթապատ,
Ընդ վահանն յետ այնորիկ ընդ մեծայաղթ, թանձր եւ ստուար .
Եւ 'ի գլուխն ազդոյց հաստկուռ զճարտարագործըն սաղաւարտ
Ըզձիափող՝ յոր 'ի վերուստ ահեղ ծօծէր զարդմանակ .
Առ նիզակ մի հզօր՝ ձեռին իւրում դիպողագոյն ։
Ի նոյն օրէնս եւ արիական Մենելաւոս վառէր զէնս ։
Արդ յերկոցունց ճակատուց իբրեւ սոքա զինուորեցան,
Խաղացին յասպարէս յաքայեցւոց մէջ եւ տրովադեանց
Խայթոտեալ խոժոռ ակամբ, եւ ըզտեսողս կալան զարմանք
Ըզձիավարժսն տրովադեանս եւ զզարդարած աքայեցիս ։
Մօտաւորեալ նոքա յերեւրս յասպարէսին 'ի չափածոյ՝
Ծօծէին ըզնիզակսըն լի՛ նոր մեծամեծ սպառնալութեամբ ։
Եւ նախ Աղեքսանդրոս զերկայնաստուերն ընկէց զնիզակն
Եւ եհար ընդ վահանն Ատրիդեան զբոլորաձեւ .
Ոչ եբեկ ըզպղնձեան, այլ կորացաւ սայր իւր կըրկնեալ
Ի հաստատակուռ ասպարին . իսկ Ատրիդէս Մենելաւոս
Զըղընձուծն երկրորդ խաղաց՝ առ Արամազդ հայր մաղթելով .
Արամազդ տէր, տուր հանել ըզվրէժս 'ի նախ զըրկողէն զիս
Ի դիւցազն Աղեքսանդրէս, եւ ընդ ձեռամբ իմով պարտեա .
Զի սոսկասցի ամենայն 'ի վերջածին մարդկանէ ոք՝
Որ խորհեսցէ զհիւրընկալն օտարասէր երախտաւոր ։
Ասաց, եւ ծօծելով արկ ըզնիզակն երկայնաստուեր,
Եւ եհար ընդ վահան Պրիամեանն զբոլորակերպ ։
Թափ ընդ ասպարըն փայլուն անցեալ զընթաց զնիզակն ուժեղ,
Եւ երթեալ մխեցաւ ընդ բազմարուեստ լանջապանակն
Եւ յայնկոյս 'ի սնակուշտն հասեալ՝ զքիտոնն եհերձ աշտէն .
Խուսափեաց եւ ազերծաւ նա 'ի մահուն սեաւ օրհասէ ։

Սորիգէս հանեալ ըզթուրն արծաթագամ՝ վերացուցեալ,
Կոփեաց ուժգին 'ի խորան գըլխանոցին՝ յոր ջախջախեալ
Ցեռակ չերբ եւ 'ի քառակ փշրշեալ անկաւ 'ի ձեռանէն:
Վայեաց Սորիգէս վերակնեալ 'ի լայն երկինս.
Արամազդ հայր, չէք 'ի դիս եղեռնագործ ոք քան ըզքեզ.
Ըղձըմամբ Աղեքսանդրի ակն ունէի ՚նդ կառափն հանել,
Արդ սուսերս յիմում ձեռին խորտակեցաւ, եւ 'ի նմանէ
Ի բազկէս ոլացեալ գընաց մեկունդս անգործ 'ի նմանէ վրէպ:
Ասացեալ՝ դիմեաց կալուլ զձիաձաւի սաղաւարտէն,
Եւ քարշէր՝ յառաջադարձ աքայեցին արարեալ դէմ.
Իսկ խըրրացն ասեղնագործ խեղդէր ըզնա զփափուկ ուլանն,
Որ արկեալ ընդ կըզակաւ՝ գըլխանոցին պըրկէր 'ի կապ:
Եւ անշուշտ վարէր տանէր եւ ժառանգէր պարծանս անբաւ,
Եթէ չէր սուր նըկատեալ Արամազդեայ դստերըն Աստղիկ,
Որ զըրահամահ արջառոյն եբեկ ըզփոկն առ 'ի նմանէ,
Եւ ունայն սաղաւարտն ըստուար ձեռինն երթայր ըզհետ,
Զոր առա յայնժամ դիւցազն առ բարձաղէն աքայեցիս
Գլորեալ ընկէց, եւ բարձին ընկերակիցք իւր մըտերիմք:
Միւսանգամ յարձակեցաւ պըղընձանիւթ նա գեղարդեամբըն
Ըսպանանել ցանկացեալ, այլ զինքն Աստղիկ յափըշտակեաց
Հեշտաւ զօրէն աստուածուհւոյ, եւ թանձր ըզնա ծածկեալ մըգով
Տարաւ եդ յանուշահոտ 'ի սըրսկապան իւր բուրաստանն.
Եւ չոգաւ ինքըն կոչել ըզՀեղինէ, զոր եւ եգիտ
Ցաշտարակին 'ի բարձու, եւ պար զիւրեւ շատ տրովուհեաց:
Եւ ձեռամբըն բուռն հարեալ ըզհոտաւէտ խըլայէն ցնցեաց,
Եւ զդէմս առեալ պառաւոյ հիւսողի՝ բարբառեցաւ,
Զասրագործին՝ որ նըմա մինչդեռ բնակէրն 'ի Լակեդեմոն
Վաստակէր յըղմուր ասուիս եւ մինչեւ յոյժ սիրէր ըզնա.
Ի նոյն ինքն աստուածուհին կերպարանեալ Աստղիկ ասէ.
Արի եկ, Աղեքսանդրոս ըզքեզ կոչէ դառնալ 'ի տուն.
Կայ նա ինքն յառագաստին եւ 'ի գահոյս ճախարակեայս
Փայլեալ 'ի գեղ եւ 'ի ձորձս, եւ ոչ ըզնա համարիցես
Կըռուեալ ընդ առն եւ եկեալ, այլ թէ 'ի պար գնայցէ ուրեք,
Եւ կամ այն ինչ դադարեալ 'ի խաղալոյ՝ նըստեալ կայցէ:
Զայս ասաց, եւ ըզսիրտ նորա 'ի լանջըս իւր արծարծ.
Որ տեսեալ ըզպարանոց աստուածուհւոյն ըզհրաշագեղ,
Եւ ըզլանջսն ցանկալի եւ զլուսաւոր ականողիս,
Պակեաւ, եւ յանուանէ ձայնեալ անդէն բարբառեցաւ.
Ո՛վ վեհազն, եւ զի՞ բնաւ կըրթիս պատրել զիս յայդպիսիկ.
Միթէ այլ եւս ուրեք 'ի բարեշէն շինուածոց
Փռիւգիոյ կամ հեշտալւոյն Մէոնիոյ զիս վարեսցես.
Իցէ եւ անդ 'ի յօդաձայն մարդկանէ զոք քո յակն առեալ:

Քանզի արդ Մենելաւեայ պարտեալ զփախուցեալն Ալեքսանդրոս՝
Կամի զնա զառեալս տանել անդրէն տանել 'ի տուն,
Ցայն արդեօք աղաղս այժմիկ մանգաւ հասեալ կաս տատանօր :
Ո՛ն երթ նստ առ նըմա եւ յաստուածոց մեկնեաց շաւղաց,
Եւ այլ մի՛ եւս անդրէն դարձցես ոտիւք քովք յՈ՛ղիմպոս,
Այլ առ նըմին տառապեսցիր ցանգ եւ նըմին կաց պահակաւ,
Մինչեւ ըզքեզ ամուսին կամ աղախին արասցէ իւր :
Իսկ ես՝ անդր ոչ դիմեմ, — զի եւ իցէ իսկ ինձ բամբիր, —
Զանկողինս իւր յօրինել, զի տրտմութիւնք առ հասարակ
Ծաղր յետուստ զիս առնիցեն. եւ են 'ի սիրտ իմ ցաւք անչափ :
Իսկ առ նա սրդողեալ աստուածադեղն Աստղիկ ասէ.
Մի՛ գրգռեր զիս, եղկելի, գուցէ ցասմամբ թողից ըզքեզ,
Եւ որչափ ատեցից, որչափ առաւելս սիրեցի ցարդ,
Եւ 'ի կողմանց երկոցունց նիւթեցից ոխս դըժընդակս՝
Ի տրովւեանս եւ դանայիս, եւ կորիցես դու չարամահ :
Այսպէս ասաց, եւ երկեաւ Հեղինէ զարմ Արամազդայ,
Եւ գնաց քողածածուկ 'ի լուսափայլ պատեալ 'ի շղարշ,
Լուռ եւ գաղտ 'ի տրովւեհեաց. կարապետէր աստուածուհին :
Ի գեղազարդ ապարանս երբեւ հասին Ալեքսանդրի,
Աղախնայքն այնուհետեւ զգործովքն իւրեանց գային ընդ փոյթ,
Իսկ չքնաղն 'ի կանայս 'ի բարձրայարկ գնայր առագաստն :
Եւ նըմա ժըմտասէրն Աստղիկ առեալ աստուածուհին
Եւ բերեալ գահաւորակ մի արկ հանդէպ Ալեքսանդրի.
Նըստաւ անդ Հեղինէ, դուստր ասպարօղն Արամազդայ,
Զաչկունսն յետս դարձուցեալ՝ զայր իւր բանիւքս յանդիմանեաց.
Եկեալ կաս 'ի մարտէն. — յանկարծ անդէն կորընչէիր
Ի քաջէ սպանեալ առնէ՝ որ էր նախկին իմ ամուսին : —
Պարծէիր յառաջ՝ զԱրեայ քան զսիրելին Մենելաւոս
Կորովով եւ բազկաւ 'ի վեր լինել եւ գեղարդեամբ.
Այ՛ արդ արի ձայն տուր երթ Արեայ սիրուն Մենելաւեայ՝
Իջանել դարձեալ անդրէն միմեանց ընդդէմ 'ի կռիւ մարտի :
Բայց ես խըրատ տամ զըղջալ, եւ մի՛ 'նդ խարտեաշ Մենելաւոս
Ի վերայ գալ դէմ ընդդէմ եւ գուպարել յանդըգնաբար,
Մի գուցէ լըցիս անդէն առ 'ի նմանէ նիզակակէր :
Իսկ առ նա բան զայս Պարիս բարբառեցաւ պատասխանի.
Մի՛ կին դու զատն այպանօք ըզսիրտ իմ մի՛ երգիծաներ :
Զի զարդիս՝ ինձ յաղթեաց Մենելաւոս ընդ Աթենայ,
Եւ նըմա՝ ես միւս անգամ, քանզի եւ մեզ մերձ կան աստուածք :
Այլ արի, եկ 'ի սէր ամուսնութեան երթամք 'ի քուն.
Զի ոչ երբեք այսպիսի տըռփումն ըզմիտս հասեալ կալաւ,
Նա եւ ոչ մինչ զառաջինն 'ի բերկրալըն Լակեդեմոնէ
Հափափեալ զքեզ ծովէի անդընդահերձ նաւափայտիւք,

Եւ զուգեցայ 'ի Կրանայէ կըղզւոյ սիրով եւ անհողմնօք ,
Որպէս այժմ եմ խանդակաթ , եւ զիս ունի անոյշ փափաքանք :
Ասաց. եւ գնայր 'ի մահճիճան յառաջ եւ կինն ընկերի նորա .
Անդ ապա 'ի գահոյսըն նընջեցին քանդակածոյս :
Իսկ Ատրիդէսն ընթանայր գաղտնաբար ընդ բազմամարտին
Ցանկն ուրեք արկանել զԱղէքսանդրոս աստուածանման .
Այլ չկարաց ոք 'ի տրովեանց եւ յանուանի նիզակակցաց
Ցուցանել անդ զԱղէքսանդր Արեայ սիրուն Մենելաւեայ :
Զոր թէ ոք տեսանէր , ոչ ծածկէին առ գութ սիրոյ ,
Զի հաւասար սեաւ մահուան ամենեցուն էր ատելի :
Բայց խօսեցաւ ընդ նոսին արանց արքայն Ագամեմնոն .
Լուարուք ինձ , տրովացիք եւ դարդանեայք եւ օգնականք .
Սիրելւոյն Արեայ յայտնի է յաղթութիւն Մենելաւեայ :
Զհեղինէ արգիւացին ընչիւքն ողջոյն տուք դուք 'ի դուրս ,
Եւ զտուգանսն հատուցէք՝ որպէս զիարդ եւ վայելէ ,
Որ եւ յազգս հանդերձելոց մարդկան գնասցէ հըռչակ յաղագս :
Զայս ասաց Ատրիդէս , եւ գովէին այլ աքայեանք :

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Խորհուրդ դից յաջողումն Արամազդայ, որոյ զիջեալ 'ի Թախանձանս Հերայի, առաքէ զԱթենաս՝ երթալ դրդել զտրովադացիս՝ խանգար առնել ուխտին մտաբերութեան. որոյ եկեալ հրապուրէ զՊանդարոս՝ նետահար առնել զՄենելաւոս. ողբք եւ բողոք Ագամեմնոնի ընդ եղբաւն: Մինչ դեռ Մաքաւոն 'ի բժշկել կայ զվիրաւորն, տրովադացւոց ժամ գտեալ՝ յառաջ խաղան 'ի Յոյնս. Ագամեմնոն ընթացեալ ընդ գունդս բանակին, որոտայնդէ զօրսն, կշտամբէ զդղերդան. խառնուրդք մարտին, եւ նախճիրք առոր եւ անոր մեծամեծք:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

### ՈՒԽՏԻՑՆ ՑՐՈՒՄՆ. ԱԳԱՄԵՄՆՈՆԻ ՀԱՆԴԷՍ ԱՌՆԵԼ ԲԱՆԱԿԻՆ

Աստուածոցն յոսկի յատակն ակումբ առեալ զԱրամազդաւ՝
Ըզբաժինս անկանէին, եւ 'ի նոսին արգոյն Հեբէ
Զըմպելին աստուածեղէն մատուցանէր ոսկի նուագօք.
Առնուին մի'ստ միոջէ՝ յաստան տրովեանց ակընկառոյցք:
Անդ յայնժամ Զըրուանեանն ընդէլանէր կըսկիծ բանիւք
Ի զայրումն ածել զՀերա յառակաւոր 'ի սոյն բարբառ.
Երկոքին յաստուածուհեաց՝ Մենելաւայ են ձեռընտուք,
Հերայն արգիւացի եւ Աթենաս Պահպանապետ:
Մեկուսի սակայն բազմեալ եւ 'ի զըննին կացեալ բերկրին.
Իսկ սըմա՝ ծաղրասէրն Աստղիկ ցանգ մօտ կայ 'ի Թիկունս,
Եւ զըրհաս ճակատագրին տա'ի նմանէն անցուցանէ,
Եւ Թափեաց արդ եւս ըզնա, մինչ կարծէր զանձն իւր մերձ 'ի մահ:
Բայց յաղթումն՝ է Արեսի սիրեցելոյն Մենելաւայ.
Սակայն մեք տեսցուք խորհուրդ՝ Թէ յո՛ր գէմս իրքըդ շըրջեսցին,
Պատերա՞զմ անդըրէն չար եւ դըժընդակ ճակատամարտ
Ցարուսցուք 'ի կողմանսն, եթէ արկցուք սէր հաշտարար:
Եթէ այս հաճոյ եւ քաղցըր եղիցի բոլորեցունց,
Թող քաղաքըն Պրիամու Թագաւորին բնակեալ լիցի,
Եւ զարգոսեանն Հեղենէ տարցի անդըրէն Մենելաւոս:
Զայս ասաց, եւ Հերա եւ Աթենաս մընչեցին լուռ.
Նըստէին առ միմեանս, մըրմընջէին տրովեանց չարիս:
Կարկեալ կայր Աթենաս ցասուցեալ հօրն Արամազդայ,
Ծիկ չէհան, բայց ամեհի ամոյր ըզնա սըրտմըտութիւն.
Իսկ Հերայն սիրտ ժուժկալելոյ ոչ բարկութեանն, այլ խօսեցաւ.



Digitized by Google

Անապորոյն Զբրուանեան, բան որպիսի բարբառեցար.
Զի՞ կամիս ըղձատանկս ասնել զերեւ եւ ընդունայն,
Եւ զբրբռանս որ քբրտնեցի յերկս՝ եւ ձեռնն իմ յոգնեցաւ
Ի ժողովել զօրս յեղեալն Պրիամու եւ մանկտւոյն:
Ե՛րթ արա, խակ այլք ընդ քեզ դիք համօրէն հաւանեսցին ոչ:
Արամազդ ամպայարոյց՝ ծանրացասուեալ ասէ առ նա.
Ա՜յ Թշուառ, զի՞նչ Պրիամոս եւ Պրիամու մանկունքն ընդ քեզ
Հատուցանեն ինչ վնաս, զի անդադար ջերջիս մոլիս
Սատակել զԻլիոնի զգեղեցկակերտն շինուած.
Որ զի թէ ինքնին ընդ դրունսն եւ ընդ երկար մտանել պարիսպս՝
ԸզՊրիամ եւ զՊրիամեան մանկունս ողջ ողջ լափանեսցես,
Եւ զոր այլ եւս տրովեանք, յագեսցուսցես թերեւս անդ զոխդ.
Արասցիր որպէս կամիս, մի՛ յայսմհետէ գէթ այս պայքար՝
Մեծ ընդ իս եւ ընդ քեզ ընդ երկոսեանս անկցի կռիւ:
Այլ եւս ինչ քեզ ասացից եւ յեա դու զայն 'ի միտս քո.
Զի եւ իմ յորժամ քաղաք մի կործանել փափաքեցից խանդք՝
Որ սիրելի քեզ որեւրոյ եցէ ծնընդեան բնակաւս,
Մի՛ զդայրացեալ ինչ արգելուլ յամեցուսցես, այլ տացես թոյլ.
Զի եւ իմ արդ ակամայ տուեալ քեզ զայդ կամօ յակամայս:
Զի որ կան 'ընդ արեգակամբ եւ ընդ երկնիւք աստեղազարդ
Գամ մի բնակեալ ուրեք քաղաքք յերկրածնելոց 'ի մարդկանէ,
Էր իմ սրտանց 'ի նոցա նախամեծար Իլիոն սուրբ,
Եւ Պրիամ եւ ժողովուրդ կորովաձեռն Պրիամու.
Զի ոչ երբեք օրինի խորանդք սեղանն իմ կարօտեր,
Եւ նուիրօք եւ ճենճերով. զի այս համեալ է մեզ պատիւ:
Անդէն ներմա պատասխանի արար աչեղն արդոյն Հերա.
Ինձ երեք են արդարեւ քաղաքք յոյժ սիրելիք,
Արգոս եւ Սպարտա եւ Միկենէ լայնափողոց.
Թէ ատեսցիր յառեւելութիւն զարմցին սրտիդ, խորտեա զնոսա,
Ոչ ընդդէմ ինչ քեզ դառնամ սոցա փոխան, եւ զլնդամ ոչ:
Զի թէպէտ եւ անխայեմ եւ տապալել չթողյցեմ թոյլ,
Ոչինչ օգտիմ 'ի խնայել, զի հաստատութեամբ ես ուժգնագոյն:
Է սակայն եւ զիմ արժան ոչ 'ի զերեւ ասնել վաստակ,
Զի եւ ես աստուածուհի եմ եւ անտի սերս ուստի քոյդ,
Եւ զիս երիցագոյն ծնեալ Զբրուան կորովամիտ,
Ցերկուս դէմս, զարմիւս եւ քո կոչմամբ անկողնակից.
Իսկ յանձնահէց դու 'ի մէջ թագաւորես բոլորեցունց:
Այլ արդ եկ զայսոսիկ միմեանց տեղի տուեալ շնորհեսցուք,
Ես քեզ, եւ դու ինձ, եւ զհետ եկեսցեն միւս դիք անմահք:
Եւ դու փոյթ ընդ փոյթ պատուէր տուր հրամանի Աթենասայ,
Երթալ գնալ 'ի տրովեանց եւ աքայեցւոց գրժընդամ առաջ,
Գուցէ գործել՝ զի տրովացիք ըղխրոխտացեալն աքայեցիս

Ձեռնմերկեց 'ի հարկանել լեզուն՝ պերճական ուխտին գաղղիոյ :
Զայս ասաց, չքնաղատեսութեամբ հայրըն մարդկան եւ աստուածոց,
Նոյնժամայն թռչուն ճանճնէ թարգմանեցաւ առ Աթենաս .
Ի բանակին առ արշաւայծս եւ աքայեանս երթ փութաձեմ,
Հնարեալքն՝ զի արտաքսեսցեն անցեալ բան ուխտ գաղղիոյն երգման՝
Նախաձեռն 'ի մեղանչել աքայեցւոց լեզուն սերգոյ :
Ասաց, յորոյ զանձկացեալն յառաջագոյն իսկ զԱթենաս,
Որ հասաձեալ ողջացեալ յՈղիմպոսին էջ 'ի բարձանց :
Որպէս աստղ ինչ բոցաձեւալ՝ կործանիչ Զրուցանոյն ձեռ
Նաւաստեաց 'ի նշան եւ կամ զօրաց լայն բանակի
Առաքէ, եւ Թռթռափին առ 'ի նմանէ յոյժ կայծակունք,
Խոյանայր նոյն հանդոյն յերկիր Պալլաս Աթենաս :
Ոստուցեալ եկաց 'ի մէջ, եւ ապշութիւն կալաւ զտեսօղս,
Ըզձիավարժս տրովադեանս եւ զբարձաղէն աքայեցիս :
Եւ այսպէս ինչ, այր ցընկեր անդրադարձեալ, բարբառէին .
Պատերազմ չար միւսանգամ եւ մրրկաձայն ճակատամարտ
Զարթիցէ, կամ յերկոսին կողմանս արկցէ սէր Արամազդ,
Այն որ էն իսկ մարդկան պատերազմաց մատակարար :
Այսպէս ոք ասէր ինչ՝ յաքայեցւոց եւ 'ի տրովադեանց :
Իսկ նա զանձ ըզզեստս առեալ՝ զԱնտենորեան Լաւոդոկեայ
Ըզկարըշնեղ քաջամարտին, 'ի տրոյացւոցն եմուտ ամբոխ,
Ի խնդրել զդիւցազնազան Պանդարոսի՝ թէ ուր գտցէ :
Եւ եգիտ զԼիկայոնեին ուստր անարատիւ եւ ուժեղակ
Զի անհաս կայր, եւ գունդ զնորեւ վահանաւոր զօրեղ արանց
Եկեալց ըղհետ նորա 'ի յորձանացն Էսեպոսի :
Եւ կացեալ առընթեր՝ զերապաշտեւ խօսեցաւ բանս .
Լուիցես ինձ արդեօք, արի որդիդ Լիկայոնի,
Իշխիցես Մենելաւայ հարկանել նետ մի արագթռիչ :
Ի տրովադեանց յամենեցունց ժառանգեցես շնորհս եւ փառս,
Եւ 'ի վեր քան զամենայն յԱլեքսանդրէ թագաւորէ .
Ի նմանէն մանաւանդ մեծապայծառ տարցիս պարգեւս,
Եթէ տեսցէ զԱտրոդին զՄենելաւոս արքայական
Քոյ նետիւ 'ի պարտութիւն մատնեալ՝ ելեալ յողորմ խարոյկ :
Օն 'ի վերայ մեծափառ Մենելաւին մուա ընդ աղեղն,
Եւ ուխտես լուսածնին Ապոլոնի քաջաղեղան
Ըզգառանց անդրանկածնունդս հանել նուէր զոհ գերապանծ
Ի դառնալդ անդրէն 'ի տուն յաստան Զելեայ նուիրականի :
Զայս ասաց Աթենաս եւ զխօլին միտս հաւանեցոյց .
Հան իսկոյն զաղեղն ողորկ ըղկայրենի վայրաշ քօշին,
Զոր երբեմն ուրեմն ինքնին 'ի թաքստոցին դիպուցեալ՝
Ցեռանեալն 'ի վիմէն դարանակալ եղեալ նետին,
Եհար ընդ սրտապատուրան, եւ նա 'նդ պառկեցաւ անկեալ տապաստ :

Որոյ եղջիւրք 'ի գլխոյն էին բուսեալ թիզ վեշտասան .
Զոր քերեալ պատշաճեցոյց եղջերագործ ճարտարապետ ,
Եւ քաշ յղկեալ զամենայն՝ 'ի ծայրսն ագոյց ոսկեձոյլ լանջս :
Արդ լուրեալ զայն քաղցրալէս՝ յերկուս երկրին եդ 'ի խոնարհ ,
Իսկ ընկերքըն կորովիք զասպարսն հանդէպ իւր ունէին ,
Գուցէ 'ի նա նախ յառնիցեն աքայեցւոց արի մանկունք
Մինչ չեւ խոցեալ Ատրորդին Մենելաւոսն արքայական :
Նա զխուփն եբաց կապարճիցն եւ առ. եհան նետ մի անտախ
Նորաթեւք՝ սլացաթեւ , եւ սեաւ ցաւոց զարան երկանց .
Եւ 'ի լարի անդ անդէն կազմեալ եդեալ զդառըն փրքինն ,
Ուխտեաց լուսածնէին Ապողոնի գիպաղեղան
Ըզգառանց անդրանկածնունդս հանել նըմին զոհ մեծաշուք
Ի դարձին անդրէն 'ի տուն 'ի նուիրական Զելեայ քաղաք :
Եւ կալեալ համայն զգըլզըռւկն եւ զլար քարշեաց արջառաջին ,
Ցեցուցեալ ըզջիլն 'ի ստինսըն եւ զերկաթն 'ի լայնալիճն :
Եւ յորժամ կարակնաձեւ յաղթ աղեղամբն ընդ գիրկս եմուտ ,
Լիճըն ճայթեաց , եւ ահագին ըշխահեաց լարն , եւ նետն սաստեաւ
Սայրասուր , սուսանաթեւ 'ի սպայակոյտ անդըր մոլեալ :
Այլ ըզքեզ , Մենելաւէ , չմոռացան դիքն երջանկափառք ,
Անմահքն , աւարառուն մանաւանդ դուստր Արամազդայ ,
Որ քո կացեալ առաջի՝ վարեաց զհերձակըն դառնաթոյն :
Որ եւ այնչափ ինչ արգել զայն 'ի մարմնոյն վանեալ 'ի բաց ,
Որպէս քըշէ մայր ճանճ յորդւոյն'ի քաղցրանինջ քուն հանգուցեալ :
Եւ նոյն ինքն անդր ուղղեաց՝ ուր կամարին ոսկի ճարմանդք
Ագուցեալ յեռեալ կային եւ ծալ 'ի ծալ պատէր զըրահ :
Եւ անկեալ դառըն սըլաքն անդր 'ի գօտին գեղապատշաճ՝
Եւ եղեալ թափանցանց , եւ ընդ կամարն ամենարուեստ
Եւ խաղաց մըխեցաւ մինչեւ 'ի զրահն յոգնապաճոյճ
Ցըտախտակըն զոր կըրէր մարմնոյն պատեան , նետից պատնէշ ,
Որ եւ պահեաց իսկ ըզնա , բայց եւ ընդ այն էր անցեալ թափ :
Եւ ցըտեալ նետն ըզվերին երես մորթոյ քաջին մարմնոյ՝
Իսկ եւ իսկ 'ի խոցուածոյն հոսեաց արիւն բոսորաթուխ :
Որպէս յորժամ Մէոնիա կամ Կարեացի ոք կին զփըղոսկր
Ի կարմիր ներկանիցէ՝ երիվարաց լինել շքուշակ ,
Եւ դընի յառագաստին , եւ ցանկացան ասպետք բազումք
Տանել զայն , այլ կայ պահի թագաւորին փառաց 'ի շուք՝
Երկաքի , ձիոյն 'ի զարդ եւ 'ի պարծանըս հեծելոյն .
Այսպէս քո , Մենելաւէ , գեղապարոյր բարձք աղտեղաց
Եւ սըրունք մինչ 'ի պըճղունսըն վայելուչ՝ յարեան ներկան :
Սոսկացաւ ընդ այն տեսիլ արանց արքայն Ագամեմնոն՝
Ցակն ըղթուխն արկեալ արիւն զառ 'ի վիրէն հեղեղատեալ .
Սոսկացաւ եւ նա ինքնին Արեայ սիրուն Մենելաւոս :



Digitized by Google

Բայց տեսեալ՝ զի արտաքոյ կայեն ալպէքն սայլքըն եւ կառ,
Դարձեալ 'ի լանջս իւր անդրէն ժողովեցան ոգիք նորա։
Անդանօր զաւան հեծուԹեանց՝ Մենելաւեայ կոչեալ ըղձեան՝
Առաց արքայն Ագամեմնոն, հեծեծէին եւ համահարզք.
Սիրելիդ իմ հարազատ, արդ քեզ 'ի մահ կնքեցի դաշինս՝
Մէն միայն ընդ աքայեանցս արկեալ ըզքեզ տրովեանց 'ի մարտ։
Այսպէս հարին զքեզ տրովեանք՝ զերդմունս ուխտին կոխեալ առ ոտն.
Այլ ապախտ ոչ եղիցին դաշինքն եւ ոչ գառանցն արիւն
Եւ նուէրք անապականք եւ աջք յոր մեզս հաւատացաք։
Զի Թէպէտ եւ առ ժամայս չըվճարեաց Ողիմպականն,
Անդրանն եւս հատուսցէ, եւ չարաչար պահանջեսցեն
Ընդ իւրեանց իսկ կառափն՝ հանդերձ կանամբք եւ մանկըտւով։
Զի հասեալ ճշմարտուԹեամբ եմ ես մտօքս եւ խորհրդովք,
Գայցէ օր՝ յոր նուիրականդ այդ Իլիոն սատակեսցի
Եւ Պրիամոս եւ զօրք նիզակաւորըն Պրիամու,
Եւ Զրուանեանն Արամազդ՝ արփիաբնակըն բարձրագահ
Նա ինքնին շարժեսցէ զմառախլապատ ասպարն 'ի բնաւս՝
Սրտմտեալ ընդ դըրժանացս. այս ամենայն չանցցեն ապախտ։
Բայց ըզքէն կըսկիծ սաստիկ հարցի յոգիս, ով Մենելաւ,
Թէ մեռցիս եւ ըզկենացըդ կընքեսցես ճակատագիր,
Եւ ծանըր կորանօք 'ի ծարաւուտն Արգոս դարձայց։
Զի հայրենի գաւառին աքայեանքս յուշ դայցեն ընդ հուպ,
Եւ Թողցուք 'ի պարծանըս Պրիամու եւ տրովացւոց
Զարգոսուհին Հեղինէ, եւ զքո լուծցէ զոսկերս երկիր
Զանկելըդ 'ի Տրոյա՝ մինչ չեւ գործոյս 'ի լրումն եկեալ։
Եւ զայս ինչ ոք ասիցէ յամբարտաւան տրովադացւոց՝
Տրոփեալ ատն 'ի շիրիմ Մենելաւեայ մեծափառի.
Օ՜հ Թէ այսպէս 'ի հանուրս Ագամեմնոն լընուր զցասումն՝
Որպէս այժմըս այսր ընդ մայր զաքայեցւոցն ածեալ բանակս,
Եւ դընաց կորեաւ 'ի տուն 'ի հայրենին ըղձիկ գաւառ.
Նաւուք դատարկելովք, Թողեալ զարին Մենելաւոս։
Զայս ոք ուրեք ասասցէ, բացցի յայնժամ ինձ երկիր մեծ։
Բայց ըզնա սրտապնդեալ Մենելաւոսն ասէ խարտեաշ.
Քաջ լեր, մի երկեղուցես արկցես 'ի զօրս աքայեցւոց.
Ոչ Թէ նետըն սայրասուր 'ի մահաբեր ուրեք հարաւ,
Պահեաց զօտին նըկարէն եւ 'ի ներքուստ պատեալ կամարն
Եւ տախտակն յօրինեալ 'ի պղնձագործ արանց դարբնաց։
Առ որ արուեալ պատասխանի ասէ արքայն Ագամեմնոն.
Իցէ Թէ այդ այդպէս էր, ով սիրելիդ Մենելաւոս։
Այլ ըզվէրըդ զննեալ արկցէ բըժիշկն բալեղանս,
Որ 'ի սեաւ քո ցաւոցըդ հանդուսցէն ըզքեզ Թերեւս։
Ասացեալ՝ առ պաշտօնէըն ձայնեաց քարոզ Տալթիբիոս.

Տաղթիբիէ, երթ փութով կոչեսջիր այսր ըզՄաքաւոն՝
Զայրն որդի Ասկլեպեայ զամենահնար բժշկապետի,
Գալ այցել ըզՄենելաւ զարիական պետն աքայեանց,
Զոր նետահար արար ոք կորովաձիգ աղեղնաւոր
Ի տրովեանց կամ լիկեցւոց, նմին 'ի փառս, իսկ մեզ 'ի սուգ:
Զայս ասաց, եւ քարոզին լուեալ՝ չեղեւ անունկնդիր.
Եւ գնաց գտանել 'ի գունդ պատենազէն աքայեցւոց,
Աչս ածեալ 'ի դիւցազնըն Մաքաւոն զոր եւ ետես,
Ահա կայր եւ շուրջ զնովաւ հզօր ջոկերք վահանաւորք
Վաշտականաց 'ի ձիաբոյծ Տրիկեայ նմին զինուորելոց:
Որում մերձ անցեալ ըզբանս երագաթեւ բարբառեցաւ.
Արի եկ, Ասկլեպեանդ, Ագամեմնոն կոչէ արքայ,
Գալ տեսանել զՄենելաւ զարիականն աքայեանց պետ՝
Զոր նետաձիգ արար ոք աղեղնաւոր քաջահըմուտ
Ի տրովեանց կամ 'ի լիկեանց՝ իւր 'ի պարծանս եւ մեզ 'ի վիշտ:
Զայս ասաց եւ զսիրտ նորա 'ի լանջըս իւր վըրդովեցոյց.
Ելեալ գնացին ընդ ամբոխն 'ի լայն ճամբարն աքայեցւոց:
Եւ յորժամ ժամանեցին ուր Մենելաւ խարտեշագեղ
Կայր խոցեալ եւ ըզնովաւ քաջաց գումար միաժողով
Գար առեալ՝ եւ 'ի միջի նոց կանգնէր այրն աստուածանման,
Իսկ եւ իսկ կորզեաց ըզնետն 'ի կամարէն պնդապատշաճ.
Այլ 'ի ձգելն հանել փըքնին՝ յետկոյս բեկան կարթք նորա սուր:
Ըզգօտին խայտաճամուկ եւ ըստ յանձնէն, եւ 'ի ներքուստ
Ըզկամարն եւ ըզտախտակ՝ գործ պղնձագործ մանկանց դարբնաց:
Եւ ըզխոցըն տեսեալ՝ ուր դառնաթոյնն անկաւ սլաքն,
Քամեալ զարիւնն՝ հըմտաբար ցանեաց անդր ըսպեղանիս
Զորս երբեմն հօր իւրում սիրելապէս մատոյց Քիրոնն:
Մինչ սոքա յահեղագոչըն Մենելեայ կային 'ի սպաս,
Վահանաւոր տրովացւոց հրոսեալ գային խումբք 'ի վերայ.
Նոքա զէն զգեցան դարձեալ եւ յուշ արկին ըզմարտակոչս:
Ոչ քընած տեսանէիր անդ ըզդիւցազն Ագամեմնոն,
Ոչ երկչոտ ոք սըրտաթափ, ոչ վեհերոտ 'ի գուպարած,
Այլ յաւէտ ժըրաջըլուս 'ի մարտ՝ յարանց փառապարգեւ:
Զի զերիվարսըն թողեալ կառօքն 'ի պղնձէ զըրուագելոցք,
Զորս առեալ ըզփըրընչեալըսն մեկուսի սպասաւորն ունէր
Եւրիմեդոն՝ որդին քաջ Պիրէոսեանըն Պտոլեմեայ,
Որում եւ սաստիկ ետ պատուէր՝ ունել զնոսին իւր առ երի,
Թէ խոնջ ուրեք կալցի զանդամն 'ի տալ հրաման բազմամբոխն.
Ինքն հետի երթեւեկեալ ընդ դասակարգ ռազմամըրտից,
Զորըս ժիրըն տեսանէր յերագաձի դանայեցւոց,
Մերձ կացեալ՝ եւս առաւել նոցա բանիւքըս տայր խրախոյս.
Արգիւացիք, մի թուլայք յարիական քաջութենէդ,



Digitized by Google

Քանզի հայրն Արամազդ սրտայ նշդատաս եղիցի ոչ·
Այլ որ նախ վաղեալ զերդմամբք ուխտի զդաշանցն զդրժեցին,
Ընդ նոցա փոփոխակ մարմնովս անշուշտ անգեղք ճարակեսցեն,
Ընկեանեայցն մերկելով մեք եւ զմանկանց նոցին մանրիկ
Վարեսցուք նաւուք զերի, զոտան նոցուն վարեալ ազատս։
Իսկ զորս հայեր վստահացեալ 'ի սուտակալի պատերազմէն,
Ընդ սա զայլազգին բանիւք երաշխեալ յայժ երդուանէր·
Արդարեանք, նուիրեալքդ 'ի նեղ, անօթեայարդք, ո՞չ պատկառէք·
Զի՞ բնաւ այդպէս կայք ընդ վայր եբրեւ զեզնորթս հարեալ յապուշ,
Որ խոնջեալ պարտասեալ 'ի մեծապայշտ արշաւանաց՝
Զետեղ առեալ կան, եւ մինայ ինչ ոչ 'ի սիրտսն զօրութիւն·
Նոյնպէս կայք եւ դուք առշեալ, ոչ ձեռն 'ի գործ մխէք մարտիդ։
Միթէ արդեա՞նց սպասիցէք հասանել զալ ուր նաւքըս մեր
Կան ձգեալ զեզերցկախեալք՝ ընդ ափնածիր ալեխառն ծովուն,
Զի առաջիք Թէ Զրուանեանն արկցէ՞ զձեռք զեւր ձեռն հովանի։
Այսպէս սա իշխանաբար գղանայր ձեռնեալ ընդ զուամարտ ասպի·
Եղեւ եհաս առ կերտացեալն՝ յարի արանց անցեալ 'ի սահ։
Եւ առաջս զգաղջաւորան Իդոմենեւ զինուորեալն·
Իդոմեն՝ 'ի նաւահանգին ուժեղութեամբ վարազաձանան,
Եւ նորա Մերիոնէս ըզկեռին զտանգարն խրախուսէր։
Զորս տեսեալ ցընծացաւ արանց արքայն Ագամեմնոն,
Եւ անդէն ողոք բանիւք բարբառեցաւ առ Իդոմեն·
Զքեզ, Իդոմեն, պատուեմ 'ի բնաւ երագաձի դանայեցիս
Թէպէտ 'ի պատերազմ, Թէպէտ եւ յայլ ամենայն գործ,
Եւ Թէպէտ 'ի կոչունս, ուր զսեաւ գինին մեծահարկի
Խառնեն 'ի խառնարանս արքայացուցն ազատասերպք։
Զի ուր այլք առ հասարակ 'ի հերապանծ աքայեցւոց
Ըմպեն բաժին մի չափով, քո լիալիր կայ միշտ բաժակ,
Որպէս ինձ իսկ զըլխովին, ըմպել յորժամ ցանկասցի սիրտ։
Խոյացիր արդ 'ի մարտ՝ որպէս ինչ զալ պանծայիր նախ։
Առ որ զայս Իդոմենեւս արար դարձուած կրետացւոց պետ·
Ատրիդէս, ես քեզ յայժ համաձայնական եղէց ընկեր
Իբր երբեմն յառաջագոյն կալայ յանձին եւ խոստացայ·
Իսկ դու զայլս յորդորեսջիր զխտակադեղ աքայեցիս,
Զի փոյթ ընդ փոյթ մարտիցուք· քանզի արդեանք լքեցին զերդմունս,
Եւ նոցա՝ մահ եւ աղէտք ժամանեսցեն յապաւհետեւ,
Որ զի նախ ձեռներէցք զուխտիւն անցեալ հասուցին տայժ։
Զայս ասաց, եւ Ատրիդէս ելեալ գնայր զուարթամիտ·
Եկն յԷասսըն երկոսեան, յարի արանց անցեալ 'ի գունդ·
Եւ սոքա զէն առնուին, եւ զնոսի խաղայր հետեւաց ամպբոզ։
Զոր օրինակ 'ի գխանէն եսես ըզմէգ այր խաշնարած,
Զի շընչով արեւմտից սապաղադեալ ընդ ծով գայցէ·





Digitized by Google

Եւ նոքա 'ի բացակայան իբրեւ ըղձուար ինչ արշաւթոյր
Թռչի՛նք անդունդս ընթացեալ, ածեալ բերեալ մըրըրիկ բազում,
Սոսկացաւ ընդ տեսիլն եւ ընդ այրիւ վարեաց ըղձօտն.
Հանդուձեալ ընդ Էասեանց դիւցազնածնունդ պատանեկաց՝
Ի գըժնեայ դըրդէին ճակատամարտ խիտ գումարտակք
Կապուտակք, եւ յասպար եւ 'ի նիզակ քըստմնածածանք:
Եւ զասա յանձն արկեալ՝ խընդաց արքայն Ագամեմնոն,
Եւ առ նոսա ձայնարկեալ՝ երագաթեւ խօսեցաւ բան.
Ձեզ, Էասք, պատենազէն արգիացւոց ըստղայապետաց,
Ձեզ ինչ ոչ տամ հրաման, չէ իսկ պիտոյ տալ ինչ ձեզ ճեղ,
Դուք ձեզէն վառէք ըզզօրդ՝ արիապէս դընել մարտ:
Օ՜չ թէ, հա՛յր Արամազդ, եւ Աթենաս եւ Ապողոն,
Այդպիսի ամենեցուն 'ի լանջս իւրեանց լինէր ոգի,
Օ՜ն եւ ծն՝ արքայն Պրիամու փոյթ քանդէր քաղաք
Ըզմերովս անկեալ բըռամբ եւ նըւաճեալ եւ աւարեալ:
Ասացեալ զայս եւ անդէն զնոսա թողեալ չոգաւ առ այլս.
Անդ եգիտ ըզՆեստոր՝ ըզքաջաձայն Պիլեանց խօսնակ,
Որ զիւրսն 'ի սաստ յօրինէր եւ խրախուսէր 'ի պատերազմ
Ըզմեծաւ Պելագոնիւ, զԱլաստորաւ եւ ըզՔրոմեաւ
Եւ զՀեմոնաւ արքայիւ եւ զԲիասաւ հովուէին ազգաց:
Եւ յառաջ զհեծելախումբն հանդերձ կառօք ու երիվարօք,
Եւ զհետեւակսն ըզկնի կացոյց յաճախագունդ արի արեար՝
Ի սաստին լինել պարիսպ, իսկ զապիկարսն արկ 'ի միջին,
Զի թէ ոք եւ յակամայս, այլ առ հարկէն գուպարեսցի.
Եւ նախ՝ հեծելազէն տայր նա պատուէր, եւ հրամայեաց
Զուսպ ունել զերիվարսն եւ մի ապայքն հարկանել խառն:
Մի ումեք 'ի ձիավարժս եւ յարութիւն իւր խիզախեալ,
Նահատակ եկեսցէ միայն պատերազմել ընդ տրովացիս,
Եւ մի յետս ընկըրկեսցի, զի տկարագոյն գըտանիջիք:
Եւ որ յիւրում ոք 'ի զոյգս հանդիպեսցի կառաց այլում,
Կարկառեսցէ տէգ յառաջն, որ օգտագոյն լիցի պայման:
Սոյնպէս եւ հինքն ըզքաղաքս եւ ըզպարիսպս աւերէին,
Զայս 'ի լանջս իւրեանց ըզմիտս եւ ըզհոգի կիրթ ունելով:
Այսպէս ծերըն տայր խըրատ՝ նախնի մարտից քաջահըմուտ,
Զոր տեսեալ՝ զուարթացեալ խընդաց արքայն Ագամեմնոն,
Եւ արձակեալ առ նա ձայն՝ թըռուչուն բանիւք բարբառեցաւ.
Տա՛յր ոք ինձ, ո՛վ ծերունի, թէ զերդ ոգիդ է 'ի ծոցիդ՝
Նոյն եւ ծունկքդ ըղհետ գնայցեն, ոյժ եւ կորովդ էր անդեդեւ,
Բայց մաշէ զքեզ ալեւոյթ հասարակաց նըմանամլէշ.
Ցանկայրծ ա՛յլ ոք զայն առնոյր, եւ դասէիր դու 'նդ մանկագոյնս:
Եւ նըմա պատասխանի Նեստոր ասպետըն Գերենեան.
Ես իսկ ինքնին, Ատրիդէս, փափաքէի այնպէս լինել՝

Ըղձիւցաղն որպէս յորժամ սատակեցի զԷրեւթալեան ։
Բայց երբեք դիք զամենայն միահաղոյն չետուն մարդկան ․
Պատանի յայնժամ էի, այժմիկ ալեք յիս անկանին ։
Այլ սակայն խառնեցայց ընդ հեծեալսն եւ տաց խրախոյս
Խորհրդով եւ բանիւք, զի ծերունեաց է այս պատիւ ։
Տէգընկէց լիցի մանկանն՝ տիովք քան զիս կրտսերագոյն,
Յուսալից՝ ապաստեայ խիզախ յոյժ ու՛ի կորով կարշնեղութեան ։
Զայս ասաց, եւ Ատրիդէս խայտայր յառաջ ուրախամիտ ․
Գտա զորդին Պետէոսի զձիամարտիկն Մենեսթեւս
Զի կայր, եւ շուրջ զիւրեւ աթենացիք ճակատամարտիկք,
Եւ անդէն՝ հուպ առընթեր կայր Ոդիսեւս բազմահանճար ։
Եւ անդ մօտ՝ Կեփաղենեանց շուրջ գումարտակք ոչ անարգք՝
Կային անդորր, քանզի զօրուն չեւ էր առեալ զխաղաղմն խոշեան,
Զի դեռ այն ինչ դրդեալ խլրտէին գունդքն ռազմիկք
Տրոյացւոց ձիավարժից եւ աքայեանց սատի անտի ․
Ուստի սոքա դէտակն եղեալ՝ մնային զի այլ գունդ աքայեան
Դոյթ ՚ի վերայ տացէ տրովեանց, եւ սկիզբն ՚ի մարտ առնիցէն ։
Զոր տեսեալ յանդիմանէաց Ագամեմնոն արանց արքայ,
Եւ առ նոսա ձայն եդեալ՝ խօսեցաւ բանս երագաթռիչ ․
Ո՛վ զաւակ Պետէոսեան՝ դիւցազընունդ թագաւորի,
Չարահնար եւ դու լցեալ խոր մանդութեամբ նենգ Ոդիսեւս,
Զի՞ կայք պատկուցեալ, եւ վեհերեալ՝ այլոց մնայք ․
Ձեզ արժան էր առաջին ընդ ախոյեան կալ նահատակս
Եւ ՚ի կռիւ հրաբորբոք՝ զիմադրաւեալ շահատակել ։
Առաջինք եւ ՚ի խրախուճս յինէն կոչիք դուք երկոքեան,
Յորժամ խրնջոյս կազմիցեմք աքայեցիքս ազատանւոյն ։
Քաղցր էր անդ ըղխորովոյ խորտիկան ուտել համեղահամ
Եւ զանոյշ զգինւոյն նուագս՝ որչափ եւ կամք էին՝ ըմպել ․
Բայց սակայն մրտագիւր կռայնեալ կայիք ցայժմ ՚ի զընին,
Տասն ախոյեան թէպէտ գունդ անդուլ զինով կանխէր ՚ի մարտ ։
Հանճարեղն Ոդիսեւս խեթիւ դիտեալ արար դարձուած ․
Զի՞նչ ասես բան, Ատրիդէս, ընդ ատամանցըդ վաղեաց ցանկ ․
Զիա՞րդ յոյլս ասես ՚ի կռիւ ․ ուր զարթուսցուք աքայեցիքս
Բուռն եւ սուր ճակատամարտ ընդ տրովացւոց ձիավարժից,
Անդ տեսցես, թէ կամք իցեն եւ քեզ իցէ ինչ սոցին փոյթ,
ԶՏեղեմաքին սիրուն հայր ընդ ախոյեանս խառն արշաւեալ
Տրովադեանց քաջաձիոց ․ եւ օդաբանս խօսիս դու զայդ ։
Իսկ ընդ նա՝ ժպտեալ ընդ քիմս՝ ասաց արքայն Ագամեմնոն,
Խելամուտ ցասմանն եղեալ, եւ ՚ի խօսիցն եկեալ ՚ի զղջ ․
Մազդեղընդ Լայերտեան՝ բազմահընար Ոդիսեւս,
Ոչ սաստիւ ինչ կշտամբեմ ըզքեզ եւ ոչ հրաման ինչ տամ ․
Զի հասեալ եմ ճշմարտիւ՝ զխորդ ոգիդ ՚ի լանջըս քում

Աղու մըտաց է հըմուտ, զի զնոյն խորհիս որ զմեզ եւ ես ։
Այլ աղէ երթ, եւ թէ խօսս ինչ առ տեղեաւս իցէ խօսեալ,
Քաւեսցուք զայն ապա, եւ դիցեն դիք ըզբնաւն ապախտ ։
Ասացեալ՝ եթող զնոսին անդ եւ առ այլս հեռանեցաւ,
Եւ եգիտ զորդին Տիդեայ զմեծահոգին Դիոմեդէս՝
Զի կայր խառն ընդ երիվարսն 'ի մէջ կառաց զրուագելոց .
Եւ կայր մօտ առ նմին Սթենելոս ուստրն Կապանեայ ։
Դըսրովեաց եւ ըզնոյն տեսեալ արքայն Ագամեմնոն,
Եւ առ նա բարբառեալ ըզսրաթեւ բանիցս խօսեցաւ .
Ո՛հ զմեզ, որդիդ Տիդեայ քաջասրտի, ձիախրոխտին,
Զի՞ զանգիտես հայեցեալ ընդ սապարեզ պատերազմիդ .
Զարհուրումն չէր երբեք այդպէս 'ի սէր եկեալ Տիդեայ,
Այլ քան զընկերսն անձկալիս շահատակել յառաջոց մարտս,
Որպէս պատմեցին մըրցմանց նորուն ականատեսք .
Ես ոչ գիտեմ, ոչ տեսի, բայց գերագոյն այլոց ասեն ։
Զի առանց մարտամարտեաց եկեալ եմուտ հիւր 'ի Միկենա
Դիւցազնահաւ Պոլինիկեաւ հանդերձ՝ լինել զօրաժողով,
Որ կազմէին յայնժամ կռիւ առ նուիրական պարիսպ Թեբեայ,
Եւ ուժգին պաղատէին տալ զանուանի նիզակակիցս ։
Հաւանեալ ընդ աղաչանսն յօժարէին շնորհել սոքա,
Այլ շըրջեաց Արամազդ՝ վատաբախտարակ ցուցեալ նըշանս ։
Իսկ նոքա իբրեւ գնացեալ յառաջադէմ եղեն յուղւոջ,
Եւ հասին յԱսովպոս 'ի կնիւնաբեր եւ խոտաւէտ,
Անդ անդէն պատգամաւոր առաքեցին զՏիդէւս աքեանք ։
Չոգաւ նա եւ եգիտ բազմախըռնմոյ կադմեացիս
Անմբեալ 'ի խրախունս յԵտէոկղեանն արուեստեան յարկ ։
Անդ թէպէտ եւ հիւր օտար ոք էր Տիդեւսն ձիավարժ,
Ոչ երկեաւ ինչ միայնակ կացեալ 'ի խուռն կադմեացւոց,
Նա՝ գըրգռէր եւս 'ի գուպար, յաղթէր 'ի բնաւս յաջողապէս .
Այնպիսի ձեռընկալու կայր 'ի թիկունս իւր Աթենաս ։
Ցասուցեալ սըրտմըտութեամբ կադմեականքըն ձիամոլք՝
Ցայարէն դարձն առին եդին նըմա դարան գունդ բազմաձեռն,
Յիսուն մի պատանեաց, որոց զօրապետք էին երկուք,
Մէոնն Էմոնեան՝ անմահից գիցն համանմանն,
Եւ համբակն Աւտոփոնեայ Պոլիփոնտէս քաջամարտիկ ։
Իսկ Տիդէւս եւ առ սոսա եւս աւաքեաց օրհաս զաժան,
Սատակեալ զամենեսին, միայն թողեալ դառնալ 'ի տուն .
Զմէոնն եւեթ արձակեաց՝ նըշանաց գիցն հըպատակեալ ։
Այսպիսի ոք էր Տիդեւսն եաոլեցի, սակայն զորդին
Վատթար 'ի մարտըս ծընաւ քան զինքն, 'ի բան ճարտարագոյն ։
Զայս ասաց, այլ չետ նըմա պատասխանի Դիոմէդ քաջ,
Ակն ածեալ 'ի սաստէ պատկառելի թագաւորին ։



Digitized by Google

Բայց որդին Կապադոնեայ մեծափառին՝ արար դարձուած .
Մի՛ սրտեր, Ասորիդէս, որ զի խօսել գիտես ուղիղ .
Լուսագոյն յոյժ քան զհարս առաւել մեք պանծամք լինել,
Զեօթնադրունսն Թեբայեցւոցն ինքնին առեալ է մեր զգահ,
Ածեալ զունդ սակաւաւոր զպարըսպօքն արիական,
Խրախուսեալք 'ի գլից նշանս եւ յօգնութիւն Արամազդայ .
Իսկ 'ի կորուստ մատնեցան նոքա իւրեանց մոլորութեամբն .
Արդ մի՛ դու ինձ բերես զհարս 'ի նոյն գնեբ պատիւ :
Տեղօք աչաց հայեցեալ Դիոմեդէս քաջ ասէ ցնա .
Է՛ սիրուն, նիստ դու լռելիկ եւ ունկն խոնարհ դիր բանից :
Քանզի ոչ ցասնում ես Ագամեմնոնի հովուին ազգաց՝
Որ 'ի կաւէ խրախուսէ զաքայեցիսն բարձաղեղնս :
Զի առ նա փառքն երթիցեն՝ եթէ երբեք աքայեցիք
Վանեսցեն զտրովադացիս եւ զԻլիոն առցեն զսուրբ .
Եւ նմա սուգ մեծ դարձեալ՝ աքայեցիք թէ վանեսցին :
Այլ ո՛ն 'ի քաջ արութիւն առեալ եւ մեք տարցուք խնամ:
Ասաց, եւ 'ի կառաց զինուքն հանդերձ վաղեաց յերկիր,
Եւ պղնձեղէն յանձն արքային սաստացելոյ հնչեաց ահեղ,
Մինչ անդամ եւ սրտապնդից առն իսկ զահի հարկանելոյ :
Զբազմադաշ ծովափամբն որպէս յորժամ անդընդոց վէտք
Ըզմիմեամբք կուտակին յարեւմտեայ յուզել հողմոյն .
Նախ 'ի խորս անդ գիզացեալ եւ խորտակեալ ապա յերկիր՝
Մեծամեծըս մռընչեն, եւ ուռուցեալ լեռնակարկառ
Ցարուցեալ զառաւանդաք թքնուն զաղի ծովուն փրփուր,
Այսպէս յայնժամ խուռներնթաց դանայեցւոց գնդքէն զունդք
Անդադար 'ի պատերազմ . եւ զօրավար իւրաքանչիւր
Տայր հրաման իւրոցն, իսկ այլք զնոյին լռեին, մինչ ոչ կարծել
Թէ զհետ զայցէ այնչափ ամբոխ՝ որոց 'ի կուրծսն գոյցէ ձայն,
Լըռութեամբ երկուցեալ յառաջնորդացն, եւ զնոքօք զէնք
Գունակ գունակ փողփողեալք՝ որով վառեալ տողեալ գնային :
Տրովացիքն, որպէս խաշինք 'ի հանգըրուան առն ընչեղի
Կան ժողովք բիւրաւորաց 'ի ձիւնաթոյր կաթին կըթել
Անդադրու բառաչելով 'ի լսել ձայնի բրնչման գառանց,
Աղաղակ տրովադացւոցն այսպէս ընդ լայնն հընչէր բանակ .
Զի չէր նոյն խրղուրդութիւն ամենեցուն, ոչ մի բարբառ,
Այլ լեզու խառն 'ի խուռն, եւ արք յոլովք տարաշխարհիկք :
Ըզսոսա գրգռէր Արէս, եւ Աթենաս ծաւի զնոսա,
Եւ Երկիւղ եւ Արհաւիրք, եւ Հեռ անյագն 'ի մոլութիւն՝
Մարդասպանին Արէսի հարազատ քոյրն այն եւ ընկեր,
Որ նախ խուռն մի ամբառնայ, բայց զգլուխն այնուհետեւ
Ըզերկնիւն յերկինս կանգնէ եւ ձեմս առեալ շըրջի՛ ընդ երկիր :
Որ եւ յայնժամ հասարակ ընկէց զկռիւ 'ի մէջ նոցա՝

Ընթացեալ ընդ ամբոխն, հեծուածն արանց յորդորելով։
Եւ սոքա 'ի մի վայր յորժամ եկեալ հասանէին,
Խըռնէին առաջար՝ նիզակ եւ պղնձակուռ արանց կորովս,
Եւ վահանքըն կռմբեալք երթեալ յիրեարս յեռուէին հուպ,
Եւ աղմուկ եւ գըղըրդ անհընարին յառնէր անդէն։
Անդ եւ գոյժ եւ խրոխտումն 'ի միասին լինէր արանց
Խոշոշից՝ խոշոշելոց, երկիր արեամբ հոսէր գընայր։
Որպէս յորժամ ուղխացան հեղեղատեալ գետք 'ի սարից
Խառնիցեն 'ի ձորամէջս ըզյորդագէմ ջուրըցըն վըտակս
Ցաղբերաց մեծամեծաց 'ի խորանդունդ գըլեալ խոխոմս,
Զորոց բոմբիւնն 'ի լերանց լըսէ հովիւն 'ի հեռաստան.
Նոյն սոցին 'ի խառնուրդս յառնէր դոռումն եւ արհաւիրք։
Առաջին Անտիլոքոս՝ այր 'ի տրովեանց ըսպան մարտիկ
Քաջազէն 'ի նահատակս, ըզԹալիսեանն Եքեպոլիոս,
Զոր եհար նախ 'ի խորան ձիագիսակ սաղաւարտին
Եւ 'ի ճակատն հարըստեաց, եւ մինչեւ յոսկրըն մըխեցաւ
Գըղըձին սայր, եւ ծածկեաց զակամբքն նորա խաւար,
Եւ անկաւ, որպէս մինչ բուրգն, 'ի սաստկակոծ գուպարածին։
Զանկեալըն բուռն հարեալ զոտից արքայն Եղեփենովր՝
Աբանտաց իշխեցողըն մեծանձանց Քալկոդոնեան,
Ի նետից ձըգէր 'ի դուրս, իղձ լինելով վաղվաղակի
Առնուլ զինուցն ըզկապուստ, սակայն հատաւ ջան նորա սուղ.
Զի մեծանձն Ագենովր ըզնա տեսեալ զիոյն 'ի քարշ,
Ընդ կողմն՝ որ 'ի կըքել իւր յասպարէն կայր հոլանի՝
Գըղնձաղէն սըլաքեալ բըռնով խոցեալ ելոյծ զանդամսն։
Այսպէս զինքն ելիք հոգին, բայց յիւր վերայ գործ դառնութեան
Անդ 'ի վեր երեւեցաւ ընդ տրովացիսն եւ աքայեանս,
Զի քան զգայլս անկան յիրեար, եւ այր զընկեր բըռնահարէր։
Անդ Էաս Տելամոնեան եհար զորդին Անթեմեոնի՝
Զծաղկազուարճ պատանին զՍիմոյիսեան, այն որ երբեմն
Իջեալ մայրն յԻդայէ՝ զՍիմոյիսեայ ծընաւ զափամբք,
Մինչ երթայր ընդ ծընողսն ըզհօտ խաշանցըն տեսանել.
Եւ սըմին այսր աղագաւ Սիմոյիսեան զնա կարդային։
Սակայն ոչ սիրուն ծնողացն ըզփոխարէնսն հատոյց սնընդեան,
Սակաւակեաց եղեալ անկեալ 'ի մեծանձինն Էասայ տէգ.
Զի զնա նախ անդ 'ի դիմելն ընդ կուրծս եհար զըստեամբն աջոյ,
Եւ ընդ ուսն 'ի հանդիպոյն պղընձի գեղարդն էլ Թափանցանց։
Նա 'նդ փոշի յերկիր գլորեալ տապալեցաւ իբրեւ բարտի,
Որ 'ի յուռթի մարգագետին ճահճի մեծի ծընեալ ողորկ,
Ըստեղունքն 'ի բարձրածայր 'ի գագաթունսն արձակեցան.
Զոր ճարտարըն կառագործ այր կոտորեաց յերկաթ փայլուն,
Կորակնել զայն 'ի հեց՝ գեղեցկաշէն կառաց անուոյ,

Իսկ ճիգըն զօսացեալ անկեալ դընի յեզըր գետոյն.
Այսպիսի զԱնթեմիդեանըն կործանեաց սխրոյխեան
Դիւցազըն Այաս, յոր Անտիփոս Պրիամեան երփնազըրահ
Արձակեաց ընդ դուժարուակն ըզնիզակըն անդ ամբոխաւոր:
Վըրիպեալ լեալ 'ի նմանէ՝ զԼեւկոս զընկեր քաջ զՈդիսեայ,
Մինչ առեալ զեռ այլուր ձըգէր ըզդին, ընդ հարմն եհար.
Կործանեցաւ ըզնովաւ, անկաւ դիակն 'ի ձեռանէն:
Ոդիսեւս ընդ մահ նորա բորբոքեալ 'ի մեծ սըրտմըտութիւն՝
Մատ 'ի մէջ նախամարտկաց՝ վառեալ 'ի զէն հրաշէկ պըղնձոյ,
Հուպ մատեաւ եկաց՝ ընկէց զաշտէն փայլուն շուրջ դիտելով:
Ցըրդնինեկեց լինել քաջըն ընկըրկեցան Տրովադացիքն,
Բայց ոչ նա զըտավատակ ընդ վայր զգետազարգնըն արձակեաց,
Այլ եհար զհարճորդին Պրիամոսի զԴեմոկոոն
Որ առ նա յԱբիդոսէ եկն 'ի ձիոյկացն օգնականաց:
Առ ընկերին զայրացեալ եհար ընդ ծամելըն անդ Ոդիսեւս,
Եւ սըլաքըն պըղընձաձոյլ՝ շեշտեալ ընդ միւսն ել ծամելին.
Եւ մութըն խաւարին մածեալ ծածկեաց զաչըս նորա,
Եւ տապալեալ թնդիւն եհան, եւ հընչեցին զէնքըն ըզնովաւ:
Տեղի ետուն նախահատակք եւ նոյն իսկ վեհն ճիգնին Հեկտոր.
Արգոսեանք հարին խօշիւն եւ զդիակունսըն ձըգեցին,
Եւ յառաջ կոյս դըրոհ ետուն. բայց Ապողոն սըրտմըտեցաւ
Ի Պերգամայ եդեալ զդիտակն, եւ առ Տրովեանս եբարձ խըրախոյս.
Արիք, Տրովեանք ձիախըրոխք, եւ 'ի մարտըն՝ յարգիացւոց
Մի յետնիք, զի եւ նոցա չէ քար մարմինն եւ ոչ երկաթ՝
Հանդուրժել 'ի սայր պըղընձի մորթապատառ հարկանելեաց:
Նա եւ ոչ ճիգըն Աքիլլեւս՝ որդին Թետեայ վարսագեղի
Կայ 'ի կռիւս, այլ առ նաւուքըն ըզըրբաւալեղն իւր հալէ մաղձ:
Զայս գըժնէն գոչեաց աստուած 'ի քաղաքէն, իսկ զաքայեանս
Ցարոյց դուստր Արամազդայ Կապուտակնածիրն ամենափառ,
Ընթացեալ ընդ բանակն՝ ուր լըքուցեալըս նըշմարէր:
Անդանօր զԱմարինկեանըն Դիոմըէս կապեաց Օրհաս.
Զի առ վէգ ոտինն հարաւ 'ի խորտաքարա բըռնաքարէ
Ցաջ սըրքըն, եւ որ եհարն էր Թրակացւոցն տըրանց իշխան
Իմբրասեանըն Պիրոոս, այն որ եկեալն էր յԵնոսայ:
Եւ զաճառըն զերկոսին ոսկերըքն հանդերձ վէմըն ժըպիրհ
Սպառապատառ ջախջախեաց, անկաւ յորսայս ճիգըն 'ի փոշւոջ՝
Զերկոսեան առ սիրային ընկերսն ըզթեւսըն տարածեալ
Ի թալանաւ թափել զոգին. եւ որ եհարըն Պիրոոս՝
Ցարձակեալ խոցեաց անդուստ զպորտն եւ վըժեալ հեղան յերկիր
Փորոտիքն առ հասարակ, եւ զաչըս իւր ծածկեաց խաւար:
Էտովլեանն ըզսա Թոաս 'ի հրասէն անդ եհար անդուստ
Ընդ լանջըս 'ի վեր քան զըստինսն, եւ վարսեցաւ պըղընձն 'ի թոքսն,

Եկեալ մերձ առ նա Թովմաս՝ հան 'ի կրծիցն ըղձուան աչաւքն,
Եւ ձըգեալ մերկացաւ ըղձայրաստուր վաղակաւորն,
Եւ ընդ մէջ որովայնին խոցեալ նովաւ՝ կործեաց զօդեան:
Իսկ ըղձկնալին ոչ կարասեաց, զի պատանեան զեւրեաւ ընկերք
Թրակացիք ցրցանաւղէք, 'ի ձեռս խեւրեանց երկայն նիզակք,
Որք ըղնա զանդամալոյծն եւ զկաշըմբոստան եւ զաերճակին
Մերժեցին յանձանց 'ի բաց, եւ ընկըրկեալ վանեցաւ նա:
Այսպէս առքա երկոքին զմիմեանց 'ի հող անկան տարապատ,
Սա Թրակացւոցն առաջնորդ, նա Եպէոսեանց զինազգեստից:
Եւ այլ եւս յոգնաթիւք տառապեալքն շուրջանակի:
Թէ ոք անդր այր հասանէր, ոչ առ անարգս լինէր զործն ըղձարծն,
Որ անվէրն եւ անխոց 'ի սըրածեալ սուր պղնձոյն
Շուրջ 'ի մէջն անցանէր, ածէր Պաղղաս զնմին Աթենաս
Ձեռաւանէն առեալ՝ հերքեալ եւ ըղնետից ճախրանս 'ի բաց:
Զի այն օր յոքնայեանց եւ տրովացւոց մեծ բազմամբոխ
Բերանաւեալ 'ի տարխաղաք անկան զմիմեանց անդ 'ի փոշւոյն:

544

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

---

## ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Digitized by Google

# Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Օգնականութեամբ Պաղլադայ Աթենասայ առաւել քաջութիւնս առնէ Դիոմեդէս քաջ 'ի Յունաց · խոցեալ նետիւ 'ի Պանդարոսէ, բայց զօրացեալ յԱթենասայ եւ դարձեալ անդրէն 'ի կռիւ, սպանանէ զբազումս, ընդ որս եւ 'զՊանդարոս · քարիւ հարկանէ զԵնէաս 'ի ծունկն, մայր նորա Աստղիկ դիմեալ ի թիկունս որդւոյն՝ խոցի 'ի ձեռանն, խոյս տուեալ ելեալ յՈլիմպոս՝ բժշկի 'ի Պէոնէ դիցն բժշկապետէ · իսկ զԵնէաս փրկէ Ապոլոն 'ի ձեռաց Դիոմեդեայ ։ Արէս խրախոյս տայ տրովացւոց · Դիոմեդէս նահանջէ յերեսաց Արէսի եւ Հեկտորի ։ Հերա եւ Աթենաս իջանեն յօգնութիւն Յունաց ։ Դիոմեդէս գըր-գեալ յԱթենասայ՝ հարկանէ զԱրէս ընդ որովայնն, որ առ ցաւոյն մռնչեալ ամբառնայ յերկինս · կշտամբի յԱրամազդայ, բժշկի 'ի Պէոնէ ։

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ԴԻՈՄԵԴԵԱՅ ՔԱՋՈՒԹԻՒՆ

Բայց Պալլադն Աթենաս զՏիդեանն յայնժամ Դիոմեդէս
Կորովով եւ արութեամբ լցոյց լինել նշանաւոր
Ցամենայն արգիացիսն եւ պարծանաց ժառանգել փառս ։
Հուր յիւրմէ գլխանոցէն եւ յասպարէն վառէր անշէջ
Աստեղն աշնայնոյ նմանատիպ օրինակաւ,
Որ պայծառ յոյժ փայլակէ յովկիանական լուացեալ 'ի ծով.
Այսպէսնակ բոց բորբոքէր յուսոց նորա եւ 'ի գլխոյն,
Եւ մղեաց զինքն անդր 'ի մէջ՝ ուր գունդ 'ի գունդ փոթորկէին ։
Էր Դարէս ոմն անուն 'ի տրոյացիսն ընչեղ, անբիծ,
Հեփեստեայ քուրմ, եւ երկու էին նորա ձեռք պայազատք,
Փեգեւս եւ Իդէոս քաջահմուտք պատերազմաց ։
Դէմ ընդ դէմ յարձակեցան 'ի նա սոքա մեկուսացեալք,
Երկոքեան սոքա 'ի զոյգս, իսկ նա դիմեալ հետիոտիւք ։
Եւ յորժամ շահատակեալ հուպ առ իրեարս հասին նոքա,
Նախ Փեգեւս արձակեաց 'ի նա զնիզակն երկայնաստուեր.
Անց սլաքն գեղարդեանն ընդ ուս ահեակ որդւոյն Տիդեայ,
Բայց 'ի նա ինչ ոչ դիպեաւ ։ Տիդեանն ըղձնի փրթոյց զաշտէն.
Ի նորա թափոյ ձեռին ոչ ընդունայն թռուցեալ մըկունդն,
Այլ ընդ մէջ լանջացն 'ի կուրծս եհար ընկէց զինքն 'ի կառաց ։
Իդէոս լքեալ ըղձոյգոլն գեղեցիկ՝ վաղեալ յերկիր,
Ոչ ժուժեաց շուրջ պաշտպանել 'ի պահ եղբօրն սպանելոյ.
Զի նմին իսկ փրկութիւն ոչ գոյր 'ի սեաւ Օրահասէն,
Բայց թափեաց Հեփեստոս եւ գիշերաւ պատեալ փրկեաց,
Զի մի իւրովն ծերունի մնասցէ 'ի սպառ թախանձալից ։

Իսկ որդի քաջին Տիգրանայ զերիվարին յՄեդըն վըտարեալ
Աւանդեաց յընկերին ածել 'ի գողաւոր Նաւացն հանդէս :
Մեծանձինքըն տրտմեցին խորեւ զԴարեհայ տեսին որդիս ,
Ըզմին փախըստական , սպանեալ ըզմիւսն անդ առ կառօքն ,
Ամենեցուն Թընդաց սիրտ . բայց Աթենաս կապուտաչենեայ
Կալեալ ըզձեռանէն բարբառեցաւ առ բուռն Արէս .
Արէս՝ Արէս մարդածախ , արիւնըռուշտ , պարըսպամարտ ,
Ո՞չ Թողցուք ըզտըրտմեցիսդ եւ զաքայեկըս մարտընչել
Որպէս ում եւ ինչ շնորհէ զփառաց պարծանս հայր Արամազդ ,
Եւ տեղի տուեալ զերծցուք յորմըզդական մէք 'ի քինուց :
Ասացեալ զայս՝ 'ի մարտէն տարեալ եհան ըզբուռն Արէս ,
Եւ ապա տարեալ Նըստոյց 'ի գարափին Սկամանդրոսի :
Զտրովեանս ընկլին զանայեանք եւ այր սպանին մէն մի սալար .
Եւ յառաջ քան զամենայն արքայն արանց Ագամեմնոն
Զիշխանն Հալիզոնեաց արկ 'ի կառաց՝ զՈդիոս մեծ ,
Ցոյր 'ի փախուստ աճապարել վարսեաց ըզտէգն 'ի Թիկնամէջսն՝
Ի միջի անդ ուսոցն , եւ Թափ ընդ լանջսն անցոյց յայնկոյս .
Եւ տապալեալ եա Թընդումն , եւ շաչեցին զէնքն ըզնովաւ :
ԶՖեստոսին Իդոմենեւս բուռն զորդի զՄէոնացւոյն ,
Ըզֆեստոս՝ որ եկեալ 'ի սիզաւէտն էր 'ի Տառնեայ :
Հար ըզնա Իդոմենեւս կորովաձէն՝ յերկայն նիզակ
Ընդ ուսն աջակողմեան , մինչ գեռ 'ի զոյգսն աշտանակէր .
Կործանեցաւ 'ի կառացն , եւ զնա կալաւ ահեղ խաւար :
Արբանեակք Իդոմենի արարին զէնքըն աւարերծ :
Իսկ զորդի Ստրոփիոսի զըՍկամանդրիեան , զորսոյ հըմուտ ,
Ատրիդէս Մենելաւոս 'ի սլաքաւոր զըսպեաց նիզակ ,
Զորսորդըն քաջարի , ում Արտեմիս ինքնին ուսոյց
Հարկանել զանտառասուն լերանց ըզբնաւ երէվայրի :
Այլ չօգնեաց ինչ նետաձըգուն Արտեմիս անդ նըման յայնժամ ,
Եւ ոչ իւր հեռաձգութիւնք յորըս կանխաւն էր պերճացեալ .
Այլ ըզնա Մենելաւոսն Ատրիդէս քաջ նիզակաւոր՝
Ցառաջոյ իւր 'ի փախչելն ընդ Թիկնամէջսն եհար տիգաւ
Ի միջի անդ ուսոցն՝ եւ Թափ ընդ կուրծսն անցոյց յայնկոյս :
Ի բերանս հարեալ անկաւ եւ հընչեցին ըզնովաւ զէնք :
Սատակեաց Մերիոն զՀարմոնիդեայ հիւսանն որդի
ԶՓերեկլոս՝ որ էր ճարտար ձեռահըմուտ ամենարուեստ ,
Զի Պալլաս Աթենաս սիրէր ըզնա գեր զօրինակ .
Որոյ եւ իւր էր կառուցեալ Աղեքսանդրի զմիաչափ նաւսն
Ըզչարի սկըզբնապատճառս , ըզժանտաբերս համայն տրովեանց ,
Նա եւ իւրում խակ անձին , ըզդէց պատգամսն անգիտացեալ :
Ըզսա Մերիոնի հասեալ ըզհետ հալածելով
Հար ընդ աջոյ զաւակէն եւ ապաըսպուռ 'ի հանդիպոյն

Ընդ ոսկերցն , հուպ յաստուածոցն , եւ Թափանցիկ նկարակէն անէջ :
Վայելով անկեալ 'ի գուճս , եւ փարեցեալ ըղձանօք մահ :
Իսկ Մեգէս ըզՊեդէոս ըսպան զորդին Անտենորեայ ,
Զոր Թէպէտ եւ հարճորդի՝ սերտիւ սընոյց Թէանով վէհ
Զոյգ սիրուն զաւակացն առ ամուսնոյն իւրոյ շնորհելու :
Ըզսա՝ Փիլեւսեանն աշտենաւոր հուպ մատուցեալ
Սլաքասուր գեղարդեամբն ընդ կառափին խոցեաց ծոծրակ ,
Եւ յայնկոյս ըզլեզուն ճեղքեաց պըղինձն ընդ ատամունսն :
Նա զցուրտ պըղինձն ատամանցն խածեալ անկաւ 'ի փոշւոյն :
Եւրիպիլ Եւեմոնեան ըզդիւցախառնըն Հիփսենովր՝
Մեծանձին Դոլոպիոնեայ զորդին՝ ըզքուրմն ըՍկամանդրի ,
Ըզպատուեալն աստուածաբար առ 'ի յեւրմէ ժողովրդեան .
Զոր զաւակն Եւեմոնի շըքեղափառն Եւրիպիլոս
Յերեսոյն իւրոյ փախչելն յընԹանալ անդ եհար ընդ ուս
Ի սուր շեշտեալ սուսերի , եւ զծանըր ձեռն 'ի բաց խըզեաց :
Արիւնոտ անկեալ յերկիր զաստն , եւ զաչացըն լուսաւորսն
Կալաւ մահ ծիրանի եւ բըռնաւոր ճակատագիր :
Մըրցէին այսպէս սոքա 'ի բարկաճայԹ պատերազմին .
Այլ զՏիդեանն ոչ էր գիտել ընդ որս ուրեք կայր 'ի հանդէս ,
Ընդ տրովադեանըն գնդերեալ , եԹէ արդեօք յաքայեցիս :
Զի մոլէր անդ 'ի դաշտին հեղեղատատ գետոյ հանգոյն ,
Որ արընԹաց յորդախաղաց ուղխիւք խըզեալ ցըրուէ զկամուրջս ,
Որում ոչ ամրակառոյց եւ հաստատեալ բաւեն ինչ Թումբք ,
Եւ ոչ ցանկք կանաչազարդ այգեստանեայց ընդդիմանան ,
Ցորժամ գայ յեղակարծուստ , յԱրամազդայ ջաղբից խուժեալ ,
Եւ ընդ իւրեւ՝ պարմանեաց գերփէն բազում զըւարԹ արարք .
Նոյն ընդ որդւովն Տիդեայ պըրտաորէին տրովադեանց ջոկերք ,
Եւ Թանձրախուռն ամբոխեալն ոչ ունէին կալ առաջի :
Իբրեւ զայն տեսանէր Լիկաոնեան որդին շըքեղ ,
Զի մոլեալ 'ի դաշտին մըրրկէր ըզգունդսն առաջի իւր ,
Ըզսա 'ի կորանս աղեղանն ընդ գիրկս եմուտ զորդւոյն Տիդեայ ,
Եւ եհար ըզխոյացեալն՝ յուս իւր աջոյ գեղեցուցեալ
Ի գոգ անդրր ճօշանին , եւ Թռուցեալ նետըն զասնուԹեան
Թափի անց եւ 'ի միւս կուսէ , եւ շաղախէր զըրահն յարեան .
Եւ ընդ այս երկար խանչեաց շըքեղ որդին Լիկաոնի .
Օ՜ն արիք , տրովադացիքըդ մեծանձինք , ձիամուղք քաջք ,
Վէրս էառ քաջակորովն աքայեցւոց , եւ ոչ կարծեմ
Թէ յերկար ժուժկալեսցէ զօրեղ փըքնոյն , եԹէ ստուգիւ
Զիս արքայն՝ Արամազդայ ձեռն՝ ած յարոյց 'ի Լիկեայ :
Զայս խորոխտով բարբառեցաւ , բայց նետն երագ չընկճեաց ըզնա ,
Որ անդի տըւեալ եկաց ձիոց կառացն իւր զառաջեաւ ,
Եւ յորդին Կապանեւսեայ 'ի ՍԹենելոս ձայն արար .



Digitized by Google

Օն, ով քաջդ Կապանեան, որ փութա էջ 'ի կառաց
Զի յուսոյ իմմէ աստի խլեցես 'ի բաց ըղձալըն նետ ։
Զայս ասաց, եւ Սթենելոս ոստեաւ յերկիր 'ի զուգիցն էջ·
Մատուցեալ կորզեաց յուսոյն ըղթափանցիկ սրաթեւ սլաքն,
Եւ արիւնըն ցայտեցաւ ընդ վէրս զրահիցըն պահպանակ ։
Անդ յայնժամ մատոյց աղերս ահեղագոռըն Դիոմէդ·

Անպարտելիդ, լուր ինձ, դուստր ասպարակիրըն Արամազդայ,
Թէ երբեք ինձ զօրավիգն եւ հօրս հասեր սիրազալէս
Ցոխերիմ ճակատամարտ, այժմ եւս օգնեա ինձ, Աթենաս,
Տուր ինձ զայրըն սատակել, եւ նըմա գալ մինչ յարգնընկէց,
Որ կանխեաց եդ յիս վէրս, եւ վիստացեալ մեծաբանէ
Ոչ տեսանել ինձ յերկար զարեգական փայլուն ճաճանչ ։

Զայս ասաց պաղատախառն, եւ Աթենաս լըւաւ Պալլաս,
Թեթեւաշարժ եդ զանդամսն եւ զոտս եւ զձեռս իւր 'ի վերուստ,
Եւ կացեալ առ նըմին զերագաթռիչ խօսեցաւ բանս.

Օն առեալ արդ, Դիոմէդ, մարտիր ընդդէմ տրովադացւոց,
Զի ահա 'ի լանջըս քո զհայրենական արկի կորով
Զանվեհեր, որպիսի գոյր յասպարաճօճ ասպետ Տիդէոս,
Եւ ըղմէգն որ կայր յառաջ 'ի տեսարանացդ՝ ջընջեցի,
Զի քաջիկ ճանաչիցես՝ թէպէտ զաստուած, թէպէտ ըղմարդ ։
Արդ 'ի դէց այսր եթէ ոք 'ի հանդէպ փորձ մատիցէ,
Ցաստուածոցն անմահից ընդ այլըն դու մի՛ ոգորիր,
Իսկ թէ դուստր Արամազդայ գայցէ Աստղիկն 'ի պատերազմ,
Հար ըզնա վիրաւորեա 'ի պղինձ 'ի սուր սըլաքաշէղ ։

Զայս մեղուակն Աթենասայ այսպէս խօսեալ գընաց 'ի բաց,
Իսկ Տիդէանն անդրէն դարձեալ ընդ նախատակըն խառնեցաւ.
Եւ որ էրն 'ի մարտ տրովեանց կանխաւ 'ի բնէ յառաջադիմ,
Արդ երեքս այնչափ ըզնա կալաւ կորով, որպէս զառիւծ
Զոր հովիւն 'ի վայրի առ ասրաբոյս օդեաց հօտիւն
Ի վաղելն անդ 'ի փարախ՝ գոյզն ինչ խոցեալ եւ չըսպանցէ.
Բորբոքեաց զոգիս նորա, եւ ոչ եւս այլ օգնեացէ ինչ,
Այլ 'ի բակըն մըտանէ, զարհուրի խաշն ամայացեալ,
Եւ զմիմեանց խառն 'ի խուռըն կուտակեալ վայրավատնին,
Իսկ նորա մոլեգնօտեալ՝ ըստ խոր դաւիթն ոստնու 'ի դուրս.
Այսպէս արին Դիոմէդ ընդ տրովացիս խառնեցաւ ժիր ։

Անդ ըսպան զԱստինոոս եւ զՀիպիրոն՝ հովիւս ազգաց,
Քան զըստինան 'ի վեր ըղմին պղընձակուռ խոցեալ տիգաւ,
Եւ ըզմիւսն՝ հար մեծ սուսերբ 'ի յանրակին մօտ առ ուսովն,
Եւ զուսն յուլանէն եւ 'ի թիկանց կըտրեաց եհատ ։
Լըքեալ զնոսին՝ Աբասայ եւ Պօլիդեայ պընդէր ըզհետ՝
Որդւոց երազագիւթ ալեւորին Եւրիդամայ.
Որոց ոչ ծերունին եհան երազս 'ի գալ նոցուն,

Այլ արին Դիոմեդէս ըսպան զնոսա եւ կողոպտեաց ։
Եւ դիմեաց 'ի Քսանթոս եւ 'ի Թոոն, Փենոփեան ձնաք
Երկոքին երեկածինք, եւ նա հաշէր թաղծեալ ալեօք,
Զաւակ այլ չէր ծնեալ ըստացուածոցն ժառանգորդ ։
Անդ սա զնոսա խողխողեաց եւ զցանկալի արեւն եհատ
Զերկոցունց միանգամայն, եւ հօրն եթող ցաւն հոգ եւ կոծ,
Զի չընկալաւ ողջանդամ զնոսա դարձեալս 'ի ճակատուէն,
Եւ խնամիք ընդ խնամեանս բաժանեցան զժառանգութիւնն ։
Անդ զերկուս կալաւ յորդւոցն Դարդանեան Պրիամոսի
Ի միում գտեալ 'ի կառսն՝ զԵքեմմոնիս եւ զՔրոմիոս ։
Եւ որպէս իւր առիւծ յանդեայս անկեալ զուղն բեկցէ
Զերնջու կամ ըզկովու՝ ճարակելոյն 'ի թաւաթուփս,
Այսպէս նա 'ի կառացն զերկոսեանն որդին Տիդեայ
Զարաչար ընկէց ուժգին, ապա եւ զզէնսն կողոպտեաց,
Եւ զերիվարսն ետ ցընկերսն ածել վարել 'ի նաւակայսն ։
Ետես ըզնա Էնէաս՝ զի վարատէր զարանց ըզգունդ.
Խաղաց գնաց 'ի ճակատն եւ գեղարդեանցն 'ի շառաչիւն,
Ի խնդիր աստուածատիպ Պանդարոսի՝ թէ ուր գտցէ.
Գիտ զորդին Լիկայոնի զըզքանչելին եւ զհաստատուն,
Եւ կացեալ դէմ յանդիման՝ զայս առ նա բան բարբառեցաւ.
Պանդարէ, ուր են աղեղնքդ եւ թըռչուն նետք եւ պարծանքդ,
Յորում յաղթանդըս որ աստ՝ ոչ ոք մըրցի'նդ քեզ 'ի գուպար,
Եւ ոչ այլ 'ի Լիկիա պարծի քան զքեզ լինել ոք քաջ ։
Օ՛ն ա՛ռ նետս մի ձիգ զիր յայրդ, ամբարձեալ ձեռս առ Արամազդ.
Ո՛ր եւ ոք է որ յաղթէն, շատ իսկ տրովեանց հասոյց չարիս,
Զի զբազմաց ամբոխի եւ զկորովեաց ըզծունկս լոյծ.
Թէ յաստուածոց ոք միայն չիցէ տրովեանցըս սրտմտեալ՝
Կալեալ ոխս ընդ զոհից. զի աստուածոյն սաստիկ է քէն ։
Եւ նըմա պատասխանի Լիկայոնի շքեղ որդին.
Էնէաս, պատուեալդ տրովադացւոց խորհրդական,
Ես ըզնա քաջի որդւոյն համանըման Տիդեայ նմանեմ՝
Յասպարէն ծանուցեալ ու'ի բարձրավերջ սաղաւարտէն,
Դիտեալ եւ զձիսն. այլ աստուած եթէ իցէ՝ չգիտեմ ըստոյգ ։
Իսկ թէ այրդ այդ զոր ասեմ՝ արի որդին իցէ Տիդեայ,
Ոչ առանց իւր աստուածոյ մոլի դա յայդ, այլ մերձ կայ իւր
Յանմահից ոք զուսովքըն մառախըղով պարածածկեալ,
Որ ընդեան երագահաս այլուր դարձոյց առ 'ի դմանէ ։
Զի արդէն իսկ նետաձիգ եղեալ 'ի դա՝ հարի զաջն ուս
Թափ ընդ խորշն անցուցեալ կարաւանդից իւրում զրահին ։
Յըղել ըզնա կարծէի առ դըժոխոց Սանդարապետ,
Զարարի սակայն նըկուն. արդ ոք 'ի դիցն է քինաւոր ։
Եւ ոչ մերձ կան ինձ կառք ուր երիվարք՝ 'ի հեծանել.

Այլ 'ի տան Լիկայոնի զոն մատուցան կոչք գեղեցիկք
Դեռաւկառոյցք նորակերտք՝ շուրջանակի քողածածուկք,
Եւ առ մին մ' 'ի նոցանէ կան երիվարք կրկին 'ի լուծ
Ըզգարին բաղխոտ եւ ըզհաճարըն ճարակեն։
Արդարեւ ինձ ծերունին՝ քաջամարտիկըն Լիկայոն՝
Ի չըւելըս անդ՝ յապարանսըն գեղաշուք պատուէր տայր յոյժ,
Ցերիվարս ամբառնալ առ իս հրաման տայր եւ 'ի կառս,
Եւ այնպէս կալ տրովեանց իշխան յամենահանդէպ ճակատամարտս։
Սակայն ես ոչ անսացի, — որ լաւագոյն լինէր անշուշտ, —
Ի ձիանըն զգուշացեալ՝ որ յառատ բոյծ էին սովոր,
Ի խըռնել ամբոխութեան կարօտասցին գուցէ 'ի բուտ։
Ուստի թողեալ՝ հետեւակս 'ի յԻլիոն հետեւեցայ
Խրախուսեալ 'ի լայնալիճս որում չըգոյր ինչ օգնել ինձ։
Զի ահա յերկուսին իշխանազունս մըտի 'նդ աղեղն՝
Ի Տիդէանն եւ յԱտրիդէս, եւ զերկոսեան վիրաւորեալ՝
Արիւն հանի ճըշմարիտ, բայց առաւել զայրացուցի։
Արդ բախտիւ աղի չարաւ ես 'ի ցըցէն զաղեղըդ կոր
Ցաւուրն անդ յայնմիկ, 'ի ցանկալին մինչ յԻլիոն
Զօրավար կացի տրովեանց 'ի Հեկտորի դիւցազին շնորհս։
Եւ թէ դարձցիմ եւ տեսից աչօք իմովք ըզբնագաւառս
Եւ ըզկինն իմ եւ ըզմեծ բարձրաձեղուն տերըն ապարանս՝
Ըզկառամտին իմ անդէն հարցէ անդ այր օտարածին,
Եթէ ոչ ըզլայնալիճըդ զայդ ձեռօքըս խորտակեալ
Արկից 'ի հրատ բոցափայլ. զի զուր ընդ իս եկն այսր ընկեր։
Անդրէն առ նա Էնէաս կըրկնեաց տրոյեանցըն զօրավար.
Մի դու զայդ ինչ ասեր. զի ոչ այլազգ ինչ եղիցի,
Մինչ չեւ մեր առնըն այնմիկ կառօքս ընդդէմ ուերիվարօքս
Պատահեալ ախոյեան՝ հանդէս զինուցս արասցուք մեր։
Այլ աղէ՝ արի եկ ծն ել դու յիմ կառըս զի տեսցես,
Որպիսի երիվարքս իցեն տրովեանք հըմուտք ընդ դաշտ
Սըրարշաւ այսր եւ անդըր հալածել ու 'ի բաց փախչել,
Որ ըզմեզ եւ 'ի քաղաքն ապրեցուսցեն ողջ անվըտանգ,
Թէ Տիդեան Դիոմեդեայ տայցէ անդրէն փառս Արամազդ։
Այլ արդ մտ ընկալ զմըտրակս եւ զերասանս այս փառազարդեան,
Ես 'ի զըյգս ամբարձայց 'ի դըմնել մարտ պատերազմի.
Կամ թէ դու զայրն յանձն առջիր, եւ ձիանոյն յիս լիցի հոգ։
Եւ նըմա պատասխանի Լիկայոնի որդին շըքեղ.
Կալջիր դու ինքն, Էնէաս, զերասանակդ եւ զերիվարս.
Մըտադիւր եւս ընդ ընդել ձեռին զդառնեալ կառսըն տարցեն,
Թէ յանկարծ յորդւոյն Տիդեայ դարձցուք այսուրէն յետս 'ի փախուստ։
Զի դուցէ թէ խըրտուցեալ ինչ եւ օգնեալ, ոչ կամիցեն
Ի մարտէն հանել 'ի բաց՝ անձկաւ ձայնիդ առն ունելով.

Եւ որդի մեծանձին Տիդեայ 'ի մեզ արուեալ զգայթ
Ըղձանայէ զմեզ՝ եւ ըղձիւք ասար առցէ զաւալարականս ։
Այլ դու քեզէն վարեսջիր ըղձոյին կառաց եւ զերիվարս .
Իսկ ըղջս՝ 'ի գալ իւրում՝ ես ընկալայց սուր աշտէիւ ։

Զայս այսպէս բարբառեալ, 'ի նրկարէնն սաստուցեալ կառս՝
Եռանդնաթափ 'ի Տիդեանն եռոյն ըղձիւն արշաւասոյր ։
Եւնս զնոսա Սթենելոս՝ Կապանեւսի որդին պայծառ,
Եւ անդէն առ Տիդեանն ըղբանս ասաց զերապաթեւս .

Տիդեանդ ով Դիոմեդէս, իմում անձին յոյժ սիրեցեալ,
Երկուս արանս տեսանեմ հուժկուս ընդ քեզ դիմեալ 'ի կռիւ,
Ուժաւորս անհնարին . աղեղնաւոր մին հմտավարժ,
Պանդարոս, որ եւ պանծայ Լիկայոնին ուստր լինել .
Իսկ Էնէաս պերճացեալ պարծի նախ ծնեալ հանդէպ
Անարատին Անքիսեայ, եւ է Աստղիկն նորա մայր ։
Հապա եկ, եւ խոյս տուեալ երթիցուք 'ի կառս, եւ մի այդպէս
Կար մոլեր ընդ նահատակս . մի զքաղցր ոգիդ սատակեսցես ։

Հայեցեալ ընդ նա խոժոռ՝ Դիոմեդէս ասէ արին .
Մի՛ 'նչ իս խօսիր 'ի փախուստ, զի ոչ կարծեմ թէ հաւանեցայց .
Քանզի չէ ինձ ընտանի խուսափանօք պատերազմել,
Եւ ոչ լինել ահաբեկ, զի կորովք յառաջ կան ամենեքին .
Ծանր է ինձ հեծանել 'ի կառս, այլ այսպէս ասաւանիկ
Նոցա 'նդդէմ եկից, Պալլասն ինձ Աթենաս ոչ տայ դողալ ։
Ըզդոսա զերկոսին՝ ոչ երիվարքն երագաթռիչք
Ցետս անդրէն տարցին 'ի մէնջ, թէ եւ թերեւս ապրեսցի մին ։
Քեզ եւ այլ ինչ ասացից, եւ դու 'նդ ուշի քում կալջիր .
Եթէ ինձ ամենիմաստն Աթենաս փառս մատուսցէ՝
Զերկոսեանն իսկ սատակել, դու զերիվարքս այս երագունս
Արգելջիր աստ՝ զերասանսն 'ի շըրջանակ պըրկեալ կառացդ .
Եւ քեզ յո՛ւշ՝ յերիվարսն խոյանալ Էնէասայ
Եւ վարել 'ի տրովացւոց առ բարձաղէն աքայեցիս ։
Զի զարմին են զոր Տրովայ ետ Արամազդ ահեղագոչ
Գանիմեդեայ փոխան ուստերն, ուստի եւ վեհք են յերիվարս
Որքանիքս եւ 'ի ներքոյ կայցեն այգոյն արեգական ։
Գողացաւ Անքիսէս արանց արքային յազգէ անտի,
Ի գաղտնիս Լաւմեդոնեայ՝ զմայրիկս 'ի խառնիս մատուցեալ .
Ցայնցանէ վեցեակ եղեն նըմա ծընունդք յապարանս իւր,
Զչորեսին առ իւր կալեալ՝ փափկասնուցանէ բոյծ առ մըսուր,
Իսկ զերկուսն ետ Էնէայ՝ ճարտարարագէտս փախըստեան .
Թէ առցուք զերի զնոսին, մեծի փառաց տարցուք պարծանս ։

Առ միմեանս զայսոսիկ այսպէս սոցա բարբառելով,
Իսկ նոքա մըտարակ 'ի կուշտ երիվարացն՝ հասին 'ի մօտ .
Եւ խօսեցաւ նախ առ նա Լիկայոնին որդին շըքեղ .

Քաջասիրտ , մեծառազմ զաւակ Տիդեայ հոյակապի ,
Արդարեւ՝ նետ արագընթաց չընկճեաց ըզքեզ , դառըն փըքին ,
Ո՛ն եկ 'ի փորձ մըրկընդէմ նիզակաց , եթէ թէ դիպեսցիմ :
Ասացեալ եւ ձօձեալ ընկէց զաշտէն երկայնաստուերը ,
Եւ եհար զՏիդեանն յասպարն , եւ պըղնձեն տէգ սըլաքեալ
Սըլացեալ ելեալ ընդ այն Թափանց 'ի զըրահ անդըր մաստեաւ .
Եւ ընդ այս կանչեաց ուժգին Լիկայոնի պայծառ զաւակն .
Ընդ աղուակուշտ հարար կողմն 'ի կողմանէ , եւ ոչ կարծեմ
Հանդուրժել քեզ յերկար , եւ ինձ պարծանս մեծ ետուր :
Ոչինչ բընաւ զարհուրեալ՝ ասէ առ նա Դիոմեդ քաջ .
Վրիպեցար եւ ոչ հասեր , այլ ոչ կարծեմ ձեզ դադարել ,
Մինչեւ մին յերկոցունց անկեալ տապաստ՝ յագեցուսցէ
Իւրով արեամբն զԱրէս՝ ըղկաշխմարտուցն զաւապարզ :
Ասացեալ զայս՝ արձակեաց , եւ Աթենաս ուղղեալ զաշտէն
Ի ռընգունսն առ ականջն , ընդ ատամունս անց ըսպիտակս ,
Եւ զլեզուն հուպ առ արմատ կըտրեալ պըղինձն անխոնջելի՝
Ել սըլաքըն Թափանցանց ընդ ներքնակողմըն կըղակին :
Կործան անկաւ 'ի կառաց , զօղանջեցին զէնքըն ըզնովաւ
Խայտապաճուճք , փայլակնացայտք , պակեան շըլթոեան չորս երիվարքն ,
Եւ լուծաւ անդ առընթամբ ոգի նորա եւ զօրութիւն :
Ենէաս առեալ զասպարն եւ զնիզակն երկայն՝ յարձակեցաւ ,
Զանգիտեալ գուցէ զդիակն հանցեն յուրմէ աքայեցիք .
Եւ զնովաւ շուրջ ընթանայր իբրեւ առիւծ յայժ իւր խիզախ ,
Եւ կարկառ իւր առաջի՝ զտէգն եւ զվահան շըրջաբոլոր ,
Կամ 'ի մահ յուղարկել զոր 'ի վերայ գայցէ նորուն ,
Եւ գոռայր յահեղ կանչիւն : Բուռն հար Տիդեանն 'ի բըռնաքար ,
Ի՛ր մեծ , զոր եւ ոչ երկուք յայժմու մահկանացուաց
Առեալ արք բառնայցեն , իսկ նա միայն ձօձէր հեշտաւ :
Եւ նովաւ զԵնէասայ զերանն եհար՝ զխան ուրանոր
Յօդեալ յերանունըն շըրջի , զոր եւ գոգած եւս անուանեն ,
Եւ ջախջախեալ ըզգոգածն եւ զերկոսին խըզեալ ըզներարդս ,
Ըզմորթոյն քերթեաց ըղմաշկ վէմըն գըժնեայ , եւ մընաց անդ
Անկեալ 'ի գուճըս դիւցազն՝ յեցեալ յերկիր հաստայր ձեռամբ ,
Եւ զիշեր սեւաթաթաւ զաչսըն պատեաց շուրջանակի :
Անդանօր Ենէաս արանց արքայն էր կորուսեալ ,
Թէ չէր փոյթ առեալ 'ի միտ Արամազդայ դուստրըն Աստղիկ ,
Մայրըն իւր՝ որ զնա ծընաւ 'ի յԱնքիսեայ արջառածէ :
Զորդեկայն սիրելեաւ ըզլուսածղի հեղեալ բազուկսն՝
Ըզփառափուն խիլայն պարզեաց ըղծալըն իւր առաջի
Պարըսպել 'ի նետից , յերագաձի դանայեցւոց
Գուցէ ոք պըղինձ 'ի սիրտ նորա հարեալ՝ զոգին խլեսցէ :
Արդ նա զսէր սիրուն որդին 'ի ճակատէն զերծուցանէր .



Digitized by Google

Իսկ որդւոյն Կապանեւսի ոչ մոռացօնք պատուէրքն նորին
Զոր նմին աւանդեալ Դիոմեդէսն ահեղագոռ։
Զի արգել նա կալաւ զձիավարժական զիւր երիվարսն
Ի բացէ 'ի շառաչմանց՝ պրկեալ 'ի լանջս զերասանակսն,
Եւ դիմեալ՝ զերիվարսն Էնէասայ գեղեցկաբաշս
Ա՛ն դարձոյց 'ի տրովացւոց 'ի բարձրաղէն աքայեցիսն,
Եւ 'ի ձեռս ետ ընկերին սիրեցելոյ Դեֆոպիլեայ,
Զոր պատուէր քան զհամահասակն ազգին՝ զի յինքն էր միամիտ,
Վարել զընալ 'ի խոր նաւսն. իսկ զիւրայսն ինքն աշտանակեալ
Ցիւր 'ի կառսն, առեալ 'ի ձեռս ըզպայծառափայլսն երասանակս
Իսկ եւ խոկ ժիրաժիր զասպարազական զիւր երիվարսն
Առ Տիդէանն ուղղեաց որ ժամու պղնձով վանէր ըզԿիպրուհին,
Ծանուցեալ թէ տկար յաստուածուհեաց էր՝ եւ ոչ յայնց
Որ զարանց պատերազմին իշխանապար ըզպատերազմ.
Քանզի չէր՝ ոչ Աթենաս, ոչ Ենիով քաղաքաքանդեր։
Իսկ պընդեալ յորժամ ըզհետ ընդ բազմութիւնն եհաս նմին,
Անդ զգեղարդըն կարկառեալ որդին Տիդեայ մեծասրտին՝
Զվերին երեսս անզօր ձեռին վարեալ խոցեաց սուր նիզակաւն,
Եւ անդէն վաղվաղակի ծակեաց աշտէն ըզմորթ նորա
Ի սպատուասուած անդր թաթին թափանց ընդ աւեան անմահականն՝
Զոր Շնորհք ինքնին էին նիւթեալ, եւ աստուածոյն անմահ արիւնն՝
Որպիսի բղխէ 'ի դիցն երանելեաց՝ հոսէր աւիշ.
Զի ոչ ցորեան ճաշակեն, ոչ սեւաղոյն ըմպեն գինի.
Յայդ աղագս եւ անարիւնք են եւ անմահ իսկ յորջորջեալ։
Աղաղակ հարեալ ուժգին՝ ընկէց զորդին նա յինքենէ,
Եւ Գուշակն Ապողոն ձըգեալ 'ի նա ձեռն յինքն եհան
Կապուտակ ամպով՝ զի մի յերագաձի ոք դանայեանց
Մըխեալ պղընձին 'ի սրտին՝ 'ի բաց զոգիսըն կորզեսցէ։
Բարձրաղաղաղչ կարդաց առ նա Դիոմեդէս ահեղագոռ.
Մեկնեաց, դուստր Արամազդայ, 'ի ճակատէս եւ 'ի կըռուոյս.
Չիցէ՞ շատ եւ բաւական զի զմեղկասեռ պատրես կանայս.
Եւ թէ դու 'ի պատերազմունս յամեսցես, անշուշտ կարծեմ
Սոսկասցես 'ի մարտէ՝ թէ եւ այլուր լուր լիցի քեզ։
Զայս ասաց, եւ նա ցնորեալ 'ի բաց չոգաւ դըժնիկ ցաւօք.
Զոր հողմաոտն առեալ Իրիս՝ եհան առաքաւ 'ի խըռովնէն,
Զի առ խիթիւքն մորմոքէր, եւ թըխանայր մորթըն չքնաղ։
Եւ եգիտ յահեկակողմն ճակատուն ըզբուռն Արէս,
Զի նստէր, եւ զընկէքն աշտ իւր եւ ձիք պատեալ 'ի մէգ.
Նա 'ի ծունկս իւր անդ անկեալ՝ ըզսիրասնոյ հարազատին
Բազմապաղատոտ աղերսիւ զոսկեսարեանն հայցէր ձիսն.
Գո՛ւթ արկ յիս, սիրուն եղբայր, եւ անդրադարձս ինձ շընորհեա
Զի հասից յՈղիմպոս՝ ուր անմահիցն են օթեւանք։

Digitized by Google

Յաւագին եմ վիրօք՝ զոր այր խոցեաց զիս մահացու,
Տիդեանն, որ արդ եւ՛ ընդ հօր Արամազդայ դայցէ 'ի մարտ:
Զայս ասաց, եւ ըղձիւանն Արէս նըմա ետ զոսկեճակատս·
Եւ հեծաւ նա 'ի կառսն՝ յիւրում սրտին յոյժ տրտմալից·
Առ նըմին բազմեալ Իրիս՝ բուռն հար կալաւ զերասանաց,
Մըտրակեաց ընթանալ՝ որ ոչ յանկամս ինչ թռչէին,
Եւ իսկոյն հասին 'ի դիցն աթոռ 'ի բարձրըն Ողիմպոս:
Անդ կացոյց զերիվարսն՝ երագավազոց հողմոտն Իրիս,
Եւ լուծեալ 'ի կառացն՝ անմահական արկ նոցա բուս:
Իսկ վեհագն Աստղիկ գնացեալ անկաւ 'ի ծունկըս մօր իւրոյ
Դիոնէի՝ որ ըզդուստըրն ընկալեալ 'ի գիրկըս իւր
Փայփայէր ըզնա ձեռամբ, եւ կարդացեալ զանունն ասէ·
Ո՞վ ընդ քեզ, սիրուն որդեակ, զայդ անցս անցոյց յՈւրանոսեանց,
Տարապարտ, իբրեւ ընդ ակն ինչ յանդգնեան գործեալ չարիս:
Աստղիկըն ծաղրասէր արար նըմին պատասխանի·
Զիս Տիդեայ խոցեաց որդին՝ Դիոմեդէսն ամբարտաւան,
Զի զորդին իմ սիրելի հանէի ես 'ի ճակատէն՝
Զէնէաս, որ քան ըզբնաւս է ինձ 'ի վեր սիրատենչիկ:
Քանզի ոչ եւս աքայեանց ընդ տրովացւոց է պատերազմ,
Այլ զօրդիս՝ Դանայեցիքդ եւ ընդ անմահս իսկ դնեն մարտ:
Դիոնէ՝ սքանչելափառն յաստուածուհիս՝ կըրկնեաց անդրէն·
Համբեր, դըստրիկ իմ, համբեր, եւ ժուժկալեա թախիծ սրտիւ·
Զի բազումք ողիմպական յարկաց բընակքս 'ի մարդկանէ
Կրեցաք ծանր երաշխեալս, 'ի դըլուխ միմեանց մեր իսկ հանեալ:
Կըրեաց Արէս, յորժամ զնա Ովտոս հուժկու եւ Եփիալտէս,
Ալովեայ մանկըտին, կաշկանդեցին 'ի խիստ կապանս,
Եւ 'ի պղընձի կայր բանտ ամիսս երեքտասան զընդանաւորեալ:
Եւ էր անդէն կորուսեալ Արէսն անյագ 'ի պատերազմ,
Եթէ չէր մօրուէին նորոյ գեղեցկապատկերն Էրիբեայ
Պատմեալ յուշնկին Հերմեայ, որ գողացեալ տարաւ զԱրէս
Ըզխարուեալն եւ զտառապեալ 'ի դըժընդակ կապարանէն:
Կըրեաց Հերա, յորժամ զնա հըզօր որդին Ամփիտրոնի
Ընդ ըստին իւր աջոյ եռասայրեան եհար նետիւ,
Եւ ըզնա եւս յայնժամ անբժշկելի պաշարեաց ցաւ:
Կըրեաց վիթխարին 'ի նոսին Սանդարամետ ըզնոյն սուր,
Յորժամ ըզնա նոյն այր ձեա ասպարակիրն Արամազդայ՝
Ցուրտուականս անդ առ դըրանն հարեալ մատնեաց երկանց ցաւոց:
Իսկ նա գնաց յԱրամազդայ տունն եւ յերկայնն անդր Ողիմպոս
Սըրտատանուչ եւ վըշտահար ալէտաւոր, իսկ նետըն կայր
Ի ստուար ուս իւր մըխեալ, եւ ըզնորա տանջէր զոգին:
Սպեղանիս ցաւահալածս արկեալ բուժեաց զնորըն Պէոն,
Զի եւ չէր իսկ ծընեալ ամենեւին մահկանացու:

Ցաւակնայեցը ոճրագործ, 'ի ժամանաժամ եղեան անհաւ,
Որ 'ի գլխան աղեղանցըն մեղանչէր յոյժխմբաքնակս :
Բայց 'ի քեզ՝ զայրգ Աթենաս դըրդեաց խաժամին աստուածուհին .
Խակամիտ Տիդեանն համբաւ եւ ոչ 'ի սիրտ իւր խելամուտ,
Զի՞նչ անմահս որ մարտուցեալ չէ ինչ կարէ երկայնօրեայ,
Ոչ մանկունքն երբեք 'ի ծունկսըն հայրակոչ նըմա լինին
Ի դառնալ իւր 'ի կռուոյ եւ 'ի դըժնեայ պուպարածէ :
Արդ վասն եւ Տիդեանն, ահեղագոր թէպէտ մարտիկ,
Տեսցէ քաջ, պատցէ զօրեղն ընդ իւր քան զքեզ ճակատեսցի,
Համճարբեղըն գուցէ զուսար Ադրեստոսի Էգեալիս
Կակամնաւ զարթուսցէ 'ի քնոյ իւրեանց զիւր ընտանեակս
Անձկակարօտ կուսածաղիկ ամուսին՝ քաջին յուզայեցուց,
Ազնուականն ամուսին Հեախորովին Դիոմեդեայ :
Ասաց, ջնջեաց երկաքումբ թաթիւք զաւէշն 'ի դաստակէն .
Ողջացաւ ձեռնըն եւ ցաւքըն մեղմացան ծանրաթախիծք :
Իսկ Հերա եւ Աթենաս ակնարկելթ 'ի նոսա լեալ,
Ըղձըրտատեանն Արամազդ յայպանակատակ կըծէին բան :
Զայս մեղուակին աստուածուհին խօսեցն ընկերքըն եգ Աթենաս .
Արամազդ հայր, ցասնուցի՞ս արդեօք ընդ իս՝ թէ ասեմ ինչ .
Կիպրուհայն՝ անշուշտ ըղձի որ յորդուցեալ յաքայուհեաց
Երթալ յարել 'ի տրովէանս, զորս անհնարին սիրէ այժմիկ,
Ի գըրգուելն անդ ըզմի յաքայուհեաց գեղատեսից՝
Ցանկեձոյլն 'ի ճարմանդի զփափուկ ձեռքն ցըռեաց թաթիկ :
Զայս ասաց, եւ ժըմտեցաւ հայրըն մարդկան եւ աստուածոց,
Եւ ձայնեալ զոսկեղէնիկն Աստղիկ՝ առ նա զայս խօսեցաւ .
Ոչ քեզ, իմս դըստրիկ, պատերազմաց տըւան հանդէսք,
Այլ քո՝ զանուշակն եկեալ գործովք զամուսնութեան,
Այն ամենայն յԱրէս ժիր եւ յԱթենաս եղիցին յանձն :
Ա՛ռ միմեանս զայսոսիկ այսպէս ասէին զրուցատրէին :
Իսկ յընթեաս խոյացաւ Դիոմեդէս ահագնագոռ,
Գիտելով չափ զի զնովաւ ըզձեռան արկեալ էր Ապոլոն .
Այլ նա 'ի մեծ աստուածոյն պատկառեալ ոչ, ցանդ կըրկըրեալ
Սպանանել զԵնէաս եւ 'ի շըքեղ զինուց կապտել :
Երիցս անդէն խոյացեալ արշաւմամբ զարեան հատանելոյ,
Զնորուն երիցս Ապոլոն խըլթեալ մըղեաց զասպար փայլուն :
Իսկ չորրիր երբեւ անդամ յարձակեցաւ դիւանդման,
Սպառնալեօք ասէ սաստիւ անդ Ապոլոն աղեղնաւոր .
Ադէ ուշիմ լեր, Տիդեան, անդի առ՝ մի ժըրտիր ընդ զիս
Խորհըրդովքդ հաւասարել, զի չէ իսկ զարմ հանդիսափառ
Աստուածոցն անմահից եւ երկրակոխս գնայուն մարդկան :
Զայս ասաց, եւ Տիդեանն ընկըրկեցաւ խուռն մի յետոյս,
Խոյս տըւեալ 'ի ցասմանէ հեռաձիգն Ապոլոնի :



Digitized by Google

Իսկ զԷնէաս 'ի խառնճէն կորզեալ 'ի բաց՝ եդ Ապողոն
Ի նուիրեալըն Պերգամոս՝ ուր կառուցեալ կայր իւր տաճար.
Եւ ընդ Լէտով անդէն եւ Արտեմիս նետաձըգուհի
Յայնմանոյց 'ի մեծ նուիրանին ապաքինեալ տային 'ի փառս:
Այլ շինեաց ուրուապատկեր ինքն Ապողոն արծաթաղեղն
Ի նորին Էնէասայ եւ 'ի զինուցըն կերպարանս,
Եւ զնովին տեսլեամբ տրովեանք եւ դիւցազնարամ աքայեցիք
Կոփէին շուրջ ըզլանջօք միմեանց յաղթարան արջառամորթ
Կարաճնեալ բոլորաձեւս, ու՛ի վահանակըն փետրոտս:
Յայնժամ Գուշակն Ապողոն առ բուռն Արէս բարբառեցաւ.
Արէս՝ Արէս մարդախանձ, արիւնըռուշտ, պարսպաքանդ,
Ո՞չ հասեալ եւ զայրըդ զայդ հանցես 'ի բաց 'ի ճակատէս,
ԸզՏիդեանդ՝ որ արդ ընդ հօր իսկ կըռուեցի՛նդ Արամազդայ:
ԶԿիպրուհին նախ 'ի դաստակ ձեռին մօտուստ վիրաւորեաց,
Ապա յիս իսկ դըլխովին յարձակեցաւ դիւանըման:
Զայս ասաց եւ ինքն շոգաւ նըստաւ 'ի ծայրըս Պերգամայ:
Իսկ Արէս դըժնեայ հասեալ ըզտրովական խրախուսէր ռազմ՝
Ըռատաժիրըն Ակամասայ զերեսս առեալ՝ զզեստին Թրակեանց.
Եւ դիւցազանց որդեկացըն Պրիամու կարդայր խրախոյս.
Ո՛վ որդիք Պրիամու դիւցազնածինք թագաւորին,
Ցե՞րբ թողջիք ըզժողովուրդդ յաքայեցւոց վարել 'ի սպանդ,
Մի թէ յորժամ առ դըրունս ամրակառոյցըս մարտիցեն.
Անկեալ կայ զոր հանգէտ մեծին Հեկտորի պատուէաքն այր,
Էնէաս՝ մեծանձինն Անքիսեսի արի որդեակ:
Այլ 'ի գոռ խառնճէն եկայք ապրեցուսցուք զընկերն ազնիւ:
Ասացեալ՝ քաջալերեաց զոյժ եւ զեռանդն իւրաքանչիւր:
Սարպեդոնն յոյժ անդ յայնժամ յանդիմանեաց ըզմեծն Հեկտոր.
Յո՞ գընաց քո զօրութիւնդ, Հեկտոր, որ էրն 'ի քեզ յառաջ.
Ասէիր երբեմն առանց զօրականի եւ սատարաց
Միայնակ փեսայիւք քով եւ եղբարբք պահել զքաղաքդ,
Յորոց ես ոչ զոք կարեմ տեսանել արդ, ոչ իմանալ,
Այլ հարեալ կան ըզգոզի՝ զոր օրինակ զառիւծով շունք.
Իսկ մեք նիզակակիցքըս մարտուցեալ մըղեմք ըզմարտս:
Եւ ինքնին օգնական՝ եկեալ եմ յոյժ հեռաստանէ.
Զի հեռի է Լիկիա զյորձանահոսըն Քսանթոսիւ,
Ուր զանձկալին իմ ամուսին եւ ըզմանուկ թողի մատաղ,
Եւ ստացուածըս բազում՝ որոց կարօտ ոք ցանկանայ:
Եւ սակայն զԼիկիացիս վառեմ, եւ ես ինքն եմ յորդոր
Ընդ առնըդ ոգորել, թէպէտ եւ չիք իմ ինչ աստէն
Զոր հանցեն աքայեցիքդ եւ կամ շտապեալ վարեսցեն 'ի բաց.
Իսկ դու կաս, եւ ոչ իսկ զայլըս խրախուսեալ սըրտապընդես
Ըզժողովուրդն դիմանալ եւ 'ի վերայ կանանց կըռուել:

Տես գուցէ՝ ոխերիմաց գնայցէք արանց յաւառ եւ յապուռ ,
Իբր 'ի ցանցս ամենորսակ ուռկանի գոլ Թակարդապատ ,
Եւ ընդ փոյթ աւերեսցեն զոստանդ ձեր ըղբնակաւէտ ։
Քեզ արժան է յամենայն յայս փոյթ ունել ցայգ եւ ցերեկ ,
Առ իշխանաւքն պաշտաւնել հեռահրաւէր նիզակակցաց ,
Ժուժկալել՝ այլ ընդ կալ անդուլ , յանձնէ քերել ըղխիստ բամբաս ։
Խօսեցեալ զայս Սարպեդոնի՝ ըղՀեկտորի սիրտ խածին բանքն ,
Եւ անդէն 'ի կառացն յերկիր ոստեաւ զինու զարդու .
Սայրասուր ձօձեալ աշտէս՝ գնայր ընդ բանակն ընդ ամենայն
Խրախուսել 'ի պատերազմ , եւ յարոյց ծանր գուպարած ։
Եւ նոքա դարձեալ ընդ կրունկ՝ աքայեցւոց կացին ընդդէմ .
Տանայքն միախուռն արգիացիք եւ աննահանջ ։
Որպէս հողմ զի զոմբ յարդին , մինչդեռ որեարքն հոսիցէ ,
Վարէ՛նդ կալ նուիրական՝ Դեմետր յորժամ խարտաշագեղ
Որոշէ , 'ի սաստկանալ հողմոց , ըղյարդ եւ ըղպտուղ ,
Եւ 'ի Թոյր սպիտակութեան երփն հարկանէ մղեղն 'ի մԹեր ,
Նոյնպիսի սպիտակացան աքայեցիք մրրուս փոշւով
Զոր զնոցօք մինչ 'ի պղնձին երկին ձիոցն յուզէին սաք ,
Ի դառնալ գալ խառնել , յանդգնեն ածել կառավարացն՝
Որ զձեռացըն կըշռակի 'կէր ամենուէն կորովութիւն ։
Իսկ բուռն Արէս ըղպատգամն յօժան տրովեանց պատեաց գիշեր
Ընթացեալ ընդ ամենայն , եւ ըղպատուէրսըն հանէր յանգ
Զոսկեսուսեր Փիւբոսին Ապողոնի , որ եւ հրաման
Արծարծել զոգի տրովեանց , երբեւ ետես անդի չուեալ
ԸզՊաղլադա ԱԹենաս՝ որ դանայեանցն էր զօրավիգն ։
Ի պարարտ ապարանէն ինք զԷնէաս հան արձակեաց ,
Եւ յաւել վառեաց 'ի սիրտ հովուին ազգաց ոյժ պնդութեան ։
Եկն եկաց Էնէաս յընկերակիցսն՝ որ խնդացին
Տեսեալ ըղնա կենդանի եւ ողջանդամ եկեալ հասեալ ,
Եւ կազդուրեալ 'ի կորով . սակայն ինչ ոչ հարցին բընաւ ,
Զի չներէր այլ ինչ վաստակ՝ զոր յարուցին Արծաթաղեղն
Եւ Արէս մարդասպան եւ Հեռ մոլին այն անյագուրդ ։
Իսկ Էասքն երկոքին եւ Ոդիսեւս եւ Դիոմէդ
Զդանայեանս 'ի պատերազմ քաջալերեալ խրախուսէին .
Եւ ոչ ինքեանք ինչ զանգիտէին յաւժոյ տրովեանց , եւ ոչ 'ի գոռմանց ,
Պինդ կացեալք անդէն՝ յամպոցն 'ի նմանութիւն զոր Զըրուանեանն
Ի ժամ անհողմութեանց 'ի բարձրաբերձ կացոյց լերինս
Անխռովս , մինչ հիւսիսի եւ բորեացայս այլոց այլոց
Նընջէ բըռնութիւն , որ սաստկաձիգ շընչեալ սաւըռմանք
Ցըրուեալ փարատեն ըզստուերամած ամպրոպաց դէզ .
Նոյն տրովացւոց դանայեանք կացին ընդդէմ անշարժ՝ անահ ։
Իսկ Ատրիդէս պատուէր յոյժ ուռեալ՝ յամբոխն երԹեւեկէր .

Լերուք արք, ով սիրելիք, եւ զգեցարուք սիրտ զօրութեան,
Եւ յահաւոր մարտին կռուի այր յընկերէ պատկառեցայք·
Պատկառոտ որերոյն բազումք ապրին քան կորնչին,
Ոչ կանգնի փախըստէից՝ ոչ փառք եւ ոչ ինչ քաջութիւն։
Ասաց՝ ընկէց զարդն խեկոյն, եւ եհար զայր մի ախոյեան,
Ըզհամհարզըն մեծանձին Էնիասայ զԴէիկոոն
ԶՊերգասեան՝ զոր Պրիամու տրովեանք որդւոց պատուէին զոյգ,
Քանզի էր քաջայորդոր 'ի գուպարել ընդ նահատակս։
Ի սորին եհար տիգաւ յասպարն արքայն Ագամեմնոն,
Որ ոչ արգել ըզգեղարդն, այլ թափ ընդ այն էանց պըղինձն
Եւ 'ի փոր նորա ներքին խաղաց գընաց եւ ընդ կամարն·
Եւ անկեալ՝ թընդիւն եհան, եւ շաչեցին զէնքն ըզնովաւ։
Էնիաս 'ի դանայեանց ըսպան անդ արըս քաջազունս,
Զորդիս Դիոկլեսի՝ զՈրսիլոքոս եւ ըզԿրեթոն,
Որոց հայրն 'ի Փերէ գեղեցկաշէն բնակեալ նըստէր,
Ճոխ ընչիւք, եւ ազգ նորին էր 'ի գետոյն Ալփիոսէ՝
Որ ծաւալ ուխիւք զեռայ յերկաս երկրին Պիլիացւոց,
Եւ ծընաւ զՈրսիլոքոս՝ բազմաժողով արանց արքայ։
Իսկ Որսիլոքըն ծընաւ ըզմեծասիրտըն Դիոկլէս·
Եւ մանկունք երկուորիք 'ի Դիոկլեայ եկին 'ի ծնունդ,
Որսիլոքոս եւ Կրեթոն յամենայն մարտըս քաջափորձք։
Եւ սոքին յարբունս հասեալ՝ թըխատեսիլ *(?)* նաւափայտիւք
Ընթացան արգիացւոց զհետ յԻլիոն քաջամըրրուկ՝
ՅԱտրիդայցն Ագամեմնոնի եւ Մենելեայ քինուն խընդիր·
Սակայն զնոսա զերկոսին պաշարեաց անդ մահուն զըրաւ։
Օրինակ իբրեւ առիւծուց ամոլք լերինն ընդ անտառաւն *(?)*
Ընդ մօրըն սնուցեալք 'ի թանձրախիտ մայրւոյն մացառս,
Եւ զարջառս եւ զոչխարս յափըշտակեալ գիրապարար,
Ըզմարդկան մակաղատեղս ապականեալ յաւեր դարձուցանեն,
Մինչեւ սուր պղընձով ինքեանք իսկ սատակին 'ի ձեռս արանցն·
Այսպիսեակ Էնիասայ սոքին 'ի ձեռս եղեալ նըկուն,
Բարձրաբերձ եղեւնից նըմանակէս անկան տապաստ։
Ի գլորեալսըն գըթացեալ Արեայ սիրուն Մենելաւոս՝
Ընդ ախոյեանսն ընթացաւ զինազարդեալ 'ի պըղինձ հրաշէկ,
Ճօճելով ըզնիզակն, եւ զսիրտ նորա վառէր Արէս
Եղեալ 'ի միտ զի 'նդ ձեռամբ Էնիասայ նըւաճեսցի։
Նեստորի ձագ մեծանձին Անտիլոքոս ըզնա տեսեալ,
Ոստեաւ ընդ նահատակսն՝ յոյժ կասկածեալ զաղագս հովուէն,
Գուցէ 'ի վտանգ ինչ անկեալ՝ զվաստակ իւրեանց կացուսցէ վրէպ։
Երկոքեան նոքա զբազուկս եւ զգեղարդունսըն սայրասուր
Ունէին միմեանց ընդդէմ քաջախիզախք 'ի մըրցամարտ·
Եւ երթեալ Անտիլոքոս կաց առ երի հովուին ազգաց։

Էնխաս, պատերազմօղ Թեսպիս հուժկու, չկարաց ըմբշել՝
Մինչ եսես առ միմեանս արձանացեալ զարմն երկոսեան :
Իսկ տղայ զշխանուհին յոգնայեղեալ քարշեալ ամբոխ՝
Համշարըզեցն արկեալ 'ի ձեռս աւանդեցին ըղձիքացեալըն ,
Եւ խերանք անդրէն դարձեալ ընդ ախոյեանն կըռուէին :
Սպաննեալ եղեն անդ յայնժամ ըզՊիլեմէն ախոյեանն ,
Զիշխան Պափլագոնացւոցն մեծանձանց ասպարակրաց ,
Զոր մինչ կայրն՝ Ատրիդէսն Մենելաւ կորովաձեռ .
Աշտէիւ վիրաւորեաց՝ յանկարծ նորա դիպեցուցեալ :
ԸզՄիդոնէ Անտիլոքոս ըզկառավարեան հար պաշտօնեայ
ԶԱտիմնեան քաջ , զերիվարսն մինչ շրջէր զմիասալմանս ,
Քարիւ զարմուկն հարեալ կըշխա , եւ 'ի ձեռացն յերկիր անկան
Ընդ փոշի թաւալեալ երասանակք փղոսկրով պայծառք :
Ոստուցեալ Անտիլոքոս մխեաց ըզսուրն 'ի ծամեռօղն ,
Եւ նորա հեծեծանօք 'ի բարեկերտ կառացն անկաւ
Գըլխիվայր 'ի փոշւոյն յուսոց վերայ եւ կառափին ,
Եւ եկաց յերկար կանգուն , զի էր խրրեալ 'ի խոր աւազ ,
Մինչեւ բախեալ ձիանոյն՝ զեցին յերկիր հողաթաւալ .
Զորս Անտիլոք մտրակ 'ի կուշտ յոգնայեղեաց վարեաց բանակ :
Հեկտորի զնոսա տեսեալ 'ի ճակատուն՝ սուրեաւ դոչմամբ ,
Խուժեցին եւ տրովեանց միահամուռ գունդք զօրաւորք ,
Որոց գըլխն կայր Արէս եւ Ենիով մեծամեծար .
Զահագին սա զԱղմուկ մարտամբոխ առեալ ածեալ ,
Իսկ Արէս 'ի ըռուքն ճօճեալ նիզակ մի մեծայաղթ՝
Հեկտորի մերթ յառաջոյ խաղայր կուսէ , մերթ 'ի թիկանց :
Տեսեալ ըզնա սոսկացաւ Դիոմեդէսն ահեղագոռ .
Որպէս այր մի անհըմուտ ընդ դաշտ անցեալ մեծատարած՝
Ըզարընթաց կացցէ գետով որ թաւալեալ 'ի ծով դիմեսցի ,
Տեսեալ զայն փըրփրադէղ մըռմըռեալ՝ յետս ընդ կրունկ երթայ ,
Այսպէս յայնժամ Տիդէանն 'ի բաց դարձեալ՝ ցամբոխն ասէ .
Քանիօն զքանչանամք ընդ մեծն Հեկտոր , ով սիրելիք ,
Զի է քաջ նիզակաւոր եւ խըստասիրտ պատերազմօղ :
Յաստուածոց ոք հանապազ առ նմա կայ՝ պահել ըզմահ ,
Եւ այժմ ինքն է մերձ Արէս՝ մահկանացուի նման 'ի հանդոյն .
Բայց երեսք 'ի տրովացիս՝ յետս յետս անդուլ առէք նահանջ ,
Եւ մի՛ զաւ մուլեսջիք ընդ աստուածոց բուռն 'ի վերայ :
Զայս ասաց , սակայն տրովեանք հասին նոցա յայժ մօտ 'ի մօտ .
Անդ Հեկտոր արըս կըրկին կորոյս հըմտաբս ճակատուց ,
Որք 'ի մի զոյգըս կային , զԱնքիալոս եւ զՄենեսթէս :
Գըթացաւ ընդ անկեալսն Էաւըն մեծ Տելամոնեան ,
Եւ գնացեալ մերձեալ հուպ՝ [illegible] արձակեաց տէգ ,
Եւ զԱմփիոս զուսար եհար Սելագեան , որ 'ի Պեսոս

Բնակէր փարթամ եւ ընչաւէտ, սակայն ըղձա վարեաց Օրհաս
Հասանել ընկերել Պրիամոսի եւ մանկանցն։
Ընդ կամար գօտւոյն եհար ըղձա Էաս Տելամոնեան,
Եւ 'ի համայն ներքին մխեցաւ անդն երկայնատարուէր.
Ընդ գետնին անկեալ դոփեաց, եւ ընթացաւ Էաս քաջազն
Յաւարի առնուլ ըզզէնսն, իսկ տրովացիք անդր հոսեցին
Սայրասուր՝ փայլակնացայտս, եւ ընկալաւ զյոգունսն ասպարն։
Իսկ ինքն սոն 'ի նա արտաքեալ՝ զաշտէն պղընձի հան 'ի գլխոյն,
Բայց զայլ զէնսըն գեղեցիկս յուսոյ անաւի չկարաց զերծուլ,
Քանզի նեղեալ տագնապէր 'ի թանձրահոծ անդեալ նետից,
Եւ երկեաւ 'ի սաստիկ պաշարելոյ քաջաց տրովեանց՝
Որոց հոծեալ կորովեաց հասեալ կային նիզակաւորք,
Որ եւ զինքն իսկ գյաղթանդամն եւ զզօրաւոր զարմանաւագեանց
Հերքեցին յանձանց իւրեանց, եւ նա վանեալ ընկրկեցաւ։
Ճըգնէին այսպէս սոքա 'ի մըրցական ասպարիսին։
Զհերակլեան Տլեպոլեմոս զաւաքինին եւ զաստուածանման
Դըրդեաց բուռն Օրհաս ընդդէմ աստուածանման Սարպեդոնի։
Որ յորժամ ընթացեալ հասեալ կային առ միմեանս հուպ,
Որդին եւ թոռնեակ ամպրոպայնոյն Արամազդայ,
Նախ առ նա Տլեպոլեմոս կանխեալ բանիւք բարբառեցաւ.
Սարպեդոնէ, լիկացւոց խորհրդականդ, եւ զինչ քեզ հարկ
Անհըմուտ առըն մարտից՝ այսր 'ի տեղիս գալ զարհուրել։
Սուտ ասեն ըզքեզ զաւակ ամպրոպայինն Արամազդայ.
Քանզի քաջ 'ի բաց անկեալ յայնմ որերոյ գընիս վըրէպ,
Որ առ հնովքըն մարդկան յԱրամազդայ սերեցան զարմ։
Այլ որպիսի ոք պատմեն ըզհերակլեան զօրութիւն
Զիմն եղեալ սերմանող՝ քաջայանդուգն առիւծասիրտ։
Որ երբեմն այսր եկեալ զերիվարաց Լաւմեդոնի
Վեցեքումբք եւեթ քաջաւօք, սակաւաւոր արանց թըւով,
Զիլիոն քանդեաց քաղաք եւ ըզփողոցսն ամայացոյց։
Իսկ դու, վատասիրտ, եւ 'ի կորուստ մատնի ամբոխդ.
Եւ զքեզ ոչ ինչ համարիմ տրովադացւոցըդ զօրավիգն
Այսր հասեալ 'ի Լիկիոյ, թէ եւ կարի հզօր իցես,
Այլ պարտեալ ընդ ինեւ՝ անցցես ընդ դրունըս դժոխոց։
Լիկացւոց պետ Սարպեդոն արար անդրէն առ նա դարձուած.
Արդարեւ կորոյս նա, Տլեպոլեմէ, զԻլիոս սուրբ
Առ անմըն խօլութեան՝ ազնուատոհմին Լաւմեդոնեայ,
Որ իւրում բարերարին ժանտկէն բանիւք եդ թըշնամանս,
Եւ ոչ հատոյց զերիվարսն՝ որոց էր սակս եկեալ հեռուստ։
Իսկ քեզ ես աստ ասեմ մահ եւ Օրհաս ժամանել սեաւ
Յինէն, եւ ընդ իմովքս գեղարդեամբք անկանել քեզ,
Ըզփառսն ինձ տալ եւ զոգիդ 'ի քաջաձին Անդընդեհապետ։

Զայս ասաց Սարպեդոնն, եւ ահա 'ի վեր Տլեպողեմոս
Ըղձբեկուժողն հոգի, եւ զոյգ ասէին Թըռիչս երկայն արդունք
Ի ձեռաց նոցին, ու՛ր մէջ պարանոցին հար Սարպեդոնին,
Եւ սըլաքըն ցաւալիր Թափանց եւ կողմն 'ի կողմանէ,
Եւ զաչքն նորին գիշեր տարածեցաւ անդընդային։
Իսկ երկայն աշտեկս Տլեպողեմոս զազդրըն ահեակ
Էր խոցեալ, եւ այլրատուր ակըրըն չեշտեալ յոսկրըն յեցաւ.
Սակայն հայրն անցոյց առ ժամն առ 'ի նմանէ զմահուան եղեան։
Ընկերքըն քաջազունք զաստուածատիպըն Սարպեդոնին
Տանէին 'ի ճակատէն, նիզակն երկայն քարշեալ ըզհետ
Տանջէր ըզնա, զոր ընդ միտ ածեալ ուրուք չէր, ոչ խորհեալ
Խըլել զհասցի ոտիցն յազդերէն, զի մարթասցի հեծնուլ 'ի կառս,
Առ ճեպոյն, զի յայնպիսի ջան տաժանեալ զբաղեալ կային։
Քաջասպարունք աքայեցիքն յայնկոյս կուսէ զՏլեպողեմոս
Հանէին 'ի մարտէն, եւ Ոդիսեւս ծանեաւ քաջազն՝
Ուժգնասիրտն, որոյ հոգին իւր յորդորեալ եռայր 'ի նմա.
Եւ 'ի միտս իւր եւ յոգին այնուհետեւ կայր մըտախոհ,
Եթէ զհետ մըտցէ՞ որդւոյն որոտընդոստն Արամազդայ,
Թէ զոգիս պահանջեսցէ զատ 'ի յոլովից լիկիացւոց։
Մեծանձինն Ոդիսեւսեայ ճակատագրեալ ոչ էր 'ի բախտ
Սուր 'ի պղնձոյ սպանանել զԱրամազդայ զարի որդին.
Ի խուժան լիկիացւոց դարձոյց զհոգին իւր Աթենաս։
Անդ սպան նա զԿիւրանոս, ըզՔրոմիոս եւ զԱղաստոր,
ԶԱլկանդրոս եւ զՀալիոս, ըզՆոյեմոն եւ զՊրիտանիս.
Եւ դեռեւս այլ սպանանէր զլիկիացւոց քաջն Ոդիսեւս,
Եթէ չէր սուր ակնարկեալ ահեղն Հեկտոր կորդակախորոս։
Ընթացաւ ընդ առաջեանս 'ի պղնձի հրաշէկ զինավառեալ
Ահընկէց 'ի դանայեանս, եւ Սարպեդոնն ճեան Որմըզդեան
Ի մատչել իւրում ուրախացաւ՝ արձակեաց ձայն աղիողորմ.
Պրիամեան, մի՛ զիս Թողուր դանայեցւոց անկանել որս,
Այլ օգնեա՛ ինձ եւ ապա Թող յարեւէ իսկ անկայց ես
Ի ձեռում քաղաքիդ. քանզի չէի ես դառնալոց
Ի տուն եւ յանձկալի իմ հայրենիս երկիրս գաւառ՝
Ուրախ առնել զամուսինն իմ սիրելի եւ տղայ մանկիկ։
Զայս ասաց, սակայն Հեկտոր սաղաւարտածօծ կըրկնեաց ինչ ոչ,
Սըլացաւ յառաջադէմ փայլակնացեալ յարդիացիս՝
Շուտափութեալ վանել զնոսա եւ ըզբազմաց ոգիս շարել.
Արդ ընկերքըն քաջազունք զաստուածանմանն ըզՍարպեդոնն
Ընդ չըքնաղն եղին կաղնեաւ վահանակրոցն Արամազդայ,
Եւ զնիզակն հասցի կորզեաց 'ի յազդերէն իւրմէ արտաքս
Կորովին Պէլագոն՝ սիրասնունդն իւր անձկալի։
Լքեալ եԹող ըզնա շունչն, եւ մառախուղ զաչօքն հեղաւ.

Այլ անդրէն էառ զոգին, եւ հիւսիսին ըմբոռլաւ սիւք
Խաղացեալ արծարծանէր զհատկըլեալ անձըն նորա ։
Արգիւացիք ընդ Արէսիւ եւ պղնձազէն Հեկտորաւ
Ոչ 'ի փախուստ խուճապէին 'ի նաւատորմըն սեւաթոյր,
Ոչ մարտի զընէին դէմ, այլ միշտ ընդ կրունկ վերջանէին,
Իբրեւ ազդ եղեւ նոցա՝ եթէ Արէս է'նդ տրովացիս ։
Զո՞վ ոք անդ առաջին եւ զո՞վ վերջին մատնեաց 'ի մահ
Հեկտոր ձեռըն Պրիամեան եւ ընդ նմա պղնձին Արէս ։
ԸզՏեւթրասըն զդիւցազնիկ եւ զՈրեստէսըն ձիամուղ,
ԸզՏրէքոս՝ զԷտոլացին քաջամարտիկ, եւ զԻնոմաւ,
ԶԻնոպեանն Հելենոս, զՈրեսբիոս գեղակամար՝
Որ բնակէրն 'ի Հիլէ՝ 'ի մեծութիւն յոյժ յողացեալ,
Ի ծովակին հուպ Կեփիսեա, եւ առ նովաւ այլք եւս յոլովք
Բնակէին Բեովտացիք 'ի ժողովուրդ մեծափարթամ ։
Իսկ Հերա՝ սպիտակաձեռն աստուածուհին իբրեւ ետես
Սատակեալ զարգիւացիսն 'ի զօրաւոր պատերազմին,
Իսկ եւ իսկ զերագաթեւս առ Աթենաս խօսեցաւ բանս.
Ո՛հ եղուկ, ասպարակիրն Արամազդայ դուստր անվրկանդ,
Բան սնոտի խոստացաք ապաքէն մեք Մենելաւեայ,
Զիլիոն ամրապարիսպ աւարառ վարեալ այնպէս դառնալ,
Եթէ այսպէս թողուցումք մոլել մըրցել ըզժանտն Արէս ։
Այլ եւ մեք եկ խորհեսցուք 'ի զօրութիւն անպարտելի ։
Զայս ասաց, ոչ Աթենաս հակառակեաց խաժակն աստուածուհին ։
Իսկ Հերա՝ զերիվարսն ոսկեսարեան գնացեալ կազմէր,
Զըրուանեայ մեծին դուստր՝ երիցագոյնն աստուածուհի ։
Եւ Հեբէ շուրջ ըզկառօքն երագապէս զանիւսըն կուռս
Ըզպղնձիսն եւ զութաճաղիս առ կ յերկաթին ագոյց յառանցն,
Որոց հեցքն ոսկի անեղծ եւ պղնձանիւթ վերուստ կամարք
Զօդեալք քաջալինդ՝ զարմանալիք տեսանելով.
Ականոցքն արծաթիք շուրջանակի բոլորաշէն,
Ծոց նորին ոսկեղինօք եւ արծաթի լարովք կախեալ,
Եւ կըրկին ըմբոռլաւ կիսաբոլոր պատեալ գօտիք ։
Եւ քեղին կարկառեալ էր 'ի նմանէ արծաթեղէն,
Յորոյ 'ի գլուխըն կապեաց ըզգեղեցիկ լուծն ոսկեձոյլ
Արկեալ զոսկի սանձերէսն, եւ 'ի սամիսն անդր առ Հերա
Զերիվարսն երագոտունս՝ յորդորամիտ 'ի կռիւ ու 'ի խաղմ ։
Իսկ Աթենաս՝ ճաւակեթ ասպարակիրն Արամազդայ,
Ըզխոլոյն շղաշատեւ հոսեալ յանձնէն 'ի հօրն յատակ՝
Զնըրկարէն զիւրն յօրինած եւ զձեռագործ մատանց իւրոց,
Եւ զգեցեալ վարապանակ զամպայարոյցն Արամազդայ՝
Վառէր սպառազէն 'ի պատերազմ արտասուաբեր ։
Արկ զասպարըն զուսովքն 'ի վերջաւոր փողփողեալ ծոպս,



Digitized by Google

Ջահաւոր՝ զորով շուրջ շուրջանակի պատեր Սարսափ,
Ի նմա Հեռ, 'ի նմա Կորով, 'ի նմա սարսափելի Հալածանակին,
Եւ 'ի նմա Գորգոնեական. գլուխ գրեթէ յաշխարհիկն՝
Սատկալին՝ խոժոռադէմ, վահանաւոր Դիոյ Ճիւաղ։
Եւ 'ի գլուխ եդ զոսկեկուռ զբազմախորդան զքառամէրժէան
Սաղաւարտ՝ հեռուստ 'ի գեղ գլխոյն հարիւր քաղաքանայ։
Եւ 'ի կառսն բոցեղէն ոտն ամբարձեալ՝ առ ընթերակն
Ըղձանդ՝ ընդ այլովք եւ զլամուար, որով զհակառակն վիրաւորէ
Զցեղս դիւցազանց արանց ոյց զամ մի հայրաղորդն քննեալ։
Իսկ Հերա մեծափառ 'ի կուշտ արտաք արտաք մարթէր ընձիւն.
Ինքնաշարժ ճռռնչեցին երկնից դրունք՝ ժամուց պահեալք՝
Որոց յանձն եւ աւանդեալ Երկինքն է մեծ եւ Ողիմպոս՝
Ի բանալ եւ 'ի փակել ընթրիքայոց ամպոց կառոյ։
Այդ ընդ այս եւ ընդ նոսա զհրապարակաւ մարեցին ձիս,
Եւ գտին ընդ Զրուանեանն յայլոցն 'ի գեց նստեալ փառաւոր
Ի բարձրաբերձ այլոցն գլխոյն բազմագագաթեանն Ողիմպոսի։
Անդ կազմութեան Հերայ զձիանն լուսածովի աստուածուհեայն,
ԶԱթենայ հարցեալ ընդ Հերն Զրուանեանն՝ ասէ առ նա.
Աթենայ հայր, ոչ ցասնուս Արէայ՝ չարեաց ամբարտաւանն,
Քանիօն սրբազնէն կորոյս անպատ յաքայեցւոց՝
Յախուռն յանդգնոյր սարսափազար եւ ինձ 'ի վիշտ տանջանաց։
Իսկ Կիպրուհին եւ Ապոլոն արծաթաղեղն կան խնդան,
Որ զմոլին զայն դըրդեցին՝ որ իրաւունս ինչ ոչ գիտէ։
Աթենայ հայր, բարկանայցես ինչ արդեօք ինձ՝ եթէ զԱրէս
Չարաչար հարուածեալ հալածեցից 'ի ճակատուէն։
Արամազդ ամպրոպային պատասխանեաց ասէ ցնա.
Օն առեալ զԱթենան աւարառու 'ի նա զարթո,
Որ սովորն է մանաւանդ զաւանութեան ցաւս հեղուլ զնովաւ։
Զայս ասաց, չյամառեաց Հերա սպիտակաբազուկն աստուածուհի.
Մտրակեաց զերիվարսն որ մեծապէս արդմանայքն
Ընդ երկիր եւ ընդ աստեղեայ երկնից գնդելն միջասահմանս։
Եւ որչափ ինչ արկանէ յանին ակն ընդ օդ լուսաթաղանթ՝
Որ նստեալ 'ի դիտանոց շուրջ յածելէ զաչս ընդ ծով լուրթ,
Նոյնչափ մազս առեալ ամանան սրատոտորուն գետ երիվարք։
Այլ հասեալ 'ի Տրովադ եւ յերկոսին գետս յորդահոս,
Ուր զուգաձայնն Սիմոյիս եւ Սկամանդրոս խառնին 'ի մի,
Անդ կացոյց ընձիւն Հերա լուսածոցի աստուածուհին,
Եւ լուծեալ 'ի կառացն՝ եհեղ զնոքօք մէգ թանձրահոծ,
Եւ Սիմոյիս բղխեաց նոցին աստուածեղէն ճարակ յարօտ։
Նոքա թըրթռուն աղաւնեաց գնայյին 'ի ձեռն հանդուգնաւորք,
Ճեպ արարեալ ժամանել արգիւացւոց քաջացն 'ի նպաստ։
Եւ եկեալք՝ ուր բազմագոյն խռնեալ կային արուօրագոյնք
Գունդագունդ ընկալեալ ձիամոլեկն Դիոմեդեաւ,

Առիւծուց նըմանեալք գիշատիչներէն շաղփաղկերաց,
Կամ կրճտեցին վարազուց անհնարին սաստկանդամից,
Անդ կացեալ գոչեաց Հերա սպիտակաձեռն աստուածուհին՝
Մեծանձնին ըՍտենտորի պղնձաձայնին 'ի նմանութիւն,
Որ այնչափ գոչէր գոչմամբ՝ որչափ ինչ այլ որեւէ յիսուն:
Ամօթ, ամօթ, չարակեղա Արգիացիք, գեղք գեղեցկատեսք·
Աքիլլեւսըն դիւցազարմ մինչդեռ 'ի կռիւս երթեւեկէր,
Ոչ երբեք ըստ Դարդանեան դրունսըն տրովեանք յառաջէին,
Ահաբեկ զարհուրեալք 'ի հաստաբազուկ իւր նիզակէն·
Ցստանէն այժմ 'ի բացէ առ գոգաւոր մերձ նաւուք:
Զայս ասացեալ՝ զարթոյց զոյժ եւ ըղձագին ամենեցուն:
Իսկ առ Տիդէեան՝ Աթենաս դիմեաց խոժոռակն աստուածուհին,
Զարքայն զայն գտանէ առ երիվարսն իւր եւ առ կառս
Ի զարման տանել զվէրն զոր Պանդարոս եհար նետիւ:
Եւ նեղէր զնա քիրտըն ընդ լայնատարած բառնալեօք
Գեղապատոյր վահանին՝ որովք տանջէր, եւ խոնջէր ձեռն,
Եւ 'ի վեր առեալ զգօտին՝ 'ի բաց զարիւնըն սրբէր թուխ:
Եւ մերձեալ աստուածուհւոյն յերիվարացն 'ի լուծ՝ ասէ·
Արդարեւ իսկ յոյժ ընդհատ յանձնեան որդի ծընաւ Տիդէոս·
Տիդէոս փոքր էր մարմնով, այլ սակայն գոռ պատերազմող:
Եւ յորժամ ոչն անէի նըմա ես թոյլ մտանել 'ի մարտ,
Մի մղեալ բանակագուշել, եւ առանձին մինչ յաքայեցւոց
Եկըն հրեշտակ 'ի Թեբէ՝ 'ի յաղթանդամ կադմեացիս,
Խրախճանալ ըզգօնաբար 'ի տաճարն եւ ետու նըմա հրաման·
Նա սակայն եռանդնալից վառեալ սըրտիւ որպէս յառաջն՝
Ըզմանկունսն կադմեացւոց զըրդէր եւ յաղթանակէր
Հեշտաբար, զի այնպիսի էի նըմին ես օգնական:
Իսկ առ քեզ՝ ես յօժարութեամբ եւս հասեալ կամ եւ պահպանեմ,
Եւ պատուէր յօժարամիտ առ մարտընչել ընդ տրովացիս:
Այլ ըզքո՝ կամ վաստակ յոգնատաժան կալեալ զանդամս,
Կամ երկիւղ ինչ սրտաթափ ըստուգապէս ըզքեզ ունի·
Ինեւսեան քաջին Տիդէոյ չես դու զաւակ պատուհասել:
Արդ առ նա Դիոմէդ պատասխանի տուեալ ասէ·
Աստուածակերին Դիոյ դուստր աստուածուհի, ծանուցեմ զքեզ,
Վասն որոյ քեզ մըտադիւր խօսեցայց, ոչ թագուցեալ:
Ոչ երկիւղ ինչ սրտաթափ ունի զիս՝ ոչ պղերգութիւն,
Այլ ինձ յուշ տակաւին ըզնոյն պատուէրըքդ զոր ետուր·
Ոչ ներէիր ինձ կռուել ընդ այլ աստուածս երանեալս,
Բայց միայն յԱստղկանէ 'ի դըստերէն Արամազդայ,
Թէ գայցէ 'ի պատերազմ, ըզնա խոցել սուր պղընձով:
Ցայն աղագս՝ իմ իսկ այսրէն առեալ նահանջ՝ եւս հրաման
Եւ այլոց արգիացւոց այստ հաւաքել զայլ ջոկերն·
Զի տեսանեմ 'ի մէջ զԱրէս 'ի ճակատուս տիրապետեալ:

Կըրկնեաց անդրէն Աթենաս առ նա խաժակն աստուածուհին.
Տիդէեան դու Դիոմեդէս, անձին իմոյ յոյժ սիրելի,
Ոչ Արէսէ դու մի խրթեար, մի յանմահից այլ ումեքէ,
Այնպիսի քեզ զօրավիգն ահա հասեալ կամ՛ 'ի Թիկունս։
Օն արի զաալապարմբակ նախ զերիվարսդ յԱրէս վարեա,
Եւ մատիր 'ի նա եւ հար, 'ի բուռն Արեայ մի ակն ածեր՝
Ի մոլեայն, յանդուռն չարէն, յայլընդայլոյն յեղափոխէ.
Որ յառաջըն բան տուեալ խոստացաւ ինձ եւ Հերայի
Մարտ ընդդէմ դընել տրովեանց, արգիւացւոց օժանդակել.
Արդ կաձառի՛նդ տրովացիս, եւ մոռացօնս արար սոցա։
Ասացեալ, եւ 'ի կառացն յերկիր վարեաց զըՍթենելոս՝
Քարշեալ յետոյս ձեռամբըն, եւ նա վաղեաց հապճեպ փութով.
Ինքըն յերկձիան ամբարձաւ առ դիւցազըն Դիոմեդեայ
Ցորդեռանդըն աստուածուհին, եւ սեռն ուժգին հեծեաց կաղնի
Ընդ բեռամբըն՝ որ զի զահեղըն աստուած տանէր եւ զարի այրն։
Առ Պալլասն Աթենաս զմըտրակն 'ի ձեռն եւ զերասանս,
Եւ անդէն զմիաբարմբակ նախ զերիվարսն ուղղէր յԱրէս,
Որ 'ի ժամն ըզՊերիփաս ըսպանանէր առակավկնթիսար,
Ըզհըզօրն Էտոլացւոց, զՈքեսիայ շըքեղ որդին։
Արէս ըզնա սատակէր արիւնաներկն, իսկ Աթենաս
Զգըլխանոցն ագաւ զժոխոց, զի մի տեսցէ զինք բուռն Արէս։
Մինչ Արէս մարդախոշոշ ըզԴիոմեդ ետես դիւցազն,
Անդանօր ըզՊերիփասըն վըթխարի եթող անկեալ,
Ուր սատակեալ զինքըն նախ՝ եւ էր խըլեալ զոգի նորա,
Եւ դիմեաց դէպ ուղիղ 'ի Դիոմեդ ձիամարդիկ։
Առ միմեանս իբրեւ սոքա հասալ դէմ ընդդէմ եկեալ հասին,
Նախ Արէս 'ի վերուստ լծոյ ձիոցն՝ ուսերաստեաց
Ըզպըղնձին ընկէց նիզակ՝ առնուլ զոգին ցանկանալով,
Եւ զայն ձեռամբըն Աթենաս կալեալ խաժակն աստուածուհին
Ի կառացն 'ի բաց հերքեաց՝ զընալ ընդ վայր անկանել Թափ։
Դիոմեդ ըստ նըմանէն յարձակեցաւ ահեղագոռն
Աչաէիլըն պըղընձեաւ, եւ Աթենաս մըխեաց Պալլասն
Ի փոր նորա 'ի ներքըին՝ ուր ըզկամարն ածէր ընդ մէջ։
Անդր հարեալ վիրաւորեաց, եւ զմորթն հերձեալ ըզգեղեղաւէշ՝
Զըղեաց անդրէն ըզգեղարդն. եւ պըղընձին գոչեաց Արէս,
Որչափ Թէ ինըն հազարք կամ տասն հազարք հարցեն խօշեն
Որեար գոռք 'ի մարտի՝ յարխականն ոգորեալ խաղմ։
Իսկ անդուստ զաքայեցիս եւ զտրովացիս կալաւ դողումն,
Որ պակեան՝ զի այնպիսի գոռեաց Արէս անյագն 'ի կռիւ։
Օրինակ իմըն յամպոց խաւարային երեւեալ մէգ՝
Ի յառնել խորշակին 'ի զառնաշառանչ փըչէլ հողմոյ,
Նոյն Տիդէեան Դիոմեդեայ երեւեցաւ պըղընձին Արէս՝
Զի ահա խառն ընդ ամպոց ելեալ դընայր յերկինս 'ի լայն.



Digitized by Google

Եւ խնկոյն եհաս 'ի բարձրըն Ողիմպոս՝ յաստուածոց գահ,
Եւ չոգաւ սըրբատառուց առ Զըրուանեան Դիոյ նըստաւ,
Եւ եցոյց զանձամբ արիւնն որ 'ի վիրէ անոխ բըղխէր,
Եւ յոգւոց հանեալ հառաչս՝ ըզբանս ասաց զերատագալոյց·
Արամազդ հայր, ո՞չ ցասնուս զանձիր գործոց տեսեալ չարիս·
Յամենայն ժամ տոակալեալք չարչարեցաք կըրիւք աստուածքս
Ի սադրելոյ մեր միմեանց՝ առ 'ի պաշտօն առնել մարդկան:
Ամենքս ընդ քեզ գամք 'ի վէճ, զի դու ծընար զաղջիկն անմիտ՝
Զեղեռնաւորն՝ որոյ միշտ 'ի խնամս են միտք գառն ազեանց:
Քանզի այլք համօրէն՝ որչափ ինչ դիք են յՈղիմպոս՝
Կան քեզ հնազանդեալ, եւ կամք նուաճեալ բոլորեքեան·
Իսկ առ նա չըմերձենաս ինչ ոչ բանիւ եւ ոչ արգեամբք,
Նա եւ գըրգես, քանզի դու ծընար ըզգուստրըն ժանտաժուտ,
Որ այժմիկ ըզորդին Տիդեայ՝ զշարախտամանըն Դիոմէդ՝
Յարուցեալ բորբոքեցոյց յանձամբ աստուածոցն մոլեգնել:
ԶԿիպրուհին նախ 'ի մօտոյ խոցեաց ձեռքն իւր 'ի դաստակ,
Իսկ ապա եւ յիս ինքն յարձակեցաւ իբրեւ ըզդեւ,
Այլ փըրկեցին զիս ոտք թեթեւք· անշուշտ հարուստ ինձ ժամս անդէն
Վըշտակիր գոյր տառապել 'ի դըժընդակ դիականց շեղջ,
Կամ թալանեալ ուժաթափ 'ի թօսլ պղնձոյն կենդանութեամբս:
Արամազդ ամպրոպազէղ խոժոռեալ ասէ առ նա·
Մի դու, յեղափոխուկ, բազմեալ առ իս ինձ քըրթմընջեր·
Առաւել քան զամենայն ես ինձ աստուածս ո՛ղիմպաբնակս,
Որ զի միշտ քեզ սիրելի է կագ՝ կըռիւ եւ պատերազմ·
Մօրդ 'ի քեզ է հոգին անհաստատելի եւ անողոք,
Հերայի՝ զոր հազիւ թէ ես ուրեք նուաճեմ բանիւք:
Եւ կարծեմ թէ 'ի նորա հրապուրելոյ կըրես դու զայդ:
Սակայն ոչ հանդուրժեցից տանջել ցաւօք քեզ ընդ երկար,
Քանզի յինէն ես սերունդ, եւ մայր քո ինձ ծընաւ ըզքեզ:
Թէ յայլմէ դից ուրուքէ ծընեալ էր քո ժանտ այդպիսի,
Քան զՈւրանեանսն 'ի խորագոյն էիր վաղուց սանդարամետս:
Զայս ասացեալ՝ եւ հրաման Պէոնի զինքն ետ ալաքել·
Եւ Պէոնն բալեղանիս օծեալ 'ի նա ցաւացածոյցս՝
Ողջացոյց, քանզի եւ ոչ իսկ էր ծընունդ մահկանացու:
Որպէս խախացն 'ի սպիտակ արկեալ 'ի կաթինըն մակարդէ
Զայն որ լոյծն էր եւ մածնու խնկոյն 'ի ձեռս հարկանելեացն,
Իսկ եւ իսկ նոյնօրինակ ապաքինեաց ըզբուռն Արէս:
Եւ Հեբէ լըւաց ըզնա եւ զգեցոյց ձորձըս շնորհաշուք·
Նա պերճափառ բազմեցաւ առ Զըրուանեանն Արամազդայ:
Իսկ Հերայն արգոսուհի եւ Աթենաս պահպանակեան՝
Եւ նոքին դարձան անդրէն յԱրամազդայ մեծին 'ի յարկ,
ԶԱրէս յորժամ մարդախանձ յարեանց մահուց լըռեցուցին:



Digitized by Google

## Հ Ո Մ Ե Ր Ի

# Ի Լ Ի Ա Կ Ա Ն

---

## Ե Ր Գ  Վ Ե Ց Ե Ր՛ Ո Ր Դ

7

...thek
München

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի մեկնել դիցն 'ի ճակատէ մարտին՝ բազում մահուանս գործեն Յոյնք 'ի տրովացիսն։ Հեկտոր ըստ խորհրդոյ եղբօրն Հելենոսի գնայ 'ի քաղաքն առ մայր իւր Հեկաբէ, զի ժողովեալ զմեծուհիս 'ի տաճարն Աթենասայ՝ մատուսցէ նմա խլայ մի ազնիւ եւ խոստասցի զոհս՝ փրկել զնոսա 'ի Դիոմեդեայ։ Պատահումն սորա ընդ Գլաւկոսի եւ բանք, որոց հիւր իւրեանց ծանուցեալ եւ փոխանակեալ զզէնսն՝ մեկնին սոքա 'ի միմեանց։ Հեկաբէ եւ տիկնայք գնան 'ի մեհեանն Աթենասայ՝ կատարել զուխտ նուիրանացն։ Հեկտոր ելեալ գնայ 'ի տուն Պարիսի. զորս Հեղինէ եւ նա յանդիմանեալ զհեղգութիւնն՝ յորդորեն դառնալ 'ի պատերազմ. եւ նորա ընդդատուցեալ՝ խոստանայ հասանել փութով զկնի եղբօրն, եւ կացեալ անդէն։ Հեկտորի ընթացեալ անդուստ յիւր ապարանսն, եւ չգտեալ անդ զկինն իւր զԱնդրոմաքէ, ելանէ զհետ նորա։ Համդիպումն նոցին առ արեւմտեան դրամբն, գորովալից խօսակցութիւն նոցին, պատակեր տղայ մանկանն Հեկտորի, բաժանումն նոցին 'ի միմեանց։ Ժամանէ անդր Պարիս սպառազէն, եւ ընդ եղբօրն ելանեն 'ի դաշտն։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՎԵՑԵՐՈՐԴ

### ՀԵԿՏՈՐԻ ԵՒ ԱՆԴՐՈՄԱՔԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԵՒ ԲԱՆՔ

Տրովայեցւոցն եւ աքայեցւոց ամայացաւ ահեղին մարտ ,
Եւ բազում յայս այսր եւ անդր էր ընթացեալ գուպարն ընդ դաշտ
Յարձակեալքն 'ի միմեանս ըղձեղարդունքն պղնձանիզաւս
Ընդ մէջ հոսանաց Սիմոյիսեայ եւ Քսանթոսի ։
Եւ Էաս Տելամոնեան՝ աքայեցւոց պատ եւ պատնէշ՝
Նախ ըզտրովացեանց եբեկ ռազմ եւ ընկերացն ծագեաց լոյս ,
Հարեալ զայր մի քաջագէն 'ի Թրակացւոց զընդէ անուն՝
Զէւսորեան ձեռն զԱկամաս ըղկորովին եւ զպայծառաթանդամ,
Զոր եհար նախ ընդ խորան ձիավարսեալ գըլխանոցին ,
Եւ վարսեաց 'ի ճակատն , եւ մինչեւ յոսկր անդր հարբառեալ
Անց սլլաքըն պղնձի , եւ զաչըս իւր ծածկեաց խաւար ։
ԶԱքսիլոս սատակեաց Դիոմեդէս ահեղագոռ
ԶՏեւթրանեան՝ որ բնակէր 'ի բարեշէնն Արիսբէի ,
Մեծատուն եւ ընչեղ եւ սիրեցեալ 'ի մարդկանէն ,
Զի բնաւից ասպընջական էր ունելով տուն առ ուղւոյ ։
Այլ ոչ յայնժամ 'ի նոցունց ժամանեալ ոք յիւր օգնութիւն
Փրկեաց զինքն 'ի խեղճ մահուն , այլ զերկոսեան անշընչացոյց ,
Ըզնա ինքն եւ զսպասաւորեայն՝ որ անդ ձիոցն էր կառավար
Կալեսիոս , եւ 'ի հող երկրի մըտին երկոքին եւս ։
Եւրիալոս զըրաւեաց զՕփելտիոս եւ ըզԴրեսոս ,
Եւ դիմեաց 'ի Պեդասոս եւ յԷսեպոս՝ զոր ծնաւ երբեմն
Աբառբարէ յաւերժահարսն աղբերց՝ ամբիծ Բուկողեոնի ։
Բուկողիոն էր որդւոյ քաջափառին Լաւմեդոնեայ ,
Ծննդեամբ երիցագոյն , բայց գաղտնի զնա ծնաւ մայր .
Նա հովուէր 'ի տուարածին 'ի սէր ու 'ի քուն խառնակեցաւ ,

Եւ նորա յըղացեալ՝ երկուորակեց ծընաւ մանկունս ։
Ըղձոցս զօրութիւն եւ զքաջավառոյգ անդամս եղծ
Մեկիստեւսեանն, եւ յուսոց անտի նոցա զզէնսըն կապտեաց ։
Սատակեաց զԱստիալոս Պոլիպիտէսն անվանեալք,
Եւ ըստ ան Ոդիսեւս ըզՊիդիտէսն Պերկոսեան
Աշտէիւըն պղընձեաւ, Տեւկրոս զքաջն Արետաւոնն,
Անտիլոքոս Նեստորեան ըստ ան զԱբլեր փայլուն տիգաւ,
Իսկ արի արանց արքայն Ագամեմնոն զԵլատոս՝
Ըղբնակեալն առ ափամբ ուղխբնահոս Սատնիոյսայ
Ի բարձրադէտըն Պեդասս, եւ Լէիտոս զփախուցեալն ըստ ան
Զփիլակոս 'ի փախըստեան, զՄելանթիոս հար Եւրիպիլ ։
Իսկ ապա զԱդրեստոս Մենելաւոսն ահեղագոռ
Կենդանի կալաւ, զի ձիք իւր շըրտուցեալք ընդ դաշտավայրն
Ի մոշենի շաղկապք սոսա, եւ խորտակեալ ըղկառաչն կոր
Ի զօդուած անդ քեղուոյն, ինքեանք եդին գնալ 'ի քաղաքն՝
Ընդ որ եւ այլք զարհուրեալ խուճապէին ձիք ըղձեալք,
Եւ նա ինքն 'ի գլուխից անտի զանուոցըն տապալեալ
Ի բերանս հարեալ անկաւ անդ 'ի փոշւոջ, եհաս առ նա
Ատրիդէս Մենելաւոս՝ երկայնաստուեր տէգն 'ի ձեռին,
Ադրեստոս անդէն զծընկօքն նորա փարեալ խաղաղատէր .
Ապրեցո, ձեռդ Ատրեւսեան, եւ արժանի 'նկալցիս փըրկանս .
Յապարանս հօրն իմ ճոխի բազում ըստացք են պատուականք ,
Եւ պղընձ եւ ոսկի եւ երկաթ յոյժ ճարտարագործ .
Հայր իմ քեզ 'ի նոցանէն պարգեւեսցէ փըրկանս անթիւս ,
Թէ միայն զիս կենդանի լուիցէ 'ի նաւս աքայեցւոց ։
Զայս ասաց, եւ զսիրտ նորա շարժեալ 'ի լանջըսն յորդորէր ,
Եւ կամէր ըղնա տալ անդէն իւրում արբանեկին
Յաքայեանց տանել 'ի նաւս , անդուստ սակայն Ագամեմնոն
Ընթացեալ եկն ընդ առաջ, գոչեաց 'ի ձայն ըսպառնալեաց .
Ո՛վ դու վատ, ով Մենելաւ, զի՞ այդպէս դաս մարդկան 'ի գութ .
Քեզ 'ի տանդ արարքեն վայելչական հարաւ ըստս
Ի տրովեանցդ, յորոց եւ մի՛ ապրեսցի ոք 'ի ժանտ մահուն
Եւ 'ի մեր ձեռաց, եւ մի՛ զոր յարգանդին կրէ իւր մայր ,
Որ ուստր իցէ, եւ մի՛ սա ճողոպրեսցի, այլ կորիցեն
Համօրէնքն յԻլիոնէ անթաղ անխնամ հետախաղաղ ։
Ասացեալ՝ դարձոյց զխուցեալն ըզմիտս եղբօրն 'ի դէպ խրատովն ,
Եւ նա զքաջն Ադրեստոս մերժեաց ձեռամբն յանձնէ 'ի բաց ,
Եւ խոցեաց ըզնա 'ի կուշտըն Թագաւորն Ագամեմնոն ,
Նա թաւալ անկաւ յորսայս, եւ Ատրիդեայ արտաքեալ 'ի կուրծան
Աքացի հարեալ ոտամբ՝ ձըգեաց եհան ըղտէգն հացի ։
Բարձրաձայն հարկանէր արգեացւոց Նեստոր խրախոյս .
Ո՛վ սիրելիք, զինուորուծքդ դանայեան, Արեայ մանկունք ,

Մի՛ ոք արդ յաւար խառնեալ 'ի կողոպուտ՝ յետըս մնասցէ,
Իբրեւ զի շատ ինչ աւարեալ կողոպուտ՝ դարձցի անդրէն 'ի նաւս.
Կոտորեսցուք եւեթ զայրս, ապա զառապատս անկեալսն 'ի դաշտ
Արասցուք զմեռեալ մարմինս հանդարտապէս դիակապուտ։
Զայս ասաց, եւ եռանդն յամենեսին ած եւ ախոյժս։
Անդ տրովացիք յաքայեցւոց 'ի սիրելեացն Արեսի
Վատութեամբն եղեալ նըկուն՝ եւ յԻլիոն անկանէին,
Թէ Պրիամեանն Հելենոս՝ հաւահմայիցն գերագոյն
Մատուցեալ առ Էնէաս եւ առ Հեկտոր չէր բարբառեալ.
Էնէաս եւ Հեկտոր, 'ի ձեզ քանզի կըրթի վաստակ
Տրովացւոց եւ լիկեցւոց, վասն զի էք գեր 'ի վերայ
Յամենայն վարչութիւն պատերազմաց եւ խորհրդոց,
Կացէք աստ եւ արգելէք առաջի դրանց ըզժողովուրդն
Ընդ համայն ընթանալով, մինչ չեւ 'ի գիրկս կանանցն
Փախուցեալ անկեալ իցեն եւ թշնամեաց կացեալ քըրքիջ։
Իսկ յորժամ զունդս զամենայն խրախուսիցէք առ հասարակ,
Աստ 'ի բայս հարեալ մեր զոտս՝ ընդ դանայեանս պատերազմեսցուք,
Թէպէտ եւ յոյժ աշխատեսցուք, քանզի ձգէ հարկին ստիպեալ։
Բայց դու, Հեկտոր, ընթա երթ այնուհետեւ 'ի քաղաք անդր,
Ասասջիր մօր քում եւ իմ, զի ժողովեալ ըզպառաւկանայս
Ի մեհեան աչաւկամն Աթենասայ 'ի դղեակս չքնաղ,
Բանալեաւ զդրանդիս բացեալ ըզնուիրական ապարանիցն,
Եւ ըզպեպլոս զոր իւր թուիցի գեղեցկագեղ եւ մեծագոյն
Ի դղեկսն 'ի տան իւրում եւ անձինն յոյժ սիրատենչակ,
Արկեալ արկցէ զայն 'ի ծունկս Աթենասայ գեղածամին։
Եւ նմին տարեւորս անլուծ երինջս երկոտասան
Ուխտեսցէ 'ի մեհենին զոհել, թերեւս ողորմեսցի
Քաղաքիս եւ ամուսնոց տրովադացւոց եւ տղայ մանկանց,
ԸզՏիդեայ թերեւս որդին խոյեալ 'ի սուրբ Իլիոնէ՝
Հերքեսցէ զվայրագ մարտիկն եւ զարհաւրաց մարտուցն հըզօր,
Զոր ըզանազգոյն կարծեմ ես յաքայեցւոցն բովանդակ։
Զի ոչ այսպէս յԱքիլլեայ երկեաք երբեք յարանց պետէն՝
Զոր ասեն աստուածուհւոյ ծընունդ, իսկ սա սաստիկ մոլի,
Եւ չիք ումեք ընդ սմա կորովութեամբք գալ 'ի կռիւ։
Ասաց զայս, եւ Հեկտոր՝ հարազատին ոչ անսաստեաց։
Ի կառաց անտի անդէն զինու զարդուն ոստեաւ յերկիր,
Եւ ճօճեալ սուր գեղարդունս ընդ համօրէն զբոլոր բանակն
Ի դասակար խրախուսանէ, եւ բորբոքեաց մարտ անհնարին.
Եւ նոքա դարձեալ անդրէն՝ աքայեցւոց կացին ընդդէմ։
Ընկըրկեցան աքայեանք եւ կասեցին 'ի սպանութեանց,
Յանհամահից զոք կարծելով յաստեղազարդն իջեալ յերկնից
Յօգնութիւն տրովացւոց, այնպէս դարձան կացին ընդ կռուել։

Եւ Հեկտոր քաջալերէր ըղձարտալցին բարձր 'ի կանչելն.
Տրոյացիք արիականք եւ առարածակ նիզակակիցք,
Արըս լերուք, սիրելիք, արկէք 'ի միտ զոյժ արիութեան,
Մինչեւ երթ մի յԻլիոն արարից ես եւ տաց պատուէր
Առեհնակալ ծերունեացն եւ ամուսնաց կանանց մերոց
Անկանել յաղերս առ դիսն եւ ուխտադիր զոհից լինել։
Այսպէս ըսյս բարբառեալ՝ գնաց Հեկտոր կորդակաձօձ,
Եւ զարձգունս իւր բախէր եւ զպարանոց փոկ Թըլխամորթ՝
Շըրջապատ բոլորեալ 'ի կըմբաւոր վահանին վերջս։ —
Իսկ Գլաւկոս Հիպպոլոքեայ հարազատն եւ ուստըրն Տիդեւսի
Ի մէջ երկուց ճակատուց մատեան 'ի կռիւ մենամարտիկ.
Եւ մինչդեռ առ միմեանս ընթացեալ հուպ եկին կացին,
Նախ խօսել առ նա կալաւ Դիոմեդէս առհեզադոռ.
Ո՞վ եղես, դու քաջազն, 'ի մարդկանէ մահկանացուաց,
Զի չտեսի յառաջ ուրեք 'ի ճակատուս փառաւորպէտ.
Բայց այժմիկ յոյժ գիմադրու քան զըմաւս եւեր յանդըգնութեամբ,
Զի կացեր առաջի երկայնաստուեր իմ նիզակիս.
Այլ մանկունք հեքացելոց գիպչին խմուծըս աստուածութեան։
Իսկ թէ ոք յանմահից յերկնից եկեալ այսըր հասեր,
Ես ընդ դիսն երկնաւորս ընդդիմամարտ ոչ եղանեմ։
Զի եւ ոչ Դրիասեան զաւակն՝ հըզօրըն Լիկուրգոս՝
Եկեաց յերկար, զի՛նդ աստուածըն երկնաւորս 'ի կռիւ հեռայր.
Որ երբեմն ըղմըլեալյն Դիոնիսեայ վանէր դդայեակն
Ի նուիրական Նիսէյոնի, եւ նոքա ընաւք միանդամայն
Ըղթաւ ուստն ընկեցին յերկիր՝ տանջեալք յեղին խըթան
Ի մարդասպան Լիկուրգեայ. եւ զարհուրեալ Դիոնիսոս
Երթ եմուտ յալիս ծովուն, եւ առ Թետիս 'ի գիրկըս իւր
Զահաբեկն՝ որ ըզդողն կայր 'ի սաստկից առնըն հարեալ։
Ցայնժամ եւս ոխացան ընդ նըմին դիք դիւրակեցաղք,
Եւ զաւակըն Զըրոսանայ զնա կուրացոյց, եւ նա չեկեաց
Ոչ եւս այլ, զի անմահից դիցն ատելի եղեւ համօրէն։
Չառնում եւ ես յանձըն քաւ ընդ երջանիկ մըրցել աստուածսն։
Իսկ թէ ոք մահկանացուաց ես որ զպըտուղ երկրի ուտեն,
Մօտ մատիր, զի նոյնհետայն փոյթ 'ի վախճան հասցես մահու։
Եւ անդրէն Հիպպոլոքեայ շըքեղ որդին կըրկնեաց առ նա.
Մեծանձնըդ դու Տիդեանդ, զի՞ զազգատոհմ իմ հարցանես.
Որպիսիք են տերեւոց զարմք ստրունդք, նոյն եւ մարդկան.
Են զորս յերկիր հոսէ տերեւս հողմ, եւ մայրին բողբոջազարդ
Զայլս 'ի բոյս ընձիւղէ, եւ գարնայնին հասանէ ժամ.
Նոյնպէս եւ ազգ մարդկան, է որ ծնանի, է որ ծախի։
Ուսանել թէ զայդ խընդրես՝ զի լինիցիս հըմուտ ազգեակ
Մերոյին ազգատոհմի, զոր եւ գիտեն բազում մարդիկ,

Է քաղաք Եփիւրէ 'ի ձիաբոյծ Արգոսին խորշ,
Եւ էր անդ Սիսիփոս՝ քան զամենայն այր խորամանկ,
Սիսիփոսն Էոլեան, և նա զԳլաւկոս ծնաւ որդի,
Իսկ Գլաւկոս ծնաւ զանբիծն և զանըստգիւտ Բելլերոփոնն,
Որում դիք գեղ շնորհեցին և ցանկալի առաքինութիւն։
Այլ նմա Պրետոս չարիս հնարաւորեաց յիւրում սրտին՝
Յաշխարհէն վարեալ զնա, զի արգոսեանցն էր վեհագոյն,
Զորս Արամազդ ընդ իւրով հնազանդեցոյց գաւազանաւ։
Ի նմա չքնաղն Անթիա՝ Պրետոսի կինն՝ հարեալ կրակէր
Գիտենալ գաղտնի առագաստիւք, այլ 'ի հաւան չածէր զնա
Զբարեմիտն խոհեմաւն զԲելլերոփոնն քաջախորհուրդ։
Իսկ նա սուտ բարբառեալ ցթագաւորն ասէ Պրետոս.
Մեռցիս, ով Պրետէ, և կամ սպանջիր զԲելլերոփոնն
Որ 'ի խառնելս առագաստիս բռնադատել զիս ժպրհեցաւ։
Զայս ասաց, և ընդ լսելն անդ թագաւորն կալաւ զայրոյթ.
Ոչ կամեցաւ սպանանել, զի զայն 'ի միտս իւր խորշեցաւ.
Յղեաց զնա 'ի Լիկիա, տուեալ 'ի ձեռսն մահու նշան
Ի պատուածոյ տախտակի դրոշմեալ յոլով սատակչականս,
Աներոյն իւրում պատուէր ետ ցուցանել՝ զի կորիցէ։
Եւ չոգաւ 'ի Լիկիա՝ յանարատաւ դիցն առաջնորդեալ.
Այլ յորժամ 'ի Լիկիա և յորդահոսն եհաս Քսանթոս,
Մեծարէր զնա կամաւ պատուելով արքայն լայն Լիկիոյ։
Աւուրս ինն հիւրընկալեալ, և ինն արջառս եհան 'ի զոհս.
Իսկ 'ի ծագել վարդամատն Առաւօտուն տասներորդի՝
Եհարց զնա, և զնշանն տեսանել խնդրեաց յայնժամ,
Զոր նմա 'ի Պրետոսէ 'ի փեսայէն տանել բերէր։
Իբրև առ ընկալաւ զչարն նշանն ժամանակեայս,
Ըզքիմերան ետ նախ հրաման սպանանել զանպարտելի,
Որ էր նա ճիւղն սերունդ աստուածեղէն, և ոչ մարդկան.
Յառաջոյ կուսէն առիւծ, յետուստ վիշապ, ըզմիջոցաւ այծ,
Եւ ըզհրոյ բորբոքելցն զայրացեր շնչէր ահագնագոյնս.
Եւ նա զայն սատակեաց 'ի դէպ նշանս եղեալ վստահ։
Երկրորդ անգամ կռուեցաւ ընդ հոյակապն Սոլիմացիս,
Եւ յայս մարտ՝ 'ի պատերազմին արանց ասէր զանձն մտեալ.
Եւ երրորդ՝ զայրագինս ըզԱմազոնուհեացն կոտորեաց։
Ի դարձին իւրում անդրէն՝ այլ խոհն նենգ նիւթեաց մանդաւ,
Զի յընտրանեաց Լիկիոյ զարս արանց կարգեալ ջոկեաց՝
Մոյծ 'ի դարան. այլ ոչ ևս այլ դարձան անդրէն նոքա 'ի տուն,
Զի ամենեցուն Բելլերոփոնն կորոյս բնաջինջ մինչև 'ի սպառ։
Իսկ յորժամ ծանեաւ ըզնա ծնունդ ընտիր աստուածազարմ,
Անդ առ իւր ըզնա պահէր, և զիւր ըզդստերացն տայր նմա.
Եւ զկատարեալ արքայական զամենայնի շնորհեաց ըզկէս,

Եւ նըմա լիկեացիք զատուցին անդըս գեր քան զայլս
Քաջաբոյս 'ի հարաւունս եւ յայգեստան՝ 'ի մըշակել :
Եւ արւոյն Բելլերոփոնի ծընաւ որդեակըս կնին երիս ,
ԶԻսանդրոս , եւ հանդերձ՝ զՀիպպողոքոս եւ զԼաւոդամի .
Արամազդ խորախորհուրդ ընդ Լաւոդամին առ եւ քունեաց ,
Եւ ծընաւ նա զՍարպեդոն աստուածատիպ պըղընձավառ :
Սակայն եւ նա գեց համօրէն խըռեւ յաշաց ելանէր ,
Ընդ դաշտն Ալէյական Թափառ շըրջէր միայն մոլոր՝
Զոգին իւր ուտելով եւ 'ի հետոց մարդկան խուսափ :
ԶԻսանդրոս նորին որդի՝ անյագն 'ի մարտ կորոյս Արէս
Ի նորա պատերազմելն ընդ Սոլիմեանսն քաջանուն :
Իսկ զօրհորդն՝ ոսկեսանձըն սըրտամըրեալ սպան Արտեմիս :
Զիս ծընաւ Հիպպողոքոս , եւ 'ի նմանէ լինել ասեմ .
Եւ յըղեաց զիս 'ի Տրոյա՝ բազում ինչ եւս ինձ պատուիրանս ,
Յամենայն ժամ քաջ լինել եւ ելեւել առնել զայլովք ,
Եւ մի զազգ Թըշնամանել հարանց որ քաջքըն վեհագոյնք
ՅԵփիւրէ են կացեալ ու'ի լայնանիստըն Լիկիա .
Ասացիկ յազգէ այսմ եւ յարենէ պանծամ լինել :
 Զայս ասաց , եւ զուարճացաւ Դիոմեդէս ահեղագոռ ,
Ըզնիզակն իւր հարեալ 'ի խոտաւէտ վարսեաց գետինն ,
Եւ ախորժակ բանիւ առ հովիւըն խօսեցաւ ժողովրդոց .
 Արդարեւ իսկ վաղեմի հայրենական ես դու ինձ հիւր .
Զի երբեմն Ինեւս քաջազն ըզհրաշալին Բելլերոփոնտ
Հիւր 'ի տուն իւր ընկալաւ՝ աւուրս առ իւր պահեալ քըսան ,
Որ եւ հիւրոյթս ընծայեալ ետուն միմեանց գեղազանեալս :
Ընծայեաց Ինեւս կամար մի ծիրանի լուսանըկար ,
Եւ նըմա Բելլերոփոնտ ոսկի բաժակ մի կըրկնատաշտ ,
Զոր 'ի խաղալն այսր իմում Թողի ես զայն յիմ ապարանս :
ԸզՏիդեւս ոչ յիշեմ , զի տղայ մանկիկ եԹող նա զիս՝
Յորժամ կորեաւն 'ի Թեբէ աքայեցւոց ամբոխութիւնք :
Արդ ես քեզ՝ հիւր սիրելի եմ 'ի միջի արգոսացւոց ,
Եւ դու ինձ՝ 'ի Լիկիա , Թէ յազգ նոցին ինձ գալ լիցի :
Յաշտէից 'ի միմեանց եւ անդ 'ի խուռն ըզգուշասցուք ,
Զի բազում են ինձ տրովեանք եւ քաջ սատարք 'ի սատակել ,
Զոր եւ ոք տայցէ աստուած եւ ես ոտիւքս ըմբըռնեցեմ .
Եւ քեզ շատ աքայեցիք 'ի սպանանել՝ զոր կարիցես :
Այլ փոխեսցուք զէնս ընդ իրեարս , զի եւ սոքա լիցին հասու՝
Թէ լինել պանծանամք միմեանց 'ի հիւր հայրենական :
 Զայս այսպէս բարբառեալ եւ ոստուցեալ 'ի յերկձիոցն ,
Այր զընկերի կալեալ ձեռս՝ ետուն միմեանց հաւատս յերաշխ :
Անդ Զըրուանեանն Արամազդ ըզԳլաւկոսի Թափեաց ըզխելս ,
Որ ըզզէնս իւր ընդ Տիդեան Դիոմեդեայ փոխանակեաց՝



Digitized by Google

Զանկեղէնան ընդ սրղկնձիս, զհայրերկղինեանն ընդ ճննեղինեանս: —
Իսկ Հեկտոր յԱրեւմըտեան մինչ եհաս դրունս եւ 'ի կայենին,
Կանայք շուրջ եւ դըստերք ընթանային տրտմագացեալ՝
Զողջունէ հարցեալ որդւոց՝ եղբարց՝ արանց եւ զոքեկելեաց,
Եւ նա տայր ամենեցուն հրաման երթալ կարգ ըստ կարգէ
Առ աստուածս յաղօթըս կալ, զի բազմաց ցաւք կային առ դուրս:
Ի գեղապանծ ապարանս իբրեւ եհաս 'ի Պրիամեան,
Որ կանգնեալ կափածոյիւք էին գաւիթք. — եւ 'ի ներքին
Կային եւս տասնաւագ 'ի սրբատաշ վիմէ յիսունք՝
Կառուցեալք հուպ առ իրեարս, եւ անդ ուստերքըն Պրիամու
Ի քուն մըտանէին առ ամուսնօքն հարազատօք.
Եւ դըստերացն 'ի միւս կուսէ 'ի հանդիպոյն 'ի սրահի անդ
Յարկակից կային սենեակք երկոտասան կամածոյ քարամբք
Շինեալք միմեանց առընթեր, յորըս փեսայքըն Պրիամու
Ի քուն մըտանէին ընդ ամուսնեան ամօթագեղս. —
Անդանօր շնորհապարգեւ մայր նորա ել նըմա 'նդ առաջ,
Որ առ դըստերց չքնաղագեղն անցեալ երթայր Լաւոդիկէ.
Եւ ձեռն 'ի ձեռն եւր խառնեալ՝ կարդաց զանունն եւ խօսեցաւ.
Զի՞ է, որդեակ, զի թողեալ զամեհամուղ գուպարն եկիր.
Տագնապեն անշուշտ որդիք աքայեցւոցըն դըժնդակք
Մաքառեալք զաստանիւս, իսկ այսր ըղձիղ դըրդեաց հոգիդ՝
Գալ յամրոցէ քաղաքիս ամբառնալ ձեռս առ Արամազդ:
Սակայն կաց՝ մինչեւ երթամ քեզ անուշակ բերեմ գինի,
Նուիրել Արամազդայ հօրն եւ այլոց նախ անմահից,
Եւ ապա դու իսկ ճնշեսցիս արբեալ ըզնոյն կազդուրեսցիս.
Քանզի առն աշխատելոյ յորդէ գինի զօրութիւն մեծ,
Որպէս եւդ վաստակեալդ քոյ ընկերաց կըռուեալ փոխան:
Եւ նըմա պատասխանի անդըրէն Հեկտոր սաղաւարտաձօձ.
Մի՛ ածուր ինձ դու գինի զմայլեցուցիչ, մեծարոյ մայր,
Գուցէ զիս լըլանեսցես, եւ մոռասցայց զոյժ եւ զկորով.
Իսկ անլուայ ձեռնել ձեռօք Արամազդայ գինի հրաշէկ՝
Խըղճեմ, զի ոչ երբեք առ Արամազդ ամպրոպաթուխ
Յարիւն եւ յապածոյժ թաթաւելումն է աղօթել:
Այլ արդ դու 'ի տաճար աւարառուին Աթենասայ
Ե՛րթ բուրմամբք անուշիւք, համախըմբեալ ըզմեծուհիս,
Եւ խլամեա որ քեզ թուեսցի գեղեցկագեղ եւ մեծագոյն
Յորս 'ի տան դըստանեցին եւ քեզ կայր ցանկատեսակ,
Անեալ արկցես ըզծընկօք Աթենասայ վարսագեղի:
Եւ նըմա տարեւոր անմուղ երինջս երկոտասան
Ուխտեսցես 'ի մեհենին զոհել, թերեւս յողորմ գայցէ
Քաղաքիս եւ ամուսնոց տրտմագացելոց եւ տղայ մանկանց,
Իցէ զՏիդեայ թէ զորդին հերքեալ 'ի սուրբ Ի՛լիոնէ

Վանեսցէ զմիջոց մարտոյն եւ զարհաւրաց հզօր մարթուչ:
Արդ դու չոգ 'ի տաճար աւարառուին Աթենասայ,
Իսկ ես՝ առ Պարիս անցեալ գնացից կոչ առնելոյ,
Թէ կամիցի խրատուս լսել. օ՛հ անդ նմա բանայր գետինն.
Մեծ ըղձա ածոյց եղեան Ոլիմպիականքն արամացուոց
Եւ մեծամեծին Պրիամու եւ համօրէն որդւոց նորա:
Թէ 'ի վէհ Սանդարամետս ըղձա անկից խորասուզեալ,
Մոռացեալ անկեալ 'ի մտաց ըղձանս աղէտս հաշուեցայց:
Զայս ասաց, նորա գնացեալ 'ի տուն հրաման եա աղախնեանց,
Որ եկեալ ընդ տաճարն ըղձանականեայս ժողովեցին:
Իսկ նա իջեն երթեալ էջ 'ի շտեմարանն անուշաբոյր,
Ուր անկեն էին իւր նշկարէնք՝ ատարագք կանանց սիդոնուհեաց,
Զորս իջեն 'ի Սիդոնէ ած Աղեքսանդր աստուածատեսպ
Նաւայլեալ հաստեալ ըղծովն անդընդատար ընդ հետ ուղւոյն՝
Ընդ որ վարեալ եւ ածեալ ըղհօրանօրեն էր Հելենէ:
Ցոյց Հեկաբէ զմին հանեալ՝ Աթենասայ բերէր նուէր,
Որ յերփն երփն նարօտուց ծաղկեալ նշկար, մեծ քան ըղբնաւ՝
Իբրեւ զաստղ ճաճանչէր, եւ հուսկ յետին զինէր այլոց:
Եւ գնաց, եւ խուռներամ խաղայր ըղկնի իւր բամբշանին:
Եւ 'ի գլուխ շինին յորժամ յԱթենասայ հասին տաճար,
Ցարեաւ եբաց նոցա զդուրսն Թէանով գեղեցկադէմ
Կիսէսեանն՝ առնակին Անտենորեայ ձիավարժի.
Զի զնա եդին քրմանոյշ Աթենասայ տրոյացիք:
Նոքա ձեռս առ Աթենաս բարձին ողբովք միահամուռ,
Եւ առեալ գեղեցկայարին Թէանովն զընդաշամեան
Եդ 'ի ծունկսն զայն նուէր Աթենասայ վարսագեղոյ,
Եւ ուխտիւք աղաչէր ըղմեծին դուստր Արամազդայ.
Աթենաս, աստուածուհեաց վեհ, խնկելի, քաղաքապահ,
Դու զնիզակըն խորտակեա զԴիոմեդի, եւ տուր ըղնոյն
Բերանսնել Թաւալգլոր առաջի դրանցս Արեւմտեանց.
Զի այժմ ահա մատուսցուք ողորմուղ երինջս երկոտասան
Քեզ հանցուք 'ի մեհենի աստ զոհ, թէրեւս 'ի գութ դարձցիս
Ոստանիս եւ ամուսնաց տրովադացւոց եւ տղայ մանկանց:
Զայս մինչ նա եկաց յաղօթս, յանձն Աթենաս չէառ Պալլաս:
Այսպէս սոքա մաղթէին դըստեր մեծին Արամազդայ,
Իսկ Հեկտոր չոգաւ 'ի տունն Աղեքսանդրի չքնաղակերտ,
Զոր իւր էր կառուցեալ ընդ որերոյն քաջահմուտ՝
Որ յարգաւանդն 'ի Տրոյա ճարտարապետքն էին հիւսունք,
Եւ նոքա զառագաստն յօրինեցին, ապարկն եւ զդաւիթ
Առ ընթեր Պրիամուն եւ Հեկտորի յամրոց շինին:
Սիրելին Արամազդայ Հեկտոր եկեալ անդըր եմուտ,
Արդն 'ի ձեռին մետասան կանգուն, եւ սլաք տիգին պղնձի



Digitized by Google

Յառաջոյ փայլատակէր, եւ օղ ոսկի շուրջ ընթանայր :
Գտեալ ըզնա 'ի սենեկին բարեզարդեալ զինուքն եկեալ,
Զվահանն, ըզլանջապանն եւ զկորաձեւն զննել աղեղն :
Իսկ Հեղինէ Արգուհին ընդ աղախնեաց նստէր կանանց,
Եւ հրաման զարմանազան ձեռակերտից տայր նաժշտացն :
Հեկտոր տեսեալ զեղբայրն՝ այպանելի զգածեաց բանիւք.
Ա՛յ թշուառ, ոչ ինչ 'ի դէպ եդեր 'ի սիրտ զայդ բարկութիւն.
Ծախին զօրք ըզքաղաքաւս եւ զպարսպաւք բարձու մրցելովք.
Վասն քո խազմ եւ գուպար բորբոքեցաւ շուրջ զաստանիս.
Եւ դու ինքնըդ քինէն այլում ուրուք գայիր 'ի վէճ,
Եթէ յանէն արկանէիր զոք յուշացեալ յահեղ կռուոյն :
Այլ արի, մինչ հուրց ասաստիս ոխակերիւ հրով փայլատակեսցի :
Պատասխանի ետ անդրէն Աղեքսանդրոս աստուածատեսակերպ.
Յարժանի էն կշտամբանքդ, Հեկտոր, եւ ոչ առաւելապարտաւց.
Ասացից քեզ յայն սակս, եւ դու լըւեալ ինձ 'ի միտ առ :
Ոչ թէ ցասմամբ ընդ տրովկեանս եւ ոչ յորդոր բարկութենէ
Նստեալ առ 'ի սենեկիս, այլ առ մըղձուկ ցաւոց զփարել :
Իսկ զարդիս՝ ամուսնոյս ողոք բանիւք յիս մատուցեալ՝
Խրախուսեաց 'ի պատերազմ, եւ ինձ իսկ լաւ այնպէս թուի.
Զի այլուր եւ անդր 'ի մարդիկ փոփոխի բախտ պատերազմաց :
Այլ այժմ եկ մընա դու ինձ, զպատերազմականն ըզգեցայց զէնս,
Եւ կամ երթ, եւ ես եկից, եւ ժամանել քեզ ակն ունիմ :
Զայս ասաց, ոչ ինչ կըրկնեաց անդրէն Հեկտոր կորդակաձօձ,
Այլ առ նա Հեղինէ բարբառեցաւ աղու բանիւք.
Ո՛վ տայգր իմ, շանս ինձ չարահնարիս, ատելագործելոյս,
Ո՛ տայր՝ եթէ յաւուրն անդ առաջնում զի ծնաւ զիս մայր՝
Յափշտակեալ զիս մըրրիկ այսոյ չարի տանէր 'ի լեառն,
Եւ կամ 'ի խորս անդընդոց ահեղագոչ ալեաց ծովու,
Ուր կոհակ ընկլուզանէր զիս մինչ չեւ այսմ եղեալ վախճան :
Այլ զի այսպէս զայսպիսի սահմանեցին դէք զեղերանս,
Պարտ էր գէթ քաջագունի լինել ինձ առն անկողնակից,
Որ զգայցէ պարսաւս եւ մարդկան խուռն եղերանաց :
Իսկ 'ի սմին՝ ոչ այժմ ինչ միտք են պինդ՝ եւ ոչ լիցին յապայս.
Վասն որոյ եւ համարիմ նըմա զարդիւնս իւր ըմբոշխնել :
Այլ այժմ եկ 'ի ներքս մուտ, տայգր իմ, եւ նիստ 'ի բազմոցս,
Զի վաստակ անհնարին պատեալ ըզմիտսդ պաշարէ
Ի պատճառս իմ վասն շանս, եւ վընասուն Աղեքսանդրի,
Յորոց վիճակ վատաբախտաւոր ընկէց 'ի գլուխ մեր Արամազդ,
Զի եւ մարդկան հանդերձելոց լիցուք յապայս երգ եւ առակ :
Ետ նըմա պատասխանի մեծըն Հեկտոր սաղաւարտաձօձ.
Մի՛ տար ինձ նիստ, Հեղինէ, թէ եւ առ սէր՝ ոչ համոզեսցես.
Քանզի սիրտ իմ արդ վաղէ՝ ձգել 'ի տրովկեանց առ օգնութիւն,

Որ անմնչացեալ հեռացելումն հաչէն ըղհետ հառաչէն ։
Այլ դու զդա սախալեաշէր , եւ նա խնդնեն խակ փութացի ,
Զի մինչ դեռ 'ի քաղաքիս կեցեմ՝ առ իս եկեալ հասցէ ։
Առաքսաքին ելեալ 'ի տանէ հեռանկացայց ես տեսանել
Զգերդաստանս եւ զամուսին իմ սիրելի , զորդեայ մանկիկ .
Զի չգիտեմ թէ միւսանգամ դարձեալ այսրէն դամ առ նոսա ,
Թէ 'ի ձեռս աքայեցւոց մատնեն զիս դիք 'ի պարտութիւն ։
Զայս ասացեալ խօսեցեալ՝ գնաց Հեկտոր կորդակախրոխտ ,
Եւ հասանէր փութով հասեալ 'ի բնակութեան իւր ապարանսն ,
Ոչ եգիտ անդէն 'ի տան զԱնդրոմաքէ լուսածրղի ,
Այլ մանկամբն ելեալ հանդերձ եւ նաժշտաւ քողազարդու
Երթեալ կայր յաշտարակին կականելով եւ ողբանուեր ։
Իբրեւ ոչ եգիտ 'ի ներքս Հեկտոր ըզկին իւր զանարատ ,
Գնացեալ առ սեամսն եկաց , բարբառեցաւ առ աղախնայս .
Ո՛ն եկայք ինձ , աղախնայք , խօսեցարուք զճշմարտութիւն .
Ցո՞ չոգաւ 'ի տանէս Անդրոմաքէ սպիտակածղի .
Թէ առ ո՞ք 'ի տալից կամ 'ի ներից տեաղորդէից
Կամ 'ի տաճար Աթենասայ գնաց ուր այլքըն տրովուհիք
Հաշտ առնեն ըզզըժնէ աստուածուհին ըզվարսագեղ ։
Տընօրէն կինըն ժրաջլուխ ասաց առ նա պատասխանի .
Զի մեծաւ ստուգիւ պատուէր տուր , Հեկտոր , արդար խօսել ,
Ոչ առ ոք 'ի տալեցն , ոչ 'ի ներից գեղատեսաց ,
Ոչ 'ի մեհեան Աթենասայ գնաց ուր այլքըն տրովուհիք
Հաշտ առնեն ըզվարսագեղ զահեղնաբին աստուածուհին .
Այլ 'ի մեծ չոգաւ մարտկոցն Իլիոնի , լուեալ համբաւ
Ըզտագնապ տրովադեանց եւ զաքայեցւոց մեծ բռնութիւն ։
Նա ձեպեալ ըշտապաւ եւ մոլելոյ խելըն հանգոյն
Ի պարիսպ անդր հասանէ , զմանկիկն ընդ իւր ունի սընտան ։
Զայս ասաց կինըն տնօրէն , եւ 'ի տանէն թըռեաւ Հեկտոր
Անդրէն ընդ նոյն պողոտայս ընդ հրապարակսն բարեշէնս ։
Մինչ անցեալ ընդ մեծ քաղաքն եհաս 'ի դրունսն Արեւմըտեան , —
Քանզի'նդ այն էր նըմա 'ի դուրս 'ի դաշտ անդր ելանել , —
Ընթացեալ անդ ընդ առաջ եկն ամուսինըն յոգնօժիտ ,
Դուստրըն մեծանձինն Էտիոնի Անդրոմաքէ ,
Էտիոնի՝ այն որ բնակէր յանտառախիտ Պլակայ ստորոտ
Ի Թեբէ Ստորին Պլակի՝ կիլիկեցւոց արանց իշխան ։
Էր սորա դուստրըն լեալ ըղղընձազէնն Հեկտորի կին ,
Որ դիպաւ նըմա'նդ առաջ , 'ի միասին դայր եւ նաժիշտն
Ըզմանկիկըն մատաղ բարձեալ 'ի գիրկս՝ անխօս աղայ ,
ԶՀեկտորեանըն սիրելի՝ գեղեցկափայլ նըմանն աստեղ .
Հեկտոր ըզնա Սկամանդրիոն ձայնէր , խակ այլք Ոստանիկշեան ,
Զի զոստանն Իլիոն Հեկտոր եւեթ էր որ պահէր ։

Հայեցեալ ընդ մանուկն ժպտեցաւ նա լռելեայն.
Մատուցեալ Անդրոմաքէ կայր առ նովին արտասուաթոր,
Եւ ձեռն 'ի ձեռն իւր խառնեալ՝ կարդաց զանունն եւ խօսեցաւ.
Ո՛վ վէհ, հոգիդ 'ի կորուստ մատնեսցէ զքեզ, եւ ոչ գթաս
Ի տղայ մանկիկդ եւ յիս Թշուառս՝ որ վաղ 'ի քէն մնացից այրի.
Քանզի վաղ ըզքեզ ընդ փոյթ աքայեցիք միաբանք
Դարձ տուեալ սպանցեն, եւ ինձ 'ի քէնդ զրկելոյս
Լաւ է 'ի հող մտանել. զի ոչ եւս այլ իցէ սփոփանս,
Եթէ զամ մի դու 'ի մահ յուղարկեսցիս, այլ ցաւք եւեթ.
Զի ոչ հայր է իմ հանդերձ եւ ոչ մայրենի իմ մեծարոյ.
Քանզի զհայրն իմ կորոյս աստուածազարմն Աքիլլէս,
Եւ քանդեաց ըզքաղաքն մարդաշէն Կիլիկեցւոց
Ըզբարձրադրունեան Թեբէ, եւ զԷետիոն արկ յարեւէն.
Բայց կողոպտեաց ոչ զնա, քանզի խղճեաց զայն 'ի սիրտ իւր,
Այլ այրեաց զնա իւրով ամենապայծառ զինուքն հանդերձ,
Եւ շիրիմ կանգնեաց նմա, եւ տնկեցին շուրջ նոճս զայրիս
Լեռնայինքն Ցասկոտահարանք՝ աստուածորդիքն Դիոսի զօրաւորք.
Իսկ եղբարք էին եօթն հարազատք յապարանս մեր,
Եւ նոքա բոլորեքեան իջին 'ի դժոխս յաւուր միում.
Զի Աքիլլէս ժիր զինուորն ըսպան զնոսա զամենեսեան
Առ յամբաքայլ անդեօքն եւ լուսափայլ ոչխարց հօտիւ.
Իսկ ըզմայրն իմ ըզթագուհին 'ի Թանձրանթառն Պլակեայ ստորոտ,
Իբրեւ այսր էած ըզնա համայն ինչովքն բազմացուածովք,
Ընկալեալ փրկանս անթիւ՝ ազատս անդրէն յիւս արձակեաց,
Եւ 'ի տան հօրն Արտեմիս եհար ըզնա նետաձգութեամբ.
Սակայն դու ինձ ես ինձ հայր, Հեկտոր, եւ մայր մեծամեծար,
Եւ եղբայր հարազատ, եւ ամուսին զուարթադէմ.
Այլ արդ եկ ողորմեա եւ կաց աստէն յամրոցի աստ,
Մի զորդեակդ որբացուսցես եւ Թշուառացուս զկինդ այրի.
Կացո զզօրն առ մոլաթզենին, ուր 'ի քաղաքս են եկք ահեղ,
Եւ զտեղին ուր պարիսպս Ճանապարհ դիւրամատոյց.
Զի այսր երիցս հնիւք հասեալ արկ արարին 'ի փորձ մարտեան,
Ըստանիքն երկոքին եւ մեծանունն Իդոմենէս,
Եւ նոքին իսկ Ատրիդեսք եւ հաստազօրն որդին Տիդեայ.
Կամ զի ոք պատմեաց նոցին՝ գուշակութեամբ Ճարտարագէտ,
Կամ զի միտք նոցա զնոսա խրախուսեցին շահատակել.
Եւ նմա պատասխանի մեծըն Հեկտոր սաղաւարտաձոյլ.
Եւ ինձ իսկ զբեկեալ ամենայն այդ փոյթ է, կին դու,
Այլ պատկառեմ յոյժ 'ի տրովադէացւոց, յերկայնատեռ եւ տրովահեաց՝
Թէ իբրեւ տղայ վատաբար մեկուսեցայց 'ի Ճակատուէն.
Եւ ոչ սիրտ իմ հրամայէ, քանզի ուսայ քաջ լինել միշտ,
Եւ 'ի գլուխ նախահարկաց ըզնոցին տրովադէացւոց կալ եւ կռուել

Ի պարծանս հայրենի մեծի փառաց եւ իմ անձին ։
Քանզի քաջ իսկ խելամուտ եմ ես 'ի միտս իմ եւ յոգիս ,
Եկեսցէ երբեմն օր՝ յոր կորիցէ Իլիոն սուրբ
Եւ Պրիամոս եւ ժողովուրդ կորովատէգն Պրիամու ։
Այլ չառնեմ ես այնպէս փոյթ ընդ յետագայն ցաւոց տրովեանց ,
Ոչ նորին իսկ Հեկաբեայ , ոչ արքային Պրիամոսի ,
Ոչ եղբարցս հարազատաց՝ որ բազմագունդք եւ քաջազօրք
Թաւալագլոր 'ի փոշւոջ անկանիցին 'ի Թշնամեաց ,
Որպէս ընդ քոյդ , յորժամ ոք 'ի պղնձազրահ աքայեցւոց
Վարեսցէ արտասուագին՝ զազատութեանդ հատեալ զաւուրս .
Եւ գուցէ յԱրգոս երթեալ՝ անկցես ստուայն այլում ոստայն ,
Կամ ջուր կրեսցես յաղբերէն Մեսսէիսի կամ Հիպերեայ՝
Ըստիպեալ չարաչար եւ տաղնապեալ 'ի խիստ հարկէն ։
Եւ թերեւս յարտասուելիքդ քոյդ հայեցեալ ասիցէ ոք .
Բա՜ կին նա է դա Հեկտորի՝ զօրագունին 'ի պատերազմ
Ի տրովեանց քաջաձիոց՝ 'ի կռուել անդ զԻլիոնիւ ։
Այսպէս ոք ասասցէ , եւ ցաւք 'ի քեզ նորոգեսցին
Առ անձուկ առն այսպիսում ընդդեմութեան Թափելդ ընկերանաց ։
Այլ ընդ մեռեալս հողակոյտ ծածկեսցէ զիս 'ի կափարուածս ,
Ըզկառաչ քո եւ ըզձեր եւ ըզքարշմանդ չեւ լըսեալ ։
Ասացեալ զայս՝ տարածեաց Հեկտոր անհեղ գիրկս առ որդեակն ,
Եւ մանկիկն յետս 'ի ծոց գեղեցկաձեւ իւրոյ ստնտուին
Ճիչ բարձեալ խոնարհեցաւ՝ 'ի տես սիրուն հօր զարհուրեալ ,
Պակուցեալ 'ի պղնձոյն ու 'ի ձիաւէս զարդամանեկէն ,
Զահաւոր տեսեալ ճօճելն 'ի գագաթանց գըլխանոցին ,
Ընդ որ հայրըն սիրելի եւ մեծարոյն ժըպտեցաւ մայր ։
Եւ անդէն բարձ 'ի գըլխոյն ըզսաղաւարտն անհեղն Հեկտոր ,
Եւ եդեալ զայն 'ի վայր՝ ճաճանչաւէտ եդ 'ի գետնի .
Եւ զմանկիկըն սիրուն ողջագուրեալ ճօճեալ 'ի ձեռսն ,
Յաղօթս եկաց եւ ասէ առ Արամազդ եւ առ այլ դիս .
Արամազդ եւ այլ աստուածք , տուք եւ ըզսա զիմս որդեակ
Լինել , որպէս եւ ես , արժանափառ 'ի տրովացիս ,
Այսպէս հըզօր զօրութեամբ եւ քաջաբար տէր յԻլիոն ։
Եւ իցէ ոք ասասցէ , բազում սա քան զհայրըն արիագոյն ,
Ի մարտէն յորժամ դարձցի եւ արիւնոտ բերցէ կապուտ՝
Սպանեալ զախոյեանն , եւ մայրն 'ի սիրտ իւր խնդասցէ ։
Զայս ասաց եւ ամուսնոյն զորդեակն 'ի ձեռս ետ սիրոյնոյ ,
Որ առեալ ընկալաւ ընդ 'ի գիրկս իւր բուրաստանութ
Արտասուախառնըն խնդ[illegible] . առն յայն տեսեալ խանդաղատեալ՝
Փայփայեաց ձեռօքն ընդ [illegible]աց զանուն իւր եւ ասէ .
Նազելիդ իմ , մի՛ անչափ [illegible]ուդ հարցի քո սիրտ ,
Զի յառաջ քան ըզհր[illegible]ոչ ոք 'ի դժոխս ընկեսցէ զիս .

Իսկ յորհասէն՝ եւ ոչ զոք 'ի մարդկանէ կարծեմ փախչել,
Ոչ ըզվատ եւ ոչ ըզքաջ, յետ մինանգամ 'ի լոյս գալոյ:
Այլ երթեալ քո 'ի տուն՝ քոյոց խնամ տանիջիր գէա,
Ոստայնից եւ իլոյդ, եւ աղախնայցդ տուր հրաման
Ըզգործովք զալ խաբեանց. հոգասցեն այրք 'ի պատերազմ
Որ ծնեալքն են յԻլիոն ամենեքեն, ես մանաւանդ:
Ասաց եւ առ զսաղաւարտըն ձիաձգէ՝ Հեկտորն ահեղ.
Իսկ կինըն սիրոյն եղեալ անդր դիմեաց 'ի տուն,
Ըստէպ ըստէպ յետս հայելով եւ ջերմաանձն հոսեալ արտասուս:
Եւ փութով յապարանս մարդասպանըն Հեկտորի
Ժամանեալ 'ի բարեշինակ՝ եգիտ ըզգասս անդ աղախնայց,
Եւ յարոյց 'ի նոսա յամենեսին կոծ ողբալական:
Եւ ողբան կենդանւոյն զՀեկտոր 'ի տանն ալխարհէն,
Զի չուներն այն անդրէն դառնալ նորա 'ի ճակատուց,
Ճողոպրեալ 'ի կոտորածէ եւ 'ի բազկաց աքայեցւոց:
Եւ ոչ Պարիս յամենայր 'ի բարձրայարկ խուր ապարանին,
Այլ առեալ զանձամբ ըզզէնսն 'ի պղինձ պայծառ ճաճանչաւորս՝
Ընդ սատանըն խոյացաւ խիզախեալ յառաջն ճեպընթացս:
Որպէս ձի սնապատանեակ եւ մսուրամուտ յագ 'ի գարի
Կապակտոր ընթանայ դաւթեալ ընդ դաշտ ոտնատորոփ,
Սովորեալ 'ի լուանալ 'ի գեղասահ գետոյն վտակս,
Խայտալով բարձրաձիգ, եւ բաշք զուսովքն տատանեալ,
Ինքն 'ի գեղ վայելչութեան խրոխտ անձին նազելով սէգ,
Ճեպ 'ի ճապուկ ծունկըն 'ի ծանօթ վարէ զնա վայրս յարոտ ձիոց.
Այսպէս ճեպըն Պրիամեան Պարիս յամրոյն 'ի Պերգամայ
Ի վէն 'ի վայրդ փայլակնազէն իբր արեգակն անցեալ դիմայր
Կայտառելով եւ խաղալով, եւ ճեմքն 'ի ճեպոյն ճախրէին:
Եգիտ անդէն ըզՀեկտոր զդիւցազն եղբայրն 'ի դառնալն անդ
Ի տեղւոյն ուր ըզբանիւք էր ընդ կընոջ խրոխտ եկեալ:
Առ նա նախ բարբառեցաւ Աղեքսանդրոս աստուածանման.
Ո՛վ արդայդ, յայժ արդարեւ խափան լինիմ հապճեպ փութոյդ՝
Յապաղեալ եւ 'ի պատեհ ոչ ժամանեալ քում հրամանիդ:
Եւ նըմա պատասխանի սաղաւարտախրոխտն Հեկտոր, ասէ.
Չիք ով այր խրատընական արդարադատ՝ որ զքոյդ, ո՛վ քաջ,
Ըզմարտից խոտեալ հանդէս անարգանեսցէ, զի հզօր իսկ ես:
Բայց կամակոր մեղկանաս եւ ոչ կամիս յորդորանօք.
Հարկանէ զիս սիրտս ընդ այս, յորժամ լսեմ ըզքեն զրուցով
Ի տրովադեանց՝ որ 'ի բազում վէշս վաստակն կան վասըն քո:
Այլ երթամք, եւ զայդոսիկ ըզկնի ուրեմն յարդարեսցուք միջեւ,
Թէ շնորհէ Արամազդ կանգնել երբեք դիցն յաւերժից
Ըզխրախուսըն բաժակաց ազատ Թակոյկն 'ի յարկս մեր,
Յորժամ վանեսցուք 'ի Տրովադայ զաքայեցիսըն բարձաղէնս:

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՕԹՆԵՐՈՐԴ

8

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հեկտոր եւ Պարիս հասեալ 'ի ճակատն՝ վանեն զՅոյնս։ Հեկտոր խորհրդով եղբօր իւրոյ Հելենոսի ձայն տայ 'ի բանակին Յունաց՝ ելանել իւր ախոյեան քաջագունին 'ի նոսա. նոքա վարանին, այլ կշտամբեալք 'ի Նեստորէ՝ ելանեն ինունք, բայց վիճակաւ ընտրի Այաս Տելամոնեան. մենամարտեալքն 'ի գալ գիշերոյ անջատին։ Յոյնք խորհրդով Նեստորի դուլ տանեն զինուց առ 'ի թաղել զմեռեալսն եւ կառուցանել պատուար եւ պատնէշ զնաւմբարաւն։ Ժողով տրովացւոց 'ի քաղաքին, յորոց գայ քարոզ առ Յոյնս պայմանօք հաշտութեան եւ խնդրելով պարապ 'ի թաղումն մեռելոցն։ Առաջինքն մերժին, երկրորդն շնորհի։ Յոյնք յետ յուղարկելոյ զմեռեալսն ածեն զիւրեամբք պատնէշ եւ պարիսպ, ընդ որ սրտմտի Պոսիդոն ծովակալեան աստուած։ Խրախունք յերկոսեան կողմանսն. նշանք ահաւորք յԱրամազդայ դղրդեն 'ի բաւն։ Նուէրք առ նա, եւ հանգիստ քնոյ։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՕԹՆԵՐՈՐԴ

### ՄԵՆԱՄԱՐՏ ՀԵԿՏՈՐԻ ԵՒ ԷԱՅԱՍ . ԹԱՂՈՒՄՆ ՄԵՌԵԼՈՑ

Զայս ասացեալ՝ ընդ դրունսն ոստեաւ արտաքս Հեկտոր ահեղ,
Եւ ընդ իւր ընդ միահետ խաղաց եղբայրն Աղեքսանդրոս.
Երկոքունցն եռայր ոգին 'ի պատերազմ եւ 'ի գուպար ։
Որպէս աստուած տայ նաւաստեաց ցանկացելոց հողմ աջողակ՝
Մինչ ողորկ թիովք ըզծովըն մրջելով պարտասեցին,
Եւ 'ի խիստ աշխատանանէն վաստակաբեկ լուծցին անդամքն,
Այնպիսի սոքա տրովեանց երեւեցան անձկացելոց ։
Ըսպանին անդ՝ սա զորդին Արէիթու թագաւորին,
ԶՄենեսթիոս ըղբնակեալն յԱռնէ, զոր ծնաւ Արէիթոս
Որմբաւորն՝ 'ի կնոջէն աչաղեղոյ Փիլմեդուսայ.
Եւ Հեկտոր զէիոնեւս հարեալ արգամբըն սայրասուր
Ի յուղանն ընդ պղընձակուռ արտախուրիւն՝ ելոյծ զանդամսն ։
Իսկ Գլաւկոս՝ Հիպպոլոքեայ ձեռն՝ լիկեցւոց արանց իշխանն՝
Եհար ընդ ուսն աշտէիւ զԴեքսիադեանն Իփինոոս
Ի սաստիկ գուպարածին յերագ երկձիան երբ ելանէր.
Ի զուգիցըն գլորեցաւ նա 'ի գետին, լուծան անդամքն ։
Իբրեւ զայն Աթենաս խաժակն եւես աստուածուհին,
Զի յոխորտ ճակատամարտ սատակէին արգիւացիք,
Ի բարձանց Ողիմպեայ խոյացեալ էջ յԻլիոս սուրբ ։
Զայն տեսեալ Ապողոն 'ի Պերգամայ բարձր 'ի դիտէն,
Ընդ առաջ յարեաւ նմա, զի՛նդ յաղթութիւն կամէր տրովեանց ։
Առ կաղնեաւն երկաքին սոքա միմեանց հանդիպեցան ։
Արամազդեան ձեռն Ապողոն առաջ 'ի նա խօսեցաւ նախ.
Զի՞ դու դարձեալ յարուցեալ, դուստրդ մեծին Արամազդայ,



Digitized by Google

Եկիր այսր յՈւլիմպոսէ, եւ ոգի մեծ շարժեաց ըղձեղ·
Դանայեանց միթէ 'ի տալ ըզյաղթութիւն մարտիս զյողդողդ·
Զի քեզ ո՛չ ինչ ընաւ ցաւէ՞ նոց կորուստ տրովազգացւոց :
Այլ թէ ինձ ինչ լուիցես, որ օգտակարն իցէ անշուշտ,
Հանգուսցուք այսօր առ ժամս ըզպատերազմ եւ ըզկռիւ,
Մարտիցեն անդրէն ապա, մինչեւ հասանել գտանիցեն
Ըզվախճանն Իլիոնի, զի այդ թուեցաւ սըրտահաճոյ
Անմահիցդ աստուածուհեաց՝ աւերել զքաղաքս այս հիմն 'ի վեր :
Պատասխանի Աթենաս արար խաժակն աստուածուհին·
Դոյնպէս լիցի, Դիպաձիգդ, եւ ես ինքնին 'ի դոյն խորհուրդ
ՅՈւլիմպեայ եկեալ եկի առ տրովացիսդ եւ աքայեանս :
Այլ ասէ՝ ո՞ւ հնարիցիս աւերել մարտի քաջացըն զուլ :
Կրկնեաց անդրէն Ապոլոն արքայորդին Արամազդայ·
Զգոռութեան գըրգռեմք զոգին ըզՀեկտորի ձիախրոխտին՝
Զայն ումեք տալ 'ի քաջաց դանայեցւոց 'ի մենամարտ,
Մէն մենում ախոյեան եկեալ կալ բուռն 'ի զուպար·
Եւ առ զայրոյթս յանձն առեալ պղընձասրունքն աքայեցիք
Յարուսցեն զոք միայնակ ընդ դիւցազարմըն Հեկտորի :
Զայս ասաց, ոչ Աթենաս ժըխտեաց խաժակն աստուածուհին :
Հելենոս՝ սիրուն որդեակըն Պրիամու՝ եմաց հոգւոյն
Ըզխորհուրդն որ 'ի նոցունց ընտրեցաւ դից 'ի մէջ իւրեանց·
Առ Հեկտոր մատեաւ եկաց, եւ զայս առ նա խօսեցաւ բան·
Հեկտոր՝ որդի Պրիամու՝ զուգահանճար Արամազդայ,
Լինիցիս ինձ ունկընդիր, զի հարազատ եղբայր եմ քո :
Բազմեցո զայլ տրոյացիս եւ զաքայեցիս առ հասարակ,
Եւ դու լեր ձայնատու առ քաջազոյնն աքայեցւոց՝
Դէմ ընդդէմ ախոյեան եկեալ գալ յամեհի մարտ :
Զի քեզ չեւ մահուն օրհաս է եւ վախճան ճակատագրեդ·
Զի այսպէս ինձ լու եղեւ յաւէժակաց դից ինչ շըշունջ :
Ասաց զայս, եւ Հեկտորի լուեալ ըզբանն յոյժ բերկրեցաւ,
Եւ 'ի մէջ անդր անցեալ, արգել ըզգունդըս տրովացւոց՝
Բուռն հարեալ զմիջոյ տիգին, եւ համօրէն նըստան նոքա :
Բազմեցոյց եւ զքաջազէն աքայեցիսն Ագամեմնոն·
Անդուստ եւ Աթենաս եւ Ապոլոն արծաթաղեղն
Եղեն նըստան, հանգունակ հաւուց անգեղց 'ի նմանութիւն,
Ի կաղնոջն անդ բարձու սպարակիր հօրն Արամազդայ,
Զուարճացեալք 'ի մարդիկն, որ տող 'ի տող բազմեալն կուռ,
Վահանօք, սաղաւարտիւք եւ նիզակօք քըստմնածածան :
Որպէս սարսուռ Զեփիւռի սըփռեալ զընդոյ վէտ վէտ ընդ ծով
Յառաջնում աստատակելն, եւ ընդ նովաւ մըթնին անդունդք,
Նոյն շարքն 'ի դաշտս բազմեալն աքայեցւոցն եւ տրովացւոց,
Եւ Հեկտոր յերկոցունց կացեալ 'ի մէջ կողմանց ասէ·

Լուարուք ինձ, արոտավայրեանք եւ քաջազարմ աքայեցիք,
Զի խօսեցայց որ ինչ սիրտս 'ի լանջըս իմ հրամայէ ինձ։
Զըրուանեանըն բարձրագահ ապախտ զերդմունըս մեր արար,
Եւ չարիս ընդ միտ ածեալ նիւթէ կողմանցըս երկոցունց,
Մինչեւ կամ դուք ըզՏրոյա վանեալ կալջիք ըզբարձրամուր,
Կամ այդրէն առ ծովափնայց նաւուքդ ինքնին նըկուն լիջիք։
Սակայն ձեզ բոլոր աքեանցդ աղատորեար են քաջազունք.
Ի դոցունց որոյ հոգին իւր խրախուսէ կռուել ընդ իս,
Հա՛ս եկեսցէ յամենեցունց այսր ախոյեան վեհ Հեկտորի։
Բայց ասեմ, եւ Արամազդ վըկայ լիցի'նդ մեզ եւ ընդ ձեզ.
Եթէ նա սլաքաշեկա հարկանիցէ զիս այրընձով,
Ըզզէնըքըս կողոպտեալ՝ 'ի գոգեալ նաւսն առեալ տարցի,
Բայց տացէ զմարմինս 'ի տուն իմ զի զմեռեալս 'ի հրոյ բաժին
Վիճակեսցեն տրոյացիք եւ ամուսինք տրովադացւոց։
Իսկ թէ ես զինքն ըսպանից եւ Ապողոն տայցէ ինձ փառս,
Ցնա ըզզէնան առեալ կապուտ եւ յԻլիոս տարեալ 'ի սուրբ՝
Կախեցից 'ի տաճար կորովաձիգն Ապողոնի,
Իսկ ըզդին դարձուցից առ նաւատորմըդ գեղատախտ,
Զի զնա յուղարկեսցեն աքայեցիքըն հերապանծք,
Եւ հեղցեն իւր հողաբլուր առ լայնածիրն Հելլեսպոնտիւ,
Զի երբեմն յետամնացն 'ի մարդկանէն ասասցէ ոք
Ի նաւեւն յոգնատախտ լաստիւ ընդ ծովըն կապուտակ.
Այն է դա գերեզման 'ի վաղընջուց վախճանելոյ,
Զոր երբեմն ուրեմն ըսպան պերճըն Հեկտոր դքաջամարտիկ։
Ասասցէ ոք զայս երբեք, եւ մի՛ անունն իմ կորիցէ։
 Զայս ասաց, եւ նոքա լուռ կարկեալ կացին բոլորեքեան.
Ամաչէին հրաժարել, եւ յանձն առնուլ երկընչէին.
Անագան ուրեմն յարեաւ Մենելաւոս, ասէ ցնոսա
Նախատեալ թըշնամանօք, եւ զանձնայքս յոգւոց հանէր.
 Ո՛հ զինեւ, ո՛վ ըսպառնօղքդ, աքայուհիք՝ ոչ աքայեանք,
Բիծ 'ի մեզ աղաքէն չըփեսցի այս՝ քան զծանըր ծանր,
Հեկտորի թէ'նդդէմ ոք այժմ 'ի դանայեանց չելանիցէ։
Այլ դուք ջուր եւ հող լիջիք ամենեքին առ հասարակ
Նըստեալք աստ իւրաքանչիւր այդպէս անարգ չըջելափառք.
Եւ զըմա ես վառեցայց 'ի զէն 'ի զարդ, իսկ յաղթութեան
Ի վերուստ առ աստուածոցն է անմահից սահմանեալ կէտ։
 Բարբառեալ զայս՝ ագանէր զըսպառազէնսըն գեղեցիկ։
Քեզ յայնժամ, Մենելաւէ, դայր երեւէր վախճան կենաց
Ի ձեռըն Հեկտորի, զի զօրագոյն էր կարի յոյժ,
Թէ վաղեալ չարգելուին ըզքեզ արքայք աքայեցւոց։
Եւ նոյն ինքն իսկ Ատրիդէս իշխանապետն Ագամեմնոն
Կալեալ զաջոյ ձեռանէն կարգայ զանուն եւ խօսեցաւ.



Digitized by Google

Խօլիս, Մենելաւէ դիւցազնուանդ, եւ չէին ինչ պէտք
Այդըմ քեզ անմըտութեան, այլ հանդարտեաց՝ թէ եւ յանկամս,
Եւ մի՛ 'նդ հենգս յառներ մըրցել ընդ քան ըզքեզ առն հըզօրի,
Ընդ Հեկտորի Պրիամեան՝ յորմէ եւ այլք իսկ զարհուրին,
Եւ Աքիլլէս ընդ նըմա 'ի գուպարած փառապարգեւ
Սարսափէ պատահել, որ գեր քան զքեզ է ուժգնաձիրս:
Այլ արդ երթ դու 'ի ժամուս՝ նիստ 'ի ջոկեր ընկերակցացդ,
Եւ դըմա յարուսցեն աքայեցիք այլ ախոյեան:
Զի թէպէտ եւ աներկիւղ է եւ անյագ 'ի մըրցութիւն,
Մըտադիւր կարծեմ ըզծունկըսն կըրկնեսցէ, եթէ միայն
Ցամեհի մարտէն զերծցի եւ 'ի դըժնեայ գուպարածէն:
Զայս ասաց, եւ ըզմիտս հարազատին շըրջեաց դիւցազն
Արժանի իւրով խրատուն, եւ նա լըւեալ եղեւ հնազանդ.
Ապա ծառայքն հըրճուալիցք առին ըզզէնսն յուսոց իւրոց:
Իսկ Նեստոր յարգիացիս անդըր յարեաւ եւ զայս ճառեաց.
Ո՛վ աղէտք, սուգ մեծ անշուշտ յաքայաստան հասանէ մարզ,
Գոյժ անշուշտ առցէ սաստիկ եւ ձիակիրթ ծերըն Պելէուս,
Անուանին խորհրդական Միրմիդոնաց ատենախօս,
Որ երբեմն 'ի տան իւրում հարցեալ զիս յոյժ ուրախ լինէր,
Համօրէն արգիացւոց ազգի զարմից արարեալ հայց:
Զորս եթէ արդ սասանեալս 'ի Հեկտորէ լուիցէ 'ի սպառ,
Առ անմահսն ըզձեռըս իւր համբառնայցէ բազում անգամ՝
Զի յանդամոցն ելեալ ոգիքն իջցեն 'ի տունն Դըժոխոց:
Ցանկամ, հայր Արամազդ եւ Աթենաս եւ Ապողոն,
Ցորբունս էի՝ որպէս յորժամ առ սրընթաց Կելադոնիւ
Գումարտ խըմբեալ Պիլացիք ւԱրկադացիք նիզականուէրք՝
Զպարըսպօք Փիայ եւ յափն Յարդանոսի մըղէին մարտ:
Ի նոսին Երեւթալիոն այր դիւցատիպ եւ նահատակ՝
Արկեալ զզէնըս զուսովքըն զարքայքն Արէիթայ,
Ըզմեհին Արէիթու՝ զոր 'ի կոչումն յորջորջանաց
Կափաւոր անուանէին արք եւ կանայք գեղեցկամէջք:
Քանզի ոչ աղեղամբ ուերկարաբուռն կըռուէր տեգաւ,
Այլ ուռամբ երկաթակուռ՝ խորտակէր գունդըս թակակոփ:
Լիկուրգոս ըսպան ըզնա դաւով եւ ոչ թէ քաջութեամբ,
Ցանձկագոյն ուրեք ուղւոջ՝ ուր երկաթին չօգնեաց ինչ լախտ
Հերքել զկորուստն 'ի նմանէ. զի Լիկուրգոս աճապարեալ,
Նիզակին շամփրեալ 'ի տէգ՝ ընկէց ըզնա յերկիր յորսայս,
Եւ ըզզէնսն առ. կողոպուտ, զորս ետ նըմա պղնձին Արէս,
Եւ ապա ինքն ագանէր զնոսա 'ի կռիւս Արեայ մարտից:
Իսկ յորժամ Լիկուրգոս 'ի տան իւրում եկն յալեւոյթ,
Սիրելւոյ պաշտօնէին ետ ըզզէնսն Երեւթալիոյ,
Որ նորա վառեալ զինուք՝ ձայն տայր քաջաց բոլորեցուն:

Եւ նոցա զահի հարեալ եւ ըդդողեալ՝ ոչ ոք իջանէր ․
Սակայն զիս ոգի յանդուգն յանձնապաստան յանձին ամբոխոյժս
Արկ զըրդեաց յայն զուարթարած՝ զամենեցունց ատեանք կըրսերս ,
Եւ մարտեաց ես ընդ նոսին , եւ ես պարծանս ինձ Աթենաս ,
Եւ սաստիկ զայրացեալ այր՝ զհաստատահարուստն եւ զանարգել ,
Զի անտի ոք զխաղաղաստ գընէր երկայն յայս կոյս եւ յայն ։
Տայր ոք ինձ յայն լինել առն , եւ յանդգնեալ ոյժ ալընդակալ ,
Փոյթ ընդ փոյթ կորգակաճօճն յայնժամ Հեկտոր գիւղէր մարտի ։
Իսկ 'ի ձեռն՝ արիադոյնքն անդամ 'ի բնաւ աքայեցիս՝
Եւ ոչ այնք յորդորամիտ զէմ Հեկտորի զնալ խիզախեն ։
Զայս բամբասեաց ծերունին , եւ ինն երեակ յարեան անդէն ․
Ցոտն եկաց յոյժ կանխադոյն արանց արքայն Ագամեմնոն ,
Ընկեր յոտն եկաց Տիդեանն հարըստաքուալն Դիոմեդ ,
Ի վերայ սոցին Այաքս 'ի սաստկանդամ վառեալք կորով ,
Ընդ սոսին Իդոմենեւս եւ զինակիրն Իդոմենի
Մերիոնէս՝ զուգակալն մարդախողխողն Ենիալեայ ․
Ի նոսին Եւրիպիլոս՝ Եւեմոնի պայծառ որդին ,
Ել եւ Թոաս Անդրեմոնեան եւ Ոդիսեւսն աստուածազարմ ․
Տենչայքն ամենեքին սոքա 'ի կռիւ վեհն Հեկտորի ։
Առ սոսա դարձեալ ասպետըն Գերենեան ասէ Նեստոր ․
Արդ արկցի վիճակ ընդ ձեզ ամենեսին՝ ում եւ ելցէ ,
Զի եղիցի նա յօժան քաջաբարձից աքայեցւոց ,
Եւ յոգի իւր ցընծասցէ՝ թէ ճողոպրեալ զերծանիցի
Ցամեհի կռուոյն ապրեալ եւ 'ի դըժնեայ մըրցամարտէն ։
Այսպէս զայս , մէն մի նոքա նըշանագրեալ իւրեանց վիճակս՝
Եւ արկին 'ի գըլխանոց Ագամեմնոն Ատրիդեան ։
Իսկ ամբոխըն աղաղակէր եւ համբառնայր ձեռս առ աստուածս ,
Եւ այսպէս ոք ասէր , ակն 'ի յանդորր երկինս ալէշ ․
Արամազդ հայր , Այասայ կամ տուր որդւոյն Տիդեայ զվիճակն ,
Եւ կամ ինքեան բազմադանձ Միկենացւոց թագաւորին ։
Զայս ասէին , եւ շարժէր Նեստոր ասպետըն Գերենեան ․
Ել վիճակ 'ի կորդակէն , զոր եւ ինքեանք կամէին իսկ ,
Այասայն , եւ քարոզն ածեալ յամբոխն ընդ ամենայն՝
Եցոյց զայն՝ յաջմէ սկըսեալ՝ բոլոր քաջացն աքայեցւոց ․
Որոց ոչ եղեալ ծանօթ՝ իւրաքանչիւր տային հրաժեշտ ։
Իսկ իբրեւ յայն ոք եհաս ընդ ամենայն շըրջեալ յամբոխն ,
Որ գըծեալ զայն ընկէց 'ի սաղաւարտն՝ Այասըն պայծառ ,
Ձըգեաց ըղձեան , եւ նա մերձ եղեալ մատոյց եդ 'ի ձեռս ․
Եւ տեսեալ ըզվիճակին նա նիշ ծանեաւ , խընդաց հոգւով ,
Եւ առ ոտս իւր ընկեցեալ զայն 'ի գետնին՝ ամբարձ ըղձայն ․
Ի՛մ է իմ վիճակն եւ ես ցընծամ յոգիս , ո՜վ սիրելիք ,
Զի ակն ունիմ ըզՀեկտոր յաղթահարել ըզդիւցազարմ ։

Այլ եկայք, մինչեւ զանօթս ըզգեցայց ես պատերազմի,
Դուք յաղօթս առ Զրուանեանն արքայ կացէք առ Արամազդ
Լռելեայն յանձինս ձեր, զի մի լուիցեն տրովադացիք.
Կամ թէ նա՛ եւ յայտնապէս, զի չերկընչիմք ինչ յումեքէ:
Զի ոչ բռնանի ակամայ վանեսցէ զիս ոք կամակար,
Այլ եւ ոչ իսկ հընարիւք. քանզի յուսամ թէ ոչ այնպէս
Անհըմուտ իցեմ ծնեալ ոք եւ սնեալ 'ի Սալամիս:
Ասաց, կային նոքա յաղօթս առ Զրուանեան պետն Արամազդ,
Եւ այսպէս ոք ասէր՝ ակն 'ի յանդորր երկինս ալիշ.
Արամազդ հայր, իշխեցող յԻդայ, սեպուհ եւ մեծապետ,
Տուր Էասայ զյաղթութիւն եւ ըղձըքեղ տանել պարծանս.
Իսկ թէ սիրես եւ զՀեկտոր եւ զնորմանէն ունիս խնամ,
Զօրութիւն երկոցուն նոցա եւ փառք տուր հաւասար:
Ասացին զայդ, եւ Էաս սպառազինէր 'ի պղնձի փայլուն:
Իսկ յորժամ համօրէն զամենայն զէնս արկու զանձամբ,
Դիմէր այնուհետեւ, որպէս Արէս սոսկալի գնայ՝
Դըրդեալ 'ի պատերազմ առ գումարտակ արանց ճակատ,
Զորս ոգեսանիւ հեռոյն թափով արկ Զրուանեանն 'ի գուպար.
Այսպիսի ահեղն Էաս խաղաց պատուարն աքայեցւոց՝
Ժըպտելով ահագնակերպ զդէմսն, եւ ոտք իւր 'ի ներքոյ
Մեծաքայլ ընթանային, ճօճէր նիզակ երկայնաստուեր:
Ցոր հայեցեալ՝ եւ ինքեանք արգիւացիք խնդային յոյժ.
Իսկ տրովեանց ամենեցուն սաստիկ դողումն էառ զանդամս,
Եւ նորին իսկ Հեկտորի սիրտն թընդէր 'ի լանջըս իւր.
Այլ չըգոյր այնուհետեւ լինել զանգէտ եւ կամ դառնալ
Մըտանել յամբոխ զօրուն, զի ձայնատուր էր լեալ 'ի գոռ:
Իսկ Էաս հուպ մատեաւ՝ բարձեալ զասպարըն բըրգաձեւ,
Ըղպղընձին՝ զեօթընկաշեան, զոր Տիքիոս շինեաց նըմա
Գերագոյնն 'ի մոկահանս, որ բնակութեան տունն 'ի Հիլէ,
Նա գործեաց նըմա զասպարն ըղներկարէն՝ զեօթընկաշեան
Ցարջառոց 'ի պարարտից, իսկ ութերորդ պատեաց պղնձի:
Զայն Էաս Տելամոնեան կալեալ կըրծիցն իւր առաջի՝
Մօտագոյն կաց 'ի Հեկտոր եւ սպառնալեօք բարբառեցաւ.
Արդ միայն ընդ միայն հաստատութեամբ ուսցիս, Հեկտոր,
Որպիսի՛ առաջախումբ դըտանիցին 'ի դանայեանս
Եւս եւ յետ ռազմաբեկ առիւծասիրտն Աքիլլէսի:
Իսկ արդ նա 'ի մակոյկսն կըրկնակորս եւ ծովաչուս
Նըստեալ կայ քինացեալ ընդ Ագամեմնի ազգաց հովիւն.
Եմք եւ մեք այնպիսիք՝ որ սոսկել ընդ քեզ մարթեմք,
Եւ բազումք. այլ ըսկիզըն արա մարտի պատերազմիդ:
Եւ նըմա պատասխանի մեծըն Հեկտոր սաղաւարտաճօճ.
Մաղթեալն Էաս Տելամոնեան՝ ժողովըրդոց իշխեցող,

Մի մատչիր ընդ իս 'ի փորձ իբր ընդ մանկան ինչ տղայականի ,
Կամ կընոջ՝ որ ըզհանդէս ինչ ոչ գիտէ զպատերազմաց :
Գիտեմ ես հըմտագոյն ըզմարտակռիւս և ըզնախճիրս ,
Գիտեմ յաջ , գիտեմ յահեակ տանել բերել զաղաղուն սեկ ,
Որ և ինձ իսկ ուժընդակ է զօրութիւն 'ի բըռնամարտ :
Գիտեմ ևս յարձակել յարշաւասոյր ձիոցն 'ի խաղմ ,
Գիտեմ և կաքաւել Արեայ՝ 'ի կռիւ ետեղական :
Բայց ըզքեզ զայդպիսիդ՝ չառնում ինչ յանձըն հարկանել
Գաղտադաւս նըկատելով , այլ ակն յայտնի լեալ գամագիտ :
Ասաց , և ճօճեալ ընկէց զաշտէն երկայնաստուեր ,
Եւ եհար զԷասայ վահանն ահեղ զեօթընկաշեան
Ի պղինձ վերինն երեսաց , որ ութերորդն էր ըզնովաւ .
Եւ սայրըն կարծր ընդ վեցեակս հատեալ էանց թափ ընդ պատուածս ,
Այլ ընկըրկեալ կասեցաւ յարջառամորթըն յեօթներորդ :
Ապա զարգն երկայնաստուեր ձըգեաց Էաս դիւցազնածնունդ ,
Եւ եհար ըզՊրիամեանն յասպար նորուն բոլորածիր :
Փայլակիր մըխուածըն հաստ էլ ընդ վահանըն թափանցանց ,
Եւ ահեղն երթեալ մըխեցաւ 'ի լանջապանն ամենարուեստ ,
Եւ եհերձ ընդ սրնակուշան 'ի հանդիպոյ զվարապանակն .
Իսկ նորա կըքեալ 'ի կոր՝ ճողոպրեցաւ սեաւ օրհասէն :
Երկոցուն միանգամայն կորզեալ ձեռօք զերկայն նիզակս ,
Անկան յերեարս՝ առիւծուց շաղղակերաց հանգունատիպք ,
Կամ կընճիթըն վարազուց՝ ամեհագոյն սատականդամից :
Պրիամեանըն զեղարդեամբըն յայնժամ եհար զմէջ վահանին ,
Ոչ զըծեաց զամս 'ի պըղինձն , այլ սայր նորա զալարեցաւ :
Իսկ Էաս ոստուցեալ խոցեաց զասպարն , և մինչ 'ի սպառ
Մըտեալ ահեղն եհար ըզնա 'ի յարձակել և զալ իւրում ,
Եւ զուլամըն անցեալ ցըռեաց և ցայտեցաւ արիւնըն թուխ :
Սակայն ոչ 'ի մըրցելոյն եկաց Հեկտոր կորդակախորոխ ,
Այլ յետս յետըս վերջանեալ՝ քար մի եբարձ ըստուար ձեռամբն ,
Որ անկեալ կայր 'ի դաշտին , սեաւ՝ խորտուբորտ և մեծայաղթ ,
Եւ ընկէց զայն յԷասայ վահանն ահեղ յեօթընկաշեան
Ի պորտ անդր 'ի կըմբեայն . և զօղանջեաց պըղինձն ուժգին :
Յետ նորա մեծագոյն իմն այլ խըլեալ Էասայ վէմ ,
Պըտուտակեալ արձակեաց՝ անհուն ուժով մըղեալ ըզնա ,
Մինչ զի ջաղխեաց և զասպարն՝ երկանաքար բախեալ վիմովն ,
Եւ զսիրուն ծունկըն լըքոյց , և նա յորսայս անկաւ տապաստ
Ի վահանէն հարուածեալ . բայց Ապոլոն կանգնեաց անդրէն .
Եւ ահա սուր անգէն հանեալ՝ մօտաւոր զերեար խոցոտէին ,
Արամազդայ և մարդկան եթէ հրեշտակք չէին հասեալ ,
Նուիրակապետք , մին տրովեանց , միւսն աքայեանց զինազգեստից ,
Երկոքեան խոհեմամիտք , Տալթիբիոս և Իդէոս .

Այլ 'ի մէջ երկոցուն կալեալ ըղջուպըն՝ խօսեցաւ
Նուիրակն Իդէոս, խորհրդապէտն իմաստակիր ·
Մի՛ եւս այլ, սիրուն որդեակք, պատերազմեալ ոգորեցէք,
Զի սիրէ զձեզ Արամազդ ամպրոպապէտըն զերկոսեանդ,
Երկոքին պատերազմօղք էք եւ գիտեմք ամենեքին ·
Արդ հասեալ կայ եւ գիշեր, լաւ է անսալ եւ գիշերոյ :
Պատասխանի տուեալ նմա Տելամոնեանն Էաս ասէ ·
Իդէոս, Հեկտորի հրամայեցէք ըզդոյն խօսել,
Զի նա ինքն ետ ձայն քաջաց բոլորեցուն 'ի մենամարտ ·
Թող յառաջէ, եւ ես քաջ հըպատակեմ որպէս եւ նայն :
Ետ նըմա պատասխանի սաղաւարտաձօձըն մեծն Հեկտոր ·
Քանզի քեզ, Էաս, աստուած ետ յաղթ հասակ եւ զօրութիւն
Եւ հանճար, եւ բռնագոյն քան զաքայեանս ես նիզակաւ,
Այժմ այսօր 'ի կռուոյս եւ մըրցանաց դադարեսցուք,
Եւ ապա դարձեալ անդրէն մաքառեսցուք 'ի դուպարած,
Մինչեւ աստուած ընտրեսցէ 'նդ մեզ, շնորհեալ միում ըզյաղթութիւն :
Արդ հասեալ կայ եւ գիշեր, եւ գիշերոյ լաւ է անսալ,
Զի եւ դու զուարթացուսցես ըզբնաւսն 'ի նաւս աքայեցիս,
Մանաւանդ զընկերըս քո եւ զսիրելիսն որ ենն ընդ քեզ ·
Ընդ ոստանն եւ ես ընդ մեծ՝ Թագաւորին Պրիամոսի
Զտրովկանս ուրախ արարից եւ զտրովուհիսն երկայնատեաս,
Որ յաղերս վասն իմ մըտցեն յաստուածեղէնն հանդիսարան :
Ե՛կ արդ ընծայս երկոքին միմեանց շըքեղըս մատուսցուք,
Զի այսպէս ոք ասասցէ յաքայեցւոց եւ 'ի տրովկանց ·
Ի հենգնոջ կացեալ սոցա փուպարեցան յոգեհաշ հեռ,
Եւ ապա 'ի սէր 'ի հաշտ միաբանեալ 'ի բաց կացին :
Զայս այսպէս բարբառեալ՝ ետ ըղսուսերն արծաթազամ,
Մատուցեալ պատեանիւքն եւ փոկակապ ընտիր զօտեաւն ·
Իսկ Էաս ետ ըզկամարն երեւելի յորդան կարմիր :
Եւ մեկնեալ երկոցուն, աքայեցւոց առ գնայր 'ի գունդ,
Նա յամբոխն երթայր տրովկանց, որ խընդալից ուրախ եղեն
Իբրեւ տեսին կենդանի եւ ողջանդամ եկեալ 'ի դուրս
Ի ցասմանէն Էասայ եւ յանմատոյցն ապրեալ ձեռաց ·
Եւ յոստան անդր ածին՝ որք 'ի կենացն էին անյոյսք :
Իսկ 'ի միւս կուսէ զԷաս զյաղթանակաւըն զուարճացեալ՝
Բարձաղէն աքայեցիք տարան առ վեհն Ագամեմնոնի :
Որ յորժամ անդր 'ի խորանսն Ատրիդեսի եղեն ժաման,
Եղեն արջառ մի նոցունց Ագամեմնոն արանց արքայն,
Արու՝ հինգեմեան, զոհ Զըրուանեան գերագօրին :
Զոր մորթեալ եւ հանդերձեալ՝ պատառեցին ողջոյն յօշ յօշ,
Եւ մանրեալ հըմտաբար եւ 'ի շամփուրսն հարըստեալ՝
Ի խորովս արկեն ուշիւ, եւ զամենայն առին 'ի բաց :



Digitized by Google

Ի գործոյն երբեւ հանգեան եւ ըզխրախճանսն կազմեցին ,
Ճաշեցան մինչ ոչ եւս այլ նոյնչափ խորտկաց կարօտէր սիրտ ։
Եւ զԱյաս մեծամեծար պատուեաց Թիկնամսօքըն յաւերժիւք
Դիւցազն Ատրիդէս՝ Ագամեմնոն ամենիշխան ։
Իսկ յորժամ զկերակրոց եւ զըմպելեաց հանին փափաք ,
Ալեւորն յառաջ քան զայլս ըսկսեալն արար հիւսել խորհուրդ ,
Նեստոր՝ որ եւ կանխաւ իմաստ նորա Թըւեցաւ քաջ ։
Ընդ բարին կամեցեալ նոցա՝ ճառեաց յատենի անդ ·
Ատրիդէս , եւ համօրէն աքայեանց դուք իշխանազունք ,
Յոլովք մեռան աստաղքէն աքայեցիք գիսակաւորք ,
Զորոց այժմ ըղԹուխ արեանցն եհեղ Արէս սուր զճաղապախս
Զգեղահոս Սկամանդրիւ , եւ 'ի դըժոխս ոգիքն իջին ։
Արդ քեզ պարտ է դու՛ ընդ այգն անձել մարտին աքայեցւոց ,
Եւ մեր ժողովեալ՝ կրեսցուք սայլիւք այսր ըզմեռեալս
Եզամբք եւ ջորւովք , եւ հրոյ զնոսա տացուք ճարակ
Խուն մ' 'ի նաւացն 'ի բացէ · զի զոսկերսն այր իւրաքանչիւր
Առ որդիսն 'ի տուն տարցի , յորժամ դարձցուք հարցն 'ի գաւառ ·
Եւ զամբան մի ամբարձցուք հասարակաց ըզխարուկաւն
Հեղեալ պեղեալ 'ի դաշտէն · եւ առ նովաւ շինեսցուք շուտ
Աշտարակս բարձրամուրս , 'ի մարտկոց մեզ եւ նաւեկներոյս ·
Եւ դըրունս 'ի նոսին հաստատակառոյցս կանգնեսցուք ,
Զի 'նդ նոսին լինիցի ձիավարուն մեզ ճանապարհ ·
Եւ խոր իմն արտաքոյ հատցուք պարիսպէն փոս մօտաւոր ,
Զի պատեալ շուրջանակի՝ խափանեսցէ զձիս եւ զամբոխն ,
Եւ մի՛ դրոհեալ խուժեսցէ յոխորտալիԹեաց տրովայեցւոց խաղմ ։
Ասաց , հաճոյ Թուեցաւ Թագաւորացն ամենեցուն ։
Եւ տրովեանց ժողով լինէր բարձր 'ի դըղեակն Իլիոնի ,
Ահաւոր՝ յաղմկադղորդ , մերձ առ դըրունսն Պրիամու ։
Անտենովր իմաստուն խօսել կալաւ անդ ընդ նոսին ·
Լըւարուք ինձ տրովայեցիք , դարդանացիք եւ օգնականք ,
Զի խօսեցայց զոր հոգիս 'ի լանջըս իմ ինձ Թելադրէ ։
Օն եկայք , զՀելէնէ զարգիացին եւ զգոյսն ընդ իւր
Տացուք տանել Ատրիդեանց · զի այժմ անցեալ զանխաբ երդմամբք՝
Ուխտադրուժք պատերազմիմք , յորմէ եւ ակն ինչ ոչ ունիմ
Թէ լիցի մեզ ինչ շահ՝ մինչ չեւ է մեր կատարեալ զայդ ։
Նորա զայս ասացեալ եւ բազմեցաւ · յարեաւ անդէն
Դիւցազն Աղեքսանդրոս՝ այրն Հելէնեայ վարսագեղին ,
Որ նըմին պատասխանի զերագաԹաւիչ խօսեցաւ բանս ·
Անտենովր , ոչ սիրելիս ինչ զայդպիսիկ ասես դու ինձ ·
Գիտես այլ եւըս քան զայդ իմանալ բան ինչ օգտագոյն ։
Իսկ Թէ զայդ հաւաստեաւ եւ մըտադիւր բարբառեցար ,
Ապա դիքն ուրեմն ինքնին 'ի քէն ըզխելըդ կորուսին ։

Այլ արդ եւ խօսեցայց առ քաջաձի տրովադացիսդ.
Ցայս յանդիման վըճիռ առեալ, զկինն ես ոչ դարձուցից.
Իսկ ըզգոյսն, որ ինչ 'ի յարկըս մեր ածեալ իմ յԱրգոսէ,
Կամիմ տալ զամենայն, եւ յաւելուլ այլ եւս ընդունս:
Եւ սորա զայս ասացեալ՝ դարձաւ նըստաւ, յարեաւ անդէն
Դարդանեանըն Պրիամոս՝ խորհրդագլխածն աստուածիմաստ,
Որ նոցա բարեմտաբար ատենախօս եղեալ ասէ.
Ունկըն դիք ինձ տրովացիք, դարդանեանք դուք եւ սատարք,
Զի զոր հոգիս հրամայէ 'ի լանջս իմ ինձ՝ բարբառեցայց:
Երթայք այժմ ընդ քաղաքս՝ որպէս յառաջին՝ ընթրիս առէք,
Դիք 'ի միտ զպահպանութիւն եւ հըսկեցէք ամենեքեան:
Իդէոս ընդ առաւօտն 'ի գոգաւորսն երթիցէ նաւս,
Պատմել Ատրեդեանց՝ Ագամեմնոնի եւ Մենելայ՝
Ըզբանն Աղեքսանդրի՝ յորոյ աղագս շարժեցաւ մարտս:
Յաւելուլ ասել եւ զայս բան հանճարեղ՝ թէ կամիցին,
Դադարել 'ի գոռ ռազմէս, մինչեւ այրեմք ըզդիակունս.
Եւ ապա միւսանգամ տացուք ճակատ պատերազմաւ,
Մինչ մեկնեսցէ զմեզ աստուած եւ զյաղթանակն ումեք տացէ:
Զայս ասաց, եւ նոքա յոյժ լըւեալ հնազանդ եղեն նըմա.
Եւ ապա 'ստ գընդի գընդի առին ընթրիս 'ի ճամբարին:
Իսկ ընդ այգն Իդէոս յարեաւ գընաց 'ի գոգեալ նաւսն,
Եւ եգիտ 'ի խորհրդեան զդանայեցիս՝ զԱրեայ մանկունս՝
Ի խելս անդ հոլոնեալ լառաստափայտին Ագամեմնոնի.
Եւ կացեալ յատենին բարբառեցաւ խօսուն քարոզն.
Ատրիդայք, եւ դուք հանուր աքայեցւոց ազատատեարք,
Հրաման ետ Պրիամոս եւ այլ աւագ տրովադացիք
Պատմել, եթէ հեշտ եւ բաղձալի թըւեսցի ձեզ,
Ըզբանն Աղեքսանդրի՝ յորոյ պատճառս գըրգռեցաւ խաղս.
Ըստացուածս՝ որ միանգամ գողեալ նաւուքն Աղեքսանդրոս
Ի Տրոյա բարձեալ եբեր, — ո՜ տայր թէ գնայր նախ 'ի կորուստ, —
Զամենայն տալ կամի, եւ այլ ընդունս եւս յաւելուլ.
Իսկ ըզբամբիշն հարսնացեալ մեծափառին Մենելաւի՝
Չառնու յանձըն տալ 'ի դուրս, թէպէտ եւ սաստիկ խրատեն տրովադեանք:
Այլ եւ զայս պատուէր ետուն ասել ձեզ բան, թէ հաճեսջիք,
Դադարել 'ի գոռ կըռուոյդ մինչեւ զմեռեալըն հրոյ տացուք,
Եւ ապա դարձեալ անդըրէն եկցուք 'ի մարտ պատերազմի,
Մինչ մեկնեսցէ զմեզ աստուած եւ զյաղթութիւնն ումեք տացէ:
Զայս ասաց, եւ լուռ անմռունչ կարկեալ կացին ամենեքեան.
Ապա հուսկ ուրեմն ասէ Դիոմեդէս ահեղագոռ.
Մի ոք արդ զըստացուածսն ընդունիցի յԱղեքսանդրէ,
Եւ մի զհեղինէն. մանկան անգամ յայտ է տղայոյ,
Զի վախճան մահու հասեալ կայ եւ առ կեանս տրովադացւոց:

Զայս ասաց, եւ ձայն առէն աղաւնեաց որդիք համուռ,
Ընդ իմաստն ըղջանչացեալք Դիոմեդեայ ձիահրման:
Եւ առէ յայնժամ արքայն Ագամեմնոն առ Իդէոս.
Իդէոս, դու քեզէն զաքայեցւոց լսես պատգամ
Զոր տան քեզ պատասխանի, հաճոյ եւ ինձ իսկ թուի այն:
Իսկ զդիականցն այրելոյ չնախանձեմ ընդդէմ, չեմ ինչ յուրաստ.
Զի մարմնոց մեռելոցն չէ եւ չէ ժըլատութիւն՝
Յետ մահուանն վախճանելոց վաղվաղ հրով հանդուցանել:
Եւ գիտասցէ զուխտս Արամազդ՝ Հերայի այրն ահագնագոռ:
Ասացեալ՝ ամբարձ ’ի վեր ըղջաւազանն առ գլխն հանուր,
Եւ Իդէոս յԻլիոն դարձաւ անդրէն ’ի Նաւաքրականն:
Բազմեալ կային յերասանէն Տրովադացիք եւ Դարդանեանք
Ի ժողով միահամուռ՝ ակն ’ի դարձուած Իդէոսի,
Որ եկն՝ եմուտ եւ զպատգամսն յառաջ կացեալ ետ յատենին:
Եւ նոքա կազմեալ անդէն պատրաստէին առ երկոսեան,
Կէսք ’ի կրել ըղդիականունս, եւ այլք ’ի գործ մայրեւորի:
Անդուստ եւ աքայեանք ’ի գեղապատաս ձեղեալ նաւաց,
Որ ’ի կրել ըղմարմինսն, եւ որ ’ի գործ մայրեւորին:
Արեգակն այն ինչ ծագեալ՝ լինէր ’ի դաշտս միջամուխ,
Ելեալ ’ի հեղասահ յանդընդախոր Ովկիանէն
Ի վեր յերկինըս ձեմեալ. եւ գիւղէին նոքա միմեանց:
Դըժուարաւ էր անդանօր ճանաչել զայր իւրաքանչիւր.
Այլ ’ի ջուր լըւացեալ յարիւնոտ աղաժուժէն,
Եւ հեղմամբ աղբերահոս ջերմ արտասուօք բարձին ’ի սայլս:
Սակայն մեծըն Պրիամ չըտայր նոցա թոյլ աշխարել.
Դիզէին զդիսն ’ի խարոյկ նոքա լըռիկ սրտահառաչք,
Եւ այրեալ ’ի հրատէն՝ դարձան գնացին յԻլիոն սուրբ:
Օրինակ ըզնոյն անդուստ եւ բարձաղէն աքայեցիք
Ըզմեռեալսն ’ի խարոյկ սրտախոցեալք դիզանէին,
Եւ հրալըցեալ արարեալ՝ դարձան ’ի նաւսն գոգաձեւս:
Իսկ մինչ չեւ էր վաղորդայն, այլ գիշերի աղօտածագ,
Յայնժամ յարեաւ զնտրուկամ՝ աքայեցւոց ընտրեալ ջոկատ,
Եւ զնովաւ գամբարան մի ամբարձին հասարակաց
Հեղեալ պեղեալ ’ի դաշտէն, եւ կառուցին առ նոր պարիսպ
Եւ բըրգունըս բարձրաբերձ՝ յանձանց մարդկաց եւ նաւիններոյն:
Եւ դըրունս ’ի նոսա հաստահեղոյս շինեցին՝
Զի լինիցի նոցա՝ ընդ այնըս ճանապարհ ձիավարուն.
Եւ խոր իմն արտաքուստ կուտէ հատին առ նովաւ փոս
Լայնալիր եւ մեծապաց, եւ կանգնեցին ցիցս ’ի նմա:
Այսպէս յայդ վաստակէին աքայեցիքըն հերադանծք: —
Իսկ աստուածք նկուամբ առեալ առ փայլակողն Արամազդայ
Սըխրանեայքն ընդ մեծ գործ պատենազէն աքայեցւոց,

Ցորս արար խօսից ընկերըն Գաւզոն երկրապատան .
Արամանեակ հայր, եւ կայք որք մանկացու յերկիր անդուս
Որ յայսմհետէ անմահից պատանեայէ զմիտս իւր եւ զխորհուրդս :
Ո՞չ տեսանես՝ զի դարձեալ աքայեցիքըն վարատեալք
Կանգնեցին զնաւօք պարիսպ, եւ ըզնովաւ փորեցին փոս,
Եւ ոչ դէց ըզդահամանմ երեւելիս հանին զոհից :
Եւ սորա փառքն եղիցին մինչեւ ցոր վայր սփռի արեւ,
Եւ մոռասցին արասցեն զոր Ապողոն Փիւբոսն եւ ես
Դիւցազին Լաւմեդոնի աշխատ եղաք շինել զքաղաք :
Ամպրոպայինն Արամազդ ծանրացասութեամբ ասէ առ նա .
Եհ՛, մեծազօրըդ գետնադըղորդ, զի՞նչ խօսեցար :
Այլ որք Թերեւս յաստուածոց՝ 'ի խորհրդոյդ զանգիտեսցէ,
Որ ձեռօք եւ հօգւով տկարագոյն իցէ քան զքեզ .
Իսկ քո փառքդ եղիցին մինչեւ ցոր վայր սփռի արեւ :
Այլ աղէ, երբեւ անդրէն զխաւարակեղ աքայեցիք
Չուեսցեն նաւատորմիւն 'ի հայրցն աշխարհ 'ի սիրելի,
Պատառեալ ըզպարիսպդ բովանդակ հոսեա 'ի ծով,
Հաւակ ուրեմն ըզմեծ ծովափն հեռաւորայս Թաղեա յաւազ,
Զի եւ մեծըդ սըրբաշրջանչ բարձցի պարիսպ աքայեցւոց :
Զայսոսիկ ընդ միմեանս կաճառէին այսպէս սոքա : —
Արեգակն եմուտ, եւ գործ աքայեցւոցն եղեալ էր յանդ .
Զենուին ըստ վըրանս վըրանս արջառս եւ ընթրէին :
Եւ քաշոնք 'ի Լեմնոսէ հասեալ կային անդ գինեբերք
Յովնաթիւք, զորս առաքեալ էր յասոնեանն Եւնէոսի,
Զոր ծընաւ Հիփսիպիլէ 'ի Յասոնէ հովուէն ազանց :
Թող զայն՝ ուրոյն Ատրեւեանցն Ագամեմնոնի եւ Մենելայոյ
Տըւեալ էր յասոնեանն ածել գինի հազար մի մար :
Անտի գնէին ըմպելիս աքայեցիքըն գեղավարսք,
Պըղընձոյ փոխան ոմանք, եւ այլք ընդ ջինջ փայլ երկաթոյ,՝
Իսկ կէսք ընդ մորթոց, եւ կէսք նոյնին իսկ արջառովք,
Եւ այլք ոմանք ընդ գերեաց, եւ կազմէին զըւարթ խընճոյս :
Եւ ապա զգիշերն 'ի գլուխ աքայեցիքըն հերապանծք
Գործէին խրախ, եւ տրովեանք, եւս եւ սատարք 'ի քաղաքին :
Իսկ նոցա զգօնն Արամազդ չարիս նիւթայր ըզգիշերն 'ի բուն
Սոսկալի որոտմամբք, եւ նա զնոսին ահ դալկագոյն .
Հեղուին 'ի բաժակացն յերկիր գինի, եւ չիշխէր ոք
Ըմպել նախ՝ մինչ չեւ նուիրեալ առ Զըրուանեանն ահեղազօր :
Եւ ապա ննջեցին եւ ընկալան զքընոյն պարգեւ :

482

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Արամազդ ատենաբանեալ գից ատենիւ՝ չխառնել ընդ. 'ի պատերազմն՝ երթայ իջանէ յԻդա լեռան 'ի զննել մարտին, որ նախ անձեռ կայ. բայց նորա բարձեալ 'ի լուծս կշռոց զբախտ կողմանցն երկոցունց, եւ որոտեալ զօրաւոր զօրավարացն՝ շանթաձիգ զարհուրեցուցանէ զՅոյնս. յորոց 'ի վտանգն հայեցեալ Հերա եւ Աթենաս եւ ելեալ յօգնութիւն նոցա, 'ի հրամանէ Արամազդայ դառնան յետս: Ատեան գից, կշտամբանք Արամազդայ առ Հերա: Ի մուտս գիշերոյ դադարէ մարտն կրճատեալ. Հեկտորի հրամանաւ լուցանեն խարոյկս 'ի տունս քաղաքին եւ հսկեն 'ի պահ ծերք եւ երիտասարդք. եւ զօրքն եւս խարոյկս արկեալ 'ի դաշտին՝ հանեն զգիշերն 'ի խրախճանս ուրախացեալք՝ մի գուցէ գիշերայն փախիցեն Յոյնք 'ի ձեռաց իւրեանց:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՈՒԹԵՐՈՐԴ

### ԿԻՍԱՏ ՄԱՐՏ

Արշալուսոյն քրքմազգեստ տիեզերաց սփռեալէր յոլորտս,
Եւ ժողովեաց Արամազդ փայլակնազուարճ ըզդիցն ատեան
Անդր 'ի գլուխ 'ի բարձրածայր սարաւանդական Ողիմպոսի:
Նա 'նոցա ճառ արկանէր, համօրէն դիք դընէին միտ.
Ունկն ինձ մատուցէք, դիք ամենայն եւ դիցանոյշք,
Զի խօսեցայց զոր 'ի լանջս իմ հոգիս յորդորէ զիս:
Մի ոք արդ յաստուածոց, եթէ յէգաց եւ թէ յարուաց,
Հնարեսցի խզզել զպատուէրս. այլ միաձայն հաւանութեամբ
Զնոյն յիս առէք, զի վաղվաղային գործոյս ժամանն եղեց յաւարտեալ:
Իսկ զոր 'ի դից ոք առնից ժըլատել 'ի կամս ինչ ինքնօրէն,
Դիմել երթալ յօգնութիւն տրովադացւոց կամ աքայեանց,
Հարուածեալ 'նշաւակ դարձցի այսրէն 'նա յՈղիմպոս.
Կամ բուռն հարեալ ընկեցից 'ի Տարտարոսն խաւարչուտ,
Քաջ 'ի բաց, ուր խորխորատ է յանդընդոց ստորնադարանեաս,
Ուր դըրունք են երկաթիք, եւ սեամք եւ դըրանդք պղընձակուռք,
Ի դժոխոց այնչափ 'ի խոր, որչափ երկինք բարձր են յերկրէ.
Անդ 'ի միտ առցէ քանի՛ դից բռնաւոր եմ բռնաւորագոյն:
Օ՜ն արդ, դիք, 'ի հանդէս, զի զփորձ առջիք ամենեքեան.
Առէք խաղացուցէք յերկնուստ շղթայ մի ոսկեղէն,
Բուռն հարեալ յայն դիք բոլոր եւ դիցանոյշք կախեցարուք,
Սակայն ոչ բաւեսջիք զըրդուել բռնաւ յերկնից յերկիր
ԶԱրամազդ վեհն հանճարեղ, թէ եւ սաստիկ գընեցէք գուն:
Իսկ թէ ես ինչ կամեցայց յորդոր փութով ձգել 'ի վեր,
Երկրաւ հանդերձ միալուծ, հանդերձ ծովուն քարշեալ համեմ,

Եւ տեսայ զՈ՛լիմպեայ գագաթանէն ամպրկեալ զըբըլթայն,
Եւ կախեցի բովանդակ տեսիլ ընդ օդս զբօսուցիկ ։
Այսչափ ես քան զքեզ եւ քան զմարդիկ եմ վեհագոյն ։
Զայս ասաց, եւ նոքա պապանձեցան առ հասարակ
Ընդ ճառեալսն պակուցեալք, զի սաստալից բարբառեցաւ ։
Հուսկ ուրեմն Աթենաս ասէ մեղուակն աստուածուհին .
Ո՛վ հայր մեր, Զրուանեան, վեհիցն վեհ թագաւորաց,
Քաջ գիտեմք եւ մեք զի քո անընկճելի է զօրութիւն,
Այլ յոգոց ելանեմք ընդ քաջայաղթ դանայեցիս,
Որ լցեալ ըզժամըն չար՝ սատակեսցին վատախտաբար ։
Իսկ արդ մեք 'ի մարտէն, թէ պատուիրես, կայցուք 'ի բաց,
Եւ խորհուրդ օգտակար տացուք եւեթ արգիացւոց,
Զի մի ապառըսպուռ կորընչիցին 'ի քում ցասմանդ ։
Ժըպտելով պատասխանի ետ Արամազդ ամպակուտակ .
Քաջ լեր, Կուսածնածին, որդեակ սիրուն, զի չասեմ ինչ
Մըտադիւր 'ի սերտ սրտէ, եւ հաշտ ընդ քեզ կամիմ լինել ։
Ասացեալ, լծեաց 'ի կառս իւր զերիվարսն պղնձաթաթս՝
Օդապար սըրաթռիչս եւ ոսկեբաշ վարսադիտակս .
Եւ նա ինքն ըզմարմնովն ոսկի զգեցեալ, առ ըզմըտրակն
Ոսկեհիւս՝ վայելչակազմ, եւ ամբարձաւ 'ի զոյգըս իւր ։
Մըտրակեաց խաղալ գընալ, եւ կամակար սըլանային
Ընդ միջոց ծագաց երկրի եւ աստղազարդ գըմբեթին երկնից ։
Եւ եհաս յաղբերաբուխն Իդա՝ 'ի մայրըն գազանաց,
Ի Գարգարն՝ ուր սըրբութեան անդք եւ բագին իւր խընկաւէտ .
Անդ կացոյց զերիվարսն մարդկան հայրն եւ աստուածոց,
Արձակեալ 'ի կառացն եւ մըգ թալուն եհեղ զնոքօք .
Եւ ինքն անդ լերինն 'ի գլուխ նըստաւ 'ի փառըս խայտալով,
Ի տրովեանց քաղաք դէտակն եդեալ ու՛ր նաւս աքայեցւոց ։
Իսկ ընտրիս անձունին աքայեցիքըն վարսաւորք
Ընդ վըրանսն ըշտապաւ, եւ վառէին այնուհետեւ ։
Եւ տրովեանքն եւս ընդ քաղաքն յայնըմ կուռէին զինուքն 'ի զէն ։
Նըւաղունք՝ այլ ոչ ընդհատ խիզախէք 'ի մարտ պատերազմի,
Առ հարկի ստիպեալքն, յորդւոց վերայ եւ 'ի կանանց ։
Բանային դըրունք ամենայն եւ զօրականն ասպէր 'ի դուրս
Հետեւակք եւ ձիավարք, եւ ահագին խուժեաց աղմուկ ։
Եւ սոքա մինչ 'ի մի վայր խուռն արշաւեալ հասանէին,
Խընձեցին ասպար նիզակ եւ պղնձազրահ քաջաց կորովս .
Խառնէին ընդ միմեանս կուռ վահանքըն կոճակեթեայք,
Եւ շըռինդ ահաւոր ամբոխասաստ բըրդէր թընդէր,
Խառնաձայն անդէն գուժէր թառաչ եւ խրոխտ գոռումն արանց
Սատակչաց սատակելոց, հեղեղատէր երկիր արեանբ ։
Յառաւօտին անդ պահու, մինչ գիւցականն անձէր գեռ տիւ,

Զերկրաւոր հարկանելեաց նետս ըղձողմանս, անկանելր զօրն ։
Իսկ յորժամ յերկնից միջակն արփաթեւեաց ակն արեւուն,
Հայրն յայնժամ զոսկեղէնս առեալ կշիռս եհան պարզեաց ·
Ի նշմարան՝ երկուս վիճակս արկ ընդմահուան անարթնական՝
Ըզտրովադեանց ձիահրամանեաց եւ զպղնձազրահ աքայեցւոց,
Եւ զմիջոյն կալեալ ամբարձ, մէտ աքայեանց եհեր օրհասն ·
Եւ վիճակն աքայեցւոց իջեալ յերկիր բիւրաբերդուն՝
Անդ նըստաւ, իսկ տրովադեայցն 'ի լայն երկինս վերացաւ ։
Ցիդայէ նա մեծ գոռաց եւ զշանթեւանդն ընկէց փայլակն
Ընդ ամբոխն աքայեցւոց՝ որ 'ի տեսիլն հարան յապուշ,
Եւ ահ կալաւ դալկագոյն զամենեսեան առ հասարակ ։
Անդ ոչ մնալ Իդոմենեւս ժուժեաց եւ ոչ Ագամեմնոն,
Ոչ երկոքին մեծազօր Էասք պաշտօնատարքն Արէսի ·
Նեստոր միայն Գերենեան ծերոյ՝ պահապանն աքայեցւոց,
Ոչ կամաւ, այլ զի նուաղէր իւր երիվար, զոր հար նետիւ
Դիւցազն Աղեքսանդրոս, այրն Հեղինեայ վարսագեղին,
Ընդ գագաթըն գըլխոյն՝ ուր առաջին ձիոց գիսակք
Բուսանին 'ի կառափին, եւ անհրաժեշտ է կարեւէր ։
Նա ցաւոցն 'ի վեր վազելոյ, զի էր մխեալ սայրն յուղղաբաշն,
Եւ թաւալ ըզպղնձազինն անկեալ խռովեաց ըզձիս ձիանն ։
Մինչդեռ ծերն անկեալ սուսերբ խզէր ըզփոկս երիվարին,
Հեկտորեանցն անդանօր հասին արագաշու երիվարեանք,
Ընդ խուժեանն առաջատակեալ վարեալ զյանդուգըն կառավարն՝
Ըզհեկտոր, եւ փոքր մնաց ծեր արեւուն 'ի մահ մատնէր,
Եթէ չէր ահեղագոռ Դիոմեդեայ սուր նշկատեալ,
Որ ահագին ձայնարկեաց առ Ոդիսեւս բարձեալ բարբառ ·
Դիւցազնարմեդ Լայերտեան՝ բազմահնարդ Ոդիսեւս,
Ցո՞ փախչիս թիկնադարձոյց իբրեւ ըզվատ ոմն յամբոխէն ·
Գուցէ ոք փախըստականդ վարսեսցէ աշդ ընդ թիկնամէջս ·
Այլ անսա, զի վանեսցուք 'ի ծերունւոյն զայրըն վայրագ ։
Ասաց՝ այլ չետ ունկն Ոդիսեւս արկ դիւցազըն վշտալկեալ,
Համբերատար արշաւեալ 'ի խորագոգ նաւս աքայեանց ։
Իսկ Տիդեանն խիզախն միայն ընդ նախամարտիկսն խառնեցաւ,
Զոդաւ եկաց առաջի երիվարաց Նէլեան ծերոյն,
Եւ առ նա բարբառեալ ասաց ըզբանսքս թեւաւոր ·
Աւագիկ, ով ծերունիդ, նեղեն ըզքեզ առոյգ մարտիկք,
Քո լուծեալ է զօրութիւն, տաղտկալի զքեզ ծանր ալեւոյթ,
Պաշտօնեայդ՝ տկարիկ, եւ երիվարքդ՝ յամրայեղք ։
Այլ արի դու միանգամ ել ել 'ի կառս իմ եւ տեսցես
Որպիսիք տրովկեան ձիանս ընդ դաշտորէս գիտեն հմուտ
Այսր եւ անդր ճեպընթաց շահատակել եւ ճողոպրել,
Զորս առի երբեմն առար յԷնէեայ՝ զմարթուչս ահից ։

Այգոցիկ ըսպասաւորքըս տարցին հօդ, մեք զայսոսիկ
Ի տրովեանսըն ձիամուղս արձակեսցուք, տեսցէ Հեկտոր
Թէ եւ իմս արդեօք նիզակ մոլեգնոտի յիմում ձեռքն:
  Զայս ասաց, չըմերատացաւ Նեստոր ասպետըն Գերենեան:
Նեստորեանն ապա Ճայկաց ըսպասաւորքըն կորովիք
Գէտ առնէին՝ Սթենելոս եւ ժըրաշէրն Եւրիմեդոն.
Իսկ նոքա երկոքեան 'ի կառսն ելին Դիոմեդեայ:
Եւ Նեստոր առ 'ի ձեռին զերասանակըն պաղպաջուն,
Եւ մըտրակեալ զերիվարսն՝ հասին անդէն մօտ 'ի Հեկտոր:
Եւ ըղձեշտ զդիմեալըն արար որդին Տիդեայ մըկընդահար.
Վըրիպեաց 'ի նմանէ, եւ զկառավարն իւր արբանեակ,
Ըզգաւառըն մեծանձին Թեբէոսի զԵնիոպեւս,
Որ զերասանս ունէր ձիոցն, եհար ընդ լանջս հուպ առ ըստինաւն.
Գլորեցաւ 'ի կառացն, ընկըրկեցաւ արընթաց ձիանն,
Եւ նորա լուծաւ անդէն հոգին եւ ույժ քաջակորով:
Ցաւ սաստիկ կառավարին ըղՀեկտորի պաշարեաց զսիրտ.
Թէպէտ թաղծեալ ընդ ընկերն՝ եթող անկեալ զայն անդանօր:
Կառավար խընդրէր հուժկու, եւ ոչ հարուստ ինչ ժամանակ
Չիք վարչի կարօտացան, քանզի եգիտ տրտմադալէս
ԶԻփիտեանն Արքեպտոլեմ ըզքաջարին, զոր հան անդէն
Ցերիվարսն երագընթաց, եւ ետ 'ի ձեռսըն զերասանսն:
  Հասանէր անդ սատակումն եւ անհնարին լինէր նախճիրք,
Եւ տրովեանք յԻլիոն տառապէին իբրեւ զգառինս,
Եթէ չէր առ նըկատեալ հայրըն մարդկան եւ աստուածոց:
Ահագնագոռ որոտմանք արձակեալ շանթ հրափայլական՝
Առաջի երիվարացն Դիոմեդեայ յերկիր ընկէց:
Բոց վառեցաւ ահաւոր 'ի ծըծըմբոյն բորբոքելոյ,
Եւ ձիանըն շըրառեցեալ սասանեցան ներքոյ կառացն:
Ի ձեռացըն Նեստորի փախեան փայլուն երասանակք,
Երկուցեալ եւ ինքն յոգին՝ բարբառեցաւ առ Դիոմեդ.
  Օ՜ն 'ի փախուստ դարձո, Տիդեան, զսալըմբակ երիվարդ.
Չաննուցմուս 'ի մեր զի քեզ յԱրամազդայ չէք օգնութիւն.
Զըրուանեան Արամազդ այսօր սըմա փառս ընծայէ,
Իսկ ապա միւսանգամ տացէ եւ մեզ թէ կամիցի.
Չիք մարդոյ խափան մըտաց կալ խորհրդոցն Արամազդայ,
Եւ ոչ յոյժ քաջազգունի, զի բըռնազոյն է մեծապէս:
  Պատասխանի ետ անդէն Դիոմեդէս ահեղագոռ.
Այո քաջ իսկ յիրաւի տացեր զայդ ամենայն, ծեր.
Սակայն այս խիտում սըրտիս հարկանի ցաւ դառնակըսկիծ,
Զի ճառամեալ երբեմն Հեկտոր 'ի տրովացիսըն խօսեսցի,
Թէ Տիդեանըն փախըստեայ 'ի նաւատորմայսն անկաւ յինէն.
Պարծեսցի նա զայս երբեմն, յայնժամ զետինն ինձ բացցի լայն:

Ետ նըման պատասխանի Նեստոր ասպետըն Գերենեան .
Ո՛հ ահ, քաջամարտիկ Տիդեայ զաւակ, զի՞նչ ասացեր .
Զի թէ զքեզ վատ եւ կընատ բամբասեսցէ երբեք Հեկտոր,
Սակայն ոչ հաւատասցեն տրովադացիք եւ դարդանեանք,
Եւ կանայք մեծանձանցըն տրովադեանց ասպարակրաց,
Զորոց զարսըն քաջազգեաց՝ հողաթաւալ արկեր ասպատառ :
Զայս խօսեցաւ՝ յետս անդրէն զաւլապատեալ երիվարեանն
Ի փախուստ դարձոյց ընդ խաղն, եւ տրովացիք եւ ինքն Հեկտոր
Ահեղ գոչմամբ ցընդէին 'ի նոսա նետըս ցաւագինս .
Ցայնժամ անդ ուժգին գոչեաց մեծըն Հեկտոր կորդակախոխոտս .
Ըզքեզ, Տիդեան, ժըրաձի դանայեցիք պատուէին յոյժ
Բարձիւ եւ խորտիկօք եւ բաժակօքըն լիառուղխ,
Այլ այժմիկ անարգեսցեն, քանզի նըման եղեր կնոջ :
Կորի՛ր, աղջիկ վատասիրտ, զի ոչ յինէն ինչ թոյլ տալոց
Յաշտարակս ելցես 'ի մեր, ոչ ըզկանայս տարցես նաւուք,
Զի կանուխ անձապարեալ հարից 'ի քեզ զորհասն դեւ :
Զայս ասաց, Տիդեանն ըղձիւ խել այսր եւ անդր հարկանէր,
Զերիվարսըն շըրջել եւ կալ ընդդէմ յարդարել մարտ :
Զայս երիցըս խորհեցաւ ընդ միտըս իւր եւ ընդ հոգին,
Եւ երիցս յԻդայ լերանց որոտ եհան զգօնն Արամազդ,
Տալ նըշան տրովադացւոց ըզյեղափոխ մարտին յաղթութեան,
Եւ Հեկտոր բարձր 'ի ձայն առ տրոյացիս բառնայր խրախոյս .
Տրովացիք եւ Լիկեանք եւ Դարդանեանք ընթերամարտք,
Այրս լերուք, սիրելիք, եւ դիք 'ի մտի զարութեան քաջ .
Տեսանեմ՝ զի Զըրուանեանն յիս ակնարկեալ մըտադրէր
Զյաղթութիւն եւ զփառըս մեծ, իսկ դանայեանց ըզպատուհաս .
Տըղայամիտք՝ որ ըզպարիսպս այս հնարեցան եւ ըզպատնէշ,
Զաղփաղփուն եւ արհամարհ, որ ոչ ուժոյս կալցին ըզդէմ .
Եւ երիվարքս ընդ պարկէն փոսն հեշտեաւ անանցուն վազս :
Իսկ յորժամ 'ի նաւեանսն 'ի խորագոգ եղէց ժամուն,
Յուշ լիցի, զի մոռասցի անդ յայնժամ հուրըն տոչորիչ :
Զի զնաւսն հըրձիգ արարից եւ զարգոսեանսըն զխուսամանս
Սատակեցից առ քաշտեօքըն տագնապեալս 'ի բարդ ծըխոյն :
Ասացեալ՝ կարդաց խրախոյս առ երիվարսն եւ ձայն եբարձ .
Օ՛ն դու Շէկ, Ճեպձեմ, Աշխէտ եւ դու Նըշող դիւցակերպիկ,
Հատուցէք այժմիկ ինձ ըզձեր սնունդ, զոր յորդառատ
Մեծանձնին Էետիոնի դուստրըն բաշխէր Անդրոմաքէ
Արկանէ յառաջագոյն ձեր առաջի զցորեանն անոյշ
Եւ զգինին խառնեալ 'ի յաւեալ ըստ ցանկութեան սըրտի ձերոյ,
Քան թէ ինձ՝ որ պանծամ ինքեան լինել այր քաջառոյգ :
Դոյթ դիք դուք եւ տուք ձեռ, զի յաւարի առցուք թերեւս
Ըզվահանըն Նեստորեան՝ որոյ առդ յերկինս հասանեն փառք,

Թէ լուծէ ուխտ հաստատ զօրութեանն միջն եւ բանականին.
Եւ յուսոյ Դիոմեդեայ ձիախաղացութեան տարցուք կապուտ
Ընդդիմահան ամենազօրութեան՝ ընդ օրհնեալն 'ի Հեփեստոսեայ։
Թէ զերկրային զայդ կարգութ, ունիցիմ ամեն այժմ հեշտակաւ
Եթէ զպայծառ եղանիցեն աշխարհցիք 'ի ողորմութեան նաւուն։
Զայս խորհուրդ բարբառեցաւ. որսորդութեան արդոյն Հերոս,
Եւ շարժեալ 'ի գահուն՝ սրարշաւեցաւ զերկրային Ոլիմպ.
Եւ անդէն առ Պոսիդոն ձայնեալ առ մեծն աստուած՝ ասէ.
Այժմ, գետնադղրդող դու մեծազօր, ո՞չ հարկանէ
Սիրտ քո զգեղ զեթ 'ի վերայ դանայեցելոցն կորուսեալն,
Որ նուէրս 'ի Հելիկէ քեզ եւ յԷգաս մատուցանեն
Ցանձախս եւ ցանկալիս. եւ դու նոցա տես յաղթութիւն։
Զի թէ կամէր զդանայեցելոցն ձեռնտուութ յօժարեցելք
Վանել զարամեանս եւ արգելուլ զորոտաձայնն Արամազդ,
Անշուշտ նա յայնժամ նստեալ միայն յԻդա՝ ծանրեսցի անդ։
Հառաչեալ ուժգին արքայն Երկրաշարժն՝ ասէ առ նա.
Հերայդ ընդոստախօս, զայն որպիսի՞ բարբառեցար.
Քա՛ւ լիցի այլոցս մեզ զինամարտել եւ ոտնել
Զորդուանեանն Արամազդայ, զի բազմազօրն է զօրութեամբ։
Զայս ընդ միմեանս օրինակ ամենաբնին ասէին զբանիւք։
Իսկ անդուստ 'ի նաւացն՝ 'ի պատուարէն մինչեւ 'ի փոս
Լցաւ առ հասարակ ձիովք՝ արամբք ասպարօրք
Խռնեցելովք՝ զորս խուռնամբեր հաւասարեմանն աշխոյժն Արեայ
Պրիամեանն Հեկտոր՝ արգել ընդփակ եւ Արամազդ։
Եւ 'ի հուր բոցավառ ընդհարթարգական այրեալ էր նաւս,
Եթէ չէր արդոյն Հերայ 'ի միտս արկեալ Ագամեմնոնի,
Ի փութալ ինքնին ինքնին, ճեպել խրախոյս տալ աքայեցւոց։
Խաղաց գնաց 'ի վերանս եւ 'ի նաւակս աքայեցւոց,
Ընդ ծիրանի ծիրանի կալեալ ընդ մեծ 'ի ստուար ձեռին,
Եւ կանգնեցաւ 'ի մեծայարկ նաւն Ոդիսեայ 'ի սեւաթոյր
Որ էր անդ 'ի միջոցին, ձայն ընկենուլ յայսկոյս եւ յայն,
Թէպէտ մինչ 'ի խորանսն Էասայ Տելամոնեան,
Թէ յԱքիլլէն, որոց ընդ նաւսն էին ձգեալ զհաւասարութեանս
Ի վերջին ծագս յորութիւն եւ 'ի բազկացն յուսացեալ կարճ,
Եւ գոչեաց 'ի ձայն սաստիկ առ դանայեանս աղաղակեալ.
Ամօթ, ամօթ, արգոսացիք, կեղծ նշաւակք, երեսք չքնաղք.
Ո՞ւր խոստմունքն չոգան՝ յասել մերում քաջքս լինել,
Զորս երբեմն 'ի Լեմնոս ունայնապարծ յոխորտայիք
Ուտելով ըզմիս առատ զերկայնեղջիւր զուարակաց,
Եւ ըմպելով ըզթակոյկսն թաթաղուն լցեալ գինեաւ,
Հարիւրոց, երկերիւրոց անձինք ընդդէմ տրովադացւոց
Այժմ եւ ոչ 'ի միում, եւ արդ միում չեմք բաւական՝

Հեկտորի, որ զնա հրձիգ առնէր զնաւս 'ի բոց հրոյ։
Արամազդ հայր, եթէ զքեզ 'ի մեծազօր Թագաւորաց
Յայտնեսի հարկեալ զգեստ՝ 'ի մեծ փառացն կառափեցեր.
Բայց առեալ զնա ոչ ուրեք ընդդիմադարձ գտեալ բաշխեա
Արարեալ զանց 'ի նուաստ յաղթութեանց այսր 'ի կորուստ.
Այլ 'ի բնաւորն զարշատաց Հարդ և զբրանդս խառնէկեալ,
Յանկարծեալ ընձեռեալ զամբաստանութեան վարել այսր։
Այլ զէթ զայս եւս, Արամազդ, կատարեա զոր խնդրուածոյս,
Թոյլ տուր գոնէ լինել մեզ անձնապուր և զերծանել,
Եւ մի տար տրովայեցւոց սատակել այսպէս զաքայեանս։
Զայս ասաց, և 'ի նորա զղջացեալ Հայրըն յարտասուս,
Ակնարկեաց տալով զօրուն, ոչ 'ի կորուստ մատնել 'ի սպառ։
Արծուեաց անդէն զարծուին՝ զնշանակաւորն յաղթեաց Թռչնոց,
Կալեալ եղնորթ մ' 'ի մագիլսն զերագայն եղջն որդի.
Եւ արկ զեղնորթն հուպ 'ի բագինն Արամազդայ 'ի գեղաշուք
Ուր զոհէին աքայեանք Արամազդայ պատգամաձայնօր։
Որք հասուցն 'ի տեսիլ՝ զի հասեալ գայր յԱրամազդայ,
Գրոհ եասուն 'ի տրովացիսն եւ յիշեցին ընդդիմամարտն զօռ։
Ոչ ոք անդ Դանայեան 'ի դանայեանց բազմամարտկաց
Քան զՏիդեանն՝ յառաջագոյն վարել զերաս երիվարեանն,
Անցր ընդ փոսն անցանել եւ կալ 'ի կռիւ զինամարտիկ.
Այլ կանխեաց եւ 'ի տրովեանց սատակեաց այր մի սպառազէն,
ԶԱգելաւոս Փրադմոնեան՝ որ 'ի փախուստ դարձոյց ընձիսն,
Եւ 'ի շրջելն՝ ընդ միջնոցն հարկանեաց նա զանգ նիզակին
Ի մէջ անդր Թիկանցն, և Թափանցանց ընդ կուրծսն եհան.
Տապալեցաւ 'ի կառացն եւ ընդոստ հնչեցին զէնքն։
Յետ նորուն Ատրիդայք՝ Ագամեմնոն և Մենելաւ,
Եւ Այաք՝ նոցին ընկեր՝ զգեցեալք ընդդոստն զօրութեան.
Ընդ նոցանէ Իդոմենեւս եւ զինակիրն Իդոմենեի
Մերիոնէս՝ նմանեալ մարդասպանին Ենիալեայ.
Յետ սոցա Եւրիպիլոս՝ Եւեմոնի պայծառ որդին.
Իններորդ եկըն Տեւկրոս՝ լարեալ զձկապուկն լայնալիճ,
Եւ եկաց ընդ ասպարաւ մեծին Այասայ Տելամոնեան։
Ընդ վահանն յայնժամ Այաս բառնայր մեղմով, և դիւցազն այն
Բոլորշեալ շուրջանակի, յորժամ խոցեալ զոք յամբոխէն
Նետահարէր մերձաւորեր, անդ անկեալ նա փչէր զոգին,
Իսկ սա յետս ընկրկեալ՝ խորշէր մանուկ ընդ մայրն՝ յԱյաս
Գայր մտնէր, թաքուցանէր և նա փայլուն զէնքն ասպարաւ։
Արդ նախ զո՞վ 'ի տրովացւոց բաղան Տեւկրոս զարմանալի։
Առաջին զՕրսիլոք, և զՕրմենոս և զՕփելեստ,
ԶԴետոր, զՔրոմիոս և զԼիկոփոն աստուածազան,
ԶԱմոպաոն ընդդաւակ Պոլիեմոնի եւ զՄելանիպ,

Ըզնաւարն կուռ ըզմիմեամբք ընկեց յերկիր բազմաբերոյն :
Զոր տեսեալ ցնծացաւ արանց արքայն Ագամեմնոն ,
Զի կործէր աղեղամբն ըզտորովսացւոց սատակէր գունդս ,
Եւ չոգաւ եկաց առ իւր եւ զայս առ նա բարբառեցաւ .
Տեւկրոս , գլուխ սիրային , Տելամոնեանդ , իշխան ազգաց ,
Դիր գոյնպէս զիր ձիգ , Թերեւս եղիցես լոյս դանայեցւոց ,
Եւ քում հօր Տելամոնի՝ որ զքեզ սնոյց մանուկ մատաղ ,
Եւ թէպէտ հարճորդի էիր՝ 'ի տուն իւր ընկալաւ .
Եւ զնեզն անդ 'ի հեռաստանին՝ տարաւաստ 'ի փառըս բարձրացո :
Եւ ես ահա քեզ ասեմ, որ եւ 'ի լրումն հասանիցէ .
Թէ տացէ ինձ Արամազդ ասպարակիր՝ եւ Աթենաս
Ըզքաղաքըն քանդել զԻլիոնի գեղեցկաշէն ,
Քեզ նախ յետ իմ 'ի ձեռս եդից պարգեւ մեծարանաց ,
Թէ եցէ եռոտանի , թէ զոյգ ձիոց՝ կառօքն հանդերձ ,
Եւ թէ կին՝ որ ընդ քեզ 'ի նոյն մահիճս ելանիցէ :
Տըւեալ պատասխանի առէ Տեւկրոս ըզքանչելին .
Մեծափառդ Ատրիդէս , զի՞ յորդորես զինձն փութկոտս .
Ոչ դըլեամ, ոչ դադարեմ որչափ եւ է յիս զօրութիւն .
Զի յօրէ յորմէ զնոսա մինչ յԻլիոն հալածեցաք ,
Լայնալիճս 'ի գործ արկեալ եւ նետահար սատակեմ զարս :
Նետըս ութ մինչեւ ցայժմ արձակեցի երկայնասայրս ,
Եւ բնաւք հարան 'ի մարմին ճակատամարտ պատանեկաց ,
Իսկ ըզդա հարկանել չկարեմ ըզշունըդ կատաղի :
Ասաց , եւ 'ի լարէ անտի հերձանկ մի այլ ոստոյց
Ի Հեկտոր , եւ 'ի սրտանէն տարփանէր խոցել ըզնա :
Ի նմանէ սըխալեալ՝ ըզհրաշալին Գորգիթիոնի
ԸզՊրիամու քաջորդին արար ընդ լանջացն նետահար ,
Զոր մայր իւր յԷսիմեայ 'ի կնութիւն ածեալ ծընաւ
Կաստիանիր գեղեցիկ՝ աստուածուհեաց մարմնովն 'ի տեսս :
Որպէս խաշխաշ 'ի պարտէզս յայնկոյս ըզգլուխ իւր արկանէ
Պըտղովքն ծանրաբեռն եւ գարնայնոյն ցօղոյն հիւթիւ ,
Նոյն կերպ եւս յայնկոյս ըզգլուխն ծանրացեալ սաղաւարտաւ :
Ի լարէ անտի միւս այլ նետն փըռքին փըլթոյց Տեւկրոս
Ի Հեկտոր անդր եւ յիւրում տենչայր սըրտին զնա հարկանել .
Բայց եւ յայն ժամ վըրիպեաց , զի Ապոլոն հան 'ի գերեւս :
Եւ սակայն զԱրքեպտոլեմ, ըզՀեկտորին կառավարն քաջ՝
Ըզփութեալն 'ի պատերազմ, եհար ընդ լանջացն առ ըստեանն .
Գլորեցաւ 'ի կառացն , ընկըրկեցան սուր երիվարքն ,
Եւ նորա լուծան ոգիք եւ զօրութիւն իւր անդանօր :
Ցաւ սաստիկ կառավարին ըզՀեկտորի պատեաց ըզսիրտ ,
Այլ եթող ըզնա եւ էր անդ թաղծագին յոյժ զընկերէն ,
Եւ հրաման Կեբրիոնի արար եղբօրն՝ որ մերձ կայր անդ ,



Digitized by Google

Զերասանսն սանձոյլ ձիոց, եւ նա՛ նոր ըմբռնել ոչ անկարելեաց ։
Ինք Թափեաց զինքն 'ի փառաւորուն կառացն յերկիր ահեղ կանչելով ,
Բըռնադաւր մի ձեռամբն յափըշտակեալ յարձակեցաւ
Դէպ ուղիղ 'ի Տեւկրոս՝ զոր հարկանել փութայր հողին ։
Նա հանեալ 'ի կապարճիցն յայնժամ ըզնետըն դառնաթոյն
Եւ արկեալ էր 'ի լարին , սակայն Հեկտոր կորդակախարոտա
Ի լընուլ նորա զաղեղն , հուպ առ ուսոյն ուր անջատէ
Անրակ զուզն եւ ըզկուրծս , եւ անհնարին է մահաբեր ,
Անդ եհար ժեռոտ վիմաւն ըզնըկերբատեալն յեղերան իւր ,
Եւ ջախջախեաց ըզջիլ նորա , եւ Թըմբրեցաւ ձեռն 'ի դաստակն ,
Եւ գլորեալ մընաց 'ի գուճս , եւ 'ի ձեռացն անկաւ աղեղն ։
Իսկ Այաս չէհար ընդ վայր ըզտառապեալն իւր հարազատ ,
Այլ 'ի Թիկունս ընթացեալ պարածածկեաց զինքն ասպարաւն ։
Հալածեալ այնուհետեւ ըզնա երկու սիրուն ընկերք ,
Մեկիստեւս որդին Եքեայ եւ Ալաստոր աստուածային ,
Բարձին 'ի նաւսն գոգաձեւ՝ մինչ գեռ հեծէր ծանրամռունչ ։
Միւսանգամ Ողիմպական 'ի տրովացիս շնչեաց կորով ,
Որ ուղղորդ մինչեւ 'ի խոր փոսն հերքեցին զաքայեցիսն ,
Ընդ առաջինս եւ Հեկտոր հրաւէր 'ի յոյժ իւր փըքացեալ ։
Որպէս բարակ զի զվարազըն վայրենի եւ կամ զառիւծ
Ի Թիկանց հալածելով երագ ոտիւք պընդեալ ըզհետ՝
Խածնի յաղզերսն՝ 'ի գաւակն , եւ ուշ ունի յանկարծ դարձին ,
Այսպէս Հեկտոր հետամուտ էր հերաձայն աքայեցւոց
Անդադար կոտորելով ըզվերջ նոցին փախըստականց ։
Իսկ յորժամ անցին ընդ ցիցըն եւ ընդ փոս փախըստականք ,
Եւ բազումք ընդ ձեռամբ տրովագացւոց սատակեցան ,
Ըզգաեցին յայնժամ առեալ կացին մնացին առ նաւակերոյն ․
Կարգայլին միմեանց խրախոյս , եւ առ աստուածսն ամենեսին
Մատունս տարածեալ՝ մեծաբարբառ կային յաղօթս ։
Հեկտոր շուրջ շարըջանակի շըրջէր ըզձիսըն գեղաբաշ՝
Աչս յածելով Գորգոնեան եւ զմարդասպանին Արեայ ժանտի ։
Ցայն տեսին՝ լուսաթեւն Հերա գթացաւ աստուածուհին ,
Եւ ըզթըռուչուն բանս անդէն առ Աթենաս բարբառեցաւ ․
Ո՛վ աղէտ ․ է՛ զու դուստր ասպարակրին Արամազդայ ,
Չիցէ մեզ փոյթ ընդ կորուստ դանայեցւոց՝ գէթ 'ի վերջէ ,
Որ 'ի չար հասեալ 'ի ժամ ճակատագրին՝ կորընչեսցին
Միում առնըդ բըռնութեամբ , որ անհնարին մոլեգնեալ է ,
Հեկտորըն Պրիամեան՝ անհուն չարեաց եղեռնագործ ։
Պատասխանի ետ Աթենաս նըման խաժակն աստուածուհին ․
Այլ սորա քաջ իսկ զոգիսն եւ զզօրութիւնն էր կորուսեալ
Ընդ ձեռամբ արգիացւոց սատակման 'ի հայրն երկիր ,
Սակայն հայրն իմ մոլորեալ յանբարի միտս գանգատէ ,

Անդորրիմ, մերձ ամպրոպաւ եւ զօրութեամբ խնամ առնի :
Եւ ոչ զայն ինչ ընդ միտ ածէ զի նախ բազում անգամ
Փրկեցի զորդին նուաղեալ 'ի փորձութեանցն Եւրիսթեոսի :
Զի նա լայր ընդդէմ երկնից, եւ առաքեաց զիս Արամազդ
Երթալ մատուցանել ձեռն օգնութեան նորին յերկնուստ :
Եթէ այսմ ուշիմ մտօք էր իմ հասու լեալ խելամուտ :
Յորժամ ըզնա յամրափակ 'ի պղնձադրանն յղեաց զդժոխս
Հանել բերել յանդընդոց ըզշունն ահեղ Սանդարամետէն,
Ի խորոցն յորձանաց Ստիւգեան ուղխից ճողոպրէր ոչ :
Իսկ զարդ զիս ատեայ, եւ զԹետեայ կամսն եհան 'ի գլուխ,
Որ ըզծունկսն ողջագուրեալ եւ բուռն հարեալ ըզկզակէն՝
Մեծարանս առնել հայցեաց քաղաքաւերն Աքիլլեսի :
Եկեսցէ ժամ զի դարձեալ, սիրունն Մեղուակն, ինձ կարդասցէ :
Դու սակայն այժմ հանդերձեա զսալասմբակ մեզ զերիվարսն,
Իմ մինչդեռ վահանակրոջն Արամազդայ մտանել 'ի տուն
Վառեսցայց զինու զարդուք 'ի պատերազմին, տեսանել
Եթէ՞ ոք մեզ Պրիամու հանճարեղն Հեկտոր կորդակաճոճ
Խնդասցէ՞ յերեւելս յասպարիսի զուարթարածին :
Ի տրովկեանց ոք առաջէն՝ զաքայեցւոց անկեալ նաւուք՝
Ի ճարպոյն եւ 'ի մարմնոցն յագեցուսցէ զշունս եւ ըզհաւս :
Այսմ ընդդէմ չեկաց Հերա լուսածըղի աստուածուհին .
Ինքն երթեալ զերիվարսն ոսկեսարեան կազմ յօրինէր
Զըրուանայ մեծին Հերա դուստրն, երէց յաստուածուհիս :
Իսկ անդուստ Արամազդայ վահանակիրն դուստր Աթենաս՝
Ըզնուրբ լայն գեղապաճոյճ հոսեալ յանձնէն 'ի հօրն յատակ,
Զծաղկերանգ իւր յօրինուած եւ ըզմատանցն ձեռագործ,
Եւ արկեալ վարապատեանն զամպրոպայնոյն Արամազդայ,
Սպառազէն վառէր կազմէր 'ի պատերազմ արտասուալիցս :
Եւ 'ի կառսն բոցեղէն կեցս ընկեցեալ՝ առ ըզգեղարդն
Ըզծանր՝ ըզմեծ եւ ըզհաստ, որով զասպարազէնս խորտակէ
Զարանցն դիւցազանց՝ յորս հայրազօրն ցասնուցու :
Իսկ Հերա մտրակեալ ըզձիսն բուռնէր ճեպէր բուռնէր .
Ճռնչեցին ինքնօրէն դըրունք երկնից՝ ժամուց պահեալք,
Յորոց 'ի ձեռս է հրամայեալ երկնիցն մեծ եւ Ողիմպոս
Ի բանալ եւ 'ի փակել ըզթանձրախիտ ամպրոպայց դէզ :
Ընդ այս ուղ ընդ նոսին զմտրակահարոյթ վարեցին ձիս :
Զայն տեսեալ յԻդայէ՝ բարկացաւ յոյժ հայրն Արամազդ,
Եւ յարոյց զոսկեթեւն Իրիս երթալ տանել պատգամ .
Արի երթ, Թեթեւագ Իրիս, դարձո, մի՛ 'նդդէմ առաջ եկանել,
Քանզի ոչ բարեաւ լիցի թէ պատահեսցուք պատերազմաւ :
Զայս ասեմ ահաւասիկ, եւ եկեսցէ 'ի կատարումն,
Ընդ կառօքն ըզձիանն արագաշու կաղացուցից,



Digitized by Google

Ցերեկձիոցն արփեան վճռեալ՝ խորտակեցից անդէն ընկճեալ.
Եւ մինչեւ 'ի բոլորել տասնեակ ամաց մի բուժեսցին
Ի վէրացն հարուածոց զոր փայլակնաձիգն հասուցէ շանթ.
Զի Խաժամուկն ասասցէ 'ի միտ Թէ՛ ո՛նց հօր իւրում մարտընչեցի :
Ընդ Հերայի՝ ոչ այնչափ 'ի բարկութիւն բորբոքեալ սրտմտիմ,
Զի սովոր է յամենայն ժամ խորհրդոցս ածել ջախջախս :
Զայս ասաց, ըղձապատակամն յարեաւ մրրկոտն Իրիս ասինք.
Սլացաւ գլխոց յԻդայ լերանց յերկայնն Ողիմպոս :
Եւ 'ի գրունս անդ առաջնոյն յողնահովտան Ողիմպոսի
Հանդիպեալ նահանջեաց, զԱրամազդայն ետ պատգամ.
Ցո՞ գնայք, զի՞ է զի ձեր 'ի ձեռամբ սիրտ մոլի հոգւոց.
Ոչ հրամայէ Զրոսոնեանն՝ արգիւեաց տալ օգնութիւն.
Զի այսպէս սպառնացաւ Զրոսոնեան ձեռն, եւ լինելոց է.
Ընդ կառօքդ ընդարձակալուծ երիվարացդ խեղել զոտս,
Ի լծակցաց արփեան ընձեռ՝ անդէն զերեկձիսդ խորտակել.
Եւ մինչեւ 'ի բոլորումն տասն ամի չաւաղեսցիք
Ի վէրացն հարուածոց՝ յոր շանթեսցէն փայլատակունք.
Զի ասասցես, խաժամուկն, 'ի միտ՝ թէ ո՞նց հօրդ քում մարտնչեցես :
Բայց Հերայի ոչ այնչափ 'ի բարկութիւն բորբոքեալ ցասնու,
Զի սովո՛ր է յամենայն ժամ խորհրդոցն յաղթել կըրճել :
Իսկ դու, զզուելագոյն, շուն անպատկառ, թէ արդարեւ
Ժըտրըհեսցես Արամազդայ՝ նզակեալ զահաւոր ամբառնալ տեգ :
Զայս ասացեալ մեկնեցաւ գլխոց Իրիս թեթեւընթաց.
Բայց Հերա խօսեց բարբառ զայս առձաներգ առ Աթենաս.
Ո՛հ եղուկ, Արամազդայ ասպարակիրն դուստր, ես այլ չառնում
Մեզ օգնել՝ ընդ Արամազդ մահկանացուաց փոխան կռուել,
Ցորոց թող այս անուն մեռցի, եւ այն անուն կեցցէ 'ի կեանս,
Որպէս եւ դէպ ինչ տացէ. իսկ որում զիւրն է խորհել անձ,
Նա՛ ոչ տրոհեսցէ եւ Դանայեցւոց ըստ արժանին արասցէ դատ :
Զայս խօսեալ՝ դարձոյց անդրէն զմիատարափս երիվարեանն,
Եւ ժամք ընկեցան լուծէին ձիսն գեղեցկաբաշս,
Եւ զայնոսիկ առ մսուրսն կապեցին անմահականս.
Եւ ընկեցան յեցուցին 'ի լուսափայլ որմունսն առ դրօք :
Իսկ նոքա գնացեալ յաթոռս անդր ոսկեղէնս բազմեցան
Խառն ընդ այլ աստուածակիցսն, 'ի սիրտս խռովեալ ծանրաթախիծք :
Իսկ Արամազդ հայր յԻդայէ գեղեցկանիւ կառսն երիվարսն
Ց Ողիմպոս վարեալ եհաս 'ի գլուխ նոցա աստուածահոյլ :
Ըզասրս ձիանն եղոյծ գլխաւորական Երկրադղորդ,
Եւ ընկեցան եդ 'ի դարան՝ կառսն ծածկեալ արկեալ զնդօք :
Իսկ ինքն Արամազդ որոտագոչ՝ անդ բազմեցաւ
Յոսկի գահն, եւ ընդ ոտիւքն դղրդէր մեծն Ողիմպոս.
Բայց Աթենաս եւ Հերա յԱրամազդայ նստեալ ուրոյն՝

Ոչինչ առ նա խօսէին, չհարցանէին բնաւ եւ ոչ ինչ.
Սակայն նա խելամուտ եղեւ 'ի միտս իւր եւ ասէ.
Առ ինէ՞ այդպէս տրտմեալ կայցէք, Հերա եւ Աթենաս.
Ոչ թէ յերկար ինչ աշխատ եղէք 'ի կռիւ փառաւորարգեւ
Ի կորուստ տրոյադացւոց՝ ընդ որս մըտէք յոխս ահագինս:
Ամպաքէն, որպէս եւ է ինձ զօր եւ ձեռք անպարտելիք,
Զիս որչափ եւ կայցեն յՈղիմպոս դիք՝ ոչ ընկճեսցեն.
Բայց ընձեր յառաջագոյն կալաւ դողումն ըզզուարթ անդամս,
Ըզպատերազմ չեւ տեսեալ, չեւ զառագնապող հանդէս մարտին:
Զայս ասեմ առաւել, եւ այս 'ի գլուխ ելանիցէ.
Փայլատակմամբք շանթահարեալք՝ ոչ եւս 'ի կառըս ձեր բըննաւ
Դարձջիք այսրէն յՈղիմպոս, ուր անմահիցն է երախան:
Զայս ասաց, եւ Հերա եւ Աթենաս մռնչեցին լուռ.
Նըստէին առ միմեանս, մըրմընջէին տրովեանց ածիրս:
Անմռունչ կայր Աթենաս՝ բարկացեալ հօրն Արամազդայ,
Չեհան ձիկ, բայց անհնարին ուներ ընդ նա զայրացութիւն.
Իսկ Հերայի սիրտ ոչ համբէր սրբամըտութեանն, այլ խօսեցաւ.
Անագորոյն Զըրուանեան, բան զինչպիսի՞'նդ բերան հաներ.
Քաջ գիտեմք եւ մեք զի է հարըստութիւնդ անյաղթելի.
Այլ 'ի գութ խանդաղատիմք քաջամարտիկ դանայեցւոց,
Որ 'ի վճարումըն վախճանի չար օրհասին կորիցեն:
Եւ արդ մեք 'ի կըռուոյն, եթէ ասասես, տեղի տըւեալ,
Բայց խըրատ եւեթ արկցուք արգիւացւոց 'ի դէպս իւրեանց,
Զի մի մինչեւ 'ի սպառ սատակեսցին 'ի բարկութեանդ:
Արամազդ ամպրոպաբեր արար նըմա պատասխանի.
Այգուց եւս տեսանել ըզԶըրուանեանն ահեղազօր
Տեսջիր՝ թէ կամիցիս՝ աչեղդ Հերա մեծապատիւ,
Զի կորուսցէ զըազմամարտ պատերազմօղ արգիւացւոց:
Զի ոչ նախ 'ի մարտէն դադարեսցէ արին Հեկտոր,
Մինչեւ անդ առ նաւակներոյն Պէլեան քաջամարտն զարթիցէ,
Յաւուրն՝ յորում աղխին առ նաւախելըն մարտիցեն
Յանձուկ տագնապ տարակուսի դիակնացեալըն Պատրոկլիս:
Զի հրամանք այս են կայալեալք. իսկ ես ըզքեն չառնեմ ինչ փոյթ
Թէ ցասնուս ինչ, նա եւ ոչ՝ թէ 'ի սպառուած եզերս ծագաց
Ցամաքի եւ ծովու, յորում Զըրուանն եւ Յապետոս
Կան նըստեալք, ոչ 'ի նըշոյլս արփիաձեմն արեգական,
Ոչ 'ի սըզուխս ինչ հեշտասցեալ, եւ Տարտարոս խոր ըզնոքօք.
Արդ ես, թէպէտ տարապէմ ցանդըր յածեալ մոլընչեալ գնայցես,
Չառնեմ ինչ փոյթ, զի այլ չէք ուրեք քան զքեզ ինչ լըրբագոյն:
Զայս ասաց, բայց լուսածըզին չետ ինչ Հերա պատասխանի:
Իսկ յանդունդս անկաւ ծովուն արեգական փայլուն ճաճանչ,
Ըզգիշերն 'ի վերայ կենդանատուր երկրին ձըգեալ:

Տրովկեանց յանկարծ եմուտ լսան, իսկ աքայեցւոցն փառաւէլ
Եւ երեկս անձկակարօտ եհաս գիշեր խաւարաբեր:
Իսկ Հեկտոր զքաջազեղն տրովադացւոց արար ժողով
Ի նաւացն բացագոյն անջեալ առ գետն յորձանահոս,
Ի սուրբ վայրի՝ ուր գետինն 'ի դիականց երեւէր ջինջ:
Եւ իջեալ 'ի կառացն յերկիր՝ ըղբանսն լսէին
Զոր սիրելին Արամազդայ խօսէր Հեկտոր նիզակն 'ի ձեռս
Մետասան կանգնաչափ, եւ պղնձաձոյլ սայրն սրոյն
Ցանգիտան փայլատակէր, եւ ոսկի օղ ընթանայր շուրջ.
Արդ յենեալ նորա յայն՝ բարբառեցաւ առ տրովկացիս.
Ո՛ւնկն ինձ դիք, տրովկացիք, դարդանացիք եւ օգնականք.
Այժմ ըղձայի եւ զաքայեցիսն, ասացի յիս, բարձեալ ընկղմանել
Ի հողմաշունչն Իլիոն վերադարձեալ դարձ առնել անդրէն.
Այլ կանխեաց եհաս մթութիւն, եւ այդ իսկ այժմ ապրեցոյց
Զարգիւեցիսն եւ ըղձաւս առ անդրանիկ ծովեզերբք:
Բայց սակայն հնազանդ լիցուք այժմիկ սեաւ գիշերոյ,
Եւ ընթրիս յօրինեսցուք, եւ զգեղազարդ երիվարսն
Արձակեալ 'ի կառաց՝ արկէք նոցա կերակ 'ի կեր.
Եւ ածէք 'ի քաղաքէն արջառ եւ խաշն հաստահարուստ
Փութապէս, եւ զգինի անուշարար հանդերձեցէք
Եւ հաց 'ի տնակութեանց. ժողովեցէք եւ փայտ բազում,
Զի զգիշերն ողջոյն 'ի գլուխ մինչ յայգանծնին վաղորդայն
Վառեսցուք խարոյկս յոլով, եւ ճառագայթքն յերկինս հասցեն.
Զի գուցէ 'ի փախուստ աքայեցիքն գիսաւորք
Ճեպեսցին գիշերապահ ընդ ծովածաւալ լայն միկամանս:
Մի դէթ անջան անխռովք խաղաղութեամբ ելցեն 'ի նաւսն,
Այլ զի որ 'ի նոցանէն զարմանեսցէ զվէրն եւ 'ի տան,
Ի փրկեալ խոցոտեալ, 'ի տայրատուր կամ նիզակէ,
Ի վաղվին անդ 'ի նաւ. զի եւ զահի հարցի այլ որ
Առ ձիախրոխտ տրովկացիս ածել ըղձալի աշխարահեծ:
Մունետիկքն Արամազդայ քարոզք յատանն արկցեն պատուէր,
Որ յարբուն լիցին մանկունք եւ ծերունիք ալեւորեալք՝
Խռնիլ նոցա շուրջանակի 'ի յաշտարակսն աստուածաշէնս.
Իսկ իգազգոյն կանանւոյն իւրաքանչիւր 'ի տան իւրում
Հրայրս մեծ բորբոքել. պահպանութիւն լինել անդուլ,
Զի մի յասպատ անկցի 'ի զօրաց թափուր՝ մրցողին զարանակալք:
Այսպէս լիցի, մեծասիրտ տրովկացիք, որպէս ասեմ,
Եւ խորհուրդ որ առ ժամայս առողջն իցէ՝ ցուցեալ լիցի.
Իսկ զայգուն՝ ցուցից ձեզ ձիավարժեցդ Տրովկացւոց:
Յուսացեալ աղօթս առնեմ առ Արամազդ եւ առ այլ դիս,
Հալածել աստի վարել 'ի բաց ըղչունս օրհասաբերս,
Զորս Օրհասն եբեր բարձեալ 'ի լաստափայտաղն սեւաթոյրս:



Digitized by Google

Այլ արկցուք արդ ըզգոյշս ըզգուշութեան շուրջ ըզմեօք դաշտ,
Իսկ ընդ այգն տատանեալ՝ բազմաստղեան վառեալ կանթեղս,
Առ գոգեալ նաւամատոյցանեացն ըզբարկաձայթ զարթուցուք զնա։
Տեսից, եթէ Տիդեանն ընկալաւոր Դիոմեդէս
Ի նաւաց զիս 'ի պարիսպըն վանեսցէ, թէ ես ըզնա
Գըլխահար սատակեալ՝ առից կապուտ արիւնաներկ։
Վաղիւ զիւրոյ զօրութեան ցուցցէ հանդէս՝ թէ ժուժեսցէ
Հըռոսերոյ նիզակիս. այլ ինձ թըւի թէ՛նդ առաւօտեան
Անկցի վիրաւոր, եւ բազմամարդամբ զնովաւ համհարզք,
Առ վաղիւ յերր արեւուն. զի ո՛ տայր ինձ այսպէս լինել
Զանմահոյն աւուրս անմահ, անծերանալի եւ մեծարոյ,
Զոր օրինակ Աթենաս եւ Ապողոն են 'ի պատուի,
Որպէս եւ օրս այս այժմիկ Արգիւացւոց ածցէ զչարեաց։
Զայս Հեկտոր խօսեցաւ, 'ի Տրովացւոց պայթեաց ճայթիւն,
Որ եւ զձիսն 'ի սանձոցն արձակեցին ըզքրտնաթորս,
Եւ կապեցին սանձերովքն իւրաքանչիւր առ կառօք իւր։
Բերէին 'ի քաղաքէն անդէոյս եւ հօտըս պարարակս
Ըստախոյս, եւ գինի պատուականէն անուշահամ,
Եւ 'ի տանց անտի հաց, եւ քաղէին կըրեկաւս տաստ։
Զոհէին եւ անմահից բազմամբերս ընտիրս եւ անարատս,
Եւ 'ի դաշտէն մինչ յերկինս զանոյշ ճենճերն հանէին հողմք.
Այլ սակայն աստուածքըն զայն երջանկապարտաք ոչ ընկալան,
Չհաճեցան, զի զըժտութ յոյժ էր նոցա Իլիոն սուրբ,
Եւ Պրիամոս եւ ժողովուրդ նիզակաւորըն Պրիամու։
Իսկ նոքա մեծամեծս արկեալ ընդ միտ, նըստանեալ կային
Ի մարտին շաւիղս ըզգոյշին 'ի բուն հըրատս արկեալ 'ի խոյս։
Օրինակ իմն ընդ երկինս ըզլուսապայծառ լուսնեկան բոլորն
Երեւեալ աստեղք պայծառք, յորժամ անհողմ իցէ արփին,
Եւ բնաւ ծայրքն գագաթանցը եւ բարձրաբերձ սարք եւ անտառք,
Եւ ցնկեալ պատառի յերկնուստ արփի անծայրապարփակ,
Եւ աստեղք բոլոր 'ի յայտ գան եւ խինդայ հովիւն 'ի սիրտ,
Այնչափ ընդ մէջ նաւեկերացն եւ հոսանացն Քսանթեայ
Տրովացւոց լուցեալ խարոյկք երեւէին Տրոյայ հանդէպ։
Հազարք 'ի դաշտին այրէին հրատք, եւ առ միում միում ընթեր
Նըստէին յիսուն յիսուն այր առ ճաճանչ վառեալ բոցոյն։
Իսկ երիվարքըն 'ի ճաշակ սպիտակ գարւոյն եւ հաճարոյ
Առ կառօքըն կայեալ՝ գեղեցկաթոռ Այգուն մնային։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Արշաւիրք 'ի բանակին Յունաց. Ագամեմնոն ակմբեալ զզօրսն՝ թելադրէ փախուստ. ընդդէմ կան Դիոմեդէս եւ Նեստոր. հարցին պահապանք առաջի պատուարին : Ի լուծանել ակմբին՝ Ագամեմնոն հրաւիրէ զերիցագոյնս զօրավարացն 'ի սեղան իւր. անդ Նեստոր խրատ տայ աղաչել զԱքիլլեւս ողոքանօք եւ պարգեւօք. յանձն առնու Ագամեմնոն. առաքին 'ի հրեշտակութիւն անդր Փիւնիքս, Ոդիսեւս եւ Տելամոնեանն Էաս. զամենայն բանս նոցա մերժէ զխուցակին անամոքելի, եւ պահէ առ իւր զՓիւնիքս՝ գնալ նովաւ հանդերձ յերկիր իւր : Ոդիսեւս եւ Էաս դարձեալ անդրէն յետս՝ ցուցանեն զելս հրեշտակութեանն : Խրախ բարբառ Դիոմեդեայ : Մեկնին 'ի վրանս իւրեանց 'ի քուն :

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԻՆՆԵՐՈՐԴ

### ՀՐԵՇՏԱԿՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՔԻԼԼԷՍ . ԱՂԵՐՍՔ

Այսպէս տրոյականք պահ ունէին, սակայն խուճապ աստուածա-
Էր հասեալ յաքայեցիս՝ ցրտասարսուռ. Ահին ընկեր, [ռաք
Եւ 'ի սուգ անտանելի հարեալ կային քաջք համօրէն:
Որպէս հողմք կրկին զանդունդս ձկնաշատ պղտորեն ալեկոծեալ
Հիւսիսոյ եւ Զեփիւռին, որ 'ի կողմանցըն Թրակեցւոց
Գան շնչեն յանկարծակի՝ ըղձեալ ալեացն կուտակեալ,
Միանգամայն եւ ցընդեալ մամուռ բազում ըստ ծովու ափանց,
Հանգոյն ցնորեալ ցըրուէին աքայեցւոցն ոգիք 'ի լանջս:
Ատրիդէս սակայն ցաւով պատանեալ կրկին սիրտ մեծաւոր՝
Երթայր գայր եւ հրաման քաղցրաձայնից տայր քարոզաց
Ցակամն յանուանէ յատեան կոչել զամենայն այր,
Եւ մի գոչել. եւ ինքն 'ի խնդ առաջինսըն գործէր գուն:
Բազմէին տրտմութեամբ յատեան. անդ յոտն եկաց Ագամեմնոն
Արտասուաց հեղեալ հոսանս, իբրեւ աղբիւր Թըխակայլակ
Որ 'ի բարձր ապառաժէ գնացմամբ տարածեր ուխտըն ջրոյ.
Նոյն եւ նա հեծեծագին բարբառեցաւ առ աքայեանս.
Ո՛վ սիրելիք, առաջնորդք աքայեցւոց, իշխանք եւ պետք,
Զօրութեան զիս Արամազդ պաշարեաց յոյժ ծանր 'ի զըկանս.
Ոխերիմ, յառաջագոյն ինձ խոստացեալ լեալ՝ ակնարկեալ
Զիլիոն ամրապարիսպ բերել կործանել բնաջինջ եւ գնալ 'ի տուն:
Իսկ այժմիկ՝ նենգաւոր պատիր եդեալ 'ի միտսն՝ հրաման տայ ինձ
Չու առնել 'ի գլուխ ունել յԱրգոս լոկ կորուսեալ զօրու բազմի.
Այս թերեւս հաճոյ լեալ մեծազօրին Արամազդայ,
Որ զբազում քաղաքաց կատարս հիմնայատակ կործան ընկէց,

Եւ արկցէ տակաւին, զի ուժգնագոյն է զօրութեամբ ։
Այլ եկայք՝ զոր ասիցեմս յանձին կալջիք ամենեքեան ․
Ի նաւս երթուք փախիցուք 'ի հայրենատուն սիրուն գաւառ,
Զի այլ ոչ այսուհետեւ զլայնափողոցն առնումք Տրոյա ։
Զայս ասաց, նոքա կարկեալ պապանձեցան առ հասարակ ․
Եւ հարուստ մի լուռ կացեալ թաղծեալ որդւոցն աքայեցւոց,
Հուսկ ուրեմն Դիոմէդ ահեղագոռ զբերանն եբաց ․
Ընդ քեզ նախ, Ատրիդէս, պայքարեցայց ընդ խօլացեալդ,
Ուր օրէնն է յատենի, արքայ, եւ դու մի ցասնուր ինձ ։
Զարութիւնս յառաջագոյն նախատեցեր 'ի դանայեանս՝
Վատ 'ի մարտըս զիս լինել եւ կնատագոյն բամբասելով ․
Զամենայն զայդ գիտեն արգիւացւոց մանկունք եւ ծերք ։
Բայց քեզ յերկուց եա ըզմին կորովամիտ Քրոնեանն ձեռ ․
Տըւեալ քեզ գաւազանաւ նախապատիւ կալ բոլորից,
Սակայն չետ ըզքաջութիւն՝ որ ճոխութիւն իսկ այն է մեծ ։
Ա՞յսպէս ուրեմն, ով քաջ, զորդիս աքայեցւոց համարեցիս
Անարիս եւ ապիկարս 'ի կռիւ լինել՝ որպէս ասեսն ։
Իսկ թէ քո սիրտ է 'ի դարձ յօժարամիտ, արի գնա ․
Առաջի քո ճանապարհդ, եւ առ ծովուն քեզ մերձ կան նաւք՝
Ըզկնի քո եկեալք 'ի Միկենայ յոլովախումբք ։
Սակայն այլք կացցեն մնասցեն աքայեցիքըն վարսագեղունք
Մինչեւ քանդեմք ըզՏրոյա ․ իսկ թէ նոքին իսկ ինքեանք եւս
Ի նաւ մտեալ փախիցեն 'ի ցանկալին բնիկ երկիր,
Այլ ես եւ Սթենելոս՝ մարտիցուք մեք մինչեւ հասցուք
Ի վախճանն Իլիոնի ․ զի աստուածով այսր եկեալ կամք ։
Զայս ասաց, եւ ձայն բարձին աքայեցւոց որդիք հանուր՝
Ընդ խօսսըն զարմացեալք Դիոմեդեայ ձիավարժի ։
Յոտըն կացեալ 'ի նոսա Նեստորն ասէր բարբառեցաւ ․
Կորովի ես, Տիդեանդ, գերօրինակ 'ի պատերազմ,
Վեհագոյն եւ 'ի խորհուրդ քան զհամօրէն հասակակիցս ․
Յամենայն աքայեցիս չէք ոք որ զբանդ անդոսնեսցէ
Կամ ընդդէմ ինչ խօսեսցի ․ այլ ոչ բանիցն հասեր յանգամն ․
Որ զի եւըդ պատանեակ, եւ լինէիր իսկ իմ մանուկ
Ի ամաց կրսերագոյն ․ բայց հանճարեղս բարբառիս
Առ թագաւորս արգիւացւոց, քանզի զարժանն իսկ ասացեր ։
Սակայն եկ, ես որ պարծիմս երիցագոյն քան զքեզ լինել,
Խօսեցայց՝ ընդ բնաւն անցեալ, եւ մի ոք զիմ բանն խոտեսցէ,
Նա եւ ոչ սոյն սա ինքնին թագաւորեալս Ագամեմնոն ։
Անազգի, անօրէն եւ բնաւ անտուն անյարկ է նա
Որ ընտանի ահաւոր պատերազմին ցանկանայցէ ։
Այլ եկայք 'ի ժամուս հնազանդ լիցուք սեւոյ գիշերոյ
Եւ ընթրիս կազմեսցուք, եւ պահանորդք իւրաքանչիւր

Հրկիզեցին առ փառաջի հատանելով անդրը քան զպարիսպն ։
Արքունի մանկտոյն զայս տամ պատուէր․ խոկ, Ատրիդէս, դու սկիզբն
Քանզի դու ես 'ի մէջ Թագաւորացն վեհագոյն , [տանել ,
Խորախորհուրդ արար ծերունեաց․ վայել է քեզ, ոչ անպատեհ․
Քեզ վրանք են լի գինւով, զոր կարկուրայք աքայեցւոց
Օր ըստ օրէ՛նդ ծովէն լայն բարձեալ բերեն 'ի Թրակիոյ․
Ամենայն ինչ քեզ առձեռն 'ի մեծարել, բազմաց լինելս ։
Եւ յաղագաց ակնածելոց՝ նորմա լուիցես , որ քան զըզբուսս
Իմաստուն տայցէ խորհուրդ․ քանզի բազում աքայեցւոց
Ցոյժ պէտք լուսին են եւ զգօնին․ զի Թշնամիք հուսկ առ քաշտես
Կան արկեալ խարոյկ բազում, եւ մի՛ ընդ այդ ուրախ լիցի ։
Ըզբաղեալ զօրոս գիշերս այս կորուսցէ կամ կեցուսցէ ։
Զայս ասաց , եւ հրամայր հաւան եղեն նորա նորմա ,
Եւ յարեան կացին անդէն ըստպատուղէն պարեկապանք ,
Նեստորեանն հօրն Թրասիմեդէս իշխանն հանդերձ ,
Եւ որ շուրջ զԱսկալափաւն եւ զՅալմենիւ՝ զորդւոցն Արեայ ,
Մերիոնեանք ընդ նմին, Ափարեւսեանք, Դէիպիրեանք ,
Եւ որդին Կրէոնի Լիկոմեդէս աստուածազարմ ։
Եօթն էին պահապանապետք , եւ զհետ փոքեր միում միում
Հարիւր մի պարմանեաց՝ երկայն 'ի ձեռս երեսնից նիզակք ,
Որ զնացեալ առին զտեղ ընդ մէջ փոսոյն եւ պատուարին ,
Եւ լուցեալ հրատս անդէն՝ առնէին ընթրիս իւրաքանչիւր ։
Ատրիդէս զաւագորեարն աքայեցւոց համօրէն
Ածեալ 'ի վրանն իւր նոցա ըմպանահաճոյ խրախճանութիւն ,
Եւ մխեցին ձեռս 'ի խորտիկն պատրաստեալս անդ առաջի ։
Զըմպելեաց եւ զկերակրոց երբեւ զցանկալի հարին փարատ ,
Ալեւորն ըսկիզբն արար նախ 'ի նոսին հիւսել խորհուրդ ,
Նեստոր , որոյ յառաջին խոհ բան Թուեցաւ նախամեծար ․
Եւ ընդ բարին կամելով նոցա՝ ճառեաց զայս յատենին ․
Մեծափառդ Ատրիդէս , արանց արքայդ Ագամեմնոն ,
Հաւ 'ի քէն աւարտեալ եւ 'ի քեզ ինքնըդ յանգուցից ․
Զի ազգաց բազմաց ես տէր , եւ 'ի քո ձեռս եդ Արամազդ
Գաւազան եւ իրաւունս՝ լինել նոցա խորհրդական ․
Վասն որոյ՝ քեզ մանաւանդ պարտ է խօսել բան եւ լսել ,
Եւ զայլոյն առնել 'ի գլուխ՝ թէ ուրուք սիրտ յօժարեսցի
Ասել ինչ 'ի բարիս․ խոկ ընտրութիւն լինին՝ քեզ անկ ։
Այլ արդ ես բանիւս ըզդէպն՝ որպէս ինչ ինձ թուի՝ ցուցից ։
Զի այլ ո՛չ ոք ճահագոյն ինչ իմասցի քան զայս խորհուրդ
Զոր ինչ ես անձամ զմտաւ եթէ յառաջ եւ թէ յայժմուս ,
Յորմէհետէ զօրիորդն Բրիսէանոյշ, ով դիւցազարմ ,
Ի վրանէն չոգար խլել զայրացելոյն Աքիլլեայ ,
Ոչ ըստ մեր ինչ միտաց․ քանզի ես քեզ բանիւք բազմօք



Digitized by Google

Զհակառակին ետու խրատ, այլ մեծաւորս քում բարկութեանդ
Անարգեցեալ քո զայրըն քաջ, զոր եւ անմահք իսկ պատուեցին,
Անարգեցեր, զի շորթեալ 'ի քեզ աւարար զպարգեւ նորա ։
Այլ եւ արդ արասցուք խորհուրդ, որպէս 'ի հաշտ հաւանութիւն
Ածցուք ախորժ ընծայիւք ըղձա եւ քաղցր ողոքանօք ։
Եւ նմին պատասխանի արքայն արանց Ագամեմնոն ·
Զիմ վրիպանս, ով ծերունի, ոչ ստութեամբ 'ի դէմս ածեր ։
Վրիժապարտ եմ, ոչ ժխտեմ · արդ բազմադասունդ զօրականի
Է փոխանակ այր զոր 'ի սէրս սրտէ սիրէ Արամազդ,
Որպէս այժմ ըզսա պատուեալ՝ զաքայեցւոց կորոյս ամբոխ ։
Այլ զի յանցեայ 'ի խորհուրդս եղեռնաւորս հրապուրեալ,
Հաշտ առնել կամիմ անդրէն, եւ փոխարէնս կըշռել անգաւ ։
Ցուցից ձեզ բոլորեցունց զերեւելի զպատարագս ·
Եռոտանիս եօթն անփորձ 'ի հուր եւ տասն ոսկւոյ տաղանդ,
Եւ հրափայլ սանըս քսան, երկոտասան եւ երիվար
Գաւեղ՝ գուպարայաղթ՝ առեալ ոտիւքըն մրցանակս ։
Ոչ աղքատ ոք ապաքէն լինիցի այր այսոցիկ տէր,
Ոչ կարօտ մեծագին եւ պատուական ոսկւոյն գանձու,
Որչափ ինչ ինձ յաղթանակ աւարառեալս, եբեր ձիան ։
Տաց եւ եօթըն կանայս՝ հմտուս ընտիր ձեռագործոց,
Լեսբուհիս՝ զորս յորժամ ըզբարեշէնն ա՛ռ նա զԼեսբոս՝
Ընտրեալ կալայ, եւ գեղով անցանէին զկանանց զարմիւ ·
Ըզսոսա տաց, ընդ սոսին եւ զոր յայնժամն հանի՝ եղջէ
Բրիսեայ զդուստրըն, եւ երդումն երդուայց նմին մեծ եւ ահեղ,
Զի չէր եւ յանկողինն երբեք եւ ոչ զուգեցայ ինչ
Զոր օրինակ առ մարդիկ արանց օրէնք են եւ կանանց ։
Ամենայն այդ նոյնհետայն տացի նմին վաղվաղակի ·
Իսկ թէ զմեծն ոստան քանդել տացեն աստուածք ըզՊրիամու,
Մըտեալ լըցցէ ակաղձուն ըղձան ոսկւով եւ պղընձով
Մինչդեռ զառն եւ զապուռ բաժանիցիմք աքայեցիքս ։
Քըսան կին ընտրանաւ առցէ ինքնին 'ի տրովաւհեաց,
Որ յետ Արգեանն Հելլենեայ գեղեցկագոյնքըն գտանիցին ։
Իսկ յԱրգոս աքայական եթէ հասցուք՝ 'ի սաւէն երկրի,
Փեսայասցի անդ ինձ եւ զոյգ իմս Որեստեայ զնա պատուեցից,
Որ 'ի ճոխ վայելչութիւնս անդ սընանի սիրաբողբոջ ։
Են իմ անդ դըստերք երեք 'ի հոյաշէն իմ ապարանս,
Անուն՝ Քրիսոթեմիս, Լաւոդիկէ, Իփիանասսա,
Ցոյց զոր ընտրէն սիրալիր՝ տարցի առանց ինչ վարձանաց
Ի յարկսըն Պելէւսի · պաշտատականս ես օժտեցից
Բազում յոյժ՝ որպէս չէք տըւեալ ուրուք դըստեր իւրում ։
Տաց նմին եւ եօթն աւան գեղեցկակերտ եւ բնակաւէտ,
ԶԿարդամիլէ, զԵնոպէ եւ զխոտաւէտն Իռէ 'նդ նոսա,

Ըզփերէ գեղջական եւ զԱնթիա մարգագետին,
Զեպէիա գեղադէշ եւ զայգեւէտըն Պեդասոս։
Համօրէն ծովեզերեայք՝ առ աւազաւն Պիլեաւ սահմանք.
Եւ բնակիչք 'ի նոսին խաշնաւէտ արք եւ նախրաւէտք,
Որ զինքն՝ երբեւ զաստուած մեծարեսցեն պատարագօք,
Եւ նըմա 'նդ ցըպովն իւրով հատուսցեն հարկս առատատուրս։
Զայդոսիկ վըճարեցից՝ թէ փոխեսցի յախութենէն.
Թող ցածցի. Դըժոխապետն է անողոք եւ անհըռաւ,
Նըմին երէ եւ մարդկան քան զամենայն դիս ատելի.
Զիջցէ եւ ընդ ինեւ, որքան զի վեհ եմ թագաւոր,
Եւ զի առաւելգ հասակաւ երիցագոյն ըմնել պանծամ։
Եւ նըման պատասխանի Նեստոր ասպետըն Գերենեան.
Ատրիդէս վեհափառ, Ագամեմնոն արանց արքայ,
Արքայըն Աքիլլէսի ոչ արհամարհս ինչ առա ընծայս։
Այլ եկայք ընտրականս յարուսցուք արս որ զայնհետայն
Երթիցեն 'ի խորան պէլիածինն Աքիլլէսի։
Համայս իմ ըղձասքն ընտրեալ՝ նոքին եւ անսասցեն։
Սիրելին Արամազդայ նախ առաջնորդ եղէ Փինիքս,
Ըստ նըմանէ մեծն Էաս եւ Ոդիսեւս աստուածազարմ.
Զհետ անցցեն 'ի քարոզաց Եւրիբատէս եւ Ոդիոս։
Օ՛ն ջուր առէք ձեռաց եւ առուք հրաման լըռելն մըտադրութեան,
Առ Զըրուանեանն Արամազդ պաղատեսցուք, թէ գըթասցի։
Զայս ասաց՝ համոյական խօսեցեալ բան բոլորեցուն։
Զուր 'ի ձեռս անդէն եւ անդ փութանակի արկին քարոզք,
Եւ մանկունք ըղխառնարանըն պատառուն լըցեալ գինւոյ,
Պաշտեսցին կարգաւ նուագօք մատուցեալ ամենեցուն։
Իսկ յորժամ հեղեալ նըւէրս եւ ըստ սըրտի կամաց արբեալ՝
Ճեպէին 'ի վըրանէն Ատրէոսեանն Ագամեմնոնի,
Տայր նոցա բազում պատուէր Նեստոր ասպետըն Գերենեան՝
Աչս առ մին մի յածելով եւ մանաւանդ առ Ոդիսեւս,
Զանպարտըն Պէլիդեան գուն 'ի հաւան ածել գործել։
Արդ եկեալ ուղին ընդ եզըր բազմագոչ ծովուն գնացին՝
Յորդորաւք առ Գետնադըղորդն աշխարհակալ հեղեալ աղերս,
Դիւրաբար նըւաճել ըզմեծ հոգին Էակիդեայ։
Եւ հասեալ 'ի խորանսն եւ 'ի քաշտեսս Միւրմիդոնաց,
Գըտին ըզնա զի դիւր մըտացն առնէր 'ի քընար նուագաւոր
Ի չըքնաղ յամենարուեստ, յոյր վերայ մոյթ էր արծաթի,
Զոր էառ աւարառման յաւեր շինին Էետիոնեայ.
Յայն զոգին զուարճացուցանէր՝ զարի արանց նուագեալ ըզփառս։
Պատրոկլես եւեթ նըմին դէմ յանդիման նըստէր լըռիկ
Եւ մընայր Էակիդեայ յերգոց անտի դադարելոյն։
Իսկ նոքա մատեան յառաջ դիւցազարմին Ոդիսեայ զհետ։

Եւ կացին առաջի. յորոց Աքիլլէս եկաց ափշեալ
Քընարաւն 'ի ձեռին, թողեալ զաթոռն յորում նըստէր.
Նոյն եւ ինքըն Պատրոկլոս զարդին անտեալ յարեաւ կանգուն:
Աքիլլէս քաղցրան ըղձեաւն յողջոյն նոցին ձըգեալ ասէ.
Ողջոյն ձեզ, որք բարեկամք եկիք, — անշուշտ հարկ ինչ է մեծ, —
Որ անգամ սրտմըտելոյս սիրելագոյն էք յաքայեանս:
Զայս բարբառեալ Աքիլլեան աստուածային մատոյց յառաջ,
Բազմեցոյց 'ի գահոյս ու 'ի շատրուանացն ծիրանիս.
Եւ անդէն' առ որ մերձըն կայր ասէ առ Պատրոկլոս.
Զմեծագոյն թակոյկն արբ կառ, զաւակըդ Մենիտեայ,
Զանապակըն խառնեսջիր եւ պատրաստես բաժակ առ այր.
Քանզի արք սիրելագոյնք են ընդ խնամըս մարդակերք:
Զայս ասաց, եւ Պատրոկլոս լըւաւ իւր քաղցր ընկերակցին.
Իսկ նա ինքն առեալ պատառոյդ մի մեծ՝ 'ի լոյս հրատին կանգնեալ՝
Զոչխարի արկ 'ի նմա զողն, եւ զուղղագեց պարարտ այծի
Եւ զըրունկան խոզի քամակ ըղձալըպալիր գերապարար:
Կայր ունէր Աւտոմեդոն, յօշէր դիւցազնըն Աքիլլէս,
Զորս եւ մանըր կոտորեալ՝ քաշ 'ի շամփուրսըն հարկանէր:
Մենիտեանն աստուածատիպ այր լուցանէր հուր մեծարոյ.
Եւ յորժամ բորբոքեցաւ հըրատն եւ բոցըն թառամեցաւ,
Տարածեալ ըզկայծակունսն՝ արկ ըզնոքօք ըզշամփուրսն,
Եւ ցանեալ նըւիրական աղ 'ի վերայ՝ բարձ 'ի նեցուկս:
Իսկ յորժամ խորովեալ թափեաց եհեղ 'ի սկաւառակս,
Առեալ բաշխէր Պատրոկլոս բաղմականնեն հաց 'ի սեղան
Գեղեցիկ սակառակք, իսկ Աքիլլէս պաշտեաց ըզմիսն:
Եւ նըստէր ինքըն յանդիման աստուածայնոյն Ոդիսեւսի
Առ միւսով որմովն, եւ ետ հրաման իւրում ընկերակցին
Պատրոկլի զոհել դից, եւ նա զնուէրան 'ի հուրն ընկէց.
Նոքա ձեռն արկին յընթրիսն անդ առաջի իւրեանց կազմեալ.
Իսկ զըմպելեաց եւ զկերակրոց իբրեւ հարին զփափաքն քաղցի,
Ակն 'ի Փինիքս արկ Էաս. դիւցազն 'ի միտ առ Ոդիսեւս,
Եւ լըցեալ գինւոյ զբաժակն՝ էարբ յարեւն Աքիլլեայ.
Ողջոյն ընդ քեզ, Աքիլլէս. 'ի չափ խահից չեմք ինչ կարօտ
Թէ 'ի վրանին Ատրեւսեան Ագամեմնոնի, թէ աստ այժմիկ:
Մերձ կան մեզ համադամք առատապէս 'ի խրախ լինել.
Բայց կերակրոց ցանկալեաց ոչ ինչ է մեզ փոյթ 'ի մըտի,
Այլ եղեռն ահեղ տեսեալ՝ զահի հարեալ կամք, դիւցազնածինդ.
Զի յերկբայս կայ՝ փըրկեսցո՞ւ թէ 'ի կորուստ լիցին արդեօք
Գեղապատախտ նաւացս հանդերձ, թէ չըզգենուս դու զզօրութիւն:
Զի լաստիցս առընթեր եւ պարըսպին հարին բանակ
Տրոյացիքն ամբարտաւանք եւ տարաբնակ նիզակակիցք,
Խիտ առ խիտ արկեալ խարոյկս 'ի ճամբարին, եւ խրոխտանան

Ուշ էինչ այլ խաւարան ընկել նոցա 'ի նաւսն անկանելոյ ։
Եւ Զրուանեանն Արամազդ հրամայէ աջող ցուցանել նոցա՝
Կայծակէ, եւ փլուզանել հեկտոր 'ի մեծ իւր զօրութիւն
Մոլեգնի ամենահաւատ՝ յԱրամազդ անդրր խեղախնել,
Անկաշկանդ զայրս եւ ըղձիւ, սաստիկ հալածել զկատաղութեան ։
Եւ մանզթէ փութով ծագել աստուածային Առաւօտուն,
Զի ազատանայ ծայրակատար առնել ըմբռնելու նաւակացն,
Եւ զնաւսն աստուածաշնոր հրով հրդեհել, եւ առ նոքօք
Սատակել զաքայեցիս՝ ըմբռնելով 'ի ծուխ մրրկին ։
Այս խոկ է խէթ անհնարին սրտին, զուցէ զբազմաժամեան
Համոյթն գեղ 'ի գլուխ, եւ մեղ էցէ Ճակատագիր
Կորընչել աստ 'ի Տրոյա՝ 'ի ձիաբոյծն Արգեայ 'ի ասար ։
Այլ արի, թէ յուշ որդիքն են քեզ ալէանց, թ'եւ անապան,
Գահավանել ըմբոստասեկեալսն 'ի արտաքսեցւոց զօրութենէն ։
Քեզ խոկ ասա ցուցէ, եւ ոչ եւս այլ ինչ զարմանոյ
Գիտասցի հնար՝ 'ի ժամանել չարեացն, այլ փոյթ խորհել կանխեա
Թէ զխոյըզ 'ի զանոյեանց պահեսցես զօրն եղեռնասուր ։
Ո՛վ քաղ, պատուիրէր ասացին քեզ հայրդ Պելեւս
Յարում աւուր 'ի Փթիոյ յղելոց ըզքեզ առ Ագամեմնոն .
Որդեակ իմ, Աթենաս քեզ եւ Հերա, թէ կամեսցին,
Շնորհեսցեն զօրութիւն, բայց դու զոգիդ քո մեծասիրտ
Սանձեսջիր 'ի լանջըս քո, զի լաւագոյն է հեզութիւն .
Ընկեա զհեռ չարանիւթ, զի առաւել զքեզ պատուեսցեն
Թէ մանկանն նորատի, թէ ալեւորքն աքայեցւոց ։
Այսպէս ասայր ծերըն պատուէր, այլ մոռացեալ արարեր դու ։
Բայց եւ արդ եկ դադարեա, զթախանձալից թող բարկութիւն .
Թէ ցածնուս, ընծայս տացէ Ագամեմնոն քեզ արժանիս ։
Լուիցես ասէ դու ինձ, եւ մի առ մի ցուցից ես քեզ
Որ ինչ աւուրս 'ի խորանին Ագամեմնոն քեզ խոստացաւ ։
Եօթն անփորձ եռոտանիս 'ի հուր, եւ տասն ոսկւոյ տաղանդ,
Եւ քսան սանըս փայլուն, եւ երիվարս երկոտասան
Հըզօրեղ՝ պարգեւաստաւս՝ տարեալ ասիւքըն յաղթանակս ։
Որ զաւմ մի այր այսոցիկ էցէ, անշուշտ չէ անքաղաւ ոք,
Ոչ չքաւոր 'ի մեծէ եւ պատուական զանձէ ոսկւոյն,
Որչափ ասիւք մրցանակս առին ձիանն Ագամեմնոնի ։
Տացէ եւ եօթըն կանայս ձեռահըմուտս ընտիր գործոյ,
Լեսբացիս՝ զորս յորժամ կալար զԼեսբոս գեղեցկաշէն՝
Ընտրանաւ առ՝ որ գեղով զկէին ըզգազմ ազգի կանանց ։
Զայսոսիկ տուեալ՝ հանդերձ եւ զոր առաւան յայնժամ՝ զայլէ
Բրիսանոյշ, եւ երդմնի լեալ քեզ ծանր երդումն եւ մեծ,
Թէ իւր չէր յանկողինսն ելեալ երբեք, ոչ զխառացեալ
Որպէս ինչ աւան եւ կէնօջ օրէնք են կարգք եւ կրօնք, արքայ ։



Digitized by Google

Այդ ամենայն նոյնժամայն մատուցի քեզ փութանակի.
Իսկ թէ զմեծն ոստան քանդել ընդ Պրիամու գնդին տայցեն,
Մըտեալ ոսկի եւ պըղինձ բարձեալ 'ի նաւս աղխաղխեսցես
Մինչդեռ զաւարն եւ զկապուտ աքայեցիքըս բաժանիցեն:
Քըսան կին 'ի տրոյուհեաց անտի քեզէն ընտրեալ կալցես
Զառաւել գեղեցկագոյնսն յետ արգոսեանըն Հեղինեայ:
Իսկ յԱրգոս աքայատան' 'ի սոյն երկրի' եթէ հասցուք,
Փեսայասցես նըմա եւ զոյգ իւրն Որեստեայ պատուեսցէ զքեզ,
Որ յատատ ծաղկեալ խրախուսիւ սիրասընուցանէ գըրգի նըմին:
Են նորա դըստերք երեք անդ յարքունիս հրաշակերտոյ,
Անուն՝ Քրիսոթեմիս, Լաւոդիկէ, Իփեանասսա.
Ցոյց զոր ընտրես սիրական' տարցիս առանց ինչ վարձանաց
Ցապարանսըն Պելեւսի. պաշտամականս ինքն յաւելցէ
Ճոխագոյնըս' որպէս չէք դըստեր իւրում տըւեալ ուրուք:
Տացէ քեզ եօթըն քաղաքս վայելչակերտ եւ բազմամարդ,
ԶԵնոպէ, զԿարդամիլէ, Եւս եւ զԻռէ գալարագեղ,
Ըզփերէ զիւցային եւ զմարգագոյնըն զԱնթիա,
Զէպիա զգեղեցիկն եւ զՊեդասոսըն զայգեւէտ:
Ծովափնեայք առ հասարակ' առ աւազին Պիլեայ վերջինք.
Եւ որեար խաշնաւէտ եւ նախրաւէտ նոցին բընակք,
Որ ըզքեզ մեծարեսցեն պատարագօք որպէս զաստուած,
Եւ ընդ քով գաւազանաւ հարկեն քեզ հարկս առատապէս:
Թէ ցածնուս 'ի ցասմանէդ' հաստուսցէ քեզ զայդ ամենայն:
Իսկ սըրտի քում Ատրիդէս թէ անհնարին է ատելի
Ինքն եւ ընծայք իւր, դու սակայն յայլ համօրէն աքայեցիս
Ի բեկեալսն արգահատեա 'ի բանակիս, որ իբր աստուած
Պատուեսցեն զքեզ, եւ անշուշտ առցես քեզ փառս յոյժ մեծապանծ.
Զի սպանցես արդ ըզՀեկտոր' որ կորուսիչ մոլեգնութեամբն
Ի վերայ վարեալ գայցէ, ոչ համարձակ իւր խորհեսցեալ
Լինել զոք 'ի դանայեանց' զոր միանգամ այսր ածին նաւք:
Տըւեալ նըմա պատասխանի ասէ քաջոտն Աքիլլեւս.
Լայերտեան դիւցազնածնդ Ոդիսեւս բազմահընար,
Զայդ արժան է համարձակ յայտնաբարբառ ճառել ըզբանդ'
Որպէս եսս ինչ իմանամ եւ որպէս յանկ ելանիցէ,
Զի մի այլ ոք այլուստ նըստեալ զինեւ ճըռուողիցէք:
Քանզի զորանց դըժոխոց հաւասար ինձ է ատելի
Այր որ այլ ինչ 'ի սըրտին թաքուցանէ եւ զայլ ասէ:
Իսկ ես զայն խօսեցայց' որ ինչ թըւին ինձ բարեդէպ.
Եւ չկարծեմ զիս 'ի հաւան ածել Ատրիդն Ագամեմնի,
Եւ ոչ այլոց դանայեանց. զի ոչ բընաւ շնորհս ինչ եղեւ
Ճակատելըն ընդ թըշնամիսն 'ի մարտ անդուլ հանապազօր.
Նոյն բաժին է յետնելոյն եւ որ կըռուին արիաբար,

Եւ 'ի միում կամ պատուակ քաղաքամարտիկն եւ վառաւորս.
Մեծանի նոյնպէս արդէօք այր եւ ժրագլուխ վաստակաւորն ։
Եւ ինձ ոչ ինչ յաւելու 'ի վերջաւորէց կերէց կարեւոյս
Որ եղև զօգևս 'ի բանին մէջ 'ի Ճակատ պատերազմի ։
Եւ որպէս հաւ անթևեալ ձագուցն ասելով ընկերէցէ շամբ,
Յարժամ ինչ ըմբռնեսցէ եւրով անձինն վրանդաւ,
Ըմբռնում եւ ես գիշերս այսպէս անքուն տատանայեցայ,
Եւ աւուրս արտասուաւնդս 'ի կաթե մարմնոց 'ի գլուխ հանի՝
Ի վերայ կանանց գոյին ընդ առի աւրս եղեալ գուղար ։
Նաւուք քաղաքըս մարդահօյս աւերեցի երկաթատան,
Եւ մեռանան հետեւտս 'ի սեպհականն Տրովադա.
Յորոց յայնց ամենեցունց կապուտ ուժգին եւ հարստանիկ
Առեալ ածի զամենայն առ Ատրիդէսն Ագամեմնոն,
Որոյ յետոյ կացեալ առ նաւաթեւս լաստափայտիւքն՝
Ընկալեալ բաշխէր սակաւ ինչ եւ զբազումն յինքն առնէր.
Իր եւ զոր տայր 'ի պարգեւ Թագաւորաց աւագանւոց.
Եւ կան նոցայքն հաստատուն, յինէն եւեթ առ յաքայեանս
Զամուսինն իմ սիրատարփ, ընդ որ քանեալ թող զուարճասցի ։
Իսկ պէտք զինչ արգելուցեալ ընդ տրովացիսն ելեալ կռուել,
Եւ առ ինչ կուտեաց եկեալ այսր Ատրիդէս զգաւամարտակս.
Ո՞չ առաքէն 'ի պատճառս Հեղինեի վարսագեղին ։
Ատրիդեա՞նք միթէ միայն 'ի բազմաձայն մարդկան ազանց
Սիրեցին զկուրեանց կանայս. ըզգաստ եւ լաւ այր առաքէն՝
Սիրէ զկուրն եւ խնամ ածէ, որպէս եւ ես ինձնին ըզնա
Ի սրտէ սիրէի, թէ եւ գերեալ նիզակեա էր ։
Իսկ այժմիկ՝ 'ի ձեռաց հանեալ զպարգեւս եւ զիս նենգեալ,
Մի՞ ինձ հըմտեա 'ի փորձ մըտցէ, զի եւ չածէ զիս 'ի հաւան ։
Այլ թող ընդ քեզ, Ոդիսեւս, եւ ընդ այլոց Թագաւորաց
Տեսցէ որպէս 'ի նաւուցըն վանեսցէ զհուրն ոսոխիմ ։
Առանց իմ առաքէն բազում ինչ յոյժ վըճարեաց գործ.
Շինեաց պարիսպ եւ զնովաւ պատեաց շուրջ փոս մեծ լայնանիստ,
Եւ ձողս կանգնեալ փակեաց զայն շրջապատ, բայց եւ այնպէս
Զմարդասպանողն Հեկտոր չըսաւ զաւժոյն ուռնել ըզդէմ ։
Իսկ մինչ ես ընդ աքայեանս 'ի պատերազմ արշաւէի,
Հեռի յեւրեանց պարըսպէն չիշխէր մղել ըզմարտն Հեկտոր,
Մատուցեալ ցըղդրանս եւեթ Արեւմըտից եւ ցընկուզին.
Անդ երբեմն եկաց միայն, եւ 'ի յարձակմանս հազիւ զերծաւ ։
Իսկ զի այժմ ընդ դիւցազն Հեկտոր չկամիմ պատերազմել,
Վաղիւ զոհս Արամազդայ եւ համօրէն ուղերձեալ դից,
Եւ 'ի ծով զակազձուն ըզծանրաբեռն իջուցեալ նաւս,
Տեսցես, թէ կամք իցեն, եւ թէ քեզ փոյթ ինչ է 'ի այն,
Վաղ քաշ ընդ այգն 'ի ձկնաւէտն Հելլեսպոնտոս զիմ նաւս 'ի լող



Digitized by Google

Եւ զորեարն ընդ Թեւշմակաց կեղծ 'ի նոսին նախանձաւորս ·
Եւ թէ վերջն Երկրպագատան տացէ յաղթող նուաճելութիւն,
Ի Փթիաստան արգասաւոր 'ի յերրորդում հասից աւուր ։
Ըստ ինչ է իմ զոր Թողի՝ մինչ այսր եկի վաստակաւորակ,
Բայց եւ այլ եւս աստուստ ունի եւ պղինձ շիկակարմիր
Եւ կանայս գեղեցկամէջս եւ ալեհատիպս փայլուն երկաթ
Տարայց որ ինձն անկան վիճակ · իսկ ըզպարգեւս՝ այն որ ետուն ինձ
Ա՜ռ անգրէն Թըշնամանօք տարաւ արքայն Ագամեմնոն
Ատրիդէսն, ում պատմեսջիր յայտ յանդիման զոր պատուիրեմս,
Զի եւ այլքըն զայրթիցեն աքայեցիք 'ի բարկութիւն,
Թէ եւ զայլ 'ի գանձայեանց խորամանկել ակն ունի զոք,
Միշտ լըբրութեամբ ըզգածեալ · եւ ժըպրհութեամբն ամենայնիւ
Մի եւս այլ ժըտեսցի արկանել յակըն զերեսս իմ ։
Բընաւ ոչ եւս 'ի խորհուրդ ընդ իւր մըտից, ոչ 'ի գործ ինչ ·
Զի խաբեաց զիս եւ խըռեաց, եւ ոչ զարձեալ ինչ միւսանգամ
Պատրեսցէ բանիւք, շատ է · եւ կորիցէ խաղաղութեամբ ·
Քանզի զգօնն Արամազդ եբարձ ըզխելսն առ 'ի նմանէ ։
Ատելի են ինձ ընծայք իւր եւ զնա ինքն յընչից քերեմ ·
Եւ թէ ինձ տասնապատիկ, քսանապատիկ տացէ նոյնչափ,
Որչափ է ինչ արդ նորա, եւ թէ ինչ այլ լիցի ուստեք ·
Որչափ զնաին յՕրքոմէն, եւ 'ի Թեբէ եգիպտական,
Ուր 'ի տունըս գանձուց պահէին ստացուածք բազմամըթերք,
Որում եւ դրունք են հարիւր, եւ երկերիւր ընդ մէն մի արք
Անցանեն ելանեն կառօք հանդերձ ուերիվարօք ·
Ոչ, թէ եւ այնչափ ինչ տայցէ՝ որչափ աւազ է եւ փոշի,
Եւ ոչ այնպէս ինչ ըզմիտս հաճեսցէ զիմ Ագամեմնոն,
Մինչ չեւ զզառալն զըրկանացն ինձ բովանդակ տուեալ վըրէժ ։
Եւ ըզդուստր Ատրիդէսն Ագամեմնոնի չամեմ կնութեան,
Եւ ոչ, թէ եւ գեղով զուգապարեսցի 'նդ ոսկեակն Աստղիկ,
Եւ մեղուակն Աթենասայ գործովք մատանցըն զուգեսցի,
Ոչ առից եւ ոչ այնպէս · ընտրեսցէ զայլ ոք յաքայեցւոց
Որ նըմին 'ի դէպ իցէ եւ Թագաւոր վըսեմագոյն ։
Զի եթէ զիս ողջ պահեսցեն դիք եւ 'ի տուն հասանիցեմ,
Պեղեւս ինքնին 'ի կնութիւն ածցէ ինձ հարսն այնուհետեւ ·
Գոն բազում աքայուհիք 'ի Հեղլադա եւ 'ի Փթիա,
Դըստերք աւագաց՝ որ քաղաքաց են տեարկան ·
Ի նոցունց զոր կամեցայց՝ ինձ սիրելի արարից կին ։
Անդանօր իմ յոյժ վառեալ արիական անենչանայ սիրտ,
Ըզխօսեալ կին առնուլ եւ զամուսին ինձ վայելուչ,
Ի վայելս ուրախ լինել ըստացուածոց ծերոյն Պեղեայ ։
Զի 'նդ ոգւոյս իմ փոխանակ ոչ են եւ ոչ այն ամենայն,
Զոր յԻլիոն ասեն զանձեալ 'ի մարդաշատ մայրաքաղաքն

Յառաջնում խաղաղութեան՝ չեւ աքայեանց եկեալ որդւոց.
Եւ ոչ զոր սեռմբ վիմարդեանք նեռող Գուշակն Աղովանի
Ի ծոցին բաժանդակին յապաստածուան անդ 'ի Գիթով:
Զի սաիւ՝ զոյ ժառանգել խաշն եւ արջառ պարարտաբոտ,
Եւ շահել եռատանիս ուեռիվարաց չէկ կառափոնս.
Իսկ ոգի մարդոյ յետս անդրէն շտապի, ւոչ ընկըրանի,
Իբրեւ զամ մի անցեալ ընդ ատամանց ցանկ եղ գընաց:
Զի եւ մայր իմ Թետիս՝ աստուածուհին արծաթաթաթիկ՝
Կըրկնակի ճակատագրաց զիս յեւս առէ տանել մահուն:
Թէ յամեալ աստ ըղտարամեանցըս քաղաքաւ մըղեցից մարտ,
Կորեաւ դարձս իմ յինէն, այլ փառքս անեղծ կացցեն յաւէժ.
Իսկ 'ի տուն թէ երթիցեմ 'ի ցանկալին իմ բնագաւառ,
Կորեաւ պարծանք քաջութեանս, այլ լիցին կեանքս երկայնօրեայք,
Եւ յիս ոչ ձեռ 'ի ձեռայոյ հասանիցէ վախճան մահու:
Նա՛ւանիկ յորդորական առ եւ այլոց կամիմ խրատ,
Նաւել 'ի տուն. քանզի ոչ գըտջիք երբեք ըղկատարած
Բարձրաձեւոյն Իլիոնի, զի Արամազդ ահեղամռունչ
Ունի զձեռն յոյժ հովանի նըմին, եւ զաւրք իւր խիզախեն:
Այլ արդ դուք առ դէ ելէք, աքայեցւոյ աւագանւոյն
Պատմեցէք զպատգամանիդ, ծերունեաց այդ իսկ է պատիւ.
Զի այլ խորհուրդ քաջագոյն 'ի միտս իւրեանց արասցեն,
Որ զերծանիցն նաւուն եւ զամբոխն ապրեցուսցէ զաքայեցւոց
Անդ 'ի նաւուքն խորագոգ. զի զոր այժմուս են խոկացեալ՝
Այդ նոցա չէ ինչ աւգուտ, մինչեւ ես զոխս ունիմ քինուս:
Իսկ Փիւնիքս աստանօր առ իմ մնացեալ 'ի քուն լիցի,
Զի այգուցն 'ի նաւս ընդ իս չուեսցէ 'ի քաղցր հայրենին տուն,
Թէ միայն կամեսցի, զի ոչ ըռնանի վարեմ ըզնա:
Զայս ասաց, նոքա լուռ եւ լըռութեամբ կարկեալ կացին
Ըզդ բանսըն զարմացեալք. զի զայրագին մերժեաց 'ի բաց:
Հուսկ ուրեմըն ձիավարժ ծերըն Փիւնիքս բարբառեցաւ,
Յարտասուս ցընդեալ՝ զի յոյժ խիթայր զնաւացն աքայեցւոց.
Աքիլլեւս հռչակեալդ, եթէ 'ի միտ եդիր ըզդարձ,
Եւ չկամիս յերագ նաւացս հեռքել ըզնաւ զհուրըն ծախիչ,
Որ զի եկն անկաւ յոգիսըդ բարկութիւն սըրտմըտութեան,
Ի՞ըր ապա, սիրուն որդեակ, միայն 'ի քէն աստէն մնացից.
Զի առնուր ձիավարն ընդ քեզ Պէլեւս ատաքեաց զիս
Յաւուրն՝ յոր 'ի Փթիայ յղեաց ըզքեզ առ Ագամեմնոն,
Մինչ դեռ մանուկն էիր անփորձ միակըցորդ պատերազմի,
Եւ ատենից՝ ուր մարդիկ մեծապայծառ փառաւորին:
Վասն որոյ զիս ատաքեաց ուսուցանել զայդ ամենայն,
Զի լիցիս ճարտարախօս 'ի բանս ու 'ի գործըս յաջողակ:
Ի գոյն սակս, որդեակ սիրուն, ոչ կամիմ մեկնել 'ի քէն՝

Եւ ո՛չ խակ թէ աստուած ինքնին կայր ինձ երաշխաւոր,
Զի քերծեալ զալիս յինէն՝ զնկէց յորդունս զիս մանկութեան,
Որպէս յառաջ մինչ լըքի զհեշտնառատան գեղեցկանին,
Ի վրիժուց հօր փախուցեալ՝ յՈրմենիզդեանն Ամենազօրայ,
Որ ցասմամբ էր ընդ իս՝ փոխան հարճին վարդադիմայ
Զոր սիրէրն, եւ ըղձայրեկն իմ զամուսնոյն իւր անարգէր.
Եւ սա զօր հանապազ փարեալ գծընկօքս աղերսէր զիս
Կանխել առ հարճն մերձանել՝ զի զալեւորն ատեսցէ։
Հնազանդեալ կատարեցի, եւ խրազէկ լեալ հօրս անդէն
Ցիս անէծս եհան բազումս, եւ զՎրէժխնդիրսն կոչէր ժանտս,
Ի ծունկս իւր մի՛ բնաւ նըստել որդի սիրուն յիմ զաւակէս.
Եւ աստուածքըն լըցեալ կատարեցին ըղձըզանս իւր,
Արամազդ անդընդային եւ սոսկալին Պերսեփոնէ։
Խորհուրդ կալայ սպանանել ըզնա 'ի սուր սայր պղընձի,
Սակայն յանմահից ըզբարկութիւնս լըռեցոյց ոք
Արկեալ 'ի միտս ըզզրոյց ազգին եւ ըզմարդկան յոլով նախատս,
Զի մի՛ զհայրասպանի կալայց անուն յաքայեցիս։
Ցայնժամ ոչ եւս 'ի սըրտիս ժուժեալ հոգիս համբերէր բնաւ
Ցերեւաց սրտմտութեան հօր յապարանս անդ կալ շըրջել։
Արդարեւ ընկերք բազում եւ որ զինեւ շուրջ թայրաթոսք՝
Աղաչեալ զիս անդէն արգելուին անդ յապարանս,
Ցուլս օգիս յաճախ ուխտելեալս ծանրաքայլս եւ կորեղջիւրս
Զենուին, եւ ճարպալից եւ պարարակ խոզեան բազում
Ի խորովս արկեալ լինէր զհեփեստական հըրոյն բոցով.
Եւ սաստ՝ 'ի կարասեց ծերոյն՝ զինի յարբուսն գայր։
Ինն գիշեր շուրջ զինեւ փարեալ ըզքնով անկանէին,
Անէլին փոխանակաւ պահպանութիւն, եւ ոչ երբեք
Շիջաւ հուրն, էր որ 'ի սրահ անդըր զաւթի ապարանիցն
Եւ էր որ յանդաստակն առաջի դըրանց առագաստին։
Իսկ յիմ վերայ եկելոյ եկըն տասներորդ մըթին գիշեր,
Ցայնժամ իմ զառագաստին կարծրակերտ դուրսն խորտակեալ՝
Արտաքս անկեալ վաղեցի հեշտաւ ընդ տանըն ցանկապատ
Զանխուլ յորանց պահեկաց եւ 'ի կանանցն աղախնութեանց։
Տարադէմ այսր փնացի 'նդ լայն Հելլադայ փախըստական,
Եւ հասի յարգասաւանդն 'ի Փթիա մայր խաշանց հօտից՝
Առ արքայն Պեղեւս որ զիս կամաւ սըրտի 'նկալեալ հանդարտ,
Եւ սիրեաց զիս որպէս հայր զի զիւր որդեակն սիրեսցէ
Զմիամօրն՝ ըզյետամնեան 'ի մեծամեծ գոյից մըթերս.
Մեծացոյց զիս եւ առատ ժողովըրդեան յիս յանձն արար,
Եւ 'ի Փթիոյ բնակէի սպառածայր՝ իշխող լեալ Դողոպայց։
Եւ զքեզ յայդ, Աքիլլեւս աստուածանման, հասուցի չափ,
Սիրեցեալ սրտիւ. զի ոչ ընդ այլ ումեք ախորժէիր

Ի կոչունս ուրեք երթալ, ոչ անդ 'ի տան ինչ ճաշակել,
Եթէ ոչ տանել ընդ քեզ եւ նստուցեալ 'ի ծունկս իմ
Եւ մանրեալ ընկերակերակրին լանջէք քեզ եւ զգինին:
Բազում անգամ զպարեգօտս 'ի լանջըս իմ թացեր գինեաւ
Ցըրուեալ 'ի բերանոյդ 'ի դըժուարին տղայութեան անդ:
Այսպէս շատ ինչ չարչարեալ եւ շատ ընդ քեզ տառապեցայ,
Ըմբռնու ածեալ զի դիք չընծայեցին յինէն զաւակ,
Այլ յորդի զքեզ, Աքիլլէս աստուածատիպ, ինձ արարի,
Զի երբեմն 'ի դըժնէ կորըստենէն պահեսցես զիս:
Արդ ածէ, Աքիլլէս, բըռնաւորեա զոգիդ քո մեծ.
Ոչ 'ի դէպ քեզ սիրտ անգութ, զի դիք անգամ են հեշտալուրք,
Որոց մեծ եւ առաւել է քոյն, պատիւ եւ զօրութիւն,
Եւ սակայն պատարագօք եւ մաղթանօք ողոքանաց,
Նուէրօք եւ ճենճերով պատարագաց արկեալ աղերս
Հաշտ առնեն զնոսա մարդիկ, թէ ոք յանցանս ինչ մեղիցէ:
Քանզի են եւ Աղերսք Արամազդայ մեծին դըստերք,
Կաղ ոտիւք, խորշոմերեսք եւ շիլ աչօք ակընկորեալք,
Որ եւ զհետ Եղերան հոգածութեամբ կըրթին երթալ:
Իսկ Եղեռն՝ հըզօր, ոտջան, ոյր աղագաւ զամենեքեանս
Ցառաջեալ ընթանայ եւ ժամանէ 'նդ երկիր ողջոյն
Առ մարդկան վնասելոյ, եւ նոքա զհետ առնին զարման:
Որ յերեւաց զդըստերացըն պատկառէ Արամազդայ,
Մեծապէս օգնեն նմին, եւ յաղաչելն ունկըն դընեն:
Իսկ որ կայն եւ անկուշէ եւ չաւանէ յանձըն կամակոր,
Ցայնժամ գնան աղաչանքն առ Արամազդըն Զըրուանեան,
Զի անկցի Եղեռն ընդ նմին իսկ եւ տուժեալ լուծցէ վըրէժս:
Արդ եւ դու տուր, Աքիլլէս, տանուլ զդըստերացն Արամազդայ
Ըզպատիւն որ եւ զայլոց քաջաց ըզմիտսն ողոքէ:
Զի թէ չտայր այժմ Ատրիդէս պարգեւս եւ այլս ըզնին թըւէր
Այլ անդուստ 'ի հեռուստ եւ յախորժ կայր 'ի խըռովման,
Եւ ոչ ես ինչ քեզ խըրատ տայի թողուլ զոխըդ 'ի բաց
Եւ օգնել արգիւացւոց, թէպէտ եւ յոյժ են ցանկացեալ:
Նա 'ւանիկ այժմէն բազում ինչ տայ եւ այլս ըզկնի տացէ,
Եւ արս ականաւորս յաղերս յըղեաց պաղատանաց,
Ցամենայն աքայեցւոց ընտրեալ որ քեզդ են սիրելիք
Ցամենայն արգիւացիս. մի դու զսոցին բանս անարգեր
Եւ մի զոտս. առաջին ցասումն քո չէ ինչ բասիր:
Այսպէսիկ եւ զնախընթացս արանց քաջաց լուաք զհամբաւ.
Մեծհամբաւ իբրեւ ունէր սըրտամըտութիւն բարկութեան զոք,
Ընծայից առնային եւ ողոքիչ յորդորանաց:
Ցիշեմ ես զհնաւուրց իրաց ինչ գործս, եւ ոչ նոր ինչ,
Եւ զինչ եղեն պատմեցից ձեզ սիրելեացդ ամենեցուն:

Զկալիդոն քաղաքաւ Կուրետք ու Էտոլք ախոյեանք քաջք
Պատերազմեալ լինէին եւ ընդդիմանօք սատակեալ.
Էտոլք կային ընծայեալ Կալիդոնի վերամարտիկք,
Իսկ Կուրետք՝ խիզախեալք 'ի գուպարած սատապալել զայն:
Ի սուսին Արտեմիս սակխաւթու սուտոյց ածէր՝
Զայրացեալ զի նմա չեհան երախայրեաց նուէրս Ինէոս
Ի պարարտ անդին ուր այլք 'ի դից եղեն զոհիցն հաղորդք,
Եւ մեծին Արամազդայ գըտանէր միայն մատոյց ինչ ոչ,
Մոռացեալ կամ ոչ խորհեալ յանզգամութեան՝ յոյժ մեղանչեաց:
Եւ նորա սրրտմտեալ, արամազդեան զարմ Նետողբոս,
Զարթոյց կինձ մի վայրագինակ վայրադաշտաւան ապխտակաւանին,
Որ ընդելեալ յանդգամաման Ինէոսի զեան գործեաց բազում,
Եւ բըրեալ՝ խիտ առ խիտ տապաստ ընկեց ծառս երկնաբերձս
Ընձուղին արմատախիլ նամին հանդերձ պտղոյց ծաղկօք:
Ինէոսի որդին ըղձա հար սատակեաց Մելէագրոս,
Ի քաղաքաց քաղաքաց գումարեալ արս եւ պատանիս
Որսակիցս իւր, զի եւ չէր ինչ պարտելի գոյզն մարդկաւ.
Այնքանն էր եւ զյողունս յօղորմագին եհան խարոյկ:
Արտեմիս յարոյց աղմուկ սաստիկ եւ մարտ Մելէագրի՝
Զխալամոյ վարազն եւ զթաւամազն կաշի խորխին,
Ի մէջ կողմանց Կուրետացն եւ Էտոլացն մեծանձանց:
Արդ մինչդեռ սիրելին Արեայ կռուէր Մելէագրոս,
Հարուածք էին 'ի Կուրետս, եւ կարէին ոչ մնալ
Կալ արտաքոյ պարսպացն, թէպէտ էին ուժգին անթիւ:
Իսկ յորժամ զՄելէագրոս կալաւ ցասումն բարկութեան,
Որ զայլոց եւս խմաստնոց ըղձիս 'ի լանջս այտուցանէ.
Քանզի նա, սիրտ զայրացեալ սիրելւոյ մօրն Ալթեայի,
Առ հարազատ կայր կըսոջն, առ գեղանւոյն Կլէոպատրայ,
Դըստերն Եւենոսայ Մարպեսսայի գեղեցկատեն
Եւ Իդեսի՝ որ հզօր գըտաւ յայնժամ յազգ երկրաւորս.
Քանզի սա առ սա զիւր աղեղն ընդդիմամարտ ընդ արքային
Փուշակին Ապոլոնի՝ զգեղեցկապարուն յաւերժհարսնէն: —
Ըզնա յայնժամ յապարանսն հայրն եւ մայրն մեծարոյ
Ալկիոնէ ձայնէին յորջորջաբար կոչեալ անուամբ.
Քանզի մայրն 'ի մեծասուգն Ալկիոնի համակեալ վշտաւ՝
Լայր մինչ Փուշակն Ապոլոն զինքն յափշտակեաց: —
Առ նըմա կայր նա նըստեալ՝ պահեալ ըղձէն իւր սրտատանջ,
Դըժգմեալ 'ի մօրն անիծից՝ որ առ աստուածս աղերս բազում
Արկանէր առ ցասուցն ընդ հարազատ եղբօրն սպանման,
Եւ յաճախ ձեռօք իւրովք ծեծէր զերկիր Խարտաշատ՝
Կարդալով զԱնդնդապատեան եւ ըզգեղեցկայն Պերսեփոնէ,
Անդ 'ի գոգս իջեալ նըստեալ, եւ թողոյր ծոցն արտասուօք,

Զի մատնեսցեն զորդին 'ի մահ. եւ Վրիժառուն խաւարայած
Լըւաւ նըմա 'ի մըթնեցեալ գըժոխոց յանդնդոց անտի ։
Եւ անդէն առ դըրամբք նոցա զարթեաւ խաղմ եւ դղըրդ
Եւ բըրգունքըն հարկանէին, եւ Էտօլացըն ծերունիք
Մաղթէին ըզնա եւ զդիցն առաքէին ընտրեալ քըրմունս ,
Ելանել եւ վանել , մեծ խմն ընծայս խոստանալով .
Յարդարուանդ վայրի ուրեք 'ի ցանկալըն Կալիդոնի
Հրաման արարին գետին մի իւր ընտրել ըզքնաղ
Ի յիսուն անդաստան , կէս մի յայգիս գինեբերաց ,
Կէս մի ագարակ դաշտօրեայ՝ 'ի հերկ 'ի վար իւր զատուցեալ ։
Եւ ձիավարուղ ալեւորն Ինէոս ըզնա յոյժ թախանձէր
Անդ 'ի սեմանըն կալով բարձրաձեղուն առագաստին ,
Ըզյօդաւորեալն ամրակառոյց շարժելով , զորդին իւր աղերսելով .
Քորք եւ մայր իւր մեծարոյ աղաղակէին առ նա յաճախ ,
Մեծարգոյք եւ ամենափայլք իւր սիրելիք քան զամենայն արգոյք .
Իսկ նա կայր յամառեալ ապնդեալ եւ ոչ յանձն առնէր ։
Ոչ եւեթ եղեն կարող զոգին 'ի լանջըս իւր մեղմել ,
Մինչեւ առեալ առագաստին իսկ դըրկովըն կոծել բաղխել ,
Եւ յաշտարակըն ելեալ Կուրետք՝ յոստանն հըրձիգ լինէին մեծ ։
Յայնժամ անդ գեղեցկագօտին իւր ամուսինն 'ի ձայն զուժի
Աղաչէր զՄելէագրոս՝ ցուցեալ նըմա զաղէտս համայն
Որ ինչ մարդկան գան 'ի գըլուխ որոց ոստանն յաւար գնայցէ .
Քանզի զարսըն կոտորեն , յաճախեն զառն բոց ըզքաղաքըն ,
Այլք զորդեակս եւ ըզխոնարհս գեղեցկալանջըս հանեն վարեն ։
Շարժեցաւ ոգի նորա 'ի գըժընդակ եղերանաց լուր ,
Եւ գնաց՝ առեալ զանձամբ զըսպառազինութիւնըն պայծառափայլս ։
Այսպէս նա յԷտօլացւոց հալածեաց զօրըն կորուստեան
Յանձուցեալ յոխութեանն , բայց ոչ եւս այլ հատուցին ինչ
Ի բազում ձրից ընծայիցն , եւ հերքեաց այնպէս իսկ զաղէտն ։
Այլ դու մի՛ դիցես 'ի մտի զայդ , սիրելի , եւ մի՛ զքեզ դեւ
Անդր 'ի նոյն կոյս միտեսցէ . զի չարաչար յոյժ լինիցի
Յետ նաւացն հըրկիզութեան՝ գալ յօգնութիւն , այլ յընծայսն եկ ,
Զի պատուեսցեն աքայեցիք զքեզ օրինակ աստուածակերպ ։
Իսկ առանց պարգեւաց 'ի մարդասպան թէ մըտցես մարտ ,
Ոչ եւս 'ի նմին լիցիս պատուի , թէ եւ հարցես ըզպատերազմ ։
Պատասխանի արարեալ ասէ առ նա քաջն Աքիլլէս .
Փիւնիկս , հայր ծերունի , դիւցազընաւոր , չէ ինչ ինձ պէտք
Պատուոյդ այդըմ , զի կարծեմ պատուել խնամօքն Արամազդայ ,
Որ զինեւ փարեսցին առ մահկաձեւ նաւատորմիս
Յորժամ մնասցէ շունչ 'ի լանջըս եւ ծունկըս յընթացըս խաղասցեն ։
Քեզ եւ այլ ինչ ասասցեմ , եւ դիր դու զայն 'ի միտըս քո .
Ողբովք եւ հեծութեամբք մի՛ դու զոգիս իմ քայքայեր՝

Աորիգեան դիւցազին պաշտօն 'ի շնորհս խնդ աճնեալ.
Չէ պարտ սիրել քեզ ըղձս, զի մի յիմեն սիրոյս անկցիս,
Ընդ իս լաւ իցէ քեզ ըղձերաշխաւորին իմ վեհագունել.
Հարթ ընդ իս թագաւորես եւ զկէս պատուոյն վիճակեսցես:
Դողքս զննացեալ պատմեսցեն. կաց դու մնացիր եւ աստ նըստեա
Ի կակուղ անկողինս, եւ 'ի ծագել առաւօտուն
Խորհեսցուք թէ զանձնայցեմք 'ի մերոն արգելոց, եթէ մնասցուք:
Ասաց, եւ ակնարկեաց լռելի յօնիւքն առ Պատրոկլոս՝
Արկանել թանձր անկողինս Փիւնիկսի, զի խոկայցեն
Փութով 'ի դարձ 'ի վրանէ անտի, սակայն Տելամոնեան
Այաս աստուածանկերպ զայս առ նոսա բարբառեցաւ.
Լայերտեան դիւցազարմն Ոդիսեւս բազմահանճար,
Արի գնասցուք, զի մեզ սոքին ճանապարհաւ ինձ ոչ թուի
Ժամանել յաւարտ գործոյս, եւ պարտ է մեզ տանել ձեռագոյն
Ըղձապատգամս, թէ եւ չէ ինչ քաղցրալուր, առ դանայեանն՝
Որ զարդիս ակընկալեալ նըստին թերեւս. այլ Աքիլլես
Վայրենի սիրտ մեծամիտ 'ի ծոց իւրում պահէ ծրարեալ.
Աղքատամ, եւ ոչ երբեք ինչ մըտերմացն առնէ սիրոյ՝
Զոր 'ի վեր քան զայլս զինքն առ նաւիններովս մեծարեմք:
Անողորմ. պատուէն 'ի սպանողէ իսկ ոք եղբօր
Կամ որդւոյ խողխողելոյ նըղանի տուգանս 'ի փրկանս.
Եւ բազում ինչ հատուցեալ՝ 'ի քաղաքի անդ մնայ նա,
Եւ սորա՝ զփըրկանսն առեալ՝ զիջանի սիրտն եւ միտք յախորտ.
Սակայն քեզ՝ անողոք եւ դըժընդակ 'ի լանջս ոգի
Տընկեցաւ հանապազեցին դիք 'ի պատճառս աղջկան միոյ:
Իսկ այժմիկ՝ եօթն եւս այլ քեզ մատուցանեմք ընտրեալագոյնս,
Եւ թող զայն՝ այլ ինչ բազում. գթեսցիր եւ դու մտօք յածուցեալ,
Ի մարդակայցդ պատկառեա, զի 'ի նոյն գերանայցդ կամք յարկաւ
Ի սոյայէն դանայեցւոց, եւ քան այլոց՝ խնդամ ունիմք
Քեզ լինել սէրս սիրելի քան զամենայն աքայեցիս:
Երագոտն Աքիլլես պատասխանի տուեալ ասէ.
Այաս դիւցասերունդ, Տելամոնեան, իշխանդ ազգաց,
Թըւիս ինձ զամենայն ինչ 'ի սըրտէ քումմէ խօսեալ.
Սակայն իմ ուռնու սիրտ զայրացութեամբ քանիցս յիշեմ
Զի առ խոստանս ինչ եհաս յարգեցոյս զիս Ատրիդէս
Իբր անզգամ այր մի անշուք վտարանդեան անաշխարհիկ:
Այլ երթք դուք երթայք եւ զարձուցէք զհրեշտակութիւնդ.
Քանզի ոչ խորհեցայց 'ի պատերազմ արիւնալից,
Մինչեւ որդին Պրիամու քաջասրտոյ՝ դիւցազն Հեկտոր՝
Ի խորանս եկեալ հասցէ եւ 'ի քաշտս Միրմիդոնեաց
Կոտորեալ զարգիւացիս, եւ արասցէ հրկեզ ըղնաւս:
Իսկ զիմովքս վրանաւ եւ զԹըխաթոյր նաւափայտիւ

Զմոլեգնեալն անգամ Հեկտոր 'ի գոռալոյն կարճել կարծեմ:
Զայս ասաց, նոցա բաժակ մի կրկնաստաշտ առեալ անցնէին,
Նուէրս հեղեալ՝ դարձան 'ի նաւս, եւ Ոդիսեւս կարապետէր:
Պատուէր ետ Պատրոկլոս ընկերակցացն եւ աղախնայց
Արկանել Փիւնիկի փութանակի թաւ անկողինս,
Եւ անկողինս աղախնանց լցեալ արկին ըստ հրամանին,
Ոչխարս եւ պաստառս եւ նրբանիւթ ծաղիկ կտաւոյ.
Անդ ննջեաց ալեւորն եւ դիւցազին Այգոյն մնայր:
Իսկ Աքիլլէս յանկուց կողմ վայելչակերտ վրանին քնեաց,
Եւ առ իւր կողմնեցաւ զոր 'ի Լեսբեայն էր բերեալ կին՝
Դուստրն Փորբանտեայ Դիոմեդէ չքնաղագեղ:
Եւ յայլում Պատրոկլոս ննջեաց կողման, եւ առ նմա
Գեղեցկագօտին Իփիս զոր ետ նմա դիւցազն Աքիլլէս՝
Առեալ բարձրաբերձն Սկիրոն զԵնիւսեան հարեալ քաղաք:
Իսկ նոքա իբրեւ եկին յԱտրիդեան հասին խորանս,
Ողջունեցին զնոսա նուագօք ոսկեղէնք որդիք աքայեցւոց
Յարուցեալ այլ ըզ այլում, եւ մատուցեալ հարցանէին.
Առաջին հարցանէր արար արանց արքայն Ագամեմնոն.
Օ՛ն ասա ինձ, բազմագովդ Ոդիսեւս, մեծ փառքդ աքայեցւոց,
Ախորժեսցէ՞ յանձն առնել 'ի նաւակաց զհուրն մերժել,
Թէ մերժեաց, եւ զմեծամիտ սիրտն ունի դեռ եւս զայրոյթ:
Կրկնեալ անդրէն Ոդիսեւս յոգնատառապան դիւցազն ասէ.
Մեծափառդ Ատրիդէս Ագամեմնոն արանց արքայդ,
Նա չկամի շիջուցանել ըզբարկութիւն, նա՛ մանաւանդ
Բորբոքի առաւելութեամբ, եւ անարգէ զքեզ եւ զպարգեւսդ:
Եւ պատուէր տայ քեզ խորհուրդ 'ի մէջ առնուլ յարգիւացես,
Թէ զինչ ըզնաւս եւ զօրս աքայեցւոց ապրեցուսցես:
Իսկ ինքն՝ սպառնացաւ ընդ երեւել վաղորդայնոյն
Ի ծով ըզնաւս իւր ածել ըզգեղապատախս եւ ըզձօձձեմ.
Եւ այլոց անգամ ըզնոյն տալ ասէ խրատ ամենեցունց
Եւանել նաւել 'ի տուն, զի ոչ բնաւ գտջիք զվախճան
Բարձրաբերձն Իլիոնի, զի Արամազդ որոտագոչ
Հովանի մեծ զձեռն ունի նմա եւ զօրքն են խիզախեալք:
Զայս ասաց. եւ աւասիկ են որ ընդ իմ եկին՝ պատմել,
Այաս եւ երկոքին նաւիրակապետք ըզգօնամիտք.
Իսկ Փիւնիկս ալեւորն անդէն ննջեաց ըստ հրամանին,
Զի երթէ զհետ իւր նաւուքն 'ի սիրելին իւր բնագաւառ
Առ վաղիւ՝ թէ հաճեսցի, զի բռնաբար ոչ տարցի զնա:
Զայս ճառեաց, նոքա լռեին պապանձեցան առ հասարակ
Ընդ խօսսն պակուցեալք, զի սաստկապէս էր բարբառեալ:
Եւ յերկար կարկեալ կային թախծեալ որդիք աքայեցւոց.
Հուսկ ուրեմն ահեղագոչն Դիոմեդ եբաց զբերան.

696

Վեհափառդ Աստեղէն՝ արքայդ արանց Ադամեանն ,
Չէր արժան քեզ աղաչել ըզՔնէլեւսեանն բաղանչելին՝
Բիւր իմն ընծայս ընծեռեալ, որ եւ ինքնին իսկ շնորհանայր ,
Իսկ արդ եւս սատակել տարրար հաներ 'ի վիճակութիւն :
Այլ անփոյթ զինքն արասցուք , եթէ գնայցէ եւ թէ կայցէ ·
Եւ յանժամ վերըստին մըտանիցէ դարձեալ 'ի տաղմ,
Մինչ զըրդեսցէ սիրտ իւր 'ի լանջս եւ յարուսցէ զինքն աստուած :
Այլ աւաղ , զոր եսս ասեմ ունկըն դիցուք ամենեքեան ·
Երթայք այժմ հանգերուք կազդուրեալ ըզսերտութս ձեր
Հացիւ եւ գինւով, զի այն է ոյժ եւ զօրութիւն :
Իսկ 'ի ծագել գեղեցիկ եւ վարդագունեան Առաւօտուն՝
Առաջի նաւացն հանդիպ զաւագօրսն եւ զկառսն հետ ընդ հետ՝
Խրախուսեալ զնոսա , եւ դու ինքնին մարտիր ընդ նախահատակս :
Ասաց զայս , եւ Թագաւորըն ամենեքին հաւան եղեն
Ընդ բանսըն հիացեալք ձիախրոխտին Դիոմեդեայ :
Եւ հեղեալ անդէն նըւէրս՝ այր այր 'ի վերայ իւրեանց շոգմոն ,
Եւ մըտեալ ներքնեցին եւ ընկալան զըքնոյն պարգեւս :

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

---

## ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ագամեմնոն անքուն անհանգիստ՝ զարթուցանէ զիշխանսն եւ խորհին դէտ արձակել զօրք 'ի ճամբար թշնամւոյն. Ոդիսեւս եւ Դիոմեդէս ելանեն 'ի գործ անդր: Անդուստ եւ Հեկտոր կամեցեալ գիտել՝ թէ յետ երեկի պարտութեան 'ի փախուստ խորհիցին եւ անփոյթ առնիցեն Յոյնք զզինուորապահութեանն, զԴոլոն այն լրտես հանէ 'ի ճամբար անդր նոցա: Հանդիպեալ սորա երկոցուն քաջացն յունաց, առ ահին ցուցանէ նոցա զկրն ստուգութեամբ եւ զհանդամանս բանակին տրովացւոց եւ նիզակակցացն. սատակի 'ի Դիոմեդեայ, որ ընդ ընկերին իւրում լուռ անզգուշութեանն առելոյ օգտեալ մինչեւ 'ի գունդն Թրակացւոց ընկղմելոց 'ի խոր քուն, զբազումս խողխողեն, եւ զԹագաւորն նոցա, զորոյ յաւարի առեալ տանին զերիվարս կառացն, եւ դառնան դարձ առ իւրեանցն:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՏԱՍՆԵՐՈՐԴ

### ԳԻՇԵՐԱԴԻՏՔ . ԴՈԼՈՆԵԱՆ ԴՐՈՒԱԳ

Եւ արդ այսր յուսապանոյն ազգմանց հանուրց առ նաւակեց
Նըմըլին զեւեռն 'ի բուռն ըղձապաղղրանեղ անկեալ քընով.
Այլ ոչ զԱտրիդեան Ագամեմնոն, զհովիւն ազգաց,
Ունէր ներգէ անուշակ՝ մըրայն 'ի ծովափս յուղեալ բազում:
Իբր յորժամ փայլատակէ այրն Հերայի վարսագեղին
Պատրաստեալ անձրեւ սաստիկ անպատմելի եւ կամ կարկուտ,
Կամ ձիւնաբերս՝ յորժամ բուք ալեաց ակն յերկաս երկրի,
Կամ ուրեք ըղձեծ բերան զատանահամայր պատերազմին.
Նոյն 'ի ըմեղըմ իւր ըստէպ յոգւոց հանէր Ագամեմնոն
Ի խորոց սրտէն, եւ միտք իւր դողային յանձին իւրում:
Զի մինչ ակն 'ի արտաքակամն անդր արկանէր 'ի դաշտավայր,
Զարմանայր ընդ խոյս հրոյս արկեալ հանդէպ Իլիոնի,
Եւ ընդ ձայն փողոց՝ սրընգաց եւ ընդ մարդկանն ամբոխութիւն.
Իսկ երբ զէնսն անձանայր 'ի նաւս եւ զօրս աքայեցւոց,
Փունջ փունջ կորզանէր զհերսն 'ի գլխոյն ձգեալ փոխ էր
Բարձրելոյն Արամազդայ, եւ սիրտն մեծ հեծէր ծանուն:
Եւ այս նորա քաջուշիմ խորհուրդ 'ի միտս երեւեցաւ,
Երթալ առ առաջինն երթալ արանց՝ Նելեան Նեստոր,
Թերեւս խելս ինչ հանճարեղ կարօղ լինի խառնել ընդ իւր,
Որ 'ի չարեացն համօրէն ապրեցուսցէ զդանայեցիս:
Յարուցեալ ըզգեցաւ ըզպատմուճան ըզլանջօքն,
Եւ խորացեաց ընդ մաքուր ոտիւքն ըզսանդալսն գեղեցիկս,
Եւ արկաւ ապա զկարմիր առիւծենի կարմրատեսիլ,
Շիկորակ, ոտնահաս, արձակընդեալ, եւ առ նիզակն:

Ի նոյն դողի կայր Մենելաւոս, քանզի եւ յիւր արտեւանունս
Ոչ էջ նինջ, թէ ինչ գուցէ արգիւացւոց հասցէ վտանգ,
Որ լայնալիր ասպարէս խռնաւական հասեալ վասն իւր,
Ի Տրովա եկին հասին՝ 'ի կռիւ յանդուգն ասպատակել:
Խայտաբղէտ ընձենեաւ ըզթիկնաւէտ իրան իւր յաղթ
Ծածկեալ նախ, ապա եդ 'ի գլուխն ըզսաղաւարտըն պղնձաձոյլ,
Եւ առոյգ գէր ձեռամբըն բուռն հարեալ 'ի տիգաբունն,
Ել գընաց զարթուցանել զեղբայր իւր զմեծ իշխանապետն
Ամենայն արգիւացւոց՝ զաստուածաբար պատուեալն յազգէն:
Եգիտ ըզնա զի զուսովքն ըզգեղեցիկ զէնսն արկանէր
Առ խելցք նաւին, եւ յոյժ հաճոյ եղեւ գալուստ նորա:
Նախ առ նա բարբառեցաւ Մենելաւոսն ահեղագոռ.
Զի՞ այդպէս, սիրելիդ, 'ի զէն վառիս. թէ կամք իցեն
Ցընկերաց յարուցանել զոք 'ի լըրտես. այլ յոյժ խիթամ,
Գուցէ ոչ ոք քեզ յանձն առնուցու զգործըդ զայդ ըզմեծ,
Միայնիկ գէտ ելանել, ըզթըշնամեաց լըրտեսել զունդ
Ընդ գիշեր անմահական, զի այր սըրտեայ յոյժ պիտի ոք:
Ագամեմնոն արքայ նըմին պատասխանի տուեալ ասէ.
Պիտոյ իմն է եւ քեզ, ով դիւցազնածնունդ Մենելաւոս,
Փըրկարար եւ կեցուցիչ ինչ խորհըրդոյ հանճարեղի
Զարգիւացւոց եւ զնաւաց, զի դարձան միտք Արամազդայ,
Առաւել իմն ուշ եդեալ 'ի Հեկտորեանսըն հայի զոհս:
Զի չաեսի երբեք ուրեք եւ ոչ լըւայ 'ի համբաւոց՝
Այսքանիս առըն միում գործեալ յաւուր-ըն աղէտաբերս,
Որչափ Հեկտոր սիրելին Դիոսյ եւեց յաքայեանցս ազգս,
Ինքնորէն, ոչ զարմ սիրուն աստուածուհեաց, եւ ոչ աստուածոյ.
Եւ գործեաց՝ ընդ որս յերկար կարծեմ հոգալ արգիւացւոց
Եւ յաճախ, զի այնքանիս աքայեցւոց հասոյց աղէտս:
Այլ դու երթ առէ այժմիկ կոչեա զԱյաս եւ զԻդոմեն
Ընթացեալ փութով 'ի նաւսն, եւ ես առ Նեստոր գնացից դիւցազն
Եւ ձայնեցից յառնել կալ, եթէ երթալ յօժարիցէ
Ի սուրբ ջոկ պահապանացն, եւ տալ խորհուրդ ինչ եւ պատուէր:
Զի նմա յաւէտ անսասցեն, քանզի նորուն իւր եւ որդին
Հրամանատար է պահակացն, եւ զինակիցն Իդոմենեայ
Մերիոնէս, զի եւ տուցին իւր մանաւանդ յանձն արարաք:
Եւ նըմա պատասխանի Մենելաւոս ահեղագոռն.
Իսկ արդ զի՞նչ ինձ 'ի բանից այդցիկ հրաման պատուիրանի.
Մնացի՞ց անդ ընդ նոսին, ակըն կալեալ քում գալըստեանդ,
Թէ տուեալ քաջին պատուէր՝ դարձեալ առ քեզ ընթանայցեմ:
Կըրկնեաց առ նա մեծազդամ արանց արքայն Ագամեմնոն.
Անդ կացջիր, գուցէ յերթին մոլորեսցուք այր յընկերէ.
Զի բազում 'ի ճանապարհս աղամողեալ են ճանապարհք:

Խօսեա յիմ եւ գնայցես եւ կալ արթուն պատուէր առնիր ,
Ի տոհմէն հայրենի կարգաւորել զայր խրատաբանչէր ,
Մեծարեալ զամենեսին եւ հաւանեան մի մեծամեծոք :
Նա եւ մեք խակ զէն զգեցուք · զի զուգյես այսպէս Արամազդ
Անզգամին 'ի ծնողնդէնի մերմէ արկած ծանր ընկէց մեզ :
Առասցեալ զայս արձակեաց զերազայրն՝ ուշիւ եղեալ պատուէր :
Իսկ նիզքն յարուցեալ գնաց առ հովիւն ազգաց Նեստոր ,
Եւ եղեւ զնմին առ վրանին եւ Թերսաթոյր նաւին խուրուս
Ցանկողին փափուկ , եւ զԵզրն նկարեալ կայնի առ խոր ,
Աստղար , կըրին զերաշխրդունք եւ սողոսակ շողանըշողըղ :
Եւ կամարն անդ կայր մերձ խոյամաճանանակ , զոր ծերն ածէր
Ի զբաղեալն 'ի զուարթար մարգարտաշող պատերազմի
Ի գլուխ գընդին , քանզի չեւ նըկաւն էր ըեալ հէք ծերութեան :
Արդ յարմնակն յարեաւ յեզ , եւ ընդրդրուկին առեալ 'ի վեր՝
Խօսեցաւ առ Ատրիդէսն եւ հարցանէր բանիւս այսու ·
Ո՞վ ես դու , 'ի նաւատորմն եւ ընդ Ճաճանակ յածեալ միայն
Ընդ խաւար գիշերոյս , ուր այլք նընջեն մահկանացուք ·
Մի թէ զնջ 'ի պահապանաց կամ յընկերացդ խնդրեցես ·
Խօսեաց՝ եւ մի թաքթաքուր մերձիր առ իս , զի՞նչ պէտք իցեն :
Եւ նըմա պատասխանի արքայն արանց Ագամեմնոն ·
Ո՛վ Նելեանդ Նեստոր , աքայեցւոցս մեծ պարծանք ,
Ծանիցես զԱտրիդէսն Ագամեմնոն զոր զեր ընաւից
Արկ Արամազդ յանդուլ տառապանս մինչեւ 'ի լանջս շնչեսցէ շունչ ,
Եւ ծունկք իմ ընդ ինեւ 'ի քայլափոխս շարժեսցին :
Շրջիմ այսպէս , քանզի քաղցր քուն իմ քուն ոչ իջանէ ,
Այլ հոգամ ընդ պատերազմս , ընդ տառապանս աքայեցւոց :
Զդանայեանց յոյժ կասկածեմ , անձն 'ի թընդաղ կամ յերերի ,
Գախեալ եմ միտքս , սիրտս 'ի կըրծիցս 'ի բաց վազէ ,
Եւ անդամք իմ առոյգք ընդդողանի հարեալ քըստմնին :
Այլ գործել ինչ թէ խորհիս , զի ոչ եւ զքեւ անկանի քուն ,
Հնազա իջցուք առ պահնորդացն տեսանել թէ մի զուցէ
Խոնջք , վաստակաբեկք եւ ծանրացեալք եւս 'ի քնոյ ,
Մոռասցին արթնել պահպանութեան՝ 'ի նմին կայցեն :
Իսկ ոսոխքն թշնամի նըստին առաւ մերձ , եւ ոչ գիտեմք
Թէ արդեօք գիշերախառն խակ մարտ գոնեն չածէք զմեզ :
Եւ նըմա պատասխանի Նեստոր ասպետըն Գերենեան ·
Մեծափառդ Ատրիդէս , արանց արքայդ Ագամեմնոն ,
Աստղէն եւ զհեկտորին ոչ զամենայն կամս Արամազդ
Զոր մտադրեալ եւ յուսայն՝ 'ի գլուխ տարցի · նա եւ կարծեմ
Տագնապել նըմա հոգալք բազումք , թէ զամ մի Աքիլլէս
Ըղձից խեր փոփոխեսցէ 'ի դըժնդակ բարկութենէն :
Եւ ասկայն եկեսցուք ընդ քեզ , նա'ւանդ այլս եւս յարուսցուք ,

Ըղձիգեանն առեալ արի նիզակակիցս, եւ զՈդիսեւս,
Եւ զԷաս երագաթոյթ եւ զխորոմքն որդի Փելեայ։
Իսկ ո՛ այր եթէ ոք եւ ըղձալ զնացեալ կոչէր,
Եւ զԷաան աստուածանման եւ զԹագաւորն Իդոմենեւս։
Զի սոցին ոչ մօտ կան նաւքն, այլ 'ի բացեայ յոյժ տարակաց։
Բայց թէպէտ եւ սիրելի է եւ արգոյ Մենելաւսս,
Դըսարովեցից, թէ եւ ինձ սրդոմըդոեցես, ոչ թաքուցից.
Զի արդ 'ի քուն կայ թողեալ զաշխատութիւն քեզ միայնումդ.
Այժըմ պարտ էր տառապել առ համօրէն աւագանւոյն
Եւ պաղատել, զի հասեալ աղքատ հարկ անհերելի։
Եւ առ նա յաւել անդրէն արանց արքայն Ագամեմնոն.
Ա՛յլ ծերք, ո՛վ ծերունիդ, յորդորէի զքեզ եւ բասրել,
Զի բաղում մի՛ն է որ հեղգայ, ձեռն ոչ կամի մխել 'ի գործ,
Ոչ առ տաղտուկ վատութեան եւ կամ մըտաց ինչ խօլութեամբ,
Այլ յիս աչս ունի զակն, եւ միայ իմումս ակնարկելոյ։
Իսկ այժմիկ՝ կանխեալ քան զիս յարուցեալ եկն առ իս եհաս,
Եւ ես զնկքն առաքեցի փութալ ձայնել զորս եւ խնդրեսդ։
Այլ երթիցուք, եւ գտցուք ընդ ցայգապահսն պատնիցեմք.
Առաջի դրանցն ուր եասս նոցա պատուէր գնալ ժողովել։
Եւս նըմա պատասխանի Նեստոր առակաւորն Գերենեան.
Արդ ուրեմն ոչ ոք նըմա յորդորեցուցեալ ցասնուցու,
Եւ թէ առ այս խրախոյս ումեք եւ հրաման՝ ո՛չ ոք հեստեսցէ։
Զայս ասացեալ առ ըզգեցաւ շուրջ ըզլանջըքն ըզպատմուճանն,
Եւ կապեաց ընդ մըջօւր թաթիկքն ըզսարեխսըն վայելուչ,
Եւ զանձամբըն ճարմանդեաց ըզտատասկըն կարմրերփեան
Ըզկրկնակն եւ լայնատարր՝ յոր աղուամազ ծաղկէր գանգուր.
Ա՛ռ եւ զկարծըր նիզակն 'ի սայրասուր սրսկեալ պղընձ,
Եւ խաղաց գընաց 'ի նաւս աքայեցւոց զինազգեստից։
Արդ նախ զՈդիսեւս՝ զԱրամազդայն զուգահանճար
Զայնեալ զարթոյց 'ի քընոյն Նեստոր առակաւորն Գերենեան.
Եւ հասեալ վանդկըն բախեաց վաղվաղակի զնորա ըզձայնն,
Եւ նա ել 'ի խորանէն եւ առ նոսա բարբառեցաւ.
• Զի՞ այդպէս ընդ նաւակայս շըրջիք միայն 'ի ճամբարս
Ըզգիշերս անմահական. զի՞նչ այդ իցեն պէտք կարեւոր։
Պատասխանի ետ նըմա Նեստոր առակաւորն Գերենեան.
Դիւցազարմ Լայերտածին ամենահնարդ Ոդիսեւս,
Մի՛ ցասնուր, զի այսպիսի հաս կալաւ ցաւ զաքայեցիս։
Այլ արի՛ զհետ զի եւ զայլ ոք զարթուսցուք ում անկն իցէ
Մըտանել 'ի խորհուրդ, փախչե՞լ արժան է թէ կռուել։
Զայս ասաց, եւ Ոդիսեւս լիահանճար դարձեալ 'ի վրան՝
Արկ զուսովքն ըզնըրկարէն վահանն եւ էլ գնաց ընդ նոսա։
Ա՛ռ Տիդեանըն չոգան Դիոմեդէս զօր եւ գըտին

Արտաքոյ վրանին զինուքն, եւ նընջէին ընկերքն շուրջ
Ընդ սնարսն եդեալ զասպարսն, եւ զեղարդունքն նոցա կանգուն
Վարսեալ կային բնովքն յերկիր, եւ շողշողէր պղնձն 'ի բաց
Հանգունակ փայլատականց Արամազդայ․ քաջն 'ի քուն կայր
Ի ներքոյ տարածեալ արջառամորթ մի վայրենի,
Եւ սփռեալ ընդ սնարիւքն շատրուան փաղփղենափայլ։
Գերենեանն այսպէս Նեստոր հուպ մատուցեալ զարթոյց ըզնա,
Ոտնխելթի աքացի գրգռեալ ստիպեաց, եւ երգիծ ասաց․
Արի՛ կաց, որդիդ Տիդեայ, զի՞ զգիշերն ողջոյն քաղցր քնանես․
Ո՞չ լսես, զի տրովացիք 'ի դարեւանդ անդր դաշտին
Մօտ նըստին նաւակներոյս, եւ սուղ ինչ վայր որոշէ 'նդ միջ։
Զայս ասաց, եւ նա 'ի քնոյն փութանակի յարեաւ ընդոստ,
Եւ առ նա կարգացեալ բարբառեցաւ երագաբան․
Դըժընդակ ես, ծերունի, յերկոց երբեք դադարես ոչ․
Միթէ չիցե՞ն այլք՝ որդիք աքայեցւոց կրտսերագոյնք,
Որ երթեալ այսր եւ անդր զարթուցեն մի՛ ըստ միոջէ
Զթագաւորս խըրախուսիցեն․ այլ անհնարին ես, ալեւորդ։
Եւ նըմա պատասխանի Նեստոր ասպետն Գերենեան․
Այո, սիրելի, արդար ասեր զայդ ամենայն․
Են ինձ իմ ընտիր որդեակք, է եւ ամբոխ զօրականին՝
Եւ բազում յոյժ, յորոց էր ումեք երթալ նոցին 'ի կոչ․
Բայց առաւել մեծ անհաջողին հասեալ Ճնշէ զաքայեցիս։
Զի այժմիկ բոլորեցունց 'ի սուր սայրի ածելւոյն կայ
Կամ չարաչար սատակումն աքայեցւոց կամ փրկութիւն։
Այլ դու երթ զարթո յարոյ զերագն Այաս եւ զՓիլէւեան Մէգա,
Եթէ ինձ ողորմիս, զի մանկագոյն ես դու տիովք։
Զայս ասաց, եւ նա զուսովքն ըսփածեալ մորթ առիւծենի
Ըզխարտեաշն եւ զանդրդէն, արձրղնաւոր, առ եւ զմըկունդն,
Էլ գընաց, եւ յարուցեալ ած ըզնոսին զիւցազն անդուստ։
Իբրեւ սոքա 'ի ջոկէր պահակերացըն խառնեցան,
Ոչ 'ի քուն ըզզօրավարս պարեկապան գընդին գտին,
Այլ արթունք զուարթունք զինուքն ամենեքեան կային բազմեալ։
Որպէս շունք 'ի փարախի Ճըգնեցին շուրջ զհօտիւն 'ի պահ,
Զամեհի գազանի թէ զոտնաձայն ինչ առնուցուն
Դիմեալ 'նդ անտառախիտ լերինս, եւ ծանր յառնէ շըշուկ
Արանց եւ շանց 'ի վերայ նորին, եւ քուն նոցա կորեաւ․
Այսպէս նոցին քաղցր նիրհ յարտեւանանցն էր կորուսեալ
Որ կայինըն ցայգապահ զարթուն գիշերն, եւ դառնային
Ի դաշտ անդր հանապազ՝ եթէ լուիցե՞ն զտրովեանց դրոհել։
Զոր տեսեալ ծերոյն խընդաց, քաջալերեաց բանիւք անդամ,
Եւ ձայնարկեալ առ նոսա՝ բարբառեցաւ երագախօս․
Այսպէս արդ, սիրուն որդեակք, պահ դիք եւ մի՛ զոք առցէ քուն,

Թէ գուցէ Թշնամեացըն մատնեցիւք յայդմ եւ 'ի խաղ:
Զայս ասացեալ անց ընդ փոսն, եւ 'ի խառնամ անկեալ գնդին
Թագաւորըն արգելացուց զոր 'ի խորհուրդ հրաւիրեցան:
Ընդ նոսին գնաց Մերիոն եւ Նեստորի որդին շքեղ,
Զի նոքին իսկ կոչէին գալ ընդ իւրեանս առնուլ խորհուրդ:
Ըստ պարիսպն փոսին անցեալ` չոգան նստան 'ի սուրբ վայրի,
Ուր յանկելոց դիականց դաշտապատեալն երեւէր ջինջ.
Ուստի էր անդրէն դարձեալ ըսկայազօր արին Հեկտոր,
Սատակեալ զարգելացիս` մինչեւ գիշեր եկեալ պատեաց:
Անդանօր 'ի նիստ եղեալ` բան առ միմեանս խօսէին,
Եւ ձիաւորն ընկերըն արար Նեստոր ասպետըն Գերենեան.
Ո՞չ ոք այր, ով սիրելիք, յանձնապաստան խրախուսեսցէ
Ելանել գնալ 'ի ճամբար տրովադացւոցըն մեծամեծաց,
Թէ ուրեք եւ յաստխացն ըմբռնեսցէ մերձակաց զոք,
Կամ թէ զրոյց ինչ ուրեք 'ի տրովացեան ստանեսցի,
Յորոց զամ մի խորհեցին յերասա իւրեանց. յինչ միտս իցեն.
Ա՞նդ մնալ հուպ առ նաւուքս 'ի հեռաստանն, եթէ դարձեալ
Ի քաղաք անդրէն դարձցին յետ հարուածոց աքայեցւոցս:
Զայս ամենայն լուիցէ Թերեւս եւ ողջանդամ առ մեզ դարձցի,
Եւ եղիցին ընդ երկնաւորս նորա փառք պարծանաց մեծ
Ցընդհանուրս 'ի մարդիկ, եւ պերճ պարգեւք եղիցին նորա:
Զի որ նաւաց միանգամ իշխանքըն իցեն աւագորեար,
Մէն մի այր իւրաքանչիւր տացեն նորա մաքի մի սեաւ`
Բուծ մ' 'ի ստինան, առ որում ոչ է համեմատ ինչ 'ի ստացուածս,
Եւ ցանկորդ 'ի խնճոյս եւ 'ի խրախճանս կացցէ մերձ:
Զայս ասաց, եւ լուռ կարկեալ կացին նոքա բոլորեքին,
Բայց խօսեցաւ առ նոսա Դիոմեդէս ահեղագոռ.
Նեստոր, զիս յորդորէն սիրտ եւ աշխոյժք արիական
Մտանել 'ի բանակեալ հուպ եղելոցըս Թշնամեաց`
Տրովացւոցդ. իսկ թէ եւ այլ ոք այր ընդ իս ելանիցէ,
Առաւել հեշտալի եղիցի այն եւ 'ի խրախոյս:
Զի յերկուց զուգութիւն` այր քան զընկեր ճարտարմտեան
Որ ինչ շահն իցէ, իսկ մին, թէպէտ եւ այր խորհրդական,
Հեղգասիրտ է սակայն, եւ իմացուածք սրտին նիհար:
Զայս ասաց. Դիոմեդեայ զհետ կամէին գնալ ոչ սակաւք.
Կամէին Այիաք պաշտօնեաքըն Արէս կրկին,
Կամէր Մերիոնէս, ուժգին կամէր Նեստորեան ձետ,
Կամէր եւ Ատրէորդին Մենելաւոս նիզակաւոր,
Կամէր ժուժկալն Ոդիսեւս 'ի տրովացւոց մխել ամբոխ,
Քանզի միշտ սիրտն 'ի փորի իւրում յանդուգըն խիզախէր:
Ընդ սոսա խօսեցաւ արանց արքայն Ագամեմնոն.
Տիդեան դու Դիոմեդէս, անձին իմոյ սերտ սիրեցեալ,

Զոր կամիս ընտրեա յինքներ, տուածոյ ընդ բանս ինչ ածելոյ,
Զյանկարծագոյնն 'ի քաղաքաց այսոց, զի շատք իսկ են տենչողք,
Եւ դու մի պատկառելով 'ի միտս քո՝ թողեալ ըզլաւն,
Եւ զկուսին առցես զոգւոյ, զերջանկելով առ ամօթոյ,
Առ առաջին ինչ ակամբ, թէպէտ էցէ երկնաւորեա:
Զայս ասաց առ երկնային խորախորհրդեալ Մեներուայ:
Ապէ դարձեալ առ նոյն Դիոմեդէսն աղերսագոյն.
Արդ թէ տայք արդարև հրաման ընտրել իմձէն ընկեր,
Զիա՞րդ ապա մոռացայց ըզդիւցազինն եւ զՈդիսեւս,
Որոյ միտք խոհեմ առաւել եւ սիրտ արի գեր 'ի վերոյ
Ցամենայն 'ի ջանս, սիրէ եւս Աթենաւն ըզնա Պալլաս:
Ցընկերել իւրում ընդ իս՝ դարձ երկոքին անձանք ողջամբ
Եւ 'ի հրոյ բորբոքելոյ, զի յոյժ յիմաստս է հանճարեղ:
Ոդիսեւս՝ յոգնատանջան դիւցազն՝ արար նոյնին դարձուած.
Մի, Տիդեան, մի շատ գովեր զիս եւ մի ընդաւ պարսաւեր ինչ,
Զի 'նդ գիտունս այդոցիկ՝ յարգիլացեալ խօսիս 'ի մէջ.
Այլ արի երթամք, զի յոյժ նուազի գիշեր եւ մերձ է այգ,
Խոնարհեալ են աստեղք, անց աւելի զերկուց գիշեր
Քան զերկուս մասունսն, եւ մնայ ստակուսին մասն մի երրորդ:
Զայս խօսեալ, առին զանձամբ ըզզեղեցկին զէնս ահաւորագոյնս:
Թրասիմեդէս քաջամարտիկ եւս զՏիդեան զաւուրն երկսայրի, —
Զի էր զիւրն թողեալ 'ի նաւս անդ, — եւ ըզվահանն,
Եւ ադոյց 'ի գլուխ նորին զեւր ըզկողմանն արջառամորթ,
Անխորան, անզարդատանիկ, որ եւ կոչի գագաթնադեղն,
Եւ ծածկէ զկատարուանս ըզծաղկափթիթ պատանեաց:
Իսկ Ոդիսեայ եւս զաղեղն եւ զկապարճակն Մերիոն
Եւ զսուսերն, եւ 'ի գլուխ նորա զխաչէտուն եդ զգլխանոց
Որ յօդուածք 'ի ներքուստ պրկեալ փոկովք էր ամրապատեա,
Եւ արտաքոյ՝ ըզսպիտակ ատամանցն վարազու սպիտակ ժանիք
Խիտ առ խիտ ամուր անուր ճարտարարագործ պատէին շուրջ,
Եւ էր մէջըն կածկաւ թաղեալ հածեալ եւ մածուցեալ.
Զոր երբեմն Աւտոլիկոս յՈրմենիդեանն Ամինտորէ
Առ աւար յԷլէոնէն՝ զհաստահեղոյս պատառեալ տունն,
Եւ ետուն եւ Կիթերեանն Ամփիդամայ 'ի Սկանդիա,
Ամփիդամաս՝ Մոլոսի յասպնջականն եւ 'ի հեւրոյթ,
Իսկ եւ սա Մերիոնեայ եդեալ որդւոյն եւ ագանել,
Եւ անդ յայնժամ զՈդիսեայն պատսպարեալ պըճնեաց գագաթն:
Արդ սոցա երկոցուն զահեղ ըզզէնսն արկեալ զանձամբք,
Ելին գնացին եւ թողին զառաջնորդեալսն ամենայն անդ:
Իսկ Պալլաս Աթենաս յղեաց նոցա զձայնտարպարհային
Ծովահաւոյ մի 'նդ աջմէ, զոր ոչ աչօք տեսին ինքեանք
Ընդ գիշերն աղջամղջին, այլ ըմբռնեցին լուան կռինչ:

Խընդացաւ ընդ հաւն Ոդիսեւս եւ աղերսեաց առ Աթենաս.
Լուր ինձ, դուստր Արամազդայ վահանակրին, որ կաս առ իս
Յամենայն վիշտս յարաժամ, եւ չէ խլրտելս 'ի քէն զանխուլ.
Զարդիս իսկ մանաւանդ սիրեա դարձեալ զիս, Աթենաս,
Եւ շնորհեա մեզ բարեփառս անդրէն 'ի նաւսն դարձ առնել
Գործ ուժգին վըճարեալ, որ տրովացւոց լինիցի զեղջ:
Յետ նորա պաղատեցաւ Դիոմեդէս ահեղագոչ.
Լուր եւ ինձ այժմիկ, դուստր անվանելի Արամազդեան,
Եկ ընդ իս՝ որպէս ընդ հօրս աստուածազարմին Տիդեւսի
Ի Թեբէ յորժամ հրեշտակ յաքայեցւոց գնդից չոգաւ,
Թողեալ առ Ասոպայ զպղնձազէն աքայեցիս:
Եւ նա բան խաղաղութեան անդր տանէր Կադմեացւոց,
Այլ յանդրէն դարձին ահեղ ահիր գործեան հնարաւորեաց
Ընդ քեզ վեհդ աստուածուհի, մինչ մտադիւր առ նա կայիր:
Նոյն եւ արդ յորդորամիտ առ իս մատիր եւ պահեա զիս,
Եւ ես քեզ ձօնեմ երինջ մի տարեւոր լայնաճակատ,
Եւ անմաւղ՝ զոր ընդ լծով չեղէ երբեք մուծեալ ուրուք.
Զայն ես քեզ զոհեցից՝ զեղջերսն ոսկեաւ օծեալ համակ:
Զայս աղօթըս մատուցեալ Պալլաս նոցա լուաւ Աթենաս,
Եւ ապա յետ աղերսանացն առ մեծին դուստր Արամազդայ՝
Խաղացեալ գնացին զաղցեալ առիւծք կերպիւն ընդ սեաւ գիշերն,
Ընդ նախճիրս, ընդ դիակունս, 'ի զէնս, յարիւն թանձրացեալս:
Բայց եւ ոչ զարի տրովեանս եթող Հեկտոր 'ի քուն լինել,
Այլ 'ի մի կոչեաց զամենայն զազատանին համարալըր
Որ ոք էինն առաջնորդք եւ զօրագլուխք տրովադացւոց.
Յորոց գալ հոլանել՝ խորհուրդ ուշիմ զայս հանդերձէր.
Ո՞վ ոք գործ զայս խոստացեալ եւ 'ի կատար ինձ հասուսցէ
Ընդ մեծի պարգեւաց՝ որ շատ լիցի նորին 'ի վարձ:
Զի տաց կառս եւ զոյգս երկձի պերճաստարգ երիվարաց
Որ ինչ գամ մի յաքայեցւոց գըտցեն յերագ նաւս ընտրականք,
Որ իշխէ ոք միանգամ, — եւ փառս անձին վայելեսցէ, —
Հուպ երթալ մինչ 'ի սրընթաց մատչել քաջախոյն եւ լրտեսել,
Թէ 'ի պահ ըզգուշութեան կայցեն երագ նաւքն իբր յառաջ,
Թէ արդեօք, ընդ մեր ձեռս եղեալ նըկուն աքայեցիք,
Փախըստեան առնուն 'ի միջի իւրեանց խորհուրդ, եւ ոչ կամին
Կալ ըզգոյշս ընկել 'ի պահ՝ խիստ ջըղնութեամբքն պարտասեալք:
Զայս ասաց, եւ նոքա լռին մնան համրացեալ բոլորեքեան:
Դողոն ոմն 'ի տրովեանս անուն որդի էր Եւմեդեայ
Դիւցախառըն նուիրակի. այր ճոխ ոսկւոյ եւ պղնձոյ տէր,
Տըգեղ տեսակաւ, սակայն ոտիւք թեթեւընթաց,
Եւ ինքն եւեթ ուստր 'ի մէջ հընգեցունց քերց հարազատից:
Սա յայնժամ առ տրովացիսն եւ առ Հեկտոր խօսեցաւ անդ.

Զիս, Հեկտոր, քաջալերէին սիրտ եւ աժխոյժք արիական
Երթալ հեռի մինչ 'ի տրամաթեւ մատչել նաւակս եւ ըմբռնել:
Այլ ձն զաւ բարձ ինձ 'ի վեր ըմբշամարտեալսդ եւ երդուեր ինձ,
Ընտանեկիս ինձ զերկիւղտան եւ զկրասըն առաւ արդինձարդըրութեամբ,
Որ զանդեփ եւ զանդուսակեացըն Պեկիսեան բարձեալ կրբեն:
Եւ ես գետ քեզ զուր չեկեց, եւ ոչ 'ի վայր խնչ քան զկարծիս.
Որ զի այնչափ մրխեցայց 'ի բանակէն սիրտ՝ մինչ հասեկ
Ի նաւն Ագամեմնոնեան, ուր կան Թեկրեւս աւաղանին
Ի քըննեն խորհրդոց, թէ 'ի փախուստ կամ թէ 'ի մարտ:
Զայս ասաց, եւ նա 'ի ձեռն ասեալ ըմբշական երգաւոր նշան.
Արդ զերդուեցէ ինձ Արամազդ՝ որոտաթռչնեդ այրն Հերայի,
Զի ոչ այլ ոք 'ի տրովիացւոց վարեսցի այս յայն երիվարս,
Այլ սակս խոստանամ՝ նոքօք յաւէժ քեզ յօրանալ:
Զայս ասացեալ՝ սուտ երդուաւ, բայց ընդոստոյց ըզնա տակայն.
Եւ արկաւ զուսովքն անդէն զկարմրակնակեռացն լայնալիճ,
Ըղջեցաւ 'ի վերուստ ըմբշայլէնին ապխառականաւ,
Եւ 'ի զըրախին ըղատաղաւորացըն կընդամենի, առ եւ զսուր արդն,
Եւ յարեաւ 'ի նաւմկարէն գընալ 'ի նաւս, որ ոչ եւս էր
Ի նաւացըն դառնալոց եւ Հեկտորի բերել զըրոյց:
Բայց մեկնեալ յամբոխէն երիվարաց սարի արանց՝
Ցորդոր երթայր զնաւապարհն. իսկ Ոդիսեւսըն զեւցադրամ
Իբրագեղ լեալ 'ի մնաւսն՝ առ Դիոմէդ բարբառեցաւ.
Այրըս այս, Դիոմէդէս, գայ 'ի կայէն անաւ անշուշտ,
Ոչ գիտեմ թէ ըրդեւս բանաստեղծութեցըս մերայոց,
Թէ յանձնալ խնչ կողոպուտ 'ի զինակաց մեռելոց:
Այլ թողցուք զինքն անցանել նախ խուսն մի զմերք ընդ ասպարէզն,
Եւ ապա յանկարծակի շտապաւ զինեալ կալցուք ըզնա:
Իսկ թէ զմերք յըխնթացս ոտին անձապարեալ զանցանիցէ,
Զհետ մըտեալ մերա նիզակաւդ 'ի նաւացըն կոյս զնեք վարեսջիր,
Մի գուցէ թէ յասատանն ապաւինեալ անկանիցի:
Զայս խօսեալ, ըստ արահետն եղեալ թաքեան 'ի դիականս,
Իսկ նորա թափանցանակի անց սուրացեալ բանդագուշեալ:
Այլ յորժամ հեռացաւ որչափ ջորւոյ ձըդեն ակօսք, —
Զի առաւ քան զեզինս ըմպարեալայն են 'ի վարել
Ի հիւթեղ եւ թանձրահող անդի զարօրըն կարծրակերս, —
Ընթացան առ 'ի նա, եւ նա զթրմփիւնն ասեալ եկաց:
Զի կարծէր 'ի մըտին՝ թէ 'ի տրովիացւոց ընկերըն եկեն
Հեկտորի նոր հրամանաւն ետեսալք ընդ կրուկ դարձուցանել:
Իսկ մինչ էինըն անդըրնկեց մի բացաձիգ կամ թէ նուաղ,
Զարանն ասոս ծանեաւ եւ զծունկսն առաք արագ ես 'ի փախուստ,
Եւ նոքա մըտեն ըզհետ հալածական ասանել սախպաւ:
Զոր օրինակ որսահմուտ կըրկէն բարակք շարաժանկք

Կամ զեղջերթ կամ զնապաստակ վանեն անդուլ պնդեալ ընդհետ
Ընդ վայր մի մացառուտ, և նա՛ առջևն բարձեալ վարգի,
Սոյնպէս Տիդեանն և Ոդիսևս քաղաքաւեր
Ի զօրուէն 'ի բաց կըտրեալ՝ 'ի կիրթ անկեալ հալածէին։
Իսկ իբրև մերձ էր խառնել 'ի պահնակաց անդըր Ջոկաս
Դէմ 'ի նաւացն կոյս եղեալ, յայնժամ խրախոյս արկ Աթենաս
Ի Տիդեանն, որպէս զի մի յաքայեանց ոք զինավառեալց
Պարծեսցի կանխեալ հարեալ ըղնա և ինքն երկրորդ գայցէ։
Եւ նիզակաւն յարձակեալ կորդաց արկն Դիոմեդէս.
Կաց մնա, թէ ոչ՝ հասից քեզ գեղարդեամբս, և ոչ կարծեմ
Քեզ յերկար ապրել յիմոյ ձեռացն 'ի չար սատակմանէ։
Ասաց, և զմըկունդն ընկէց կամաւ յանձէն վրիպեալ,
Եւ 'ի վերուստ աջ ուսոյն սլորկ բըծին սայրասուր աղաք
Անց 'ի գետնին ցըցեցաւ. իսկ նա եկաց զահհի հարեալ,
Թոթովեալ, — և կափկափեւն գայր զատամանցըն 'ի բերանէն, —
Մահապէմ 'ի զարհուրմանցն. հասեալ սոցա հեւիհեւալով
Բուռն հարին ըզդաստակացն. և նա լալեօք բարբառեցաւ.
Ո՛չ կալայք, և ես ինձէն արարից զանձն իմ գրաւականօք.
Է 'ի տան պղնձիս, ոսկի, նա և երկաթ արուեստագործ.
Ձեզ հայր իմ 'ի նոցանէ պարգևեսցէ փըրկանս անհուն,
Ողջանդամ զիս թէ լուիցէ յաքայախումբ նաւատորմիդ։
Հանճարեղն Ոդիսևս պատասխանի տուեալ ասաց.
Քաջ լեր, և մի մահուն ինչ քեզ 'ի սիրտ անկցին ցնորք.
Այլ եկ ծն ասա ցիս զայս, և պատմեսջիր ճշմարտութեամբ.
Ընդէ՞ր այդպէս 'ի բանակէդ 'ի նաւատորմն երթաս միակ
Ընդ աղջամուղջ գիշերիս, մինչ այլք նընջեն մահկանացուք։
Մի՞ յաւա՞ր ինչ 'ի կապուտ մեռելակոյտ մեռելոց,
Թէ Հեկտոր յըղեաց ըզքեզ դէտ և լրտես ամենայնի
Առ խորամէջ նաւակներոյն, և կամ դըրդեաց ըզքեզ քո սիրտ։
Եւ Դոլոն պատասխանի, և դողային անդամք նորա.
Ի բազում եղեան ըղձիւս իմ հրապուրեալ տարաւ Հեկտոր,
Որ զըլըքնաղ Պելէասծնին սալասմբակ երիվարսն
Ակնարկեաց ինձ պարգևել և զպղընձանիւ կառս նորուն,
Եւ հրաման ետ ինձ դիմել ընդ թուխ գիշեր թեթևաճեմ,
Դալ մօտել յարս ոսոխիմս և լրտեսել 'ի նոցանէ,
Թէ կայցէ՞, որպէս յառաջն, երագ նաւացըդ պահ պատրաստ,
Թէ գուցէ վըկանդեալք և վատթարեալք ընդ մեր ձեռամբ՝
Խորհեցիք 'ի փախուստ 'ի ձեր միջի, և չկամիցիք
Պահ ունել ըզգուշութեամբս, 'ի խիստ ճըգանցըդ տաժանմանց։
Ժըպտեալ ընդ այն Ոդիսևսյ հանճարեղի՝ կըրկնեաց անդրէն.
Ի պարգևս ահագինս ապաքէն միտք քո հայէին
Յերիվարսն Էակիդեայ դոռ մարտողի, զի անհնարինք

Են արանց մահկանացուաց 'ի նըւաճել եւ հեծանել
Այլ ումեք բայց յԱքիլլեայ՝ զոր մայր ծընաւ անմահացու։
Այլ եկ մի ասա ցիս զայս եւ պատմեսջիր ստուգիւ ճըշգրիտ.
Ո՞ւր թողեր այժմիկ 'ի գալդ այդր ըզհեկտոր զհովիւն ազանց,
Ո՞ւր նորա դընեն զէնք արիականք, ո՞ւր երիվարք,
Եւ այլոց տրովադացւոցն ո՞րպէս կցեն պահք եւ խորանք,
Զի՞նչ կցեն 'ի միջի նոցա խորհուրդք. կա՞լ առ նաւուքս,
Եւ մընալ անդ 'ի բացի ցանկանայցեն, եթէ դարձցին
Վերըստին 'ի քաղաքն՝ յաղթահարեալ զաքայեցիս։
Յաւել տալ ընդ նմին Եւմեդեսի որդին Դոլոն.
Զայդ ամենայն ես առ քեզ ճըշմարտապատումս զըրուցեցից։
Հեկտոր՝ ընդ այնոսիկ որ ոյք եւ ենն առաջնակալք՝
Առ շիրմին Իղոսի աստուածային խորհուրդ առնու
Մեկուսի յաղմըկէ. իսկ ըզպահնակս զոր հարցանես,
Եւ ոչ մի ոք ընտրանաւ պահէին ըզզօրն ըզգուշութեամբ։
Իսկ որ զամ մի տրովադացւոցն են հրոյ խարոյկք, ոյց է իսկ հարկ,
Արթուն կան եւ ըսկեն, եւ յորդորեն զերեարս 'ի պահ։
Բայց սակայն բազմաժողով նիզակակիցք անկեալ ննջեն,
Արտորեալ զպահպանութիւնն 'ի տրովադացիս անդր ապաստան.
Զի չեն հուրեանց առընթեր նըստեալ մանկունք եւ ոչ կանայք։
Պատասխանի Ոդիսեւս հանճարաշատ արարեալ ասէ.
Իսկ զիա՞րդ. խառն ընդ տրովլեանս ձիամարտիկս 'ի քուն կայցեն,
Թէ ուրեք ուշոգիք. պատմեա ինձ զայս զի գիտացից։
Պատասխանի ետ նըմին Դոլոն որդին Եւմեդեսի.
Արդ եւ զայդ ամենայն ասացից յոյժ ըստուգութեամբ։
Առ ծովուն Կարիացիք եւ Պէոնեանք կորաղեղունք
Եւ Լելեգք եւ Կաւկոնք եւ դիւցազնազարմըն Պելասգեանք.
Առ Թիմբրեաւ վիճակեցան Լիկիացիք, Միւսացիք խրոխտք,
Փռիւգացիքն երիվարորդք եւ Մէոնեանք ձիամարտիկք։
Այլ զիս զի՞ է հարցանել զայս ամենայն մի՛ առ միոջէ.
Զի մըտանել թէ ցանկայք 'ի տրովադացւոցըն բազմամբոխ,
Թրակացիք են աւանիկ ուրոյն նորեկք, վերջինք քան զայլս,
Եւ 'ի նոսին Թագաւոր Հռեսոս որդի Էիոնեայ։
Զերիվարսըն իւր տեսի սքանչելագեղ եւ մեծայաղթ,
Քան ըզձիւն ճերմակագոյն, եւ արշաւանքըն հանգոյն հողմոց,
Եւ կառք իւր ոսկւով եւ արծաթով պըճնապաճոյճ.
Եւ զէնք իւր ոսկեղէնք, մեծ եւ ահեղ հրաշատեսիլք,
Որովք եկըն վառեալ, զոր ոչ արանց մահկանացուաց
Անկ է կրել, այլ միայն անմահից դիցն յաւէրժ էից։
Այլ արդ զիս տարայք արկէք 'ի սըրնթացիկ ձեր նաւատորմ,
Կամ կապեալ զիս 'ի կապանըս կարծրագոյնս՝ թողէք աստէն,
Մինչեւ դարձ արարեալ այսրէն՝ ըզփորձ իմ առնուցուք,

Թէ լըջէ՞ իմ զըստոյգն ասացեալ ձեզ, եթէ ինչ ոչ։
Հայեցեալ 'ի նա տխզգք աչաց առէ Դիոմեդ քաջ.
Մի՛ դու ինձ ըղձախոսեա, Դոլոն, ածեր ինչ ըղձըրաու՝
Գամ մ՛ 'ի ձեռըս մեր անկեալ, թէ եւ բարեաց եղեալ գուշակ։
Զի թէ այժըմ փըրկեսցուք ըզքեզ եւ կամ թողցուք ազատ,
Եկեսցես անշուշտ առա դարձեալ 'ի նաւս աքայեցւոց,
Կամ 'ի դէտ հետաղօտի, կամ ախոյեան՝ կանգնել 'ի մարտ։
Իսկ 'ի ձեռան իմ սատակեալ թէ յարեւէդ անկանիցիս,
Ոչ ուրեք այնուհետեւ արգիլացւոց լեցիս 'ի խոչ։
Ասաց. եւ նա մինչ դեռ ըղձեան բաստուար արկեալ 'ի կզակն
Համբերձեալ էր աղաղակել, գլադակաւորն ամբարձեալ սա
Մըխեաց 'ի պարանոցն եւ զերկոսին նեարդսն խզեաց.
Ի խօսելն անդ տակաւին՝ կատարին 'ի հող թաւալեցաւ։
Առին բարձին 'ի գըլխոյն ըղպատապարապըն կընգամնի,
Զգայլենին եւ զաղեղն 'ի ձիգ Ձնապաւէ, եւ զտէգն երկայն.
Զորս գիւցազն Ոդիսեւս աւարըզըն Աթենասայ
Կարկառեալ ձեռամբըն 'ի վեր եւ ուխտ եղեալ բարբառեցաւ.
Խընդա սոքօք, դիցանոյշ, զի յամենահեց բոլորեցունց
Առ քեզ յՈլիմբ նախ կարդասցուք. այլ յուղարկել յաւել դու զմեզ
Ցերիվարսն եւ 'ի խորանս առն արանցըն Թրակեցւոց։
Արդ նա զայս ձայն արձակեալ եւ ամբարձեալ 'ի բարձունս
Արկ ըզնոսա զմոշայիւ. եւ եդ նըշան երեւելի,
Հաւաքեալ եղեգունս եւ զմոշենի գալար կողերս,
Մի՛ վըրիպել 'ի դարձեն ընդ մութ գիշերն երագաղաց։
Եւ ինքեանք գնային յառաջ ընդ զէնս, ընդ թուխ արեան Ճապաղս,
Եւ ձեպով երթեալ հասին 'ի Թրակացի արանց ջոկըն
Որ քունէին խոնջ եւ վաստակք, եւ զէնք նոցին գեղեցկաշուք
Առ նոքօք կային յերկիր վայելչապէս 'ի կարգս երիս,
Եւ առ մին միում նոցա զոյգք զոյգք 'ի լուծս երիվարաց։
Հռեսոս նընջէր 'ի միջին, եւ երիվարքն երագք առ իւր
Ըզծըրթանց շըրջանակաւէն կառաց փոկովք կային կապեալ։
Ըզնա նախ Ոդիսեւսի տեսեալ եցոյց Դիոմեդեայ.
Ահա քեզ, Դիոմեդէս, այրն եւ ահա քեզ երիվարքն
Ի Դոլոնէ մեզ պատմեալք՝ զոր արդ իսկ մեք փաղառեցաք։
Հանգա եկ ցոյց զարութիւն ըզքաջութեանդ, եւ չէ իսկ պարտ
Քեզ անգործ կալ զինուքդ. աղէ դու լոյծ ինձ զերիվարսդ,
Եւ կամ զարսդ սատակեա, եւ զձիոցն ես արարից փոյթ։
Ընդ բանին ածխոյժ 'ի նա շընչեաց խաժակն Աթենաս.
Կոտորէր յաջ եւ յահեակ, եւ ել նոցին զըժնէ խառընչիւն
Ի խողխողել սուսերին, եւ կարմրանայր գետինն արեամբ։
Որպէս առիւծ յանտերունչ 'ի խաշնարօտ հինահարեալ
Ցայծեաց հօրանս կամ յօդեաց խոյանայցէ չարամըտագ,

Այսպէս յարայն Թըրակացիս խաղայր զմնայր որդին Տիդեայ,
Մինչեւ սպան երկոտասանս. իսկ Ոդիսեւս ըղձանամիտ,
Զոր Տիդեանըն միանգամ հասեալ սուսերին հարկանէր զօք՝
Զայն Ոդիսեայ յետեւուստ զոտիցն առեալ ձըգէր 'ի բաց.
Զայս ուշ 'ի կուրծս արարեալ, զի երիվարքըն գեղաբաշխ
Հեշտաբար անցանիցեն, եւ մի՛ յոգնոցն սոսկասցին
Կոխելով ըղզիակունս՝ որոց չէին ինչ գեռ սովոր:
Բայց եղեալ որդւոյն Տիդեայ 'ի Թագաւոր անդր ժամուն,
Զանուշակ զեւր ոգին երկոտասան Թափեաց երրորդ՝
Մինչ հեծէրըն, զի երազ չար եկն եկաց 'ի սնարս իւր
Զայն գիշեր Ինիդեան ձեռ խորհըրդովըն Աթենասայ:
Յայնժամ յանդուգն Ոդիսեւս ըղմնաձիւ ձիանն եւյծ,
Եւ փոկովք պարասանդեալ վարեաց արտաքս 'ի լաշկարէն
Աղեղամբըն խըթելով, զի չարկ 'ի միտ առնուլ 'ի ձեռս
Ըզմըտրակն երփնափայլ 'ի նըկարէն կառաց անտի:
Շըշեաց ապա 'ի նըշան զդիւցազնարմին Դիոմեդեայ,
Որ կացեալ մըտածէր՝ զինչ խրոխտագոյնս ինչ ցուցցէ գործ.
Եթէ զկառսն առեալ՝ ուր զէնքըն զընէին նըկարակերտք՝
Ըզբեղուոյն ձըգիցէ, եւ կամ 'ի վեր բարձեալ տարցի,
Կամ թէ զեւըս յոգունց այլոց Թըրակեանց հասցէ զարկեւ:
Մինչ գեռ նա զայսոսիկ ածէր զմըտաւ՝ հաս Աթենաս
Եւ մատուցեալ առ դիւցազնըն Դիոմէդ. բարբառեցաւ.
Յուշ քեզ դարձըդ քեզ յուշ, մեծահոգւոյն Տիդեայ զաւակ,
Ի գոգեալ նաւացըդ խումբ, զի մի՛ անկցիս յայն խուճապս.
Գուցէ այլ ոք 'ի դից եւ զտրովացիսն զարթուսցէ:
Զայս ասաց, եւ նա 'ի միտ առ զաղգ ձայնի աստուածուհւոյն,՝
Եւ ձեպեալ հեծաւ 'ի ձիսն, եւ Ոդիսեւս հար աղեղամբն,
Եւ նոքա յերագընթաց Թըռչէին նաւս աքայեցւոց:
Սակայն ոչ գէտ ընդունայն արծաթաղեղն Ապողոն կայր,
Իբրեւ եսես զԱթենաս ըզհետ որդւոյն Տիդեայ կըրթեալ.
Սըրտմըտեալ ընդ նա՝ եմուտ 'ի տրովացւոցն 'ի մեծ ամբոխ,
Եւ զարթոյց ըզԹըրակեցւոց խորհըրդականն Հիպպակոոնն,
Զհօրեղբօր Հռեսոսայ զարի որդին, եւ նա 'ի քնոյն ընդոստ՝
Ամայի տեսեալ ըզվայրն՝ ուր երագոտըն կայր ձիանն,
Եւ զարեարըն գըլթացեալ յահեղ արեանցըն ճապաղս,
Գոյժ եհարձ իսկ եւ իսկ, եւ զախրեալն կարդայր ընկեր:
Տըրովացւոցն աղաղակ եւ անհնարին հըրնչեաց գըղորդ
Ի խուժել միահաղոյն. տեսանէին ահիր գործեան
Որչափ ինչ արքըն արարին ու՛ 'ի խորագոգ մեկնեցան նաւս:
Իսկ սոքա իբրեւ հասեալք ուր զհեկտորին ըսպանէին գէտ,
Անդ Ոդիսեւս Արամազդայ սիրուհին՝ արգել զձիանն երագ,
Եւ Տիդեանն յերկիր վաղեալ՝ ոս եդ 'ի ձեռս Ոդիսեւսի

Ըղկապուտն արիւնախառն, եւ յերիվարն հեծու անդրէն.
Մըտրակեաց զերիվարսն, եւ մըտադիւր սըլանային
Ի նաւսըն խորափորս, զի՛ նոց այն սըրտիցն հաճոյ թուեցաւ:
Նեստոր նախ լըւաւ զդոփիւնն, եւ խօսեցաւ յառաջագոյն.
Ո՛վ սիրելիք, զօրավարք արգիւացւոց եւ իշխեցօղք,
Սո՞ւտ թէ ստոյգ ինչ ասիցեմ, համարձակէ սակայն հոգիս.
Փութադարույթ անդրուվարեան ոտին զրընդիւն՝ զանձնն իմ թընդէ:
Ցանկամ՛րն այսր Ոդիսեւս եւ Դիոմեդ քաջակորով
Այսպէս շուտ ՚ի տրովացւոց սալայրձական վարէին ձիս.
Այլ խիթամ յոյժ ՚ի սըրտի, գուցէ եղեռն եղեն գըլեալ
Քաջազունքն արգիւացւոց ՚ի տրովադեանց խառնաժամբոխէն:
Չեւ ըղխօսըն յանգ հանեալ՝ ահա եկին հասին ինքեանք:
Եւ իջեալ նոցա յերկիր, ողջոյն ընկալեալք եւ խրախամիտք
Ողջոյն տային աջ ձեռամբ եւ քաղցրաբարբառ կոչուող բանիւք:
Եւ հարցեալն ըսկիզբն առնէր Նեստոր ասպետըն Գերենեան.
Եկ ասա ինձ, ո՛վ գովեալդ Ոդիսեւս, փառք աքայեանց մեծ,
Ո՞րպէս կալայք զերիվարսդ ՚ի տրովացւոց մըխեալ ՚ի ամբոխ.
Ցաստուածո՞ց միթէ որք ընդառաջեալ դդոսին մատոյց.
Զի՞ սերանիւ նըմանագոյնք արեգական ճառագայթից:
Հանապազ ընդ տրովացիսն եմ խառնամանեալ, եւ ոչ կարծեմ
Թէ մնացեալ ինչ առ նաւուք, թէպէտ եւ ծեր պատերազմօղ,
Բայց տեսեալ չէք իմ եւ ոչ ընդ միտս հարեալ ձիք այդպիսիք:
Այլ թըւի անշուշտ ՚ի դիցն որք հանդիպեալ ընծայեալ ձեզ.
Զի սիրէ զձեզ երկոսեանդ եւ Արամազդ ամպայարոյց
Եւ Աթենաս մեղուակըն դուստր ասպարակիրն Արամազդայ:
Եւ նըմա պատասխանի ետ Ոդիսեւս մըտահարուստ.
Ո՛վ Նէլեանըդ Նեստոր, աքայեցւոց պարծանք փառաց,
Աստուածոյ, թէ կամք իցեն, եւ վեհագոյն քան ըզսոսին
Դիւըրին է տալ երիվարս, որ զի կարօղք են զօրապէս:
Իսկ ձիանս որ հարցանես՝ նորեկք են, ծեր, եւ թրակեցիք.
Եւ ըզտէր նոցա սպան Դիոմեդէս քաջայաղթօղ,
Եւ համհարզս առ նըմին երկոտասան իշխանազունս:
Եւ ըզդէտն հուպ առ նաւուք սպանաք երեքտասան,
Զոր ըզլրտես բանակիս մերում յըղեալ էր Հեկտոր
Եւ այլոց ընդ նմա տրովադացւոց պերճազունից:
Ընդ ասելն եւ զերիվարսն ըստ փոսն անցոյց սալայրձակս
Կայտառելով, զոյգ երթային հըրճուիւք եւ այլ աքայեցիք:
Մինչ ՚ի վրանըն գեղաշէն Տիդեան քաջին հասին նոքա,
Կապեցին բարեձեւ փոկովք ՚ի մսուրն ասպատանաց
Ըզձիանն, ուր երիվարք Դիոմեդեայ թեթեւոտունք
Կային եւ ուտէին քաղցրաճաշակ ցորեան համեղ:
Իսկ զարիւնոտ կողոպուտն ըզԴոլոնի եդ Ոդիսեւս

Ի խելս նաւաց, մինչեւ զոհ պատրաստեսցեն Աթենասայ:
Եւ ընկեանք մնացեալ 'ի ծով լուսնային զեփիւռոյն բազում
Ջուրանք եւ զաղջերաց շուրջանակի եւ ընդարձակք:
Իսկ յորժամ ծագեցաւ այգն ըղձալի ըստ որդ քերթեն 'ի մարմնոյն,
Եւ հանեալ զսակացեալք 'ի սիրտս երկեանց եւ 'ի հողս,
Ի կենդանին ապրանաց հարեալ մեխեր՛ լուսնային:
Եւ այնպէս մերկանալ, օծեալ մարմնեալ պարարտ իւղով,
Ցնծութիւն բազմացան, եւ ըմբռնուս 'ի Թագաւորէն
Սպեալ նորէր հեղուցեն Աթենասայ զենիւ անդր:



Digitized by Google

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

---

## ԵՐԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Բանայ Հեռ՝ առաքեալ յԱրամազդայ՝ զգոչիւն մարտին. Ագամեմնոն սպառազինեալ վարէ զգունդսն 'ի ճակատ. նախ յերկրայս յաղթութիւն, այս զօրանայ Ագամեմնոն: Հեկտոր ազդմամբն Արամազդայ զգուշանայ 'ի նմանէ մինչեւ վիրաւորեալ մեկնեսցի. զոր տեսեալ այս՝ խիզախէ 'ի քաջութիւն: Դիոմեդէս վիրաւորեալ 'ի Պարիսէ՝ 'ի բաց ելանէ. Ոդիսեւս նահատակեալ ընդ տրոյացիս՝ վանէ զնոսա յինքենէ, խոցեալ 'ի Սովկոսէ՝ տառապէ զնա. Այաս պաշտպանէ նմա եւ Մենելաոս հանէ զնա 'ի կռուոյն: ԶՄաքաւոն վիրաւոր 'ի Պարիսէ՝ առեալ Նեստորի 'ի կառսն տանի 'ի խորանն, եւ մինչ Հեկտոր եւ Այաս նախճիրս գործեն, տեսեալ զնա Աքիլլեայ եւ ծանուցեալ թէ ստոյգ Մաքաւոն իցէ՝ առաքէ զՊատրոկղոս լրտեսել. որոյ երթեալ մինչեւ 'ի Նեստոր, աղաչէ 'ի նմանէ՝ յորդորել զԱքիլլէս 'ի պատերազմն, կամ անձամբ գալ կամ գոնէ զնա ինքն առաքել իւրովք զինուքն: Պատրոկղոս անտի ճողոպրեալ ելեալ՝ պատահէ Եւրիպիլոսի հարելոյ 'ի Պարիսէ, եւ բարձեալ տարեալ 'ի վրան իւր՝ բժշկութիւն եւ զարման մատուցանէ մեծի իշխանին:

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱԳԱՄԵՄՆՈՆԻ

Արշալոյսն յանկողնոյ, թողեալ զպճնաղ Տիթոնն, յառնէր,
Զի բերեալ ընծայեսցէ լոյս անմահից եւ մահացուաց.
Իսկ Արամազդ ձեռակեցոյց 'ի սրաթեւ նաւս աքայեցւոց
Զհեռացն ժանտ, յորոյ ձեռին խռովանշան պատերազմի.
Եւ չոգաւ եկաց 'ի սեաւ մեծամարմին նաւն Ոդիսեայ՝
Որ կայր 'ի մէջոցի, ձայն յերկոսին տանել կողմանս,
Ի մի թեւ՝ 'ի խորանացն Էասայ Տելամոնեան,
Եւ 'ի միւսն՝ յԱքիլլեայն, որք խրախուսեալ 'ի քաջութիւն
Եւ 'ի բազկաց կորով 'ի ծայրսն էին հանեալ զմիաչափ նաւսն:
Անդր եկեալ աստուածուհայն գոչեաց ուժգին՝ մեծ եւ ահեղ,
Եւ հզօր զօրութիւն արկեաց յանձինս աքայեցւոց սրտս,
Անհանգիստ անդուլ մարտիլ կալ 'ի ճակատ պատերազմին:
Եւ անդէն քաղցրացաւ նոցա պատերազմ քան դարձ անդրէն
Գոգաւոր նաւափայտիւքն 'ի տենչալին բընիկ գաւառ:
Իսկ Ատրիդէս ձայն եբարձ՝ հրամայեալ վառել արգիացւոց,
Եւ նա ինքն եւս ագաւ զփայլակնացայտ հրաշէկ պղինձն.
Եւ նախ՝ ըզբարձիւքն ըզսըռնապանսն զգեղեցիկս,
Ըզգօտեալսն եւ պատուաձեալս ճարմանդիւքն արծաթեղիւք.
Յետ այնորիկ 'ի վերայ զգեցաւ կրծից լանջապանակ,
Զոր երբեմն Կինիւրէս էր 'ի հիւրոյթ նըմին շնորհեալ:
Զի մինչեւ 'ի Կիպրոս հարկանէր մեծ համբաւ շուխնող,
Թէ 'ի Տրոյա նաւելոց լաստանաւայիւքն աքայեցիք.
Նըմին իւր եւ զայն նըման՝ շնորհ երեսաց թագաւորին:
Տասն էին 'ի նմա ծիրք 'ի սեւաթոյր պողովատէ,

Եւ յակնոյ՝ երկոտասան, եւ յանագէ՝ քսանիւ չափ․
Եւ վիշապք կապուտագոյնք կարկառէին զպարանոցաւն
Երեք երեք աստի անտի, ծիածանին համարակերպք՝
Զորս ընդ ամպս եդ Զըրուանեան՝ նշան մարդկան յօդաձայնից։
Եւ զուսովքն արկ ըզսուսերն յոսկիակուռ շողեալ բեւեռս,
Իսկ պատեանքն արծաթիք էին պընդեալ ոսկիափոկ։
Բարձ զասպարն հասակաբերձ՝ հաստահարուստ՝ ճարտարարուեստ՝
Գեղեցիկ, զորով տասըն շըրջանակք էին պղընձիք, -
Եւ կըմբեայք 'ի նմա էին քըսան մի անագեայք՝
Ըսպիտակք, եւ 'ի միջին՝ 'ի Թըխագոյն պողովատէ։
Եւ պատէր զըժնէհայեաց դըժոխակնեայ զնովաւ Գորգով,
Եւ շուրջ պարունակեալ 'ի նմա Խուճապ եւ Արհաւիրք։
Անդըստին էր բառնալիքն արծաթեղէն, յորում վիշապ
Կապուտակ՝ գալարս առնոյր եւ գլուխք էին նորա երեք
Ոլորեալք ըզմիմեամբք, եւ յուղանէ միոյ բուսեալք։
Սաղաւարտ ցըցունազարդ քառախոլան եւ ձիաբաշ
Ի գլուխն եդաւ, զարդամանակն ահագնագին ճօճեալ վերուստ։
Առ կըրկին հաստ գեղարդունս յեռանասուր սըրեալ 'ի պղինձ
Որ քաջ 'ի բաց մինչ յերկինս 'ի նոցանէ փայլատակէր։
Ի վերայ նորա եռուն որոտ Հերա եւ Աթենաս
Ի պատիւ ոսկեբուղխըն Միկենեայ Թագաւորին։
Տայր ապա իւրաքանչիւր կառավարին իւրում հրաման,
Առնուլ տանել զերիվարան ըստ օրինի անդր առ փոսոյն․
Իսկ ինքեանք 'ի զէն 'ի զրահ վառեալ հետի տայլին դըրդոյթ,
Եւ գոռումն անհատական հընչեաց յառաջ քան զառաւօտ։
Եւ կանխեալ քան զհեծելազն 'ի փոսն 'ի կարգ յօրինեցան,
Իսկ հեծեալքն ընթանային խառն ինչ ըզկնի, յորս ազմուկ չար
Արկ 'ի նոսա Զըրուանեանն, եւ 'ի բարձանց անտի արիւնոյ
Տեղաց ցօղ արիւնաշաղանդ, զի հանդերձեալ էր մերձ ընդ մերձ
Յոգնախուռն 'ի դըժոխըս Թօթափել յաղթ կառափունս։
Նոյն անդուստ եւ տրովացիք 'ի դարեւանդ անդր դաշտին
Ըզմեծաւն Հեկտորիւ եւ զանըրաադիւտ Պուլիդամաւ,
Եւ զԷնեաւ՝ որ 'ի տրովեանս աստուածօրէն պատուեալ յազգէն,
Եւ զերիւք Անտենորեամբք, զՊօլիբոս ասեմ, զքաջն Ագենովր
Եւ զԱկամաս պատանեակըն զանմահից հանգունատիպ։
Իսկ Հեկտոր ընդ առաջինսն ածէր զասպարն ըղբոլորակ։
Որպէս ընդ ամպըս ծագեալ փայլածէ աստղ եղեռնաթիւր,
Եւ երբեմն 'ի խաւարին ամպըն մըտեալ անդրէն Թաքչի,
Սոյնպիսի եւ Հեկտոր ընդ առաջինսն երեւէր մերթ,
Մերթ 'ի վերջինս հրաման տալով, ամբոյն 'ի պղինձ փայլակնացեալ
Զօրէն հօրն իմնն շանթից վահանապրօշն Արամազդայ։
Եւ հանդոյն իմն օրինակ հընձօղք միմեանց դէմ յանդիմանն

Յանդգնութեան առաջին ձռնի կորդաւ զանզօն հարկանելն
Զցորենոյ կամ ըզգարւոյ, եւ դէզ 'ի դէզ գլորին որայք,
Տրովացիք եւ աքայեանք 'ի միմեանս նոյնպէս ոստուցեալք
Սատակէին, եւ ումեք զգծնեայ փախուստ ոչ լինէր յուշ:
Զոյգ ըզգլուխան ունէին 'ի մարտ՝ հրոսեալք հանգոյն գայլոց:
Հայեցեալ 'ի նոսա կայթէր անդ Հեռ բազմահառաչ,
Զի նա եւեթ յաստուածոց գտանէր մերձ առ մարտուցեալսն,
Իսկ այլք առ նոքօք չէին 'ի դէց ընթերակացք,
Այլ հանդարտիկ նստէին իւրաքանչիւր 'ի տունս իւրեանց,
Ուր յարկ նոցին գեղեցկակերտ 'ի դարեւանդս էր Ողիմպեայ.
Բամբէին ամենեքեան ըզԶրուանեանն ամպրոպային,
Բարբէկալ զի տրովացւոցն պարգեւել կամէր պարծանս:
Չառնէր հայրն ինչ նոցա փոյթ, եւ առանձինն մեկուսի
Յայլոց անտի հեռագոյն բազմէր 'ի փառսն խայտացեալ,
Ի տրովեանց քաղաք ու 'ի նաւս աքայեցւոց եդեալ դէտակն,
Ի փայլակունսն պղընձոյն, 'ի սատակիչսն եւ սատակեալս:
Յառաւօտին անդ պահու, մինչ գիւղականն աճէր դեռ տիւ,
Զերկոսեանն հարկանէին նետք ընկողմանս, անկանէր զօրն.
Իսկ յորժամ պատրաստեալ կազմեաց ըզճաշն այր մայրեաց
Ի պուրակս անտառախիտս, յորեւ հարեալ զբարձրաբերձն փայտս
Յագեցոյց ըղձեալս իւր եւ ձանձրութիւն յոգւոյն անկաւ,
Եւ անուշակ կերակրոյն պաշարէ զսիրտն ցանկութիւն,
Արութեամբ յայնժամ իւրեանց բեկին ըզգունդս աքայեցիք,
Զայն ընկեր առ ընկեր գոչեալ 'ի դասս արկեալ խրախոյս:
Անդ յառաջ շահատակեալ Ագամեմնոն հար սատակեաց
Զարի այրն ընդհովիւ ժողովրդոցն ըզԲիէնովր,
Եւ ապա յետոյ զընկեր իւր զՈյիլեւսն ձիավարն:
Զի վաղեալ սա յերկձիոյն եւ առոյգեալ եկաց նմին՝
Որ դէպ ուղիղ յարձակեալսն եհար զճակատ սուր պղընձովն,
Եւ չարգել 'ի նմանէ պղընձակուռ պղնձակն ընդտեգն,
Այլ թափանց եւ ընդ այն, եւս եւ ընդ ոսկրըն, եւ ուղեղոյն
Դրդրդեցաւ ուղեղն 'ի ներքս, եւ ընդմըլեալն արար նըկուն:
Եւ թողեալ արանց արքայն Ագամեմնոն անդէն զնոսա,
Որոց լանջք տեռաւերծեալք 'ի նմանէ լերկ պաղպաջէին,
Անց խաղաց յառաջ զԻսոսն եւ զԱնտիփոսն ըսպանանել,
Զերկոսեան որդիս Պրիամոսի՝ ըզհարճորդին եւ զհարազատ.
Երկոքեան 'ի մի կառս, եւ հարճորդին կայր կառավար,
Իսկ անուանին Անտիփոս ընդ իւր հեծեալ գայր 'ի կռիւ.
Զորս Աքիլլեւս առ ոտս Իդայ 'ի տաւարածելն էր ըմբռնեալ,
Կապեալ ձաղուկ ողորկ եւ արձակեալ ընդ փրկանաց:
Իսկ յայնժամ Ատրիդեան Ագամեմնոն վեհամայեալ՝
Նիզակաւն եհար ըզմին ընդ լանջս 'ի վեր կոյս քան զստինսն,

Եւ զԱնտիփոս՝ ընդ ականջըն Թրով զարկեալ արկ 'ի կառացն.
Եւ դիմեալ 'ի կողոպտել զգեղեցիկ զէնսն 'ի նոցանէ,
Ծանեաւ զնոսա, զի կանխաւ եւս առ երագ նաւսն էր տեսեալ,
Մինչ քաջոտն Աքիլլեւս բերեալ զնոսին եբեր յԻդայ:
Որպէս առիւծ 'ի խըշտիս Թեթեւընթաց հառեալ եղէն,
Եւ ժանեօք գազանութեանն յափըշտակեալ զմանկունսն մատաղ,
Բեկանէ հեշտիւ եւ զգողոր ոգիս նոցա կորզեալ հանէ.
Եւ նա մօտ իսկ յոյժ անդէն Թէ դիպեսցի՝ չուժի օգնել,
Զի եւ զնա իսկ ինքնին անհընարին ունի դողումն,
Եւ շտապաւ փախչի'նդ պուրակս անտառամուտս եւ ընդ մայրիս
Խուճապեալ եւ քըրտնախոնջ 'ի հինելոյ բարկ գազանին.
Այսպէս ոչ ոք 'ի տրոյեանց հերքել զսոցա զօրեաց եղեռն,
Այլ ինքեանք իսկ յերեսաց զարհուրելին արգիացւոցն:
Իսկ նա՝ զՊիսանդրոս եւ զՀիպպօլոք ըզգոռ մարտիկ,
Զորդիսն Անտիմաքեայ քաջասըրտի, որ մանաւանդ
Ընկալեալ ոսկի շատ յԱղեքսանդրէ պայծառ ձըրիւք,
Հակառակ կայր զՀեղինէ մի տալ խարտեաշ Մենելաւսի.
Ըզսորա կըրկին մանկունս Ագամեմնոն կալաւ արքայ,
Որ 'ի մի զոյգըս հեծեալ՝ զձիանն երագ վարէին անդ.
Զի զերծան 'ի ձեռաց իւրեանց փայլուն երասանակք,
Եւ ինքեանք խռովեցան. իսկ Ատրիդէս առիւծաբար
Եղ ընդդէմ, եւ 'ի կառաց անտի նոքա պաղատէին.
Ապրեցո զմեզ, Ատրորդիդ, եւ փըրկանակս ընկալ զարժանն.
Յապարանս Անտիմաքեայ կայ կարասի բազմամըթեր,
Պըղինձ եւ ոսկի, եւս եւ երկաթ ճարտարագործ.
Հայրըն մեր շնորհեսցէ փըրկանս առատ քեզ 'ի նոցունց,
Թէ լուիցէ զմեզ ողջ գըլխով առեալ 'ի նաւս աքայեցւոց:
Այսպուռնակ ըղձագաւորն աղերսէին արտասուագոչ
Բանիւք ողոքանօք, այլ ոչ ողոք լըւան բարբառ.
Արդ որդիք դուք Թէ իցէք Անտիմաքեայ գոռ մարտողին,
Որ տայր երբեմն յատենի տրոյեանց հրաման զՄենելաւեայ
Զեկեղոյն ընդ դիւցազներան Ոդիսեւսի հրեշտակութեամբ,
Սպանանել անդ առ եւեղ, առ աքայեանս անդրէն չԹողուլ,
Այժըմ դուք ըզզըժընդակ հօրդ եղերան լուծջիք ըզվրէժ:
Ասաց, եւ 'ի կառաց անտի զՊիսանդր յերկիր ընկեց
Տիգաւ ընդ կուրծսըն հարեալ, անկաւ յորսայս նա 'ի գետին:
Ի բաց վազեաց Հիպպոլոք, այլ սատակեաց եւ զնա'նդ երկիր՝
Նըրանաւ խըզեալ ըզձեռսն եւ զպարանոց նորա հատեալ,
Եւ զօրէն խմըն սանդի Թաւալագլոր արկ ընդ ամբոխն:
Ըզնոսա Թողեալ դիմէր 'ի գուպար կուռ գումարտակաց,
Եւ ընդ իւր միախուռն աքայեցիքն այլք ամրաբարձք:
Հետիք զհետոյ վանդէին ըզխուճապեալսն տագնապաւ:

Եւ զհեծեալսն հեծեալք՝ բախեալք յեղեալսն պղնձազինս ։
Ընդ նոքօք յարեաւ փոշի՝ զոր 'ի դաշտէն մրրրկեցին
Ոտնատրոփ ձիոց սմբակք. սակայն արքայն Ագամեմնոն
Վանէր ցանդ կոտորելով եւ տայր խրախոյս արգիացւոց ։
Որպէս հուր ծախիչ յորժամ 'ի ընդկախիտ անկցի մայրի,
Եւ մրրրիկ փոթորկեալ ընդ ամենայն ծաւալեսցէ,
Թօթափին ջուխք կործանեալքն յապականէ հրատին ճնշեալք,
Ի ձեռն Ատրեանն Ագամեմնոնի թօթափէին նոյն կառափունք
Տրովացւոց փախուցեալեցն, եւ բարձրավիզ յոյժ երիվարք
Ի շաչիւն ասպատակեղին 'դ մարտին շուրջս բղթափուր կառս
Անձկաբեկս ընդոր ընդոր կառապետացն որոց կային
Անկեալ տապաստ, քան կանանց՝ անգղեաց յաւէտ սիրայորդորք ։
Այլ զՀեկտոր Արամազդ դարձոյց յարդանց եւ 'ի փոշւոյն,
Ի խոշոշ մահուց, յարեանց ապականէ եւ յամբոխից ։
Ատրիդէս խաղայր յառաջ՝ դանայեցւոց յուժգին խրախոյս,
Իսկ նոքա 'ի վաղեմի գերդաստանացւոյն Իլեայ շիրմին
Ընդ մէջ դաշտապատեանոյն դիմեալ թզենին ընդ մոլաթուզն,
Անձկացեալք քաղաքին. խաղայր Ատրիդ յաւէժ գոռամբ,
Թաթաւեալ անպարտելի ձեռք իւր յարիւն եւ յապականոյժ ։
Իսկ յորժամ յԱրեւմտեանց հասին դրրունսն եւ 'ի կաղնին,
Ըզաւելի տային անդէն եւ ունէին ակըն միմեանց.
Զի կէսք դեռ ընդ մէջ դաշտին խուճապէին իբրեւ զերինջս՝
Որ առիւծ հինահարեալ 'ի տարաժամ գիշեր՝ փախոյց
Զամենեսեան, բայց միումն ըսպառնացեալ կայ դառըն մահ.
Զոր ժանեօքըն զըժնէիւք յափըշտակեալ՝ նախ զուլն երեկ,
Եւ ըզլեարդ տապա զարիւնն եւ զփորոտին ողջոյն լափէ.
Թագաւորին այսպէս Ատրեանն Ագամեմնոն զնոսա ածէր
Ըսպանեալ միշտ ըզյետինն, եւ փախուցեալ զնոյն նոքա.
Եւ շատք յորսայս եւ թերանեալք անկանէին 'ի կառաց
Ընդ ձեռամբն Ատրիդեայ, զի նիզակաւն ուժգին մղէր ։
Բայց մինչ կամէրն 'ի պարիսպն հասանել բարձր եւ 'ի քաղաքն,
Ի ժամուն յայնմիկ անդէն հայրըն մարդկան եւ աստուածոց
Ցերկնուստ 'ի կատարս աղբերաբուխն իջեալ Իդայ
Գայր նստէր, կայծակնացայտ փայլատակմանց շանթ 'ի ձեռին,
Եւ զԻրիս ոսկեթեւ ճեպեալ յարոյց պատգամաւոր.
Արի երթ, թեթեւդ Իրիս, զայս առ Հեկտոր տարջիր պատգամ.
Յորժամ տեսանիցէ զհովիւն ազանց զԱգամեմնոն
Զի՛նչ նահատակսըն գոռայցէ զարի արանց սատակել սահս,
Խոյս տուեալ խորշեսցի, հրաման այլոց տացէ զընդդէմ
Ոգորել ընդ թըշնամիսն 'ի զօրաւոր պատերազմին ։
Իսկ յորժամ խոցահար եւ կամ նետիւ թէ վիրաւոր
Ի կառսն հեծանիցի, յայնժամ ես ոյժ սատակչական


Digitized by Google

Տաց նմա, մինչեւ երթեալ հասցէ 'ի նաւսն գեղատախտս,
Արեգակն 'ի մայր դարձցի եւ սրբազան գայցէ նսեմ։
Զայս ասաց, ոչ անլուր եղեւ մրրկոտն երագ Իրիս,
Եւ յԻդայ լերանց իջեալ 'ի սրբանուէրն անդր Իլիոն՝
Եգիտ զորդին Պրիամու քաջն զՀեկտորն դիւցական
Կացեալ 'ի յերիվարսն իւր եւ 'ի կառսն ամրակառոյց ·
Առ որ հուպ մատուցեալ ասէ Իրիս երագաձեմ ·
Հեկտոր որդի Պրիամու՝ զուգահանճար Արամազդայ,
Արամազդ հայր առաքեաց սոյն քեզ զիս պատգամաբեր ։
Մինչդեռ տեսանիցես զԱգամեմնոն հովիւն ազանց
Զի 'նդ ախոյեանսն մրցեալ զարի առանց հարկանել գունդ,
Խոյս տուեալ մեկնեսջիր, այլոց խրատեալ տալ հրաման
Ընդ ոսոխսն մաքառել 'ի կորեւոր պատերազմին ։
Իսկ յորժամ մերկընդահար կամ 'ի փողքն խոց վիրաւոր
Ցնէր 'ի կառսն ելանիցէ, յայնժամ արկցէ 'ի քեզ կորով
Ի ջարդել՝ մինչեւ երթեալ 'ի գեղատախտս հասցես քաջախս ·
Արեւ 'ի մամուռն մտցէ եւ նուիրական գայցէ խաւար ։
Զայս այսպէս բարբառեալ՝ էլ եւ գնաց Իրիս ժրաջան ։
Իսկ Հեկտոր 'ի կառաց անտի վաղեաց զինուքն յերկիր,
Եւ ճօճեալ սուր գեղարդգունս ընդ համօրէն շըրջէր բանակն
Ի կռուիւ արգելեալ խրախոյս, եւ յարոյց ծանր գուպարած ։
Նոքա յետոյս դարձան կացին ընդդէմ աքայեցւոց ·
Անդուստ արգելացեք ընդունեցան իւրեանց կազդուրեցին,
Եւ գուպարն արծարծեցաւ · Ճակատեցան, եւ Ագամեմնոն
Ոստեաւ յառաջ՝ յոյժ անենչացեալ նահատակել ընդ ախոյեանսն ։
Ասացէք ինձ արդ, Մուսայք, Ոլիմպական յարկաց բնակք,
Ո՛վ ոք նախ առաջին Ագամեմնոնի էլ յանդիման
Ի տրովեանց անտի եւ կամ 'ի բարեփառ նիզակակցաց ։
Կորովին եւ անձնեայն Անտենորեանն Իփիդամաս,
Որ սնաւ 'ի Թրակէ պարարտարօտ՝ 'ի մայր խաշանց ·
Դայեկեաց նմա 'ի տանն 'ի տղայութեան նորա Կիսեւս՝
Մօրն հայր, այն որ ծնաւ զգեղեցկայարսն Թէանով ։
Այլ յորժամ 'ի վայելուչ արբուն չափոցըն ժամանեաց,
Անդ առ իւր կալաւ ըզնա եւ ետ նմին ըզդուստր իւր ·
Իբրեւ սա, յառագաստէ անտի Թռեաւ յաքէանցն համբաւ
Մահկածեւ երկոտասան նաւօք որ զկնի գնային նորա ·
Զորս ապա 'ի Պերկոտէ թողեալ ըզնաւսն միաչափս,
Իսկ ինքն 'ի հետեւոտս եկեալ հասեալ կայր յԻլիոն ·
Սա յայնժամ Ատրիդեան Ագամեմնոնի դիմաւ ընդդէմ ։
Եւ սոքա իբրեւ յիրեարս ընթանալով լինէին մերձ,
Վրիպեալ Ատրիդեայ՝ խոտորեցաւ նիզակն 'ի բաց ։
Իփիդամաս 'ի գօտւոյն եհար ներքոյ լանջապանին,

Եւ յեցաւ ինքն 'ի վերայ՝ 'ի ձեռնըն ծանր եղեալ վշտաւն.
Ոչ եհերձ ընդ կամարըն նըշկարէն, այլ անդ յառաջ
Հանդիպեալ արծաթոյն՝ կըրկնեցաւ պղպէն իբրեւ կապար։
Զորմէ բուռն/իշխանաց հարեալ իշխանն Ագամեմնոն,
Զըրկեալ ուժգին իբր առիւծ 'ի ձեռանէն յինքըն հանէր,
Եւ շեշտեալ սուսերաւն ընդ պարանոցն՝ ելոյծ զանդամսն։
Այսպէս անդ անկեալ տապաստ՝ հէք ըզպըղընձին նընջեաց նա զքուն
Ի նըպաստ քաղաքայնոցն, 'ի հարազատ հարսանէն բացեալ
Ու՛ր նորասէր, յորմէ ոչ 'ի շնորհս ինչ վայելեաց՝ տուեալ բազումն.
Եւ նախ արջառըս հարիւր, ապա հազար եւս այլ ուխտեաց
Այծ՝ ոչխար միանգամայն, որ իւր անթիւք արածէին։
Իսկ յայնժամ սա ընկողոպուտ գլխոյն Ատրիդն Ագամեմնոն,
Եւ երթայր տանէր զըրահն զէնըն յամբոխ աքայեցւոց։
Զոր Կոոնն իբրեւ եւես՝ երեւելին 'ի մէջ արանց,
Երիցագոյնն Անտենորեան, սուգ անհնարին զաչըն պատեաց
Ընդ անկումն հարազատին, եւ անդ 'ի ձեռն անցեալ շըրջա
Կանգնեցաւ գաղտ 'ի կողմն գիւցազնին Ագամեմնոնի,
Եւ արմընկանն 'ի ներքոյ եհար ընդ 'ի մէջ բազկին,
Եւ յայնկոյս եւ թափանցանց փայլուն տեգին սըլացեալ այր։
Սարսափումն եհաս ընդ այն զօրքայն արանց Ագամեմնոն,
Համայն ոչ 'ի գուպարէն ինչ դադարեաց, ոչ 'ի կըռուոյն։
Զհողմասուրն առեալ նիզակ՝ 'ի Կոոնն անդր խոյացաւ,
Որ զեղբայրն ընդհամահայր զԻփիտամաս կալեալ զոտիցն
Հապճեպէր ընդ քարշ առնէր եւ համօրէն կարդայր ըզքաջս։
Եւ 'ի ձգել նորա զայն յամբոխակայան՝ ըզնա հարեալ
Ընդ կըմքեալ վահանաւն 'ի պղընձի տեգ՝ ելոյծ զանդամսն,
Եւ հասեալ՝ եհատ ըզգլուխ իւր 'ի վերայ Իփիտամայ։
Անդ որդիքն Անտենորեանք 'ի ձեռն Ատրիդ թագաւորի
Զճակատագրին լըցեալ օրհաս՝ իջին 'ի տուն Սանդարամետին։
Սակայն ինքն ընդ գաստակաւս այլոց քաջաց շահատակէր
Նիզակաւ եւ սուսերբ եւ մեծամեծ բրածաքարամբք,
Ցորչափ արիւն ջերմաջերմ պըղպըջակէր գեռ 'ի վէրէն.
Իսկ յորժամ ցամաքեցաւ խոցն, եւ արիւնըն դադարեաց,
Հարան ցաւք սաստիկք 'ի զօրութիւնն Ատրիդեսի։
Որպէս ըզկին ծընընդական ըմբըռնէ սուր նետ դըժընդակ,
Զոր արկեալ հարկանէն ծընընդախնամ Իլիթիեայք,
Դըստերք Հերայի՝ յորոց 'ի ձեռս են դառն երկունք.
Նոյնպէս ցաւք սըլացեալք յԱտրիդեսին մըխեցան սիրտ։
Եւ 'ի կառսն աշտանակեալ իւր՝ եւ պատուէր կառավարին
Ի նաւընկարըն խորագոյն վարել զի սիրտ իւր կըսկըծէր։
Զայն ուժգին բարբառոյ բարձեալ կոչեաց առ դանայեանս.
Ո՛վ սիրելիք, առաջնորդք արգիացւոց եւ խնամակալք,

Դուք որք այժըմ պահեցէք 'ի ծովաշուրջ լատտամփայանցն
Ըզզըրահեալդ մարտակուռ, զի զզօնն ինձ չետ Թոյլ Արամազդ
Մըղել ըզպատերազմս ընդ արտաքինս զօրըս ցերեկ :
Զայս ասաց, եւ կառավարն 'ի զօրաւոր նաւակըղն կոյս
Զգեղաբաշ ձիս մըտրակեաց, որ Թըռչէին ոչ անյօժար
Փըրփըրադէզք ըզլանջօքն եւ 'ի փոշի մածեալք ներքուստ,
Առ ըզխոց Թագաւորն 'ի ձախակէն հանել 'ի բաց :
Իսկ Հեկտոր՝ իբրեւ ետես զԱգամեմնոն մեկնեալ գնացեալ,
Խըրախոյս եբարձ մեծաձայն առ տրովականսն եւ լիկեցիս .
Տրովադեայք եւ լիկեանք եւ դարդանիոք ընթերամարտք,
Քաջ լերուք, սիրելիք, եւ դիք 'ի մտի զարիութիւն :
Արանց վեհն 'ի բաց եւ, եւ Զըրուանեանն ինձ Արամազդ
Ետ փառըս մեծ . մն զէպուղիղ 'ի քաջաձոր դանայեցիս
Զի արկէք սալասըմբակ՝ մեծ եւս առնուլ պարծանաց շուք :
Զայս ձայնեալ՝ յորդորեաց զամենեցուն զոյժ եւ զոգիս,
Որպէս որ ուրեք որսորդ զի զպատակեան լըմնաժանի
Դըրդեալ յարուցանէ 'ի վայրենի կինձ կամ յառիւծ,
Նոյնգունակ ըզմեծանձինսն տրովադեանս յաքայեցիսն
Արկ Հեկտոր Պրիամեան, մարդասպան Արեայ հանգոյն :
Եւ ինքնին ընդ առաջինս ամբարտաւանութեամբ խաղայր մեծաւ,
Եւ անկաւ անդր 'ի գուպարըն՝ վերնաշունչ մըրրկի նըման,
Որ Թափ անկեալ ոտնուցեալ՝ վըրդովէ զծովըն կապուտակ :
Իսկ զո՞ նախ անդ առաջին եւ զո՞ վերջին արկ 'ի կենաց
Հեկտորըն Պրիամեան՝ ուր ետ նըմա փառս Արամազդ :
Նախադոյն՝ զԱսէոս, զԱւտոնոոս եւ զՈպիտես,
ԸզԴոլոփսըն Կլիտեան, զՈփելտիոս եւ զԱգելաւ,
Զէսիմնոս եւ զՈռըոս, զՀիպպոնոոս քաջամարտիկ .
Ըզսոսա զդանայեցւոցն ըսպան սալարս, ապա զամբոխն .
Օրինակ իմըն մինչ զամպս երագաձնեալըն հարաւոյ
Հալածէ Զեփիւռ՝ կոծեալ Թանձրատարափ իմըն մըրրկաւ,
Խուռներնթաց կուտակադէզ զլին ուռուցիկ ալեաց կոհակք,
Ցայտէ փըրփուրն 'ի բարձունս 'ի շունչ հողմոյն աստանդելոյ .
Նոյնպէս խիտ Թօթափէին ընդ Հեկտորիւ ամբոխին գլուխք :
Անդ կորուստ հասանէր եւ անհնարին լինէր նախճիրք,
Եւ 'ի նաւսըն փախըստեայք անկանէին աքայեցիք,
Եթէ չէր Ոդիսեայ հարեալ բողոք առ Դիոմէդ .
Իսկ զի՞ եղեւ մեզ, Տիդեանդ, զի մոռացաք զարութիւն քաջ .
Այլ մն այսըր, սիրելի, առ իս մատիր . այպանք իցեն՝
Թէ Հեկտոր կորդակախրոխտ լիցի նաւացըս գամաղիտ :
Ետ նըմա պատասխանի Դիոմեդէս քաջ եւ ասէ .
Կացից ես, ժուժկալեցից, այլ դուզնաքեայ ինչ եղիցի
Շահ օգտին առ 'ի մէնջ, զի Արամազդ ամպրոպայոյզ

Տրովացւոց քան թէ մեզ կամի շնորհել ըզյաղթութիւն ։
Ասաց, եւ 'ի կառացն ընկէց յերկիր ըզԹիմբրէոս
Տիգահար արարեալ յահեակ ըստինն, իսկ Ոդիսեւս
Զարբանեակն արքային զաստուածանմանըն Մոլիոնն ։
Ըզսոսա 'ի կըռուոյն ըլռեցուցեալ՝ թողեալ անդէն,
Ինքեանք մըխեալ ընդ ամբոխն եւ խռով հարեալ աղմըկէին,
Զերդ կըրկին վարազք հարեալք սըրամըտութեամբ յորսականս.
Սոյն օրէն դիմեալք ընդ կրունկ՝ սատակէին ըզտրովադեանս,
Ի Հեկտորէ քաջէն վանեալքն աքեանք ոգի առնուին լուրջք ։
Անդանօր կալան ըզկառս եւ զքաջորեար ժողովրդեան,
Զերկուս որդիս Մերոպեայ Պերկոսացւոյ՝ հըմտագունին
Քան ըզբնաւս հըմայից, որ չտայր թոյլ մանկանց իւրոց
Ընթանալ 'ի պատերազմըն մարդածախ, եւ լըւան ոչ.
Զի տարեալ տանէր զնոսա սեաւ օրհասին ճակատագիր ։
Արդ Տիդեանն ըզսոսա Դիոմեդէս աշտենափառ
Ի հոգւոյ եւ յարեւէ արկեալ ըզզէնսն էառ կապուտ.
Իսկ Ոդիսեւս սատակեաց զՀիպպոդամոս եւ զՀիպերոքս ։
Անդ նոցին հարթհաւասար ձըգեաց ըզմարտըն Զըրուանեանն
Ահն արկեալ յԻդայ 'ի վայր, եւ ըզմիմեանըս զըսպանէին ։
Եւ դաւակըն Տիդեայ սխրալ եհար զԱգաստրոփոս
Ըզդիւցազնըն Պէոնեան ընդ թամբ զըստանն, զի չէին մերձ
Երիվարքըն առ 'ի փախչել, վըրիպամիտ գըտեալ 'նա յոյժ.
Մեկուսի զնոսա կալեալ պաշտօնէին, եւ ինքն հետի
Ցարձակեալ ընդ նախահատակս՝ անկաւ 'ի քաղցր արեւէն ։
Իսկ Հեկտոր սուր նըկատեալ ընդ դասակարգսն՝ եւ նա նոցա
Մեծաղաղակ հարեալ խոյանայ, զհետ խաղային եւ տրովեան գունդք ։
Զայն տեսեալ սոսկացաւ Դիոմեդէս ահեղագոռ,
Եւ անդէն առ Ոդիսեւսն ընթերակայ եբարձ ըզձայնն.
Ցերկոսեան 'ի մեզ եղեռնըդ հոլովեալ գայ՝ բռւան Հեկտոր.
Այլ աղէ եկ պինդ կացցուք, եւ զդէմ կալեալ բեկցուք ըզնա ։
Ասաց, եւ ճօճեալ զերկայնաստուերն ընկէց նիզակ.
Եւ գէտ կալեալ անվրէպ 'ի գլուխն՝ ըզչուրթն եհար սաղաւարտին.
Այլ 'ի պղընձոյն ստուեաւ պըղինձն՝ 'ի գեղեցիկ մորթն ոչ հասեալ,
Զի եկաց ընդդէմ արգել եռապատիկն եւ բարձրածայր
Գըլխանոցն որ էր Փուշակն Ապողոնի տըւեալ պարգեւ ։
Իսկ Հեկտոր ճեպով անհուն յետս ընթացեալ խառնեալ յամբոխն՝
Անկաւ 'ի ծունկս եկաց յեց հաստաբազուկ ձեռամբն յերկիր,
Եւ պատեալ զաչըս նորա ծածկեաց գիշեր խաւարաբոր ։
Իսկ մինչդեռ 'ի տէգընկէց անդ իւր դիմեալ երթայր Տիդեանն՝
Քաջ 'ի բաց ընդ նախահատակսն՝ ուր ընդ գետինըն մըխեալ կայր,
Ցայնժամ ոգի առ Հեկտոր, եւ ամբարձեալ անդրէն 'ի կառսն
Եւ 'ի խուռն անդր վարեալ՝ ապրեաց 'ի սեւ օրհասէն ։

Իսկ արին Դիոմեդէս ըղձէր պնդեալ տիգաւն՝ ասէ·
Արդ դարձեալ 'ի մահուանէ փրկեցար, շուն, էր մօտալուտ
Չարն առ քեզ, կրկին Գուշակն այժմ Ապողոն Թափեաց ըզքեզ,
Որում ուխտս տայցէն դընես 'ի գալդ յարդանց 'ի շխան ։
Այլ ըզքեզ հուսկ իմն ուրեմըն պատահեալ սատակեցից,
Թէ ոք ինձ եւս օգնական իցէ 'ի դից եւ զօրավիգն·
Այժմ ըղձեա մըտից այլոց՝ ում հեռընհաս եւ լինիցիմ։
Զայս ասաց, եւ կողոպտեաց ըզախգաւորըն Պէոնեան ։
Բայց սակայն Աղեքսանդրոս՝ այրն Հեղինեայ վարսագեղուն,
Ի Տիդեան անդր 'ի հովուն ազգաց լըծոյր ըղլայնալիճն,
Ընդ արձանաւ Թաքուցեալ 'ի ձեռակերտ գամբանի անդ
Դարդանեանն Իլոսի վաղընջենի ծերոյ դրոհին ։
Արդ նա յայնժամ ըզքաջին Ագաստրոփեայ զպատենազէնս
Ի կըրծիցըն կողէր ըզնըկարէնս, զասպարն յուսոց,
Եւ ըղծանըր կորդակն· եւ մուս նա ՚նդ զիրկս իւր աղեղանն
Եւ եհար, ոչ վըրիպեալ նետն 'ի մատանցն ունայնավար,
Զգարշապար ոտին աջոյ, եւ Թափ ընդ այն անցեալ փըքընին՝
Ի գետին վարսեցաւ· իսկ նա յոյժ քաղցր 'ի ծաղր հատեալ՝
Վաղեաց 'ի դարանէն եւ խրոխտելով բարբառեցաւ·
Խոցեցար, ոչ վայրապար Թըռեաւ սըլաքս· այլ ո՛ տայր ինձ
Թէ 'ի կուշտդ ներքին արկեալ՝ զոգիդ քաղէի·
Ցայնժամ ոգի առնուին եւ յեղերանց աստի արամեանք,
Որ 'ի քէն, իբր յառիւծէ պապաջող այծք, կան զարհուրեալ։
Իսկ արին Դիոմեդէս ոչ ինչ քաջընեալ ասէ առ նա·
Լուտացող աղեղնաւոր, եղջերապանծ, աղջկաղընեն,
Եթէ զինուք գիմագրաւ 'ի հանդիսի մատչէիր փորձ,
Չէր ինչ քեզ օգնելոց աղեղն եւ նետք քո Թանձրախուռն·
Արդ զոտին իմոյ գըծեալ քո զգարշապար՝ ունայն պանծաս ։
Չէ ինձ փոյթ, որպէս Թէ կին ոք կամ մանուկ հարկանէր խոլ·
Զի կըթոտ եւ անպիտան առըն փըքին բութ է եւ դուլ։
Ապաքէն այլազգ յինէն, Թէ եւ Թեթեւ ինչ շօշիցի,
Ելանէ սըլաքըն սուր, եւ արկանէ անդէն անշունչ·
Եւ կընոջ ամուսնոյ նորին ցըռոին եւ ցելուն այտք,
Որբանայ մանկունք, եւ ինքն ըղհողն յարիւն ներկեալ կարմիր
Տրորեալ նեխի, եւ քան կանայք՝ հաւք պար առեալ պատին զնովաւ։
Զայս ասաց· իսկ Ոդիսեւս կորովաձեգ հուպ մատուցեալ
Կաց հանդէպ, նա զնետըն սուր՝ նըստեալ յետոյս՝ զերծ յոտանէն,
Եւ սաստիկ ցաւոց խիթք ըղբոլանդակ մարմնովն անկան ։
Ել անդէն հեծաւ 'ի կառսն եւ ետ պատուէր կառավարին
Ի քաղաքըն դոգաւոր վարել, զի սիրտ իւր մորմոքէր ։
Միայն մընաց Ոդիսեւս նիզակաւորըն, եւ չեկաց ոք
Առ նովաւ յարգիւացւոց, զի անկաւ ահ յամենեսեան·

Ցաւոց եղ, եւ ՚նդ մեծասիրտ անձին իւրում զայս խօսեցաւ.
Վա՜հ զինու, ինձ զինչ հասցէ. չար անհնարին եթէ փախուցայց
Զարհուրեալ ՚ի խուժանէս, եւ թէ ՚մբռնիմ միայն՝ չար եւս.
Զի Զրուանեանն երկիւղիւ պաշարեաց զայլ Դանայեցիս:
Այլ զի՞ է զայսոսիկ խոհս հոգւոյս ընդ իս վիճել.
Զի գիտեմ եթէ վատաց է խուսափել ՚ի ճակատէ,
Իսկ որ քաջն իցէ ՚ի կռիւ, հարկ ապաքէն իցէ ՚նդմա
Ժուժկալել արիաբար, թէպէտ հարցի, թէ հարցէ զոք:
Մինչդեռ զայս ընդ մտաւ եւ ընդ սրտին ածէր իւրում,
Հասին գունդք պատանեացն վահանաւոր տրովադացւոց,
Եւ փակեցին ՚ի միջի՝ զեղեան յինքեանս ամփոփելով:
Որպէս յորժամ ՚ի վարազ հրոսեն բազմակք ռամկայք մանկունք,
Եւ նա ելեալ գայ դիմեալ ՚ի թաւամուտ թաւալցէն
Զբազմախտակ սրելով ժանիսն ՚ի ծամելեացն ծամածուռս.
Յարձակեալ գրոհեն նոքա, եւ ատամանց ճայթէ կափիւն,
Նոքա ալինք կան ՚ի գլուխ՝ թէպէտ գրժնեալ իցէ սաստիկ.
Նոյն յամենայնս յՈդիսեւս՝ ՚ի սիրելին Արամազդայ՝
Խուժէին տրովադեանք, եւ նախ նա զհրաշալին Դէյոպիտէս
Խոցեաց ընդ ուսն ՚ի վերուստ՝ ընդոստուցեալ սուր աշտէիւ,
Յետ այնորիկ ապա զԹոոնն բազուկն եւ զԵննոմոս,
Եւ ապա զՔերսիդամաս՝ մինչ ՚ի կառացն իջանէր գետ,
Ընդ կրծքեայ վահանաւն ըղտէգն ՚ի պորտ մխեալ նորա,
Եւ նա գլորեալ ՚ի փոշւոյն՝ ափով ձեռացն կալաւ զերկիր:
Թողեալ զսոսա՝ զՀիպպասեան Քարոփս արար մերկընդահար,
Զեղբայրըն հարազատ ըղՍոկոսի քաջազարմին,
Որում զայր ՚ի թիկունս աստուածակերպ այրըն Սոկոս.
Նա եկն արձանացեալ՝ ըղբանս առ նա բարբառեցաւ.
Ո՛վ անուանիդ Ոդիսեւս, անյագդ ՚ի նենգ եւ ՚ի ճըգնութս,
Գործանք՝ կամ զերկոցունց տարցիս այսօր ըղհիպպասեանց,
Ըսպաննեալ արս այսպիսիս եւ ըղկազմածն առեալ կապուտ,
Կամ իմով գեղարդեամբ խոցեալ՝ զոգիդ կորուսցես:
Ընդ բանին եւ եհար զվահան նորա զբոլորածիր.
Եւ անցեալ թափ ընդ ապարօրն փայլածուն՝ նիզակն հուժկու,
Երթեալ մխեցաւ յամենարուեստ պատենազէնսն,
Եւ քերթեաց ՚ի կողիցն ըղմորթըն բնաւ, սակայն չետ թոյլ
Պալլաս Աթենաս խառնել յարփ առնըն ընդերս:
Գիտաց յանձին իւր Ոդիսեւս՝ զի մահացու սայր չանկաւ յինքն,
Եւ ընդ կրունկըն վերըշխանեալ՝ զայս առ Սոկոս արձակեաց ձայն.
Ա՛յ թշուառ, այժմ ահ եւ ահ գայ ժամանէ քեզ ծանր օրհաս,
Զի խափան ինձ արարեր ՚ի կռուելոյ ՚նդ տրովադացիսդ.
Եւ ես քեզ աստ ասեմ ըղսատակումն եւ ըղսեւ մահ
Հասանել յաւուրս յայսմիկ, եւ աշտէիւս իմով պարտեալ՝

Գործանս քեզ տացես, զորքս Սանդարամետականն քաղաքաց ։
Արդ, եւ նա 'ի փախուստ անդրէն դարձեալ յետս ընթանայր .
Ի շրջել իւր ըզթիկունսն՝ եհար վարսաց ոտն 'ի միջնասն՝
Ի միջի անդ ուսոցն, եւ թափ ընդ լանջս անցոյց յայնկոյս .
Տապալեալ՝ թընդիւն եհան, եւ Ոդիսեւս պանծայր գիւցազն .
Ո՛վ Սոկէ, քաղաքամարտին ձիավարժի Հիպպասեայ ծնունդ,
Քեզ վախճան եհաս մահուն եւ ըմբռնեցաւ, եւ չապրեցար ։
Ո՛վ հեքեդ, ոչ քեզ հայր եւ ոչ մայրիկ քո մեծարոյ
Զաչկունսդ փակեսցեն 'ի մահուան քում, այլ գիշակեր
Խլեսցեն հաւք՝ բաբախելով ըզթեւս խիտ եւ իւրեանց բազում ըզքեւ .
Իսկ թէ ես մեռանիցիմ, յուղարկեսցեն աքայեանք քաջք ։
Զայս ասացեալ՝ ըզհզօր նիզակ Սոկեայ բուռըն մարտիկն
Զըգեաց հան 'ի մարմնոյն եւ 'ի կըռնկեաց իւր վահանէն,
Եւ արիւնն 'ի կորզել նորա ցայտեալ՝ տանջէր զոգին ։
Իսկ տրովեանքըն մեծանձինք զՈդիսեայ յանէն տեսեալ զարիւնն,
Խրախոյս բարձեալ յամբոխէն՝ միահամուռ յնմին ընթացան ։
Իսկ նա յետս յետս երթայր եւ առ ընկերսն աղաղակէր,
Եւ երիցս գոչեաց որչափ տանէր տանըն գըլուխ .
Լըւաւ երիցս ըզկանչիւնն՝ Արեայ սիրելին Մենելաւոս,
Եւ անդէն առ որ մերձըն կայր Էաս՝ ձայն արձակեաց .
Մազդեղինդ Էաս Տելամոնեան, ազանց իշխան,
Քաջախիզախն Ոդիսեայ զինեւ հընչէ ձայն բարբառոյ,
Որպէս այն թէ զնա 'ի նեղ արկեալ տրովեանք առանձնացուցեն
Պաշարեալ յանձկի զմիայնն 'ի սաստկացեալ գուպարածի ։
Եկ 'ի գաղթս անդր երթիցուք . զի ազնուագոյն է պաշտպանել .
Կասկածեմ գուցէ միայն մնացեալ կրեսցէ ինչ 'ի տրովեանց
Այրըն արքայեայ, եւ կարօտ դանայեցւոց թողցէ աստանէ ։
Զայս ասացեալ յառաջէր, խաղայր ընդ նմին գիւցազնական այր .
Եւ գըտին զՈդիսեւս՝ ըզսիրելին Արամազդայ,
Եւ զտրովեանս զնորեւ պատեալ իբր 'ի լերինս շէկ գայլաշունք
Զեղջերապատն եղջերուաւ զոր խոցեալ այր միջաւորեաց
Նետահար 'ի լարէն, յորմէ զերծաւ թեւթեւ ոտիւք
Փախուցեալ մինչ եռէր արիւնն եւ ծունկք նորա ջախր առնէին .
Իսկ ապա՝ իբրեւ ընկճէ զնմին սըլաքըն տայրասուր,
Ցըրգըռեն զնմին 'ի լերինսն գայլաշունքըն շաղղակերք
Ի հովանոյս անտառի . այլ բախտն եբեր զառիւծ մերոյդ,
Գայլաշունքն յահէն արանան, եւ նմին անցեալ մըռընդգայլ .
Այսպէս անդ զարիական զպնդահանձայրն Ոդիսեւս շուրջ
Բազկ առնուէին բազմախուռն եւ կորովի տրովադացիք .
Այլ մըկընդաւն յարձակեալ վանէր գիւցազըն ըզժամըն ժանտ ։
Եկն Էաս՝ մերձ մատեաւ ըզբըրգաձեւն ածեալ զասպար
Կաց ընդ կողմ, իսկ տրովադացիք՝ այլ ոք այլուր խուսափեցին ։

Մենելաւս արքունական ըզձեռանէն կալեալ ըզնա
Ցամբոխէն եհան յոր վայր հուպ անդր ըզձիս վարեաց ծառայն:
Իսկ Այաս 'ի տրովադացիսն անկեալ ըսպան ըզԴորիկլոս
Զհարճորդին Պրիամեան, ըզՊանդոկոս ապա եհար,
Եհար եւ զԼիսանդրոս, ըզՊիրասոս եւ զՊիլարտէս:
Օրինակ իբր յորժամ գետ յորդեալ ընդ դաշտ ընթանայցէ
Ի լերանց հեղեղատեալ, յԱրամազդայն ձեռնեալ տարափ,
Բազում չոր կաղնիս ընդ իւր առեալ գլէ եւ շատ բազում,
Եւ կարանաւոր շերջանկայս թաւալագլոր գերբէ 'ի ծով,
Նոյն Այաս հրաշակերտն փոթորկելով խաղայր ընդ գետն՝
Հարեալ զարս եւ զերիվարս, եւ Հեկտոր չեւ էր լեալ ըզգաստ.
Զի երթեալ պատերազմէր յահեկակողմ բոլոր աւազին
Առ ափամբք ըզՍկամանդրոս գետոյն ուր շատ եւս մանաւանդ
Կառափունք թօթափէին արանց, եւ գոռ անդուլ գոչոյր
Ըզմեծաւըն Նեստորիւ եւ զարիականն Իդոմենեաւ:
Եւ Հեկտոր խառն ընդ նոսին՝ անհընարին գործէր նախճիրս
Ի նիզակ ու 'ի հեծելոյթ, աւանէր զատանին գունդ գիր եւ տար,
Բայց քաջազն աքայեցիք յառաջարիակէն չմեկնէին ինչ,
Եթէ չէր Աղեքսանդրի՝ առն Հեղինեայ վարսագեղին՝
ԶՄաքաւոն զհովիւն ազգաց 'ի քաջութեանցըն ցածուցեալ
Եռասայր ալըլաքու խոցեալ ընդ ուս աջակողման:
Զահի'նդ այն հարան մեծի աքայեցիք ամեհաշունչք,
Գուցէ զնա 'ի շըրջել պատերազմին սպանանիցեն:
Եւ անդէն Իդոմենեւս ձայն ետ դիւցազն ընկէց Նեստոր.
Ո՛վ Նեստոր Նելիածին, աքայեցւոց պարծանքըդ մեծ,
Օն արի, հեծիր 'ի կառսդ, եւ Մաքաւոն ընդ քեզ ելցէ,
Եւ ձգեալ զսալաբաշխ կոչեր ձիանդ 'ի նաւացըն կոյս:
Քանզի այր բըժիշկ այլոց բազմադունից է փոխանակ
Առ 'ի զնետս կորզել եւ սպեղանել քաղցըր դեղովք:
Զայս ասաց, չըստամբանեաց Նեստոր ասպետըն Գերենեան.
Ել անդէն 'ի կառըս իւր, եւ Մաքաւոն առ իւր հեծաւ՝
Ասկղեպեայ սքանչելւոյ ծառատարապետ բըժըշկին ձեռ.
Մըտրակեաց զերիվարսն եւ միատադիւր սըլանային
Ի գոգեալ կարկուբայն, անդըր սըլանցն եղեալ հաճոյ:
Ըրփոթեալս ըզտրովադացիսն յահեկն արկեալ Կեբրիոնի՝
Որ հեծեալն էր Հեկտորիւ, բան զայս առ նա բարբառեցաւ.
Հեկտոր, մեք աստանօր ընդ դանայեանքըս դեգերիմք
Ի մի թեւ ահեղաձայն գուպարածիս, իսկ այլ տրովեանք
Խառնիխուռըն պըղտորին ընդ իրեարս արք եւ երիվարք,
Եւ խռովէ զնոսին Այաս Տելամոնեան, ծանեայ զնա քաջ.
Զի զասպարն ըզլայնատարըր ունի զթիկամբք. օն եկ եւ մեք
Անդր ըզկառս եւ զձիս վարեմք, ուր առաւել յաճախագունդ

Հեծեալք եւ հետեւակք մղեալ ըղձմարան եղեռնագործ
Ըղձիմեանըս սաստակէն, եւ բըրդեցաւ խօշխէն անհուն։
Ասացեալ զայս՝ մըտրակեաց զերիվարսըն գեղաբաշ
Շաչուան մըտրակաւն, որ ըզձայնին ընկալեալ զայն՝
Թեւթեւ ըզարագ կառան ածէին ընդ տրովացիս եւ՚նդ աքայեանս,
Առամթուր կոխեալ զմեռեալս եւ ըզվահանս, եւ առանցն ողջոյն
Ներքուստ յարիւն Թաթաւէր եւ շըրջանակքըն 'ի ծնօտ կառացն,
Յորըս շիթք 'ի սըմբակաց երիվարացըն ցայտէին
Եւ 'ի ծայրից հեծցեն, եւ նա ցանկայր յամբոխն արանց
Մըտանել խորտակել, Թափ սաստուցեալ, եւ զաղմուկ ժխոր
Ընկէց 'ի դանայեանս, եւ 'ի նիզակն ոչ դադարէր։
Սակայն նա, 'ի գասակարգս այլոց արանց անցեալ 'ի կախ
Նիզակաւ եւ սուսերբ եւ մեծամեծ բըռնաքարամբըք,
Տելամոնեանն Այասայ 'ի գոռաւորըն ըզգուշանայր.
Զի նմա ցասնոյր Արամազդ՝ թէ՛նդ վեհ քան զինքն սա մարտնչէր։
Սակայն բարձրագահն Արամազդ հայր՝ ահ արկ յԱյաս,
Պակուցեալ եկաց եւ յուսս ընկէց զասպարն եօթնակաշեան,
Եւ սարսեալ՝ աչըս յամբոխն ածէր հանգոյն չար գազանի,
Յետս ընդ կրունկ դարձեալ բառնայր, զուն փոխեալ ծունր 'ի ծընկանէ։
Զոր օրինակ յանդէոց հանդըրուանէ զառիւծ խարտեաշ
Հալածեալ փախուցանեն գամփռունք եւ այր արօտարածականք,
Որ զգիշերն ողջոյն արթնեալ՝ չըտան նըմա յափըշտակել
Զարջառոցն ըզճարպ, իսկ նա շաղգէն անձկաւ ասպատակեալ,
Բայց մըճարեալ եւ ոչ ինչ, զի Թանձրախուռն 'ի հանդիպոյ
Ի գըրկացըն կորովեաց Թըռչէին սըլաքըն սայրասուրք
Եւ ջահք հրաբորբոք, յորոց քաջըն՝ Թէ եւ խիղախ,
Ընդ այգըն տարադէմ գընայ 'ի բաց հաշեալ սըրտիւ.
Այաս այսպէս 'ի տրովեանց գընայր սըրտիւ Թախանձալից
Յակամայս յոյժ, երկուցեալ զաքայեցւոց նաւատորմին։
Որպէս մըտրուկ ծոյլ՝ բըռնացեալ քան ըզմանկունս եւ հատեալ յանդ,
Յետ յոգունց 'ի վերայ նորա բըրոց խորտակելոյ՝
Մըտեալ խուզէ զԹանձր արտորայն, կոփեն մանկունք Թոպալօք,
Սակայն կորըն ուժոյ նոցին անտխական է կնաստադոյն,
Եւ հազիւ ըզճարակեալըն յագ կըշտացեալ ինդ 'ի բաց վանեն.
Այսպէս յայնժամ անդ զորդին Տելամոնեան՝ ըզմեծն Այաս
Մեծանձինքըն տրովացիք եւ օգնականք հեռահռաւէրք
Մըկընդահար Թողեալ ըզկուռն ասպարին ցանդ հալածէին։
Իսկ Այաս, է զի յուշ ածեալ ըզբուռըն քաջութիւն,
Յետս ընդ կրունկըն դարձեալ՝ ըզդէմ ունէր գումարտակաց
Տրովացւոց ձիահրմնից, է զի դառնայր յետս 'ի փախուստ,
Եւ արգել զամենեսին 'ի սըրընթաց նաւացըն մի խուժել։
Ինքն 'ի մէջ տրովադացւոց եւ աքայեանց կացեալ մըլէր,



Digitized by Google

Եւ աշտէքն 'ի կորովեաց անտի բազկաց գնտեալք յառաջ
Էր որ 'ի յաղթն իւր վաղեան երթեալ վարեալ հարբուածն,
Շառաչ եւս անդ 'ի մէջոյ, չեւ 'ի մարմին հարեալ սախտակ,
Ընդ գետնին անկեալ մնային՝ յագել մարմնովքն անճշացեալք:
Ըզնա անեալ Եւփորբին՝ Եւմենիդ որդին շքեղ,
Զի նետեալ ասպարակեր անզատարագ հասեալ նետեսք,
Զորաւ եկաց առ նոսա, եւ արձակեալ զաշակն փայլուն՝
Եհար զփառաւորեալն Ասիացւոյն զհովիւն ազգաց՝
Ի մէջ մէջն ընդ կռնակն, եւ նոյնժամայն ըղձանեալ եկեալ.
Վաղ ասեալ Եւփորբոս ըղձենան յառաջն կողպեալ էր:
Իսկ ըզնա իբրեւ եսես Անքեղանդրոս տառուածակերպ
Զի դերձայր զԱսիական 'ի կաղմածոյ, քարշեաց անդէն
Զքաջամարտն յԵւփորբոս եւ եհար նոա 'ի գիրան աղյ.
Եղէգնին ըմէկաւ, եւ տառապէր աղեղին ցաւովք:
Ընկերացն անդրէն 'ի վաղ մեկնէր աղբեալ 'ի մահուանէ,
Եւ եհար մեծազոյշ 'ի գահայեան գունդն աղաղակ.
Ո՛վ ախոյեանք, զօրավարք արգիականք եւ յառաջապահք,
Դարձէք կացէք վանեցէք ըզժամեն ժամու 'ի յերասայ՝
Ի նետից ատելեալքն, որ ոչ կարծեմ թէ փրկեսցի
Յաւաղմաւոր 'ի խաղալս. այլ աննայն ստով ընդդէմ
Ըզանձամբ եկաւ զՏելամոնեանն որդւով կացէք:
Զայս ասաց վիրաւորն Եւփորբոս, նոքա մատեան
Կացին մերձ՝ ըզվահանսն խոնարհեալ զուռովք իւրեանց
Եւ ըզաշտէքն կարկառեալ. առաջ 'նդ առաջ գնաց Էաս,
Եւ յետս ընդդէմ դարձաւ եկաց ընդ ժամանելն յընկերաց գունդ:
Այսպէս սոքա պատային զօրէն հրոյ բորբոքելոյ: —
Իսկ ըզԱքտոր 'ի մարտէն՝ Նելեան զամբիկքն քրտնահարք
Տանէին, ածէին եւ զՄաքաւոն զհովիւն ազանց:
Երագատուն քաջազէն Աքիլլէսի զնա ահեալ ճանեաւ.
Զի կայեալ 'ի վերջին յաղթամարտին նաւէն իբրեւ՝
Նկատէր զծանրը ճգնութեան եւ ըզխուճապս տառապանաց:
Եւ անդէն անդ առ ընկերն իւր Պատրոկլես բարբառեցաւ
Ձայնարկեալ 'ի նաւէն. նա 'ի վրանէն զաղցն իբրեւ առ,
Ել 'ի դուրս Արեայ նման, եւ նման սկիզբն եղեւ չարի:
Խօսեցաւ առ նա նախ արի որդեակն Մենետեայ.
Զի՞ կարդաս զիս, Աքիլլէս, եւ զի՞նչ խնդրես է քո յինէն:
Երագատն Աքիլլէս պատասխանի տուեալ ասէ.
Դիւցազնդ Մենետեան, անձին իմոյ յոյժ սիրելի,
Այժմ 'ի ծունկս իմ անկանել կարծեմ զաքեայս աղերսարկուս,
Զի հասեալ անձկութիւն անհընարին պաշարեալ կայ:
Այլ երթ, Արամազդայ սիրուն Պատրոկլ, հարց ըզնեստոր,
Ո՛վ վիրաւորն այն իցէ՝ զոր 'ի կրկնոյն ասեալ ածէ:

Ի թիկանց՝ արդարեւ Մաքաւոնի թուի հանգոյն
Զաւակին Ասկլեպեայ, բայց ոչ տեսի զառնըն երեսս,
Զի զանցին զինեւ ձիանն յառաջադիմըն ձեպելով:
Զայս ասաց, եւ Պատրոկլոս անսաց սիրուն ընկերակցին,
Եւ դիմեալ ընթացաւ ընդ նաւս եւ վրանս աքայեցւոց: —
Իսկ նոքա մինչ 'ի խորան Նելէոսածնին ժամեան եղեն,
Ինքեանք 'ի կառաց յերկիրն իջին գալարաւէտ,
Եւ պաշտօնեայ ծերունւոյն ըզձիսն ելոյծ՝ Եւրիմեդոն:
Եւ նոքա զքիրտն 'ի շապկաց անտի իւրեանց ցամաքէին
Կանգնեալք ըզծովեզերբն 'ի սըքախառն օդոյն սըղոխս:
Ապա 'ի վրան անդըր մըտեալ 'ի նըստարանսըն բազմեցան:
Ըմպելի խառնէր նոցա գեղեցկածամն Եկամեդէ,
Զոր յաւերել Աքիլլէսի առ աւերողն 'ի Տենեդեայ՝
Ըզդուստըր մեծանձինն Արսինոյի, զոր նըր ետուն
Աքայեցիք ընտրանաւ, զի բնաւից վեհ էր խորհըրդով:
Արկ սա նախ առաջի նոցա սեղան մի գեղեցիկ,
Սեւոտնի, ողորկագոյն, եւ 'ի վերայ սան մի պղնձի,
Եւ սոխ 'ի նըմին՝ 'ի դէպ յարբումըն կերակուր,
Եւ մեղր ծորածոյ. եւ զփոխընդին սըրբոյ ալեւրոյ,
Եւ զբաժակըն չըքնաղ՝ զոր 'ի տանէն ած ծերունին
Ըզկըռեալըն ոսկեպալար, որում չորք էին ունկունք,
Եւ կըրկին ըզմէն միով իւրաքանչիւր շուրջանակի
Աղաւնեակք ճարակէին, եւ կըրկին տակք էին ներքուստ:
Այլ ոք հազիւ դըժուարաւ շարժէր ըզլին 'ի սեղանոյն,
Իսկ ալեւորըն Նեստոր առնոյր բառնայր զայն անաշխատ:
Արդ 'ի նմա խառնեաց նոցա կնին հանգունակ աստուածուհեաց
Պրամնեան անապակաւ, զայծենին յայն քերեալ պանիր
Քերոցաւ պղնձէիւ, ցանեալ 'ի նոյն սպիտակ փոխինդ.
Իբրեւ կազմեաց զըմպելին՝ առեալ մատոյց առ նոսա յումպ:
Որ արբեալ եւ յափուցեալ ըզտապախարշն երաշտ պապակ՝
Ըզբանիւք ընդ միմեանս անկեալ՝ խօսիւք ըզբօսնուին:
Իսկ Պատրոկլ եկեալ եկաց անդ առ դրանն այրն աստուածատիպ.
Զոր տեսեալ ծերունւոյն՝ 'ի պաղպաջուն յարեաւ գահէն,
Եւ զձեռանէն առեալ եմոյծ եւ հրաւիրեաց 'ի բազմական:
Այլ սակայն Պատրոկլոս 'ի հրաժեշտի կացեալ ասէ.
Չէ նըստոյ ժամ եւ չածցես զիս 'ի հաւան, դիւցազնըդ ծեր.
Մեծարոյ, պատկառելի է որ յղեաց զիս հարցանել,
Ո՛վ էր դա զոր ածէիրըն վիրաւոր, այլ աւադիկ
Ճանաչեմ ինձէն տեսեալ զհովիւն ազգաց ըզՄաքաւոն:
Արդ հրեշտակ զրուցատար առ Աքիլլէս դարձայց անդրէն.
Դու ինքնին իսկ քաջ գիտես, դիւցազնըդ ծեր, զինչ ոք է նա
Այր դըժնեայ, զանմեղն անգամ թերեւս ընդ փոյթ պարտաւորէ:

Եւ նըման պատառականի Նաւարար սաւկերըն Գերմանեան.
Զի՞ այդպէս Աքիլէս դըժնեայ յորդեա ապայեցեաց
Ի նեղեալըն վերաւորս, եւ ոչ գիտէ քանիօն սուգ
Հաս կալաւ ըղբանակն. աւազորեարն անկեալ զընին
Նաւահար եւ ափզափող այր ամենայն 'ի նաւս խուրեանց:
Նաւահար կայ Տիգրանեան կողմնքն Դիոմեդէս,
Տեղափոխ է Ոդիսեւս եւ փառաշուէն Ագամեմնոն,
Եւ ընդ աղջըրըն փըղձեաւ հարկեալ զընէ Եւրիպիլոս,
Եւ ըղլաս` մեւս եւս այլ` հանէ ես այժմ 'ի Ձակատէն
Լարանձեղ աղըղձաւ միջաւորեալ. բայց Աքիլէս`
Վասըն այն ոչ փոյթ ինչ առնէ, ոչ արդարեւ զամբայեցեալ:
Մի թէ սպասե՞լ մնայցէ, մինչեւ երագ նաւքն առ ծովուն
Ի հեծուկս արգելացեալ խանձառակեղն յախերժ հուր,
Եւ մեք մի'ստ մինչ կատարեսցեմք այր առ ընկեր.
Զի չէն իմ ըմըք, նաւ երկաթի, 'ի գիւրապաճ անդամս առոյգ:
Իցեւ որ առայր ինձ զայն արդուն եւ ըղեղնեղ անոց կարով,
Որպէս յորժամ զանգէից ատարէ'նդ մեզ ու...
Անկաւ վէգ, եւ յորժամ զինախմբեւս ըստանի ես
Ըզքաղաքըն Հիպոկրատեան, որոյ յետ էր ընտկաւթեան:
Աղաւէ ես փոխարէնս, խոկ նա զեւրոց եզանց կըռաւէր,
Նաւահար տապալեցաւ ընդ առաջինն յիմէ բաղէ,
Եւ արըըն զեռնայինք խուճապեցան յահ ու'ի փախուստ:
Գերփեցաք 'ի դաշտէն ածղին առար բաղմանղեր.
Յիսուն նաւակր արջառոց, եւ ոչխարաց նոյնչափ ճահուկս,
Խոզից նոյնքան երամակս, եւ ընդարձակ հօտանս այծեաց,
Եւ աշխէշ երիվարս համակ մատակս հարիւր յիսուն,
Յորոց բաղմաց 'ի նոցանց կայէն յըստակածն յաւանակք:
Ի Նեղեան Պիլոս 'ի նեղըըս վարեցաք զայն ամենայն
Յառաջն անդըը գիշերի, Նեղեւս 'ի միտսըն զուարճացաւ,
Զի պատանեակ 'ի կռուին երթեալ` բաղում ինչ ինձ եհաս անկած:
Եւ քարոզք ձայնեցին ընդ երեւել առաւօտուն,
Ոյց էին ինչ պարտք յԷլիս աստուածական` գալ հաւանել.
Եւ իշխանք ժողովեալ, պիլիացւոցն առաջորեար,
Աւանէին աւարաբաշխ, զի պարտէին Եպեանք յոգունց.
Քանզի մեք սակաւաւորքս խուեցաք 'ի Պիլոսի:
Զի եկեալ Հերակլէական զօրութեան յամսն առաջինս
Նըկեաց ըղմեզ, եւ աղնիւք կատարեցան սահաշարակ:
Զի որդիք երկոտասան կատարելոյն էաք Նեղեայ,
Յորոց ես միայն մնացի, այլքըն կորեան ամենեքին:
Յայսմանէ գոռոզացեալ պատենաղէն Եպէացւոց,
Խրոխտացեալ 'ի մեր վերայ` հնարեցան մեզ անօրէնել:
Իսկ ծերըն ինքն մի անդէոյ եւ ոչխարց մեծ իմն ըստացաւ հօտ

Զատոյց իւր ընտրանաւ երեքհարիւրս, եւ տըւարածս:
Զի նմա պարգեւ մեծամեծք կային յԷլիս աստուածային.
Չորեակ երիվարք գուպարայաղթք՝ կառօքն հանդերձ
Ընթացեալք 'ի մրցանակ, զի էր արշաւ զեռոտանւոյ.
Եւ զնոսին Աւգիաս՝ արանց արքայ՝ զրաւեաց անդէն,
Եւ զկառավարն արձակեաց տըրտմահաղորդ յոյժ ըղձիցն:
Ընդ այս բանից եւ գործոց ծանրացաւ սրտըն ծերունին՝
Ընտրեաց սա անթիւ բազում, ժողովըրդեանն ետ զայլըն 'ի բաշխ,
Զի մի ոք զըրկեալ՝ անմասն երթէ յարդար բաժնէն:
Զամենայն մեք զայս ըստ այս հարկանէաք, եւ ընդ ստանն
Ցաշտ աստէաք զեց, իսկ նոքին առ հասարակ յերիր աւուր
Միախուռն ամբոխ եկին ինքեանք եւ ձիք սալասմբակք
Գումարտ զընդզք, յորս երկու եւ Մոլիոնք կային վառեալք,
Հասակաւ մանկունք, եւ ոչ բուռն արութեան քաջահմտութք:
Է քաղաք մի Թրիոէս, բարձրագլխեակ բնակեալ բըլուր,
Հեռի յափն Ալփիոսի եւ յաւազուտըն Պիլեայ ծայրս:
Ըզսոսա պահ պաշարումն եդեալ քանդել նըկըրտէին:
Այլ յորժամ անցին ընդ դաշտն ողջոյն, եհաս մեզ Աթենաս
Ընթացեալ յՈւղիմպեայ պատգամաբեր ըզգիշերաւ,
Զէն առնուլ, եւ ոչ յանկամս ինչ 'ի Պիլոս խռովեաց ըզխուժանն,
Այլ յորդորս յոյժ 'ի կռուի. սակայն ինձ ոչ տայր Թոյլ Նելէւս
Զինուորել 'ի զէն 'ի զարդ, եւ զերիվարսն յինէն Թաքոյց,
Չըկարծեալ Թէ ինձ հըմուտ լինիմ 'ի գործ պատերազմի:
Սակայն եւ այնպէս շըքեղ 'ի հեծելոյս էի վաշտում,
Թէպէտ հետի, զի Աթենաս զիս այսպէս ած 'ի դուպար:
Գետ մի անուն Մինիէյոս է ծովակից մօտ յԱրենէ,
Ուր զայգի առեալ մնացաք աստուածային Առաւօտուն
Հեծելազօրս Պիլեան, բայց գայր յորդէր հետեաց ամբոխ:
Անդուստ միահամուռ զըրահաւորեալ 'ի զէն առ 'ի զարդ՝
Հասաք ըզմիջաւուրբ 'ի սուրբ հոսանս Ալփիոսի:
Հըզօրին Արամազդայ զոհս անդանօր հանեալ պայծառս,
Զըւարակ մի Ալփեայ եւ զըւարակ Պոսիդոնի,
Իսկ ծաւլին Աթենասայ երինջ ընտիր 'ի պատանէ,
Ճաշկերոյթ առա՛նք բանակն ողջոյն առաք ըստ գունդ եւ գունդ,
Եւ 'ի քուն իւրաքանչիւր մըտաք իւրովըն կազմածով
Ըզգետոյն յորձանօքն. իսկ մեծամեծինքն Եպիացիք
Պատեալ կային զըստանիւն 'ի կործանել ըղձիւ վառեալք.
Այլ նոցա յառաջադոյն եկն էր եկաց Արեայ գործ մեծ:
Զի արեգակն իբրեւ եր յերկնս երկիր լուսաճաճանչ,
Բախեցաք ճակատ՝ ուխտիւք առ Արամազդ եւ Աթենաս:
Իսկ յորժամ Պիլիացւոց եւ Եպիանց եղեն խառնուրդք,
Ես նախ անդ այր ըսպանի, զսալասմբակ ձիսն աւարեալ,

ԶՄոշինոս զօր մարտիկ՝ զփեսայացեալն Եւգինոսայ ,
Զի ունէր զդուստրըն նորին զԱգամեդէ խարտեաշագեղ ,
Որ զերգս այնչափ գիտէր , որչափ երկիր մանուածոյ մեծ ։
Արդ ընդ սա զդիմագրաւն 'ի պղընձեղէն հարի նա տէգ .
Տապալեցաւ 'ի փոշւոյն , 'ի կառս անդր իւր տատանեցեալ իմ՝
Անցի կայի 'նդ նահատակսն . իսկ մեծանձինքն Եղինացիք
Փախեան այլ ոք այլուր՝ երկեւ անկեալ զայլըն սուսեն ,
Զհեծելոցն առաջահայեաց՝ զառաջինեալն 'ի կռիւ մարտի ։
Համայն իմ խոյացեալ , Թուխ փոթորկի համդռումնատիպ ,
Կալայ զայգըս յետուն , եւ առք կրկին ընդմէն մեռոլ
Խածին զհողն ատամամբ՝ պատառեալ անկեալ խմով անզգաստ ։
Եւ զԱկտորեանսըն զերկոսին իմ ասպատակեալ էր զՄոլիոնս ,
Եթէ չէր հայրն ընդնոսա՝ Երկրասասանն ամենիշխան՝
Ի խաղմէն ապրեցուցեալ 'ի Թըլխայորդ պատեալ 'ի մէգ ։
Յաղթութիւն մեծ պարգեւաց Գելխացւոց անդ Արամազդ ,
Քանզի ցայն հալածէաք ընդ դաշտավայրն արձականիստ
Կոտորեալ ընդոսքն եւ զչըքնաղ զէնս հարեալ առար ,
Մինչեւ եդաք ձիակոխ զԲուպրասիոն ցորենաւէտ
Եւ ընդվէմն Ոլենեան եւ զկոչեցեալն Ալիսեան բլուր ,
Ուստի անդրէն Աթենաս ըզժողովուրդն 'ի բաց դարձոյց ։
Անդ վերջին սպանեալ թողի այր , եւ անդէն յետս աքայեանք
Ի Բուպրասեայ 'ի Պիլոս մըղեալ ըզձիսն երագաթակէ՝
Ի դիս շընորհ ունէին Արամազդայ , Նեստորի յարս ։
Այսպիսի էի մինչդեռ երբեմն ուրեմն ընդ արս էի ։
Իսկ Աքիլլէւս միայնակ վայելեսցէ յիւր զօրութիւն .
Սորըլջասցի յոյժ անտագան , կարծեմ , մինչ զօրըս կորիցէ ։
Ո՛վ սիրուն , աւաղէն Մենետիոս պատուիրեաց քեզ
Յորում աւուր 'ի Փթիայ յղեաց ըզքեզ առ Ագամեմնոն .
Եւ մեք անդ էաք 'ի ներքս , ես եւ դիւցազնըն Ոդիսեւս ,
Յապարանսն անդ լըւաք զամենայն զինչ եւ այր պատուէր ։
Եւ 'ի յարկսըն Պեղէւսի վայելչաշինսն հասեալ կայաք ,
Ի լինել զօրաժողով յԱքայիա պարարատօս ։
Յայնժամ անդ 'ի ներքս 'ի տան զՄենետիոս գըտաք դիւցազն
Եւ զքեզ , եւ մերձ զԱքիլլէւս . իսկ Պեղէւս ծերըն ձիավարժ
Զյուր ազդերս այրէր զեզին շանթախաղացն Արամազդայ
Յանդաստակ վայրապատութիւն , զոսկի բաժակն 'ի ձեռս առեալ՝
Գինի սեաւ 'ի խարանեալ զոհից վերայ հեղոյր նուէր ։
Դուք ընդ այն արջառոյն պատրաստէիք , իսկ մեք կայաք
Ի դուռն , բայց Աքիլլէւս յապուշ հարեալ զիմեաց առ մեզ ,
Եւ առեալ ըզձեռանէ՝ տարաւ 'ի ներքս եւ բազմեցոյց ,
Եւ մատոյց հիւրոյթս առատ , որպէս օրէն իսկ է հիւրոց ։
Եւ ապա յետ յագելոյ 'ի կերակրոյն եւ յըմպելեաց ,

Արարի սեղանն եւ խօսեցայ՝ ըղձէր ընդ մեզ գալ հրաւիրելով·
Դուք կարի կըրկամթէիք, շատ խրատ ետուն նոցա պատուէր:
Աքիլլեայ իւրում որդւոյն զայս պատուիրեաց ծերըն Պելեւս·
Քաջ լինել հանապազ եւ անց եւ զանց առնել զայլովք:
Եւ քեզ զայս ետ պատուիրան Մենետիոս Ակտորեան ծեր·
Բամ որդեակ իմ, 'ի զարմէ յոյժ վեհագոյն է Աքիլլեւս,
Այլ դու ես երիցագոյն, թէեւ ուժով գեր նա 'ի վերոյ,
Բայց խորհուրդ իմաստութեան տուր նըմա քաջ եւ խրատեսջիր,
Եւ հրաման տուր նըմա, եւ անսասցէ նա 'ի բարին:
Պատուիրեաց զայս ալեւորն, այլ մոռացար· սակայն եւ այժմ
Ասասջիր զայս ցԱքիլլեւս որք մարթիկ, լուիցէ թերեւս·
Ո՛ գիտէ, աստուածովքն յորդորեսցէ զսիրտ նորա քո խրատ·
Զի բարի եւ պատուական է յորդորումն ընկերակցի:
Իսկ թէ զգոյշ 'ի հրամայից ինչ լինիցի միտօք իւրով,
Կամ թէ նմա յԱրամազդայ պատմեաց ինչ մայրըն մեծարոյ,
Զքեզ յղեսցէ փարթամ, եկեսցէ զհետ եւ ամբոխ Միրմիդոնաց·
Զի նըշոյլ իմն լուսոյ դանայեցւոց լինիս թերեւս·
Եւ զզէնսն տացէ քեզ զգենուլ 'ի պատերազմի վառել նոքօք,
Զի զքեզ նըմա նմանեցուցեալ կարծեն թերեւս 'ի կըռուոյն
Տրովացիքն, եւ արիական աքայեցւոցն մանկերամ
Տառապեալքն ողջ առցեն· եւ սակաւիկ մ' 'ի մարտս է շունչ:
Եւ անաշխատաբար զհարուս ըղձաստանակեալ որեարն 'ի խաղմ
Ցասման անդրր վանեսջիք 'ի խորանացս եւ 'ի նաւաց:
Զայս ասաց եւ թընդեցուցյ ըղձերս նորա 'ի լանջըս իւր,
Եւ գընաց առ նաւաքն առ Աքիլլեան Էակիդես:
Իսկ յորժամ ընթացեալ 'ի գիւղայինսն Ոդիսեայ նաւս
Եկն եհաս Պատրոկլոս, ուր էր ատեանն եւ հրապարակ,
Ուր նոցա եւ ըղբագինսն կառուցեալ էր զաստուածոց,
Անդ գիւցազնըն նըմա Եւրիպիլոս Եւեմոնեան
Ընդ առաջ եղ վիրաւոր՝ նետիւ խոցեալ յազդեր իւրում,
Կաղացեալ 'ի մարտէն, եւ ընդ գըլուխ իւր եւ ընդ ուսս
Հոսէր քիրտըն վտակելով, եւ 'ի դըժնեկ վիրէ անտի
Խախոջէր արիւնըն թուխ, բայց էին միտք իւր առ նըմա:
Զոր տեսեալ Մենետեան քաջի որդւոյն՝ ողորմեցաւ,
Եւ առ նա յոգւոց եղեալ բարբառեցաւ երագախօս·
Ա՛յ հէքերդ, դանայեանց առաջնորդապետք եւ իշխանաւորք,
Ա՛յսպէս ուրեմն 'ի հեռոյ երկրէ կայր ձեզ հեռի ու՛ր սիրելեաց
Տալ երագ շանց 'ի Տրոյա զըռակխաւակ ճարպ ձեր 'ի յագուրդ·
Այլ ծն ինկ ասա ինձ զայս, դիւցազնաձեւդ Եւրիպիլէ քաջ,
Իցէ կալցին զահեղըն Հեկտոր զդէմ աքայեցիք,
Թէ՞ նոքա նըվաւ 'ի մօտոյ սատակեսցին վանդեալ 'ի տեգ:
Վիրաւորն Եւրիպիլոս պատասխանի ետ եւ ասէ·

Աքայեանց ոչ եւս օգնեն լեալ դիւցազնըդ Պատրոկլոս,
Այլ 'ի նաւսն ապաստան անկանիցին 'ի թոյրաթուխս :
Զի որ գամ մի քաջքն էին յառաջնագոյն՝ առ հասարակ
Անկեալ դընին նետահարք 'ի ճակատամարտութեան եւ տիգախոցք
Ի ձեռաց տրովադացւոցն, որոց երթայ յորդէ կորովն :
Սակայն դու կեցո զնա՝ ապրեալ 'ի նաւսն իմ սեւաթոյր,
Հան 'ի բաց յաղդերէս ըզնետն եւ զթուխ լուա զարիւնն
Եղէ ջերմով 'ի նմանէ, եւ օծ անոք բժշկականօք
Աղեկսրօք՝ զոր եւ ասեն քեզ յԱքիլլէ անտի ուսեալ,
Զոր ուսոյցն Քիրոն՝ Ցուշկապարկացն արդարաձոխ :
Զի բժիշկք մեր Պոդալիր եւ Մաքաւոն արուեստագէտք,
Ըզմա՝ 'ի խորանին իւրում կարծեմ խոց վիրաւոր,
Գոլխոցքն եւ նա իսկ կնքքն բժշկի քաջի կարօտ .
Իսկ միւսն 'ի դաշտ տրովական գուպարի ընդդէմ բուռն Արէսի :
Մենեթեայ հզօր որդին պատասխանի տայր նըմա .
Զի՞նչ բաներս լիցին, դիւցազն Եւրիպիլոս, զի՞ գործիցեմք .
Աս Աքիլլեւս գնա ընթանամ՝ պատգամ առ նա դարձուցանել
Զոր պատուէր եա Գերենեան Նեստոր՝ պահապանն աքայեցւոց .
Այլ ոչ եւ այսպէս ըզքեզ 'ի վիշտըս քո լքից անխոյթ :
Ասացեալ, եւ զիրկս արկեալ տարաւ 'ի վրան զհովիւն ազանց .
Զոր տեսեալ պաշտօնէքն՝ արջառենիս արկանեաց ակուամբ :
Անդ ըզնա զառացուցեալ՝ եւ 'ի զըստէն կտրեալ սուսերըն
Ըզսուր նետըն զանձ, եւ 'ի նմանէ զարիւնըն սեաւ
Լըւաց 'ի ջուր բարեխառն, եւ զդառն արմատըն զախտաքայժ
Շըփեալ ընդ ափ ած ըզնովիմք, որ զամենայն ըզցաւսն եհան .
Ցամաքեաց վիրաքերանն եւ դադարեալ եկաց արիւնն :

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Տրովադացիք խրատու Պուղիդամանայ լքեալ զկառս իւրեանց, անցանեն հետի ընդ փոսս պատնիշին Յունաց. եւ թէպէտ զարհուրեալք յերկնահրաշ նշանէ, սակայն յարձակեալ կռուին ընդ պարիսպն. փլուզանէ Սարպեդոն զմի 'ի մահարձանացն, Էաս եւ Տեւկրոս զդէմ ունին նորա։ Հեկտոր ահագին իմն վիմաւ խորտակեալ զդուրսն՝ գրոհ տուեալ մտանէ 'ի ներքս խուռն ամբոխիւ իւրոց տրովադացւոց. փախչին Յոյնք 'ի նաւատորմն կայս խուճապաւ։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ԳԱՐՑԳԱՄԱՐՑՈՒԹԻՒՆ

Արդ մնայր 'ի խորանին՝ Մենետեան արի որդին
Դարման տարեալ բժշկէր ընկերահարն Եւրիպիլեա,
Իսկ արգեանք տրովադացիք ոգորէին միահամուռ։
Չէր ընդէմ ունելոց դանայեցւոց փոսն, եւ պարիսպ
Լայն անեալ 'ի վերայ՝ զոր կառուցին պատնէշ նաւացն,
Եւ զփոսն անդէն պարփէին, այլ ոչ տին զոհս հանէին պայծառս,
Զի զնաւս խելեանց զերապատուս եւ զբազմակայեան աւ. եւ ապաւէ
Ընդդիմեալ պահպանեսցէ. եւ յակամայ դիցն անմահից
Շինեցաւ, ուստի չեղեւ երկարեալ յաւիտեան։
Մինչեւ էր Հեկտոր 'ի կենդ եւ Աքիլլեւս սրտմտէր,
Եւ քաղաքն արքային Պրիամոս դոյր անկործան,
Ցայն եւ մեծին պատուար աքայեցւոց կայր 'ի կային։
Իսկ յորժամ արտաքսեցան մեռան զնոյին արի արեանն,
Եւ շատք էին յարգեացոց՝ որ զբաւական, որ կենդանի,
Եւ 'ի տասն ամին քաղաքն Պրիամու աւարառեցաւ,
Նաւամբաց արգեացիքն 'ի հայրեն երկրին սիրուն դարձան,
Պոսիդոն եւ Ապողոն յայնժամ աւէր խորհուրդ 'ի մէջ
Կործանել զայն պատնէշ, զգետիցն 'ի նա հրաւիրեալ ուժով՝
Որ միանգամ անդր 'ի ծովն իջանէին յԻդայ լերանց,
Հռեսոս եւ Հեպտապորոս եւ Կարեսոս եւ Հոդիոս,
Գրենիկոս եւ Էսեպոս եւ Սիմոէիսոս աստուածայնին,
Եւ Սիմոյիս, ուր խառն ասպարք աղխամանութեք՝ եւ սաղաւարտք
Անկան ի զգետնեալ, եւ ազգ արանցն կիսաստուածոց,
Ըմփանաւոր ջրոյ 'ի մի կոյս Ապողոն շրջեալ Պոսիդոնի՝



Digitized by Google

Ինն օր զուխան արկ 'ի պարիսպն՝ եւ Արամազդ անձրեւէր շաղք,
Անդէն վաղվաղակի գընել զպատուարըն ծովայոյզ:
Եւ նոյն ինքն Երկրասասան զերկբարձէնն 'ի ձեռս առեալ
Կայր 'ի գլուխ, եւ բովանդակ զհիմունսն ալեացըն տայր տանել,
Զհեծանաց եւ ըզվիմաց՝ զոր Ճըգնախոհնք արկին աքեանք,
Եւ կացոյց հարթայատակ առ յորձնեռանդն Հելլեսպոնտաւ,
Եւ անդրէն զահագինն աւազախիր ծածկեաց ծովեզր,
Ըզպատնէշըն տապալեալ, եւ դչեաս ընդ կրունկ դարձոյց 'ի գնացս
Ընդ յատակն ընդ որ յառաջ գեղածաւալ հոսէին ջուրս:
Զայս յապայս հանդերձեալ էր Պոսիդոն եւ Ապողոն
Ցարդիկս առնել, իսկ 'ի ժամուն՝ խօշխն եւ մարտ վառեցաւ շուրջ
Զկարծրակերտըն պատուարաւ. բըրգանցն 'ի Թում Թընդէին փայտք,
Եւ ամնջեալ արգիլեցեք 'ի մըտրակէն Արամազդայ՝
Զօլորեալ ամփոփեցան առ զոգաւոր նաւատորմիւն
Ահարեկք 'ի Հեկտորէ հնարագիտէն խուճապանաց.
Նա սակայն՝ որպէս կանխաւ ըն՝ փոթորկի հանգոյն գոռայր:
Եւ օրինակ իմն որպէս յասպականներ ու՛ 'ի պառաւկանս
Անկեալ նազի կինճ կամ առիւծ յանձնապաստան ուհաղնատես,
Եւ նոցա գունդագունդ կազմեալ զանձինս իւրեանց 'ի կուռ՝
Ելանեն կան առնյեան, եւ արձակեն Թանձրատարափ
Ըզարլաքան 'ի բազկացն, այլ ոչ նորա սիրտ քաջալանջ
Դողայ բնաւ կամ տագնապի, եւ մըղձկէ զանձն իւր արութիւն.
Եւ յածի յողայ առէտ՝ 'ի փորձ գիմեալ ընդ շարս արանց,
Եւ յոր կոյս խոյանայցէ՝ անդի անտի տան արանց շարք.
Այնպէս եւ Հեկտոր ընդ բազմամբոխն երթայր եւ գայր,
Խրախոյս հարեալ առ ընկերսն՝ ըստ փոսն յայնկոյս խաղալ գընալ:
Բայց չիշխէին ձիքն երագունք, այլ ըզշըրթամբ կացեալ ափին
Բառնային խոխող խըրխինջ, զի խրամբն ըզյն խրրտուցանէր՝
Որ առ վաղել չէր ինչ մօտ, եւ ոչ դիւրին առ անցանել:
Զի կային առ հասարակ աստի անտի վայրք քըրաւորք,
Եւ սրածայր ձողեօք վերուստ պատնիշափակ էր ամրացեալ,
Զոր որդիք Աքայեցւոց կանգնեցին խիտ եւ մեծամեծ՝
Ցերեսաց գիմամարտից արանց անուր տապաւէնի:
Ոչ միջամուխ լինէր հեշտիւ ձի զքաջանիւ ձգեալ ըզկառս,
Հետեւակք անդաձեցին՝ Թէ տանիցին արդեօք 'ի գլուխ:
Մատուցեալ յայնժամ առ քաջն Հեկտոր ասէ Պուլիդամաս.
Հեկտոր, եւ որ այլ պետք առաւագացելոց եւ սատարաց,
Ցախուռն ընդ փոսդ վարեմք ըզԹեԹեւոտն երիվարեանս.
Եւ նա յոյժ դըժուարագոյն առ անցանել, զի կան 'ի նմա
Ըերոք կանգնեալք սայրասուրք եւ Աքայեանց պատուար մերձ:
Ձիք երբեք անդր իջանել, ոչ մարտընչել հեծելախումբ,
Զի առ անձուկ նեղութեան՝ կարծեմ Թէ վէրս առնուցուն անդ:



Digitized by Google

Զի թէ ընաւ չարիս նիւթեալ ահեղամռունչն Արամազդայ
Ի կորուստ մատնիցէ եւ հաճեսցի օգնել տրովադեանցս,
Կամէի եւ ես ինքնին վաղվաղակի հետ զայդ լինել,
Անանուն աստ յԱրգոսէ հեռի ջնջուել աքայեցւոց.
Բայց այսրէն եթէ դարձցին եւ 'ի նաւաց հալածեսցեն,
Եւ 'ի փոսոյդ խորափոր անկանիցիմք մեք խառնիխուռն,
Ոչ կարծեմ այնուհետեւ եւ ոչ հրեշտակ զոք դուժարկու
Դարձ անդրէն յաստանն առնել՝ 'ի փախթորկելս յաքեանցն յայսկոյս:
Այլ եկայք, որպէս ինչ ես ասեմ՝ լուիցուք ամենեքեան:
Զերիվարսըս պաշտօնեայք աստ առ պարկէն կալցին փակս,
Իսկ մեր՝ հետեւակեալ 'ի զէն 'ի զրահս ամրապատեալք՝
Համագունդ ըզՀեկտորի փողեսցուք հետ, եւ ոչ կայցեն
Աւաղի մեր աքայեանք, թէ կորըստեանն է հասեալ կէտ:
Զայս ասեալ Պուլիդամայ, Հեկտոր ընդ ողջ բանին հաճեցաւ,
Եւ անդէն 'ի կառացն ոստեաւ յերկիր զինուքն համակերձ.
Եւ ոչ այլ տրովադացիք հեծելազունդ գումարեցան,
Այլ իջին ամենեքին՝ զաստուածային Հեկտոր տեսեալ:
Եւ ես այր իւրաքանչիւր կառավարին իւրում պատուէր,
Զերիվարսն ըստ օրինի անդ առ փոսոյն ունել կարգաւ.
Եւ ինքեանք զատակարգեալք, յանձինս իւրեանց կազմ եւ պատրաստք,
Հինգերեակ կազմեալ ջոկք՝ զօրավարացն երթային զհետ:
Կէսք չոգան ընդ Հեկտորի եւ ազնուելոյն Պուլիդամայ,
Որ բազումք եւ լաւքն էին եւ առաւել յօժարագոյնք՝
Խորտակել ըզպատնէշն առ խոր նաւուքն 'ի կախ մարտչել.
Գայր երրորդ ընդ նոսին Կեբրիոնէս, իսկ Հեկտորի
Զայլ ոք առ կառս իւր թողեալ խոնարհագոյն քան զԿեբրիոն:
Իսկ միւսոյ Պարիս էր գլուխ, Ալկաթոոս եւ Ագենոր.
Երրորդացն՝ Հելենոս եւ Դեիփոբ աստուածանմանն՝
Պրիամու ծնունք երկոքին. եւ Ասիոս քաջն էր երրորդ,
Ասիոսն Հիրտակեան՝ զոր յԱրիսբեայ շէկ երիվարք
Բերէին յաղթամարմինք 'ի վտակաց Սելլէեսի:
Իսկ չորրորդացն առաջնորդ այր որդին էր Անքիսեայ
Էնէաս, եւ երկոքին Անտենորեան մանկունքն ընդ իւր
Արքելոքոս եւ Ակամաս՝ բոլոր մարտից քաջահմտունք:
Եւ Սարպեդոն զօրագլուխ էր հռչակաւոր նիզակակցացն,
ԸզԳլաւկոս առեալ ընդ իւր եւ զարիական Աստերոպէոս.
Զի ազգին թուեցան նմա քաջք 'ի քաջաց հզօրագոյնք
Առաւել քան զայլս յետ իւր, ամենեցունց ինք վեհագոյն:
Արդ սոքա, հասս ասպարօք մած առ միմեանս կարծրակուռք,
Խիզախեալ գնացին ուղիղ առ դանայեանս եւ չհամարեալ
Թէ կայցէ ոք առաջի, այլ 'ի թուխ նաւսն անկանիցին:
Անդանօր այլ տրովադացիքն եւ օգնականք հեռահռչակք

Ունկընդիր եղեն խրատու հըռչակելոյն Պուլիդամայ.
Իսկ Ասիոս Հիրտակեան՝ իշխանն արանց՝ ոչ կամեցաւ
Թողուլ անդ զերիվարսն եւ զկառավարն իւր արբանեակ,
Այլ նոքօք հանդերձ խաղաց 'ի նաւատորմն երագաթեւ:
Խօթամիտ. զի չէր ընդ կրունկ, ապրեալ 'ի չար օրահասէն,
Երիվարօքն եւ կառօքն խայտալով դարձ առնելոյ
Ի նաւաց անտի անդրէն յԻլիոս կոյս 'ի հողմաշունչ.
Զի կանխեալ ճակատագիր վատախտարակ զնա պաշարեաց
Նիզակաւն Իդոմենեայ պերճապայծառ Դեւկալեանին:
Զի դիմեաց ընդ ձախակողմն նաւներոյն՝ 'ուր աքայեանք
Դառնթեալ ընդ դաշտըն դային երիվարօք կառօքն հանդերձ.
Ընդ այն ըզկառսըն վարեաց եւ ըզձիանն, եւ ոչ եգիտ
Ըզդրանդեան եդեալ դըրանցըն տախտակաց եւ զնիգն երկայն.
Այլ ունէին արք թերաբաց, յանկարծ թէ զոք յընկերակցացն
Ի խաղմէն փախուցեալ 'ի նաւակայսն ապրեցուսցեն:
Փըքացեալ վարէր ըզձիան ուղղորդ ընդ այն, եւ իւրքն ըզկնի
Սաստկաձայն աղաղակաւ, զի կարծէին զաքայեցիսն
Ոչ եւս այլ ունել ըզդէմ, այլ 'ի սեաւ նաւսն ապաստանել:
Խօթամիտք, եւ անդ առ դուրսն յարի արանց գըտին երկուս,
Ըզմանկունսըն մեծազօրս Լաբիթեայց քաջամարտից.
Մին որդի Պերիթոյայ՝ Պոլիպիտէսըն կորովի,
Եւ միւսըն Լէոնդէս՝ մարդախոշոշն Արեայ հանգոյն:
Երկոքեան սոքա կային անդ առաջի դրանցըն բարձանց,
Որպէս ուրեմըն կաղնիք 'ի սար լերանց բարձրագլխակք՝
Ժուժկալեալք ըմդդէմ հողմոց եւ անձրեւաց աւուրց յաւուրս
Զմեծամեծ զերկայնաձիգ խոր արմատոյն եդեալ վակժոյժ.
Նոյն սոքա 'ի բազուկս եւ 'ի կորովըն խիզախեալք՝
Անսասան մնային արշաւելումն Ասեայ մեծի:
Իսկ նոքա դիպուղիղ 'ի պատնէշ անդր հաստակառոյց
Ամբարձեալ զերիթացեալ քեռուխս՝ ուժգին ձայնին գոչմամբ,
Որ զարքային էին զԱսեաւ եւ զՈրեստեաւ եւ զՅամենիւ,
ԶԱսեանն Ադամասաւ, ըզԹոոնիւ, զՕնոմայով:
Սոքա դեռ եւս անդ 'ի ներքըս մինչ կային՝ տային խրախոյս
Բարձաղէն աքայեցւոց պատերազմել ըզնաւներոյն:
Այլ յորժամ զարշաւելոյն 'ի պարիսպ անդր ըզդասս եղեն
Ըզտրովեանց, եւ դանայեանց դուժեաց խօշեանն՝ ահ եւ խուճապ,
Երկոցուն ընդոստուցեալ առաջի դրանցն ոտրէին
Վարազուցըն վայրենեաց համանմանք՝ որք 'ի լերինս
Դիմադրաւ լինին արանց եւ բարակաց հրասող դաւթից,
Եւ խոտորնակս յարձակեալ՝ բեկանեն զեւրեամբք ըզմայրիս շուրջ
Կոտորեալս ընջամքն, եւ ելանէ ժանեաց ճայթիւն,
Մինչեւ ուրուք աշտէիւ հարեալ զոգիսըն կորզեսցէ.

Սոյնպէս 'ի լանջըս սոցուն պղնձի հնչէր փայլակնացայտ
Կոծելոյն 'ի հանդիպոյ, զի սաստկապէս մաքառէին՝
Ի վէրենն անդր ամբոխ եւ յուժգնութիւն քաջալերեալք,
Զի եւ նոքա յամրակուռ աշտարակաց անտի զլաձիգք
Վերամարտիկ լինէին անձանց իւրեանց եւ խորանաց
Եւ սրաթեւ նաւատորմին: Եւ որպէս բուք տեղայ յերկնէ,
Զոր մրրիկ սաստկաշունչ, զստուերամած փոթորկեալ ամպս,
Հոսէ թանձրախիտ 'ի դաշտավայր արգասաւոր,
Սոցունց այսպէս 'ի ձեռաց՝ աքայեցւոյն եւ տրովադեանց՝
Տեղային նետք, գըլխանոցք թընդէին շուրջ կերկերագոչ
Եւ վահանք կոմբաւորք յերկանաքար վիմաց կոփիւն:
Յայնժամ անդ յոգւոց ելեալ՝ ծեծեաց զազդերս իւր զերկոսին
Հիրտակեանն Ասիոս, եւ սրտմտեալ բարբառեցաւ.
Արամազդ հայր, արդ ուրեմն եղեր եւ դու խարդաւանակ,
Կարի յոյժ. զի չկարծէի թէ դիւցազունքն աքայեցիք
Ուժոյ մերում եւ բազկաց անպարտելեաց կալցին ընդդէմ:
Իսկ սոքա՝ նրբամէջ բրխոսց հանգոյն եւ կամ մեղուաց,
Որ չինեալ իւրեանց դադարս ըստ քարաժեռ ճանապարհին
Ոչ բռնաւ լքանեն ըզխորափոր տունն, այլ պինդ կան
Որսողաց արանց ընդդէմ՝ մարտ 'ի վերայ դընել որդւոց,
Նոյն սոքա, թէպէտ երկուք, ոչ կամին տալ 'ի դրանց տեղի,
Մինչեւ կամ սատակեսցին եւ կամ անկցին 'ի ձեռըս մեր:
Զայս ասաց, այլ ոչ դըրդեաց բանիւքն ըզմիտս Արամազդայ,
Զի նորա սիրտն Հեկտորի կամէր նոթճել փառս եւ պատիւ:
Իսկ այլք առ այլովք դըրամբք ըզմարտըն մղէին,
Եւ ինձ տաղնապ է ճառել աստուածօրէն զայն ամենայն:
Զի զպատնիշաւն ողջոյն՝ վիմաց հուր երկնահոս բորբոքեցաւ.
Արգոսեան թէպէտ եւ զունդըն թաղծալից, բայց կըռուէին
Առ հարկին ձեռ ըղնաւացն. համօրէն դիք կային տըխրեալ,
Որ միանգամ զօրավիգն էին մարտին դանայեցւոց:
Խառնեցին անդ Լապիթեայք ձեռն 'ի կռիւ եւ 'ի գուպար.
Եւ որդին Պիրիթոյի Պոլիպետէս հաստաբազուկ
ԶԴամասոս եհար տիգաւ 'ի պղնձածնոտ սաղաւարտին.
Ոչ ժուժեաց պղնձակուռըն գըլխանոց, այլ պատառեաց
Զոսկըրն սըլաքըն պղնձի, եւ բովանդակ ուղեղ գըլխոյն
Ի ներքս անդ խարխարեցաւ, եւ զբոցաշունչն անդէն ընջեց.
Եւ ընկէց նորա զՊիլօն վախճանեցոյց եւ զՕրմենոս:
Իսկ Լէոնդեւս շառաւիղն արեւեան զձեռն Անտիմաքեայ
Զհիպպոմաքոս եհար տիգաւ'նդ գօտւոյն կամար դիպեցուցեալ:
Եւ անդէն զվաղակաւորն 'ի պատենից մերկացեալ սուր,
Խոյացեալ ընդ բազմակոյտն եւ մօտ հասեալ հար տապալեաց
Առաջին զԱնտիփատէս՝ որ պարտ 'ի վեր անկաւ տապաստ,

Եւ ըզձնի ապա զՄենոնն , ըզՅամենոս եւ զՈրեստես
Ըզմիմեամբք առ հասարակ յերկիրն ընկէց բազմաբեղուն ։
Մինչ նոքա զզրապանելոց կողոպտէին պաղպաջուն զէնս ,
Պուղիդամայ եւ Հեկտորի զհետ խաղային երիտասարդք
Յոգնաթիւք եւ քաջագոյնք եւ խիզախեալք յոխորտաբար
Հատանել ըզպատուարն եւ զնաւատորմն 'ի հուր դառնել ։
Այլ սոքա դեռ խորհէին զպարկէն փոսին տրձանացեալք .
Զի սոցին յորդորելոցն յայնկոյս գնալ՝ հաւըն հըմայք ,
Արծուի մի բարձրաթռիչ յահեակ կուսէ կասեալ ըզզօրն ,
Ի մագիլսն օձ մի բարձեալ արիւնըռուշա եւ անարի ,
Կենդանի եւ կայտառ՝ ոչ մոռացեալ ըզպատերազմ ։
Զի եհար զպահպանակիչն ընդ լանջըս իւր մերձ առ ուլանն
Յետոյս կոյս գալարելով , եւ նա յանձնէն ընկէց յերկիր
Առ ցաւոցըն տանջանաց , եւ արկ 'ի մէջ գնդամարտակին ,
Եւ կանչիւն արարեալ թռաւ սլացաւ 'ի շաւնչ հողմոյն ։
Սոսկացան տրովադացիք զօձըն տեսեալ ըզգալարուն ,
Որ անկեալ կայր 'ի մէջ անդր , աստուածակըրին Դիայ նըշան ։
Մատուցեալ Պուղիդամաս յայնժամ առ խրոխտն ասէ Հեկտոր .
Միշտ գոգցես , Հեկտոր , յատեան հրապարակի կըշտամբես զիս ,
Թէպէտ ուղիղ խօսիցեմ . զի չէ 'ի դէպ իսկ , ոչ պատշաճ
Թիւրս ինչ ոչ 'ի ժողովս եւ ոչ 'ի մարտ պատերազմաց
Բարբառել քաղաքացւոյ եւ զիշխանութիւնդ աճել եւեթ .
Ասացից արդ միւսանգամ որպէս ինչ ինձ թըւի բարւոք ։
Մի 'վերայ նաւացն 'ի կռիւ ինչ երթիցուք ընդ դանայեանս ։
Զի այսպէս համարիմ ատնուլ վըճար , թէ հաւաստեաւ
Եկին հըմայքս առ տրովեանըս յորդորեալս յայնկոյս գնալ ,
Արծուիս այս բարձրաթիռ՝ որ զզօրն յահեակ կոյս կասեցոյց ,
Ի ճապուռսն օձ մի բարձեալ արիւներանգ եւ վիթխարի ,
Շընչակիր , եւ արկ անդէն մինչ չեւ հասեալ 'ի քաղցըր ստեանն ,
Եւ ոչ կարաց կատարել՝ տանել իւրում մանկանցն տալ ջամբ ։
Նոյն եւ մեք , թէպէտ եւ զդրունս եւ ըզպարիսպն աքայեցւոց
Խորտակեսցուք մեծաւ ուժով եւ վանեսցեն աքայեցիք ,
Կորանօք մեզ 'ի նաւաց լինիցի դարձ ընդ նոյն շաւիղս .
Զի զբազումս 'ի տրովացւոցըս վանեսցուք զոր կորուսցեն
Աքայեանք 'ի սայր սըրընձի՝ պատերազմեալք ըզմակուկացն ։
Այդպէս զայդ հանիցէ կիւսահըմայ քաջահըմուտ՝
Հրաշապէտ մըտօք իւրովք , եւ ժողովուրդք նըմա լուիցեն ։
Հայեցեալ տխրօք աչաց սաղաւարտածածն ասէ Հեկտոր .
Ոչ գու ինձ , Պուղիդամաս , հաճոյական զայդ բարբառիս .
Գոյր եւ այլ ինչ քեզ քան զայդ ածել զմըտաւ բան շահաւէտ ։
Իսկ սըրտի մըտօք սերտիւ եթէ յառաջ բերես գու զայդ ,
Ապա դիք ինքնին 'ի քէն առեալ բարձին ըզխելըս քո՝

Որ հրամանաւ առա մատանալ զանհեղեղաղին Արամազդայ
Ընկերհաւրդս որ լինն ՚նա ննջըն խոստացաւ եւ ակնարկեաց ։
Իսկ դու լինն հոլանաւորեան հաւուց պատուէր առս հնազանդել,
Ցորոց չամեմ ինչ ես ակն, եւ ոչ համբուն փոյթ ինչ առնեմ,
Եթէ ՚նդ աջ շողայցեն՝ ընդ Արեւուտն եւ յԱրեւ կոյս,
Եւ թէ ՚նդ ձախ ահեկի՝ յաղջամղջին կողմ ՚ի խաւարինն ։
Այլ մեծին Արամազդայ հպատակեսցուք մեք խորհրդոց,
Որ տէրն է համօրէն մահկանացուաց եւ անմահից ։
Մի եւեթ հրաշք են քաջ, մարտիլ պաշտպան կալ հայրենեաց ։
Եւ զի՞ է քեզ զանգիտել ՚ի ճակատէ պատերազմի .
Զի թէ մեք բոլորեքեան առ նաւս աքեանց կոտորիցիմք,
Քեզ չէր ինչ ուսանք ամենեւին երկիւղ մահու,
Զի սիրտ ոչ գոյ ՚ի քեզ պատերազմօղ եւ դիմակալ ։
Իսկ թէ դու ՚ի գուպարէս ելցես ՚ի բաց, կամ զմի ոք այլ
Դարձուցես ՚ի կռուոյս՝ հրապուրանօք արկեալ ՚ի բանս,
Անդէն ՚ի խոյ նիզակաւս հարեալ զոգիդ կորուսցես ։
Զայս խօսեալ՝ խաղայր յառաջ, զհետ գնդէին նոքա համաւ
Ահագին ձայնից գոչմամբ, եւ Արամազդ փայլակնաձգուարձ
Յիդական յարոյց լերանց ըզփոթորիկ սաստիկ հողմոյ՝
Որ ՚ի նաւսըն դէպուղիղ վարէր զփոշին, եւ ափշեցոյց
Զաքայեանց խելս, եւ տրոյեանց եւ Հեկտորի փառս ընձեռեաց ։
Ի նորա հրաշանշանսըն խրախուսեալ եւ յարութիւն,
Պատառել կըրթէին զաքայեցւոցն ըզմեծ պատնէշ .
Զմահարձանս ամբարտակաց խըլեալ, զմարտկոցըն քանդէին,
Առնէին նըզախարխար զհարկաւորյա ձիոց հաստոյս՝
Զոր հիմն յերկիր աքայեանք արկին բըրգանցըն հաստատուն ։
Բուռն հարեալ սոցա ձգէին՝ յուսով զաքեանց քակել պատուար .
Ոչ սակայն աքայեցիք վերջանէին ՚ի տեղւոջէն,
Այլ արկեալ պատ մարտկոցացըն վահանօքն արջառենի
Զպարըսպապանպատ ՚ի նոցունց հարկանէին ըզթըշնամիս ։
Իսկ Այաքըն երկոքեան խրախոյս բարձեալ ընդ աշտարակս՝
Այր եւ անդր ընթանային վառել զոգիս աքայեցւոց,
Էր զոր բանիւք ողոքանօք, էր զոր խըստիւ կըշտամբելով,
Զոր ուրեք ոք թուլացեալ ՚ի գուպարէն տեսանէին .
Ո՜վ սիրելիք, որդեգոյնըդ փառաւորք եւ չափաւորք,
Եւ որ այլ նըւաստագոյնք, քանզի եւ ոչ ամենեքեան
Հաւասարք են արք ՚ի մարտ, ամենեցուն արդ գործ եհաս,
Դուք ձեզէն իսկ տեսանէք . մի՛ ոք ՚ի ձէնջ յետս ընդ կըրունկ
Դէմ ՚ի նաւս եդեալ դարձցի՝ ձայնիցն ՚ի լուր ըսպառնալեաց .
Այլ յառաջ մատիք յառաջ, եւ կարդացէք միմեանց խրախոյս .
Զի շանթաձիգն Արամազդ Ոլիմպական տացէ թերեւս
Զայս վանեալ մեր ըզկըռիւ՝ զատախս յաստան անդր հալածել ։



Digitized by Google

Զայս հարեալ սոսա խրախոյս՝ բողոքեցին զաքայեանց մարտ։
Զոր օրինակ խուռնախիտ ձիւնաբերաց թօթափին բուքք,
Մինչ յաւուրքս ձմերայնի զգօնն Արամազդ տանու տեղալ՝
Ցայտ յանդիման 'ի մարդիկ ցուցեալ նշան ըղնետըս իւր.
Եւ 'ի քուն զհողմս արարեալ՝ հոսէ անդուլ մինչեւ ծածկել
Ըզլերանց բարձանց գլուխս եւ ըզբըլրոց սարաւանդակս,
Եւ ըզդաշտըս ծաղկաբերս եւ զմարդկան երկս արդասաւորս.
Եւ 'ի սալիսակ 'ի ծովուն սփռի յափունս եւ նաւակայս,
Բայց ալեացն 'ի նոսին թուեալ անկեալ՝ չքանայ թողլ կալ,
Այլն ամենայն պատի վերուստ յԱրամազդայ տեղատարափ.
Սոցին այսպէս յերկոցունց կողմանց քարինք թռչէին խիտ,
Որ հարուած 'ի տրովադեանս, որ 'ի տրովեանց յաքայեցիս.
Իսկ 'ի վերայ պատնիշին յարեաւ թնդիւն առ հասարակ։
Սակայն ոչ տրովացիք եւ ոչ Հեկտոր պքանչելաշուք
Ըզդուռըս պարըսպին խորտակէին եւ զնիգն երկայն,
Եթէ չէր Արամազդայ հանճարեղն զորդեալ զորդին
ԶՍարպեդոնն յարգիւացիս, զերդ կորիւն առ եզանց՝ առիւծ։
Նոյնժամայն զասպարն յառաջ կարկառելով զկլորակնակերպ,
Զգեղեցիկն, ըղպղընձին, ըզկռանակուռ թիթեղնապատ,
Զոր կոփեալ դարբին կարկաց ներքուստ բատուար արջառամորթս,
Ցանկերժիւք զաւազանօք ոսկեղինօք շուրջառոլոր։
Զայն կալեալ առաջի եւ ճօճելով կրկին նիզակս,
Դիմեաց գընալ իբրեւ առիւծ մի լեռնասուն եւ անսուաղ
Ընդ երկար 'ի շաղղոյ, եւ 'ի յանդուգն ոգւոյն վարեալ
Ի խաշին մատչել 'ի փորձ եւ յամրափակ երթալ փարախ.
Որ թէպէտ եւ առ նոքօք գըտանիցէ զտաւարածականս
Զի զհօտիւքն զամփոփօք եւ աշտէիւք ունիցին պահ,
Ոչ անգործ 'ի հանդիպէ յանձն 'ի գաւթէն տանու մերժել.
Այլ վազեալ յափըշտակեսցէ, եւ կամ էառ նա խոցըն վէրս
Ցառաջին նահատակաց 'ի ժիր ձեռաց մըկընդահար.
Այսպէս անդ ըզՍարպեդոն աստուածանման՝ մըղեաց ոգին
Ցարձակել 'ի պատնէշն եւ ըզմարտկոցսն փըլուզանել։
Եւ անդէն առ Գլաւկոս ասէ զորդին Հիպպողեքեայ.
Գլաւկէ, առ ինչ մեք քան ըզլինուս 'ի մեծարանս վայելեմք
Աթոռով 'ի Լիկիա, խորտկօք եւ լի նուագօք գինեաց,
Եւ 'ի մեզ իբրու յաստուածս ամենեքին արկանեն ակն.
Եւ առ Քսանթեայ զարաւափանքն բաժանիմք անդըս մեծամեծս
Արգաւանդս յայգեստան եւ յարտորեայ ցորենաբեր։
Արդ արժան է՚նդ զառաջապըսու լիկեացիսն անցանել կալ
Եւ ախոյեան 'ի հրաշաւանց պատերազմիս նահատակել,
Զի այսպէս ոք ասասցէ 'ի կուռ վահանաւոր լիկեացւոց.
Ոչ անշուք ինչ արքայքն անփառաւանակ մեր թագաւորքս

Ի Լիկիա արօտն եւ զխաշինքն ճոխակեն ընդարձակ
Եւ զընտիրս անուշ գինեաց, այլ է նոցուն ոյժ կորովի,
Զի՛նդ նահատակքս Լիկեանց պատերազմել կան աւանիկ:
Եթէ զամ մի պարտեալ, ով արքեդ, յայսմ մարտէ,
Գոյր մեզ բնաւ անծերական լինել եւ անմահ յաւէժարար,
Ոչ ես ինչ մրցէի նախամարտիկ ընդ ախոյեանս,
Ոչ եւ զքեզ 'ի պատերազմ յորդորէի փառամարտոյց:
Իսկ զարդիս, քանզի մահու սպառնան օրհասք բիւրք 'ի բիւրոց,
Յորոց ոչ է փախչել կամ ճողոպրել մահկանացուի,
Ո՛ն երթիցուք, կամ մեք ումեք լիցուք 'ի փառս, եւ կամ ոք մեզ:
Զայս ասաց, եւ ոչ Գլաւկոս ինչ խորշեցաւ կամ անսաստեաց.
Եւ զնոյին ուղին՝ վարել զԼիկիացւոցն ըզմեծ ամբոխ:
Զոր տեսեալ Մենեսթեւս՝ Պետէովսի որդին՝ պակեաւ,
Զի յիւր բուրգըն դիմէին ածել բերել չարեաց ոճիր:
Ա՛չս 'ի դունդ աքայեցւոց շուրջ արձակեաց՝ թէ տեսցէ զոք
Յիշխանացն որ զեղեռն 'ի զինակցացըն վանեսցէ:
Եւ ետես զերկոսին Այասս անյագս 'ի պատերազմ՝
Զի կային մերձ, եւ զՏեւկրոս 'ի խորանէն այն ինչ եկեալ:
Սակայն չէր ինչ մարթ լինել յաղաղակել իւր լսելի,
Ա՛յնքան իսկ էր խռովումն, եւ շփոթումն յերկինըս ժամանէր,
Ի կոփիւնըս վահանացն եւ ձիագէս սաղաւարտից
Եւ դրանդաց, զի պաշարեալ բոլորովքն էին, եւ առ նոքօք
Կացեալ տայսն՝ խորտակել եւ անցանել բռնան առնէին:
Եւ անդէն առ Այաս յղէ զքարոզ իւր զԹոովտէս.
Թոովտէս դիւցազն, երթ, ընթաց ձայնել առ իս զԱյաս,
Զերկոսին իսկ մանաւանդ, զի լաւագոյն այնպէս լիցի.
Գուցէ աստ 'ի տեղւոջս հասցէ կորուստ դաժանագոյն,
Քանզի այսըր ծանրացեալ Լիկեանցըն պետք՝ որ եւ նախուստ
Ուժգնագոյն հանդիպանան 'ի զօրաւոր պատերազմունս:
Իսկ թէ նոցին եւս անդէն վաստակ հասեալ կայ եւ գուպար,
Եկեսցէ գոնէ միայն Տելամոնեանն արին Այաս,
Եւ ընդ իւր գայցէ Տեւկրոս աղեղնաւոր քաջահռչակ:
Զայս ասաց, եւ 'ի լուր բանին նուիրակն ոչ անսաստեաց,
Ընթացեալ առ պատնիշաւ պատենազէն աքայեցւոց՝
Անց եկաց առ Այասիւքն եւ ձայն եբարձ անդէն եւ ասէ.
Այասեանք, պղնձազգեստ արգիւացւոց ընդպատուարք,
Դիւցազնածնունդ Պետէովսի սիրուն որդին տայ ձեզ հրաման՝
Անդր երթալ, գէթ սակաւիկ մի մըրցանացն հաղորդ լինել,
Երկոցունցըդ մանաւանդ, որ լաւագոյն իսկ այդ լիցի,
Գուցէ թէ անդանօր հասցէ եղեռն ինչ դըժընդակ:
Քանզի անդըր մըղեցան Լիկիացւոց պետք՝ որ եւ նախուստ
Սաստկագոյնս ամեհեն 'ի կարեւոր ճակատամարտս:

Իսկ թէ աստ եւս յարուցեալ կայ՝ տաժանանօք եւ գալարեալ,
Փարթար Տէլամոնեանն եւեթ Էաս գայցէ հուժկուն,
Ընդ նմին եկեսցէ Տեւկրոս ճարտարագէտն աղեղնաւոր։
Զայս ասաց, եւ մեծն Էաս Տէլամոնեան ոչ ինչ հեղգեալ
Իսկ եւ իսկ զերագաթռիչ խօսեցաւ բանս առ Ոյիլեանն.
Էաս, դուք աստանօր, դու եւ սրտեայն Լիկոմեդէս,
Դանայեանց կացեալ խրախոյս տուք մարտընչել ուժեղագոյն,
Իսկ իմ անդր ընթացեալ՝ պատահեցայց պատերազմին,
Եւ եկից այսրէն փութով, արիապէս օգնեալ նոցա։
Զայս խօսեալ եւ յարեաւ գնաց Էաս Տէլամոնեան.
Գնայր ընդ իւր Տեւկրոս եղբայր իւր հարազատ եւ համահայր,
Ընդ նոսին եւ Պանդիոնն բերէր Տեւկրի զաղեղն ըղկոր։
Իբրեւ չոգան յաշտարակն մեծանձին Մենեսթեւսի,
Ընդ պարսպէն յառաջ անցեալ՝ առ տագնապեալսն եկեալ հասին։
Իսկ արք զօրաւորք լիկիացւոց եւ առաջնորդք
Ի մարտկոցս ելանէին թուխ մրրկի հանգունատեսակք.
Բախեցան 'ի գուպար միմեանց ընդդէմ, գուժեցին գոռք։
Եւ նախ այր մի եհար ըսպան Էաս Տէլամոնեան,
Ըզմեծանձն Եպիկլէս, զընկերակից Սարպեդոնի,
Ապառաժ հարեալ վիմով որ կայր 'ի ներքս 'ի պարըսպին
Ահագին առ մարտկոցաւըն վերագոյն, զոր ոչ հեշտիւ
Երկոքումբք բարձցէ ձեռօք 'ի քաջառոյգ ոք պատանեաց,
Որպէս այժմուս են որեար. իսկ նիգն առեալ արկ 'ի վերուստ,
Եւ ջախջախեալ ըզգըլխանոցըն քառաստամ՝ զոսկերսն եբեկ
Համօրէն ըզկառափին, եւ նա զօրէն խորէջ լողորդ
Ի բարձանց աշտարակէն անկաւ, ելիք ոգին զոսկերս։
Իսկ Տեւկրոս ըզԳլաւկոս, զարի որդին Հիպողոքեայ,
Ի բարձրագէտ պատուարէն եհար նետիւ ըզյարձակեալն,
Ուր եսես մերկ ըզբազուկն, եւ լքանեցոյց 'ի գոռալոյն.
Որ յետկոյս 'ի պատնիշէն վաղեալ թաքեաւ, զի մի տեսցէ
Ցաքայեանց ոք զխոցըն խոց, եւ ոտընհար լիցի խրոխտով։
Վըշտացաւ Սարպեդոնն ընդ Գլաւկոսին մեկուսանալ՝
Նոյնհետայն լեալ իրազեկ, սակայն ըզկռիւն ոչ մոռանայր,
Այլ զԱլկմէոնն տեգահար վիրաւորեաց ըզԹեստորեանն,
Եւ 'ի բաց ձըգեալ զաշտէն՝ նա զհետ տեգին անկաւ 'ի պորտ,
Եւ զիւրեաւ շառաչեցին պղընձակերտ նըկարէն զէնք։
Սարպեդոնն բուռն ուժգնակի զմահարձանէն հարեալ քարշէր
Կորովի բազկօքն՝ եւ նա երթայր ըզհետ համանգամայն.
Մերկացեալ վերուստ պարիսպն՝ եզ անխափան բազմաց ուղի։
Բայց Էաս եւ Տեւկրոս 'ի միասին դիմեալք 'ի նա,
Սա փըքնաւ շուրջ ըզլանջօքն եհար ըզփոկին արծաթափայլ
Զասպարին պարածածկոյթ, այլ Արամազդ մերժեաց զօրհասն

Ցիւրմէ որդւոյն, զի նաւասըն մի առ խելս անկցի տապաստ։
Իսկ Էաս յարձակեալ կափեաց յասպարն, եւ ընթացաւ
Ել նիզակըն Թափանցանց, եւ ըզմոլեալն ընկըրկեցոյց։
Տեղի խուն մ՚ 'ի մարտկոցէն ետ՝ այլ 'ի տպաւ ոչ նահանջեալ,
Զի յուսայր սիրտըն Հեկտոր ժառանգել փառըս պարծանաց,
Եւ զաննայր կարգայր խրախոյս առ գնդացխապըն լիկեայիս.
Զի՞ այդպէս, ով Լիկեանք, 'ի քաջութենէ ուժոյ մեղկիք.
Ինձ Թէպէտ ուժգնաւորի եւս եղեալ է դըժուարին՝
Ըզպատուարըդ խորտակեալ առ լաստափայտըն հորդել ուղի.
Այլ առէք գնաց միահամուռ. զի զօրագոյն է բազմաց գործ։
Զայս ասաց. ակն 'ի սաստից պետականին ածեալ նոցա,
Ցոյնախուռն եռուռն գըգայթ ըզխոհական Թագաւորաւն։
Եւ անդուստ արգիւացիք ըզգումարտակըն պընդէին
Գորըսալին յետկուսէ, եւ ծանր եհաս նոցա վաստակ։
Զի ոչ քաջըն էին կարօղ Լիկիացիք ըզդանայեանց
Ըզպատուարըն խուել, եւ ճանապարհ առնել 'ի նաւսն,
Եւ ոչ զաւ դանայեցիք ըզԼիկիացիսըն մարթէին
Վըտարել 'ի պատնիշէն՝ յորմէ հետէ զամ մի մատեան։
Այլ զօրէն իմն արք երկու կագին զեւրեանցըն սահմանաց
Ի ձեռին կալեալ ըզչափոն 'ի խառնամասունս արտավարի,
Եւ 'ի սուղ ինչ անդ անդուոջ վէճ զիրաւանց եղեալ մըրցին,
Նոյն ըզատաս մահարձանըն արգելուին՝ յոր վերելեալք
Բուալէին ըզվահանան արջառենի զմիմեանց լանջօք
Զլայնածիր մեծապըլորս, եւ զվահանակըն փոքրոգիս։
Եւ բազումք անագորոյն պըղնձով միայնին խոցք 'ի մարմնի,
Ոյր ուրուք 'ի մարտկաց Թիկնադարձոյց մերկանայր ողն.
Եւ յոլովից ընդ ասպարն իսկ զըլխովին լեալ Թափանցանց։
Եւ մարտկոցք եւ աշտարակք ողողէին արեանց արեամբ
Համօրէն յերկուց կողմանց յաքայեցեաց եւ տրովացւոց։
Եւ սակայն ոչ զօրէին աքայեցւոց արկանել ահ,
Այլ կային, զերդ ձեռնարուեստ կին մի արդար՝ կըշիռըն 'ի ձեռս,
Որ ըզլուծն առեալ եւ զասր՝ աստի անտի ձըգէ 'ի մէջ,
Զի մանկանցըն ասըցէ զաղքատապանաց վարձուն արդար,
Այսպէս նոցա հաւասարակ անկանէր մարտ պատերազմին,
Մինչ չեւ փառըս գերապանծ էր պարգեւեալ Արամազդայ
Պրիամեանն Հեկտորի, որ նախ յաքեանց վաղեալ պարիսպ՝
Զայն երարձ մեծագոչ առ տրովացին աղաղակաւ.
Օ՛ն, ձիախրոխտ տրովադեանք, զօրգլխացուցդ հասայ զպատնէշ
Արգիւ փլուցէք, եւ հուր հարէք սաստկատոչոր զլաստափայտիցն։
Ասաց զայս խրախուսելի, եւ բոլորից լըսեալ ունկամբ՝
Խուռնընթաց 'ի պատուարն 'ի վեր հրասեալ ելանէին
Ի պարըսպին մահարձանս, 'ի ձեռս ունեանց առեալ սայրասուրք։

Հեկտորի յափըշտակեալ բերէր ըզվէմ մի որձաքար
Որ առաջի կայր դըրանցըն Թանձրատակ եւ ծայրասուր,
Զոր եւ ոչ արք երկու կորովագոյնք 'ի խուժանէն
Դիւրահեշտա ինչ 'ի գետնոյն շարժեալ 'ի սայլ ամբառնային
Ցորոց այժմըս են մարդիկ, իսկ նա միայն ճօճէր հեշտաւ.
Փոքրոգի եդ զայն նըմա կորովամիտ Զըրուանայն ճետ:
Որպէս հովիւ՝ դիւրատար բառնայ զասրու գառին գըղմաթ
Ի միում կալեալ ձեռին, եւ ըզնա գոյզն ինչ ճըզնէ բեռն,
Այսպէս Հեկտոր դէպուղիղ առեալ բերէր զվէմըդ 'ի տախտակս
Որ ըզդուրսն ամրապինդ պարըսպէին սառուարակարկառս,
Երկբացեկըս՝ բարձրաշէնս, եւ 'ի ներքուստ կըրկին սողնակք
Անցեալ զմիմեանց ըզնդէին, եւ պատշաճեալ կայր մի փական:
Մօտ երթեալ արձանացեալ, մըղեալ ուժգին՝ եհար ընդ մէջ,
Մեծաքայլ կանգնեալ՝ զի մի վիմեղէն ձիգն եղջ անզօր:
Զերկոսին ծըխնիսն եբեկ, վէմըն կըշռամբ անկաւ 'ի ներքս.
Մռընչեցին դըրունքըն սաստիկ, ոչ փակաղակք ժուժկալեցին,
Այլք այլուր ցընդեալ տախտակք յապառաժին բըռնութենէ:
Հրաշալին ոստեաւ Հեկտոր՝ սուր գիշերոյ նըմանատիպ,
Եւ պըղնձոփն որ ըստ մարմնոյն էր ըզգեցեալ ահեղակերպ՝
Փայլատակէր, եւ կըրկին 'ի ձեռսն առեալ ունէր նիզակ:
Չէր ումեք, քաւ յաստուածոց, կըրճնել ընդ մէջ զինքըն արգելուլ՝
Մինչ ընդ դուրսըն վաղեաց, եւ աչքն 'ի հուր բոցանային:
Եւ դարձեալ 'ի տրովացւոցն ամբոխակոյտ կարդայր խրախոյս՝
Անցանել ընդ պատնէշն. եւ ունկն եդեալ նոցա խրատուն՝
Էր որ անդէն վաղեցին ըզպատուարաւն, էր որ հեղան
Ընդ դրունսըն փետեկեալս, եւ դանայեանց առեալ փախուստ
Դէմ 'ի նաւսըն գոգաւորս՝ անհընարին եհաս խուճապ:

471

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոսիդոն գթացեալ 'ի Յոյնս եւ առեալ զդէմս Կալքասայ՝ երթայ խրախուսէ նախ զերկոսին Այասն, ապա եւ զայլ զօրավարսն: Քաջութիւնք Իդոմենեայ: Զախ թեւն արշաւեցող, թէպէտ եւ յԷնէայ եւ 'ի Դէիփոբեայ պաշտպանեալ, սակայն ընկրկի: Հեկտոր՝ որ յահեակողմ թեւոյն առաջեան կայր ընդդէմ Այասանց, նեղեալ տագնապեալ 'ի Լոկրացւոց աղեղնաւորաց, խմբէ զինուրսն եւ 'ի ձախ թեւն անցեալ՝ կազդուրէ զմարտն: Խառնուրդ ահագին յերկոցունց կողմանց:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ՄԱՐՏ ԱՌ ՆԱՒԹՍ

Իսկ մինչ զՀեկտոր եւ զտրովացիս 'ի նաւատորմն արկ Արամազդ,
Անդանօր զնոսին թողեալ յանդուլ վաստակ եւ 'ի տաժանս՝
Ինքն անդրէն 'ի բաց դարձոյց զլուսափայլ աչկունսն,
Նորոգ 'ի Թրակացւոց ձիաւորացն հայել երկիր,
Միսացւոց մերձամարտից, եւ ազերձակն ձիակթաց,
Կաթնակեր օրապարէն արդարադատս մարդկան զրոհի:
Եւ այլ ոչ եւս 'ի Տրոյա զաչսն շրջեաց փայլակնացայտս.
Զի չունէր ակն 'ի միտսն՝ թէ յանմահից եկեալ ումեք
Ի թիկունս հասանիցէ տրովադացւոց կամ դանայեանց:
Այլ ոչ դէտ ոք զաչացու կայր թագաւորին Երկրասասան՝
Որ 'ի գլխոյն սքանչացեալ նստէր մարտի պատերազմին
Ի բարձունս անդ ծայրից անտառախիտ սարոյն Սամոսյ
Թրակեցւոյ, ուր էր անդուստ ողջոյն Իդա երեւելի,
Երեւէր եւ Պրիամու քաղաքն եւ նաւք աքայեցւոց:
Անդ ելեալ 'ի ծովէն նստէր, գթայր յաքայեցիս՝
Տրովացւոց նկուն եղեալս, եւ յոյժ ցասնոյր Արամազդայ:
Էջ անդէն փութանակի յառապարէն անտի լեռնէ
Ճեմըզճեմ ձեպ ընդ ձեպ. սարսէին սարք բարձունք անտառք
Ընդ անմահ գարշապարօք ընթացելոյն Պոսիդոնի:
Երրակի քայլս պարզեալ՝ 'ի չորրորդումն եհաս 'ի կէան,
Ցէգաս՝ ուր իւր ապարանք յարկաց ծովուն հոյակապեալ
Ոսկեղէն՝ լուսակառկառ կայր կառուցեալ յաւէրժ անեղծ:
Անդր հասեալ՝ զպղնձասմբակ լծեաց 'ի զոյգսն զերիվարսն
Ըստրաթռիչ օդապարիկս՝ ոսկեգեսակ վարսագեղեալս.

Եւ նա ինքըն զերանօքն ոսկի զգեցեալ, ձեռն ըզմըտրակն
Ոսկեկազմ՝ գեղեցօրէն, եւ ամբարձաւ 'ի կառըս իւր:
Գընաց վարեալ ընդ ալիսն, եւ ընդ իւրեւ կայտառէին կէտք
Ցամենուստ 'ի Թաքըստիցն, եւ զարքայն ոչ զանխըլացան.
Հերձանէր ծով ցընծութեամբ, նոքա սրարշաւ սըլանային,
Եւ ոչ ինչ 'ի ներքուստ Թանայր առանցըն պղընձաձոյլ.
Ածէին զինքն երիվարքըն քաջավազք յաքայեանց նաւս:

Է քարայր մի լայնատարր յատըս ներքին խորոց ծովուն
Ի միջի անդ Տենեդեայ եւ Իմբրոսի առապարէն.
Անդ հանգոյց զերիվարսըն Պոսիդոն երկրադըղորդ
Ի կառաց լուծեալ՝ արկեալ նոցա 'ի կեր զանմահ ճարակ:
Եւ պընդեալ յոտըս նոցին 'ի ճախանոց սարիս ոսկի
Անլոյծս՝ անխըզելիս, զի անդ անշարժ ըսպասեսցեն
Դառնալոյ Թագաւորին, ինքն յաքայեանց չոգաւ բանակ:

Բայց տրովեանք միախուռն, իբրեւ ըղբոց կամ ըղմըրրիկ,
Պրիամեանն Հեկտորի յեռանդն անդուլ զնային ըղհետ
Մռընչելով եւ գոռալով, եւ զաքայեանց յուսային նաւս
Ըմբռնել, եւ սատակել զաքայեցիս ոգջոյն զամենեան:
Այլ սակայն Պոսիդոն աշխարհակալ երկրասասան
Ըստախաղէր զարգիացիսն, 'ի խոր ծովէն եկեալ հասեալ
Մարմնով եւ բուռըն ձայնիւ 'ի Կալքասայ նըմանութիւն.
Նախ յԷասսըն երկոսին բարբառեցաւ յինքնայորդորս.

Էասեանք, ըզժողովուրդն աքայեցւոց դուք կեցուցջիք,
Յուշ ածեալ ըզքաջութիւն եւ մի զփախուստ խուճապական:
Չերկընչիմ ինչ ես այլուր յանպարտելի ձեռաց տրովեանց
Որ յախուռն ամբոխիւ անցին զանցին զմեծ պարըսպաւս,
Քանզի զդէմ կալցին հանուրց աքայեցիքըն բարձաղէնք:
Բայց աստ՝ յոյժ կասկածեմ թէ դուցէ չար ինչ անցցէ՛նդ մեզ,
Ուր Հեկտոր մոլեգնոտ բոցատեսիլ զօրավարէ,
Խրոխտացեալ որդի լինել հզօրին Արամազդայ:
Այլ սակայն՝ զայս ոք 'ի դից արկցէ 'ի միտ ձեզ երկոցունց,
Զի պինդ կացջիք դուք ինքնին եւ քաջալերս այլոց տայջիք,
Եւ լիջիք այսպէս վանել յեռանդընթաց լաստափայտիցդ
Ըզմոլեալըն անգամ՝ թէպէտ եւ Ողիմպեանն ինքն յարուցէ:

Ասացեալ զայս երկրաշէր Գետնասասանն, եւ զերկոսին
Ջընեալ գաւազանաւն՝ ելից հուժկու կորովութեամբ,
Եւ զանդամսըն եդ թեթեւս եւ զոտսն եւ զձեռսն 'ի վեր կուսէ:
Իսկ նա ինքն՝ երագաթեւ իբրեւ բազէ սուսանեցաւ,
Որ 'ի սեպ յապառաժուտ քարաժայռէն ընդոստուցեալ
Ընդ դաշտ խոյանայցէ պընդել ըղհետ այլում թըռչնոյ.
Պոսիդոն գետնադըղորդ նոյնպէս սլացաւ 'ի նոցանէն:
Եւ նախ 'ի նոցունց ծանեաւ Էաս շայան Ոյլէան,

Եւ անդէն առ Էաս Տելամոնեան որդին գայ.
Էաս, քանզի մեզ յՈլիմպականէ աստուածոց ոք
Ըղձարգելին նմանեալ ըղջէմս՝ առ նաւս հրաման տայ մարտնչել, —
Եւ նա չէ՝ չէ իսկ Կալքաս հաւահըմայն ըղձապատում,
Զի զգնացեալն յետուստ կրունկ գիտացի զոտիցն եւ ըզբարձից
Ի մեկնելն 'ի մէնջ առաջ, քաջածանօթ իսկ են աստուածք, —
Նա եւ յանձն իմ իսկ սիրտ 'ի լանջըս իմ եւս առաւել
Ցորդորել խրախուսէ 'ի պատերազմ եւ 'ի գուպար,
Եւ թնդայ ամենայն 'ի ներքուստ կայտառեալ ոտքս, 'ի վերուստ ձեռքս:
Եւ առ նա պատասխանի տայ Էաս Տելամոնեան.
Նոյն եւ իմ այժմ ըղձախպասս յանդըղնագոյն կայտառն բազուկք,
Եւ կորովս արծարծեցաւ, եւ երկոքունք ոտիւք ներքուստ
Խիզախեալ վառեալ գընամ, եւ յօժարիմ իսկ միայնակ
Ընդ Պրիամեանն Հեկտորի անյագ մոլեգին պատերազմել:
Զայսոսիկ ընդ միմեանս այսպէս սոքա բարբառելով
Խընդամիտք 'ի խայտմութեան՝ զոր արկ յոգիս իւրեանց աստուածն:
Ցայնժամ զերկրակոց Երկրաշարժն ըզյետակաց Աքայեցիսն,
Որ առ երագ նաւերոյն յանձանձէին զոգիս իւրեանց,
Ոյց զրժնէ աշխատութեամբ լուծեալ էին անդամք մարմնոյն,
Եւ ցաւ 'ի սիրտ հարեալ հասանէր՝ 'ի տեսանելն ըզտրովացիս
Զի ուժգին ամբոխիւ հեղեալ զերդ ըզպատնէշսն.
Ընդ որս աչն արկեալ՝ արտասուք յարտեւանանցըն քամէին,
Զի համարեալ այնպէս էր, թէ չապրեցեն յաղէտանէն:
Այլ դիւրահաւաք Գետնադղորդն ըզհաստատուն յարոյց լաշկարս,
Եւ խրախոյս բարձեալ եհաս նախ առ Տեւկրոս եւ Լէիտոս,
Առ դիւցազնեայն Պենելէոս եւ առ Թոաս եւ Դէիպիր,
Առ Մերիոն եւ Անտիլոք՝ ճարտարապետըս գոռութեան:
Ըզսոսին քաջալերեալ՝ ձայն 'ի թռչուն ընկէց բարբառ.
Ամօթ, որդեակք, երիտասարդք առոյգանձինք.
Իմ 'ի ձեր պատերազմելդ է յուսացեալ փրկել ըզնաւս.
Իսկ թէ դուք ձեռընթափ լինիք 'ի խիստ գուպարածէս,
Արդ հասեալ օրն երեւի՝ յորում տրովեանց լինիցուք նըկուն:
Ո՛վ դիք, արդարեւ իսկ տեսանեմ մեծ եւ ահեղ
Սքանչելիս՝ ուր ոչ երբէք աչն ունէի գալ ելանել.
Տրովացւոց մատչել 'ի մեր նաւս որ յառաջ հանգոյն էին
Եղանց փախըստականց՝ որ ընդ մայրիս թաւ անտառաց
Ընձուց եւ գայլոց եւ գայլաշանց մատնէին 'ի կեր,
Վայրապար թափառականք, կըճատք եւ ոչ պատերազմիկք:
Նոյն տրովեանք յառաջագոյն կալ առաջի չառնուէին յանձն
Եւ ոչ խուռն մի բազկաց եւ ըզօրութեան աքայեցւոց:
Իսկ արդ բացէ եւըս կըռուէին 'ի քաղաքէն առ խոր նաւօք,
Վատութեամբ զօրագըլխին եւ ալեկոծութեամբ զօրականացն,

Որ խառնեալ ընդ նոսա՝ պաշտպան լինել ընկերատանան
Երագընթաց Նաւէններոյն, այլ առ նոքօք կան կատարքն ։
Բայց Թէպէտ եւ արդարեւ վընասապարտ իցէ ընդոտ
Դիւցազն Ատրիդէս ամենիշխանն Ագամեմնոն,
Այնու՝ զի զքաջութիւն Պէլէանն արհամարհեաց,
Ի կռուոյս չէ ինչ երբէք ամենեւին Թողանել մեզ ։
Այլ խընամ տարցուք ընդ փոյԹ. զի լաւաց միտք են զիւրաբոյժ ։
Եւ ձեզ ոչ 'ի դէպ կասել 'ի քաջամարտ արուԹենէ
Որոց էք 'ի բանակիս արուարադոյնք ամենեքեան ։
Ոչ դրժնիմ ես ընդ այր վատ, որ 'ի մարտէն վեհերեցի.
Իսկ ընդ ձեզ՝ 'ի սրտէ ծանրացասուցմին զայրացնիմ ։
Յուլութեամբդ, ով կնամարդիք, մեծ եւս ընդ հուպ ածջիք զչարս.
Այլ արդ այր իւրաքանչիւր ըղպատկառանս եւ ըղպարսաւ
Աղէ դիք 'ի միտ, զի կռիւ ահա բորբեալ կայ մեծ ։
Առ նաւուքն ահեղագոռն Հեկտոր 'ի մարտ մըխեալ հզօր,
Ըշխրասերն խորտակեալ եւ զպարզանակն երկայնաձիգս ։
Զայս խրախոյս տուեալ զարթոյց զաքայեցիս Երկրաշարժն,
Եւ զԱյասքն երկոքումբք կային կանգնեալ գունդք ալընդակալմ,
Զորս եւ ոչ Արէս ինքնին անդըր գըտեալ անարգանէր ինչ,
Ոչ Աթենաս ամբոխադոյթ, զի այրընտիր քաջ նահատակք
Ընդ տրոհեանց եւ զիւցազանն Հեկտորի 'նդ դէմ ճակատէին
Տեգ 'ի տեգ խիտ ընդ խիտ, ասպար յասպար, կարգք Թանձրախուռն.
Ի վահան յենոյր վահան եւ սաղաւարտ 'ի սաղաւարտ,
Եւ այր յայր, եւ ձիադէս ճօճեալ կորդակք խորանափայլք
Շրփէին ըղմիմեամբք. այնչափ հոծեալ կային 'նդ իրեարս,
Եւ նիզակք յոխորտ բազկացըն տատանեալ ծածանէին.
Եւ զինեալ զնոյին ինքեանք բոցավառեալք 'ի կռիւ մարտի ։
Նախ տրոհեանքըն բախեցան կուռ, եւ Հեկտոր կարապետէր
Դէմ ընդդէմ շահատակեալ, եղեանընդդատ իբր 'ի ժայռէ
Վէմ՝ զոր գետ 'ի գաղաԹանց անձրեւ զլըցէ հեղեղասաստ՝
Խորտակեալ սաստիկ ուղխիւքն ըղկապարանս ժըպիրհ ժըռէն,
Բարձրաթռիչ վաղվաղ ըլանայ, եւ ընդ իւրեւ Թընդեն մայրիք.
Ինքն անխափան ժիր հոլովի մինչեւ հասցէ դաշտացն 'ի հարթ,
Եւ 'նդ ոլորտս այլ չըմտանէ անդէն, Թէպէտ յորդորամիտ.
Նոյն Հեկտոր սպառնայր 'ի սպառ՝ մինչ 'ի ծով անդըր Թեթեւով
Հասանել հարուածովք յաքայեցւոցն 'ի վրանս եւ նաւս.
Այլ յորժամ կարծրակուռ գումարտակացըն պատահեաց,
Անդ կառեաւ էառ ըղկայ. իսկ աքայեանց մանկունքն զինակ
Երկսայրի սուսերօք եւ նիզակօք հարկանելով
Վանեցին յինքեանց, եւ նա տեղի տուեալ սասանեցաւ ։
Եւ կարդաց ահեղագոչ առ տրոյացիսն հարեալ բողոք.
Տրովացիք, լիկիացիք եւ դարդանիդաք մերձամարտիկք,

Պինդ կացէք, զի՛մ ոչ յերկար աքայեցիք կացցեն ընդդէմ,
Թէպէտ եւ աշտարակ ամուր զանձինս կազմեսցեն,
Այլ տեղի տայցեն, կարծեմ, 'ի նիզակէս, թէ հաւաստեաւ
Ամենազօրն 'ի գլխ այրն Հերայ գրգռեաց զիս որոտողն։
Ցայս բարբառ կազդուրեցոյց ամենեցուն զհանճարս զոյժ եւ զոգիս·
Ընդ որս փութայր ընթանայր Պրիամեան սէգ Դէյփոբոս
Յառաջս կալեալ խուռն զասպարն համակ կարականակերպ,
Յառաջեալ թեթեւ ոտիւք եւ վահանաւ ամրածածուկ։
Եւ զնա բուռն դէտ կալեալ փայլուն տիգին Մերիոնէս՝
Անվրէպ եհար յասպարն 'ի բոլորշի յարջասամորթ,
Բայց ընդ այն ոչ եւ յայնկոյս, այլ յոյժ կանխեալ յառաջագոյն
Անդէն իսկ 'ի բունին իւրում բեկաւ նիզակն երկայն։
Իսկ Դէյփոբոս յանձնէն 'ի բաց կալաւ զվահանն արջառենի՝
Սրտաթունդ լեալ յաշտեէն քաջազարմին Մերիոնեայ·
Բայց դիւցազն այն խոյս տուեալ էանց անդրէն յընկերաց դաս,
Սրտամբառնեալ յոյժ ընդ վրէպ յաղթանակին ու 'նդ տիգին բեկ։
Եւ գնաց ընդ խորանան եւ ընդ քաջախս աքայեցւոց՝
Առնուլ զայլ տէգ մի երկայն՝ զոր 'ի վրանին իւրում թողեալ։
Սակայն այլքն կռուէին եւ աղաղակ գուժեաց անհուն·
Եւ Տեւկրոս Տելամոնեան նախ առաջին ըսպան զայր մի,
Զիմբրիոս քաջզօրէն՝ բազմաձիոյ Մենտորի ծնեալ,
Ըզբնակեալն 'ի Պեդէոն՝ չեւ աքայեանց եկեալ մանկտոյն,
Եւ ունէր ըզՊրիամու դուստր հարճածին զՄեդեսիկաստէ։
Իսկ 'ի գալ դանայեցւոց ծովաձեմական նաւատորմին,
Ցիլիոն դարձեալ անդրէն՝ փառաւորէր 'ի տրովացիս,
Առ Պրիամու կայր բնակեալ, որ զնայն որդւոցն զոյգ պատուէր։
Արդ ըզսա յերկայն նիզակ Տելամոնեանն որդի 'նդ ունկամբն
Հարեալ քարշեաց ըզդեղարդն, եւ նա նըման անկաւ հացւոյ,
Որ 'ի գագաթըն լերին երեւելւոյ 'ի հեռաստան
Պղնձով կտրեալ յերկիր ըզդերդ սաղարթմն ընկենուցու·
Սոյնպէս անկաւ, եւ զիւրեւ պղնձաճաճանչ շաչեցին զէնք։
Իսկ Տեւկրոս ընթացաւ՝ արշաւեալ ըզզէնսն առնուլ կապուտ·
Բայց Հեկտոր 'ի դիմեալն արձակեաց տէգ փայլակնաձեւ,
Զոր անդուստ տեսեալ խուսեաց նա մազապուր 'ի պղնձի տիգէն,
Եւ սա զորդին Ակտորեանն Կտէատեայ զԱմփիմաքոս,
Որ եկեալ գայր 'ի ճակատ, եհար ընդ լանջսն գեղարդեամբ·
Եւ անկեալ թընդիւն եհան, շառաչեցին զէնքն զիւրեաւ։
Իսկ Հեկտոր՝ 'ի գլխոյ մեծասրտին Ամփիմաքեայ՝
Դիմեաց խլել զսաղաւարտն յերանունս անդր ագուցեալ։
Այաս 'ի խոյացեալն Հեկտոր ձգեալ տէգ շողշողուն
Ձեհաս ինչ 'ի մարմինն՝ յահեղ պղնձի պատեալ համակ·
Եւ սակայն 'ի վահանին կոփեալ նորա պորտ կըմբաւոր՝

Մերձեալ հզօր զօրութեամբ. նա յետս ընկրկեալ առանցս նահանջէ
Յերկոցունց 'ի դիականցն, եւ աքայեանք առին զնոսա :
Իսկ զԱմփիմաքոս Ստիքիոս եւ զօրավարն Մենեսթեւս՝
Իշխանք աթենացւոց՝ յաքայեցւոցն ածին բանակ .
Եւ զԻմբրիոս՝ Այեանք նախանձաւորք յամեհի մարտ :
Որպէս զայծ 'ի դամփռանց բռնաժանեաց առեալ կորիւնք
Յափշտակեալ տանել զնոսին ընդ թանձրաթաւփ մացառուտս
Ամբարձեալ 'ի գետնոյ կալեալ 'ի վեր 'ի ծամելիս ,
Նոյն ըստ երկոցունց բարձեալ 'ի վեր զնա Այեանց՝
Արարին զինազերծ , եւ զգլուխն 'ի գիրգ պարանոցէն
Հատ խրոխտ Ոյլեանն՝ յԱմփիմաքեայ սակս ոխացեալ ,
Եւ գլորեալ գնդատեսակ 'ի բազմամբոխն անդր արձակեաց ,
Որ երթեալ փոշեթաւալ անկաւ առ ոտսն Հեկտորի :
Անդ յայնժամ գաւառապէս Պոսիդոնին զայրացաւ սիրտ
Ընդ թոռինն անկանել 'ի սաստկացեալ պատերազմին .
Անց գնաց ըստ վրանս եւ ըստ նաւակս աքայեցւոց՝
Խրախուսել զԴանայեանս , եւ տրովացւոց երկնել չարիս :
Եւ նոյն ընդ առաջ Իդոմենեւս կորովաւանդ
Անդրէն դարձեալ յընկերէն՝ 'ի կռուոյն այն ինչ եկեալ ,
Ի թամբի սրունիցն կարթ սուր պղնձով վիրաւորէ ,
Զոր ընկերքն առին 'ի բաց . նա բժշկաց տուեալ պատուէր՝
Գայր 'ի վրանն յանկութեամբ դարձ առնելոյ կրկին 'ի մարտ :
Իսկ առ նա Թագաւորաձայնն Երկրասասան բարբառեցաւ ,
Թոասայ նմանեալ՝ Անդրեմոնի որդւոյն՝ ձայնիւն ,
Որ յամենայն 'ի Պլեւրոն եւ 'ի բարձուն Կալիդոնի
Էտոլեանցն էր իշխեցող աստուածաբար յազգէն պատուեալ .
Յո՞ գնացին սպառնալիքն , Իդոմենեւս՝ կրետացւոց պետ ,
Զոր մանկունք աքայեցւոց տրովադացւոցն սպառնային :
Եւ նմա պատասխանի կրետեանց իշխանն Իդոմենեւս .
Ո՛վ Թոաս , չիք՝ որչափ ես հասանեմ՝ մեղ դնել ումեք ,
Քանզի եմք ամենեքին ուսեալ կռուոյ պատերազմի .
Զումն երկիւղ զոք վատութեան , ոչ դանդաղեալ ոք հեղգութեամբ՝
Փախուցեալ խուսափէ 'ի դժընդակ զաւարածէս ,
Այլ Զրուանեան հզօրին՝ այսպէս թուի հաճոյ եղեալ ,
Վատափառ կորնչել աքայեցւոցս աստ յԱրգոսէ :
Բայց , Թոաս , քանզի էիր դու եւ յառաջն իսկ զօռ մարտիկ ,
Նա եւ զայլս ես յորդորես զոր տեսանես ոք թուլացեալ ,
Մի եւ այժմ ինչ դադար , ձայնեա առաջեա զայլ ամենայն :
Պոսիդոն գետնադղորդ դարձոյց առ նա պատասխանի .
Մի եւս այն այր 'ի Տրոյայ , Իդոմենեւս , դարձցի անդրէն ,
Այլ խնճոյ լիցի շանց աստէն հերձեալ յառ եւ յաղաւ ,
Որ յաւուրս աստ յայսմիկ կամաւ 'ի կռիւ ծուլասցի ոք :



Digitized by Google

Այլ մի՛ ըղձանօք սակաւ ինչ. 'ի սոյն փութալ պարտ իսկ է մեզ՝
Թերեւս յօգուտ ինչ լինիցիմք, Թէպէտ երկուք եւեթ իցեմք:
Զի արանց եւ անկարողից է զօրութիւն՝ 'ի մի եկեալ,
Նա՛ւանդ եւ ընդ քաջաց իսկ մեք գիտեմք շահատակել:
Աստուածն զայս ասացեալ՝ դարձաւ անդրէն 'ի ձիգն արանց.
Իսկ 'ի վրան իւր Իդոմէն իբրեւ եհաս 'ի բարեկերտս,
Գեղեցիկ զէնս ըզմարմնով զգեցեալ՝ սակաւ կերպին մերկութեամբ՝
Եւ զինուց փայլատական հանդերձանօք, յոր բուռն հարեալ
Թօթափէ Զրուանեանն յարփիահրաշ Ողիմպոսէ,
Նշան ցուցեալ մահկանացուաց ճառագայթիւք ճաճանչաւէտ.
Նոյն եւ նորա յընթացսն ընդ լանջօքն շուրջ շողայր պըղինձն.
Եւ նորա Մերիոնէս պաշտօնեայն քաջ եղ ընդ առաջ,
Դէտ եւս անդ առ խորանաւն՝ յոր գնայր առնուլ տէգ պըղընձի:
Եւ առ սա զօրութիւնն Իդոմէնի բարբառեցաւ.
Մոլոսեան ծնեա Մերիոն քաջոտն՝ յընկերս յոյժ սիրեցեալ,
Առ իմէ՞ թողեալ ըղձարա պատերազմին՝ եկիր այսրէն.
Նետահա՞ր մի թէ եղեալ, եւ պարզ փըրձին զերեզ տառապէ,
Կամ թէ խելք զուժաբեր հասեր առ իս. եւ ես լինելին
Ցոյն երթալ 'ի խորանս ախորժեմ ոչ, այլ մարտ զընել:
Մերիոն իմաստնաւոր տայր նորին պատասխանի.
Պղնձազգեստ կրետացւոց Իդոմէնեա խնամակալ պետ,
Ցայն ինչ գամ, զի թէ նիզակ ինչ 'ի քո վրանս իցէ մնացեալ՝
Առից զայն. զի զոր յառաջն էր 'ի ձեռին իմում՝ բեկեալ
Ընդ ասպար խրոխտացելոյն Դէիփոբեայ հարեալ ըղձա:
Եւ նորա պատասխանի կրետացւոց պետն Իդոմէնեա.
Նիզակս՝ եթէ մի, եւ թէ քսան մի խնդրիցես,
Ի վրանին գտցես զի կան առ պատպաչուն որմայեցին,
Տրովականս՝ որ յանկելոցն առի հարի. զի ոչ կարծեմ
Թէ յարանց ախոյենից մեկուսաբար մաքառեցայց:
Վասն որոյ եւ գեղարդունք եւ կոճակաւոր են ինձ վահանք,
Եւ զրահամածք եւ զըրահք լուսաճաճանչ փայլակնաւորք:
Մրմռացին Մերիոն կրկնեաց անդրէն պատասխանի.
Են եւ առ իս 'ի վրանին եւ 'ի նաւին իմ թըխաթուխ
Տրովացւոց կապուտս բազում, բայց ոչ թէ մօտ ինչ են յառնուլ:
Զի եւ ո՛չ ինձ մնալոցն ինչ համարիմ ըղձալութիւն,
Այլ կանգնիմ ընդ նահատակս 'ի փառացի ասպարիսին
Ուր ուրեք եւ զըրգռեսցի պատերազմի ճակատամարտ:
Ցայլմէ թերեւս ումեքէ 'ի պըղնձազգեստ աքայեցւոց
Եղէց 'ի կռիւս ինչ զանխուլ, այլ զքեզ կարծեմ ականատես:
Եւ նորա պատասխանի զայս Իդոմէն կրետացւոց պետ.
Գիտեմ զինչ ով առաքինութեամբ ես, զի՞ պէտք քեզ ասել զայդ.
Զի ով 'ի նաւս արդ ամենայն թէ 'ի դարան ընտրեցեալք քաջք,

Ուր արանց եւս յայտնագոյն արիութիւն յանդգնանի,
Ուր անկներեւ գայ 'ի լոյս առաքինին եւ վատասիրտ. —
Զի վատին՝ այլ ընդ այլոյ յեղափոխի գոյն երեսացն
Եւ հոգին ոչ անսասան նստել 'ի սիրտն հանդարտէ,
Այլ 'ի գուճս կոր 'ի կոր անկեալ կրքի յերկոսին ոտս,
Եւ 'ի լանջս իւր սիրտն 'ի ներքս ուժգին թընդմամբ արոփէ վազել,
Զի հասեալ կարծէ զօրհասն, եւ ատամունքն կարկաչեն.
Իսկ քաջին՝ ոչ մոյն գունմաց չըրջի, ոչ մեծ ինչ դող դողայ՝
Ուր ուրեք գամ մի 'նդ արանց անցեալ կայցէ 'ի դարանի,
Եւ անձկայ երթալ խառնել երագասուր 'ի դըժնեայ ռազմ. —
Ոչ եւ անդ ոք ըզքո սիրտ եւ ոչ ըզձեռս անգոսնեսցէ։
Զի հեռուստ թէ 'ի կըռուի հարցիս, կամ վէրս առցես մօտուստ,
Ոչ յետուստ 'ի պարանոցդ անկցի սըլաք կամ 'ի թիկունդ,
Այլ կըրծից առաջէն պատահեսցէ կամ գանձակի
Մըղելոյդ դիմադրաւ ընդ գումարտակս ախոյենաց։
Բայց արդ ծն, մի եւս այլ արձանացեալ խօլից հանգոյն
Զբանիւքս անկցուք, գուցէ ոք ամբարհաւաճս ըստգըտասցէ զմեզ.
Այլ դու երթ 'ի խորանն եւ առ զաշտէն հաստահարուստ։
Զայս ասաց, եւ Մերիոն՝ սուր Արէսի համանմանեալ՝
Հապըշտապ 'ի վըրանէն ըզպղընձի տէգն առեալ երարձ
Եւ ըզհետ ընթացաւ Իդոմենի՝ ձեպեալ 'ի կռիւ։
Որգունակ 'ի պատերազմ Արէս խաղայ մարդախողխողն,
Եւ ընդ իւր երթայ սիրուն որդին Խուճապ հուժկու անահ,
Որ անգամ եւ զըրրտալինդ պատերազմօղն ահաբեկէ.
Երկոքեան 'ի Թրակիոյ յԷփիրացիսն 'ի զէն վառեալք,
Եւ կամ 'ի Փլեգիանացն մեծանձինս, այլ ոչ հըլուք
Երկոցուն եւըս կողմանց, միում եւեթ առեալ ըզփառս.
Նոյնգունակ Մերիոնէս եւ Իդոմեն՝ արանց իշխանք՝
Խաղային 'ի մարտակռիւ՝ զինավառեալք 'ի պղինձ հրաշէկ։
Եւ առ նա նախ Մերիոն կանխեաց ըսկըզբն առնել խօսից.
Դեւկալիոնեանդ, յորմէ՞ կուսէ եդիր 'ի մտի մըխել յամբոխն,
Արդեօք յաջմէ՞ միախուռն զօրականին, թէ 'ի միջոյ,
Թէ 'նդ ահեակ. զի ուստեք գեղավարսից աքայեցւոց
Ակն երբեք պակասելոյ չունիմ մարտի պատերազմիս։
Եւ նմա պատասխանի կրետեանց իշխանն Իդոմենեւս.
Ի միջի անդ նաւկներոյն ահա կան այլք ընդդիմակացք,
Երկոքին Էայք, Տեւկրոս՝ աքայեցւոցըս քաջաղեղն,
Ախոյեան եւ յոտընկռիւ յետեղական գուպարածի.
Որք ըզնա եւ զամեհին անդամ 'ի կռիւ՝ կալցեն աշխատ՝
Ըզհեկտորըն Պրիամեան, թէպէտ եւ բուռըն սաստկանդամ։
Խիստ իմն յոյժ լիցի նմա, թէ եւ մոլեալ 'ի պատերազմ,
Ըզնոցայն 'ի պարտութիւն մտանեալ կորով եւ զանյաղթ ձեռս՝



Digitized by Google

Հուր 'ի նաւս արկանել, թէ միայն ինքըն Զըրուանեան
Մի խանձող մի հրաբորբոք յերագաձեռն ընկեսցէ նաւս ։
Իսկ մարդոյ՝ չտայցէ տեղի Տէլամոնեանըն մեծն Այաս ,
Այն ումեք մահկանացուի՝ որ զԴեմետրի բերս ուտիցէ ,
Պըղընձով պատառելի եւ մեծամեծ բըռնաքարամբք ։
Նա եւ ոչ յԱքիլլեայ ռազմահատէն խուսեսցէ ինչ
Ցեռեղակալ 'ի գուպար ․ իսկ ոտիւք չէք ընդ իւր մըրցել ։
Այդ դարձիր դու մեզ յահեակ զօրականիդ , զի՞նդ փոյթ տեսցուք
Մեք ինչ ումեք պարծանաց ընծայեցեմք շուք , թէ մեզ ոք ։
Զայս ասաց , եւ Մերիոն՝ ժիր Արեսի զուգակերպին՝
Անց գընաց , մինչեւ հասին անդր 'ի բանակն ուր եւ հրաման ։
Իսկ նոցա զբոցանըշանն ուժով տեսեալ զԻդոմենեւս ,
Ըզնա զինքըն եւ զարբանեակըն՝ արուեստախառն հանդերձ զինուքն ,
Հարեալ խըռախոյս ընդ ամբոխն՝ անկան 'ի նա միահամուռ ․
Եւ նոցա՝ միահամեալ եկաց պայքար նաւացն 'ի վերջս ։
Եւ զօրէն իմն 'ի շըչող այսոց վարեալ ստանուն մըրրիկք
Ցաւուր՝ յորում փոշի է դէզադէզ ընդ ճանապարհս ,
Որ եւ անդէն ըզհողոյն յարուցանեն մէգ թանձրամած ,
Սոյնպէս նոցուն խըռնեցաւ ճակատ , վառեալ 'ի սիրտս իւրեանց
Սպանանել ըզմիմեանս 'ի սուր պըղընձ անդ 'ի խազմին ։
Եւ մարտըն մարդածախ քըստմընեցաւ երկայն տէգօք
Զորս 'ի ձեռսն ունէին մարմնապատառս , եւ շող պըղընձի
Շլացուցանէր զաչս՝ հատեալ 'ի փայլփայլ զըլխանոցաց ,
Ի գեղաշրջենջ պատենից եւ յասպարաց ճաճանչելոց
Ի գառոյթեղն համագունդ ․ եւ անհնարին զայր պըրնդասիրտ՝
Որ զձրգուխըն տեսեալ բերկրէր եւ ոչ աղխամանայր ։
Բայց Զըրուանեայ երկոքին հզօր որդիք երկպառակեալք՝
Արանցըն դիւցազանց պատրաստէին գըժնեայ երկունս ։
Արամազդ ընդ յաղթութիւն կամէր տըռովեանց եւ Հեկտորի ,
Ըզքաջոտն Աքիլլեւս փառաւորել , սակայն չուներ
Ցանձին բնաւ զաքայաստան ազգն յԻլիոն կորուսանել ,
Այլ Թետեայ դընէր շուք եւ ուժգնասիրտ նորին որդւոյն ։
Իսկ Պոսիդոն յորդորէր զարգիացիսն անցեալ 'ի մէջ
Ի սպիտակ ծովէն ելեալ գաղտ , եւ 'ի մտին բարըրջանայր
Ընդ պարտիլ նոցա տըռովեանց , եւ յոյժ ցասնոյր Արամազդայ ։
Երկոցունց տպաքէն սերունդ էր նոյն , հայրենիք մի ,
Բայց Արամազդ նախածին եւ բազմագէտ էր հանճարով ․
Ցայն 'ի դէմս՝ եւ նա խորշէր կալ 'ի թիկունս յայտ համարձակ ,
Իսկ 'ի գաղտնիս՝ ցանդ դըրդէր զնոսին ընդ զօրն՝ այրակերպեալ ։
Արդ սոքա՝ զուժեղ կըռուոյն եւ զմիազօր գուպարածին
Ըրրջեալ այսր անդր ըզկէան ընդ երկոսին ձգեցին կողմանսն
Անփըղելի եւ անքակ , որ զբոլորից ելոյծ ըզծունկս ։

Արդ թէպէտ եւ ալէհեր, խրախոյս բարձեալ առ Դանայիս,
Ոստուցեալ 'ի տրովացիսն ընկէց խուճապ Իդոմենեւս,
ԶՈթրիոնեւս ըսպանեալ՝ զեկեալ հասակաւն 'ի Կաբեսայ,
Որ դեռ այն ինչ 'ի համբաւ գոյր հետեւեալ պատերազմին,
Եւ խնդրէր զչքնաղագեղն 'ի դստերացն Պրիամու
Զկասանդրէ՝ առանց օժտից. եւ խոստացեալ էր մեծ ինչ գործ,
Բռնաբար 'ի Տրոյիոյ վանել զորդիսն աքայեցւոց:
Եւ ծերունին Պրիամոս կապեալ էր բան եւ ակնարկեալ
Տալ նմա, եւ նա 'ի յոյս խոստմանց նորին կայր ոգորէր:
Այլ 'ի նա փայլուն տիգաւն Իդոմենեւս կալեալ զնետակն՝
Հար անվրէպ ըզսխրաքայլն, եւ պղնձին զգեցեալ զըրահ
Չեղեւ ինչ բաւական, եւ յորովայն անդր հարըստեաց.
Նա թընդմամբ տապալեցաւ, եւ սա 'ի նա խրոխտեալ ասէ.
Զքեզ արդարեւ, Ոթրիոնեւս, գովեմ քան զբնաւ մահկանացուս,
Եթէ առոյգ վըճարեսցես զոր ինչ ուխտեալդ ես զամենայն
Դարդանեան Պրիամոսի, որ եւ նա զդուստր իւր է խոստացեալ:
Զոր թէ մեր ինչ էր քեզ խոստովան լեալ՝ կատարէաք,
Ըզդուստր Ատրիդեսի զգեղեցկագեղն մատուցեալ
Ածեալ քեզ յԱրգոսէ 'ի կընութիւն ամուսնութեան,
Թէ զԻլիոն շինաւոր քաղաքն ընդ մեզ կործանէիր:
Այլ արի, առ ծովաչու նաւս յուխտ մըտցուք ըզհարսանեաց,
Քանզի բնաւ խնամախօսքս չեմք անարգք ինչ անազատք:
Զայս ասացեալ, զոտանէն առեալ զանկեալն Իդոմենեւս
Ընդ ահեղ ռազմին քարշեաց. այնմ Ասիոս եւ վրէժխընդիր
Հետեւոտս հանդէպ ձիոցն, զորս ունէր միշտ կառապանն
Առ ուսովքըն թափելով, եւ նա ցանկայր յիւրում սրտին
Հարկանել զԻդոմենեւս. կանխեաց եհար սա զնա տիգաւն
Ի կոկորդն ընդ կըլափաւք, եւ ըզպղընձին եհան թափանց:
Գըլորեցաւ նա զերդ կաղնի մի կործանեալ, կամ կաղամախ
Կամ շոճի բարձրաբուն՝ զոր 'ի լերինս հիւսանց մանկունք
Նորաթեք հարին դակուօք՝ նաւափայտի երթալ 'ի պէտս.
Այսպէս ձիոցն առաջի եւ կառաց նա տապաստ անկաւ
Կըրճելով զատամունսն եւ զարիւնաշաղ ըմբըռնեալ հող:
Իսկ իւրում կառավարն, ափշեալ միտօք զոր նախքն ունէր,
Ոչ զօրեաց աճապարել 'ի թըշնամեացն ապրել ձեռաց
Ցետս ըզձիսըն դարձուցեալ, զոր մերձակայն Անտիլոքոս
Հասեալ 'ի նա նիզակաւն ընդ մէջ շամփրեաց, եւ ոչ արգել
Պղընձին զրահ զոր կըրէր, եւ հար վարեաց 'ի փոր նորա:
Եւ սա ինքն հեծեծելով 'ի գեղաշէն անկաւ զուգիցն,
Եւ զերիվարսն Անտիլոքոս՝ ձեռս մեծանձին Նեստորի՝
Ի տրովեանց անտի վարեաց 'ի քաջազարդ աքայեցիսն:
Այլ տրտմեալ զԱսիոս Դէիփոբոս եկն յԻդոմենն,

Հաւաղ մնացեալ եւ ըղձակէզորդեալն արձակելոց փայլակնեաւէք.
Իդոմէն առեալ անդուստ՝ 'ի նեղուկէն զերծեալ պղընձէ,
Զի եմուտ կըծկեցաւ ընդ ասպարաւըն բոլորակ,
Զոր բարձեալ ունէր գործած ձախաբազկեայ փայլուն պղընձով
Եւ մարթակք արջառնիւրք եւ բաանալեօք կապեալ երկուք:
Ընդ նովաւ թագեաւ ամբոյն, եւ պղընձին անէգ թըռեաւ վերուստ
Եւ յընթանալ նեղուկին՝ վահանին հընչելոց կերկերաձայն:
Եւ ոչ 'ի ծանրը բազկէն 'ի զուր անդարձ ինչ արձակելոց,
Այլ եհար ըղձեփախնարն Հեփաստոսածին՝ զհնոցեան աղանց՝
Ի լերդէն ընդ սախանդերքն, եւ իսկ եւ իսկ ըղծանկան եղեւ:
Իսկ Դեփիֆոս մեծամեծըս պանծացեալ գոչելոց ուժգին.
Ասիոս արդ ապաքէն ոչ անվըրէժ անկեալ գընի,
Այլ յերթալն իսկ յանողըք 'ի կարծրադրանք դըժոխս՝ ասեմ՝
Խընդալից սրտի հոգւով, զի ուղեկից նըմին ետու:
Զայս ասաց, եւ ընդ պարծանօքն գանձացան աքայեցիք,
Եւ սիրտ քաջին մանաւանդ գըրգռեցաւ Անտիլոքեայ.
Եւ 'ի խոր թէպէտ խոցեալ, զընկերակցէն չարար անփոյթ,
Այլ ձեռեալ եհաս պաշտպան, եւ ասպարաւն հովանացաւ:
Ընդ նովաւ ապա մըտեալ ընկերք երկու սիրալորդոքը,
Մեկիստեւս Եքեայ զաւակն եւ Ալաստոր դիւցազնական,
Ի գոգեալ նաւուն ածէին մընչելով հեծէր ծանրաթախիծ:
Իսկ Իդոմէն ոչ դըլայր 'ի մեծ ուժոյն, այլ կայր բաղձալ
Ընկըղմել 'ի տրտմագնեանց զոք 'ի գիշեր խաւարատոյղ,
Կամ սապառատ ինքն անկանել՝ վանեալ զեղեան յաքայեցւոց:
Անդ յայնժամ զԱլկաթեայ դիւցազնորդի ձեռն սիրասուն՝
Եսիեւտայն Ալկաթոոս, զԱնքիսեսին փեսայացեալ,
Եւ զերէցն 'ի դըստերացն առաջեալ կին զՀիպպոդամէ՝
Զ' 'ի սրտէ հօր սիրելին եւ աղայ մօր՝ մինչ 'ի տանն էր,
Զի անցեալ զամենայնանէր զհասակակիցսն ամենեքումբք
Գեղեցկութեամբ եւ գործովք եւ հանճարով իմաստութեան,
Որով զնինքն այր վեհագոյն 'ի մեծ Տրոյա էր առեալ կին.
Պոսիդոն յայնժամ ըզսա 'նդ Իդոմենիւ արար նըկուն:
Զաչսըն զառատալըս յաւթեալ՝ կապեաց զանդամսն առոյգապէս:
Զի ոչ յետըս կարէր փախչել եւ ոչ իսկ խուսափել,
Այլ օրինակ իմն արձան ինչ եւ կամ ծառ բարձրասաղարթ՝
Մինչդեռ կայրն անշարժելի՝ խոցեաց դիւցազն Իդոմենեւս
Գեղարդեամբ ըզթորապատաւըն եւ ըղպըղնձի պատեանն եհերձ՝
Որ երբեմն 'ի մարմնոյն զօրհասական պահէին սոյժ,
Իսկ եղեալ անդ սիգաւհերձ՝ մըռընչեցին կերկերաձայն:
Եւ անկեալ տրոփեաց յերկիր, եւ աշտն 'ի սիրտըն կայր վարեալ,
Որոյ թըրթռումն 'ի նըշմա՝ եւ զաշտաբնոյն ծօծէր ըղծայր.
Ճգնաւոր եղք ապա զեթաւ բըռնութեանն Արէսն հըզօր:

Ահապէնս Իդոմենի խրոխտալով գոչեաց մեծաբարբառ.

Ուղի՞ղ արդեօք դատեսցի՞ք, Դէիփոբէ, համարելով
Ընդ միոյ երիս մահուանս, որ զի պարծիս դու իմն այդպէս:
Այլ, է՛ խօլ, դու իսկ ինքնին ա՛րի մատիր ինձ առաջեան,
Զի տեսցես՝ Արամազդայ ծնեալ որպիսի հասեալ կամ աստ,
Այն որ նախ ըզՄինոս ծնաւ Կրետեայ պահապանն քաջ,
Եւ Մինոս ծնաւ որդի զսքանչելին Դեւկալիոն,
Իսկ ծնաւ Դեւկալիոն զիս թագաւոր արանց բազմաց
Ի Կրետէ՚նդարձակատարր, եւ այժմ ածին նաւք աստանօր
Քեզ եւ հօր քում պատուհաս եւ համօրէն տրովադացւոց:

Զայս ասաց, եւ Դէիփոբոս յերկմիտս եղեւ վարանեցաւ,
Թէ առեա՞լ զոք զինակից 'ի տրովացւոցն մեծանձանց
Ընդ կրունկ անդրէն դարձցի, թէ սոսկ ելցէ ինքն 'ի հանդէս:
Եւ 'ի խորհուրդս սրտին՝ օգտակարն այս թուեցաւ նմա,
Գնալ առ Էնիաս, զոր գտա կացեալ զընդին 'ի վերջ.
Զի քինայր ընդ գեղեցկազինն Պրիամու միշտ հանապազ,
Քանզի 'նդ արի առս ըզքաջն ոչ 'ի պատիւ ինչ մեծարէր:
Որում մերձ հասեալ կացեալ՝ բարբառեցաւ ըզթռուչական բանս.

Էնիաս, տրովեանց իշխան, քեզ արդ քոյում պարտ է քեռայն
Հասանել յօգնութիւն, թէ հոգ խնամոյ փոյթ ինչ է քեզ:
Ո՜ն արի արդ ընդ իս՝ Ալկաթոյայ եկ 'ի թիկունս,
Որ երբեմն 'ի տղայ տիս սընոյց ըզքեզ 'ի տան քեռայր,
Իսկ արդ զինքն Իդոմենեւս կործանեաց հար սատակեաց:

Զայս ասաց, եւ 'ի լանջս նորա զսիրտն թընդեցոյց.
Եւ դիմեաց յԻդոմենեւս՝ եռանդնալից 'ի պատերազմ:
Սակայն ոչ ահ ինչ կալաւ զԻդոմենեւս իբրեւ զմանուկ,
Այլ եկաց, որպէս վարազ ոք 'ի լերինս յուսացեալ յոյժ.
Որ մընայ յարուցելոյ մեծի դղորդի բազմամբոխից
Յամայի ուրեք վայրի, եւ քըստմընէ զողն 'ի վերուստ,
Աչք իւր հուր փայլակնանան եւ ըզժանիս իւր յեսանէ,
Մըսմըռեալ պաշտել վանել ըզշանց վոհմակն եւ զորսորդն:
Նոյնպէս կայր Իդոմենեւս նիզակաւորն եւ չըտայր խոյս
Յէնիաս քաջամարտէ յարձակելոյ, ձայնէր ընկերս
Ակնարկեալ յԱսկալափոս, 'ի Դէիպիւր եւ յԱփարեւս,
ՅԱնտիլոքոս ու'ի Մերիոն՝ 'ի հըմտավարժըս գուպարմանց.
Առ սոսա զերագաթեւ արձակեաց բանս յորդորական.

Ո՜ն արիք, սիրելիք, եւ օգնեցէք ինձ միայնումս.
Յոյժ խիթամ յեկեալ Էնեայ երագոտին յիս դիմելոյ,
Որ հզօրն է ըզգօնութեամբ խոշոշել զայրս 'ի ճակատու,
Եւ 'ի ծաղկի մանկութեան՝ որ մեծագոյն է զօրութիւն:
Զի [illegible] եթէ հոգւով հասակակիցք պատահէաք,
Իսկ եւ իսկ՝ կամ նա տանէր պարծանըս մեծ, եւ կամ թէ ես:

Զայս ասաց, եւ հաւանեալ եւ համաշունչ բոլորեքեան
Հասին կուռ կացին զեւրեւ՝ զասպարան ՚ի յուսսն խոնարհեալ։
Անդուստ եւ Էնէաս կարդայր առ իւր ընկերակիցսն՝
Աչն ՚ի Պարիս, ՚ի Դէիփոբ եւ յԱգենովր դիւցազն,
Որ ընդ իւր զօրապետքն էին իշխանք տրովադացւոց։
Զհետ գայր զօրն, որպէս ըզհետ խոյին գնահեալ գնան խաշինք
Յարօտէ յարբուցման տանել, եւ խնդացեալ լինի հովիւն.
Օրինակ զայս եւ Էնէայ ցնծացաւ սիրտ ՚ի լանջըս իւր՝
Տեսեալ ըզզօրականն եկեալ ըզհետ իւր գունդ ՚ի գունդ։
Արդ ապա մօտ առ մօտ զԱլկաթոյու եռան գըրոհ՝
Երկայն ՚ի ձեռսըն մըկունդք, եւ ըզլանջօքն պըղնձի շուրջ
Հընչէր ահագնապէս՝ մինչ ձըգէին յիրեարս ՚ի խառն։
Եւ երկուք գերազանցք յամենեցունց արք մարտընտիրք,
Արիսի հանդուգնադէմք, Իդոմենեւս եւ Էնէաս,
Ըզձեռանց զուն գործէին խոցել մարմին զմիմեանց պըղնձով։
Կանխեաց Էնէաս արձակեաց զարդն յԻդոմենեւս,
Զոր նորա տեսեալ անդուստ՝ խոյս ՚ի պըղնձի ետ աշտէն,
Եւ Էնէայ ճօճեալ սըլաքն՝ երթեալ յերկիր հարբանեցաւ.
Զի զըռահեալ ՚ի կորովի բազկէ անտի էր սասանեալ։
Իսկ Իդոմենն զՕինոմաւ եհար ընդ պորտ որովայնին,
Հերձ ըզզրահէն կարկառանդս եւ զփորոտին գըղեաց պըղնձին.
Եւ նորա հողաթաւալ անկեալ՝ զերկրէն բուռն հար ափով։
Զըղեաց հան զարդն Իդոմենն զերկայնատարածն ՚ի մեռելոյն,
Այլ ըզզէնս եւս ըզգեղեցիկ չկարացեալ շորթել յուսոցն,
Ի նետից տագնապեալ. քանզի թէպէտ եւ ժիր հոգւովն,
Այլ ոտիւքն՝ ոտիցն անդամք ոչ եւս էին անպակասեան,
Ոչ ՚ի նիզակն իւր վազել, եւ ոչ յայլմէն խուսել ՚ի բաց։
Վասն որոյ՝ յետեւակաւ մարտի հերքէր զօրն անողորմ,
Բայց ոչ դիւրաւ բերէին ՚ի ճակատէն ոտքն ՚ի փախուստ։
Արդ ՚ի նա ՚ի մեղմամբնալն՝ արկ Դէիփոբ տեգ փայլակնող,
Զի մըտեալ ընդ իւր ՚ի քէնս՝ ոխակալէր յաւէրժ ՚ի կիրթ.
Այլ վրիպեաց եւ անդ յայնժամ, եւ հար սլաքաւ զԱսկաղափոս՝
Զորդեակն Ենիալեայ, եւ թափ ընդ ուսն եղ բուռն աշտէն,
Եւ նա գլորեալ ընդ փոշի՝ կալաւ յապուռսն ըզհող երկրին։
Բայց չէր ինչ իրազեկ ահեղագոչն Արէս հզօր
Զի եւրմէ որդւոյն անկելոյ ՚ի զըժընդակ զառ մարտամբերս.
Այլ յՈլիմպեայ գագաթան նըստեալ կայր նա՝ ոսկի ամպովք,
Արգելեալ պաշարեալ, ՚ի խորհրդոցն Արամազդայ,
Ուր եւ այլք դիցն անմահից ՚ի ճակատէն կային ամփոփ։
Արդ նոքա հուպ առ հուպ զԱսկաղափեաւ տային գըրոհ,
Եւ զփայլուն զըլխանոցն յԱսկաղափեայ զերծ Դէիփոբ.
Իսկ Մերիոն յարձակեալ փայլակնընթաց Արեայ հանգոյն՝

Տիգահար զբազուկ նորին խոցեալ, անկաւ անդ 'ի ձեռաց
Երկայնաձեւ սաղաւարտն, եւ ընդ գետնին հընչեաց բոմբիւն:
Խոյացեալ Մերիոնէս անդրէն անգեղ նըշանաւոր,
Ի ծայրէ բազկին խըլեալ ըզհաստաբուռն հանեալ նիզակ,
Խոյս յընկերացն ետ անդրէն խուժբ: Այլ հարազատն իւր Պոլիտէս
Ըզթեւս իւր ըզմիջով արկեալ նորին գըրկատարած,
Յահեղամռունչ 'ի խազմէն կորզեալ եհաս 'ի սրաթեւ ձիան,
Որ 'ի յետ կուսէ մարտի պատերազմին կային նըման
Կատաղետան եւ կառօքն հանդերձ պաճոյճ յորձանելովք.
Որ եւ զինքն ըզգաստահեծ չարալըլուկին տուեալ փնոյին
Յոսսան անդր, եւ արիւնն 'ի գետախոց հոսէր բազկէն:
Այլք կային կըռուէին եւ անհնարին գուժեաց գոռումն:
Անդ Էնեայ յարձակեալ՝ զԱփարեւս Կալետորեան
Զայնիզըն կոյս դարձեալն եհար ըզփող սուր պղընձով.
Գըլուխն անկաւ յայնկոյս եւ զհետ երթայր վահանն եւ սաղաւարտ,
Եւ հեղաւ ըզնովաւ ոգեպահանջ մահուն օրհաս:
Իսկ գետեալն Անտիլոքոս ալէշ 'ի Թոոնէ թիկնադարձոյց՝
Ոստուցեալ խոցեաց ըզնա, եւ բովանդակ խըզեաց զերակն՝
Որ ընդ ողնոյն ընթացեալ թիկունս եւ յաւէն երթայ յանդր.
Եհերձ զայն խապառըպատու, նա 'ի փոշւոյն անկաւ յորսայ՝
Զերկուսին ձեռսն առ սիրուն ընկերակիցսն տարածեալ:
Անտիլոք, աչք իւր 'ի շուրջ, դիմեալ զերծայր յուսոցն ըզզէնսն,
Իսկ տրովեանք, այլ ոք այլուստ՝ շուրջանակի արձանացեալք՝
Կռփէին յասպարսն 'ի լայն՝ խոյասահմանուկ, եւ չմարթէին
ԶԱնտիլոքեայ զմորթ փափուկ մըխել ցրտեւ ժանտ պղընձով:
Զի յամենայն կողմանէ գետնադըղորդըն Պոսիդոն
Յերեաց խուռն իսկ նետից ըզՆեստորի զորդին պահէր,
Որ յոտնխաց չէր ինչ փարատ, այլ 'ի նոսին ցանկարդեալ:
Ոչ նիզակ իւր դադարէր, այլ յամենայն ժամ յարաձօձ
Ընթանայր փաթորկեցեալ, եւ ուշ եդեալ կայր 'ի սըրտին
Կամ հեռուստ զոք հարկանել, կամ դէմ 'ի դէմ գնալ շահատակ:
Սակայն մտաց իւր չէղեն զանխաւ յԱսեանն Ադամասայ,
Որոյ դիմեալ հասեալ մօտ՝ 'ի սայրասուր բախեաց պղընձած
Զասպարին նորա զկուռմբ. այլ Պոսիդոն խափանեչահէր
Բըլթեցոյց ըզպըլպաջն՝ յարեւ քաջին անխնայելով:
Եւ կէս նորա մընաց անդ 'ի վահանէն Անտիլոքեայ
Իբր ըզձող ինչ խանձող, եւ կէսն անկեալ կայր ընդ գետնին:
Ինքն յընկերաց գունդ ընդ կրունկ յորահասէն զերծեալ խուսեաց:
Զհետ պընդեալ փախըստէին՝ եհար տիգաւ Մերիոնէս
Ընդ պորտ նորին եւ ընդ համս, ուր գառնագին քան զամենայն
Անկանի եկեալ Արէս 'ի տառապեալ մահկանացուս:
Անդ վարսեաց ըզնիզակն, եւ նա գըլորեալ զաջին նորուն

Բաղխէր զսաղաւարտակաթնայն, որպէս արծուի զօր 'ի լերինս
Մնգէորդք ուժգին տատանմամբ վարակեալ անձեն բաղնի.
Նոյնպէս եւ սա մերձ առեալ՝ բաղխէր զսա մի, ոչ յերկար,
Մինչեւ մօտ գիւցազն հասեալ Մերիոնէս՝ կորզեալ նհան
Ըզգեղաւորգն 'ի մարտնոյն, եւ զաչըս խուր ծածկեաց խաւար:
Եւ Հելենոս մերձ անցեալ ահագին Թրովն Թրակացեաւ՝
Զծամածիլքն Դէիփիրեայ հարեալ՝ ջախջախեաց ըզգըլխանոյն
Որ գըլորեալ անկաւ յերկիր, եւ յոգոյսենից մարտուցելոց
Առեալ ուրուք զայն եղարձ՝ երբեւ առ ոտոյն Թաւալէր.
Իսկ զաչըս նորուն պատեաց գիշեր խաւարապարք:
Թաղծեցաւ Ատրիդէս Մենելաւոս ահեղագոռ,
Եւ ըղձուր ճօճեալ նիզակն՝ յառաջ մատեաւ բաղաձայնիւք
Ցարքայն գիւցազն Հելենոս՝ որ աղեղամբն ընդ գիրկս եհաս:
Երկոքին զոյգ ըմբռնեցան. նա գեղարդեամբքն տայրատուր
Նիզականեւր ամնել անձգեալ, սա 'ի լարին նետահար.
Եւ անդէն Պրիամեան ընդ նորա լանջս ընկէց ըղնետն
Ի կարասնդըլս զրահին, այլ դառն հերձակին յետըս թըռաւ:
Օրինակ ճռն 'ի լայն հեծանոցէ 'ի կալ մի մեծ
Սեւաթոյր ոլոռունք կամ Թէ սիսեռունք ոստոստեն
Ընդ շըչող հողմոյն շընչով ու 'նդ հարուածս բըրինութեան Թափ,
Այսպէսնաւ 'ի զրահից Մենելաւեայ գեղապաճուճ
Թռնդը առեալ սաստկապէս սլացաւ 'ի բաց դառըն սլաքն:
Իսկ Ատրիդէս զոռ մարտիկ Մենելաւոս ըղձեաց նհար
Իւ ունէր զայնմաշլծն աղեղնաւորը ըզձեռնածոյ.
Եւ Թափ ընդ Թանթն անցեալ յաղեղն՝ անդ վարեցաւ պղընձին սըլաքն,
Ընդ կըրուկ յընկերակացըս գնաց յօրհասէն ապրեցեալ խոյս ետ,
Ձեռն 'ի կախ եւ ընդ նմին 'ի քարշ երթեալ հացին նիզակ.
Զոր մեծամեծն Ագենովր 'ի ձեռանէն հըզեաց նհան,
Եւ պատեաց ըզԹաթն առեւ ճարտարահիւս պարսատիկաւ,
Զոր նորին պաշտօնեայն բարձեալ բերէր հովուին ազգաց:
Պիսանդրոս 'ի Մենելաւ ահեղաշունչ դիմեալ ուղղորդ.
Զոր ածէր ճակատագիր չար 'ի վախճան մահահրաւէր:
Առ քեզ, Մենելաւէ, տապալեալ յաղթեղն անկանել առաջի:
Եւ սոքա երբեւ հասին մօտ առ միմեանս արշաւանօք,
Սխալեցաւ Ատրիդէս, զի առերեւեցեալ վրիպեաց աշտէն.
Իսկ Պիսանդրոս հար զասպար վեհանձնական Մենելաւեայ,
Սակայն ոչ ուժեաց 'ի տապա Թափ ըղղըղծընձն անցուցանել,
Քանզի 'նդդէմ կայր լայն վահանն, եւ ծայրակատուր բեկաւ նիզակն,
Այլ նա 'ի միտս իւր ուրախ եղեւ 'ի յոյս յաղթանակի:
Բայց ձըգեալ Ատրիդեայ զվաղակաւորն արծաթագամ՝
Խաղաց 'ի Պիսանդրոս, որ 'ի ներքոյ վահանին առ
Զգեղաշէն պղընձի տապարն, 'ի ձիթենի յեռեալ մարմին՝

Ցերկոյն, 'ի քերածոյ, եւ 'ի նըմին հաստին յերեսաւս:
Սա զնորան Թաւաքաշ զոլխամոյցին կոփեալ եհար
Ընդ ընթօղ զարդմանակին, եւ նա զձակաւո գիմեցելոյն
Ցաշամէջս 'ի սակ քըթայն, եւ ձարձաւաեալ հերձան ոսկերքն,
Աչքն առ ոտսն արիւնահոս փոշեթաւալ անկան յերկիր:
Կորացաւ 'ի գլորելն, իսկ նա 'ի կուրծսն ոտամբն եդեալ՝
Ձերծ ըզզէնսն 'ի նմանէ եւ սխրապանծ բարբառեցաւ.
Այսպէս ուրեմն թողջիք զերագաձի զանայեանց նաւս,
Ամբարտաւան տրոյացիք, 'ի գըժընդակ խաղմէ անյագք,
Անխիղճք յայլ ելքէ թըշնամանաց եւ յահօթոյ
Որով զհան այպանեցէք, շունք վատշըւերք, եւ ոչ երկեայք
Սըրտիւք 'ի ծանըր վրիժուց որոտընդաստն Արամազդայ
Վանատուրին, այն որ երբեմն աւերեսցէ զբարձըր քաղաքդ:
Որ զնորատէր ամուսին եւ զըստացուածս իմ ըզքաղաւ
Տարապարտ առեալ գնացէք՝ հիւրընկալեալք առ 'ի նմանէն:
Զայրագնեք եւ արդ դարձեալ՝ ըղծավշու նաւատորմիս
Հարկանել հուր սաստակէզ, եւ կոտորել զքաջազն աքեայս.
Այլ դադարեսցէ ժամ՝ լըռեսջիք յազորեղոյդ, թէ եւ մոլեալք:
Արամազդ հայր, յիրաւի քան զայլս ամեն զքեզ գերիմաստ՝
Քան զմարդիկ եւ քան զաստուածս, այլ քեւ լինին այս ամենայն:
Որպէս այժմ իսկ չըհորհուես առնես արանցըս հըպարտաց
Տրովացւոց, որոց ոգիք միշտ անօրէնք չմարթեն բըռնաւ
Ցագենալ 'ի կըռուոյ նըմանամիշտ պատերազմին:
Է յագուրդ ամենայնի, եւս եւ քընոյ եւ սիրոյ իսկ,
Եւ երգոց քաղցրութեան եւ կաքաւուց գերապանծից,
Զորոց ըղձումն առաւել քան զմարտի ոք սիրէ լինել.
Իսկ դոքա տրովադացիքդ անյագելի են 'ի խաղմէ:
Ասացեալ զայս՝ եւ կապտեալ զարիւնոտ զէնսն 'ի մարմնոյն՝
Ա՛ռ առաւ եւ ետ ընկերացն հրաշալին Մենելաւոս,
Ինքն անդրէն դարձաւ դընաց ընդ նախահատակսն խառնեցաւ:
Անդ որդին զիմեաց 'ի նա Պիլեմենի թագաւորին
Հարպալիոն՝ որ սիրելւոյ հօրն եկն ըղհետ 'ի մարտ Տրոյայ,
Եւ այլ ոչ դարձաւ անդրէն 'ի հայրենին իւր 'ի գաւառ.
Զի հասեալ եհար տէգաւ զմէջ վահանին Ատրիդեսի,
Բայց թափ ընդ այն ոչ բաւեալ անցուցանել ըղպղինձն ողջոյն՝
Ցընկերացն անդրէն 'ի դունդ խոյս ետ տալով 'ի մահուանէ,
Աչս ածեալ շուրջանակի՝ մի՛ զմարմինն ոք հարցէ զինու:
Այլ Մերիոն՝ գնացելումն առաքեալ նետ պղընձակուռ,
Հար խոցեաց ըզգաւակն աջակողմեան, եւ եղ սլաքն
Ի հանդիպոյ՝ թափանցանց ընդ աւազաւշտն ընդ ոսկերաւն:
Եւ անդէն ընդդըրձեալ 'ի սիրալիր համհարզաց ձեռս,
Եւ փըչեալ զոգին՝ կեր որդըն տարածեալ կայր ընդ գետին,

Եւ ապիկան Թշնամեաց պետաւորեալ Թամայր ջերմին։
Զընկալեալ մեծամեծքն Պափլագոնացւոց կայրին զնորա,
Եւ 'ի զոյգուղին բարձեալ՝ տարեալ գնային յԻլիոն սուրբ
Տրովադայսկ, ընդ նոսին երթայր եւ հայրն արտասուաթոր.
Եւ չէր վրէժխնդրութիւն ինչ զաւակն իւր որդեկին։
 Այլ ընդ մահ նորա Պարիս 'ի բարկութիւն մեծ բորբոքեալ,
Զի էր հիւր նորին 'ի մէջ բազմամբոխ Պափլագոնաց.
Նորին վասն աղեղնաձգեալ՝ նա ընկէց նետ մի պղնձաձայլ։
Եւքենոր ոմն էր անուն, զաւակ ընտիր Պոլիիդեայ,
Մեծատուն եւ քաջալանջ, 'ի Կորնթոս բնակութեան ունէր,
Որ հրաման կորստաբեր Բախտին յարեաւ եւ եկն 'ի նաւս։
Զի յաճախ ասէր ցնա ծերունին լաւ Պոլիիդոս,
Մեռնել 'ի տան իւրում կրքով օրհասաբեր ախտիւ ընդերմամբ,
Եւ մի նրկուն տրովադեանց լինել առ նաւս աքայեցւոց.
Վասն որոյ՝ եւ 'ի տուգանք պատուհասին աքեանց խորշէր,
Եւ 'ի ցաւոց ախտէ անտի՝ զի մի յաղթ հարցի ցաւովք։
Ընդ ծնօտ խոցեաց 'ի ներքոյ ծնօտին ունկանն, եւ եղ հոգին
Գնաց խաւարն յանդարձսն, եւ նա ընդ խաւար անկեալ։
 Այսպէս սոքա կռուէին իբրեւ ընդհուր բոցավառեալ։
Իսկ Հեկտոր՝ սիրելին Արամազդայ՝ չեւ էր լուեալ
Եւ ոչ հասուցեալ 'ի միտս, թէ 'ի ձախմէ նաւատորմին
Հարուածեալ էին զօրքն, եւ փառքն ազգաց լինէր Թեկրեա.
Այնպէս իմն աշխարհակալն Երկրասասան զարգիւեցիսն
Ըստխալեալ քաջալերէր եւ ինքն անձամբ էր զօրավիգն։
Այլ կայր ուր նախ ոստուցեալ վաղվաց ընդ դուռն եւ ընդ պարիսպ
Փլուզեալ ընկուլ գումարտակս ասպարաւոր դանայեցւոց,
Ուրանօր էին նաւք Պրոտեսիլեայ եւ Այասայ
Առ եզեր ալեխառն ծովուն ձգեալ հանեալ 'ի ցամաքի,
Եւ պատուարն անդ 'ի վերոյ՝ էր կառուցեալ ընդցածագոյն,
Ուր յաւէտ ամենցաց գնացին արք եւ երիվարք։
 Բէովտացիք անդ եւ Յաւնք պնդգրգնաւոր երկայնապզեանք,
Լոկրացիք եւ Փթիացիք եւ Եպէանք պերճապայծառք
Ի նաւաց անտի վանեալ արգելուին զփայլականզնութեան,
Եւ չմարթէին մերժել յանձանց ընթացաւոր զհրացայն Հեկտոր.
Այրընտիրք աթենացւոց, նախամարտիկ յառաջ ձակատ,
Եւ 'ի նոսա Մենեսթեւս՝ Պետէոսեան որդին իշխէր,
Եւ ընդ նմա զնոյին Փիդաս եւ Ստիքիոս եւ Բիաս քաջ.
Իսկ Եպէանց՝ Փիլեան Մեգէս, եւ Դրակիոս եւ Ամփիոն։
Ի Փթիեանց գլխաւոր Մեդոն, եւ Պոդարկէս ժուժկալն 'ի կռիւ.
Եւ էր Մեդոն հարազատ եղբայրակին Ոյլեւսեայ,
Նոսայ եղբայրութիւ, սակայն բնակէր 'ի Փիլակէ
Հեռի յերկրէն հայրենի, վասն զի էր այր մի սպանեալ,

Զեղբայր մօրուքն Երկաթակեայ՝ զոր Ոլիմպոս տանէր 'ի կէս․
Իսկ միւսն այն Փիլիմոնեանն Իֆիկլեայ էր նա զաւակ։
Արդ տղայ Փթիացւոցն մեծանձանց վասակաւք յաւանջեայ՝
Համազգումնդ ընդ Բելլերոփոնու մարտ 'ի վերայ գինեցն նաւացն։
Իսկ Էաս, Ոյլեացին Ձեռն ժողովանձնեալ՝ ոչ էնչ ընթաց
Ցեսայ Տելամոնեան մեկնէր 'ի բաց, եւ ոչ զայգն էնչ․
Այլ զօրէն խելին յանդգն ղեկարծր արօր սեաւ եզանց հարկել,
Միասուռունչ ամուլք ձորցն, եւ զեռեկեղաց նոցին զընթացս
Վխճէ քերան յորդառատոյս, եւ լուծն, եւեթ ողորկասարը
Ի միջի նոցա խաղաղոց անհեռալ մեկնէ զայնս 'ի միմեանց
Ցընթանալն ընդ ակօսն, եւ պատառէ երկիրն յատակ․
Այսպէս տղայ միահեծ անցեալ կային հոսալ առ խոխոպս։
Այլ ընկերք Տելամոնեան քաջքն բազումք եւ կորովիք
Գնային զօրք ընկերակար փոխանորդեալք զասպար նորան,
Յորժամ 'ի խոնջ եւ 'ի քրտունք ծունկք նորա հարկանէին։
Բայց չէին Լոկրացիքն ընդ Ոյլեայ մեծանձն որդւոյն,
Զի նոցա սիրտ չհանդուրժէր յետակայել մարտի զուարար,
Զի պղնձածոյլ զրահանոյք եւ ձիարարշ՝ չէին նոցա,
Նա եւ ոչ իսկ ասպարք քաջատարոյրք, ոչ հացի տեգք,
Այլ յաղեղունս յուսացեալ եւ յասր օգեալ 'ի քաջուղար
Ցիլիոն հետեւեցին, որովք ձգեալ թանձրասպարան՝
Խորտակէին ընդարձակեան գունդավարակալացն բազմագունդս։
Անդ նոքա՝ Ճարտարագործ նահատակեալ զինուքն յայնժամ՝
Կռուէին ընդ Տրովացւոց եւ ընդ Հեկտոր պղնձազինու․
Իսկ սոքա 'ի թիկանց կուռէ զանխուլ հարկանէին,
Եւ Տրովեանց՝ ոչ եւրս մարտ յուշ առ նետերն զայլը խուճապ։
Անդ յայնժամ 'ի նաւացն եւ 'ի վրանաց յայժ չարագոյն
Տրովացիք յետս յԻլիոն 'ի հողմահար աւանէն գնային,
Թէ չէր առ քաջն հասեալ Հեկտոր Պուղիդամաս եւ ասացեալ․
Հեկտոր, անհնազանդն ես դու 'ի լսել բանից խրատու․
Քանզի շնորհ իսկ ետ աստուած քեզ գործ մարտի պատերազմի,
Վասն այն՝ եւ խորհրդով զիտաւն լինել կամիս քան զայլս․
Այլ զամենայն ինչ երբեք 'ի քեզ զրաւել կարասցես ոչ։
Զի ետ աստուած՝ ումեմն ըզգործ մարտի շնորհեաց պատերազմաց,
Այլում զկաքաւելս պարուց, միւսումն զերգս եւ ըզքնարս,
Եւ միւսոյն դարձեալ 'ի լանջս եդ Արամազդ որոտագոչ
Միտս բարի հանճարոյ՝ յոր վայելեն բազում մարդիկ,
Եւ զքաղաքս կեցոյց, եւ է ինքն նա իսկ իմացեալ։
Սակայն ես ասացից ըզլաւագոյնն ինձ թուեցեալ․
Քանզի զքեւ պատերազմ յամենուստ բոց առեալ վառի,
Եւ Տրովեանքն մեծանձինք, զորս մի'ատ պատնէշն 'ի նաւացս անկեալք,
Կէսք զէն 'ի ձեռս 'ի բաց կան, այլք մարտին 'ի Ճակատու՝



Digitized by Google

Սակաւք յոյժ ընդ բազմամբ՝ ըմբռնաւորքըն ցիր ընդ ցիր ։
Այլ տակաւ յետոյս նահանջ՝ անդրէն ձայնեա զքաջս հասարակն ,
Եւ առաջ զամենայն առացուք 'ի մէջ ուղիղ խորհուրդ ,
Թէ 'ի նաւուցն բազմաթիաւորս արդեօք արժան է հորդան տալ ,
Կամեսցի աստուածոյ պարգեւել յոյժ մեզ յաղթութեան ,
Թէ թերեւս 'ի նաւաց դարձցուք տատուսա յետս ողջանդամք ։
Ցոյժ խիթամ՝ դուցէ աքեանք մեզ զերեկեանն հատուցեն վրէժ ·
Զի անդէն առ նաւկներոյն կայ նըստի այր անյագ 'ի մարտ ,
Զոր զեռ եւս 'ի կըռուոյ չհամարիմ բնաւ լինել ձեռնթափ ։
Զայս ասաց Պուղիդամաս , Հեկտոր ընդ բանն հաճեալ անվրէպ՝
Ի կառացն իսկ եւ իսկ զինուքն հանդերձ վաղեաց յերկիր ,
Եւ առ նա ձայնարկեալ՝ զերագաթռիչ խօսեցաւ բանս ·
Աստանօր , Պուղիդամաս , կալջիր դու զքաջս առ հասարակ ,
Իսկ իմ անդր ընթացեալ պատահեցից պատերազմին ,
Եւ փութով դարձայց այսրէն՝ քաջիկ նոցա տուեալ պատուէր ։
Ասաց եւ արագացու խորհէ ըզլեռանն ինչ ձիւնեղէն ,
Աղաղակ հարեալ՝ թռուցեալ ընդ տրովացիսն ու'նդ օգնականս ։
Իսկ սոքա՝ յարխանեանն 'ի Պանթոյեան Պուղիդամաս
Գրոհ եդուն համօրէն՝ զհեկտորին ձայն լըսեալ անշուշտ ·
Իսկ նա խնդրէր՝ ըզԴէյփոբոս եւ զՀելենոս ըզբրուան արքային ,
ԶԱդամաս Ասիածին եւ զԱսիոս Հիրտակեան ձեռն՝
Ընդ նահատակն երթայր գայր՝ խնդրելով թէ ուր գըտանիցէ ·
Եւ չեգիտ ըզնոսին՝ ոչ անվիրաս , ոչ անկորուստ ,
Այլ կէսք 'ի վերջ կոյս նաւացն աքայեցւոց առ նոցին ձեռն
Ոգեսպառք 'ի ձեռաց արգիւացւոցն անկեալ գնէին ,
Այլք էին նետահարք 'ի պարըսպին եւ վիրաւորք ։
Ցահեկէ տրտմութեամբ մարտին եգիտ անդէն եւ անդ
Ըզգեցուցեալն Ալեքսանդրոս՝ զայրն Հեղինեայ վարսագեղին ,
Զի քաջալերս ընկերացըն տայր՝ վառէր 'ի պատերազմ ·
Եւ կացեալ մերձ առ նա՝ խօսեցաւ բանս զըրպարտելի ·
Չէք Պարիս , չըքնաղատես , կնամոլիկ , խաբդատանիչ ,
Ո՞ւր Դէյփոբոս քեզ եւ բազուկ Հելենոսի արքային ,
Եւ Ասիանն Ադամաս , եւ Ասիոս Հիրտակեան ձեռն ,
Ո՞ւր եւ քեզ Օթրիոնեւս · արդ համօրէն բարձր Իլիոս
Կործանէ հիմն 'ի յատակ · արդ սատակումըն քեզ անշուշտ ։
Եւ նըմա պատասխանի Ալեքսանդրոս աստուածակերպ ·
Հեկտոր , քանզի զանմեղըն կամ է քեզ պարսաւորել ,
Այլ ուրեք հեղեալ թերեւս տալ յոյլ զբաղեալ 'ի կռիւ ,
Բայց ոչ թէ մայրն ամբիկար ամենեւին ծընեալ է զիս ։
Զի առ նաւս յորմէհետէ զընկերականացն յարուցեր մարտ ,
Կամք աստէն եւ անհանդիստ ընդ դանայեանցըն մաքառիմք ։
Իսկ ընկերքըն այնոքիկ զոր դու խնդրես՝ կոտորեցան ·

Դեղնափառ եւ ապաքայլն Հոլենաւ կորով եւեթ
Ի բաց եղեն վիրաւորք յերկայնաբաուն նիզակաց անդր
Երկրորդին 'ի թաթ ձեռին, այլ Զօրաւանեանն հետքեաց ըղձմանց ։
Արդ վարեա՝ յոտ ուրեք սիրտ քո եւ հոգի առաջ քեզ հրաման,
Եւ մեք յօժարափոյթ զհետ եկեսցուք, զի ոչ կարծեմ
Կարօտել մեզ քաջութեամբ, որչափ իցէ կար զօրութեան ։
Իսկ 'ի վեր քան ըզկար՝ խիզախելումն իսկ չէք կրաւել ։
Ի սոյն յայս բան գիւցազն հաճեաց ըղձմունս եղբօր իւրոյ ։
Եւ յարեան զընթացս ուր մարտ էր սաստկագոյն եւ զուգաւորած,
Ուր խուռնքըն Կեբրիոն եւ հրաշալին Պոլիդամաս,
Եւ Փալկէս եւ Որթէոս եւ դիցանման Պոլիփիտէս,
Եւ Պալմիս եւ Ասկանիոս եւ Հիպոտիոնեան որդին Մորիս ։
Որ եկին յարգաւանդուտն Ասկանիոյ հեռաւորէ
Ցառաջնում աւուրն, եւ յայնժամ Արամազդ գրգռեաց 'ի կռիւ ։
Եւ սոքա մրրկի հանգոյն ուժգին հողմոց ընթանային՝
Որ գայ 'ի դաշտ անկանի յորոտմանց հօրն Արամազդայ,
Եւ գոռգոռ ահագնացայտ խառնել 'ի ծով յառնեն կոհակք
Դեզադեղ կուտակեալք 'ի բազմագոչ ծովուն անդընդոց,
Փրփրափայլք՝ փըքացուցեալք, այլք զայլս առեալ միմեանց ըզհետ ։
Այսպէսնակ տրովադացիք կուռ զինուորաց խառնեալ ընդհետ՝
Փայլատակեալք 'ի պղնձեա խաղային զհետ զօրավարացն ։
Եւ Հեկտոր Պրիամեան՝ մարդակոտոր Արեայ հանգոյն՝
Առաջնորդէր՝ առաջի զբոլորածիրն ասպար կալեալ
Զկարծրակուռն մորթովք եւ զբազմաթեթեւ պղընձապատ ։
Եւ զերանաւորքըն շարժէր փայլակնացայտըն սաղաւարտ ։
Եւ ընդ այս կոյս եւ ընդ այն 'ի փորձ մատչէր առընթերթի,
Թէ տեղի տայցեն նորա գնդիք՝ 'ի խաղալն ընդ վահանաւն ։
Այլ ոչ սակայն խարխարեաց զոգին 'ի լանջս աքայեցւոց ։
Եւ Էաս նախ մեծամեծս ընթացեալ առ նորին գրգռէր ։
Ցիս մատիր, քաջդ, Էր այդպէս աքայեցւոց արկանես ահ ։
Չեմք ինչ անհմուտ եւ անտեղեակ պատերազմի,
Այլ խիստ քըրքոմքն Արամազդայ եղեալ նկուն աքայեցիքս ։
Արդարեւ ոգիդ 'ի քեզ յուսայ նաւացս անկել աւեր,
Սակայն են եւ մեր բազուկք 'ի պատրաստի վանել 'ի բաց ։
Վաղագոյն՝ յանեւրկեայս՝ քաղաքըդ ձեր գեղեցկաշինակ
Ի ձեռաց սաստի մերոց առեալ աւարտ վարեսցի ։
Եւ քեզ նիզեան մերձ լինել ասեմ ըղձանօք յոր փախուցեալ,
Աղերս հօրն Արամազդայ եւ անմահիցն արկցես այլոց,
Զի պերճաբաշ երիվարքըդ քան զբազէս լիցին արաթռիչ՝
Ի քաղաքըն ըզքեզ տանել փոթորկելով զփոշին ընդ դաշտ ։
Ընդ խօսել նորա զայս՝ թռչեաւ զգըլխոյն հաւ աջողակ՝
Արծուի բարձրապարոյ, եւ ձայն եհարկ զունդն աքայեան

Ի հմայեցն առնել խրախոյս, եւ մեծն Հեկտոր կըրկնեաց ընդդէմ.
Էյաս, ունայնաբան յոխորտապանծ, զի՞նչ խօսեցար ·
Տա՜յր ոք ինձ՝ այնպէս որդի վահանակրոջն Արամազդայ
Լինել զաւուրս ամենայն, եւ նազելւոյն Հերայի ծնունդ,
Եւ պատիւ գըտանել իբր Աթենասայ եւ Ապո՛լոն,
Որպէս օրս այս ածիցէ արգիւացւոց հանուրց ոճիր ։
Եւ դու ի նոցին ընդ նոսին սատակեսցիս, թէ իշխեսցես
Կալ մընալ երկայն տիգիս՝ որ յօշեսցէ զմարմինդ աւոյդ,
Եւ ըզշունս եւ ըզթըռչունս յագեցուսցես ըզտրովացւոց
Ճարպովդ եւ շաղղովդ զաքայեցւոց անկեալ նաւուք ։
Զայս բարբառ արձակեալ՝ կարապետէր, նոքա գոռհիւ
Զհետ փութէին ահագին գոչմամբ, յետուստ գոչէր ամբոխն ·
Եւ անդուստ արգիւացիք ձայն առ նոցա կըրկնէին ձայնս,
Արութեան 'ի մտի՝ մնալով արտաքնանց քաջացն խուժելոց ։
Աստի անտի հասանէր գոռք յարփին ու'ի նշոյլս Արամազդայ ։



Digitized by Google

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Նեստորի առեալ զխօշիւն մարտին՝ ելանէ գնայ առ Ագամեմնոն խորհել զվտանգէն իւրեանց. նա գործեալ խորհուրդ տայ 'ի փախուստ ածանցարել. Ոդիսեւս ընդդէմ կայ, Դիոմեդէս խրատ տայ՝ վիրաւոր իշխանացն ելանել երեւել բանակին 'ի խրախոյս մարտիկացն, անդուստ եւ Պոսիդոն եւս քաջալերէ զնոսա։ Ցայնմ վայրի առեալ Հերայի յԱստղկանէն զլանջագեղ կամար նորա՝ զարդարեալ երթայ առ Արամազդ յԻդա լերին՝ խաբել զնա 'ի ձեռն Քնոյ։ Մինչդեռ նա 'ի քուն առնէր զայր իւր ընդ իւր, Պոսիդոն համարձակ զօրավիգն կայ Յունաց 'ի հարուածս տրոյացւոց, մինչեւ Հեկտոր անդամ հարկանի սաստիկ քարիւ 'ի Տելամոնեանն Էայայ, եւ կիսամահ բառնան տանին զնա 'ի քաղաքն կոյս։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ԱՐԱՄԱԶԴԱՅ ԽԱԲԿԱՆՔ

Ոչ զանխտուլ եկաց խօչիւնն 'ի Նեստորէ, Թէպէտ յումպ էր,
Այլ բանեւք առ Ասկղեպեանն՝ երագախօս բարբառեցաւ.
Տես դիւցազնդ Մաքաւոն, երբս այս զինւորդ վերջանայեցին.
Զօրացաւ գոչիւն առոյգ պատանեկաց առ նաւէններոյն:
Սակայն նիստ դու աստանաւքն, արբ ըմպելիդ սեւատեսակ,
Մինչեւ ջերմին լոգարանս Հեկամեդէ գեղեցկածամ
Ջեռուցեալ լուասցէ 'ի քէն զարիւնն եւ զապաժոյժ.
Իսկ երթեալ 'ի դիտանոցն՝ եղէց փութով ես խելամուտ:
Զհետ բանիցն՝ եբարձ զասպարն արուեստակերտ զորդւոյն իւրոյ
Զձիավարժ Թրասիմեդեայն՝ որ կայր շողայր պղնձածին 'ի վրանին.
Իսկ նորա՝ առանձնեալ ըղհօրն իւրոյ վահանն էր եւ գնացեալ:
Եւ զնիզակն առեալ հզօր՝ զի սայրասուր սլաքեալ պղնձիւ,
Ել եկաց ըստ խորանին, ետես անդէն զանմտութեան գործ,
Աղմկեալս ըզտասնն, եւ 'ի Թիկանցն հալածեալ խուճապ
Ըզգաբրակեանսն մրամրեալս, եւ զաքայեանց քանդեալ պատնէշ:
Որպէս յորժամ մեծածաւալն մըթագին խուլ կոհակք,
Գուշակեալ այնիւ գշըրշող այսոց զընթացս երագաձիգ,
Եւ անձեւ է աստակաւքն՝ յայս եւ կամ յայն կոյս անթռեալ,
Մինչեւ հողմ իջց տաք եւ սպառ յԱրամազդայ իջանիցէ.
Այսպէս ծերին մտերոյն 'ի միտս իւր հերձեալ յերկուս,
Թէ 'ի գումարն երթիցէ երագաձի դանայեցւոց,
Թէ առ դեպս Ատրիդեան Ագամեմնոն հովուն ազանց:
Եւ այս նըմա 'ի խորհրդոցս իւր օգտակար երեւեցաւ,
Գնալ յԱտրիդ. իսկ նոքա մարտիւ զմիմեանս սատակէին,

Եւ պղնձին անվրկանդ զմարմնովք իւրեանց շուրջ զանգաչէր
Ի զարկուածըս սուսերացն եւ գեղարդանցըն երկսայրից ։
Նեստորի՝ Թագաւորինըն գիւցազնութիւնք գիպան 'գառաջ
Ի նաւացն ելեալք 'ի դուրս, որ վիրաւորքն էին պղնձով,
Տիդեանն եւ Ոդիսեւս եւ Ատրիդէսն Ագամեմնոն ։
Քանզի յոյժ մեկուսի քարշեալ կային նաւքն 'ի կղզւոյն
Ձըսպիտակ ծովուն ափամբ. զի առաջինքըն մինչ 'ի գիւրն
Էլին հանեալ, եւ զեւելոք նոցին պատուարն էր կառուցեալ ։
Զի եւ չէր ինչ չէր հընար Թէպէտ եւ լայն ծովեզերին
Զամենայն տանել ըզնաւս, եւ նեղէին զօրքն 'ի յանձկի,
Ցայն պատճառ՝ աշտիճանեալ ձգեալ էին, լըցեալ ողջոյն
Զերկայն բերան ծովափին՝ որչափ տանէր ծագէ 'ի ծագ ։
Արդ սոցա ցանկացեալ 'ի տես խաղմին եւ ճակատուն՝
Ի նիզակն յեցեալ գնային կուռ, եւ ողիքն 'ի լանջս իւրեանց
Տըրտմագին էին յոյժ. որոց դիպեալ ծերըն Նեստոր
Ըզախրտա 'ի լանջըս նոցին զարհուրեցոյց զաքայեցւոց ։
Եւ առ նա բարբառեալ ասէ արքայն Ագամեմնոն .
Ո՛վ Նելեանդ Նեստոր, աքայեցւոց պարծանքըդ մեծ,
Հի՞մ Թողեալ ըզպատերազմըն մարդածախ՝ այսր հասեալ գաս ։
Կասկածեմ՝ գուցէ հըզօրն Հեկտոր ըզբանն 'ի լըռումն ածցէ
Զոր երբեմն ըսպառնացաւ յատեան տրովեանց ճառամացեալ,
Մի դառնալ 'ի նաւաց աստ անդրէն յետս յիլիոն՝
Մինչ չեւ հըրձիգ արարեալ զնաւսն եւ զմեզ սպանեալ անգէն .
Այսպէս նա ճառ արկանէր, արդ ամենայն 'ի գլուխ երԹայ ։
Ո՛վ դիք, աՀա եւ այլ աքայեցիքս ատոյգաբարձք
Ոխակալ ընդ իս եղեալ 'ի սիրտս իւրեանց իբր Աքիլլէս՝
Ոչ կամին կալ կռուել յետուստ կուսէ նաւատորմին ։
Եւ նըմա պատասխանի Նեստոր ասպետըն Գերենեան .
Արդարեւ խակ այդպէս յարգիւնս եկին, ոչ այլ ինչ այդ
Ամպորոտն իսկ Արամազդ ինքնին փոխել ինչ զիտացէ ։
Զի պատնէշ պատուարս տապալեցաւ՝ յոր յուսայաք
Նաւակներոյս եւ մեզ ինքեանց լինել անուր ապաւէնի ։
Իսկ սոքա զերադ քաջաբեկքս անդուլ մըղէն մարտ անխուէր,
Մինչեւ ո՛չ եւս իմանալ, Թէպէտ եւ մանըր մըտ դիցես,
Ցորմէ կուսէ խուճապեալ տագնապեցին աքայեցիք .
Այնպէս խառըն կոտորին, եւ աղաղակն յերկին հըցի ։
Աղէ մեք տեսցուք խորհուրդ, Թէր այժմ երագ լիցի վըճար,
ԵԹէ միտք են ինչ կարող. չասեմ 'ի կռիւ մըտանել մեզ,
Զի չմարԹի ուրեք երբեք վիրաւորի տալ պատերազմ ։
Եւ առ նա կըրկնեաց անդրէն արանց արքայն Ագամեմնոն .
Քանզի, Նեստոր, ըզնելոք նաւացս 'ի վէգ մարտուցեալ կան,
Ոչ պարիսպըդ կառուցեալ եւ ոչ Թէ փոսդ օգնեցին ինչ,

Ցոր բազում եղեն աշխատ դանայեցիք յոյս 'ի սրբոց
Նուէկներոյն եւ անձանց լինել ամուր եւ տոկուն.
Այսպէս ինչ գերազօրին Արամազդայ հաճոյ թուեցեալ՝
Անանուն յԱրգոսէ կորընչել աստ աքայեցւոց։
Գիտէի մինչ մրտադիւր դանայեցւոց կայր զօրավիգն,
Իսկ զարդիս տեսանեմ՝ զի զտոսա զոյգ դիցն երջանկաց
Փառաւոր առնէ, եւ զմեր կապեաց ըզձեռս եւ ըզկորով։
Այլ եկայք, որ զինչ առնեմ յանձին կալցուք ամենեքեան.
Որ միանգամ հուպ 'ի ծովս յառաջակարգք հանեալ կան նաւք,
Քարշեալ զամենայն արկցուք 'ի ծովս աստուածային,
Եւ 'ի խորս անդ խարըսխեալ, մինչեւ գայցէ գիշերն անմահ,
Եթէ եւ յայնժամ ինչ կացցեն արտաքսացեալք 'ի կռուելոյ,
Ապա եւ զայլ նաւատորմն առ հասարակ առեալ արկցուք։
Զի եւ ոչ գիշերախառն առ 'ի չարեաց փախուստ է ամօթ.
Լաւ է զերծուլ 'ի չարէն փախըստական, քան ըմբռնիլ։
Հանճարեղն Ոդիսեւս սաէ առ նա խոժոռադէմ.
Որպիսի բան, Ատրիդէս, ընդ ատամանցդ եւ թռեաւ ցանկ։
Չուառական, երնէ այլում կայիր դընդի հրամանատար,
Եւ ոչ մեզ ինչ իշխէիր՝ ոյց Արամազդ ետ յանդ հանել
Դըժընդակ պատերազմունս 'ի տղայ տիոցս եւ յալեւոյթ,
Մինչեւ մեք ամենեքին բոլորովին ըսպառեսցուք։
Այսպէս իմն արկեր 'ի միտ, ըզլայնուղին տրովեանց քաղաք
Լըքանել թողուլ՝ յոյր սակըս տառապեցաք բազում երկամբք։
Լռեա լեր, մի եւս ոք այլ յաքայեցւոց լուիցէ զայդ բան,
Զոր եւ ոչ 'ի բերան ոք առնուցու՝ որ այրն իցէ,
Եւ գիտիցէ 'ի միտսին խօսել առողջ բան կատարուն,
Եւ իցէ մականակիր, եւ զօրք ըզհետ գնայցեն այնչափ,
Որչափից դու 'ի վերայ թագաւորես արգիացւոց։
Եւ արդ այժըմ պարսաւեմ զոր պատմեցեր զմըտացդ խոհս.
Զի հրաման տաս 'ի խառնուրդ հասեալ մարտի պատերազմի՝
Զգեղատախտ նաւսն արկանել 'ի ծով, զի յոյժ տրովեանց անձկումն
Ի գլուխ երթեալ յանկեցի նոցին արդէն իսկ յաղթողաց,
Եւ 'ի մեզ սաստկումն անկանիցի չարախառնաժամ։
Զի յածել քաշեսցին 'ի ծով, ոչ եւս աքեանք կայցեն 'ի կռիւ,
Այլ զաչս 'ի բաց դարձուցեալ՝ տեղի տայցեն 'ի ճակատէն.
Ցայնժամ քո խորհուրդդ յեղեալն լինիցի, ազանց իշխանդ։
Եւ անդրէն պատասխանի արքայն արանց Ագամեմնոն.
Ո՛վ Ոդիսեւս, զիս կարի յոյժ հարեր ծանր սաստիւդ.
Սակայն ոչ եթէ ես յակամայ կամս ինչ տամ պատուէր
Զգեղատախտ մակոյկս 'ի ծով ձըգել որդւոյդ աքայեցւոց։
Արդ լիցի ոք ցուցանել քան զայս խորհուրդ ինչ պիտանի,
Երիտասարդ թէ հին աւուրց, ըզըղձմտութեամբ ողջունեցից։

Խօսեցաւ ընդ նոսա Դիոմեդէսն ահեղագոռ ·
Մերձ է այրն, ոչ խնդրեսցուք յերկար, լուել թէ կամիցիք,
Եւ մի քինու յաշաղեալ անզօսնեսջիք իւրաքանչիւր,
Յայն 'ի դէմս՝ որ զի ամօք կրտսերագոյն եմ 'ի մէջ ձեր :
Այլ 'ի հօրէ 'ի քաջէ պանծամ եւ ես լինել սերունդ,
Ի Տիդեայ՝ զոր հողակոյտն անդ 'ի Թեբէ խաղաղեաց :
Զի երեք Պորթեւսի ծընան որդիք ընտրելականք,
Ի Պլեւրոնի բնակաւորք եւ 'ի բարձունն Կալիդոնի,
Ագրիոս եւ Մելաս, եւ էր երրորդ Իննեւսն ասպետ,
Հայր իմոյ հօրն, արութեամբ գեր 'ի վերոյ նոցունց անցեալ :
Այլ սորա մնացեալ անդէն, հայրն իմ յԱրգոս բնակեաց յաջսոր ·
Քանզի այս Արամազդայ եւ աստուածոցն այլոց էր կամ :
Եւ ած կին 'ի դստերաց Ադրեստոսի, եւ նստեալ կայր
Յընչաւէտ տանն, եւ էին իւր անդք յոլովք ցորենաբերք,
Եւ բազում էին գըրաստք շուրջանակի գարատանեաց,
Եւ խաշինք էին յոգունք, եւ զանցանէր 'ի սէգ նիզակ
Զհամօրէն աքայեցւովք · զոր ձեզ լուել զայս հաւաստեաւ :
Եւ արդ մի սա վատազգիս զիս անմարտիկ համարելով
Խոտիցէք զյառաջադրեալ բանս որ ցուցից ըստ ուղղութեամբ :
Օ՛ն եկայք, թէպէտ եւ խոցք, գնասցուք 'ի կռիւն առ վըտանգին,
Անդ ապա 'ի նետից կացեալ բացէ խաղմին ընթեր,
Զի մի՛ վէրս 'ի վերայ վիրաց գուցէ ոք առնուցու,
Խրախուսեալ յորդորեսցուք զայլս որ արդէն ըստ կամս անձանց
Ըստ մըտաց գեւրի անցեալ կան մեկուսի, մարտընչէին ոչ :

Զայս ասաց, եւ ունկն եդեալ նոքա մտադիւր հաւան եղէն ·
Խաղացին գնացին, եւ զլուխ կայր պետն արանց Ագամեմնոն :

Ոչ վրիպեաց յականէ սքանչելափառ Գետնադղորդն,
Այլ մատեաւ եկն առ նոսա՝ հնօրեայ առըն հանգոյն,
Զձեռանէն կալեալ զաջոյ զԱգամեմնոն Ատրիդեսի,
Եւ յանդուգնէ կարդացեալ՝ բարբառեցաւ արագաթեւ բանիւք ·

Ատրիդէս, այժմ ո՛ն եւ ո՛ն Աքիլլէսայ սիրտըն ժանտաժուտ
Խայտայ 'ի լանջս իւր՝ գիտեալ զաքեանց նախճիրս եւ ըզփախուստ,
Որ զի չէք ինչ 'ի նմին ըզգօնութիւն եւ ոչ խոհն մի,
Բայց ինքն այսպէս կորիցէ, աստուած նըկուն արասցէ զինքն :
Իսկ ընդ քեզ՝ ոչ մինչ 'ի բուռն ցասմամբ են դիքն երջանիկք ·
Այլ տրոյեանցըն վերըստին ըսպարապետք եւ առաջնորդք
Ի փոշի փոթորկեսցեն ըզդաշտըն լայն, եւ դու տեսցես
Փախըստեայ զնոսին յաստանն 'ի նաւէներայդ եւ 'ի վըրանաց :

Ասացեալ՝ գոչեաց ուժգին՝ յարձակ յարձակ զինեալ ընդ դիւրն ·
Եւ որչափ ինչ ինն հազարք կամ հազարք տասն հարկանեն գոռ
Արք 'ի մարտ պատերազմի յարեսական խաղմեալք գուպարու
Զայն ըզձայն չափ 'ի լանջացն ընկէց աշքայն երկրասասանն,



Digitized by Google

Եւ մէն միում յազգայնոց կորով տատանիկ ելեց 'ի սիրտ՝
Կալ անդուլ անհանգիստ 'ի ճըգնութիւն մարտակրութեան։
Իսկ ռազմավարն հերոս յՈլիմպոսին կացեալ 'ի գլուխ,
Հայեցեալ եւս աչօքն, եւ իսկ եւ իսկ ծանեաւ անդէն
Զտայգըրն իւր եւ զհարազատ, զի գունն եղեալ օժանդակէր
Ցայն 'ի սաղմ փառաւորութեան, եւ 'ի հոգին իւր ցընծայաւ։
Իսկ զԱրամազդ յերկնաբերձ ապարանից Իդայ գագաթն
Եօսս նըստեալ, զատելըն եւ զզըժտաղըհին սըրտի իւրում։
Ած սոսա խորհուրդ ընդ միտ աչեղն հերոս շըքեղաշուք,
Ի՛բր ըղմիտսըն գողասցի զասպարակիրն Արամազդայ։
Եւ այս նշմա 'ի սըրտին Թուեցաւ խորհուրդ համձարեմաց,
Եղանել զընթաց յԻդա՝ պաճուճեալ զանձն համակ 'ի զարդ.
Զի Թերեւըս ցանկասցի ննջել սիրով առ իւր մարմնին,
Եւ ինքն 'ի նմա քուն մի քաղցր եւ անուշակ հանգըստաւէտ
Հեղուցու զարտեւանանցն եւ ըզմըտօքն ըզգաստութեան։
Անց զընթաց յառագաստըն զոր շինեալ սիրուն որդւոյն՝
Հեփեստեայ, եւ հաստատեալ զըրուռն 'ի դրանդըսն պատշաճեալ
Ի ծածուկ փականօք՝ զոր այլ ոք ոչ բանայր 'ի դէպ։
Մըտեալ անդըր սորա՝ զլուսապաճոյճ զըրունըսն եդ։
Անապական ծորանօք 'ի անէնչալի նախ 'ի մարմնոյն
Զըղջեաց զաղտն ամենայն, եւ օծաւ յիւղ պարարատութեան՝
Ցաստուածային եւ յանոյշ որ կայր առ իւր բուրաստանութ,
Որոյ'նդ շարժելն եւեթ 'ի տաճարն Արամազդայ 'ի պղընձահիմն՝
Ընդ երկիր համօրէն եւ ընդ երկին զընայր շողքն։
Նովին սա զըլքնաղապեղն օծեալ մարմին, զհերսըն սանտրեալ,
Իւրովին մատամբք եհիւս փողփողուն խոպոպըս վայելուչ՝
Աստուածեղէնս՝ հոտաւէտս՝ յանմահական գըլխոյն ծաւալս։
Զանուշահամ արկաւ խալայն՝ զոր Աթենաս կոկեաց նըմա
Զարդարեալ անկեալ 'ի նմին ճարտարաձիւս ճամուկս յոլով.
Եւ պընդեաց առ լանջօքն՝ ոսկեղէնօք զայն ճարմանդիւք։
Ած ընդ մէջ ըզգօտին գեղապըճնեալ 'ի ծոպս հարիւր,
Եւ ըզգինդըսն յականջացն 'ի գեղածակ բոլթակսն եդեւ
Զեռակնեայսըն, գյօրինեալս. եւ փայլակէր շընորհ բազում։
Ի վերուստ՝ վեհ գեղանոյշըն շղարշատեւ արկ գըլխաշուք
Գեղազէշ եւ նորահիւս, արեւափառ ազնուակ փայլուն.
Եւ 'ի ըմնջ ոտիցըն Թաւթս ըզգեղեցիկ կապեաց կօշկան։
Իսկ յորժամ զմարմնովն արկաւ զամենայն զարդ պաճուճանաց,
Ել զընթաց յառագաստէն, եւ միայնակ կոչեալ զԱստղիկ
Մեկուսի յայլ աստուածոց՝ զայս առ նա բան բարբառեցաւ.
Լըւիցես ինչ ինձ արդեօք, սիրուն զըստրիկ, զոր ասիցեմս,
Եւ կամ մի Թէ զըլլասցես, ընդ այն յոխորտ սըրտամըրտեալ,
Զի ես՝ դանայեցւոց, դու տրովադեանց կաս 'ի Թիկունս։

Եւ նըմա պատասխանի Արամազդայ դուստրըն Աստղիկ.
Մեծարոյդ աստուածուհի, Հերա, մեծին Զըրուանայ դուստր,
Աղէ ասա զոր խորհեաց, 'ի կատարել սիրտս յօժարէ,
Թէ կարող եմ վըճարել, եւ թէ հնարին իցէ ինչ այն:
Եւ առ նա պատկառելին Հերա նենգաւ բարբառեցաւ.
Տուր ինձ այժմիկ ըզսէր եւ ըզտըռփումն որով պարտես
Ըզբընաւ անմահսըն դու եւ ըզմարդիկ մահկանացուս:
Քանզի այց գընամ առնել 'ի բիւրաբեր երկրի սահմանս,
Եւ առ ծընօղըն աստուածոց Ովկիանոս, եւ մայր Տեթիս,
Որ բարւոք զիս սընուցեալ 'ի տան իւրեանց դայեկեցին
Ընկալեալ 'ի Ռէայ, մինչ ըզԶըրուան գոռողն Որմիզդ
Ի ստորին անդնդարանս ընկէց երկրի եւ անբեր ծովուն:
Ըզնոսա գնամ տեսանել եւ զանվըճար գատել պայքարսն,
Որ յերկար ժամանակօք ահա հեռացեալ կան 'ի միմեանց
Ցանկողնոյ եւ 'ի սիրոյ, զի բարկութիւն յոգւոյն անկաւ:
Եթէ զսիրտսըն համոզեալ ածեալ բանիւքս 'ի հաշտութիւն
Ցանկողինսըն դարձուցից զուգաւորել սիրելութեամբ,
Միշտ նոցին սիրելի եւ նուաղելի անուանեցայց:
Կըրկնեալ առ նա վերըստին ասէ Աստղիկըն ծաղրասէր.
Չէ ինչ մարթ եւ ոչ օրէն՝ լինել 'ի քո բանիցդ յուրաստ,
Զի արւոյն եւ հըզօրին Արամազդայ ննջես 'ի գիրկս:
Ասաց, եւ 'ի լանջացըն զաստղնագործն եհան կամար,
Ըզնըրկարէն գեղեցիկ, ուր բնաւ հրապոյրք իւր կային կազմ.
Անդ է սէր եւ տըռփումն, անդ ամուսնոց խօսից մըրմունջք,
Ցորդորումն՝ որ զիմաստնոցն իսկ գողացաւ զուշ եւ զուրուշ:
Զայն 'ի ձեռս արկ նորա եւ բարբառեալ զայս խօսեցաւ.
Առ ընկալ արդ, դիր 'ի ծոց քում ըզկամարըդ նըրկարէն,
Ցորում կան ամենայն ինչ յօրինեալ, եւ ոչ կարծեմ
Թէ անգործ դարձցիս այսրէն յորոց 'ի մտի քում որոճես:
Զայս ասաց, եւ ժըմտեցաւ աչեղն Հերա վեհապատիւ,
Եւ 'ի ժըմտելն անդ առեալ էարկ անդէն 'ի ծոց իւրում:
Աստղիկ դուստր Արամազդայ ելեալ գընաց յիւր ապարանս.
Իսկ Հերայ խոյացեալ՝ զոլիմպականն եթող կատար,
Եւ սլացեալ ըզՊիերեաւ եւ զԷմաթեաւըն սիրելւով,
Անցանէր ըզձիւնեղէն լերամբք Թրակաց ձիաւորաց,
Զբարձրաբերձ գագաթամբք, եւ ոչ ոտիւքն հըպեալ յերկիր.
Եւ յԱթոս լեռնէ գնացեալ՝ եկն էջ 'ի ծով կոհակաւէտ,
Եւ եհաս 'ի Լեմնոս՝ 'ի Թոասայ վեհին քաղաք:
Անդ Քընոյն հանդիպեցաւ հարազատի Մահուն եղբօր,
Եւ ձեռն 'ի ձեռըն առեալ՝ կարդաց զանուն իւր եւ ասէ.
Քուն, իշխան բոլորեցուն դից եւ մարդկան առհասարակ,
Լըւար պապաքէն բանիս երբեմն, անսա եւ այժմ,

Եւ ես՝ զամենայն աւուրս եղէց քեզ շնորհակալ։
Ե՛կ ինձ Թըմբրեա զըւարթ աչերն Արամազդայ՚նդ. արտեւանամբքն
Անդէն եւ անդ՚ի նընջել խմաւմ սիրով՚ի գիրկըս իւր։
Գահ մի տաց քեզ՚ի պարգեւս՝ ընտիր, ոսկի, յաւէրժ անեղծ,
Զոր որդեակն իմ Հեփեստոս՝ կաղ յերկոցունց ոտիցն իւրոց՝
Վաստակեալ յօրինեսցէ, եւ պատուանդան արկցէ՚նդ. ոտիւք,
Ուր զմաքուր Թաթսդ. դիցես՚ի խընճոյից բազմել խրախճանս։
Զայն առ նա՝ քաղցըր Քընոյն արձակեալ եւ պատասխանի.
Մեծաշուք աստուածուհիդ, Հերա, մեծին Զըրուանայ դուստր,
Ցայլ ոք ինձ դիցն յաւէրժից դիւրին իցէ արկանել նիրհ,
Եւս եւ 'ի նոյն իսկ յորձանս ուղխից գետոյն Ովկիանու,
Որ եւ է իսկ ծընօղ բոլորեցունց առ հասարակ.
Սակայն ոչ 'ի Զըրուանեանն Արամազդ մօտ ինչ երթայց ես,
Ոչ Թըմբիր ինչ ածից, մինչ չեւ ինչ իւր տըւեալ հրաման։
Զի եւ այլ ուրեմն երբեմն ըզգօնացոյց զիս քո պատուէր,
Յաւուրն՝ յորում մեծանձըն որդեակն Արամազդայ
Ըզտրովեանց քանդեալ քաղաք՝ նաւեալ դընայր յԻլիոնէ։
Քանզի զմիտս ամպարակրին Արամազդայ նիրհեցուցի
Քաղցըր հեղեալ շուրջեւ, եւ դու նենգ. երկնէիր նըմա 'ի սիրտ
Ցարուցեալ ըզհողմոցըն դըժնէից շընչմունս 'ի ծովն.
Եւ ապա 'ի Կոս ըզնա տարեալ հանէր 'ի շինանիստ,
Թափուր 'ի բնաւ սիրելեացն. իսկ զարթուցեալ նա սըրտմըտէր,
Վըրդովէր ըզդիս ընդ տունն, ինձ քան այլոց 'ի խընդիր լեալ։
Եւ կալեալ զիս ըզչէքս՝ յարփւոյն 'ի ծով ընկենոյր խոր,
Եթէ չէր փըրկեալ Գիշեր՝ տիրօղ մարդկան եւ աստուածոց՝
Ցոր անկայ փախըստեայ, եւ ինքն եկաց լի բարկութեամբ,
Ածն ածեալ չառնել երագ. Գիշերոյն գործ ինչ դըժկամակ.
Եւ արդ. դարձեալ զայս յանհնարից ինչ հրամայես ինձ կատարել։
Կըրկնեաց առ նա վերըստին մեծապատիւ աչեղն Հերա.
Զի՞ է, Քուն, զայդոսիկ ածել զարդիս քեզ ըզմըտաւ.
ԶԱրամազդ. որոտագոչ այնպէս Տրովեանց կարծես տեսուչ,
Զոր օրինակ ցասուցեալն էր վասն որդւոյն իւր Հերակլի։
Այլ արի, եւ ես ըզմին քեզ 'ի Շնորհաց մանկագունից
Տաց ածել 'ի հարսնութիւն եւ յամուսին քեզ անուանել,
ԶՊասիթէէ, զորմէ կըրկեալ ես կաթոգի զօր ամենայն։
Զայս ասաց, խընդաց Քունն, եւ յաւելեալ կըրկնեաց անդրէն.
Հա՛պա եկ ինձ արդ. երդուիր 'ի Ստիգեայ ջուրսն անդըրժելիս,
Զեռամբըդ միով կալեալ զերկիր բիւրաբեղուն,
Միւսովդ ըզծով լուսակարկաջ, զի մեզ վըկայ լիցին համօրէն
Որ 'ի խոր տանդարտան ընդ Զըրուանաւ իցեն աստուածք,
Ի Շնորհացն ինձ ըզմի մանկագունից տալ ըստուգիւ,
ԶՊասիթէէ, յորում եսըն տըռփանաւ զօրհանապազ։



Digitized by Google

Զայս ասաց, լռեաւ Հերա լուսածամին աստուածուհի,
Եւ երդնոյր ըստ խնդրոյն, եւ զհամօրէն անուանէր զդիս
Որ 'ի ստորը սանդարամետս, եւ Տիտանեայքն են յորջորջեալ:
Իսկ մինչ եղեւ երդմընն եւ հան 'ի գլուխ զերդմանն օրէն,
Երկոցուն զոստան Լեմնեայ եւ զԻմբրոսի թողեալ գնացին,
Ըզգեցեալ մէգ զմիջեամբք եւ ժիր զընթացսն վըճարեալք:
Եւ հասին 'ի բիւրակնեայն Իդա, 'ի մայրըն գազանաց,
Ի Լեկտոն, ուր 'ի ծովէն ելեալ գնային նախ ընդ ցամաք,
Եւ գլուխք ծառոց մայրւոյն սասանէին 'ընդ ոտիւք նոցին:
Կաց մընաց Քունն անդէն, Արամազդայ չեւ յաչս անկեալ,
Յեղեւնին մի բարձրաբուն ելեալ՝ որ անդ յայնժամ յԻդա՝
Բուսեալ երկայնադէզ՝ ընդ օդս յարփին երթեալ հերձէր.
Անդ նըստաւ նա թաքուցեալ 'ի թանձրաթուփ ոստս եղեւնեայս,
Քաղցրաձայն հաւուն նըման՝ որում 'ի սարս անդ 'ի լերանց
Աստուածքըն Քաղկիդ անուն կոչեն, մարդիկ՝ Կիւմինդ:
Իսկ Հերա ձեպով 'ի ծայրս Իդայ բարձրուն 'ի Գարգարոն
Գնայր ելանէր, եւ Արամազդ ամպրոպային տեսս ըզնա,
Եւ 'նդ տեսանելն՝ խոկոյն զըղջման միտս նորին պաշարեաց գութ,
Որպիսի մինչ անդ ուրեմըն նախ սիրով ամուսնացան
Յառաջին ելան յանկողին, 'ի սիրելի ծնողաց գաղտնուլ:
Յանդիման եկաց նորա եւ ձայնարկեալ բարբառեցաւ.

Հերա, յո՞ր դէմ եղեալ հասեալ կաս այսր յՈլիմպոսէ.
Եւ չեն մերձ երիվարք եւ կառք առ քեզ հեծանելոյ:

Խաբուսիկ միտօք ասէ առ նա Հերայն վեհապատիւ.
Այց առնել երթամ զընամ արգասաւոր երկրի ծագաց,
Առ գիցահայրըն Ովկիան եւ առ Տեթիւըն գիցամայր,
Որ յապարանս իւրեանց զիս բարուք սնուցեալ զարգացուցին:
Ըզնոսա գնամ տեսանել եւ զանհաշտարար լուծանել վէճս.
Զի 'նդ բազում ժամանակս ահա խեռեալ կան յիրերաց
Յանկողնոյ եւ 'ի սիրոյ, կալեալ զոգիսըն բարկութիւն:
Իսկ ձիանն՝ առ լեռնաստամբըն կան Իդայ բիւրակնեայ,
Որ զիս ընդ ցամաքն բարձեալ տարցին եւ 'նդ նայածուս:
Իսկ զարդիս՝ 'ի քո պատճառս եկեալ կամ այսր յՈլիմպոսէ,
Զի գուցէ թէ յետոյ սրտմըտեսցիս 'ի յիմ վերայ,
Թէ լռելեայն երթայց 'ի տուն յորձանախորըն Ովկիանու:

Արամազդ ամպայարոյց առար նըմին պատասխանի.
Անդր եւ յետ այսորիկ, Հերա, գոյ զքեզ ուրեմն երթալ.
Իսկ մեք եկ աղէ 'ի սէր վայելեսցուք մըտեալ 'ի քուն:
Զի բնաւ ոչ աստուածուհւոյ եւ ոչ կնոջ սէր այսպէսնակ
Ողողեալ երբեք 'ի լանջս իմ եւ զոգիս իմ նըւաճեաց.
Ոչ յորժամ Իքսիոնեանըն ցանկացայ արուաքեալ կնոջ,
Որ ծընաւ զՊերիթոոս զաստուածախորհուրդըն հանճարեղ.

Ոչ յորժամ Ակրիսիոնեանն Դանայեայ գեղեցկասրունին,
Որ ծընաւ ըզՊերսեւս քան զամենայն անուանին այր.
Ոչ յորժամ ընդ դըստերըն Փիւնիկեայ 'նդ հըռչակելըւոյն,
Որ ծընաւ ինձ ըզՄինոս եւ զՌադամանթ աստուածակերպ.
Ոչ յորժամ ընդ Սեմելէ եւ Ալկմենէ 'ի Թեբայեան,
Որ ծընաւ առ զՀերակղէս զաւակ որդի եւ ուժգնասրտեան,
Սեմելէ ծնաւ զԴիոնիսոս զուարճութիւն մահկանացուաց.
Ոչ յորժամ ընդ թագուհւոյն գեղահերաւորըն Դեմետրէ,
Ոչ յորժամ ընդ Լատոնեայ գերափառականին, եւ ոչ ընդ քեզ,
Որպէս այժմիկ քեզ տենչամ, սաստկանայ ամէն զիս անուշակ:
Իսկ առ 'նա խորամանկեալ պատասխանի՝ տիրուհին ասէ Հերա.
Ահաւորըդ Զըրուանեան, զայդ զինչ չարաշուք բարբառեցար:
Եթէ այժմըս տենչաս 'ի քուն լինել եւ սիրախառնել
Ասա յԻդայ գագաթանս՝ ուր ամենայն տեսանելի կայ.
Զիա՞րդ լիցի, եթէ զմեզ 'ի յաւիտենից ոք աստուածոց
Ի քուններն անդ նշմարեսցէ, երթեալ ցուցցէ զայն բոլորից:
Քաւ լիցի թէ յարուցեալ իմ յանկողնոյ աստի ըզնաւ
Դարձ 'ի քո յարկս մտանիցեմ. զի կարի յոյժ եղէ դըժուար:
Բայց սիրելի թէ կամիս եւ սիրելի է սըրտի քում,
Է քո սենեակդ՝ զոր Հեփեստոս սիրուն որդին
Շինեաց քեզ, եւ դըրունս ամուր 'ի դըրանդսն յօրինեաց.
Անդր քունել երթիցուք, զի քաղցրացեալ քեզ անկողինք:
Ցանկացեալ ամպահաւաքըն Արամազդայ կըրկնեաց առ 'նա.
Ոչ ոք, Հերա, մի երկնչիր, 'ի գեղ եւ ոչ 'ի մարդկանէ
Տեսցէ զայն, այնպէս ամպ պատեսից եւ ծածկեցից եւ ոսկեղէն,
Զի եւ ոչ ակն իսկ անդամ նըշմարեսցէ զմեզ Արեգակն,
Որոյ նըշոյլ սրահայեաց եւ թափանցիկ է 'ի դիտել:
Ասաց, եւ ամուսնոյն գիրկս արկ զաւակըն Զըրուանեան.
Ընդ նոքօք ծընաւ Երկիրն աստուածեղէն՝ բոյս նորադալար,
Ըզնեղուֆար ցօղալից եւ ըզքըրքում եւ ըզհօրոտս
Հոծ 'ի հոծ լի եւ փափուկ, որ 'ի գետնոյն 'ի վեր ունէր:
Անդ 'ի նոսա ննջեցին, եւ ըզգեցան զամպն 'ի ծածկոյթ
Զգեղեցիկ ոսկեճաճանչ, եւ լուսափայլ կաթէին շաղք:
Այսպէս խաղաղ ննջէր Հայրն 'ի Գարգարոսն բարձրագագաթ
Ըզքնով յաղթեալ եւ զսիրով, եւ ըզգրկեալ ունէր ըզկինն:
Իսկ Քունն անուշակ յաքայեցւոց նաւսն եկ ընթացաւ,
Աւետել ազդեցութիւն աշխարհակալ Գետնադըղրդողին:
Եւ կացեալ մերձ առ 'նըմա՝ բարբառեցաւ ըզթեւաշունչ բանս.
Փոյթ ընդ փոյթ դու զԴանայեանց հաս 'ի թիկունս արդ Պոսիդոն,
Տուր նոցա զեթ փառս մի շատ, մինչ Արամազդ կայ դեռ 'ի ննջել,
Ի՛մ հեղեալ ըզնովաւ զամպաթաթաւալ թըմբրութիւն,
Եւ 'ի սէր իւր Հերայի պատրեալ ըզնա 'ի քուն լինել:

Ասացեալ զայս՝ անց գընաց 'ի հոյանուն տոհմըս մարդկան,
Իսկ ըզնա՝ եւս առաւել գըրգռեաց օգնել դանայեցւոց,
Որ վազեալ մեծ իմն անդէն 'ի նաւահատական եբարձ խըռովոյս·
Պրիամեանն Հեկտորի մինթէ դարձեալ, արգիւացիք,
Զյաղթութիւն թողցուք տիրել նաւատորմիդն, տանել ըզփառս·
Այլ նա յայտ խըրոխտայ 'ի միտս, այն զի առ խոր լաստափայտիւքն
Աքիլլէւս մըռմըռեալ անգործ նըստի քինախընդիր։
Բայց սակայն ոչ անձկաբեկ կարօտեսցուք ինչ մեք նըմա,
Թէ մեզէն կալ 'ի միմեանց վերայ կըռուել յորդորեսցեմք։
Այլ եկայք որ զինչ ասեմ ունկըն դիցուք ամենեքեան։
Ընտիր եւ յաղթ ասպարօքն որ 'ի զօրուս՝ վահանաւորք,
Եւ ըզգըլուխս ածուցեալք փայլակնացայտ սաղաւարտիւք,
Եւ 'ի ձեռս երկայնագոյն բարձեալ նիզակս՝ ծն երթիցուք·
Ես ինքնին կարապետ անցից յառաջ, եւ ոչ կարծեմ
Թէ պրիամեանն Հեկտոր ըզդէմ կալցի բնաւին սաստկութեանցն։
Եւ որ այր ոք քաջամարտ իցէ եւ փոքր ասպար իւր յուս,
Տացէ առն անուազի, եւ ինքն առցէ վահան մի յաղթ։
Զայս ասաց, նոքա լըւան եւ անսացին նըմա մտադիւր։
Թագաւորքն իսկ կազմէին զնոսա, թէպէտ եւ վիրաւորք,
Տիդեանն եւ Ոդիսեւս եւ Ատրիդեան Ագամեմնոն,
Եւ շըրջեալ զամենեքումբք՝ զարիական փոխէին զէնս·
Զօրեղն ամուրս ըզգենոյր, եւ տըկարին տայր ըզյոռիս։
Իսկ յորժամ ըզմարմինս զփայլենազարդն արկին պըղինձ,
Խաղացին, եւ Պոսիդոն երկրասասան էր առաջնորդ՝
Սուսեր հիազարհուր երկայնաձիգ 'ի ստուար ձեռին
Փայլատական հանգունակ, ընդ որում չէ խառնել օրէն
Ի դըժնէ գուպարածի, այլ արհաւիրք ընկըրկեն զարս։
Ըզտրովադեանս յայնըմ կուսէ վառէր կազմէր շըքեղն Հեկտոր։
Անդ յայնժամ մարտ սաստիկ յարդարեցին պատերազմի
Պոսիդոն կապուտավարս եւ սպետափառն Հեկտոր,
Սա իմն տրովադացեաց, արգիւացւոց նա մարտակից։
Եւ ել ծով յորդեաց 'ի վրանսն եւ կարկուռայս արգիւական·
Իսկ նոքա հարան ընդդէմ ամբոխասաստ աղաղակաւ։
Ոչ բընաւ ծովուն ալիք այնչափ գոչէին 'ի ցամաք կոյս
Ցանդընդոց անտի յուզեալք 'ի հիւսիսի շունչ դըժընդակ,
Ոչ այնչափ ինչ շաչիւն բըրդի հըրոյն բորբոքելոյ
Ցանտառախիտս լերին՝ մինչ հըրդեհել յառնէ զմայրիս,
Եւ ոչ այնչափ հընչէ հողմ 'ի բարձրավարս կաղնեաց թաւուտս՝
Որ կարի յոյժ զայրագին եւ մեծամեծըս մըռընչէ,
Որչափ ել խօշիւն ձայնի տրովադացւոց եւ աքայեանց
Ի գոռալն ահագնալըւր եւ 'ի միմեանց դիմել վերայ։
Նախ յԷաս տէգ ընկէց եղեւ Հեկտոր շըքեղածոփ,

Զի առ ճնշըն դէմ ընդդէմ կայր նա դարձեալ, եւ վրիպեաց ոչ
Ուր կըրկին բառնալեաց զհուրամ լանջըք կայծն ձըգաւեալ,
Մի վահանին, եւ երկրորդ արծաթագամ իւր ասուերին,
Որ ըղձիւրդ մարմին նորա պահպանեցին. յաւետ Հեկտոր,
Զի աշտէն սուր ընդունայն 'ի ձեռանէ իւրմէ ոլացաւ.
Եւ յետս 'ի խումբ ընկերացն 'ի մահուանէ զերծեալ խոյս առ:
Ի մեկնել իւրում անդէն Տելամոնեանըն մեծն Էաս
Բռնաւորաքարամբ, յորոց շատք, նեցուկք երագ նաւափայտիցն,
Առ ոտս իսկ անդանօր թաւալէին մարտուցելոցն,
Ըզմին բարձեալ՝ ըստ ասպարին շուրթն յուշըն հասաւ՝ 'ի կուրծսն եհար.
Եւ յընկենուլն իբր անիւ փոթոր պտուտեալ՝ շուրջ 'ի գիւղ գնայր:
Զերդ 'ի Հօրն Արամազդայ 'ի հարուածոյն՝ արմատախիլ
Փլանի կաղնի, եւ անդուստ ծըծըմբահոտ բուրէ սաստիկ.
Եւ որ մերձ հասեալ ըզնոյն տեսանիցէ՝ չըժուժէ սիրտ,
Զի մեծին Արամազդայ դըժնեայ հրացանն է բարկութիւն.
Նոյն 'ի գետին ընդ փոշի անկաւ իսկոյն Հեկտորեանն ոյժ:
Տեգն յափոյն ել եւ զհետ նորա զլեցաւ վահանն եւ սաղաւարտ,
Եւ զերբեւ շառաչէին զէնքըն 'ի պղնձեայ խայտաբղէտ:
Իսկ որդիքն աքայեցւոց դըռան եկուն ուժգին գոչմամբ,
Ցուսացեալ ձըգել յինքեանս, եւ ցընդէին նետից տարափ:
Այլ չեղեւ ոք ձեռընհաս նետահարել եւ ոչ խոցել
Ըզհովիւըն զորհից, զի հասին քաջքըն անձապարեալ
Պուլիդամաս ու Էնիաս եւ Ագենոր գիցանըման,
Եւ Սարպեդոնն լիկիացւոց պետ եւ Գլաւկոս հրաշալի:
Եւ ոչ յայլոց անտի ոք անփոյթ արար ըզնորանէ,
Այլ զպատուարսըն զառաջեաւ իւր ունէին զգեղապարոյրս,
Եւ բարձեալ ընկերքըն 'ի ձեռս հանէին զնոյն 'ի ճակատէն,
Մինչեւ յերագ 'ի ձիսն եհաս յետըս մարտի պատերազմին,
Ուր կային կառավարն եւ նըկարէն կառքըն հանդերձ,
Որ տանել ըզնա յոստան անդր առնէին ըզբազմահեծն:
Այլ սակայն 'ի հունն յորժամ գեղավըտակ գետոյն հասեալք
Ցորձնեռանդըն Քսանթոսի՝ զոր Արամազդ ծընաւ անմահն,
Անդ 'ի կառացն 'ի գետին եդեալ ըզնա՝ սըրսկեցին ջուր.
Եւ ապի բերեալ նորա՝ զաչս իւր եբաց եւ հայեցաւ,
Եւ 'ի ծունկս իջեալ նըստեալ՝ սեւաթորմ փըսխեաց արիւն,
Եւ անդրէն 'ի թիկունըս կոյս յետին գըլորեալ անկաւ,
Զաչըսն սեւ ծածկեաց գիշեր, եւ դեռ զոգին այրէր հարուածն:
Արդ յորժամ արգիւացիք տեսին զՀեկտոր 'ի բաց երթեալ,
Անհնարայն 'ի մարտնչմանն սաստեան եւ ուշ եդին կըռուոյն:
Ոյլեանն երագ Էաս անդ քան ըզբնաւս յառաջագէմ
Սուր արդամբն յարձակեալ վիրաւորեաց ըզՍատնիոս
ԶԵնոփեան; զոր Նէիս երկնեալ ծընաւ հարսն ընտրական



Digitized by Google

Ենոփայ տաւարածի՝ զՍատնիոյիս ուղխիցն ափամբք :
Ոյլէանն աշտենափառ դիմեալ եւ մերձ հասեալ 'ի նա՝
Եհար ըզնա՛ ընդ սրնակուշտն եւ նա յորսայս տապալեցաւ ,
Եւ զնովաւ եռուն արտմեանք եւ գանգիւնք մարտ չարաչար :
Զնըմանէ Պանթոյեան Պուլիդամաս նիզակաձօձ
Եկն 'ի մերձ եւ եհար զՊրոթոյենովր յուս աջակողմ,
Զորդեակն Արէյիլիկեայ, եւ էլ ուժեղ նիզակն ընդ ուսն ,
Ինքըն գլորեալ 'ի փոշւոյն՝ ափով զերկիր բուռն հար կալաւ :
Ահագինըս պանծացեալ Պուլիդամաս խանչեաց սաստիկ ·
Ոչ կարծեմ ամենեւին թէ մեծանձին Պանթոոսեան
Ի հաստատաբուռըն բազկէն ընդվայրահար սուսեալ ոլորզն ,
Այլ զի ոք յԱրգիացւոց զայն 'ի մարմին իւր ընկալաւ ,
Եւ թուի յայն յեցեալ 'ի ցուպ՝ 'ի Դըժոխոց իջցէ 'ի տուն :
Զայս ասաց եւ ընդ պարծանսըն ցաւ հարաւ Արգիացւոց ,
Մանաւանդ Տէլամոնեան գոռ Այասայ զսիրտն երգեծոյց ·
Զի առ ոտըս նորա գլորեցաւ նա յոյժ մօտակաց :
Նոյնժամայն յընկըրկել նորին՝ զփայլունն արձակեաց տէգ ,
Վաղու անկեալ խոտորնակի Պուլիդամաս՝ ինքն ապրեցաւ
Ի սեւ մահուն՝ զոր Արքելոք Անտենորեանն ընկալաւ նա ,
Զի աստուածք նըմա էին ըզկատարածումըն սահմանեալ :
Եւ եհար ընդ գօգ ուղղոյն եւ կառափին՝ յոդիցն վերջին ,
Եւ զերկոսին ջիլսըն խըզեաց , եւ գլուխ նորա՝ բերան եւ քիթք
Կանխագոյն քան սրունքն եւ ծունկք անդ 'ի գլորել անկան յերկիր ·
Եւ Այաս փոխարէն գոչեաց յարեն Պուլիդամաս ·
Տես ինձ արդ , Պուլիդամաս , եւ ճշմարտիւ ասա դու ցիս ·
Արժէ՞ այս այր արժանի Պրոթոյենորայ փոխան 'ի մահ ·
Արդարեւ ինձ ոչ թուի վատ ոք եւ ոչ 'ի վատաց ինչ ,
Այլ եղբայր հարազատ Անտենորայ ձիախրոխտի ,
Կամ թէ որդի , զի զարմիւ նըմին յաւէտ թուէր նըման :
Զայս ասաց քաջ գիտելով · ցաւ ըզտրովեանց կալաւ զոգիս :
Ակամաս հար անդ տիգաւն ըզՊրոմաքոս Բեովտացին ,
Երթեալ եղբօրըն պաշտպան՝ զոր նա զոտիցն ածեալ քարշէր ·
Եւ ընդ այն Ակամաս սաստիկ խրոխտէր ուժգին գոչմամբ ·
Արգիացիք՝ նըշաւակք 'ի նետս , անյագք 'ի սպառնալիս ,
Ոչ թէ մեզ միայն եւեթ եղիցին ցաւք եւ տառապանք ,
Այլ երբեք երբեք եւ դուք այսպէս 'ի մահ յուղարկեսջիք :
Տեսէք որպէս Պրոմաքոս իմ գեղարդեամբ պարտեալ ննջէ ·
Զի մի՛ հատուցանելի վրէժ՝ յերկար կացէ գերեւ :
Վասն այն այր իւրաքանչիւր ուխտաւոր խընդրէ թողուլ 'ի տան
Ընտանի զոք մերձաւոր՝ պատուհասին քինախընդիր :
Զայս ասաց , եւ ընդ խրոխտումըն ցաւ հարաւ յԱրգիացիսն ,
Եւ զՊենելէոս մանաւանդ զառաքինւոյն գրգռեաց ըզսիրտ ·



Digitized by Google

Ել զինեաց յԱկամեմնոն՝ որ յարձակմամբն ոչ հանդուրժեաց
Աքայեցն Պէնէլէայ, եւ նա եհար զԻլիոնեւս
Ըզզաւակըն Փորբասայ խաշնաւետին՝ զոր 'ի տրովէանց
Ամենէն սիրէր Հերմէս, եւ ստացուածոց արար զնա տէր.
Եւ մօր խորոյն միամօր Իլիոնէւս էր 'ի նմանէ.
Ըզնա յանժամ ընդ յօնիւքն յակնակապիճ նորին եհար
Եւ ըզբիբն ընկէց արտաքս, եւ անցն ընդ աչն եւ ընդ ծոծրակն
Ել Թափանց, եւ նա նըստաւ՝ զերկոսեան ձեռսըն տարածեալ:
Իսկ ձըգեալ Պէնէլէոս ըզսուրն հանեալ վաղվաղակի
Մըխեաց 'ի պարանոցն, եւ զգլուխն հանդերձ զըլխանոցաւն
Ընդ գետնին արկ Թուաղըցըր, եւ զեռ զեղարդն հաստահարուստ
Կայր անդէն յակնակապճին. զերդ խաշխաշի բարձեալ նա զգլուխն,
Ած տրովեանըն բարբառեալ՝ յախորտօրէն սաստ ըզբանս.

Օն զուք ինձ, տրովադացիք, Իլիոնեայ քաջափառի
Գոյժէք հօրըն սիրելւոյ եւ մօր տանուլ կոծ յապարանսն:
Ոչ եւս այլ տիկինն Ալեգենորեանըն Պրոմաքեայ
Առն իւրում եկելոյ զըւարթերես ելցէ՛նդ առաջ
Մինչ 'ի Տրոյայ նաւաշրջւղակ դարձցուք որդիքս աքայեցւոց:

Զայս ասաց, եւ զամէնեսեան կալաւ դողումն,
Եւ այր այր աչս ածէին 'ի ժանտ մահուն ուստի փախուստ:

Ասացէ՛ք ինձ արդ, Մուսայք, ովլիմպական յարկաց բընակք,
Ո՞վ ոք նախ յաքայեցւոց արիւնալից առաւ կապուտ,
Իբրեւ ըզմարտըն շըրջեաց հռչակաւոր Երկրադըղորդ:

Այաս նախ Տելամոնեան վիրաւորեաց ըզՀիրտիոս
ԸզԳիրտեանն՝ ըզՄիսացւոց ուժգնասրտոց բաղաբաղեա.
ԸզՓալկէս Անտիլոքոս եւ զՄերմերոս հար կողոպտեաց,
Սատակեաց Մերիոնէս զՀիպպոտիոն եւ ըզՄորիս,
Տեւկրոս կորոյս ևւ ասար զՊերիփետէս եւ զՊրոթոոն:
Իսկ ապա եւ Ատրիդէս զՀիպերենոր՝ զհովիւն ազանց
Խոցեաց ընդ կուշան եւ զաղիսըն պատառեալ լափեաց պղնձին,
Հոգին 'ի հարուածըն ձըեպեալ ելաւ ընդ հերձ վիրաւորանն,
Եւ զաչկունըս նորա պատեալ ծածկեաց մութ խաւարին:
Ըզյոլովունս բաղան Այաս շուառանձն որդին Ոյլէոսի.
Զի նմա չէր ոք 'ի զօրս՝ յարշաւ ոտին պընդել ըզհետ
Ի փախչել արանց՝ յորժամ ահ 'ի նոսին տայր Արամազդ:

521



Digitized by Google

Digitized by Google

ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

ԵՐԳ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Զարթուցեալ Արամազդ 'ի քնոյն՝ տեսանէ զի Յոյնք օգնականութեամբ Պոսիդոնի խորտակեն զտրովացիս. սրտմտեալ եւ ողոքեալ նորա՝ առաքէ զՀերա յՈլիմպոս պատգամաւոր. բանք սորա անդ: Առաքէ Արամազդ զԻրիս առ Պոսիդոն՝ տեղի տալ 'ի ճակատէն, եւ զԱպողոն առ Հեկտոր՝ արծարծանել զոգի նորա, զոր յարուցեալ եւ ինքնին ընթացեալ յառաջոյ քաջին 'ի կռուն՝ հարթէ զփոսն. տապալէ հիմն 'ի յատակ զպատուարն: Մարտ տաժկալի առ նաւօքն. Այաս Նիզակաւորուսս վանէ զՀեկտոր եւ զտրոյացիս՝ որ ահա հասեալ կան հրձիգ առնել զնաւսն:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ԱՆԴՐԷՆ ՀԱԼԱԾՈՒՄՆ Ի ՆԱՒԱՑ

Իսկ փախըստեայք 'ի չերտափայտին եւ 'ի պարկէն փոսին հատեալք,
Բազմաց դի անկանելով 'ի դանայեանց ձեռաց տապաստ,
Առ կառօքն ընկըրկեալ կային մնային գեղնեալք յահէն,
Ցերկնելեղէն զարհուրեալք. իսկ Արամազդ զարթեաւ 'ի քնոյն
Ի գագաթան անդ Իդայ յոսկեգահին Հերայ ծոցոյ.
Յարուցեալ եկաց ընդոստ, տես ըզտրոյեանս եւ զաքայեցիս,
Ըզնոսին հալածականս, եւ զհետս պնդեալ զարգելոցին,
Եւ 'ի մէջ իւր անդ առոյծ ըզԹագաւորըն Պոսիդոն։
Եւ զՀեկտոր եսես անկեալ 'ի դաշտն եւ շուրջ նըստեալ ըզնկերսն.
Հեծծեալ նա դառնապէս, խելացնորեալ, արիւն ժայթքեալ.
Քանզի ոչ ըզ անարի եհար ըզնա յաքայեցւոց։
Յայն հայեցեալ գըթացաւ աստուածոց հայրըն եւ մարդկան,
Եւ խեթի տեսքք աչաց ակն 'ի Հերայն արկեալ ասէ.
Չարարուեստ քո նենգութիւնդ անշուշտ, Հերա դըժոխաբեր,
Ի մարտէն դադուցաղն Հեկտոր կարճեաց եւ զզօրսն եդ 'ի փախուստ.
Բայց ոչ գիտեմ Թէ դարձեալ զեղեռնաւոր խարդաւանացդ
Ըմբոշխնեսցես նախ դու զպտուղն, եւ զքեզ գանիւք հարուածեցից։
Չածիցես յուշ՝ 'ի բարձանց մինչ կախեցար, եւ սալ կըրկէն
Ջոտիցդ արկի, եւ 'ի ձեռսդ ոսկի կապանս անխըզելիս,
Եւ մինչեւ դու յարփեն եւ խառն ընդ ամպըս կախեցար։
Իսկ ընդ երկայնն Ողիմպոս 'ի բարկութիւն բըրդէին դիք,
Եւ կացեալ մերձ լուծանել զօրէին ոչ, զի բուռն հարեալ
Զոր ըզ գամ մի ունէի՝ զընկենուի յերկնից սեմոց,
Մինչեւ յօղին ապառատն երթեալ յերկիր անդր հասանէր.



Digitized by Google

Եւ ոչ այնպէս 'ի սըրտէս փարատէր բարկ ցաւ դիւցազնին
Հերակլի՝ զոր Հիւսիսի հողմով յուղեալ քո զմըրրիկս,
Ընկեցեր ընդ ծով անբեր՝ չարիս նըմա խորամանկեալ,
Եւ հաներ հուսկ ուրեմն 'ի բնակաւէտն ըզնա 'ի Կով.
Իմ անդուստ փըրկեալ ըզնա՝ դարձեալ անդրէն թափեալ ածի
ՅԱրգոս 'ի ձիաբոյծն, յետ հանդիսից բազում ճըգանց:
Զայս քեզ յուշ ածից կըրկին, զի ցածնուցուս 'ի դաւանանցդ,
Եւ 'ի միտ առցես թէ քեզ լիցի՞ն ինչ շահ սէր ւանկողինք,
Յոր եկեալ 'ի դից անտի եւ զուգութեամբ պատրեցեր զիս:
Զայս ասաց, սոսկացաւ աչեղն Հերա շըքեղաշուք,
Եւ առ նա բարբառեալ զերագաթեւ խօսեցաւ բանս.
Լըւիցէ զայս արդ Երկիր եւ 'ի վերուստ անդորր Երկին,
Ստիգեան ուխք անդընդաբուղխ՝ որ ահաւորն է յերդմընս
Եւ նորուն իսկ աստուածոցն երանելեաց սարսափելի,
Եւ խընկելիդ քո գըլուխ, եւ կուսութեան մեր ընկողինք,
Յոր ոչ բընաւ ի՞նչ երբէք վարկպարազի երդնուցում ես.
Ոչ իմով ինչ խորհըրդով գետնադըղորդըն Պոսիդոն
Վնասակար լինի տրովեանց եւ Հեկտորի, եւ սոցա մեգ,
Այլ անշուշտ սիրտ իւր ըզնա գըրգէ 'ի նոյն եւ յօժարէ,
Եւ վըշտալըմբերս առ նաւուք տեսեալ զաքեանս՝ ողորմեցաւ:
Սակայն ես՝ եւ նըմա տայցեմ խըրատ, անդր հետեւել
Յոր դու ի՞նչ, Ամպրոպային, առաջնորդեալ տացես հրաման:
Զայս ասաց, եւ ժըմտեցաւ հայրըն մարդկան եւ աստուածոց,
Եւ տըւեալ պատասխանի՝ զերագաթեւ խօսեցաւ բանս.
Թէ յայսմհետէ, աչադեղըդ դու Հերա մեծարելի,
Համարակ ընդ իս գըգեցեալ միտս՝ յանմահից նըստցիս ակումբ
Նովին իսկ Պոսիդոն, թէ եւ այլազգ ի՞նչ բերեալ իղձ,
Փոխեսցէ զխորհուրդան անդէն ըստ քում սըրտիդ եւ ըստ իմում:
Այլ սակայն, եթէ սերտիւ եւ ստուգախօս դաս ըզզըրոյցդ,
Արի արդ երթ 'ի դիցն երամս, եւ կոչեցեալ պատուէր տաջիր
Առ Իրիս եւ Ապոլոն աղեղնաւոր՝ գալ այսր առ իս.
Զի երթիցէ նա 'ի զօրն 'ի պղընձազգեստն աքայեցւոց,
Եւ յինէն՝ արքային Պոսիդոնի տացէ հրաման,
Դադարել 'ի խաղմէն, դառնալ գընալ յիւր ապարանսն:
Իսկ Գուշակն Ապոլոն զՀեկտոր 'ի կռիւ կազդուրեսցէ,
Եւ շընչեալ անդրէն կորով դարձուսցէ զցաւսն 'ի մոռացօնս
Որ զողիս նորա տանջէն այժմ աւաղիկ, եւ յետս անդրէն
Քեըքեսցէ զաքայեցիս՝ արկեալ նոցա զվատոց խուճապ:
Եւ փախուցեալ 'ի նաւակնեարն անկանիցին 'ի բազմատախտ
Ի Պելեանն Աքիլլեսի, որոյ զհամհարզ իւր յարուցեալ
ԶՊատրոկլոս, շըքեղն Հեկտոր արասցէ զնա նիզակին ճամբ
Իլիոնի յանդիման՝ 'ի կոտորէն որեար բազում,

Ընդ այլ՝ եւ զորդեակն իւր զՍարպեդոնն դիւցազնաբանդ ։
Սրտամբառեալ ընդ այն՝ սպանցէ զՀեկտոր դիւցազնն Աքիլլէս ։
Ապա զհետ այնորիկ հալածական զնաւս եդից
Միշտ անդուլ առ 'ի նաւաց, մինչեւ առցեն աքայեցիք
ԶԻլիոն բարձրամբար՝ 'ի խորհրդոցն Աթենասայ ։
Բայց յառաջ, ոչ ես լռեմ 'ի ցասմանէ, եւ ոչ 'ներեմ
Յանմահիցն այլում ումեք կալ 'ի Թիկունս առ դանայեանց,
Մինչեւ խղճք Պելիանծնին 'ի լրումն եկեալ հասցեն յաւարտ,
Որպէս յառաջն ուխտ եդեալ անհնարինեցի 'նմա զգլխովս
Յաւուրն՝ յոր դիցանոյշ Թետիս զխնով փարեալ ծնկովք
Աղերսեաց շուք դնել քաղաքաւերն Աքիլլեսի ։
Զայս ասաց, չհեստեաց Հերա սպիտակաձեռն աստուածուհին,
Եւ մեկնեալ յԻդայ լերանց՝ չոգաւ յերկայնն ել Ովլիմպոս ։
Որպէս սլանայ առն միտք՝ որ ընդ բազում երկիր շրջեալ,
Ապա մտաբերէ 'ի խորհուրդ 'ի հանճարեղ սրտի խորում,
Անդ, աստ, եղէ կամ անդ, եւ ածէ շատ ինչ ընդմիտք․
Նոյնգունակ ճեպով սրացեալ թռչէր Հերա շքեղաշուք ։
Հասեալ 'ի բարձր Ովլիմպոս՝ յանմահ աստուածոցն խառնեցաւ
Որ 'ի յարկն Արամազդայ կային ակումբ, որք եւ տեսեալ
Յոտն կացին համօրէն եւ բաժակօքն ողջունէին ։
Իսկ նորա զայլոցն թողեալ՝ ընդունէր գեղադիմին
Ընկալաւ զըսկիհ, զի նախ ինքն ընթացեալ եկ ընդ առաջ,
Եւ առ նա բարբառեալ ընթեւաւոր խօսեցաւ բանս ․
Առ ինչ գալուստ քո, Հերա․ եւ սոսկացեալ խելքն թուիս․
Անշուշտ ձեռամբ Զրուանեան զքեզ յոյժ ալեկոծ՝ քոյդ ամուսին ։
Պատասխանի ետ Հերա լուսաձեռն աստուածուհի․
Մի՛ զայդ, Թետիս դիցանոյշ, հարցաներ զիս, գիտես քեզէն
Որպիսի նորա են միտք ամբարհաւաճ եւ ապառում ։
Ե՛կ դու զլուխ զուարակերցորդ խրախից լեր դից 'ի տաճարս,
Եւ լուիցես զայդոսիկ ընդ անմահիցն անդ երախան,
Որպիսիս Արամազդ ցուցցէ հանդէսս աղխատարար․
Ոչ կարծեմ ըմբաւ թէ զայդ ամենեցուն խնդացուցեն սիրտք,
Ոչ դից ևոչ մահկանացուաց, թէ եւ արդ ոք խրախասցի լուզէ ։
Զայս այսպէս խօսեցեալ, անդ բազմեցաւ արգոյն Հերա․
Զչարեցան դիք յապարանսն Արամազդայ, ինք ժպտեցաւ
Շրթամբքն չափ, բայց մրրադարդ թոյրաթուխ յօնս ճակատն 'ի վեր
Ոչ զուարթացեալ․ եւ ճախուեթեամբ գրգռեալ ասէ յերաստն ողջոյն․
Մեք չամբուշք, որ սրբամբառեալք անմրտաբար ընդ Արամազդ․
Եւ ցանկամք զեռ 'ի վերայ երթալ 'նմին արկանել սանձ
Կամ բանիւ կամ բռնութեամբ․ 'նա զատ 'նստեալ՝ չառնէ ինչ փոյթ,
Եւ ոչ միտ դնէ, զի յոյժ ու'ի զօրութիւն զեր 'ի վերոյ
Գիտէ զանձն իւր անցեալ յանմահից դիցն 'ի զաւմարաւէ ։

Արդ չարիս զինչ եւ յղեսցէ միում միում 'ի ձէնջ՝ տարայք ,
Զի խիթամ թէ եւ Արեայ զարգիս եղեան ինչ կայ հասեալ .
Այն զի որդին իւր կորեաւ 'ի ճակատու , սիրելին յարս ,
Ասկաղափոս՝ զոր իւր ասէ լինել Արէսդ ահեղազօր ։
Զայս ասաց , եւ ձեռացն ափովք զազդերան առոյգաբարձ
Բախեալ Արեայ , եւ յողոց ելեալ բան զայս բարբառեցաւ .
Մի եւս արդ ինձ ցասնուցուք , բնակք յարկացս ոլիմպական ,
Ի խնդրելս ըզվրէժ որդւոյս՝ անդր յաքայեանց իջեալ 'ի նաւս ,
Թէպէտ կայցէ ինձ օրհաս՝ յԱրամազդայ լեալ շանթահար
Անկանել խառն ընդ մեռեալս յարեան թաթախ եւ 'ի փոշի ։
Զայս ասաց , եւ զձիսն Ահին եւ Երկիւղին հրամեաց լծել ,
Եւ նա ինքն ազանէր փայլակնակերպ ըզպատուաղէնս ։
Անդանօր մեծ իմն ահեղ եւ սասկալի յԱրամազդայ
Այլ նորոգ բարկութիւն յանմահսն եւ վրէժ զարթուցեալ գայր ,
Եթէ ոչ Աթենաս՝ ըզհամօրէն զնցն երկուցեալ՝
Թողեալ զաթոռն յոր նըստէր , եւ ընդ դաւիթն ստանայր արտաքս ։
Ի գլխոյ նորա կորզեալ ըզսաղաւարտն , յուսոց զասպարն ,
Եւ զնիզակըն պղնձակուռ 'ի ստուար ձեռացն հաներ յեցոյց ,
Եւ բանիւքըն խրատուք յանդիմանեաց ըզբուռն Արէս .
Մոլեգ դու խելացնոր , զեղծար արդեօք . ականջք են քեզ
Անօգուտ առ 'ի լսել , խելք եւ ամօթ կորեան գնացին ։
Ո՞չ լսես՝ զինչ լուսաճըղի աստուածուհին զրուցէ Հերա ,
Որ զնա եւս յոլիմպեանն Արամազդայ եկեալ եհաս ։
Մինթէ կամ իցէ քեզ ընդ փորձ բազում վշտաց անցեալ
Դառնալ այսրէն յՈլիմպոս ցաւովք մեծաւ եւ վշտանօք ,
Եւ այլոց ամենեցուն եղեան ինչ մեծ բուսուցանել ։
Զի թողեալ անդէն զարի տրովադացիսն եւ զաքայեցիսն՝
Այսր առ մեզ ընթանայցէ խառնակ հարկանել ընդ Ոլիմպոս ,
Բուռն հարեալ մի 'ստ միոջէ զյանցաւորէն եւ զանմեղէն ։
Ուստի քեզ պատուէր տամ արդ , մոռա զվայրոյթ ազնիւ մանկանդ ։
Զի եւ այլ ոք քան ըզնա կորովագոյն յոյժ ու'ի բազուկ
Կամ մեռեալ է արդէն , եւ կամ մեռցի յետ այսօրիկ .
Դըժուարին է զբոլորից մարդկան փրկել զազգ եւ զծընունդ ։
Զայս ասացեալ բազմեցոյց անդրէն 'ի գահն ըզբուռն Արէս ։
Իսկ Հերա զԱպողոն կոչեալ արտաքս 'ի սաճարէն ,
Եւ զԻրիս՝ որ աստուածոցն է անմահից պատգամաւոր ,
Եւ առ նոսա բարբառեալ զերագաթեւ խօսեցաւ բանս .
Պատուէր տայ ձեզ Արամազդ երթալ յԻդա փութանակի .
Եւ յորժամ ժամն եղեալ առաջիք զերեսս Արամազդայ ,
Արասջիք զոր ինչ նայն տացէ հրաման ձեզ եւ պատգամ ։
Զայս սոյնպէս խօսեցեալ՝ արգոյն Հերա դարձաւ անդրէն
Բազմեցաւ 'ի գահուն , նոքա թռուցեալ ընթանային ,

Եւ հասին 'ի մօտակավայրն Իդա՝ 'ի մայրն գազանաց ,
Եւ զԶրուանեանն ամենատես գտին 'ի գլուխ Գարգարոնի
Զի նստէր , եւ ըղձոծեալ բոյր ունէր ամպ անուշաբոյր ։
Ցանդիման լինել երկոցուն ամպրոպայնոյն Արամազդայ՝
Կանգնեցան կացին , եւ ոչ սրտմտեցաւ նոցա , տեսեալ՝
Զի ամուսնոյն սիրելւոյ բանիւն եղեն փութով հնազանդ ։
Եւ նախ առ Իրիս զերագաթեւ արձակեաց ձայնս ․
Արդ երթ , Իրիս թեթեւ , զայս ամենայն տարջիր պատգամ
Աղէայէն Պոսիդոնի , եւ մի հրեշտակ լինիցիս սուտ ․
Դադարել նմա հրաման տուր 'ի մարտէ պատերազմին ,
Ցաստուածոցն երթալ 'ի դասս եւ կամ 'ի ծովն աստուածեղէն ։
Իսկ թէ ինձ անունկնդիր լինել չառնիցէ բանիցս երեսս ,
Խորհեսցի այնուհետեւ 'ի միտս իւր եւ 'ի սրտին ,
Գուցէ յերթալս 'ի վերայ՝ չիշխեսցէ ինձ ունել ըզդէմ,
Թէ եւ հզօր է , զի քան զինքն ուժգնագոյն յոյժ կարծեմ լինել ,
Եւ աւագ երիցագոյն ․ այլ սիրտ նորա չածէ ինչ ակն
Ասել զանձն ինձ հաւասար՝ յորմէ եւ այլք իսկ երկընչին ։
Զայս ասաց , եւ մրրկոտն ոչ անսաստեաց Իրիս թեթեւ ․
Եւ յԻդայ լերանց անտի խաղացեալ էջ յԻլիոս սուրբ ։
Օրինակ իբրեւ յորժամ յամպոց սառնասեր ձիւն եւ կամ կարկուտ
Թռչի գնայ 'ի փըչմանէ արփիածինն հիւսիսակի ,
Նոյնգունակ ձեպով դիմեալ անց սըլացաւ երագն Իրիս ,
Եւ մերձ կացեալ խօսեցաւ առ մեծափառն Երկրասասան ․
Պատգամ մի առ քեզ , կապուտահեր Աշխարհակալ,
Եկեալ կամ այսըր բերել յասպարակիրն Արամազդայ ։
Հրաման տայ 'ի մարտէ պատերազմիդ դադարել քեզ
Եւ գնալ 'ի գունդ աստուածոց եւ կամ 'ի ծովն աստուածային ։
Եւ թէ ոչ անսացեալ նըմա զբանիւքն անսես ապաքէն ,
Սպառնացաւ եւ նա ինքնին գալ այսր ընդդէմ պատերազմաւ ,
Եւ պատուէր տայ հրամանի՝ քեզ 'ի ձեռացն ըզգուշ կալ ,
Քանզի զանձն հզօրագոյն համարի զքեւ զանցուցանել ,
Եւ աւուրբք երիցագոյն ․ սակայն քո սիրտ ոչ պատկառէ
Զքեզ հաւասար նմին դնել՝ յորմէ եւ այլք իսկ զարհուրին ։
Սրտմտեցեալ յոյժ մեծափառն Երկրադղորդ՝ ասէ ցԻրիս ․
Հէ զարմանք ․ թէպէտ հզօր է՝ խրոխտագոյնս խօսեցաւ ,
Եթէ զիս զուգապատիւ հարկաւ բռնիւ արգելուցու ։
Զի երեք 'ի Զրուանայ եմք հարազատք , Ռէայ ծնեալք ,
Արամազդ եւ ինքն իսկ ես , երրորդ Հայդէս սանդարամետ ։
Աշխարհ յերիս բաժանեալ՝ իւրաքանչիւր եհաս պատուոյ ․
Ինձ 'ի ծով սպիտակափառ վիճակեցաւ բնակել յաւէժ ,
Ի բախտէց , եւ Հայդեսի անկաւ բաժին մութ միգամածը ,
Արամազդայ մնաց եւ երկին լայնատարած յարփին եւ յամպս ․

Իսկ երկիր եւ բարձր Ոլիմպ՝ հասարակաց ամենեցունց ։
Սրտին իւրի՝ ոչ ըստ կամս Արամազդայ գնացից 'ի կեանս .
Այլ խաղաղ, թէ եւ հզօր, թող կայ մնայ յերիր բաժնին ։
Մի՛ բազկաւն ինչ զիս երբեք ահացուսցէ իբր ըզվատ ոք .
Դըստերաց եւ ուստերաց՝ որոց նա ինքն եղեւ ծընող՝
Լաւ լիցի յըղել պատգամ պակուցանող բանից սաստիւք ,
Ի հարկէ իսկ վըտանգին՝ լուիցեն իւրում պատուիրելոյն ։
Եւ նըմա պատասխանի մըրրկոտն Իրիս երագասլաց .
Արդ ուրեմն առ 'ի քէն, կապուտավարս Երկրապարփակ,
Ա՞յդպէս զայդ առ Արամազդ տարայց պատգամ խիստ եւ սաստիկ,
Թէ ունիցիս ինչ փոխել . զի դիւրադարձ են լաւաց միտք ։
Դըժոխոց գիտես դաշինքն իբր երիցանց արբանեկեն ։
Պոսիդոն երկրասասան կըրկնեաց առ նա պատասխանի .
Զայդ բան, Իրիս աստուածուհիդ, արդարապէս յոյժ ճառեցեր .
Ի դէպ եւ այն՝ զի զպատաշաճսըն գիտասցէ պատգամաւոր ։
Բայց 'ի սիրտ իմ եւ 'ի միտս այս հարկանի դառնութեան ցաւ,
Ցորժամ զվիճակակիցն եւ ըզնըմին բախտի բաժորդ
Բարկացեալ սըրտմըտութեան բանիւք կամի թըշնամանել ։
Այլ եւ ա՛յնպէս աւասիկ ակն յերեսացն առեալ՝ մեկնիմ ։
Իսկ քեզ այլ ինչ ասացից եւ 'ի սըրտի ըսպառնացայց .
Զի առանցոյ եթէ իմ եւ աւարողն Աթենասայ ,
Հերայի եւ Հերմեայ եւ արքային Հեփեստոսի ,
Խնայեսցէ 'ի բարձր Իլիոն՝ ոչ կամիցի աւերակել զայն ,
Եւ ըզմեծ զայս յաղթանակ արգիւացւոցըն պարգեւել,
Գիտասցէ զայս զի եւ մեզ անհընարին անկցին զայրոյթք ։
Զայս ասացեալ Երկրաշարժն ելեւ զբանակն աքայեցի ,
Եւ գնացեալ սուզաւ 'ի ծով . կարօտացան աքայեան քաջք ։
Արամազդ ամպայարոյց առ Ապոլոն ասէ յայնժամ .
Սիրելիդ Գուշակ, արի առ պղնձազէնն արդ երթ Հեկտոր .
Զի ահա Գետնադըղորդն երկրապարփակ անդր դարձեալ
Ի մեր ծանըր ցասմանէս՝ էջ գնաց 'ի ծովն աստուածեղէն .
Քանզի սաստիկ պատերազմ եւ այլոց կայր մընայր լըսել
Որ 'ի խոր սանդարամետս ըզՔըրոնոսիւ են շուրջ աստուածք ։
Սակայն այս՝ յոյժ օգտակար էր եւ թէ ինձ եւ թէ նըմա,
Զի յիմմէ բազկէս խորշեալ յառաջագոյն հըպատակեաց .
Քանզի ոչ առանց քըրտանց ինչ հանդերձեալ էր վըճարել ։
Իսկ արդ առ քո 'ի ձեռս առեալ զասպարըն քըղանցաւոր
Եւ ուժգին շարժեալ՝ արկցես ահ դիւցազանցն աքայեցւոց ։
Եւ 'ի քո, Կորովաձիգդ, 'ի խնամըս յանձն Հեկտոր շըքեղ,
Ցայն 'ի նա զարթուսցես զօրութիւն մեծ, մինչեւ աքեանք
Փախուցեալ հասանիցեն 'ի նաւատորմն եւ յԵլլեսպոնտոս .
Իսկ 'ի յայնմ ապա հետէ՝ բանիւ եւ արդեամբք խորհեցայց ես ,

Զի ոգի աքայեցիքն անդրէն առցեն 'ի մրրցմանէն :
Զայս ասաց, եւ Ապոլոն ոչ եղեւ հօրն ըստանսդանող,
Էջ դիմեաց յԻդայ լերանց՝ 'ասօրինակի թեթեւաթեւ
Հովբաղըսպան բազէին յոգաթըռիչըն արագունի :
Ըզքաջքին Պրիամու եգիտ զորդի՝ զդիւցազն Հեկտոր՝
Զի նըստէր, ոչ եւս անկեալ, եւ ժողովեալ այն ինչ զոգիս՝
Ճանաչէր զեւրեւ զընկերս, քիրտն եւ թառամումն էր դադարեալ.
Զի միտքն ըզնա կազդուրէր վահանակրօղն Արամազդայ :
Հեռասաձիգն Ապոլոնի հուպ մատուցեալ բարբառեցաւ.
Հեկտոր որդի Պրիամու, զի՞ է զի դու յայլոց փարատ
Նըստեալ կաս ոգեսպառ. միթէ ինչ աղէտք հասաւ 'ի քեզ :
Եւ առ նա հեւանդագին սաղաւարտաշարժն ասէ Հեկտոր.
Իսկ ո՞վ ես դու, գերդ մեհագոյնդ, որ հարցանես զիս յանդիման.
Ո՞չ գիտես՝ զի զիս առ խելս աքայեցւոց նաւատորմին,
Մինչ զընկերս նոր ծախէի, հարեալ 'ի լանջս իմ բըռնազօր
Այաս ահեղագոռ՝ յուժեղագոյն արկ կորովդ.
Եւ յանձն իմ թըւէի զԴըժոխոց տունն եւ զաւրուականս
Այս օրին տեսանել. զի մերձ էի փըչել զոգիս :
Ապոլոն՝ արքայն նետօղ՝ դարձոյց անդրէն պատասխանի.
Քաջ լեր արդ. քեզ այնպիսի զօր յԻդայէ մեծ զօրավիգն
Առաքեաց Զըրոսանեանն, որ 'ի թիկունս առ քեւ կայցէ,
Ըզփոււշակս Ապոլոն զոսկեսուսերս, որ եւ նախուստ
Պահապանն եմ քո հանդոյն եւ քաղաքիդ բարձրացելոյ :
Այլ արդ դու խրախուսեաշէր ըզյոգնախումբ հեծելազունդն
Երագոտն երիվարօքն առաջաստել 'ի դադեալ նաւսն.
Իսկ իմ յառաջոյ կարապետեալ անդրուվարացն՝
Հարթեցից զուղին ոտիցն, զդիւցազն աքեանս ընկըրկեցից :
Ասացեալ, մեծ 'ի հովիւ անդր ամբոխից շընչեաց կորով :
Իբր երիվար ապարատանիկ եւ մըսրամսուս ըլտկան գարւոյ
Պախուցանթափ ընթանայ գաւթեալ ընդ դաշտ արշաւընդատ,
Սովորեալ 'ի լոգանալ 'ի գեղահոս գետոյն յորձանս,
Խրախտալէր, բարձրավիզ, եւ բաշք զուսովքըն ծածանեալ,
Ինքն 'ի գեղ վայելչութեան իւրում անձին ճախրելով սէգ,
Ճեպ 'ի ճապուկ ծունկքն 'ի ծանօթ վարէ զնա վայրս յարօտ ձայկաց,
Նոյնպէս զոտքըն Հեկտոր շարժէր եւ զծունկս երագ երագ,
Ցորդորեալ ըզհեծելազն յետ զաստուածոյն ձայն լըսելոյ :
Եւ զօրէն իմն ՝ յեղջերու եղջերաւէտ եւ կամ յայծեամն
Արշաւեն ըշտապաւ բարակք ուրեարքըն շինական,
Եւ սակայն ՝ արփիամնեմ վէմ եւ անտառ թանձրամայրի
Փըրկեաց զայն, զի չէր նոցունց 'ի հրամանաց գոլ գամագիս.
Իսկ 'ի խօշխան նոցին առեւծ մօրուեղ յուղղոյ անդ երեւեալ՝
Նոյն հետայն արար ըզքնաւ հետամըտեալսն հալածական.

Սոյնպէս ցայն վայր դանայեանք միահամուռ վանէին ցանդ
Սուսերօքն հարկանելով եւ գեղարդեամբքն երկսայրեօք.
Իսկ յորժամ տեսին զՀեկտոր շահատակեալ յարանց ամբոխ,.
Զահի հարան, եւ ոգիքն առ ոտսն անկան ամենեցուն։
Խօսեցաւ ապա՛նդ նոսին Անդրեմոնի որդին Թոաս,
Ետոլեանն ազնուազոյն, աշտենաւոր քաջահմուտ,
Եւ յամակայուն կռուոյ ժիր, իսկ յատենի սակաւք յաքեանց
Յաղթէին նմա յորժամ գայր 'ի բանից պայքար մանկանցն.
Որ նոցա զբարին խորհեալ եւ խօսս արկեալ բարբառեցաւ.
Ո՛վ սքանչելիք. արդարեւ զարմանալիս մեծ յաչս արկանեմ.
Իսկ զի՞արդ յօրահասէն զերծեալ անդրէն յարեաւ Հեկտոր։
Ամպաքէն ամենեցուն անշուշտ նմա սիրտ ակն ունէր
Ընդ ձեռամբ Էասայ Տելամոնեանց սատակելոյ։
Այլ 'ի դից ոք վերստին փրկեաց զՀեկտոր եւ ապրեցոյց,
Որ զբազում ամբոխի դանայեցւոցս ելոյծ զծունկս,
Որպէս եւ այժմ իսկ կարծեմ լինել, զի ոչ առ նահատակ
Առանց ահեղագոչն Արամազդայ կայ եւ մոլի։
Այլ եկայք՝ որպէս ինչ ես ասեմ՝ լուիցուք ամենեքեան.
Խուժանին հրաման տացուք դառնալ գնալ 'ի նաւատորմն,
Իսկ որ արք զօրութեան պանծամք լինել 'ի բանակիս,
Պինդ կացցուք. առաջին եւ առ ընկճեմք թերեւս զդէմ կալեալ
Մըկընդօք ամբարձելովք. եւ զբոցարշաւն զայն կարծեմ
Զանգիտել սրտիւն եւ մի՛ մխել 'ի խումբ դանայեցւոց։
Զայս ասաց, նոքա սերտիւ լուան նմա եւ անսացին։
Իսկ իւրովքն հանդերձ Էաս եւ Թագաւորն Իդոմենեւս
Եւ Տեւկրոս եւ Մերիոն, Մեգէս Արեայ հաւասարօրդ.
Ըզգաղիմն յարդարէին ըզքաջաշաղունան հաւաքելով
Դէմ ընդդէմ Հեկտորի եւ տրովացւոց, իսկ յետ կուսէ
Խառնաղանձն 'ի նաւատորմն աքայեցւոց մեկնեալ երթայր։
Նախ տրովեանք խուռն ընդհարան, Հեկտոր 'ի գլուխ կայր մեծա- [քայլ.
Եւ առաջի երեսաց իւրոց Գուշակ փեայր Ապողոն՝
Ամպ զուսովքն ըզգեցեալ, ասպարն 'ի ձեռան ամեհամուղ,
Ահաւոր, շուրջ ծոպախիտ, հրաշանշան, զոր ետ Ճարտարն
Հեփեստոս Արամազդայ՝ յահարկութիւն բառնալ մարդկան.
Զայն նորա կալեալ 'ի ձեռին՝ առաջնորդէր մարտամբոխին։
Միաբունդ ըղդէմ կալան աքայեցիք, եւ սուր շռինդ
Ի կողմանցն երկոցունց, եւ 'ի լարից ստանուտն նետք, —
Եւ բազում գեղարդունք 'ի կաշկանդուան ուժեղ մատանց,
Էր որ վարսեալ ընդ իրանս արխական պատանեկաց,
Եւ շատ այն էր որ 'ի մէջ, չեւ ճաշակեալ մարմին սպիտակ,
Ընդ գետնին կայէին՝ յագել առ 'ի մարմնոց փափաքելով։
Մինչեւ Գուշակն Ապողոն զասպարն 'ի ձեռան ունէր անշարժ,

Ցայժ 'ի կողմանց երկոցունց խոցէին նետք, զօրն անկանէր ։
Իսկ յորժամ յերագաձի դանայեցւոց դէմս եղեալ դէտ՝
Թօթափեաց զայն եւ յաւել եւս եւ ինքնին գոչել ահեղ,
Լքոյց ընդերացն 'ի լանջս եւ մտացն զպաշտպանութիւն ։
Զարջասաց զօր օրինակ զանդեայ կամ զհօտ օդեաց ընդմէջ
Խուճապեն գազանք կրկին 'ի տարաժամ սեաւ գիշերի՝
Ընթացեալք յանկարծադէպ, հովուապետքն կալով բացէ,
Այսպէս փախեան ամլիկար աքայեցիքն, զի Ապողոն
Արկ երկիւղ, եւ տրովադացւոց եւ Հեկտորի փառս ընծայեաց ։
Ի ցրուել անդ յայնժամ պատերազմին այր զայր ըսպան ։
Հեկտոր զԱրկեսիլայ եւ զՍտիքեայ զարկեալ եհար,
Ցորոց նա պատերազմէն Բիովտացւոց էր զօրագլուխ,
Մնեսթեայ սա մեծամեծին հաւատարիմ ընկերակից ։
Էնեաս ըզՄեդոն եւ ըզՅասոս արկ յաւերէ.
Եւ էր սա հարճորդի Ոյլեւսեայ դիւցազնածին,
Մեդոն՝ եղբայր Էասայ եւ բնակեցեալ 'ի Փիլակէ,
Ցերկրէ հայրենի տարագիր, վասն առն արեան անկանելոյ՝
Եղբօր մօրուքին Երիովպեայ զոր Ոյլեւսն ունէր կնութեան ։
Իսկ Յասոս էր իշխեցող ըսպարապետ աթենացւոց,
Եւ որդի յորջորջեալ Բուկողեոնեանըն Սփեղոսի ։
ԶՄեկիստեւս՝ Պուղիդամաս, եւ Պոլիտէս սպան զԷքիոս
Յառաջնում անդ ճակատուն, եւ զԿղոնիոն՝ վեհն Ագենովր.
Եւ Պարիս ըզԴէիոքոս 'ի նահատակսն՝ 'ի փախչելն անդ՝
Ընդ ծայր ուսոյն հար յետուստ, եւ ըզպղնձին եհան ընդ թափ ։
Աքայեցւոց, մինչ սոքա կապուտէին զէն ըզնոցա զէնս,
Ի պարկէն խորեալ փոսին ու 'ի շերտափակըն արուեալ գրոհ,
Այսր եւ անդր խուճապեալք՝ անկանէին 'ի պարիսպ անդր ։
Իսկ Հեկտոր առ տրովադացիսն ուժգին գոչմամբ բարբառէր խրախոյս,
Ի նաւաքինսն անդր հրասել, եւ զարիւնոտ թողուլ կապուտս.
Իսկ զոր ես 'ի նաւացըն մեկուսի տեսից այլուր,
Անդ նմա մահ նիւթեցից, եւ ոչ եղբարքըն՝ ոչ քորք անշուշտ
Զառնիցեն զնէն 'ի մահուան խարուկածին հըրոյն հաղորդ,
Այլ շունք զնէ զնէ ուտանիցեն մերոյ հանդէպ ցրցըրանացն ։
Զայս ասաց, եւ զերիվարսն մտրակեալ ընդ ուս՝ վարեաց,
Խրախուսեալ կարգ ըստ կարգէ զտրովադացիսն, ոյք ընդ նմա
Սպառնական համբուռ զտամանք՝ անհեղադրաբ աղաղակաւ
Զկառաձիգս ձիոն ուղղեցին, եւ Ապողոն Գուշանէն 'ի դըրուէ
Զխորափոր փոսին ափունս հեշտաւ ոտիւքըն տապալեալ՝
Ի մէջ անդր հասեաց, եւ կամրջեաց զայն՝ ճանապարհ
Երկայն եւ լայն կէս 'ի չափ հասեալ միոյ տէգընկեցի,
Յորժամ այր ըզբազուկն փորձեալ կարող արձակիցէ ։
Խուռն հօսէին նոքա՛ 'նդ այն, եւ Ապողոն դիմեալ յառաջ՝



Digitized by Google

Մեծապանծն 'ի ձեռան աստղոր՝ զաքայեցւոց քանդէր պարիսպ
Դիւրաւ յոյժ, որպէս թէ ոք մանուկ զաւազն յերը 'ի ծովուն,
Որ յորժամ աղայօրէն կարգեսցէ խաղըս զաղխաղխումս
Անդրէն ընդ խաղ վերըստին ոտիւք ձեռօք ցրնդեալ ցրրուէ.
Նոյնպէս դու, Նետող Գուշակ, զբազում վաստակ եւ ըղձաժամս
Ցընդեցեր զաքայեցւոց, եւ 'ի նոսին արկեր տագնապ։
Սոյուն այսպէս արգելեալ առ նաւկիներոյն կային ընթեր՝
Քաջալերեալ ըզմիմեանս, եւ աստուածոցն ամենեցուն
Ձեռս ամբարձեալ մեծաձայն աղաչէին իւրաքանչիւր.
Գերենեանըն մանաւանդ Նեստոր՝ խնամօղն աքայեցւոց,
Գաղատէր տարածեալ բազուկս յերկինսն աստեղազարդ.
Արամազդ հայր, թէ երբեք ոք անդ յԱրգոս ցորենաշատ
Զարջառոյ կամ զոչխարի ճենճերելով պարարտ ազդերս՝
Աղերսեաց զառնալ անդրէն, եւ անհարկեալ քո խոստացար,
Յիշեա զայն, Ոլիմպեանդ, եւ զօրս հերքեա զերդեանայէն,
Մի այսպէս զաքայեցիս 'ի պարտութեան մատներ տրովեանց։
Զայս ասաց աղօթանօքեր, եւ Արամազդ ամենիմաստ
Ըզնեղեան ալեւորին լսեալ զհայցուած՝ մեծ որոտաց։
Իսկ տրովեանք, ասեալ ըզգոռ ասպարակիրն Արամազդայ,
Եւս քան զեւս յարդիւցիս զայլթ տային յուշ ածեալ ըզմարտ։
Օրինակ իմն յալթ ալիք լայնածաւալ մեծածովուն
Ըստ կողս ելեալ զեղու նաւին՝ 'ի բռնութեան հողմոյն ճեմել,
Քանզի այն է մանաւանդ որ ըզկոհակսըն կուտակէ,
Նոյն տրովեանք 'ի մեծ խօչիւն անդր ըստ պարիսպն անցանէին,
Եւ ըղձիւն յառաջ վարեալ՝ մարտ առ նաւաց գընէին խելս
Երկսայրի տէգօք մօտուստ, սորա վերուստ յերիվարացն,
Եւ նոքա 'ի սեաւ քաշեաց նաւէ բարձանց՝ յորս ամբարձան՝
Մըկընդօք երկայնիւք՝ որ անդ 'ի նաւսն առ նաւակռիւ
Կային առ ձեռն յօդուածոյք, 'ի ծայրս իւրեանց պղընձակապք։
Իսկ Պատրոկլոս, մինչդեռ տակաւ աքայեցիք եւ տրովադեանք
Ի բացէ յերապ նաւացն ըզպատանիշիւըն կըռուէին,
Յայնժամ նա 'ի խորանի անդ քաջարւոյն Եւրիպիլեայ
Կայր նըստեալ եւ զըրըդէր ըզնա բանիւք, եւ զծանր վէրուն
Ըղջեղոց ցանէր զարմանս 'ի սեաւ ցաւոցըն զիւրութիւն։
Իսկ յորժամ ընդ պատնէշն եսես հըռսեալ ըզտրովացիսն,
Եւ զուժեաց զանայեցւոցն աղաղակն շաճնդ եւ փախուստ,
Ծիչ բարձեալ վայեաց անդէն՝ ձեռացն ափովք կոծեալ զազդերսն,
Եւ յոգոց հանեալ՝ բանիւ հեծեծելով բարբառեցաւ.
Ոչ եւս այլ, Եւրիպիլէ, թէպէտ կարօտ ես տակաւին,
Կարեմ կալ մընալ աստ, զի մեծ անչուշտ զըրըդեցաւ մարտ.
Այլ ըզքեզ ըսփոփեսցէ սպասաւորդ, իսկ ես վաղվաղեցից
Հասնել ըշտապ առ Աքիլլէս՝ յորդորել զնէզն 'ի գուպար։

Ո՛ գիտէ, Թետիս 'ի բան խրատուս շարժեալ ըղձիւք նորա
Աստուածով. քանզի բարի է յորդորումն սիրելւոյ։
Եւ յաւել խրոխտ դայս՝ ընթանաւոյն իւր գարշապարք.
Իսկ աքայեցիք ալեաց կայծեն ընդդէմ տրովադացւոցն խուժելոց,
Բայց վանել 'ի նաւականերայն ոչ ուժէին զդակաւասարն.
Այլ եւ ոչ տրովադացիք ըղձանայեանց կարէին առաղմ
Հարկանել անկանել՝ երթալ խառնել 'ի վրանան եւ նաւս։
Այլ որպէս կարասէին ըղձանայփայտ՝ հարթ հաւասար
Ուղղէ հըմուտ հիւսանն 'ի ձեռն՝ որ ամենայն իմաստութեան
Խելամուտ եղէ ճարտար 'ի հանճարոյն Աթենասայ,
Այնպէս տոյգ հաւասարակ ձգեցաւ մարտ պատերազմին.
Բայց այլք զայլովք նաւակաց մարտէին 'ի գուպարած։
Իսկ Հեկտոր՝ մեծափառն Էասայ կաց դէմ յանդիման.
Եւ տոյգ զմիով նաւաւ երկեալ մաքառ՝ ոչ զօրէին,
Ոչ սա զնա գրգռել եւ հուր զնաւատորմաւղն հարկանել,
Եւ ոչ նա վանել ըզսա, իբրեւ մերձեաց զամ մի աստուած։
Անդ Էաս ճախատարախս ըզԿալետոր՝ Կլիտեայ ձեռն՝
Որ հրձիգ լինէր 'ի նաւն, եհար ընդ լանջսն գեղարդեամբ.
Թնդեցայց դղորդեալ զերկիրն, եւ 'ի ձեռացն անկաւ խանձողն։
Իբրեւ յանձն արկանէր ըղձօրեղբօր որդեակն Հեկտոր
Զի՞նչ փորձ թաւալեցաւ առաջի թուխ լաստափայտին,
Տրովադացւոց եւ լիկեանց մեծաձայն արկ քաջալերս.
Տրովադացիք եւ լիկեանք եւ դարդանեանք ընթերամարտք,
Մի՛ ուրեք զիջուցէք 'ի բաց 'ի ճակատէս յանձկութեան աստ.
Ըզկլիտեայ հանէք որդին՝ զյառաջապարիսխ նաւացս անկեալն,
Ըզկազմածս իւր կողոպտուս գուցէ տարցեն աքայեցիք։
Զայս ասացեալ արձակեաց յԷաս զա՛շտէն փայլակնաձգէտ.
Ի նմանէ վրիպեալ եհար զՄաստորեան ուստրըն Լիկոփրոն,
Զէասայ պաշտօնեայն կիթերացի զընակեալն ընդ իւր,
Որ զի այր էր սպանեալ յաստուածայինն 'ի Կիթերա։
Ըզսա 'ի վեր քան զականջն 'ի գլուխն եհար սուր պղընձով,
Մինչդեռ կայր մերձ առ Էաս, եւ 'ի խելաց նաւուն դըլեալ
Ցարտասյալ ըզգետնեցաւ հողաթաւալ, լուծան անդամքն։
Էասայ քըստմընեալ՝ բարբառեցաւ առ իւրն եղբայր.
Քաղցրուենեակդ իմ Տեւկրէ, սպանաւ ընկեր մեր մըտերիմ,
Մաստորեանըն զոր մեք՝ զառ մեզ եկեալն 'ի Կիթերեայ՝
Սիրելի ծնողացս 'ի չափ մեծարէաք անդ յապարանս,
Ըզսա մեծանձնըն Հեկտոր սպան. իսկ ո՞ւր օրհասականքդ
Իցեն նետք, եւ լայնալիճ՞ զոր քեզ Փուշակն ետ Ապոլոն։
Զայս ասաց, եւ նա 'ի միտ առ՝ ընթացաւ կաց առ նըմա
Ճապուկն աղեղն 'ի ձեռին եւ նետընկալ պատականդարան,
Եւ երագ երագ փըքքէր 'ի տրովադացիսն ոստուցանէր։

Եւ եհար ըզԿլիտոս՝ Պիսենորայ զորդին շքեղ,
Ըզհամհարզ Պուլիդամայ՝ Պանթոյածնին գերափառին,
Զի կալեալ զերասանական աշխատ լինէր զերիվարօքն,
Առ շնորհս Հեկտորի եւ տրովացւոց ընդ այն մղեալ՝
Ուր թանձրախուռն ջոկատք մըրըրկէին գընդագընդ,
Շոյտ եհաս նըմին աղէտ, զոր չարգել ոք, թէպէտ ցանկայր:
Զի յետուստ 'ի պարանոց իւր մխեցաւ ցաւոց սըլաքն,
Անկաւ նա 'ի կառացն, եւ երիվարքն ընկըրկեցան՝
Դատարկ կառս հընչեցուցեալ. իսկոյն առըջայն Պուլիդամաս
Ա՛ռ 'ի միտ, եւ ինքըն նախ երիվարացն եկն ընդ առաջ,
Զորս եւ յանձն արար յորդին Պրոտիաւնեայ յԱստինոոս,
Եւ բազում յոյժ տայր պատուէր՝ մերձ իւր զձիանն առ ակն ունել,
Ինքն անդրէն դարձեալ երթեալ 'ի նահատակսն խառնեցաւ:
Իսկ Տեւկրոս միւս եւըս նետ 'ի պղընձազէնն եհան Հեկտոր,
Եւ առնէր իսկ զըրաւ մարտին առ նաւս աքայեցւոց,
Եթէ զայրն՝ ըզգոռ մարտիկ՝ հարեալ նետիւ թափէր զոգին:
Ոչ եկաց սակայն զանխուլ 'ի զգօն մըտացն Արամազդայ,
Որ պահեալ զՀեկտոր՝ զՏեւկրոս Տելամոնեան արգ 'ի փառաց.
Զի յընտիր անդ աղեղան խըզեաց ըզլարն իւր քաջոլոր
Ի կորովս անդ գըրկացն, եւ պղնձաձոյլ փըքինն յայլ դէմ
Մոլորեալ վըտարանդի, եւ 'ի ձեռացն անկաւ աղեղն:
Իսկ Տեւկրի սոսկացեալ՝ բարբառեցաւ առ իւրն եղբայր.
Ո՛վ աղէտ. զմարտիս մերոյ խորհուրդս 'ի սպառ խըզէ աստուած,
Որ եհան 'ի ձեռացս ընկէց զաղեղնըս լիալիճ.
Եւ եբեկ ըզնորոլոր լարս որ այսօր ընդ այգն արկի՝
Կալ 'ի տեւ ժուժկալել թանձրատարափ թռուցեալ նետիցս:
Եւ նըմա պատասխանի Տելամոնեանըն մեծն Էաս.
Է՛ սիրունդ, իսկ դու թողեալ 'ի բաց զաղեղն եւ զնետս հերձակս, —
Զի աստուածոյ'նդ դանայեանըս մախացեալ խանգարեաց զայն, —
Ա՛ռ 'ի ձեռն ըզցեղարդն երկայնաձիգ, ասպար զուսովքդ,
Եւ մարտիր ընդ տրովացիս, սըրտապընդեա զայլն եւս ամբոխ.
Զի թէպէտ յաղթօղ եղեն, սակայն եւ մի՛ անմըրցում առնըջան
Զգեղատախտ կայքն քաջախիս, այլ յուշ մեզ յո՛ւշ զուպար կըռուոյ:
Զայս ասաց. նա զլայնալիճն 'ի վըրանս երթեալ եդ անդր 'ի բաց,
Եւ զուսովք շուրջանակի զչորեքթիթեղն արկեալ ասպար,
Եւ 'ի գլուխն հըզօր եդեալ ըզսաղաւարտըն գեղաշէն՝
Զձիաբաշն՝ յոր զարզմանակ ծօծէր վերուստ ահագնազէն,
Եւ առեալ զարի նիզակն՝ ըզսըրսըրեալն 'ի սուր պղնձեան
Եւ գընաց, եւ ընթացեալ հապճեպ եկաց առ Էասայ:
Հեկտոր, իբրեւ եսես ըզՏեւկրեան նետսըն վատթարեալս,
Առ տրովեանսն եւ լիկիացիս խրախոյս եբարձ ահեղագոչ.
Տրովացիք եւ լիկեանք եւ դարդանիկք մերձամըրտիկք,

Սիրելիք, արդա լերուք առ խորախոր նաւատորմին ,
Ցո՛ւց ձեզ այժ պընդութեանդ , քանզի տեսի աչօքս խմոխք
Ըղձիւքենս առն աւագի յԱրամազդայ եղեալ գերեւ ։
Զօրութիւն Արամազդայ դիւրաւ յայժ գայ մարդկան 'ի յայտ ,
Եւ յորժամ ըղձերագոյնն ընձեռեսցէ փառաց պարծանս ,
Եւ մինչ նուաղ առնիցէ եւ ձեռըն տալ ոչ կամիցի .
Որպէս արդ զարգիւացուցն ոյժըս հատանել եւ մեզ օգնէ ։
Այլ համագունդ մարտերուք առ նաւկներոյս , եւ որ 'ի ձէնջ
Նետահար կամ ախքախտոց հասցէ 'ի մահ եւ յօրահաս ,
Մեռցի եւ ոչ ինչ անշուք վասն հայրենեաց լիցի նմա մահ .
Ամուսինն եւ որդիք նորուն ըղջնի իւր ապրեսցին ,
Տուն եւ վիճակ իւր անխռով , աքայեցիքդ յորժամ գնայցեն
Նաւամիքեղ առտի չըւեալ 'ի հայրենի քաղցըր բնաշխարհ ։
Զայս ասաց եւ արծարծ զոգիս եւ զոյժ բոլորեցուն ։
Անդուստ եւ յայնմ կուսէ քաջալերէր զընկերսն Այաս .
Ամօթ , արգիւացիք . այժմ լիցէ շահ , կամ կորընչել
Կամ ապրել՝ եւ ըղչարիքս հանել մերժել 'ի նաւկներոյս ։
Ա՞կն ինչ ունիք , զի թէ Հեկտոր կորդակախորոսս կալցի զնաւակս ,
Հետիոտս հասանիցէք իւրաքանչիւր 'ի հայրգ երկիր .
Ո՞չ լսէք Հեկտորի զամբոխն ոգւոյն խրախուսելոյ ,
Որ ահա զնաւահանդէսս հրձիգ առնել խիզախեալ գայ .
Օ՜ն եւ օ՛ն , ոչ 'ի կաքաւս ինչ հրաւիրէ , այլ 'ի գուպար ։
Իսկ մեզ չիք ինչ քան զայս՝ խորհուրդ եւ միտք ազնըւագոյն ,
Զոտս 'ի կռիւ հարկանել եւ կալ խառնել զձեռս եւ զկորով ։
Լաւ լիցէ՝ կամ կորընչել եւ կամ ապրել մի անգամ ,
Քան յերկար հաշել մաշել 'ի թախծալից պատերազմի՝
Առաւիր այսպէս առ նաւս՝ 'ի վատթարաց աստի արանց ։
Զայս ասացեալ՝ յարոյց զոգիս ամենեցուն եւ զզօրութիւն .
Անդ Հեկտոր զըՍքեդիոս ըսպան զորդին Պերիմեդեայ՝
Զիշխան փոկկեացւոց . Այաս ըսպան զԼաւոդամաս՝
Ըզհետեւաց զօրավար՝ զԱնտենորի զուստըըն շքեղ .
Եւ զՈտոս ըզԿիլլենեան՝ Պուղիդամաս հար սատակեաց
Ըզհամհարզ Փիւլեւսենին՝ զեպէացւոց մեծանձանց պետ ։
Զայն տեսեալ՝ դիմեաց Մեգէս , Պուղիդամաս խուսեաց 'ի կողմ ,
Ի սմանէ վրիպեաց նա , քանզի թոյլ ոչ ետ Ապոլոն
Թէ զաւակ Պանթոոսի՛նդ նախամարտիկս անկցի տապաստ ։
Այլ նորա 'ի մէջ կըրծիցըն Կրիզմոսի ցըցեալ զաշտէն ,
Սա գլորեալ զարկաւ զգետնի , եւ նա կապտեաց ըզզէնսն յուսոցն ։
Ցայնժամ նըմա եւ ախոյեան Դոլոփս 'ի տէգ քաջահըմուտ ,
Լամպետեանըն զօր հըզօր մըրցանաց քաջ արուեստագէտ
Ազնըւագոյնըն յարանց ծընեալ Լամպոս Լաւմեդոնեան ։
Սա տիգաւ զՓիւլեւսենի վահանն եհար անդ շեշտ ընդ մէջ

Հուպ 'ի վերայ յարձակեալ, սակայն պահէր զնա Թանձրըր զրահ
Զոր կըրէր կարաւանդիւք պատշաճաւոր, եւ զոր Փիլեւս
Ած երբեմն յԵփիւրայ՝ 'ի Սելլէէս ջուրց վտակաց.
Զի հիւրընկալ իւր Եւփետէս արանց արքայն էր ընծայեալ՝
Ապաւէն 'ի պատերազմ ընդ Թշնամեաց դէմ ամրութեան.
Որ եւ յայնժամ յորդեկէն մարմնոյ հերքեաց ըզսատակումն:
Ըզսորա ագընձաձոյլ եւ Թաւարաշ գըլխանոցին
Զխորանեկն յետին սատրաս հարեալ Մեգէս սուր գեղարդեամբ՝
Հատ ընկէց ըզզարդամանակըն ձիագէս, որ ողջ անկաւ
Հողեալ յերկիր, դեռ եւս 'ի գոյն ծիրանեբոսին պայծառափայլ:
Մինչ կայր ակն 'ի յաղթանակ պատերազմեալ ընդ իւր 'ի սակ,
Օգնական հասեալ նըմին Մենելաւոսն արիական՝
Կաց զանխուլ տիգաւն առ կողմն եւ զուսն եհար առ 'ի Թիկանց,
Եւ սըլացըն անց մակեդին ընդ լանջս իւր Թափ մըխեալ յառաջ.
Ի բերանս հարեալ նորա տապալեցաւ Թաւալագլոր:
Դիմեցին երկոքեան զերծուլ յուսոյն ըզպղընձի զէնսն:
Իսկ Հեկտոր ազգայնոցն ամենեցուն տայր քաջալերս,
Եւ կըշտամբէր նախ զարքն Մելանիպպոս Հիկետաւոնեան,
Որ երբեմն ըզծանըրաքայլս հովուէր անդէայս 'ի Պերկոտէ
Մինչ դեռ տակաւին Թշնամիք չեւ էին հասեալ.
Իսկ յորժամ Դանայեցւոց [illegible] եկին նաւեր
Դարձ առաջ յԻլիոն՝ առաքինեալ 'ի Տրովացիս,
Առ Պրիամ օԹեւանեալ՝ պատուեալ նըմին որդւոցըն զոյգ.
Զոր կըշտամբեալ Հեկտորի եւ բարբառեալ խօսեցաւ զայս.
Թողացուցո՞ք ուրեմն այսպէս, Մելանիպպէ, եւ ո՞չ բընաւ
Մորմոքէ սիրտ քո սիրուն ընդ մահ որդւոյ մերոյ հօրեղբօր:
Ո՞չ հայիս, զիա՞րդ ընդ զէնսըն Դոլոպսի կան Թարթափեալ:
Այլ արի. ոչ եւս հեռուստ ընդ արգասեանս է մարտընչել,
Մինչ չեւ մեր ըզնոցին սատակեալ կեանս, եւ կամ նոցա
Հիմն յարեւ զբարձր Իլիոս ըզնջեալ, սպանեալ ըզքաղաքն բընիկս:
Զայս խօսեալ՝ խաղայր յառաջ, զհետ երԹայր այրն աստուածա-
Եւ մեծն Այաս Տելամոնեան զարգիւացիս սըրտապնդէր. [կերպ:
Լերուք յարս, ո՜վ սիրելիք, եւ 'ի մըտի դիջիք զամօԹ,
Պատկառեալ 'ի միմեանց 'ի կարեւոր պատերազմունս:
Յամօթխած 'ի մարդկանէ շատ են ապրեալք քան սատակեալք,
Իսկ փախըստէից՝ ոչ պարծանք կանգնին եւ ոչ զօրութիւն ինչ:
Ասաց զայս, բայց եւ նոքա խիղճին էին յօժարք 'ի նպաստ,
Եւ զբանսն 'ի միտ առնուին, եւ պատնիշաւ պղընձակուռ
Ցանկէին ըզնաւատորմն, իսկ Արամազդ դըրդէր զտրովեանս:
Եւ դըրդեաց զԱնտիլոքոս Մենելաւոսն ահեղագոչ.
Քան ըզքեզ, Անտիլոքէ, չիք ոք կըրտսեր յաքայեցիս,
Ոչ հանգոյն քեզ երագոտն եւ ոչ 'ի մարտըս կորովի.

Արգելք զայր ոք խոյացեալ հարկանիցես 'ի տորմացուց ։
Զայս ասացեալ՝ ճիգն անդրէն գընաց, առկայն ըզնա զարթոյց ։
Եւ Թըռեալ յախոյենաց անախ, ձըգեաց զաշտէն փայլուն
Աչս ածեալ շուրջ զիւրեւ․ խոկ յարձակել առն ըզմըկոնդն՝
Ընկըրկեցան տրովացիք, բայց ոչ նա զգէնն ընդ վայր ընկէց․
Այլ զորդին Հիկետաւոնեայ զՄենալիպպոս խիզախական՝
Որ գիմեալ գայր 'ի կուխ, եհար ընդ լանջըսն առ բատեամբն․
Եհան դըղորդ յանկանելն, եւ զաչըս իւր ծածկեաց խաւար ։
Ոստեաւ Անտիլոքոս, որպէս բարակ սըրավարեալ
Ցեղնարթ մի վիրաւոր, յոր 'ի վազելն յիւրոց խըշաեաց՝
Որսորդին 'ի նա նետ գիպեցուցեալ՝ զանդամսն եղյծ,
Նոյն 'ի քեզ, Մելանիպպէ, խաղաց արին Անտիլոքոս
Դիպաղերծ առնել ըզզէնսդ․ այլ ոչ զանխուլ եղեւ Հեկտոր,
Որ նըմին եւ ախոյեան արշաւասայր 'ի ճակատուն ։
Ոչ եկաց Անտիլոքոս, Թէպէտ եւ ժիր պատերազմող,
Այլ փախեաւ սոսկացեալ, իբրեւ գազան եղեռնագործ՝
Որ ըզգամփռըն խոշոշեալ կամ զանդէորդն առ արջառօք՝
Փախուցեալ գընայ մինչ չեւ գումարտակեալ արանց ամբոխ․
Այսպէս փախեաւ Նեստորեանն, եւ Հեկտորի եւ տրովադեանց
Զայն առհեղ եղեալ ըզհետ՝ նետս հանէին հեծեծելիս․
Նա դարձաւ եկաց անդէն յընկերակացն հասեալ ջոկը ։
Իսկ տրովեանք, յառիւծուց երեւեալ տեսլ շաղղակերաց,
Ի նաւկնեարըն ձեռնէին՝ զԱրամազդայ լըցեալ հրամանս,
Որ ոյժ մեծ տայեր նոցա, եւ զարգասեանցն ոգիս մեղկեալ՝
Ի գերեւ ըզփառսն հանէր, խոկ 'ի նոսա շըռնչէր խրախոյս ։
Քանզի կամք որոտին էին՝ Պրիամոսեանըն Հեկտորի
Տալ պարծանս, 'ի նաւափայտըն կորածայրս հըրձիգ լինել
Հուր անխափանջ սաստկատոչոր, եւ զաղաղէն խընդէր Թետեայ
Բոլանդակ հանել 'ի գլուխ․ զի յայն հայէր զգօնն Արամազդ,
Տեսանել զամ մի աչօքն ըզբոցակէզ նաւուն ճաճանչ ։
Զի յայնմհետէ մերըղառէն տրովեանց փախուստ 'ի նաւկնեարյն
Հանդերձեալ էր նիւթել եւ գանայեանց շնորհել ըզփառս ։
Ցայս խորհուրդ՝ ըզՊրիամեանն Հեկտոր գըրգէր 'ի խոր մակոյկսն,
Որ ճիգնէն խոկ գըլխովին գէտաւին եղեալ յայն նըկըրտէր,
Եւ մոլէր որպէս Արէս նիզակաճօճ, կամ հուր ծախիչ
Մոլեգի՛նդ սարըս լերանց 'ի Թաւաթուփ Թանձըր մայրւոյ ։
Փըրփուր ըզբերանովըն գիզանէր, եւ աչք նորա
Ի ներքուստ ահագնատես յունից ցայտէր փայլատակունս,
Եւ գըլխանոցըն զիրանամզքն ահեղակերպ ճօճէր 'ի մարտն ։
Այն զի նա ինքն Արամազդ յարփւոյն պաշտպան կայր Հեկտորի,
Եւ ըզնա միայն 'ի խուռն յոգնածողով քաջորերոյ՝
Պատուեալ փառաւորէր՝ որ կարճակեացն էր լինելոց ․

612

Զի տագնապէր յեւր վերայ զճակատագիր օրհաս մահուն
Պալլաս Աթենաս յուժգին բազկէ Պելիածնին։
Եւ ցանկայր փլուզանել զճակատս արանց՝ թեւակոխեալ
Ուրանօր եւ բազմամբոխ տեսանէր գունդ եւ զէնս ընտիր.
Բայց եւ այնպէս բեկանել զօրէր ինչ ոչ, թէպէտ ճեպէր։
Զի խումբ գործեալ բրգաձեւ համբարտակեալ կային ընդդէմ,
Իբրեւ վէմ՝ հուպ 'ի սպիտակ ծով սեպացեալ կարկառակոյտ,
Զի շըչօղ հողմոց ընդդէմ ունի սրարշաւ հրոսակելոյ,
Եւ ալեաց լեռնացելոց՝ որ դիմեալ յինքըն խորտակին.
Դանայեանք նոյն ընդ տրովեանց ժուժկալէին ալինդ աներկիւղ։
Նա սակայն հրացայտ շուրջ փայլակնացեալ՝ ոստեաւ 'ի խուռն,
Եւ անկաւ յայն երբ ալիք՝ որ յերագ նաւ անկանիցի
Հրահոսակ հողմասուն մըրրկեալ յամպոց, եւ նա բոլոր
Փըրփրապէզ ծածկեսցաւ, եւ դըժընդակ մըրրկին շունչ
Մըռընչէ յառագաստին, յահէն դողան նաւաստից միտք,
Զի սուղ ինչ խըտրոցաւ 'ի մահուանէ հատանեն ուղ.
Այսգունակ 'ի լանջս իւրեանց աքայեցւոց վարանէր սիրտ։
Սակայն ինքն իբրեւ առիւծ չարախորհուրդ հասեալ յանդեայ՝
Որ յեղտիւրս ծայրածաւալ մարգաց բիւրուց բիւրք արածին,
Ընդ նոսին անդուորդն 'ի մարտ ընդ գազանին գեռ անհըմուտ
Ի վերայ կըռուել արեան եղջերակոր իւր երընջուն,
Ցառաջինս եւ 'ի վերջինըս ցանդ նախրին բերէ պարապ,
Իսկ նա 'ի մէջ անդր ոստուցեալ կալեալ զերինջըն լափլըպէ,
Այլք ողջոյն սասանեցան. նոյնպէս յայնժամ աքայեցիք
Ցաստուածուստ, 'ի Հեկտորէ եւ 'ի հօրէն Արամազդայ
Համօրէն փախեան, եւ նա զՊերիփետէս միայն ըսպան
ԶՄիկենացի՝ զԿոպրեայ սիրուն ձեռ, այնմ որ գնայր հրեշտակու
ՅԵւրիսթեւս արքայէն առ Հերակլեանն արուորութիւն. [Թեառք
Ի հօրէ անտի ծընեալ 'ի վատթարէն ընտիր որդի
Պէս պէս լաւութեամբք, թէպէտ ոտիւք, թէպէտ մարտիւ,
Եւ մըտօքն ընդ առաջինսըն Միկենեանց ճոխապաճոյճ,
Որ յայնժամ Հեկտորի մատոյց ըզփառսըն գերագոյն։
Զի դարձեալ յետս ընդ կըրուկ՝ ընդ ասպարին հարաւ շըրթունն՝
Զոր կըրէր ալձըրղնաւոր՝ սլաքայ ընդդէմ պատնիշափակ.
Ընդ գըլթեալ գայթագղեալ անկաւ յորսայս, եւ գըլխանոցն
Ահաւոր իմն եռ բոմբիւն ըզծամելեօք կործանելոյն։
Զգաստ եղեւ իսկոյն Հեկտոր եւ ընթացեալ առ նա մատեաւ,
Հար 'ի կուրծսըն տեգ եւ սպան հուպ առ սիրուն ընկերակցօքն,
Որ թաղծեալք ըզմըտերմէն՝ ոչ կարացին օգնել նըմա,
Երկուցեալ յոյժ եւ ինքեանց յաստուածայնոյն 'ի Հեկտորէ։
Ցանդիման հասին նաւայն, որ ցանկեցին զնոսա վերինքն՝
Որչափ նախն էին հանեալք, եւ խուժէին նոքա զաղքք։

Իսկ արդեանք յառաջակարգ նաւաց մեկնեալ առ տագնապին
Անդէն առ վըրանօքն առին զտեղի միահամուռ,
Ոչ ցըրուեալք ընդ ճամբարն. ամօթ եւ ահ կալաւ զնոսա ։
Զի անդուլ յաւէժաբար գոչմամբ միմեանց տային խրախոյս,
Գերենեանըն մանաւանդ Նեստոր պահպանն աքայեցւոց,
Պաղատէր վասն հարցն եւ մարց՝ միում միում արկեալ աղերս.
Քաջ լերուք, ո՛վ սիրելիք, զմարդկան 'ի միտ արկէք զամօթ.
Յուշ լիցին իւրաքանչիւր որդիք, կանայք, ինչք եւ ծնօղք,
Թէպէտ ուրուք կենդանիք եւ թէ ուրուք մեռեալքն իցեն.
Ես նոցա փոխանակ որ չէնըն մօտ՝ կամ աստ յողդք,
Պի՛նդ կացէք արիաբար, եւ 'ի փախուստ մի՛ դառնայցէք ։
Զայս ասացեալ ընդոստոյց զոգիս եւ զմիտս ամենեցուն ։
Զամպ միգին զաստուածառաք յաչաց նոցա բարձ Աթենաս,
Եւ աստի անտի նոցա լոյս մեծ ծագեաց յերկուց կողմանց,
Թէ 'ի նաւացն հանդիսէ, 'ի զուգակիր թէ ճակատուէն ։
Եւ տեսին ըզՀեկտորն ահեղագոռ եւ զիւր համհարզս
Որ 'ի թիկանց կողմանէն 'ի բաց կացեալ կռուէին ոչ,
Եւ որ անդ զերագ նաւուքըն մղէին ըզպատերազմ։
Իսկ մեծանձինն Այասայ չեղեւ հաճոյ սրտին անդ կա՛լ
Ուր անցեալ առ հասարակ կային որդիք աքայեցւոց,
Այլ մեծաքայլ վազվազէր ընդ նաւկներոյն ձեղուանց տախտակս,
Եւ շարժէր 'ի ձեռսն հեծան մի անճոռնի նաւամարտացու,
Մածուցեալ երկաթագամ քսան եւ երկուց կանգնոց 'ի չափ ։
Որպէս այր ձիախաղաց յերիվարել հըմտամարզիկ
Երիվարս յորժամ ընտրեալ զատանիցէ չորս 'ի յոգունց,
Ի դաշտէն ընդ արահետն 'ի մեծ ոստան մղեալ վարէ.
Զարմացեալ պըշնուն բազումք, արք եւ կանայք, ինքն անյողդողդ
Միշտ անսայթաք միոյ 'ի միւս վազեալ փոխի, նոքա թռչին.
Նոյն ընդ երագ նաւուց բազում յարկաց տախտակս ոստնոյր Այաս
Մեծամեծս ընթանալով, եւ ձայնն յերկինս ժամանէր ։
Զի անդուլ ահեղ գոչմամբ դանայեցւոց կարդայր խրախոյս,
Պնդապէս կալ պահպանել ըզնաւատորմն եւ ըզխորանս ։
Եւ ոչ Հեկտոր կայր մնայր 'ի կուռ վառեալ տրովեանց գընդին,
Այլ խարտեաշ որպէս արծուի հաւուց թռչնոց դիմեալ յերամ
Արօրելոց 'ի ճարակ ըզգետեզերբ ջուրց վըտակաց
Սագաց կամ խորդուց, երկայնավիզ կամ թէ փորոց,
Խոյանայր այսպէս Հեկտոր ուղիղ 'ի նաւ կապուտագլուխ
Նըկըրեալ յառաջագէմ, եւ Արամազդ մղեաց ըզնա
Մեծայաղթ ձեռամբն յետուստ, եւ ընդ նմին գրգռէր զխուժանն ։
Եւ անդէն զկարկուրելիք մարտ դառնութեան յարդարեցաւ.
Գոյր կարծել անխոնջելիս եւ անվըկանդս ընդդէմ միմեանց
Պատահեալս 'ի պատերազմ, այնպէս ուժգին ոգորէին ։

696

Digitized by Google

Եւ այս միտք մարտուցելոցն էին, զի ոչ աքայեցիք
Ակն ունէին ապրելոյ յեզերանէ, այլ սատակման.
Իսկ տրովեանց սիրտ խիզախէր իւրաքանչիւր 'ի լանջս իւրեանց
Հրձիգ ըզնաւսն առնել՝ ջընջել ըզդիւցազունսն աքայեցիս:
Սովին խորհրդովք տային սոքա 'նդ իրեարս ճակատ:
Սակայն բուռն եհար Հեկտոր զանդրընդաչու նաւին խելաց՝
Գեղանւոյն ծովահերձի, որ 'ի Տրոյա զՊրոտեսիլաւ
Էր բերեալ, եւ ոչ անդրէն 'ի հայրենին դարձոյց երկիր:
Ըզսորա լաստափայտիւն աքայեցիք եւ տրովադեանք
Մօտ առ մօտ ըզմիմեանս սատակէին, ոչ ըսպասեալք
Ի հեռուստ յարձակելոյ սայրից նետից եւ գեղարդանց,
Այլ առ կուրծս արձանացեալք եւ զնոյն ըզմի զգեցեալ ոգի,
Սայրասուր տապարօք եւ փայտատօք մաքառէին,
Եւ թըրովք մեծամեծիւք եւ նիզակօքն երկբերանեան:
Եւ բազում ընտիր ընտիր վաղակաւորք ահագնագոյնք
Սեւագամ գաստապանօքն, որ 'ի ձեռաց՝ որ 'ի յուսոց
Մըրցողացն անկեալք յերկիր. եւ սեաւ գետինն արեամբ հոսէր:
Բայց Հեկտոր՝ զամ մի զխելաց նաւին կալեալ՝ ոչ եւս եթող,
Այլ բուռն հարեալ զպաղպաջունսն՝ առ տրովացիսն աղաղակէր.
Հո՛ւր առէք, եւ գըրգեցէք զուք միահոյլ ըզգուպարանդ,
Ետ մեզ այժմ Արամազդ քան զամենայն օր արժանի,
Արկանել ըզբռամբ ըզնաւքս, որ այսր ընդ հենդըն գեց եկեալ՝
Հասուցին մեզ զեան բազում առ վատութեան ալեւորացս,
Որ 'ի կամելս առ նաւուցըն խելքք մարտ եդեալ կըռուել,
Եւ ինձ ոչ տային թոյլ, եւ զժողովուրդն արգելուլին:
Արամազդ ահեղամռունչ թէ զմիտս մեր բախեաց յայնժամ,
Այլ նոյն ինքն առ տեղեաւս ահա խրախոյս տայ եւ հրաման:
Զայս ասաց, եւ սաստկագոյն անկան նոքա յարգիւացիսն,
Եւ այլ ոչ ժուժէր Էաս՝ բըռնաւորեալ 'ի խուռն արգանց.
Այլ առ խեթի կորընչելոյ՝ տեղի տայր խուռն ինչ նահանջեալ
Ի տախտ մի եօթնոտնեան, թողեալ ըզյարկ արգակ նաւուն:
Անդ դէտակն եդեալ կայր, եւ գեղարդեամբն անդըլակի
Վանէր զտրովեանսն 'ի քաշտեաց, թէ ոք բերէր զհուրըն լափլէզ,
Եւ յաւէժ ահեղ գոչմամբ՝ դանայեցւոց տայր քաջալերս.
Ո՛վ սիրելիք, քաջազունք դանայեցւոց, Արեայ պաշտօնեայք,
Եղերուք յարըս, սիրելիք, յուշ ժիր աժխոյժք. միթէ իցէ
Փարաւագս ինչ տալ անձանց թէ զոն յետուստ մեզ օժանդակք,
Կամ պարիսպ ինչ հաստատալինդ՝ արանց պահուստ յեզերանէս:
Չիք ինչ մօտ քաղաք ամուր աշտարակեայ մեզ ապաւէն,
Ուր առ ձեռըն զունդք կայցեն փոխանակել զմեր զօրութիւնս.
Այլ 'ի դաշտ աւազիկ տրովադացւոց կուռ վառելոց՝
Զառ 'ի ծով կոյս 'ի թաւալ՝ 'ի հայրցն երկրէ նըստիմք հեռի:

Վասն որոյ՝ լոյս 'ի բազուկս, ոչ 'ի մարտէն վըհատութեան:
Ասաց, եւ մոլեգնեալ շահատակէր սուր աշտէիւն:
Որ ըզ հուր 'ի ձեռս առ. խոր նաւս հասանէր 'ի տրովադեանց՝
Ի շնորհս երեսացըն Հեկտորի յորդորելոյն,
Հարկանէր զայն Էաս՝ դիմակեցուցեալ երկայն տիգաւն.
Եւ անդ նաւացն առաջի խոցեաց թըւով երկոտասանս:

744

Digitized by Google

ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

---

## ԵՐԳ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Աքիլլէս շարժեալ յարտասուս եւ յաղաչանս Պատրոկլի՝ տայ նմա զիւր զէնսն եւ զզաւրսն՝ երթալ հասանել վանել զփաղանգն. յորոյ երեւելն՝ Աքիլլէս զնա վարկուցեալ տրովադացւոց, խուճապին 'ի փախուստ: Քաջութիւնք նորա, յորս եւ սպանանէ Սարպեդոնի, որդւոյ մարգրին Հրամանաւ Արամազդայ Հօր իւրոյ՝ Հուսկ ուրեմն յետ բազում կռուոյ եղելոյ փոխադրի դիականջելաւքն 'ի Լիւկիա յաշխարհ իւր: Պատրոկլէ 'ի յարձակելն 'ի վերայ քաղաքին՝ կրկին ընկենի Ապողոն. նա պատահեալ Հեկտորի եւ սպանեալ զկառավար նորա, 'ի մղելն 'ի վերայ դիականն նորա՝ զինազերծ առնէ Ապողոն զՊատրոկլոս, Եւփորբոս վիրաւորէ, Հեկտոր սպանանէ:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱ̀Ն

## ԵՐԳ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՐՈԿԼԻ

Այսպէս սոքա զեկեղատախտ ողորկէին լաստափայտեան.
Իսկ Պատրոկլոս Աքիլլեայ՝ հովուին ազանց՝ կայր առաջի,
Հեղոյր ջերմ արտասուս՝ իբրեւ աղբիւր Թըխակայլակ
Որ 'ի բարձր ապառաժէ հոսէ վըտակ նըսեմաստուեր :
Զոր երագոտն Աքիլլեւս տեսեալ դիւցազնըն գըթացաւ,
Եւ ասէ բարբառեալ առ նա բանիւք Թեւաւորօք.
Զի՞ հարեալ կաս յարտասուս, Պատրոկլէ, զերդ աղջիկ մի տղայ,
Որ ընդ մօրն ընթացեալ՝ աղաչէ զնա բառնալ 'ի գիրկս,
Հարեալ բուռն ըզհանդերձէն, եւ ճեպելով ըզնի խափան,
Եւ 'ի նա նայի լալով կողկողելով՝ զի զինքն առցէ.
Նըմին գունակ, Պատրոկլոս, զորովալիր ողբս հարկանես :
Եթէ զրո՞յց ինչ բերեր Միրմիդոնաց կամ Թէ ինձ,
Կամ համբա՞ւ ինչ առանձին դու 'ի Փթիոյ միթէ լըւար :
Կենդանի դեռ եւս ասեն զՄենեկտիոս Ակտորեան ծեր,
Ողջոյն Էակոսեանն է եւ Պելեայ 'ի Միրմիդոնս,
Ընդ որոց յոյժ 'ի յոգի հարկանէաք ընդ մահ նոցա :
Միթէ դու զարգիացւո՞ց առնուցուս սուգ՝ զի կորընչին
Առ գոգաւոր նաւակներոյն 'ի սակս իւրեանց ժըլատութեան.
Մի՛ պահեր 'ի մտի՝ խօսեաց, զի երկոքեանքս գիտասցուք :
Ասացեր խոր հեծութեամբ առ նա, հեծեալըդ Պատրոկլէ.
Ո՛վ Պելեայ ծնունդ Աքիլլէւս, աքայեցւոցս ըսկայազօր,

Մի՛ ցասնուր. զի այնպիսի յաքայեցիս բռնացաւ վիշտ:
Զի որ կային միանգամ յառաջագոյն քաջք ամենայն,
Անկեալ 'ի նաւսն դընին՝ որ նետահար, որ տիգախոց:
Տիգեանըն քաջազօր Դիոմեդէս կայ նետահար,
Տիգախոց Ագամեմնոն եւ Ոդիսեւս նիզակաւոր,
Վիրաւոր եւ 'ի փրքնէ յազդեր իւրում Եւրիպիլոս.
Ցորոց կան 'ի դարման ամենահնար բժշկապետք
Ապաքինել ըզվէրսն, իսկ դու դըժոխահեռ ես, Աքիլլէւս:
Քա՛ւ մի՛ զիս այդ կալցին ոխք, զոր դու քինաս՝ արիդ 'ի չար.
Ո՞վ 'ի քէն շահ ինչ երբեք այսուհետեւ տեսցէ որ այլ,
Եթէ ոչ յարգիացուոց զոճիր եղեան հալածեսցես:
Անագորոյն. չէր քեզ չէր ապաքէն հայր Պեղեւս ասպետ,
Եւ ոչ մայր քո Թետիս, այլ ծով ծընաւ զքեզ կապուտակ,
Այլ քարաժեռ ապառաժք, զի միտք 'ի քեզ են անողորմ:
Իսկ թէ քեզ գուշակութիւն ինչ խէթ 'ի սիրտըդ հարկանէ
Եւ քո մայրըն մեծարոյ պատմեաց ինչ քեզ յԱրամազդայ,
Այլ գէթ զիս յըղեա ճեպով, եւ զայլ ամբոխ Միրմիդոնաց
Տըւեալ ընդ իս, զի լոյս թերեւս ինչ ծագեցայց 'ի դանայեանս:
Տո՛ւր եւս ինձ ագանել զըսպառազէնըդ քո զուռովքս,
Զի զքեզ յիս թերեւս տեսեալ՝ դիւայցեն տրովեանք 'ի կըռուելոյն,
Եւ ոգի արիականքըն առկցեն որդիք աքեանց հաշեալք.
Եւ լինիցի այս՝ թէ եւ դոյզն ինչ՝ ըսփոփանք պատերազմին:
Եւ հեշտիւ անաշխատքս ըզխոնջ որեարն 'ի ճակատուց
Ցստոան անդր 'ի նաւաց եւ 'ի վրանացըս մերժեսցուք:
Զայս ասաց աղերսահայց պաղատանօք՝ յոյժ մանկամիտ.
Զի աներկբայ մահ անձինն եւ չար օրհաս ժըտէր խընդրել:
Երագոտն Աքիլլէւս յոգւոց ելեալ ասէ առ նա.
Ո՛հ զինեւ, դիւցազնարմըդ Պատրոկլէ, զի՞նչ ասացեր:
Ոչ յաստուածուստ ինչ ակն ածեալ գուշակութեան զոր գիտիցեմ,
Եւ ոչ մօրս ինչ նազելւոյ յԱրամազդայ զրուցեալ ընդ իս.
Այլ այս ցաւ ծանրաթախիծ ըզսիրտ եւ զհոգս իմ հարկանէ,
Ցորժամ այր ոք ժըպըրհեսցի զըրկահարել զհաւասարորդն,
Եւ զըլանալ 'ի պատուոյն հարըստութեամբ գոռոզացեալ.
Այս ինձ ցաւ է դըժընդակ, զի վիշտ բազում կրեցի յանձին:
Զոր որդիք աքայեցւոց ինձ զպատուցին պարգեւ զաղջիկն,
Եւ ստացեալ էր նիզակաւ՝ քանդեալ զքաղաքն ամրապարիսպ,
Զայն անդրէն Ատրիդեան Ագամեմնոն առեալ եհան
Ի ձեռաց իբրեւ յուրուք անաշխարհիկ վըտարանդւոյ:
Այլ զանցեալսըն թողցուք. եւ ոչ համբուն ինչ 'ի մտի կայր
Քէն պահել յաւիտեան, այլ զայս եւեթ էր հաստատեալ,
Մի՛ յոխեցըս ցածնուլ՝ մինչեւ եկեալ հասանիցէ
Շռշուկ եւ խաղմ մարտամբոխ գուպարածին յիմ նաւատորմ:

Իսկ դու զգեցիր զուսամբքդ զիմ պատերազմի չքնաղ անօթս ,
Եւ իշխան լինիր 'ի կռիւ Միրմիդոնաց մըրցասիրաց ,
Քանզի ստոյգ՝ տրովեանց մըթին ամպ փոթորկեալ պատեաց ըզնաւս ,
Արգիւացիք 'ի ծովափըն կոյս մըղեալք՝ կան պաշարեալ ,
Եւ չըմնայ նոցա գետին 'ի ցամաքէն՝ բայց խուռն եւեթ ։
Եւ տրովացւոց խիզախեալ քաղաքն ողջոյն հեղաւ զեղաւ .
Զի զիմոյ սաղաւարտիս ոչ արկանեն յակն ըղձակատ
Առ ընթեր փայլատակեալ . անշուշտ անդէն հալածականք՝
Լընուէին դիականամբքըն զառուառամէջս եւ ըզձործորս ,
Թէ արքայն Ագամեմնոն լեալ էր ընդ իս հեզ եւ համբոյր ։
Իսկ արդ կըռուին զճամբարաւս , քանզի Տիդեան Դիոմեդի
Ոչ մոլի նիզակն 'ի ձեռան՝ 'ի դանայեանց վանել զեղեռն ,
Եւ ոչ ձայն ինչ յԱտրիդեայ ժըպիրհ գըլխոյն բարբառելոյ
Հընչեաց յունկն իմ երբեք , այլ Հեկտորի մարդախանձին
Բըրդի զայ խրախուսելոյն ըզտրովացիսն՝ որ բովանդակ
Գըրաւեցին գոռամամբք ըզդաշտն՝ յաղթահարեալ մարտիւ զաքեանս ։
Այլ եւ այնպէս , Պատրոկլէ , արիաբար արի դիմեա
Վանել ըզժանտն 'ի նաւաց , գուցէ 'ի հուր բոցածաւալ
Հըրդեհեալ ըզնաւատորմն՝ հատցեն ըզդարձըն տենչալի ։
Բայց ունկըն դիր , որպէս ինչ ես բանիս կըշիռ եդից 'ի մտիդ ,
Որպէս զի մեծ ինչ պատիւ եւ պարծանաց բերցես ինձ շուք
Ցամենայն դանայեցւոց , այլ եւ նոքա զչըքնաղ աղջիկն
Այսրէն յիս դարձուսցեն եւ յաւելցեն պայծառ պարգեւս ։
Ի նաւացն հերքեալ զնոսա՝ դարձիր այսրէն . եւ եթէ քեզ
Շնորհեսցէ առնուլ փառս ահագնաթընդոտ այրըն Հերայ ,
Դու մի առանց իմ սակայն ընդ կըռուասէր տրովադացիսն
Իղձ լինելով գուպարել՝ եւս անմեծար զիս առնիցես ։
Եւ մի դու , յաշխոյժ խայտալդ ընդ պատերազմ եւ ընդ նախճիրս
Տրովացւոց կոտորելոց , մինչ յԻլիոն զօրավարեր ,
Գուցէ ոք յՈլիմպոսէ իջցէ 'ի դիցըն յաւերժից .
Զի դիպաձիգն Ապոլոն սըրտի մըտօք սիրէ զնոսա .
Այլ դարձ մ' 'ի նաւատորմըն ծագեալ լոյս՝ դարձցիս այսրէն ,
Եւ թողցես ըզնոսա մըրցել մարտիւ 'ի դաշտի անդ ։
Ո՛ հայր , հայր Արամազդ եւ Աթենաս եւ Ապոլոն ,
Թէ չապրէր 'ի մահուանէ ոք 'ի տրովեանց՝ որչափ եւ էին ,
Նա եւ ոչ յարգիւացւոց , եւ երկոքին մնայաք մեք ողջ ,
Զի միայն քակէաք ըզսըրբանուէր բըրգունս Տրոյայ ։
Զայսոսիկ առ միմեանս այսպէս սոքա բարբառէին ։
Իսկ Այաս ոչ եւս եկաց՝ 'ի սըլաքաց բըռնադատեալ .
Ընկճէր զնիզըն Արամազդայ միտքն եւ տրովեանքըն նետաձիգք ,
Եւ բոմբիւն ահեղագոչ շուրջ զիրանամբքըն որոտայր
Բախեալ փայլուն գըլխանոցն , որ անդադար կայր մըշտաթող

Ի պաշտօնս պղնձագործման, եւ նա յոգնեալ յաճախ ուսոյն
Գրնդապահէս միշտ ունելոյ ջջարժուն ասպարն այսր եւ անդր.
Այլ զբրդոյել ոչ զօրէին՝ առխոյեալ նետիւք շուրջ յամենուստ,
Եւ անդուլ զգրժնէ թնդումն ունէր ընդ նա, քիրտն եւ սաստիկ
Ի բնաւէն անդամոցն հոսեալ, եւ չէր ոգի կլանել.
Ի կուսաց կուսաց չարիք յեռեալ հածեալ դայէին զչարեօք:
Ասացէք ինձ արդ, Մուսայք, ոլիմպական տաճարին բնակք,
Նախ զիարդ անկաւ հուր 'ի նաւատորմն աքայեցւոց:
Զէասայ հացի զեղարդեանն Հեկտորի հուպ մատուցեալ
Զարկեալ սուսերբըն մեծաւ 'ի տեգաբունն՝ 'ի սար սլաքին,
Ընշա ընդ մէջ հատ ընկէց. ապա յայն Էաս Տելամոնեան
Ճօճէր ոյնպէս 'ի ձեռինն ըղծայրատ բունն, այլ 'ի նմանէ
Բացագոյն անկեալ յերկիր պղնձի սլաքն հնչեաց շռընդ:
Ծանեաւ Էաս յանբիծ սրտին ըզգիտըն գործ եւ սոսկացաւ.
Զի զմարտին խորհուրդս 'ի սպառ խզեալ Արամազդ ահեղաձայնն՝
Ընդ տրոյեանց յաղթութիւն կամէր, եւ խոյս ետ 'ի նետից:
Նոքա զհուրն անհնածախ արկին 'ի նաւն երագաթեւ,
Եւ անդէն ճարակեցաւ բորբոքեալ բոցն անշիջանելի:
Այսպէս 'ի խելս անդ հրրատն երթայր զփուէր ծայրածաւալ.
Աքիլլէս կոծեալ զազդերն՝ առ Պատրոկլոս ձայն արձակեաց.
Օ՛ն արի, դիւցազարմդ Պատրոկլէ ձիամարտիկ.
Զոսկերիմ հրոյն յարձակումն տեսանեմ առ նաւկներոյն.
Գուցէ զնաւսն ծախեսցեն, եւ անհնարին լիցի փախուստ:
Ագիր ըզզէնսդն փութով, եւ ես ըզզօրսն խմբեցից:
Զայս ասաց, եւ Պատրոկլոս վառէր կազմէր փայլուն պղնձով:
Եւ նախ ըզսրնապանսն գեղեցիկս յեռ ըզպարձիւքն՝
Ցօրինեալս եւ յարմարեալս արծաթեղէն ճարմանգօք.
Եւ երկրորդ ապա զզրահս առեալ 'ի լանջս իւր ըզգենոյր՝
Զնըկարէնն՝ աստղաճաճանչ՝ զէակիդեանն երագոտին:
Եւ զուսովքն արկեալ ածէր զպղընձի թուրն արծաթազարդ,
Եւ ապա յայնում հետէ զվահանն մեծ հաստահաստուս.
Եւ 'ի գլուխն հզօր եդաւ ըզսաղաւարտն արուեստաւոր՝
Ձիաբաշ, եւ զարդմանակ ճօճէր վերուստ ահեղակերպ.
Ա՛ռ կորկլն ամուր աշտեայս՝ ձեռին իւրում պատկանաւորս:
Այլ չէառ ըզանեփական Էակիդեայ քաջին նիզակ,
Ըզծանր՝ ըզյաղթ եւ ըստուար, զոր ոչ ոք այլ յաքայեցւոց
Ճօճել զօրէր, այլ միայն ճարտար 'ի նոյն էր Աքիլլէս,
ԸզՊելեան հացին զոր ետ Քիրոն նորուն հօր սիրայնոյ
Ի Պելեայ բարձունդակէն՝ 'ի սպանումն դիւցազանց:
Եւ հրաման ետ զի հապճեպ լծեսցէ զձիսն Աւտոմեդոն,
Զոր ըզկնի ճակատամուրն Աքիլլէսի մեծարէր յոյժ,
Եւ էր իւր մրտերմագոյն 'ի ժուժկալել մարտիցն 'ի գոռ:

Եւ անդէն Աւտոմեդոն զերագ ձիանն ած ընդ սամիս
ԶԱշխէան եւ զՊիտակ՝ որ զոյգ ընդ հողմըս Թըռչէին,
Զորս այսոյն Զեփիւռի ծընաւ Մըրրիկըն Ճեպոտնէ
Մինչ 'ի մարգս արածէր առ հոսանըքն Ովկիանու ։
Եւ 'ի փոխս արտաքինս յաւել զընտիր Պեդասոն 'ի կարգ,
Զոր Աքիլլէւս ապաւեաց երբեմն՝ առեալ զաւանն Էետիոնի,
Որ եւ լեալ մահկանացու՝ կից անմահից գընայր ձիոց ։
Իսկ Աքիլլէւս ընԹացեալ զՄիրմիդոնեան 'ի գէն վառէր
Ընդ վըրանըս վըրանս, եւ նոքա գէրգ գայլք գիշախանձք՝
Յորոց 'ի սիրտս է նոյին անհընարին այժ արիութեան,
Որ զմեծ եղջերաւոր ընկեալ 'ի սարըս զեղջերու՝
Կեղեքեն, բոլորեցուն երախք կարմիր արիւնաներկ,
Եւ երԹան միախուռն 'ի ծմակախիտ աղբերակունս
Լափել լեզուօք նըրբենիւք զմըրկանաւնս Թուխ վտակաց,
Զապաժոյժ արեան զգայեալ, եւ սիրտքն 'ի լանջըսն անահք,
Եւ փորք նոցին կըշտացեալք խըծկեալ նեղին ցըպարըպատիւն .
Այսպիսի Միրմիդոնացն բազմապետք եւ զօրապետք
Ըզգաջուսն արբանեկաւ Էաքիդեան երագոտին
Զեառյին, եւ 'ի նոսա կայր Աքիլլէւսն արիական
Զերիվարս եւ զարեարն ասպարաւոր խրախուսելով ։
Յիսուն նաւք էին երագք՝ զոր սիրելին Արամազդայ
Աքիլլէւս 'ի Տրոյա զօրավարէր, եւ 'ի մէն մի
Արք էին յիսնաւորք 'ի նըստարանսն ընկերակիցք .
Եւ էր հինգ կարգեալ ասպետս յորս էր վըստահ յառաջնորդել,
Իսկ ինքն՝ էր մեծազօր ամենիշխան հրամանատար ։
Միոյ գընդին առաջապետ Մենեսթիոսն էր խայտապըսակ՝
Որդի Սպերքիոսի յԱրամազդայ բըղխեալ գետոյն,
Զոր Պելեւսեան ծընաւ դուստրն գեղանին Պոլիդորա՝
Անխոնջին Սպերքիոսի, կին մարդ 'ի գէց անտի հարեալ,
Բայց յանուան՝ 'ի Բովրոսէ 'ի զաւակէն Պերիէրեայ,
Որ առին յայտնի կին արար՝ առեալ վարձանս օժիտ անթիւ ։
Երկրորդին՝ Եւդորոս արիական զօրապետէր,
Աղջկորդի՝ զոր ծընաւ Պոլիմէլէ գեղապարող
Փիլասայ դուստր, այլ նըմին արաքեալ հըզօրն Արգոսասպան,
Իւրոյին անսեալ աչօքն 'ի պարսաւոր մէջ վարձակաց
Ի պարուն ոսկեփողեքին ամբոխաղաղայթն Արտեմիսի,
Եւ ելեալ նոյնհետայն 'ի վերնայարկն աղուն Հերմէս՝
Քունեաց ընդ նմա 'ի ծածուկ, որ եւ նըմա զաւակ պայծառ
ԶԵւդորոս՝ յընթացս արագ յոյժ քաջամըրշաւ եւ զօր մարտիկ ։
Իսկ զայս յերբեւ ըզնա Իլիթիա ծընընդախնամ
Հան 'ի լոյս, եւ ետես ըզճառագայթս արեգական,
Ակտորեանն Եքեկլէսի կար զօրութեան առեալ զաղջիկն

Յապարանըն իւր տարաւ՝ բիւրս 'ի բիւրուց տըւեալ օժիտս ·
Իսկ Փիլամ ծերն ըղխոշտարըն դայեկեալ սընոյց խնամով,
Խանդակաթ սիրով փարեալ, որպէս թէ զիւր բնութեամբ մանուկ:
Երրորդին զօրավարէր արխականըն Գեանդրոս
Մեմալեանն հըռչակաւոր քան զամենայն Միրմիդոնայս
Ի գուպարել նիզակաւ, յետ համհարզի Պելիանծնին:
Չորրորդին՝ ալեւորն իշխէր Փինիքս ասպետափառ,
Հինգերորդին՝ Լայերկեայ ճաւուկն ընտիր Ալկիմեդոն:
Եւ յորժամ զամենեսին դասակարգեալ զօրավարօքն
Յօրինեաց Աքիլլեւս, պատուէր կըշքեաց սաստողագոյն ·
Միրմիդոնք, մի՛ սպառնալիքըն մոռասջիք լըցեն ումեք՝
Զոր 'ի նաւսն երագաթեւս ըսպառնայիք տրովադացւոց
Յամենայն ժամ յոխութեանս, եւ լինէիք ինձ մեղադիր ·
Պելեայ ճետ դառնացօղ, անշուշտ լեղի ջամբեաց քեզ մայրդ ·
Անհամբոյր, որ առ նաւուքն ունիս զընկերսդ բըռնաբար ·
Գէթ անդրէն դարձցուք 'ի տուն անդընդագնաց նաւատորմիւս,
Քան զի գամ մի եկն 'ի սիրտդ անկաւ այդ ժանտ բարկութեան մաղձ:
Զայս ըստէպ ժողովեալ բամբասէիք · արդ եկն եհաս
Գործ մեծ պատերազմի՝ ում ցանկայիքն 'ի սկըզբանէ:
Անդ որ սիրտ ձեզ քաջասիրան է՝ կըռուեսցի 'նդ տրովադացիս:
Զայս ասացեալ մողացոյց զամենեցուն զոգիս եւ զոյժ ·
Սերտեցան դասքն առաւել՝ յորժամ լըւան ըզթագաւորն:
Որպէս ոք՝ զի զտան բարձու զորմս յօրինէ հոծեալ քարամբք,
Ըզգոյշ լինել եւ պատրաստ 'ի հողմաշունչ բըռնութենէ,
Այնպէս կուռ կային վահանքըն կըմբաւորք եւ սաղաւարտք,
Ասպար յասպար յեց, գըլխանոց 'ի գըլխանոց եւ այր առ այր ·
Զիագէս սաղաւարտք 'ի ճօճ փայլուն գարդմանակաց
Շըփէին ընդ միմեանս · այնպէս կային մօտ առ իրեար:
Բայց արք երկու յառաջոյ զինուորէին բոլորեցուն,
Պատրոկլոս եւ Ալտոմեդոն, միախորհուրդք եւ միաշունչք,
Անդ 'ի գլուխ Միրմիդոնից կալ մարտընչել: Բայց Աքիլլեւս
Երթ 'ի վրանն եւ զգեղեցիկ ճարտար արկեղն ըզխուփն եբաց,
Զոր 'ի նաւն արծաթթաթիկն եդեալ Թետիսն էր զի տարցի,
Լըցուցեալ խըճեալ շապիկօք եւ հողմապահ պարեգօտիւք
Եւ Թաւապարդ օթոցօք · էր անդ իւր սկահ մի յօրինեալ,
Որով ոչ 'ի մարդկանէ ոք զանապակն ըմպէր ըզթուխ,
Եւ ոչ ումեք յաստուածոց՝ բայց հօր ձօնէր Արամազդայ:
Առեալ զայն յարկեղէ անտի սըրբեաց նախ ծըծըմբով,
Եւ լըւաց ապա յողող ականակիտ ջուրց վըժակաց,
Լըւացաւ եւ զձեռըս իւր, եւ սեւորակ լըցեալ գինի,
Եւ 'ի մէջ անդաստակին կացեալ ապա՝ գէտակն յերկինս,
Աղօթէր, եւ չանց Թաքուն ըզշանթաղուարճն Արամազդաւ ·

Արամազդ տէր, Դողաձիւեան, Գեղապատանի, Հեռաւորեան,
Իշխեցող կարկեձրմեալն Դողաձիւսոյ, եւ դգեւ Մեղիկանք
Ըսւըղ նըսանն պատապանմամբ անասնալուայք, գետնախոսչանք։
Լըւար զեմն ապաքէն երբեմն ըղբանս աղերսանաց,
Յարգեցեր զիս եւ հարեր տասանկ ըղձաւնդն պաշտակեան,
Արդ եւ զայս նիձ այժմիկ կատարես զաւխոս խընդրըրաւածոց։
Քանզի եա աւասնկ մինամ նուաղս 'ի տարմեղի,
Այլ զընկերս յըղեմ 'ի մարտ ընդ բազմազգաւնդ Միրմիգոնեայս.
Արագես 'նդ նըղմն ըղխաաս, ահեղամաւնչք Արամազդ։
Զօրացս զաղկան 'ի սիրտ, զի եւ Հեկտոր տայէ 'ի մես,
Թէ կարծղ նիշ եղէ եւ նիզակաւորն պատերազմել
Գաշտանեայս մեր, եթէ ձեռքն յաղթական մաքեն անպարտելիք,
Յորժամ եա խառն զըգեստս արշաւեցեմ յԱրեանն խաղմ։
Բայց ըղմարտն եւ ըշըըշուկ մինչ 'ի լասանց փախստեայէ,
Ողջանդամ առ իս առոց դարձցի յերագ նաւացս հանդերձ
Ամենայն զինուքն հանդերձ եւ զինաղըըաւ զինուորակցօք։
Զայս աղօթս արարեալ ըըաւ նորա զձայն Արամազդ.
Հայրն ըղմն շնորհեաց նորա մասն եւ մասայն ըղխաւն արգել.
Եա նորա վանել ըղմարտ պատերազմին 'ի նաւէներոյն,
Այլ զի ողջ 'ի կըսաւոյն դարձցի անդրէն՝ զայն զըլացաւ։
Արդ առ հօր Արամազդայ հեղեալ նըւէր եւ աղօթեալ՝
Դարձաւ եմուտ 'ի խորանն եւ արկ ըղպատշան 'ի տապանակին.
Ել եկաց առ դըրանն, քանզի անձկայր եւս 'ի սըրտէ
Տըսանելոյն եւ պաշտեանց կալ 'ի զենին զըժնէ մարտից։
Իսկ նոքա առասաւըղէնք ընդ մեծանձին Գատրոկղեաւ
Յաղեալ զնայքն մինչեւ խոյաս 'ի սրտապնդուն Տրովացւոց։
Եւ անդէն փութարկէին պատերազմնակ բազայ հանդերձ՝
Որոց անդ յարահետ Ճանապարհէն է նոցա տաճ,
Զորս մանկանն տակավեալ զայրացուցանէ միշտ ազգըւակ.
Միպարդանք, զի եւ յաղագս աշխարհօրէն անհեն վըտանգ.
Զի թէ ըմանն եւ անցորդ 'ի մարդկանէն ոք ուղեւոր
Դըրդեացէ յակամայս, խոցեն արկ խըռախոյս 'ի սէրտ՝
Ամենայն պահանց 'ի դուրս եւ զորդեկացըն վերէժ խընդրէ.
Ըղմայն յաղթական զգաշեալ Միրմիգոնաց ըղմըրս եւ զգետս՝
Հանէին 'ի նաւացն, եւ հընչեցին զաւանմունք անդուս։
Իսկ Գատրոկղեաս առ ընկերսն մեծաձայն կարդայր խրախուսայս.
Միրմիգոնք, մարտակիցք Գեղեանծնեն Աքիլլեսի,
Լերուք արք, սիրելիք, ըղգաշխութիւն մի մնասցէ,
Զի զԳեղեանն պատուեսցուք՝ որ Արգոսեանցն արուեստագոյն
Ի նաւացս առա հանդերձ, եւ հըպատակքս մերձակայք։
Ծանիցէ եւ Ատրիդեան մեծատաաա Ագամեմնոն
Զիւր վնասն, զի զքաջագոյնն աքայեցւոց ոչ մեծարեաց։

Բարբառեալ զայս՝ եռացոյց զամենեցուն սիրտ եւ զհոգւով,
Եւ զբոց եռուն միախուռն 'ի տրոփակցիս, եւ նուագն 'ի շուրջ
Արձագանգս հարկին ահեղ առ խրախուսանս աղաղակելոց :
Ցոլացիկք երբեւ տարափն ընդՄենեխեայ զաւակին հաւծկու,
Ըղձա եւ զարաշաւանայն 'ի վէն 'ի զարդ փայլակնացեալ,
Թունդ առ սիրտ ամենեցուն եւ զաւմարտակք դղրդրդեցան.
Խիթացեալք թէ երագոտնեն Պէլեանն որ առ նաւաքն՝
Ընկեցեալ զոտիցըն քէն եւ 'ի համբոյր եղէ եկեալ,
Այս ամենայն որք ածէին փախչել 'ի մեծ կորըստենէն :
Արձակեաց Պատրոկլոս ընդփայլածուն մրկունդըն նախ
Անդր 'ի մէջ 'ի հանդիպոյն՝ ուր յոգնախուռնք կուտակէին
Անդ առ խելքս նաւին Պրոտեսիլայ մեծահոգւոյն.
Եւ եհար ընդՊիրեքմէս՝ որ ընդՊէոնեան հեծելազօրս
ՅԱմիդոնէ յաղաղացոյց 'ի յորդաբուխն Աքսիոսէ.
Զորոյ զաջն հարեալ ուս, եւ նա յորսայս տապալեցաւ
Հառաչելով փոշեթաւալ, զնոյն ընկերք փախեան Պէոնք,
Քանզի ահ 'ի նոսա յամենեսեան արկ Պատրոկլոս՝
Սպանեալ ընդզօրավարն արիագոյն 'ի պատերազմ :
Ի նաւաց վանեալ զնոսին՝ ընդբորբոքեալ հալըրն շիջոյց.
Կէսն անդ մնաց կիսայրեաց, եւ 'ի փախուստ դարձան Տրովադացիք
Ահագին խուճապանօք, իսկ Դանայեանքըն խուժէին
Ընդնաւեալ կորկոնըքիւքն, եւ անխափանս յարեաւ աղմուկ :
Որպէս յորժամ 'ի բարձու գագաթանէ լերին մեծի
Վարեսցէ կայծակնացայտն Արամազդ զամպ կուտակեալ,
Երեւին բնաւ դիտանոցք եւ բարձրայօն սարք եւ մայրիք,
Եւ ցնելեալ պատառի յերկնուստ արփին անպարունակ.
Նոյնպէս մերժեալ դանայեանց 'ի նաւէնիցոյն զհուրն ոսոխին
Առին դոյզն ինչ ոգի, սակայն կըռուոյն չէր դուլ դադար.
Ոչ յերեսաց Արեայ սիրուն աքայեցւոց տրովադացիք
Թափէին զէմ 'ի փախուստ 'ի սեւաթույր նաւատորմէն,
Այլ հարեալ գեռ 'ի զինի՝ հաղիւ ասցէն 'ի նաւաց կոյս :
Անդ 'ի ցրուել ճակատուն՝ ըսպան այր զայր 'ի առաջորդաց :
Եւ անդէն նախ առ ժամայն Մենետեայ քաջն արիական
Զզարձեալն Արէյլիկեայ զազդրըն խոցեալ սուր մրկընդաւ՝
Թափ ընդ թափ ընդզըմըլին 'ի կողմանէ անցոյց 'ի կողմ.
Եհերձ զոսկրըն աշտէն, եւ նա յերեսս անկաւ յերկիր :
Ընթոսս վիրաւորեալ արիական Մենելաւոս,
Որոյ մերկ էին կուրծքն առ ասպարին, զանդամսն եհերձ :
Փիլեւեդէս նըկատեալ՝ զի յանդըգնեալ գայր Ամփիկղոս,
Անպարեաց եւ եհար՝ ուր թանձրագոյն է մարդոյ թանձ
Ի ստորեւ զըստին յոլըքն, եւ շուրջ զնորեւ հերձաձեան
Ջիլք եւ կարթք 'ի սուր սայրին, եւ զաչսն խաւր ծածկեաց խաւար :

Իսկ Նեստորեանք, մին խոցեալ զԱտրպատենոս հատու տեգաւ,
Անտիկողն, և մխեալ 'ի կուշտ նորա զաշտեն պղնձի,
Զառաջնեան անկեալ խորտակ. բայց արդն 'ի ձեռս հասեալ Մարիս՝
Դիմեալ եկն յԱնտիկողոս՝ յաղագս եղբօրն սրբամրմեալ,
Կանգնեցաւ առ գլխակամն. իսկ զայրն դէց Թրասիմեդէս
Կանխեալ եհար շեշտ զուսն անդէպ, մինչ չեւ ձեռս մերձ եդեալ նորա,
Եւ զբազուկն արմատաթափ հատ 'ի ներքեց անց նիզակին,
Եւ կործանեալ գունդն անդամ բազմաբազում՝ ընկէց 'ի բաց.
Ինքն 'ի գետին Թաւալեալ գլորեալ՝ զաչք խաւարեալ մահու խաւար:
Այսպէս սոքա երկոքեան յերկուց եղբարցն անկեալ տապաստ՝
Գնացին 'ի մութն անդրնդային, ընկերքն քաջք Սարպեդոնի,
Զորս արդնաբոյս Ամիսոդար սնոյց՝ որ սնոյցն ըզՔիմերայն
Զանհանդուրժելին անկերպարանէ՝ յաղագս մարդկան ժանտ գեժընդակ:
Իսկ Այեկսանդն հաս դիմեալ ձերբակալեաց կենդանւոյն
ԸզԿղէոբուղոն անդ 'ի խուռն Աքէացւոց, այլ նոյն ընդ նոյն
Լայծ ըղկեօնսն՝ մեծակոթ սրովն հատեալ ըզպարանոցն.
Արեամբ տապացաւ սուսերն ամբոյն, և զաչս խոր
Կալաւ մահ ծիրանի և բռնաւոր օրհասին բախտ:
Պենելէոս և Լիկոն յարձակեցան 'ի միասին,
Զի նիզակաւն 'ի միմեանց վրիպեալ ձգեալ էին ընդ վայր.
Արդ սոքա երկոքին դարձեալ Թրովքն ընթացան կից:
Մին Լիկոն ըզձակաղ գըդրսանոցին եհար խորան,
Սակայն հաւաղ յերախակալըն փշրեցաւ վաղվաղակի.
Իսկ անդուլ Պենելէոս միջանցեալ զուլն ընդ ունկանն,
Եմուտ սուսերն բոլոր, մինչեւ մնալ մորթոյն եւեթ,
Եւ գլուխն կայր կախեալ, լուծան ըղեան անդամք նորա:
ԶԱկամաս, Թեթեւ ոտիւքն ժամանեալ Մերիոնէս,
Ցեղանեցն 'ի կառս եհար յաջ ուսն, անկաւ նա 'ի կառացն,
Եւ հեղեալ մահախառն՝ տարածեցաւ յաչսն նորուն:
Սուր աղեղնաձիգ ընդ բերանն Իդոմենեւս հար զԵրիմաս,
Եւ արուղն պղնձի եկ 'ի ներքուստ ուղղոյն Թափանց,
Զախեալ զոսկերսն բաղխանակս և ատամունքն Թափեցան,
Աչքն երկոքին լցան արեամբ՝ զոր 'ի փեռեկ փողոց փողեցն
Ընդ բերանն և ընդ ռնգունսն, և զնա մահու պատեաց Թուխ ամպ:

Սոքա ահեղք գանձեցեալք այր բանակին իւրաքանչիւր:
Որպէս գայլք քաջասրտեալք յօդս կամ յուլս յարձակեցին
Ի հօտիցն յափշտակել զորս 'ի լերինս ցանեալ եղեն
Ի հովուին խոհեմութենէ, և 'ի նոսին եդեալ փշտակն
Անդէն վաղվաղակի խլեն տանին ըղձեռնատկարս,
Այսպէս Դանայեցիք 'ի Տրովադեան եռան զգոհ,
Որ մոռացեալ զյուշ արութեան՝ ձիգն 'ի փախուստ չարաշուք լեալ:
Իսկ Եաս մեծն՝ 'ի Հեկտոր պղնձազէն նիզակօք ձգէր

Հարկանել նիզակաւ, սակայն նա փորձ 'ի պատերազմ
Ասպարաւն արջառենի պարածածկեալ ընդլայն ուսերն՝
Ուշ 'ի շաչիւն ունէր սլաքաց եւ 'ի շըւինդ աշտէից ·
Զյեղաշուրջ յաղթութիւն մարտին ածանոյր անշուշտ 'ի միտ,
Բայց եւ այնպէս կայր եւ մնայր, պահէր զընկերսն փրկելս:
Օրինակ իբրեւ որպէս ամպ յՈղիմպոսէ սուրհայ 'նդ երկին
Ընդ արփին ջեռոտ՝ յորժամ առաքէ մրրիկ յոյժ Արամազդ,
Նոյն եւ սոցա 'ի նաւացն եղեւ խուճապ եւ աղաղակ,
Ոչ կարգաւ ինչ յօրինմամբ անցանելով անդրէն յայնկոյս:
Երագոտն երիվարք զՀեկտոր զինուքն ածանէին·
Ըզտրովեան բանակն էլեք՝ զընդմնացեալսն 'ի վիհ փոսոյն·
Եւ բազումք 'ի խորափոսի անդ կառաձիգ ձիք երիվարք
Ծայրաբեկ խորտակեալ գեղեղս՝ Թողին զկառս արքայից:
Իսկ Պատրոկլ ըղհետ խաղայր՝ եռանդն ածեալ դանայեանց յոյժ,
Տրովացւոցն հետեւել չարիս, որ 'ի խուչիւն եւ 'ի խուճապ
Զամենայն լըցին շաւիղս՝ յետ միանգամ ցիր լինելոյ·
Ի բարձունս փոթորիկ փոշւոյ 'նդ ամպովք մրրկեալ ալէկէր,
Եւ ընդ կրունկ վերջոտնեալ սալասմբակ երիվարեանքն՝
Զընթացս յոստան անդր 'ի նաւացն եւ 'ի վրանաց ոլորէին:
Պատրոկլոս՝ ուր գունդագունդ զամբոխակոյտն ետես խռնեալ,
Խրախուսեալ անդր արշաւէր, եւ գլորէին արք ընդ սռնաւքն
Անկեալք յերեսս 'ի կառաց, տապալէին գլորգլմամբ երկձիք:
Իսկ յայնկոյս պարէին փոսին ձիք երիվարքն սաստեան անմահք,
Զոր տուեալ էր աստուածոց շըքնաղ պարգեւըս Պելէոսի·
Խաղային յառաջաղէմ, եւ յորդորէր սիրտն 'ի Հեկտոր՝
Զոր խընդրէրն հարկանել, այլ տանէր զնա ձիանն երագ:
Զոր օրինակ յամպրոպից ծանրի երկիր Թուխ բովանդակ
Ցաշնայքին աւուրս՝ յորժամ սաստիկ հոսէ անդ Արամազդ
Սրտմտեալ 'ի պատուհաս արանց որ Թիւր ըզդատաստան
Դատեցին հարըստացեալ 'ի յատենի հրապարակաց,
Եւ մերժեցին զիրաւունս՝ անփոյթ վրիժուցն աստուածոց դից·
Որոց գետք առ հասարակ յորդահեղեղ առատացեալ՝
Զյոլով բըլրոց շեպ շեմակս ուղխիցն ողողք զերփեն յայնժամ,
Եւ 'ի ծովըն ծիրանի դիմեալ գըլէին ահագնամռունչ
Ընդ լերանցըն զառ 'ի Թափս, եւ խաթարեն արարք մարդկան·
Զնոյն զամբիկքն տրովականք ընթանային ուժգին փընչմամբ:
Պատրոկլոս իբրեւ պատռեաց ըզգումարտակսն զառաջինս,
Ցետս անդրէն վերըստին վարեալ 'ի նաւսն կոյս դարձոյց,
Ի քաղաք անդր ըստ ըղձիցն ելանել ոչ Թողացուցեալ,
Այլ անդ ընդ նաւսն եւ ընդ գետն եւ ընդ պարիսպըն բարձրաբերձ
Զհետ մըտեալ սատակէր եւ գյոլովից հանէր վըրէժ:
Եւ հարեալ նախ անդէն ըզՊրոնոոս սուր գեղարդեամբ,



Digitized by Google

Որոյ մերկ առ վահանին լանջքն երեւէր, երբծ զանգաման,
Եւ զգեստին զարկեալ Թրնդմամբ. իսկ յարձակեալ նա միւսանգամ
Ի Թեստոր՝ ձեռս Ենոփեան, — որ յաթոռակին ողորկադեղ
Նստէր կքծիկ՝ մտասարսափ, եւ 'ի ձեռացն երասանակք
Զերծեալ հոսեալ ցիր ընդ ցիր, — եւ նա հասեալ հար նիզակաւ
Զաջ կողակն, եւ անցոյց ընդ ատամունըս նորին Թափ.
Եւ կալեալ սուինակոթամբն՝ ըղծընոտ ձգէր կառացն,
Որպէս զի զձուկն ոք ըղասուրբ՝ նստեալ 'ի վէմ սարաւանդեալ՝
Յանդընդոց հանէ լարիւ եւ պղպղաջուն պղընձով 'ի դուրս.
Ի կառացն այսպէս ձըգէր փայլուն ախտաւ զերախտարացն,
Եւ Թօթափեաց 'ի բերանս, զոր յանկանելն ելք հոգին:
Եւ ապա զԵրիլաւոս ըղխիզախեալն եհար քարամբ
Ընդ մէջ կառափին՝ որ բովանդակ հերձաւ յերկուս
Ցամրակուռ գըլխանոցին, եւ ինքն յերկիր գլեցաւ յերեսս,
Եւ հեղեալ տարածեցաւ ըղնմա մահ հոգեկորոյս:
Ըստ նմին եւ զԵրիմաս, զԱմփոտերոս եւ զԷպալտէս,
Զդամաստորեան Տլեպողեմ եւ զԷքիոս եւ ըզՊիրիս,
Եւ զԻփէաս եւ զԵւխիպոս եւ զՊոլիմեղ Արգէասեան,
Ըզմիմեամբք առ հասարակ ընկէց յերկիր պարարտարօտ:
Սարպեդոնին իբրեւ ետես զանգօտեւած զրահեալ ընկերսն
Ի Մենիտեան Պատրոկլի ձեռացն անկեալըս դի Թաւալ,
Խրախուսեաց կըշտամբանօք զաստուածանման լիկիացիսն.
Ամօթ, ով լիկեանք. եւ յո՞ փախնուք. այժմ էք ըսթափ.
Ահա ես առնըս այսմիկ պատահեցայց արդ, զի ուսայց՝
Ո՞վ իցէ յաղթօղդ այդ, որ մեծ ոճիր գործեաց տրովեանց՝
Ըզյոգունց եւ ըզքաջաց ծունկս արարեալ կարթակոտոր:
Ասաց, եւ 'ի զուգեցն յերկիր Թափեաց զինքըն զինուքն.
Անդուստ եւ Պատրոկլի տեսեալ՝ վաղեաց 'ի կառացն էջ:
Եւ սոքին, որպէս անգեղք կորամագիլք, կեռակըռաուցք
Ի բարձու քարաժայռին ուժգին կանչիւք առն պատերազմ,
Այնպէս սոքա գոռալով միմեանց վերայ յարձակեցան: —
Զորս որդին կորովամիտն Զըրուանայ զնոսա տեսեալ՝
Գորովեցաւ եւ ասէ առ Հերա քոյրն եւ ամուսին.
Ո՛հ զիս, Սարպեդոնի սիրեցելոյս 'ի մարդկանէ,
Հասեալ է ինձ օրհաս, 'ի Մենիտեան որդւոյն պարտել:
Բայց 'ի յոյզըս խորհրդոց սիրտս ընդ երկուս միտս հարկանի.
Կամ զի զնա կենդանւոյն յարտօսրալիր դուպարածէն
Ցափըշտակեալ փոխեցից 'ի Լիկիոյ ճոխ ժողովուրդ,
Կամ Թէ տաց 'ի պարտութիւն 'ի Մենիտեան քաջին բազկէ:
Եւ նմա պատասխանի գեղեցկանազն աչեղն Հերա.
Ահաւորըդ Զըրուանեան, բան որպիսի՞ 'նդ բերան հանէր:
Զայր մի ոք մահկանացու՝ վաղուց յօրհաս ճակատագրեալ՝

Ի չարաշուք մահուանէ միթէ թափել կամիս այսրէն ·
Արա, բայց այլ աստուածք չհաւանիմք քեզ յանձն առ հասարակ :
Ասացից եւ այլ ինչ քեզ, եւ դու 'ի միտ կալջիր ուշիւ ·
Թէ 'ի տուն իւր ողջանդամ առաքեսցես զՍարպեդոն,
Տես եւ այլ ումեք 'ի դից գուցէ առաջ կամք եղիցին
Արձակել զորդին սիրուն 'ի դառնաբեկ մարտակռուէն ·
Զի շատք ընդ մեծ ամրոցաւ Պրիամեան կան պատերազմօղք
Անմահից զաւակունք, զորս 'ի ցասումն ածցես առաւել :
Այլ թէ քեզ է սիրելի, եւ խորովի սիրտդ քո,
Թող ընդ 'ի խիստ կռուեին 'ի Մենետեան Պատրոկլի ձեռս
Լինել նկուն, բայց սակայն 'ի վճռել ոգւոյն իւր եւ կենաց
Առաքեա զՄահ եւ զանոյշ Քուն զի բարձեալ տարցին զնա,
Մինչեւ 'ի լայն Լիկիոյ 'ի ժողովուրդն հասանիցեն ·
Անդ ընդ հարազատքն յուղարկեսցեն եւ բարեկամք
Ի գերեզման եւ մահարձան · զի այս է շնորհք վախճանելոց :
Զայս ասաց, մարդկան հայրն եւ աստուածոց ոչ անսաստեաց,
Բայց տարափս ընդ երկիր արիւնաներանգ անձրեւս շաղեց
Ի պատիւ սիրուն որդւոյն՝ զոր հանդերձեալ էր Պատրոկլի
Սպանանել 'ի պարարտա Տրովա հեռի յիւր աշխարհէն : —
Իսկ սոքա իբրեւ դիմեալ հասին առ միմեանս հատանելին,
Անդ յայնժամ Պատրոկլոս զհռչականունըն Թրասիմեդէ,
Զաքաջին Սարպեդոնի զերեւելի պաշտօնեայ քաջ,
Հարուածեալ 'ի ներքին որովայնին՝ զանդամսն եղծ :
Սարպեդոնն երկրորդ դիմեալ փայլուն տիգաւ՝ վրիպեալ անտի,
Զերիվարն եհար Պեդասոս ընդ աջակ ուսն նիզակաւ,
Որ փռնչացեալ, 'ի փչել զոգին, անկաւ անդ վրնջելով
Ընդ փոշին հողաթաւալ, եւ շունչ ոգւոյն թռուցեալ գնաց :
Իսկ ամոլքն էին 'ի հեռու, լուծն 'ի ճռնչել, խառն երասանք ·
Զի որ 'ի փոկան սրտաքինս՝ անկեալ դընէր ձին 'ի փոշւոջ :
Եգիտ այսմ Աւտոմեդոն կորովաձեռն դուլ եւ ճարակ ·
Ի թանձրաթաթմբ ազդերէն ձգեալ ըզլթուրն երկայնաշուք,
Կարկառեալ եւ զառընթերն եհատ, չեղեւ ապաժամանն ·
Ուղղեցան միւս երկուքն եւ զատեալք մըտին՝ 'ի գոլորս ·
Խառնեցան եւ արք անդրէն 'ի կենախոյզ մարտին գուպար :
Անդ Սարպեդոնն միւսանգամ փայլուն տիգաւն սխալեցաւ,
Աջակէն սայր 'ի վերուստ ահեակ ուսոյն անց Պատրոկլի,
Ցնկէն անհուպ · ընթանի ապա եւ պըղընձաւորն Պատրոկլոս,
Եւ սորայն ոչ 'ի նանիր ինչ 'ի բազկէն փախեաւ մըկունդ,
Այլ եհար՝ ուր առագաստն ընդհաստոյժ սիրտն ամփոփեալ է :
Եւ անկաւ որպէս տոսախ եւ կամ բարդի մի տապալեալ
Կամ թեղօշ մի բարձրաբերձն, զոր 'ի լերինս հիւսանց մանկունք
Նորաթեք տապարօքն հարին լինել 'ի նաւափայտ,

Նոյն սաստիկ երկմտութեան եւ կասկածոյ կայր նա զի տաղապատ
Զաստուածանմանն կործանելով զպատուական արկեալ յարիւնոտ հող։
Օրինակ իմն առիւծ հրոսեալ յանդեայն երամին ըզցուլ
Ըզխարտեաշ եւ զմեծամիտս՝ յերինջաց ջոկ հանդարտագնացաց,
Եւ կորընչելի տախծանօք ընդ ծամելեացն հեծեծելով,
Նոյնպատուական մեծահասակ լիկեանցն ալեւ 'ի Պատրոկլէ
Վիրաւոր՝ գոչէր ըմբայր եւ զանձկալին կարդայր զընկեր.
Գլաւկոս սիրուն՝ ընդ քաջաց քաջամարտիկ, այժմ յոյժ 'ի դէպ
Կանգնել կալ քեզ նահատակ եւ խիզախել 'ի պատերազմ.
Յանկալի լիցի քեզ արդ, թէ ժիր իցես, զբժնէ գուպար։
Նախ զորեարն արիական՝ ըզլիկեանց ալեարն յորդորեա
Ընթացեալ ընդ ամենայն, զի կռուեսցին զՍարպեդոնիւ,
Ապա եւ դու յիմ վերայ զինեցես մարտ 'ի սայր սղքնձի։
Զի ես քեզ պատուհասեալ ամօթականք եւ նախատինք
Լեցիմ միշտ զօր հանապազ, եթէ երբէք աքայեցիք
Մերկասցեն ըզզէնս յինէն յանկելոյս աստ 'ի կռիւ նաւաց։
Աղէ պինդ կաց զօրացեալ, քաջալերեա եւ զգունդդ ողջոյն։
Այն ինչ բանիցն 'ի բերանն էին՝ կափոյց մահուան վախճան
Զաչս նորա եւ զռնգունս. իսկ նա 'ի լանջացն աքացի
Տրոփեալ կորզեաց ըզգեղարդն, եւ սրտանդերքն եկին ընդ հետ.
Եւ ըզտէգ նիզակին եւ զհոգի ոգւոյ Թագաւորաց համայն։
Միրմիդոնք հաստատ կալան անդ զերիվարս իւր ըղձախորշեալս,
Անձկացեալս 'ի փախուստ՝ 'ի թափուրանալ տեարցն կառաց։
Գլաւկոսի տառապեալ ցաւեաց 'ի լուր ձայնի նորա,
Սիրտ նորա մորմոքեցաւ՝ զի յօգնութիւն ոչ ժամանէր.
Եւ զբազուկն առեալ ձեռամբ ճմլէր մարձէր, զի էր 'ի ցաւս
Ի վիրացն զոր Տեւկրոս՝ վանեալ զերդեան յընկերակցաց,
Զինքն 'ի դիմելն 'ի բարձունս պատուարին խոցեաց նետիւ։
Եւ կացեալ յաղօթս ասէր առ Ապոլոն կորովաձիգ.
Լուր, արքայդ, ուր եւ իցես 'ի Լիկեայ ճոխ ժողովուրդ,
Կամ 'ի Տրոյա, զի յամենուստ ունակ կարող ես դու լսել
Մարդոյ վշտատեսի, որպէս այժմ յիս հասին երկունք։
Զի է խոց յիս կարեվէր, այրատուր ցաւք 'ի ձեռս հարան,
Եւ արիւն իմ ոչ գիտէ բնաւ ցամաքել, եւ ծանրանայ
Ուսն իմ ինձ 'ի նմանէ, եւ ըզնիզակս ոչ տարակեմ
Պինդ ունել անդեդեւուն, ոչ ընդ ոսոխս 'ի կռիւ մատչել։
Իսկ արդ այր ազնուագոյն կորեաւ՝ որդին Արամազդայ՝
Սարպեդովն, իսկ նա եւ ոչ իւր որդեկին հասանէ վէգ։
Այլ արքայ դու ինձ, զայս վէրըս զառնութեան բըժըշկեսջիր,
Ցածո զցաւս, տուր զօրութիւն՝ զի խրախուսեալ զգնդուորակիցս
Ըզլիկեանս՝ յորդորեցից 'ի գուպարան պատերազմիս,
Եւ ինքնին ըզդիակամբ մահացելոյն մաքառեցայց։

Զայս խնդրեալ աղերսալի՝ եւ Ապողոն լուաւ Գուշակին ,
Իսկ եւ իսկ անցոյց ըզցաւսն , եւ 'ի վէրէն դառնակըսկիծ
Ցամաքեաց զարիւնըն թուխ , եւ 'ի հոգին իւր արկ կորով ։
Ի սըրտին իւրում 'ի միտ էառ Գլաւկոս եւ ցընծացաւ ,
Զի մեծն աստուած ունկընդիր եղեւ փութով հայցմանն իւրում ։
Նախ զօրեարն արիական զլիկիացւոց պետս ընդոստոյց
Ընթացեալ ընդ ամենայն՝ կալ գուպարել զՍարպեդոնիւ .
Եւ ապա սկայընթաց խաղայր դընայր առ տրովացիսն ,
Առ Պանթոյեան Պուլիդամաս եւ Ագենովր աստուածազան .
Ընթացաւ եւ յԷնիաս եւ 'ի Հեկտոր պղընձազրահ ։
Եւ կացեալ առընթեր՝ ըղթեւաւոր արձակեաց ձայնս .
Հեկտոր , իսկ արդ դու բնաւ իսկ մոռացար զնիզակակիցս
Որ վասըն քո 'ի սիրելեաց եւ հայրենի երկրէն նըժդեհք
Տան զանձինս իւրեանց 'ի մահ , եւ դու չկամիս գալ 'ի թիկունս ։
Անկեալ կայ Սարպեդոնն՝ ասպարաւոր լիկեանցն իշխան ,
Որ պահպանէր օրինօքն եւ զօրութեամբն ըզԼիկիա .
Նիզակաւ ըզնա պղընձին պարտեաց Արէս ընդ Պատրոկլիւ ։
Այլ հասէք , սիրելիք , եւ զայրացեալ սիրտք ձեր 'ի ձեզ ,
Գուցէ զզէնսն առցեն աւար եւ ըզդիակնըն զըզուեսցեն
Միրմիդոնքըն սըրտմըտեալք ընդ դանայեանց այնչափ կորուստ ,
Զորս առ երագ նաւկներոյն սատակեցաք մըկընդահար ։
Ասաց եւ զբնաւ տրովացիսն անտանելի պաշարեաց սուգ ,
Անմըխիթար , քանզի սիւն էր քաղաքին իւրեանց նեցուկ ,
Թէպէտ այր օտարաշխարհիկ . զի զհետ իւր գայր ուժգին ամբոխ ,
Ցորս ինքնին նա 'ի ճակատս արիապէս շահատակէր ։
Դէմ եդեալ յօժարափոյթ չոգան ուղիղ 'ի դանայեանս ,
Կարապետէր նոցա Հեկտոր՝ Սարպեդոնի սակս ըղձարեալ .
Բայց Մենիտեան Պատրոկլի գըրգռեաց զաքէանս լանջք թաւամազ ,
Առ Էասըն երկոսին ինքնայորդորս ասացեալ նախ .
Այժմ , Էասք , նախանձելի եղիցի ձեզ քերքել զոսոխս ,
Որպիսիք երբեմն էիք . յառաջագոյն ընդ քաջս արանց ։
Անկաւ այրն՝ որ առաջին յաքայեցւոցս ոստեաւ պատնէշ՝
Սարպեդոնն . այլ յանկարծ ըզնա կորզեալ այպանեսցուք ,
Եւ աւար ըզզէնսն յուսոցն հարկանեսցուք , եւ զայլ եւս ոք
Ցընկերացն՝ իւր վըրէժակաց՝ սատակեսցուք 'ի պղինձ անգութ ։
Ասաց զայս , նոքա ինքնին էին յորդորք 'ի դիմամարտ .
Եւ 'ի կողմանց երկոցունց զօրացուցեալ ըզգումարտակս ,
Տրովացիք եւ լիկեցիք եւ Միրմիդոնք եւ Աքայեանք ,
Բախեցան ըզդիակամբ մահացելոյն՝ 'ի պատերազմ
Ահագնագըռըդ որոտիւք , եւ զէնք արանց մեծ գոչեցին ։
Բայց գիշեր կորըստաբեր դըժնէ խաղմին արկ 'ի վերայ
Արամազդ , զի զսիրոյին որդւոյն լիցի մարտ դառնամահ ։

Վանեցին նախ Տրովացիք զԱքայեցւոյն աշակերտս·
Զի հարաւ ոչ վասն ինչ այլ եք 'ի զընդէն Միրմիդոնաց,
Մեծանձինն Ագակլեսի զաւակ՝ դիւցազնըն Եպիգեւս,
Որ յառաջ 'ի բնակաւէտըն Բուդիոն թագաւորէր·
Իսկ յայնժամ սպանեալ ըղձօրն եղբօր զարի որդեակն,
Առ Պեղեւս մատեաւ յողերս եւ առ Թետիս արծաթթաթեկ,
Որք ըղհետ ճակատամուղն Աքիլլի գնալ առաքեցին
Յիլիոն 'ի քաջաձի՝ պատերազմել ընդ Տրովացիս։
Անդ յայնժամ, 'ի ձեռնարկելն 'ի դին՝ եհար Հեկտոր շքեղ
Բրանձաքարամբ ըղկատարին՝ ընդ երկուս զայն պատառելով
Ցամբռափակ զըղխանոցին, եւ նա 'ի դին անկաւ 'ի պորտ,
Եւ հեղաւ ըղնովաւ ոգեպահանջ օրհասին մահ։
Ցընկերըին մեռանելոյ կըսկըծեցաւ սիրտ Պատրոկլի,
Դէպ ուղիղ 'ի նահատակսն սուրաւ 'ի ժիր շահենի պէս
Որ վարէ հալածական ըղհողամակս եւ զտարմահաւս·
Այնպէս ուղղորդ 'ի լիկեանըն, Պատրոկլէ ձիամարտիկ,
Ընթացար ու 'ի Տրովացիս, սիրտ քինայոյզ ըղհամհարըէք։
Եւ զորդին սիրելի զԻԹեմենեայ զՍԹենելաւ
Բրանձաքարամբ հար ընդ ուլն եւ զըլանջարդ արար ըղնեարդսն։
Ցետս հարան նախամարտիկք եւ ինքն Հեկտոր պերճապայծառ։
Ի չափ ձիգ արդանընկեցի՝ զոր ոք ուժգին արձակիցէ
Ի գուպար, եւ կամ 'ի մարտ՝ ընդ մահաղէն Թըշնամեաց դէմ,
Ետուն տեղի Տրովացիք, Աքայեցիք հալածեցին։
Այլ քան զայլս յառաջ Գլաւկոս՝ ասպարակիր լիկեանցըն պետ
Դարձաւ եհար սատակեաց ըզմեծասիրտըն Բաթիկլէս
Քալկոնէսի սիրած զաւակն, որ յՀելլադա բնակեալ 'ի յարկ՝
Փառօք եւ մեծութեամբք 'ի Միրմիդոնս առաւելոյր·
Ըղսորա՝ յանկարծադարձ եհար Գլաւկոս ըղլանջամէջս,
Իբրեւ այն ինչ հետամուտ ըղկնի նոր լեալ բուռն հարկանէր։
Կործանեցաւ տրոփաթունդ, Աքայեցւոց ծանր եհաս սուգ
Ընդ անկումն արըն քաջի, եւ Տրովացիք խընդացեալ յոյժ՝
Ընթացեալ յոգնախուռըն կանգնեցան կացին զնովաւ·
Բայց եւ Աքեանք զարութիւն ոչ մոռացան՝ նոցա դէմ կարամետալք։
Անդ ըսպան Մերիոնէս այր մի վառեալ 'ի Տրովացւոց՝
Զլաւոգոն, զարի որդին Ոնետորի՝ քուրմն եղելոյ
Իդայինն Արամազդայ՝ պատուեալ յազգէն աստուածաբար·
Ի ներքոյ ծընօտին եւ ընդ ունկամբ խոցեաց ըղնա,
Գնաց խոկոյն շունչն յանդամոցն, եւ զնա կալաւ խաւար ահեղ։
Էնէաս 'ի Մերիոն ըղպղընձաղէնն արձակեաց տէգ,
Յուսացեալ դիպուցանել ընթացելումն ընդ վահանաւ։
Այլ նորա տեսեալ անդուստ՝ սա 'ի պղընձի նիզակէն խոյս
Յառաջ կոյս կորացեալ, եւ 'ի Թիկանց սուրեալն երկայն

Վարանեցաւ ընդ գետոյն, եւ ապշութեամբ 'ի դուռն Ճանճեր.
Ընդ ուրախին բուռն Արէս ըմբոստութեան խաղ Թողացոյց:
Մինչ սրբազան յՀնդկաստան կերպարան՝ դիմաց մնաց ընդ գետոյն,
Զի նորանոյն եւ վայրապար 'ի հասու բաղձեն յարուցեալ դայր,
Բարեկացեալ Հնդկոյ սրբամբռնութեանն՝ անխարդ ընձայն.
Զքեզ, Մխիթար, ասպարէն, Թէպէտ եւ ես քաղաքացւոյս,
Հանդուցեալ իմ գերադրական էր հաւ 'ի սպասու՝ Թէ գիտէր քեզ:
Սակ սա նա փոխարէն Մխիթարեանս կարգաւորեաց.
Հնդկա, քեզ եւ քաղաքը չէր ինչ հրճուեր խոստովանեալ
Զամենայն մարդկան կարգս, որ ամենայն եղէ քեզ դը,
Զի եւ դու խակ ինքնին մեծահանձեայց ես անձնիշխան.
Թէ չէրն ընդ մեզ քո յաղթական հայրեց եւ ես ըղձալինձըն սուր,
Նոյնժամայն, Թէպէտ արի եւ 'ի բաղդաւորդ խորհրդակցեալ,
Գարծանս ինձ ասացես, զոգիդ 'ի քաղաքին Սանդարամետս:
Զայս ասաց, բայց կարգաւք Մխիթարեայ Ճեռ ասացեալ 'ի նա.
Զի՞ քեզ դայր, Մխիթարեանս, Թէպէտ եւ քեզ էրես՝ խօսել.
Տրամախոհ, մի ասել, ոչ Թէ բանիւք նախատական
Մխիթարեանն 'ի մեծուրեայ, մինչեւ կայցէ դժի դը երկիր.
Զի մարտի՝ եւս 'ի բաղդակս, խակ յասենի՝ խօսիւք Ճառից.
Վասն որոյ չէ ինչ 'ի դէպ կաւատել բանս, այլ մարտընչել:
Զայս խօսեալ՝ կարապետէր, դիմայր զհետ այրըն դիցազնեայ:
Եւ ասա, մայրիւորացն որպէս խոչընդոտ հրձգէ արանց
Ի լերանց անտառախիտս, եւ 'ի հեռաւոր խակ լու լինի,
Այսպէս ասացան որոտայր յանդըմանախար գետնոյն Թընդմամբ
Ի պղնձոյն եւ քանքարէն եւ յօրինեալ արշաւանաց՝
Կոշկոճերաց սուսերք եւ նիզակաց երկայրեխաք:
Եւ ոչ ծանօթ դը Ճանաչել ամեր զդիւցազինըն Սարպեդոնի,
Զի նետիւք եւ յապաւշտոյծ արեան Թաւալ եւ 'ի փոշին
Ի գլխոյն մինչեւ 'ի Թաթս ոտիցն համակ էր Թաթաւուն:
Իսկ նոքա ցանկապատեալ կային դիակամբ որպէս մեղուք
Զի ըղղոյն առ Թաթաղան դայլըս կաթինս 'ի փարախս
Զժամանակ գարնանայնոյն՝ մինչ ոռոգէ կաթիւքն զամանս.
Օրինակ զայս եւ սոքա 'ի դիականն անդ յամեին:
Եւ Արամազդ զաչս իւր ինչ ոչ 'ի խիստ կռուոյն դարձուցեալ աչերն,
Այլ յաւէտ ցանց 'ի նոսին՝ շատ ինչ խորհէր 'ի սրտին յաղթ
Ըղմահուն Պատրոկլեայ, լեալ 'ի խորհրդոյ իւր մտածեայ
Թէ եւ ըզնա ինքն արդեօք անդէն յախոյան զաւադարտէին
Զդիցազնեայ Սարպեդոնի վերհայն Հեկտոր հարցէ պղնձով,
Եւ բարձցէ յուսոցն զզէնս, եթէ լոյծ ինչ այլ գետուես
Ցոյցից յաճախեացէ զզօրութեանն երկս եւ վաստակ:
Ի մտածութիւն խորհրդոցն՝ այս լաւագոյն Թուեցաւ լինել,
Զի հզօր սպասաւոր Պելեածնին Աքիլլեսի



Digitized by Google

Ընդ կարուկ ընդարմացեալն եւ ընդհեկեալ ազդեցմամբն
Վանեցաւ յաստանեալն կոչմ՛, եւ ընդդիմակաց խլեցաւ զօգնս ։
Եւ նախ քան զամենայն՝ սիրոյ անարգի արկ 'ի Հեկտոր,
Որ 'ի դղյակն աշտանակեալ եւ 'ի փախուստ շրջեցաւ զնտասն
Եւ այլոց ընկեց հրամանն արամազդայնոյ ձեռնել փախչել,
Զի ծանեաւ ըղձեա կշռալքն սրբազանութեան Արամազդայ ։
Անդ եւ ոչ յիշեցանգքն քաջք Տրովայն, փախուցեան առ Հասարակ՝
Ցանկն արկեալ ընթացաւորքն կառքեղեր 'ի սիրտ՝ ատարալ
Ի շեղջակոյս գիակաց, քանզի բաղումքն անկան զնդաւ՝
Իբրեւ ընծանս զուարակածն յերկարերդոյ անդ Զբրտուաններան ։
Եւ առքա կողոպտեցին ընդդէմն յասաց Սարպեդոնի,
Զորդեքնձիան, ընդարաղարշուան, զոր Մենեսաեայ զօրեղ որդին
Եա ցնկեցուցն առնել 'ի զաղաւար նաւաց տարցեն ։
Արամազդ ամպրոպայքն առէ յայնժամ առ Ապողոն․
Օ՛ն արդ արի, սիրելի Փոյբոս, երթ 'ի խառնէ նետից թափեալ՝
Սրբեա զՍարպեդոնն 'ի սեւաթոյր աղամաւէն,
Ապա յայս 'ի բաց տարեալ՝ լուա յուղխից գետոյն հոսանս,
Օծ խունկ անուշից, անմահութեան զգեցո հանդերձս,
Եւ տացես բառնալ ընդ ձեռըթնթացիկ գիտանաց՝
Քընոյն եւ Մահուան երկուորեկաց, եւ սանձկել
Փոյթ ընդ փոյթ 'ի ձոխաշատաձ զգրաց աղքին լայն Լիկեայ ։
Անդ ընդ հարազատքն եւ մերձաւորք յուղարկեսցեն
Շիրմաւ եւ արձանաւ, զի այս պատիւ է մեռելոց ։
Ասաց աստ, եւ Ապողոն ընդ հօր խօսոյ չանց հրամանաւ․
Եւ գնացեալ՝ յԻդեա լերանց էջ յամենայն ձակատամարտն,
Եւ անդէն 'ի նետից հանեալ զդիւցազնն Սարպեդոնն
Եւ տարեալ յայս 'ի բացէ՝ 'ի վտակեայ լուաց յորձանս,
Օծ 'ի յիւղ անուշաբոյր, անեղծութեան արկ զգեստս ձորձս,
Եւ հանել զայն ատանգեաց 'ի փոյթընթաց յուղարկաւորս՝
Ի Քուն եւ 'ի Մահ յերկուորեակս, որ վաղ ընդ փոյթ
Ցընդարձակ Լիկիաստանին եդին ընդ պերճ հրապարակ ։
Իսկ Պատրոկլէս զԱւտոմեդոն եւ զերիվարսն խրախուսեալ՝
Վանէր զտրովեանս եւ զլիկեանս, եւ եղեւ մեծ եղեռն, անմիտ ։
Զի թէ զխրատն էր պահեալ Պելէոսծնին պատուիրանի,
Անշուշտ 'ի չար օրհասէ մեթին մահուան փրկեալ լինէր ։
Սակայն միշտ Արամազդայ միտք են յաղթօղ քան ըզմարդկան,
Որ եւ զայր քաջ զարհուրէ, եւ զյաղթութիւն թափէ զիւրաւ,
Թէպէտ եւ ինքն իսկ գրգռեալ եւ յորդորեալ իցէ 'ի կռիւ,
Որ եւ յայնժամ ըզսիրտ նորուն 'ի լանջսն բորբոքեաց ։
Իսկ արդ զո՞վ ոք անդ նախ, զո՞ հուսկ յետոյ սատակեցեր,
Պատրոկլէ, յորժամ ըզքեզ աստուածք 'ի մահ հրաւիրեցին ։
ԶԱդրեստոս նախ եւ յաւել, զԱւտոնոոս եւ զԷքեկլոս,

ԸզՊերիմոս Մեգասեան, զՄելանիպպոս եւ զԵպիստոր,
Եւ ըզկնի զԷլասոս եւ զՄուլիոս եւ զՊիլարտես.
Ըզսոսա սպանեալ, իսկ այլք ուշ 'ի փախուստ եդին անձինս :
Անդ ըզՏրոյա բարձրադուան առնուլ որդւոցն էր աքայեցւոց
Ընդ ձեռամբ Պատրոկլի, զի մոլէր յոյժ իւով աշտէիւն,
Եթէ Փուբոսն Ապոլոն յամրակառոյց չեկայր բուրգանն
Ոլորել նոցա կորուստ եւ տրովացւոց ձեռն 'ի նպաստ :
Երիցս յանկեան պարըսպին բարձու Պատրոկլ 'ի վեր հրոսէր,
Եւ երիցս Ապոլոն վանեալ ըզնա վարէր 'ի բաց
Ի վահանին արփենի բախեալ ձեռօքն անմահական.
Իսկ չորրորդ յորժամ անդամ յարձակեցաւ աստուածօրէն,
Սաստելով սպառնալից զերապաղթեւ խօսեցաւ բանս.
Ի բաց կաց, Պատրոկլէ դիւցազն, ոչ քոյդ ինչ գեղարդեամբ
Հրամանք են քաղաքիս քանդել տրովեանց աւերածոյ,
Նա եւ ոչ իսկ Աքիլլեայ՝ զօրագունին յոյժ քան ըզքեզ :
Զայս ասաց, եւ Պատրոկլոս ընկըրկեցաւ բացուստ 'ի բաց՝
Փախուցեալ 'ի հեռաձիգն Ապոլոնի բարկութենէն :
Իսկ Հեկտոր զսալասմբակ ձիան ունէր զդրամբք Սկէամբք.
Զի յերկմտեալ էր՝ կըռուեսցի՞ արդեօք՝ 'ի խառնին անդրէն վարեալ,
Թէ խրախոյս բարձցէ զօրուն՝ գալ 'ի պարիսպ անդր հաւաքել :
Մինչդեռ յայս կայր մըտախոհ՝ եհաս Փուբոսն անդր Ապոլոն,
Ցայր մի նմանեալ երիտասարդ քաջակորով,
ՑԱսիոս՝ որ քեռի ձիախրոխտին էր Հեկտորոյ,
Հեկաբեայ հարազատ եղբայր, որդի լեալ Դիմասու
Բնակելոյն առ զըրդամբքըն Սանկարեայ 'ի Փռիւգաստան.
Այնմ Ապոլոն քատակեալ՝ Արամազդեայ մանուկն՝ ասէ.
Զի՞ է, Հեկտոր, զի դադարեալ կաս 'ի մարտէ. քեզ ոչ ըմբան :
Որչափ ինչ եմս ընդհատ՝ էցէ նոյնչափ քան զքեզ էի հըզօր,
Անդ անդէն դու 'ի կըռուոյս ելանէիր վատաբախտաբար :
Հապա եկ զհաստասմբակ վարեա զձիանդ 'ի Պատրոկլոս,
Ըսպանցես թերեւս ըզնա, եւ քեզ տացէ զփառսն Ապոլոն :
Աստուածոյն զայս ասացեալ՝ դարձաւ գընաց յարանց դաւաղար.
Իսկ շըքեղն Հեկտոր պատուէր Կեբրիոնի եռ կորովոյն
Մըտրակել զերիվարսն 'ի կռիւ. սակայն Ապոլոնի
Գնացեալ եմուտ անդր 'ի խուռն, եւ խռովհարեալ չար յաքայեանն՝
Հեկտորի եւ տրովացւոց մատոյց ըզփառըս պարծանաց :
Բայց Հեկտոր զայլ դանայեամբք արարեալ զանց՝ կոտորէր ոչ,
Այլ 'ի Պատրոկլ անդր ուղղէր զկարծրասմբակ երիվարեանն :
Իսկ անդուստ Պատրոկլոս վաղեալ յերկիր էջ 'ի ձիոցն,
Ի ձախոյ ձեռին նիզակն, յափըշտակեալ վէմ մի միւսովն
Ըսպիտակ քարաժեռ, զոր բուռն ոզջոյն պատեաց նորա,
Եւ թափ տըւեալ արձակեաց՝ ոչինչ կարի յանձէն խոտոր,

Եւ վրիպեալ ոչ ըղձարուածն, այլ զՀեկտորին հար կառավար՝
ԶԿեբրիոն ըղձարձորդի Պրիամոսի մեծափառին
Զսանձակալն երիվարաց, սուր խարակաւն ՚ի ճակատուն,
Զերկաքին յօնսըն ջախջախեաց վէմն, ոսկրըն ոչ կալաւ ընդդէմ,
Աչք ՚ի գետին ընդ փոշի գլեցան առ ոտըս անդ նորա,
Իսկ ինքըն նմանեալ ողողակի՝ Թաւալգլոր
Ի գեղաշէն կառացն անկաւ, եւ թէ զոսկերացն հոգին,
Զոր՝ քաջաձիգ Պատրոկլէ՝ կատակելով բարբառեցաւ.
Վա՜հ վա՜հ, իսկ եւ իսկ փոքրոգի այր. ինչ հեշտ ոստնու.
Թէ ՚ի ծով ինչ ուրեք լողակաւէտ էր հանդիպեալ,
Ցողունց յագուրդ պատրաստէր ըղխեցեմորթս յուզելով այս այր՝
Վազս առեալ ՚ի նաւակէն՝ թէ եւ իցեն անդընդապատոյզք.
Այնպէս ահա ՚ի դաշտէս ոստնու գլորաւ այժմ ՚ի կառաց։
Են են արդարեւ եւ ՚ի տրովեանս ուրեմն լողորդ։
Զայս ասէր եւ ՚ի դիւցազն անդր ընթանայր ՚ի Կեբրիոն
Զարշաւանս առիւծուն, որոյ զփարախս հարեալ աւար՝
Վէրս ՚ի լանջացն եառ, եւ կորոյս զինքն իւր զօրութիւն.
Սոյնպէսնակ, Պատրոկլէ, ՚ի Կեբրիոն ոստեար մոլեալ։
Բայց անդուստ եւ Հեկտոր վաղեաց յիւրոց կառացն յերկիր.
Երկոքեան զԿեբրիոնէ ոգորէին իբր առիւծունք
Որ զզէշ արկեալ եղանէին կըռուէին լերին ուրեք ՚ի մէջս
Երկոքեան սովալըլունք եւ մեծամեծըս փքքալով.
Այսպէս զԿեբրիոնէ երկու հըմուտք պատերազմի,
Պատրոկլէս Մենետեան եւ փառացի շըքեղն Հեկտոր,
Բորբոքէին ըղձիմեանց ճեղքուլ իրանս ՚ի պղնձի անգութ։
Իբրեւ զամ մի Հեկտոր կալաւ զգըլխոյն, ոչ եւս թողոյր,
Իսկ Պատրոկլ յայնկոյս կալեալ բուռըն զոտիցն հարեալ ունէր.
Եւ այլ տրովեանք եւ դանայիք մարտ խառն հըզօր խըմբէին անդ։
Օրինակ իբր հարաւ եւ հիւսիսակ զառամ՚գլխեալս
Ի թաւուտըս լերանց՝ ըղձոր մայրիս առ ՚ի դըղորդ,
Ըզգիհճին եւ զհացի եւ ըզգաղավարըն կարծրատոռըր,
Որ կոծեն ընդ միմեանս զաճունաճիւղ ոստոցն ուղէշս
Ի խարշափ ահագնալուր, անդ բեկանելոցըն ճարճատիւն.
Նոյն յերեսըս դիմեալ տրովադացիք եւ աքայեանք
Զարգէին, եւ ոչ ոք բնաւ զկորըստականն յիշէր փախուստ։
Եւ բազում սայրասուր զԿեբրիոնիւ մըխեցան նետք
Եւ ՚ի լարիցն աղեղանց ոստուցեալ նետք թեւթեւաթեւք.
Եւ զվահանսըն անարի վէմք խուռնախիս խորտակեցին
Ըզնովաւ մարտուցելոցն. ինքն ՚ի մըրրիկ փոշւոյն զառեալ
Մեծայաղթ մեծատարած, հեծելութեանցն անյուշ զըննէր։
Մինչեւ շուրջ ըզմէջ երկնաւ թեւատարէր ահեն արեւուն,
Ի կողմանսն երկոսին դիպէին ձիգք, անկանէր զօրն.

Իսկ յայնժամ յանկարծակի արեգականըն խաւարեցաւ,
Զօրութիւնք կէն յայնժամ պղտորեցեալք 'ի վեր քան զբանս,
Եւ զդիականըն 'ի նետից 'ի բաց հանէին զԿեբրիոնէս
Ի խառնմէն աղաղակացուաց, եւ զզէնսն յուսոցըն կապուտեցին:
Այլ Պատրոկլոս 'ի տրովեացւոցն չարախնամ յարձակեցաւ.
Եւ երիցս խոյացեալ ժիրն Արէսի հանգիտաբար՝
Գոչելով ահեղաբար, եւ արս ըսպան երիցս իննեակ:
Իսկ 'ի չորրորդ նուագին շահատակէր աստուածանման,
Անդ, Պատրոկլէ, քեզ մօտալուտ երեւեցաւ կենաց կընիք,
Զի 'նդ առաջ ել քեզ Փիւբոսն ահեղ 'ի ժամու պատերազմին:
Իսկ նորա ոչ ետես ըզնա՝ զի գնայր եւ գայր յամբոխի անդ,
Զի թանձրահոծ մըգամածիւ պատուաճակեալ էր նա 'ի գէմ.
Կաց յետոյս եւ վայրապար կոփեաց ձեռամբըն ըզթիկունս
Ի թիկունսն եւ 'ի լայն ուսս, աչք նորա ցնորեալ պտուտակեցան:
Ի գըլխոյն Ապողոն Փիւբոսին ընկէց ըզսաղաւարտն,
Եւ փողաձեւ գըլխանոցն թաւալեալ հանէր բոմբիւն
Առ սըմբակս երիվարացն, եւ աղտեղեցան բաշք գեղաւորք
Ընդ արիւն եւ ընդ փոշի, զոր չէր օրէն յառաջագոյն
Աղտեղել հողաթաթախ ըզսաղաւարտըն ձիաբաշ,
Այլ ըզգլուխըն չնորհաշուք զաստուածեղէն առն եւ զճակատ
Պահէին զԱքիլլէայ. բայց Արամազդ յայնժամ ցՀեկտոր
Ետ 'ի գլուխ իւր կրել, սակայն առ դուրս իւր կայր կորուստ:
Ի ձեռին իւրում նիզակըն բեկանեցաւ երկայնաստուեր
Ծանրըն՝ մեծ՝ հաստ եւ պղնձեալ. պղնձըլնաւոր վահանն յուսոցն
Անկաւ ընդ գետին՝ փոկովն հանդերձ յոր կայր կախեալ,
Եւ զզրահպանակս իւր եթող Ապողոն ուստր Արամազդայ:
Եւ վըթար զմըտացն եկեալ՝ լըքան անդամքըն բարգաւաճք,
Եւ յապուշ կըրթեալ եկաց. եւ մօտ հասեալ Դարդանեան այր՝
Սըլաքաւոր գեղարդեամբ ըզթիկնամէջըն հար խոցեաց,
Պանթոյեանն Եւփորբոս՝ 'ի հասակին իւր վեհագոյն
Տեգընկէց եւ կառավար, երագաստաւ յարիցն արշաւ.
Զի եւ քըսան այր երբեմն էարկ առաջասար նա յերկձիոց
Զառաջինն եկեալ կառօք առ ընդ մարտից անցանել կիրթ.
Առաջին նա իսկ զաշտէն, հեծեալ Պատրոկլ, 'ի քեզ ընկէց.
Եւ ոչ պարտեաց, այլ անդրէն չուեալ զհետս ետեւն 'ի մարտիկսն՝
Խառնեցաւ դարձեալ 'ի խուռնին, եւ ոչ կալաւ Պատրոկլի ժոյժ,
Թէպէտ մերկ եւ կողոպուտ էր նա 'ի խուռն մարտամարտին:
Բայց եղեալ աստուածահար եւ 'ի մըրձակէ խոցեալ Պատրոկլ՝
Ընկերացն 'ի գունդ խուսեաց՝ յօրահասէն եղեալ պատսպարս:
Իսկ Հեկտոր՝ իբրեւ ետես ըզմեծասիրտըն Պատրոկլոս
Անդրէն յետս ընկըրկեալ եւ վիրաւոր սուր պըղընձով,
Մօտացեալ հասաւ առ նա 'ի դասակարգն՝ եհար ըզաղեղն

Ի ներքին սպառազինութեան, եւ մերկացեալ Թափ ընդ այլոյն եհան :
Փըլաւ նա գլխանակործ եւ զգունագեղ աչերն յոյժ Թաղծեցան :
Որպէս ընկեցեալ անհնարին ընդամենակարէ մարտիւ առեալ,
Որք 'ի գլուխս լերին օդարկէին զառաջամէտ
Ըզգոյզն առիւծապականց' յոր եռկարքն կամին ըմպել,
Եւ զառաջին հեծեծեալն' ուժով մեծաւ պատառեաց առեալ .
Նոյն նմանի ըզՄենետեայ հզօր որդին զրագադմախողխող'
Պրիամեանն Հեկտոր մտաւոր եհար յոգի նիզակակաւ .
Եւ խրոխտ ընդ այն պանծանօք Թշնամւոյն բարբառ արձակեաց զայս .
Պատրոկղէ, քանդել անշուշտ համարեցար ըզմեր քաղաք,
Եւ զկանայս տրովուհիս, զազատութեան հատեալ զօրեւ,
Գերի վարել նաւիկներովդ 'ի սուրբ երկիր քո բնագաւառ :
Խակամիտ, վասն նոցա Հեկտորի ձիքն երագաթափիչք
Աղջուան սոփեակաւորք 'ի կռիւ, եւ ես 'ի աշտ նիզակ
Զանդամս ըզմարտասէր տրովադացւոցս, եւ 'ի նոցանց
Վանեմ զօր գերութեան . իսկ զքեզ լեշիս աստ կուր անգղաց :
Ա՛յ չքնաղ, չօգնեաց ինչ քեզ եւ Աքիլլեան ընկալեալ զօր,
Որ շատ ինչ յոյժ, յանդէպն մեկնելն, 'ի հրաժեշտին եւս քեզ պատուէր .
Բնաւ մի դու յետս, Պատրոկղէ ձիաւորեալ, դարձցես այսրէն
Ի նաւքս զօրաձեւ' մինչեւ զշապիկն 'ի լանջս իւր
Զմարդասպանն Հեկտորի պատառեսցես արիւնոտ :
Զայս ինչ քեզ ասաց ուրեմն, եւ զխելամիտ միտս հաճեցոյց :
Դու յաղթող պարծելոյ' ասէ նա, Պատրոկղ հեծեալ, բարբառեցար .
Պարծեցիր արդ այժմիկ, Հեկտոր, խրոխտանալ մեծաբանեալ,
Զի Զրուանեանն Արամազդ եւ Ապողոն ետ քեզ զյաղթութիւն,
Եւ նոքա զիս անաշխատ 'ի պարտութիւն մատնեցին քեզ .
Զի նոքին իսկ յուսոյս շորթեցին զսպառազինն :
Այսպիսիք' Թէպէտ եւ քսան պատահէին ինձ ախոյեանք,
Սատակէին անդէն բնաջինջ' յիմմէ տիգէս անկեալ աստանօր :
Այլ հրամանքն օրհասականք եւ Լետովայ անգամ զիս որդին,
Իսկ յարանց' Եւփորբոս, երրորդ դու զիս աւանուս կապտես :
Բայց քեզ այլ ինչ ասացից, եւ դու 'ի միտս քո յեղջիր .
Եւ ոչ դու յերկարակեաց լիցիս, այլ քեզ իսկ մօտ առ կուրծս
Ահա հասեալ կայ մօտալուտ մահ եւ օրհասս անմերժելի,
Յեակիդեանն Աքիլլեայ պարտել 'ի ձեռս ըսքանչելւոյն :
Ի խօսել նորա զայս' ծածկեաց մահուն զնա կատարած .
Ի մարմնոյն հոգին Թռուցեալ էջ 'ի խաւար Սանդարամետս,
Աշխարելով զիւրն բախտ, Թողեալ զառնութիւն եւ զարբունս իւր :
Առ նոյն ինքն անշնչացեալն անդամ ասէ փառաւորն Հեկտոր .
Պատրոկղէ, զի՞ դու զարդիս գաղտնաբանութեան ինձ գուշակես մահ .
Ո՛ գիտէ եւ Աքիլլես' որդին Թետեայ վարսագեղին'
Յիմմէ տիգէս յառաջագոյն շանթահարեալ զհոգին կորուսցէ :

Զայս ասաց, եւ զպղընձի սուրնն 'ի մէջէն ձըգեալ եհան՝
Աքայի արոփեալ 'ի նա, եւ զնա յորսայս ընկէց յարգնէն:
Նոյն հետայն զեղարդամբն յԱւտոմեդոն սրացեալ դիմեաց՝
Յաստուածատիպ պաշտօնեայն երագոտին Էակիդեայ,
Զոր ցանկայր հարկանել, այլ տանէին զնքն երագ ձիք
Անմահացուք յաստուածոց շնորհեալք Պեղեայ 'ի ձոխ պարգեւս:
867

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

---

## ԵՐԳ ԵՕԹՆՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ



Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Մենելաւոս պաշտպանէ արիաբար զմարմինն Պատրոկլի. բայց նահանջեալ յերեսաց Հեկտորի՝ յաւարի առնու սա զկապուտ նորա եւ զզէնս. Հասանեն Ցոյնք ՚ի Թիկունս եւ խռնին զդիակամբ Պատրոկլի։ Մրցումն սաստիկ, մէգ եւ մառախուղ յանկարծուստ, որ յաղօթս Էասայ փարատի։ Մենելաւոս յղէ զԱնտիլոքոս սիրելին Աքիլլեայ՝ զեկուցանել նմա զմահն Պատրոկլի, եւ ընդ Մերիոնի բառնան առնուն զմարմինն պաշտպանեալք յԷասեանց։ Էնէաս եւ Հեկտոր ընդ արշաւեցին՝ հալածական վարեն զՅոյնս։

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ
# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԵՕԹՆՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

### ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ ՄԵՆԵԼԱՒԻ

Աչառորդքն Մենելայոսի՝ Արեայ սիրունի՝ չեղեւ զանխուլ
Զի սպանեալ էր 'ի մարտի անդ Պատրոկլոս 'ի տրովացւոց ։
Անց գնաց 'ի նախահարականս, եւ 'ի պղնձին վառեալ հրաշէկ
Պաշտպանէր ըզնովաւ, որպէս որթուն մատաղամայր
Անդրանկածին՝ մըրմընջելով, ըզծնընդոց փորձ այն ինչ առեալ.
Այնպէս շուրջ ըզՊատրոկլիւ Մենելաւս փարէր խարտեաշ,
Եւ կարկառեալ առ նովաւ զբոլորաշէջն ասպարն եւ զնէզ,
Հեռայր սաստակել՝ զոր ոք ընդդէմ ոտնեսցէ ։
Եւ ոչ ուստրըն Պանթոյեան կորովատեգ եղեւ անփոյթ
Զանարատըն Պատրոկլոս անկեալ, եւ եկն եկաց առ իւր,
Եւ առ Արեայ սիրելըն Մենելայոսի՝ բարբառեցաւ.
Ատրիդէս՝ դիւցազնասունդ Մենելաէ, իշխան ազգաց,
Տուր տեղի, լեր ըզմեռեալն, եւ ըզկապուտ արիւնոտ թող.
Զի ոչ նախ ոք 'ի տրովեանց եւ տարաշխարհ նիզակակցաց
ԸզՊատրոկլ եհար 'ի տէգ 'ի զօրաւոր պատերազմին ։
Ուստի թոյլ տուր ժառանգել ինձ մեծ պարծանս 'ի տրովացիս,
Մի զուցէ հարից ըզքեզ եւ զանուշակ արեւդ հատից ։
Ի ցասումըն մեծ բորբոքեալ խարտեաշն ասէ Մենելաւս.
Արամազդ հայր, արդարեւ հըպարտութեան չար են պարծանք ։
Ոչ ընձառիւծի փըքացումն է յամառի, ոչ առիւծու,
Եւ ոչ դըժնեայ վարազի՝ որոյ հոգին իւր մեծապէս
Խրոխտացեալ քան զօրէնակ 'ի վեր 'ի լանջըսն փըքանայ,
Որչափ մանկունք Պանթոյի կորովատեգք կոկոզանան ։
Սակայն ոչ եւ զօրութիւն Հիպերենոր քաջաձիոյն

Վայելչաց տեսոյն յորդառատ յանդգամանել զիս եւ կալ ընդդէմ,
Մարտիկ որք դուղնաքեայ 'ի գանոյեանս համարեալ զիս ·
Բայց ոչ կարծեմ թէ իւրով տուիւք դարձաւ զինաց անդրէն՝
Զամուսին իւր սիրելի եւ ծնօղս արդոյս տանել ուրախ ։
Նոյն եւ զքոյդ լուծից կորով, ասա թէ ինձ արձանացես ·
Այլ ես միայն քեզ զինեմ՝ մեկնել զինալ 'ի սպայից գունդ,
Եւ ինձ մի կալ տեսոյեան՝ մինչ չեւ ինչ չար ընդ քեզ անցեալ ·
Զի զեղեալն՝ եւ անիմաստ որք մանկախոհ էառ 'ի միտ ։
Ասաց, այլ չեկն 'ի հաւան, պատասխանի եւրս դարձոյց ·
Արդ ուրեմն, գիտասցես Մենելաւ, տացես վրէժս
Եղբօրն իմոյ զոր սպաներ եւ պանծացեալ մեծաբանես,
Եւ զկինն յայրս նորամուտ տառապատերն եդիր այրի,
Ի կոծ եւ 'ի սուգ ծնողացն եւրոց աղխողորմ ։
Արդ եւ նոցին եղկելեացն ողբոց վախճան արարից ես,
Եթէ զքո կառափն 'ի քէն եւ զզէն եւ զարդերդ քո տարեալ
Պանթոյեայ 'ի ձեռան արկից եւ Փրոնտիսէ դիւցազնուհւոյն ։
Այլ ոն եւ ոն՝ ոչ եւս երկար կացցէ պայքարս այս անփորձ,
Նա եւ ոչ թէ անսահման ինչ յաղթութիւն կամ 'ի փախուստ ։
Զայս ասաց եւ եհար ըղբողորջի վահան նորա,
Բայց չեհերձ ըզպղինձն, այլ կորկնեցաւ սուսերն սայր
Ի կարծրակուռ ասպարէն · իսկ Ատրիդէս Մենելաւոս
Յարձակեցաւ պղնձովն երկրորդ, առ Արամազդ հայր աղօթեալ ·
Եւ մինչ նա յետս ընկրկէր՝ խոցեաց ըզգուտն ախոյանացն
Եւ յեցեալ ինքն ուժով 'ի կորովի ձեռն ապաստան՝
Ընդ փափուկ ուլն յայնկոյս էանց սլաքըն խորամուխ ։
Տապալեցաւ թընդատոփ, եւ հընչեցին զէնքն ըղնովաւ ։
Վարսք նորա՝ տեսլ ձըշգըրտեալ Շնորհացն՝ յարեամ թաթաւեցան,
Եւ խոպոպիքն ոսկեմանք եւ արծաթով ընդելուզեալք ։
Որպէս այր որք մնուցանէ զսաղարթափթիթ տունկ ձիթենւոյ
Յառանձին վայրի ուրեմն ուղխապարար յորդ վըտակաց՝
Զվայելուչ կանաչազարդ, զոր տատանեն աղջի աղջի
Հողմոց շըշնչմունքն, եւ նա կայ բողխէ զծաղկաւն ձիւնափայլ ·
Իսկ եկեալ այս փոթորկեալ մըրըրկախառն յանկարծահաս,
Խըլէ զայն ընջովքն եւ արկանէ 'նդ գետին տապաստ,
Սոյնգունակ զԵւփորբոս Պանթոյայ ձեռ նիզակաւոր
Ըսպանեալ Ատրիդեայ Մենելաւի՝ զերծ 'ի զինուցն ։
Եւ օրինակ իմն առիւծ մի լեռնասուն յանձնապաստան
Զձարակաւոր անդէոյ յափըշտակեալ զերինջն ընտիր,
Նախ եբեկ զուլըն նորա՝ յահեղագօր առեալ ժանիսն,
Եւ ապա զիշատեալ լափէ զարիւնն եւ զփորոտին ·
Եւ զնովաւ շուրջանակի շունք եւ որեար արօտական
Ճիչ բարձեալ 'ի հեռուստ աղաղակեն եւ ոչ իշխեն



Digitized by Google

Ախոյեան ելանել, զի ահ արժգոյն ունի սաստիկ,
Նոյն 'ի տղայանց ոչ ումեք համարձակեաց սիրտ իւր 'ի լանջս
Առաջի դիմադրաւել Մենելաւեայ մեծափառին։
Անդ Ատրիդէս դիւրաւ տանէր զՊանթոյեանին շքեղ կազմածս,
Ապոլլոն եթէ Գուշակն ընդ նմա չէր ինչ խանդացեալ,
Որ զՀեկտոր դրդեաց 'ի նոյն՝ զաշխոյժն Արեայ հանգունատիպ,
Կերպացեալ յայր՝ 'ի Մենտէս 'ի Կիկոնացն ըսպարապետ.
Եւ բարձեալ առ նա ձայն՝ բարբառեցաւ ըզթըռչուն բանս.
Հեկտոր, այսպէս աստ այժմիկ զհետ անհասից ընթանաս դու,
Էակեան քաջին ձիոց, սակայն մարդկան մահկանացուաց
Դըժուարին է զնոսին յաղթահարել եւ հեծանել,
Բայց միայն Աքիլլեսի, զոր մայր ծընաւ անմահական։
Ի ժամու աստ Ատրիդին՝ արիական Մենելաւոս
Պատրոկլի կացեալ 'ի պահ՝ զարիագոյնն ըսպան տրովեանց
ԶԵւփորբոս Պանթոյեան՝ կարծեալ յոխորտ ուժգնութենէն։
Աստուածոյն զայս ասացեալ՝ գընաց անդրէն յարանց դուպար.
ԶՀեկտորի ցաւ աղէկէզ պատեաց ըզսիրտ սեւաթորմի,
Եւ ապա զաչսն ընդ կարգան ածեալ՝ ծանեաւ անդէն ըզնա
Որ զպայծառ զէնսն կորզէր, եւ զմիւսն զի անկեալ տապաստ,
Եւ արիւնն աղբերացեալ 'ի խոցածոց ըղզէր վերէն։
Եւ գընաց 'ի նահատակսն, 'ի ձեռին զէն փայլակնաձեւ,
Սաստկաձայն գոչելով, յանշէջ հըրոյն Հեփեստեայ տիպ,
Եւ յոխորտըն բարբառ չէանց զորդւովն Ատրէոսի
Որ յոգւոց ելանելով ասէ առ անձն իւր մեծասիրտ.
Վա՜յ զինեւ, եթէ թողում 'ի բաց ըզզէնսդ գեղեցիկ
Եւ զՊատրոկղ որ վասն իմոյ վըրէժուցս անկեալ դընի աստէն,
Գուցէ ոք 'ի դանայեանց ցասնուցու ինձ, եթէ տեսցէ։
Իսկ միայն եթէ'նդ Հեկտոր եւ տրովացիս առ ամօթոյ
Կացից 'ի կռիւ, գուցէ զմէնըս զիս ամբոխք պաշարեսցեն,
Զի զտրովեանս այսր համօրէն ածէ Հեկտոր սաղաւարտաձօձ։
Այլ ըզմէ՞ սիրտ իմ առ իս զայս 'ի խորհուրդս իւր դըրդըլջէ.
Ցորժամ այր յանդըգնեսցի աստուածընդդէմ կըռուել ընդ մարդ՝
Զոր աստուած ինքնին պատուէ, տոյժ մեծ գըլի յանձն իւր ընդ փոյթ։
Արդ ուրեմն 'ի դանայեանց ըսրտմըտեսցի ոչ ոք ընդ իս
Տեսեալ հրաժեշտ 'ի Հեկտորէ որ յաստուածուստ պատերազմէ։
Օ՛հ թէ տայց զահեղագոյն Էասայ ինձ լիցի ուստեմն,
Երկոքին դիմեալք անդրէն՝ դուպարածին առնիցեմք ուշ,
Թէպէտ ընդ աստուածոյ, եւ ըզդիակն հանցուք թերեւս
Առ Աքիլլեւս Պելեւեան. եւ գուն մի դիւր լիցի վտանգիս։
Մինչ նա դեռ զայսոսիկ ածէր ընդ սիրտ իւր եւ ընդ միտ,
Գունդք եկին հասին տրովեանք, եւ յառաջոյ իւրեանց Հեկտոր։
Ընկըրկեալ նորա՝ եթող ըզդին եւ սակաւ դառնայր հայէր,

Իբր առիւծ մի մօրուաւոր՝ զոր շունք եւ արք վարեն յանդուոյ
Մըկընդգք եւ կանչիւք, սասկայ 'ի ծոցն արին իւր սիրտ,
Եւ 'ի գաւթէն ակամայ անդի սրւեալ գնացեալ մեկնի.
Նոյն Մենելաւ խարտեշագեղ անցեալ գընաց 'ի Պատրոկլէ,
Ցընկերաց հասեալ 'ի գունդ՝ դարձաւ եկաց գէտակն ունէր
Բըրըլլեալ շուրջ անդր 'ի մեծն Էաս յորդին Տելամոնեան.
Եւ ետես ըզնա խոկոյն յահեկակողմ հանուր աղմկին,
Զի զընկերսն յորդորէր սըրտապընդեալ 'ի պատերազմ,
Ցորս արհաւիրս աստուածատուր՝ Գուշակն արկեալ էր Ապոլոն.
Եւ դիմեաց ընթացաւ, եւ վաղ հասեալ՝ ըզբանիքս ասաց.
Այս, Էաս սիրելիդ, ըզՊատրոկլի զդիականեն
Գունդ գիցուք, գոնէ զմարմինն Աքիլլեայ մատուսցուք մերկ,
Իսկ ըզկազմածըս նորուն գրաւեաց Հեկտոր կորգակատիրոսն:
Զայս ասաց եւ զէասայ քաջամարտին յուղեաց ըզսիրտ,
Ցախոյեանսն եւ ընթացաւ, խառնեալ ընդ իւր Մենելաւոս:
Իսկ Հեկտոր՝ մերկացուցեալ ըզՊատրոկլոս 'ի պերճ զինուց՝
Ձըգէր զի զգլուխն յուսոյն հատանիցէ սուր պըղընձով,
Եւ զմարմինն առեալ գէշ ընկենուցու տրովացի շանց:
Եկն եհաս առ նա Էաս, վահանն 'ի ձեռսն բըրգաձեւ,
Հեկտոր յետըս վերջանեալ՝ գընայր մեկնէր յընկերաց ճոխ.
Եւ 'ի կառսն եւ զՊատրոկլի գեղեցիկ զէնս ետ տրովացւոց
Բառնալ յաստանըն տանել՝ 'ի մեծ պարծանս անձին իւրոյ:
Իսկ Էաս ըզՄենիտեան որդւոյն ըզլայնն արկեալ ասպար՝
Իբր առիւծ զորդւովքըն եկաց, որում յածելն ըզկորիւնս իւր՝
Արք գիպեսցին որսորդք յանտառս, ճիգն առ ուժին մըռայլեալ,
Եւ բովանդակ 'ի խոնարհ արկանէ զյօնսն աչաց ծածկոյթ,
Նոյն Էաս ըզդիւցազնարմըն Պատրոկլիւ շուրջ պաշտպանէր:
Եւ 'ի միւս կուսէն եկաց Արեայ սիրուն Մենելաւոս
Ատրիդէս, անհընարին սուգ 'ի սըրտին իւրում յորդեալ:
Այլ Գլաւկոս՝ Հիպպողոքեայ ծնեալ՝ լիկացւոց արանցըն պետ,
Ակն 'ի Հեկտոր արկեալ խեթիւ՝ ծանըր բանիւք յանդիմանեաց.
Հեկտոր՝ տեսլեամբ գերապանծ, յարութենէ յոյժ նըւաղեալ.
Քաջութեան ըզքէն հըռչակ զուր ընթանայ զկնհերոսէք:
Տես արդ որպէս զաստանդ եւ ըզքաղաքդ ապրեցուցես
Դու միայն ժողովըրդովքըդ ըբնակօք Իլիոնի.
Քանզի ոչ ոք 'ի լիկեանց ընդ դանայեանսն 'ի պատերազմ
Խաղասցէ զքաղաքեդ, զի եւ չընորհ ինչ ոչ եղեւ
Մարտ ընդ արըս թըշնամիս դընել անդուլ զօր հանապազ:
Դու զիա՞րդ զայր մի վատթար ճողոպրեսցես 'ի ամբոխ զօրս,
Զուսանականդ, որ զՍարպեդոն՝ ըզթիկնակից քո եւ ըզհիւր՝
Ընդ վայր հարեր՝ լինել որս արգիացւոց յառ եւ յաղուս.
Որ 'ի կենդանս իւրում օգուտ մեծ քաղաքիդ եղեւ եւ քեզ,

Իսկ արդ եւ ոչ հալածել զբռնաւոր ընդունիս առ 'ի նմանէն ։
Արդ թէ ինձ զի ունկնդիր լեալ յարանց յիմաստնացւոց ,
Չուեսցեն 'ի տուն , եւ Տրդատայ հասեալ զայցէ ծանըր կորուստ ։
Զի թէ այժմ արտաքսեցաւ քաղաքականութեան եւ զօրութիւն ,
Անասուն , զոր օրինակ 'ի քաղց աղցէ՝ որ մնջաբար
Ընդ որսորդն սխալեալ վասն հայրենի երկրին ճգնելով ,
Վաղվաղակի յԻլիոն թափեալ լինէր մեր զՊատրոկլոս ։
Զի զիակնս այս յատուկ թէ անձր 'ի մեծ երթեալ գնայցէ
Յարքունին Պրիամու , եւ կորզեսցեմք զայն 'ի խաղմէս ,
Իսկ եւ իսկ արձակեսցեն զՍարպեդոնի գեղեցիկ զէնս
Հատուսցեն այսրէն , եւ զինքն իսկ յԻլիոն ածեալ տարցուք .
Քանզի առն այնպիսւոյ սպասաւորն մեռաւ՝ որ յառաջնմանն
Մեծագոյն է առ նաւսն՝ ինքն եւ սպառազէնք իւր զինակիցք ։
Սակայն դու՝ մեծասրտին Այաքսայ կալ իսկ յանդիման
Չկարացեր՝ զաչըս տեսեալ յախոյենաց զաւարապետի ,
Թող թէ կալ եւ մարտել . զի ընտանագոյն է քան զքեզ ։
Հայեցեալ 'ի նա խեթիւ՝ ասէ Հեկտոր կորդակածօծ .
Զի՞ այդպիսիդ դու , Գլաւկէ , յանդգնաբարոյս խօսեցար ։
Վա՜հ . ընդդիմամիտ կարծէի զքեզ 'ի վեր քան զայլս
Որ միանգամ յարդարանան 'ի Լիկիա երկրին բնակեալ .
Իսկ յորոց այժմ ասացեր՝ արհամարհեցից ըսկսեալ 'ի սպառ ,
Որ ասես զիս Այաքսայ ընդդէմ չհանդուրժել ահաւորին .
Չեմ երբեք ես զարհուրեալ՝ ոչ մարտիւ ոչ ձիոց դոփմանց ,
Սակայն միշտ ասպարակալին Արամազդայ յաղթօղ են միտք ,
Որ եւ զայր արիական վանէ , եւ զյաղթանակն հանէ հեշտաւ .
Ի սուրբ՝ զի եւ ինքնին իսկ նա գրգռէ 'ի պատերազմ ։
Այլ արի՛ եկ , սիրելի , կաց առընթեր ինձ եւ տես զգործ ,
Եթէ զօրըս ցերեկ լեալ ինչ մեղկ , որպէս դըրուցես ,
Թէ զոք արգելից 'ի դանայեանց քաջայանդգնութեան 'ի զօրութիւն՝
Ընկրկեմ 'ի պաշտելոյ զդիականացելոյն Պատրոկլոս ։
Զայս ասացեալ՝ առ տրոյեանսն եբարձ խրախոյս մեծաբարբառ .
Տրովացիք եւ լիկեանք եւ դարդանեանք ընթերամարտք ,
Լերուք արք , սիրելիք , ընդմախոսեան յուշ ձեզ կորով .
Մինչեւ ես ըզզարդուցն Աքիլլեայ զէնս արկցից զանձամբ
Ըզգեղեցիկս՝ որ Պատրոկլի յուժոյն զերծի՝ սպանեալ ըզնա ։
Զայս ասաց , եւ ելեալ գնաց Հեկտոր սաղաւարտաձօձ
Յոխորտեալ զպատերազմէն , եւ ընթացեալ ձիով ընդ ձեռին ,
Ոչ 'ի բացէ սրաթափիչ դիմեալ զարշաւասոյր եհաս յընկերսն ,
Որք յաստանն ածէին զՊելիդեայ զէնսն երեւելիս ։
Անդ մեկնեալ յաշխարհահեծ պատերազմէն՝ փոխեաց նա զզէնսն ,
Եւ զիւրսն ետ քաղաքամերձից տրովացւոց տանել յԻլիոն սուրբ ,
Ըզգենոյր ինքն անեղծ ըզՊելեանն Աքիլլեայ .

Զորս հօր իւրում' օրհնելոյ պարգեւեցին դիքն երկնաւորք,
Եւ նորա յալեւորեալ յիշեալ տըւոյ՝ եա պատանեկոյն.
Սակայն ոչ եւ որդւոյն 'ի զէնս անդ հօրն եհաս յալիս:
Տեսեալ ըզնա մեկուսի ամպրոպայնոյն Արամազդայ՝
Վառեալ 'ի զէն եւ 'ի զարդ աստուածայնոյ Պելէածնին,
Ըզգլուխն իւր շարժեալ՝ խօսեցաւ յանձն իւր եւ ասէ.
Ա՜յ հէք, ոչինչ համբուն մահ քեզ 'ի միտսդ հարկանի
Որ առ քեւ կայ մօտալուտ, եւ դու զանմահ զէնս ըզգենուս
Զէնըն միոյ զաւակի՝ յորմէ դողան այլք համօրէն:
Ըզնորա սպաներ զընկերն հեզահամբոյր եւ քաջազօր,
Եւ ըզզէնսն՝ ոչ յարժանի՝ բարձեր յուսոյն եւ 'ի գըլխոյն.
Սակայն քեզ մատուցից զօրհիս դանէ յաղթութեան մեծ,
Փոխանակ զի ոչ եւս այլ 'ի դարձելոյդ յայդըմ կըռուոյ
Ընկալցի Անդրոմաքէ զՊելէածնին զէնս հոյակապ:
Զայս ասեալ Զըրուանեանն՝ 'ի կապուտակ յօնս ակնարկեաց:
Հեկտորի պատշաճեցան զէնքն 'ի մարմինն, եւ մտաւ 'ի նա
Ահաւորն եւ դոռ Արէս, լըցան անդամք իւր 'ի ներքոյ
Զօրութեամբ եւ կորովով, եւ ընթացաւ ահեղ գոչմամբ
Յանուանի նիզակակիցսն, եւ մեծանձն Պելէածնի
Զոյգ թըւէր նոցա բնաւից՝ զինուք նորին փայլատակեալ:
Եւ յածեալ՝ քաջալերէր բանիւք վառէր զամենեսեան,
ԸզՄեսթլէս եւ ըզԳլաւկոս, զԹերսիլոքոս եւ ըզՄէդոնն,
ԶԱստերոպէոս ընդ նոսին, զՀիպպոթոոս եւ զԴիսենոր,
ԸզՓորկիս եւ զՔրոմիոս եւ զԷննոմոս հաւահմայ.
Ըզսոսին գըրգռելով զերագաթեւ խօսեցաւ բանս.
Լըւարուք, ազգք անթիւ շըրջաբընակ օժանդակաց.
Զի ես ոչ յամբոխից ելեալ խընդիր, եւ ոչ կարօտ,
Այսր ըզձեզ 'ի քաղաքացըդ յարուցի զամենեսեան,
Այլ զի զկանայս տըղայոց եւ ըզնոցին մանկտի մատաղ
Պահեսջիք յօժարափոյթ 'ի մարտասէր աքայեցւոց.
Յայս խորհուրդ՝ պարգեւօք եւ թոշակօք զազգըն ըսպառեմ,
Եւ ըզձեր զմայլեցուցեալ պարարեմ զանձն իւրաքանչիւր:
Այլ արդ մըր այր դէպուղիղ դիմադարձեալ՝ կամ կորիցէ
Կամ կեցցէ, քանզի եւ այս խաղ ասուր եւ առ է մըրցութեանց:
Իսկ որ զամ մի զՊատրոկղոս՝ թէ եւ մեռեալ՝ կորզեալ տարցի
Առ ձիամբուղ տըռոյեցիս, եւ Էաս թոյլ տացէ նըմա,
Ահա զկէս կողոպտածոյս տաց եւ ըզկէսն ինձէն կալայց.
Եւ լիցի այս նըմա փառք, որչափ եւ ինձ իսկ զըլխովին:
Զայս ասաց, նոքա զաշտեան 'ի վեր ասեալ՝ դիմեալ անկան
Դէպուղիղ 'ի դանայեանս ուժով մեծաւ, յոյս մեծ 'ի սիրտ՝
Ժամանել հանել զմեռեալըն յէասայ Տելամոնեանց.
Պանդոյրք. սա'ւասիկ ըզբազմաց արեւ զըրկելու եհաս:

Եւ ասէ յայնժամ Էաս ցաՀագնագոռըն Մենելաւ.
Ո՛վ սիրուն, ով դիւցազնասունդ Մենելաւէ, չունիմ ինչ ակն
Եւ ոչ մեզ իսկ երկոցուն դարձ 'ի կռուոյս առնել անդրէն :
Ո՛չ այնչափ ըզՊատրոկլի դիականէն կամ զարՀուրեալ,
Որ փոքրր մի՝ եւ զարմաւանց յագեցուսցէ շնուէն եւ զՀաւս,
Որչափ զիմոյ եւ զքումս գըլխոյդ վտանգ ինչ կասկածեմ.
Զի ամպրոպ պատերազմի Հեկտոր՝ պատէ շուրջ զընդՀանուրս,
Եւ մեզ իսկ գըլխովին ակն յանդիման երեւի մաՀ :
Այլ արդ եկ զԱքայեցւոց քաջացն ձայնեա, թէ լուիցէ ոք :
Զայս ասաց, ոչ ինչ Հեստեաց Մենելաւոս աՀեղագոռ,
Եւ խրոխտաձայն բարբառով գոչեաց 'ի լուր դանայեցւոց.
Է՛ սիրելիք, զօրավարք արգիացւոց եւ իշխեցօղք,
Որ բարձակիցք Ատրիդայց՝ Ագամեմնոնի եւ Մենելեայ՝
Յարքունուստ ըմպէք, եւ այր իւրաքանչիւր իշխէք զօրաց,
Եւ պատուին յԱրամազդայ եւ պարծանացն ընծեռին փառք :
Բայց անՀնար է ինձ ըզմէն մի զօրագլուխ Հետազօտել,
Զի այնչափ ինձ անչափ բորբոքեցաւ կռուոյս գուպար :
Այլ այր ինքն եկեսցէ՝ նախանձ 'ի մտին եդեալ քինու,
Պատրոկլոս թէ տանիցի արօտակցի շանց գէշ խաղալիկ :
Զայս ասաց, եւ Ոյիլեանն երագ Էաս լըւաւ անդէն,
Եւ նախ ինքն ընթացեալ ընդ պատերազմն՝ եկն ընդ առաջ.
Յետ նորուն Իդոմենեւս եւ զինակիրն Իդոմենի
Մերիոնէս՝ Ենիալեայ մարդասպանին Հանգունակից :
Իսկ զայլոցն՝ ո՛վ ոք միտօք իւրովք զանուանսըն ճառեսցէ,
Քանի՞ ոք յաքայեցւոց ըզմարտն ըզկնի բորբոքեցին :
Տրովացիք Համագունդ բախեցան նախ, Հեկտոր յառաջս :
Օրինակ իմն 'ի բերանս յԱրամազդայ զիմեալ գետոյ
Մեծամեծ մռընչեն ալիք դէմ յորձանացն, եւ ծովեզերք
Գոչեն ափնածիրք՝ 'ի ժայթքել անդ ծովուն 'ի դուրս.
Այնքանեաւ գնային տրովեանք աղաղակաւ, իսկ աքայեցիք
Բակ առեալ միաշունչք կային զորդւովն Մենիտեան,
Շուրջ ցանկեալ ասպարափակ պղընձակուռըն վաՀանօք :
Բայց Զըրուանեանն ըզփայլուն գըլխանոցօք նոցին եՀեղ
Մէգ ստուար. զի եւ ոչ ըզՄենիտեանն ատեայր յառաջ
Մինչ դեռ էրըն կենդանի եւ արբանեակ Էակիդեայ :
Եւ զըժգմեցաւ թէ յաւար մատնիցի շանցըն թըշնամեաց,
Վասն որոյ եւ զընկերսն 'ի պաՀպանել ըզնա յարոյց :
Նախ տրովեանք ըզխայտակն աքայեցիս զըրդուեցուցին,
Որ զդիականըն թողեալ փախեան, բայց ոչ զոք 'ի նոցունց
Մեծանձինքըն տրովացիք Համր նիզակացն եսուն ըստ կամս,
Այլ ըզդէն քարշէին. բայց ոչ յերկար աքայեցիք
Կալոց էին անտի բացէ, զի զնոսա Հաւաք դարձոյց անդէն



Digitized by Google

Այաս՝ որ գեղով եւ քաջութեամբք զանցուցանէր
Զայլովք դանայեցւովք՝ յետ անմեղական Պելէիդեայ :
Եւ զինեաց յառաջեանդրն սաստկութեամբ վարազաբար ,
Որ 'ի լերին զպատուականսն եւ զասպարազանձըն պատանիս
Թեթեւով փարատեսցէ՝ ճանկը ընդ Թաւուտս դառնալ Թփոց .
Նոյն որդին Տելամոնին զարմանալոյն՝ Այասըն պերճ
Յարձակեալ զիւրով ցրուեաց ցրրուեաց ըզպատնեշըն արագախոյս՝
Որ պատեալ էին զՊատրոկլիւ եւ ակն 'ի միտսըն ունէին
Զըգել յաստուն անդր իւրեանց եւ պարծանաց ժառանգել փառս :
Ահա շքեղ ձեռ Լեթոսի Պելասգեանոյն՝ Հիպպոթոոս
Բուռն հարեալ զոտանէն քարշէր 'ի հզօր մրցարանէն
Խրած 'ի կոճըն կապեալ՝ ամրակապաւ ըզձգաձիգն շուրջ ,
Հեկտորի եւ Տրովացւոցն 'ի շնորհս , այլ նմին եղեւ եղեան ,
Որ եւ ոչ ոք ամենայն փութոյ խնամով երկնեաց մանել :
Զի որդին Տելամոնին 'նդ ամբոխն յարձակեալ՝
Եհար ըզնա 'ի մօտոյ ընդ սաղաւարտըն պղնձաձեղեան ,
Եւ հերձու զըլխանոցըն ձիւխէս՝ անկեալ 'ի սայր ,
Ըզհարուածըն գեղարդեան սաստիկ մեծի եւ զհաստ բազկին :
Ընդ կորդանէն փող 'ի մէջէն ուղեղն արեամբ ցայտեցաւ խառն ,
Եւ լուծան ծնգքն իւր 'ի նոյն , եւ 'ի ձեռաց իւրոց Թողեալ
Ընկէց զոտն ընդ գետին ըզմեծանձին Պատրոկլեայ :
Եւ նիզն հուպ առ նմին ըզգլխակիցն անկեալ յերեսս
Յարգաւանդըն Լարիսայ հեռի , եւ ոչ ընդ արժանեաց
Փոխարէնս հատոյց ծնողացըն սիրելեաց , եւ կեանք նորա
Կարճեցան յԱյասայ մեծասրտին պարտեալ նիզէ :
Իսկ Հեկտոր ըզփայլուն զեղարդն յԱյաս անդր արձակեաց ,
Այլ նա եւ՝ տեսեալ անդուստ՝ զուն մ՝ 'ի պղնձէ մեկնեցաւ խոյս .
Նա սակայն զՍքեդիոս , ըզմեծանձնեն Իփիտեայ ձեռ ,
Զքաջարին Փոկեացւոց , որ յանուանին 'ի Պանոպեւս
Ունէր իւր տուն բնակութեան , արանց բազմաց Թագաւորեալ .
Զայն եհար ընդ անրակաւն , եւ պղնձաձոյլ ակն նիզակին
Թափ ընդ Թափ մխեալ անցեալ՝ հուպ առ մերձին ծայր ուսոյն էլ :
Անկաւ նա Թնդալով , շառաչեցին զրահքըն զիւրեւ :
Եւ Այաս ըզկորովին Փորկիս , զհամբակըն Փենոպեայ ,
Ըզպաշտպանն Հիպպոթոոսի , նըզեալ զաշտէն եհար ընդ պորտ ,
Եւ ջախեալ ըզկարաւանդն եւ ճաշակեալ ըզփորոտն ,
Գլորեցաւ նա 'ի փոշւոյն , եւ բուռն ափովըն եհար զերկրէն :
Յետոյ շողան նահանջեաց , եւ նիզն Հեկտոր իսկ պերճափայլ .
Գոռս հարեալ արգեւացւոց , եւ զդիակունսն առեալ 'ի քարշ
ԸզՓորկեայ , զՀիպպոթոոսի , լուծանէին ըզզէնսն յուսոյն :
Անդ անդրէն արշաւեցին 'ի սիրելեացն Արեայ յաղթեանց
ՅԻլիոն ելանէին անարութեամբ իւրեանց պարտեալք ,

Ցանկէին զմիաւսան արքայութեանք ուժովք խորհրդոց եւ քաջութեանք
Եւ 'ի վեր քան զհրամանս Արամազդայ, բայց Ապողոն
Զէնեաս զօրդեաց ճիգնին կերպարանեալ 'ի Պերիփաս
Ի նախկնակին Եպիտեան' որ առ նորա հայրն ծերունեալ
Քարոզ կացեալ' ալեւորեալ էր եւ մրցողն հանճարեղ քաջ.
Ցայն 'ի կերպ' Արամազդայ Ձեռն Ապողոն բարբառեցաւ.
Էնեաս, իսկ զիարդ եւ յակամայ կամս աստուածոց
Փրկեիցէք զբարձր Իլիոս, որպէս տեսեալ եմ զայլ արար
Ի զօրութիւն յուսացեալ եւ 'ի կորով եւ յանձնութիւն
Եւ յիւրեանց զօրականն, ուր եւ նուազք էին յազգէ:
Իսկ Արամազդ մեզ կամի քան զդանայեանց ընդյաղթանակն.
Այլ յերկիւղ անհնարին խուճապեալ ձեր' ոչ մարտնչիք:
Զայս ասաց, եւ Էնեաս ըզխողաձիգն զԱպողոն
Նըկատեալ զի կայր' ծանեաւ, եւ մեծաձայն ասէ ցՀեկտոր.
Հեկտոր եւ այլ զօրավարք տրովադացւոց եւ աւագաց,
Մեզ արդ այս այպանութիւն' 'ի սիրելեացն Արեայ յաքեանց
Վատութեամբ նկուն եղեալ' եւ յԻլիոն փախեալ ելանել:
Այլ 'ի դէպ ոք աստուածներ հասեալ մատուցեալ առ իս ասէ
Զմեծն հանճարեղ Արամազդ 'ի ճակատուս մեր զօրավիգն:
Երթիցուք արդ դէմուղիղ 'ի դանայեանս, եւ մի անխռով
Հասուսցեն նոքա 'ի նաւսն ըզՊատրոկլոս զի անկեալն:
Զայս ասաց, եւ յոյժ վազեալ քան զնահատակսն էանց յառաջ.
Եւ նոքա դարձեալ անդրէն ճակատեցան ընդ աքայեանս:
Իսկ յայնժամ Էնեաս խոցեաց տիգաւ զԼիոկրիտոս'
Ըզզաւակն Արիսբասայ' զԼիկոմեդեայ հզօր ընկերն:
Ընդ անկումն նոր խոցեալ Արեայ սիրելն Լիկոմեդէս'
Մատուցեալ մերձեցաւ եւ արձակեաց զաշտէն փայլուն,
Եւ եհար զՀիպասեանն Ապիսաւոն' զհովիւն ազգաց
Ի լերդին ընդ սիրտանդերքն, եւ նոյնհետայն ըզծունկսն եւլոյծ.
Որոյ էր յոփեպտղուն Պէոնիոյ եկեալ հասեալ,
Եւ 'ի մարտըս քաջամարտ երկրորդ ընդ նմին Աստերոպէի:
Ի գլորումն նոր գորովեալ Աստերոպեոս արիական'
Եւ նա խիզախ զնմանէ ստիպայն 'ի կռուի դանայեցւոց.
Սակայն ոչ եւս էր հնար, զի յամենեսեան վահանափակ
Կային որ շուրջ ըզՊատրոկլեաւն, եւ նիզակաբերձաւորքն կարկառեալ:
Զի Այաս զամենեսեան այցէր, եւ տայր խրախոյս բազում,
Եւ չտանէր ումեք թողուլ 'ի մեռելոյն կամել երբեք,
Ոչ ումեք նահատակել յառաջ քան զայլ աքայեցիս,
Այլ կալ մնալ ըզնովաւ եւ դէմ ընդ դէմ դնել մարտ:
Զայս պատուէր այր մեծն Այաս, թանայր երկիր յարեան բոսոր,
Եւ վիրաւորք խառն եւ խիտ թաւալէին անկանէին .
Տրովացւոցն, համայն արք նիզակակցացն, եւ դանայեանց,

Զի եւ ոչ սոքին սաստից արեան հեղման տայլին Ճակատ ․
Բայց սակաւք յոյժ զբաւէին, զի ուշ 'ի կառսն սանձէին մշտ
Ընդ գունդն ողջոյն 'ի միմեանց հերքել ըղդատոյն սատակութեան :
Այսպէս սոքա հրապուրանաւ գուպարէին, եւ չէր սակաւ
Ոչ զակն արեւուն, ոչ ըզլուսինն ողջ անարատ ․
Զի էին մասամբ խաւարապատք յասպարիսին քաջք ամենայն
Որ զորդւոյն Մենետեայ զմեռեալ մարմինն տանէին պար :
Իսկ այլք, տրովադեանք եւ բարձրազէն աքայեցիք
Յապահովս յարփի ջեռոտ ոգորէին, եւ սուր Ճաճանչք
Սփռէին արեգականն, եւ յերեսաց երկրէ ծնաւ մէգ
Ոչ ցոլանայր, ոչ 'ի լերանց, այլ լըրջամիտ մարտընչէին՝
Յուսացին նետից միմեանց ըզգուշացեալ կայց 'ի բաց :
Իսկ նոքա 'ի միջոցին տառապէին չարչարանօք
Ի բաւէն եւ 'ի կռուոյն, եւ մաշէին 'ի ծանր պղնձոյ
Քաջազունք համօրէն ․ իսկ արք երկու չեւ' էին լըւեալ,
Արի արք փառաւորեալք՝ Թրասիմեդէս եւ Անտիլոք,
ԶՊատրոկլի անպարտելւոյն ըզմահն, այլ դեռ թուէր նոցա
Յառաջնում անդ ճակատուն ողջ ընդ տրովեանս 'ի պատերազմ :
Եւ նըկատեալ զկոտորած զընկերակցացն եւ ըզփախուստ,
Առանձինն ոգորէին, զայն Նեստորի տուեալ պատուէր
Եւ խրախոյս 'ի մըրցութիւն՝ 'ի թայրաթուխ գըլըգեալ նաւուցն :
Եւ ըզտխուն եկաց ողջոյն սոցա գուպար մեծ ծանր կըռուոյ ․
Երկօք եւ քըրտամբ յաւէժ անդուլ ծունկք եւ ոտրունք,
Ներքուստ ոտք բոլորեցուն, եւ ձեռք եւ աչք էին թաթախ
Ի կըռուէին պաշտօնէիւն արեաւ քաջոտն Էակիդեայ :
Որպէս այր ոք ըզմեծի զուարակի մորթ տայցէ սպըրհայցն
Ի ձըգտել ըզթըրմեալն արբեալ 'ի Ճարպ պարարտութեան,
Եւ առեալ նոքա ձըգեն բոլորաբար անջըրպետեալք ․
Եւ քամի հիւթն ընդ փոյթ, եւ Ճարպն 'ի ներքս տարրանայ
Ի ձըգձըգել բազմութեանն, եւ յամենայն պարագի բոլոր ․
Այսպէս կողմանքն երկոքեան այսր եւ անդր քարշէին
Ըզդիակն 'ի խուռն վայրի, զի սիրտ յանձինս յուսայր նոցա,
Տրովեանց ձըգել յԻլիոն, եւ աքայեանց 'ի գոգեալ նաւս,
Եւ գուպար ընդ նըմանէ յարեաւ դըժնէ պաղանական ․
Ոչ Արէս ամբոխագրգիռ, եւ ոչ Աթենաս թէ զայն տեսեալ՝
Ունէր ինչ եպերել, թէ եւ ըղըրդեալ 'ի մեծ զայրոյթ :
Այսպիսի Արամազդ յաւուր յայնմիկ ըզՊատրոկլէ
Արկ արանց ուերիվարաց մահահրաւէր Ճակատամարտ :
Իսկ զիւցազն Աքիլլէս ըզՊատրոկլի չգիտէր դեռ մահ,
Զի հեռի յոյժ 'ի սըրընթաց նաւատորմէն մաքառէին
Ընդ տրովեանցըն պարըսպօք, եւ չունէր ակն ինչ 'ի սըրտի
Թէ մեռեալ իցէ, այլ ողջ, եւ մինչ 'ի դըրանցն ժամանեալ,

Digitized by Google

Եւ ահա զարձցի այարէն․ քանզի եւ ոչ իսկ հաւատայր
Թէ առանց իւր ըղքաղաքն աւերեսցէ, եւ ոչ ընդ իւր․
Զոր բազում անգամ ուսեալ էր 'ի մօրէն լուր առաջող,
Զի զմտածեն Արամազդայ պատմէր նմա զմտաց խորհուրդ․
Իսկ մօրն յայնժամ չէր պատմեալ զայնքան ոճիրն որ ինչ դէպ եառ,
Թէ մահու վախճանեսցի յոյժ սիրակից իւր ամենախաս։
Իսկ նոքա զմեռելոյն յաւէժաբար սուր առեալ 'ի ձեռս
Անդադար բախեալ 'ի կռիւ եւ ըզմիմեանս սատակէին։
Եւ էր որ այսպէս ասէր 'ի պղնձազգեստ աքայեցւոց․
Ոչ պատիւ ինչ մեզ լիցի, ով սիրելիք, դարձ 'ի խոր նաւս,
Այլ աստէն ամենեցուն բացցէ զբերան իւր սեաւ գետին․
Եւ այս մեզ առաւել օգտակարելի եղիցի յոյժ,
Քան թէ թոյլ տալ ըղսա տրովադացւոց ձիախրոխտից
Քարշել տանել յոստանն իւրեանց, եւ զպարծանս տանել ըզշուք։
Այլ եւ անդուստ 'ի տրովադացւոց մեծամեծաց զայս բարբառէր․
Ո՛վ սիրելիք, թէ եւ հասեալ բոլորեցունց լիցէ միաձակ
Սատակել միանգամայն, մի՛ յետնեսցի ոք 'ի մարտէս։
Զայս ասէր ոք եւ զկորովն արծարծանէր զինուորակցին։
Կռուէին այսպէս սոքա, եւ երկաթի շառաչ եւ շխաչիւն
Ի պղնձի զնայր երկինն ընդ տապալեր ստրիկին թափուր։
Իսկ երիվարք Էակիդեայ կացեալք ուրոյն 'ի ճակատէն,
Լային, իբրեւ այն ինչ զաղջն առին թէ կառավարն
Անկեալ էր 'ի փոշւոյ 'ի մարդասպանն Հեկտորէ։
Աղաչէն Աւտոմեդոն՝ Դիորեայ ձեռս քաջակորով
Յաճախ ճապուկ մտրակաւ առնչեալ ճեպէր եւ տագնապէր,
Ի կակուղ բարբառ յաճախ ձայնէր, յաճախ եւ սպառնալեօք,
Այլ ոչ յետս 'ի նաւատորմն առ լայնատարր Հելլեսպոնտոս
Կամէին նոքա գնալ, եւ ոչ 'ի խաղմն առ աքայեանս։
Այլ օրինակ իմն արձան պահէ զետեղ՝ կացեալ կանգուն
Ի շիրիմ առն մարդոյ վախճանելոյ, եւ կամ կնոջ,
Կային այսպէս անխախտ՝ կալեալ ըզկառսն գեղազէզ,
Խոնարհեալ ըզգլուխսն յերկիր, եւ արտասուք ողբոց նոցա
Ջերմաջերմ ընդ յատակն յարտեւանանց թօթափէին
Առ անձուկ վարշին գըլթոց, աղտեղէին եւ ծաղկեալ բաշք
Ի վերուստ լծոյն հոսեալք աստի անտի շուրջ ըզպատուաքն։
Հայեցեալ Արամազդայ 'ի սուգ նոցին՝ գորովեցաւ,
Եւ ըզգլուխ իւր շարժեալ՝ ասէ յանձին իւրում ընդ միտս․
Ա՛յ հէքք, իսկ առ իմն՞ զձեզ արքային տուաք Պելեայ՝
Մահացուի առն, ուր զի դուք անծերականք էք եւ անմահք․
Միթէ զի ցաւս ունիցիք 'ի տառապեալ մարդկան միջի․
Զի չիք ուրեք չուառագոյն ինչ քան ըզմարդ՝ յամենեցունց
Որ 'ի վերայ երեսաց երկրի շնչէն եւ խաղասանն։

Սակայն ոչ եթէ ձեռք ու՛ի նորաբորբ չըքնալ 'ի կռուոյ
Արշաւեսցի Պրիամեանն Հեկտոր, զի ոչ Թողացուցից։
Չեցէ՞ շատ՝ զի զզէնսն ունի եւ խրախուսացեալ պարծի այնուիկ։
Այլ 'ի ծածկոցդ ձեր արկից եւ 'ի հողմոց ոյժ եւ կորով
Թափել հանել 'ի կըռուոյն զԱւտոմեդոն 'ի խոր քաջախին.
Քանզի զեռ եւըս նոցա շնորհեցից փառս 'ի կոտորել,
Մինչեւ երթեալ 'ի գեղապատախան հասանիցեն նաւաց տարմին,
Եւ մըրացէ արեգակն, եւ եկեսցէ սուրբ աղջամուղջ։
Խօսեցաւ զայս եւ շընչեաց 'ի յերիվարսն ուժգին կորով.
Եւ նոցա 'ի բաշիցըն Թօթափեալ յերկիր զփոշին՝
Տանէին ձեպով զկառս կառան ընդ տրովեանս եւ ՚նդ աքայեանս։
Եւ Թէպէտ եւ զընկերըն Թաղծեալ, կըռուէր Աւտոմեդոն
Ցարձակեալ 'նովին ձիովք, որպէս խոյ անգղ 'ի սագուց տարմ.
Զի դիւրաւ 'ի տրովացւոց մարտամարտիկէն ապրէր փախուստ,
Եւ հեշտիւ հալածելով 'ի բազմախիտս անդրը խաղայր։
Բայց ոչ արանց զարծէր նախաձեռն՝ ընդհետ նոցին շահատակէր.
Զի եւ չէր իսկ միայնոյն 'ի նուիրական 'ի կառսըն անդ
Նիզակ արձակել, եւ սանձել ժիր զերիվարսն։
Անագան՝ ուրեմն ընդ նա եսես աչօքն այր մարտակից՝
Որդեակն Էմոնեան Լայերկեան՝ Ալկիմեդոն,
Եւ կացեալ յետոյս կառացն՝ յԱւտոմեդոն բարբառեցաւ.
Ո՞ 'ի դից, Աւտոմեդոն, զունայնէս խորհուրդդ 'ի սիրտդ արկ,
Եւ զառողջ միտսդ եհարձ, երթալ միայն նահատակել
Ցառաջնումն անդ Ճակատուն, որ զի սպանեալ է քոյդ ընկեր,
Եւ Հեկտոր զանձամբ արկեալ զԷակիդեայ զէնսըն՝ խայտայ։
Ետ նըման պատասխանի Աւտոմեդոն՝ Դիորեան Ձեռ.
Ո՛վ դը այլ յաքայեցւոց, Ալկիմեդոն, խորեւ ընդ քեզ՝
Ցոյր անմահ ձիոցս 'ի ձեռան կցէ խորտակումն եւ վարժելիք,
Բայց միայն 'ի Պատրոկլէ՝ յաստուածանման 'ի Ճարտարէն
Մինչ կենդանին էր, իսկ այժմ օրհաս եւ մահ եկին ընդ նա.
Այլ ընկալ դու զմըտրակս եւ զերասանս շողշողենիս,
Եւ իջից ես 'ի կառացըս զուպարել 'ի պատերազմ։
Զայս ասաց, Ալկիմեդոն հեծեալ 'ի կառսըն մարտարար՝
Բուռն եհար յապաւրակն յերասանակսն եւ 'ի մըտրակն,
Եւ իջանէ Աւտոմեդոն, զոր Հեկտորի վեհին տեսեալ
Զայն անդէն արձակեաց առ մօտակայն իւր Էնիաս.
Էնիաս, պղնձազրահ տրովացւոց խորհըրդական,
Զերիվարսդ զայդ ծանեայ զԷակիդեայ երագոտն
Շողացեալս 'ի պատերազմ ապաժամն կառավարօք։
Արդ ակն ունիմ ըմբռնել, Թէ կամիցիս դու 'ի սրտէ.
Զի Թէ զայլ տամք 'ի նոսին արշաւասոյր ապաստանել՝
Չիշխեսցեն մեզ ախոյեան 'ի մարտակալս կալ զուպարան։



Digitized by Google

Զայս ասաց, չքնաղանդամենայն ասէ ոսկեղէն Աքիլլեւսի :
Դիմեցին, յուսով ասպարակերպք ընդոս եւ ամուր արշաւանօքն՝
Զօրավք էր խուռն 'ի խառնալ պատառեալ աղեղնաձ յաղթանակաւոր :
Ընդ սոսա Քրոմիոս եւ Արետոս աստուածանմանք,
Երթային երկաքեան 'ի սիրտս խորհելով յուսապաստանք՝
Սպանանել ըզնոսա, զպերճապարանոցս ձիսն առնել :
Խելագարք, որոց չէր չըղոյր դառնալ անարիւն առանց արեան
ՅԱւտոմեդոնէ 'ի քաջէն, որ աղաչեալ զԱրամազդ հայր՝
Արութեամբ եւ կորովով լցաւ 'ի սիրտս բազմաբանորեկ·
Եւ անդէն ցԱլկիմեդոն ասէ ընկերին հաւատարիմ·
Զերիվարսդ մի յինէն, Ալկիմեդոն, կացցես հեռի,
Այլ մօտ 'ի մօտ, մինչ թասանն շնչոցն ածցես ինձ 'ի թիկանս·
Զի Պրիամեանն Հեկտորի չկարծեմ հանգչել 'ի զօրութեանց
Մինչ չեւ 'ի գերապանձս աշտանակեալ յԱքիլլի ձիս,
Ըսպանեալ ըզմեզ եւ զշարս Աքայեցւոց արանց պարտեալ·
Բայց թէ ինքն 'ի նախահարակումն ձերբակալ ըմբռնեսցի :
Զայս ասացեալ՝ ձայն տայր Մենելաւի եւ Էանտեանց·
Առաջնորդք արգիւացւոց, Մենելաւոս եւ Էանտեանք,
Զմեռեալդ զնա կան թողէք ընդ հոգ 'ի քաջազանցն՝
Պաշտպանել ըզնովաւ եւ հալածել զարանց ջոկս·
Այլ 'ի մեզ 'ի կենդանեաց վանեցէք զօրն անողորմոյն :
Քանզի այսր խուժեցին յարտասուալից պատերազմս
Հեկտոր եւ Էնէաս՝ առաջնորդացեալք քաջ Տրոյեանց·
Այլ այս ամենայն 'ի ծունկս դից դնի ապահեստ :
Արձակեմ եւ ես զաշտէս· Արամազդայ յանձն այդ ամէն :
Զայս ասաց, եւ ճօճեալ զերկայնաստուերն ընկէց նիզակ,
Եւ եհար ըզվահանն Արետոսի զբոլորածիր, —
Որ զզօրէնն ոչ արգելեալ՝ զընթաց պղնձեձըն թափանցանց, —
Եւ մխեաց զայն ընդ կամարն 'ի ստորագոյն որովայնին :
Եւ օրինակ իմն առեալ կացին սուր այր երիտասարդ
Եւ կոփեալ 'ի բուռն եղջերց վայրադաշտեան խեւ արջառոյ՝
Խզէ զմկանջեղն բոլոր, նա վազ մի՛ նորոս անկեալ գլորի,
Համբառնալով առաջացեալ սասանեցաւ առ պարս 'ի վեր,
Եւ այսր աստուր տէգն 'ի փորէն ճօճ ճեմեալ զանդամսն եղծ :
Բայց Հեկտոր յԱւտոմեդոն զփայլականաբերն արձակեաց տէգ·
Նա տեսեալ 'ի հանդիպոյ՝ խոյս 'ի պղնձէի եւս մերկենդէն
Զանձն յառաջ կոյս կքեալ, եւ 'ի թիկանց զերկարն երկայն
Վարսեցաւ 'ի գետին, եւ ծայրակոթն անդ երերէր,
Եւ հուսկ ուրեմն անդանոր եկաց Արէս բուռն՝ 'ի թափոյն :
Փողըրր միւս եւս, եւ նոցանցըրն զխիթեն մօտ 'ի մօտոյ,
Եթէ ոչ տարատարանհեալ զանտառակցեան էր Էանտեանց
Որ 'ի կոչ զմնուորակցին եկեալ դայլին ընդ բազմամբոխն :

528

Ի նոցունց զանգիտեալ՝ անդի եռուն անդրէն ընդ կրունկ
Հեկտոր եւ Էնէաս եւ Գրոմիոս աստուածանկերպ:
Իսկ զԱրետոս Թողլին անդ՝ սրբատապատաս զինաթաւալ,
Եւ Արեայ չուառաժրբի համանմանեալ Աւտոմեդոն
Ցասուրի էառ ըղջէնան եւ պարծանօք բարբառեցաւ.
Արդարէն ըղձեալոյ Մենիտեադին սակաւ մի գէթ
Մեղմացուցի զցաւ սրտիս, Թէպէտ եւ այր մի ստորնեալ սպանի:
Զայս ասաց, եւ զարիւնոտ կապուտն առեալ եդարձ 'ի կառսն,
Եւ նա ինքն ամբարձաւ, ոտք իւր եւ ձեռք արիւնլուացք,
Որպէս զի որ յառիւծոյ ըզզուարակ ծախեալ լափէր:
Իսկ անդրէն ըղՊատրոկլէ պատերազմն անկաւ զօրաւոր՝
Զայրագին՝ արտասուալից, եւ Աթենաս յարոյց ըղխռովն
Ցերկնուստ իջեալ, առաքեալ յորոտաղէն Արամազդայ՝
Զդանայեաս երթալ գրգռել. քանզի շրջեալ էին իւր միտք:
Որպէս յերկնից ըղծիածանըն ծիրանի ծաւալէ
Արամազդ մահկանացուաց՝ 'ի նըշանակ պատերազմի,
Կամ սառնամեր ձմերայնոյն՝ որ յարարոց արգելանց երկրին
Ըզմարդիկըն խափանէ եւ զանասնոց ծընդէ զասանս,
Սոյնպէս նմանակ եւ սա զանձն 'ի ծիրանի պատուրեալ ամպ՝
Ցաքայեանց 'ի գունդըն եմուտ եւ զարթոյց զայր իւրաքանչիւր:
Եւ յորդին նախ Ատրեւսի խրախոյս բարձեալ բարբառեցաւ՝
Առ արին Մենելաւոս, — քանզի սա մերձ առ նըմին կայր, —
Փենիքսի համգունակեալ մարմնով, ձայնիւ անձնեղէն.
Քեզ ամօթոյ, Մենելաւէ, լիցին եղեր եւ թըշնամանք,
Ըզանուանին Աքիլլի թէ զմտերիմ զինուորակից
Ընդ Տրոյեաց պարըսպօք պատառեսցեն շունք ժըռաժեռ:
Այլ պինդ կաց եւ ըզզօրսն ամենեսեան քաջալերեա:
Եւ նըմա պատասխանի Մենելաւոս ահեղագոռ.
Հայր Փենիքս, հնաւուրց ծերունիդ, ով թէ Աթենաս
Տայէ ինձ զօրութիւն, եւ զոլորաքաց հերքեսցէ Թափէս,
Առընթեր կալ Պատրոկլի կամիմ ես եւ ձեռըն տալ,
Զի կարի յոյժ անհնարին ճըմլեաց ըզսիրտ իմ մահ նորա:
Այլ սաստիկ հրոյ բըռնութիւն է 'ի Հեկտոր, եւ չառնու դուլ
Խողխողել 'ի պղընձիկ, զի Արամազդ նըմա տայ զփառս:
Զայս ասաց, եւ Աթենաս խընդաց միտըս աստուածուհին
Զի նըմա քան զամենայն աստուածոց նախ մատոյց աղերս:
Եւ ուսոց եւ ծընկանց նորա զգեցոյց կորովութիւն,
Եւ 'ի լանջըս նորա զյանդըգնութիւն ընծայեաց ճանճաւն,
Որ վանեալ՝ եւս առաւել խանձի կըծել 'ի մարմին մարդոյ,
Զի արիւն մարդկայնն քաղցրաճաշակ 'ի քիմս է իւր.
Այսպիսի խիզախութեամբ ելից ըզսիրտըն սեւաթոյր:
Եկն եկաց առ Պատրոկլի եւ զփայլունակ տէգն արձակեաց:

Էր 'ի տրովկանացն Պոդէս անուն որդի Էետիոնի,
Ընչաւէտ և քաջալաւ, զոր յոյժ յազգին պատուէր Հեկտոր,
Զի էր իւր ամախակ բաղձանակից սիրատենչակ:
Ընդ կամար գօտւոյն ըզսա Մենելաւոս եհար խարանեաշ
Մինչ ձեռպէրն 'ի փախուստ, և Թափ ընդ Թափ ըզպղինձն եհան.
Անկաւ Թրնգմամբ ընդ գետնին, իսկ Ատրիդէս Մենելաւոս
Ըզմեռեալն 'ի տրովացւոց կորզեաց 'ի խումբ ընկերակցացն:
Այլ զՀեկտոր հուպ մատուցեալ Ապոլոնի քաջալերէր,
Ի ձեւ Ասեան Փենոփի' որ էր նըմա սիրելագոյն
Քան ըզհիւրսն ամենայն, և բնակութիւն տանն յԱբիդոս.
Դիպաղեղն Ապոլոնի տաեալ զերեսս իւր ասէ.
Ո՞վ ոք այլ ևս յաքայեանց երկընչիցի, Հեկտոր, 'ի քէն,
Զի այդպէս փախուցեալ ես յերեսաց Մենելաւի,
Որ յառաջ անզօր մարտիկն, և այժմ ըզդին բարձեալ միայն
Ի տրովեանցս անցեալ գընայ, սպանեալ և զքո սերտ ընտանին,
Զկորովին յախոյեանս' զԷետիոնի որդին Պոդէս:
Զայս ասաց, և զնա ծածկեաց ցաւոց մըռայլ ամպ սեւաԹոյր,
Եւ եմուտ 'ի նահատակսն 'ի պղինձ հրաշէկ զինավառեալ:
Եւ յայնժամ Զբրոնեանն ըզքղանցաւոր և զպայծառաշողուն
Առ զասպարն, և զԻդա պարապատեալ հօծեալ ամպովք'
Սաստկակոծ որոտընդոստ փայլատակմամբք դըղըրդեցոյց,
Ետ տրովեանց ըզյաղԹուԹիւն, զարհուրեցոյց զաքայեցիս:
Ըսկիզբն արար փախըստի Պենելէոս բիովտացին.
Քանզի դէմըն միշտ յառաջն' էր տեգահար եղեալ յուսոյն,
Քերեալ ծայրիւ չափ եւեԹ, այլ և մինչ յոսկրըն երդեծեալ
Սըլաքին Պուլիդամայ, զի սա 'ի մօտ եկեալ եհար:
Մերձեալ ապա խոցեաց Հեկտոր ըզԼէիտեայ ձեռին դաստակ'
ԶԱլեկտրիոնի մեծանձնին որդւոյ, և արկ 'ի գնալըն.
Որ փախեաւ բըբըջելով, զի ոչ ևս այլ յուսայր 'ի սիրտ
Ունել նիզակ 'ի ձեռին և մարտընչել ընդ տրովացիս:
Իդոմենևս զՀեկտորի, մինչ յարձակէրն 'ի Լէիտոս,
Եհար զլանջապանակ զրահից նորա մերձ առ ըստեամբն,
Այլ 'ի բնի անդ սըլաքին' բեկաւ գեղարդն երկայնաձիգ:
Ձայն աւին տրովեանք, և նա Թըռոյց զաշտէն յԻդոմենևս
Ի Դեւկալեանն որ 'ի կառսըն կայր, և խուն մի վրէպ անտի'
Զզինակիր Մերիոնեայ և զկառավարըն Կերանոս
Զընդ իւր եկաւորեալն 'ի բնակաւէտըն Լիկտոսէ, —
Զի նախ հետի եկն Իդոմեն 'ի կըրկնամուղ մեկնեալ նաւացն,
Եւ մեծապանծ յաղԹանակ պարգեւելոց էր տրովացւոց,
Թէ ձեպով չէր Կերանու զԹիր երիվարսն անդր հասուցեալ.
Նըմա լոյս եկըն նա, և վանեաց զօրըն գըժալըհէ,
Իսկ ինքն զոգիսըն կորոյս 'ի մարդասպանձըն Հեկտորէ, —



Digitized by Google

Ըզնա խոցեալ սուր սայր ախըլն ընդ ծընօտին եւ ականջս,
Զատամունըն Թօթափեալ եւ ըզլեզուն կըտրեալ ընդ մէջ։
Ի կառացն անկեալ գըլոր՝ զերասանակըն հոսեալ յերկիր,
Զոր խոնարհեալ Մերիոն՝ իւրով ձեռօքն առ 'ի գետնոյն,
Եւ 'ի նոյն համբարձեալ բարբառեցաւ առ Իդոմէն.
Արդ արա մըտրակ 'ի կուշտ, մինչեւ յերագ նաւսն հասանել,
Զի եւ դու գիտես խոհեմս՝ Թէ Աքայեցւոց չիք ինչ այլ կար։
Զայս ասաց, եւ Իդոմէն ըզգեղապատեղ մըտրակեալ ձիան
Ի նաւակներըն գողացաւ, զի անկաւ ահ 'ի սիրտ նորա։
Այասայ եւ 'ի մեծամեծըն Մենելեայ չեղեւ զանխուլ,
Զի պըտղափոխ յաղԹուԹեան սըրտակագացեալ տայր Արամազդ։
Եւ սկըսաւ այսպէս 'ի բանս խօսել մեծն Այաս Տելամոնեան.
Եհէ, որ եւ կարի ոք միանգամ անմտագոյն իցէ,
Ասցէ 'ի միտ, Թէ յընկերել է Տրովադացւոց հայրն Արամազդ.
Զի նոցա բոլորեցուն, Թէ քաջ Թէ վատ ոք ձըգէ ձիգ,
Գամակիւն լինին սըլաքք, եւ Արամազդ ուղղէ զընթացս.
Իսկ մեր ամենեցուն՝ այսպէս ունայն ընդ վայր ցընդին։
Այլ աւէք ասցուք 'ի մէջ զոր հանճարեղն իցէ խորհուրդ,
Ի՞բր իցէ ձըգել տանել ըզդիակն եւ մեզ դառնալ անդրէն
Եւ լինել՝ սիրելի զինուորակցացս 'ի խընդուԹիւն,
Որ դիտակն այսրը եկեալ՝ տրտմին եւ ոչ եւս ունին ակն
Հեկտորի մարդասպանանձին անպարտելի բազկին ուժոյ
Կարող լինել մեզ ժուժել, այլ անկանել 'ի Թուխ նաւսն։
Իցիւ Թէ ոք յընկերաց փուԹանակի ասէր զըրոյց
Առ Պելեանն՝ որոյ կարծեմ Թէ եւ լըւեալ իսկ չիք համբաւն
Ըզզոյժըն բօԹալի, զի սիրելին կորեաւ ընկեր.
Այլ ոչ կարեմ նըշմարել յԱքայեցիս այնպիսի զոք.
Զի ծածկեալ կան համօրէն 'ի մէգ ինքեանք եւ երիվարք։
Արամազդ հայր, աղէ զամ մի դու զերծո 'ի մառախլէս
Զորդիս Աքայեանց, ած ըզջեր եւ տուր աչացըս տեսուԹիւն,
Ապա կորո իսկ 'ի լոյս, քանզի քեզ այդ եղեւ հաճոյ։
Զայս ասաց, հայրն արտասուաց ողբականին արգահատեալ՝
Իսկ եւ իսկ ցըրուեաց ըզխաւարն, եւ ըզմառախուղըն փարատեաց։
Արեւ եւս հեա ընդ հետ, Ճակատն ամբողջն եղ յերեւան,
Եւ ասէ յայնժամ Այաս ցըՄենելաւս ահեղագոռ.
Հայեաց արդ, դիցասընունդ Մենելաւէ, եԹէ տեսցես
Կենդանի զԱնտիլոքոս, ըզմեծամեծին Նեստորի Ձեռն,
Ճեպեսցէ ըղընԹել փուԹով առ Աքիլլէս գուպարայաղԹ,
Գոյժ ասանել, զի ցանկալին իւր քան ըզբնաւս կորեաւ ընկեր։
Ասաց զայս, բարուանդամենեաց ոչ Մենելաւ անհաւանեաց,
Եւ եկեալ խաղաց գընաց որպէս առիւծ ոք 'ի գոմոց,
Որ աշխատ լեալ 'ի խռովել եւ տագնապել ըզշունս եւ զայրս՝

Որ չըտան նըմա Թոյլ յափըշտակել զարշաւոյ ձիոյն
Ըզգէշերն 'ի գլուխ ասպընկալք․ մեծափառաւք ենքն 'ի շարից
Յարձակեալ՝ չըմնացէ ինչ, քանզի արդարք ահագնատարափ
Թօթափեալ ընդդիմադարձ 'ի կարողից Թըռչնի բազկաց,
Նա եւ ջահք բոցավառեալք, յորս շըփոթեցեալ հարթնու մայրն,
Եւ զայգոյ մեկնեալ գընայ ծանրաթախիծ հաչեալ սըրտիւ,
Սոյնգունակ 'ի Պատրոկլէ Մենելաւոս ահեղագոռ
Գընայր յոյժ ակամայ, զաքայեցւոցն 'ի մեծ կասկած՝
Թէ առ ահի տագնապին Թողցեն ըզնա Թըշնամեաց յորս։
Եւ բազում ինչ տայր պատուէր Մերիոնի եւ Այասեանց․
Այասեանք, առաջնորդք արգիացւոց, եւ Մերիոն,
Յուշ ձեզ արժըրմ Պատրոկլի հեզացելոյն յածութեան բարք,
Զի գիտէր կենդանւոյն առ ամենայն ոք հեզ լինել․
Իսկ արդ եղեւ ըզնա մահ եւ օրհասին ճակատագիր։
Զայս ասացեալ մեկնեցաւ Մենելաւոս խարտեաշագեղ,
Ակն ածեալ շուրջանակի, հանգոյն արծուոյ, զոր եւ ասեն
Արագատեսն քան զամենայն օդապարիկ հաւս ընդ երկինս,
Յորմէ եւ անդ 'ի բարձանց ոչ վըրիպէ արընթաց ձագար
Մացառադող 'ի Թանձրաթուփս, այլ եւ 'ի նոյն իսկ խոյանայ,
Եւ անդէն յափըշտակեալ՝ եւ 'ի կենաց ըզնա զըրկէ․
Նոյն եւ քո, Մենելաւոս գերազարմանդ, ընդ ամենայն
Ցածէր լոյս ակնարկէք 'ի խուռն ամբոխ ընկերակցաց,
Թէ տեսցես Թերեւս ուրեք կենդանի զորդին Նեստորեան։
Յակեան զըլթելեւ ծանեաւ ըզնա 'նդ ահեակ կուսէ զամենայն ռազմին՝
Զի զընկերսն յորդորէր, քաջալերէր 'ի պատերազմ․
Եւ մատուցեալ խօսեցաւ խարտեաշագեղ Մենելաւոս․
Օն արդ, Անտիլոքէ, այսըր մատիր՝ զի լուիցես
Աղետից բօԹ որում չէր ինչ արժան գալ 'ի պատահար։
Եւ դու ինքնին, կարծեմ, ուշիւ տեսեալ ածես 'ի միտ,
Զի պատուհաս Թաւալէ աստուած ընդդէմ դանայեցւոց,
Եւ տրովեանց է յաղԹութիւն․ աքայեցւոց քաջն անկաւ,
Պատրոկլոս, եւ յոյժ անձուկ դանայեցւոցս եհաս կարօտ։
Այլ դու փոյԹ ընդ աքայեանց նաւս ընԹացեալ առ Աքիլլէս՝
Երթ տար զըրոյց․ ձեպեալ Թերեւս գէԹ Թափեսցէ զդին մերկ 'ի նաւն,
Իսկ ըզզէնսն առեալ ունի Հեկտոր սաղաւարտաձոձ։
Ցայս բարբառ լուեալ ըզբանն Անտիլոքոս զահի հարաւ,
Անշըշունչ եկաց յերկար, աչքն արտասուօք ողողեցան,
Եւ զըւարթ ձայնին հազագ խըցաւ հատաւ 'ի կոկորդէն։
Բայց եւ ոչ այնպէս արար զՄենելաւեի պատուէրն ապախտ․
Եւ գընաց ընԹացաւ, յանդիմն ընկեր զէնսն աւանդեալ
Ի Լաւոդոկ՝ որ առ իւր զաւարդակեալ ձիան ածէր շուրջ։
Արդ ըզնա մինչ դեռ ողբայրն 'ի ճակատէն տանէին ոտքն

Աքիլլի Պելեածնին երթալ պատմել զոյժ բօթալից ։
Եւ ոչ քո սիրտ յօժարեաց, Մենելաւէ գիւցազնունդ,
Յօգն ընկերաց նեղելոցն՝ յորոց գընաց Անտիլոքոս,
Եւ անձուկ կարօտագին Պիլիացւոցն եհաս գընդաց.
Սակայն նա կացոյց նոցա զԹրասիմեդէս գիցանըման,
Եւ ինքըն դարձ վերըստին առ Պատրոկլոս արար գիւցազն,
Եւ դիմեալ առ Այասեանց կացեալ անդէն բարբառեցաւ.
Արդ ըզնա 'ի նաւատորմն առաքեցի յերագաԹեւ
Առ քաջոտն Աքիլլեւս խաղալ գընալ, բայց ոչ կարծեմ
Արդ գայցէ, Թէպէտ եւ յոյժ խիկ սըրտամըռեալ ընդ վեհն Հեկտոր,
Զի եւ ոչ մերկ 'ի զինուց ընդ տրովացիս մըտցէ 'ի մարտ ։
Այլ արդ մեք իսկ ինքեանք մեզէն խորհուրդ խորհեսցուք քաջ,
ԵԹէ զդին զիա՛րդ հանիցուք, կամ Թէ եւ մեք իսկ զըրկումքն
Ի տրովեանց մարտս ապրիցեմք 'ի մահուանէ եւ յօրհասէն ։
Մեծն Այաս Տելամոնեան դարձոյց առ նա պատասխանի.
Քաջ տայցեր զամենայն, ով մեծափառ Մենելաւոս.
Սակայն դու եւ Մերիոն բարձեալ ըզդին երագապէս՝
Ի կըռուոյս հանէք 'ի բաց, մեք 'ի Թիկանց տարեսցուք
Ընդ տրովեան խուժանին եւ ընդ գիւցազինըն Հեկտորի,
Անուըքս մեք համամիտք եւ համանուանք, որ եւ կանխաւ
Ժուժկալեալ ընդ բարկ Արեայ՝ եւ 'ի միմեանց ոչ մեկնեցաք ։
Զայս ասաց, եւ 'ի գետնոյն խլեցին գըրկօք նոքա զմարմինն
Կարի յոյժ վերամբարձ, գոչաց ըզկնի տրովեանն ամբոխ,
Իբրեւ տեսին Թէ զդիակն առին տարան աքայեցիք ։
Դիմեցին իբրեւ զբարակս որ 'ի վարազըն վիրաւոր
Յարձակին յառաջոյ երիտասարդ որսականաց.
Զի առ վայր մի արշաւեին գազանացեալք 'ի պատառել,
Իսկ յորժամ՝ կինձն 'ի կորով իւր ապաստան՝ դառնայ յետեւս,
Խոյս տան յետս եւ վարատին յայս ոք եւ յայն կոյս խուճապաւ.
Նոյն տրովեանք անդուլ առ ժամս ինչ համագունդ հալածէին
Սուսերօք հարկանելով եւ նիզակօք երկսայրէիւք.
Իսկ ընդդէմ մինչ ախոյեան ստուէին երկ Այասեանք,
Շըրջէր գոյն երեսաց նոցա եւ ոչ խիզախէր ոք
Նահատակել 'ի վերայ եւ մարտ դընել ըզմեռելոյն ։
Այսպէս սոքա տանէին կայտառելով զդին 'ի ճակատէն
Ի նաւսըն գոգաւորս, այլ ճարակէր 'ի նոսա մարտ
Մոլեկան իբրեւ ըզհուր՝ ըզքաղաքէ հարեալ մարդկան,
Զի անկեալ բորբոքի յեղակարծում, եւ ծախին շէնք
Ի ճաճանչ մեծայաղթ՝ յոր բըռնութիւն հողմոյն մռընչէ.
Սոյնպէս սոցա 'ի գնալն իւրեանց ըզհետ մըտեալ ընԹանայր
Երիվարաց եւ մարտիկ արանց շըշուկ ահագնադղորդ ։
Իսկ ինքեանք, Ջորիք որպէս 'ի զօրութիւն պինդ ժըրագլուխք՝



Digitized by Google

Ի լեռնէ ձգեալ ածեն ընդ ճանապարհ առապարին
Ըզգերան կամ ըզհեծան մեծ նաւափայտ, եւ շընչասպառ
Ի փոյթս 'ի ճեպս անդ հաշեն 'ի վաստակոցն եւ 'ի քըրտանց,
Նոյն ադքա ճըգնաջան բարձեալ զգխակնըն տանէին:
Զգէմ ունէին Նաւք յետուստ, որպէս ըզջուրս արգելու գար
Տընկախիտ՝ կարկառեալ ընդ դաշտըն Թուփք երկայնանիստ,
Որ պհըղըր գետոց սաստիկ յորձանս ուղխիցն իսկ բեկանէ,
Եւ անդէն զամենեցուն զըրգանան 'ի գիւղըն շըրջէ կոյս,
Եւ ոչ իսկ հոսանացըն բըռնութիւն խրամատէ զայն.
Նոյնպէս յետս ընդդէմ ըզխաղմըն վանէին միշտ Նաւեանք
Ըզտորովեանցն՝ որ սաէպ կային, եւ մանաւանդ երկուք նոցունց,
Անքիսեանն Նեխրաս եւ պերճն Հեկտոր շըքեղաճոխ:
Եւ որպէս սարեկաց կամ ճայեկաց ամպ խուռնախիտ
Ահագին կակաչանօք հալածական գնան 'ի փախուստ,
Տեսեալ ըզցին խոյացեալ՝ ըզթըռչնըրկանց խոշոր մկրագն,
Այսպունակ աքայեցւոց որդիքն յԷնեայ եւ Հեկտորէ
Սոսկալի աղաղակաւ գնային՝ կըռուոյ մարտին անյուշք:
Եւ բազում զէնք գեղեցիկք անկան 'ի փոսն եւ զնովաւ շուրջ
Ի փախչել դանայեցւոց, եւ խաղմին չէր դուլ եւ դադար:

757

# ՀՈՄԵՐԻ

# Ի Լ Ի Ա Կ Ա Ն

## ԵՐԳ ՈՒԹՈՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Աշխարահեծ կոծ եւ գոյժ Աքիլլեայ 'ի լուր մահուանն Պատրոկլի. հասանէ մայրն Թետիս 'ի սփոփել, նա որանալ կամի 'ի վրէժ սիրելւոյն, մայրն արգելու՝ մինչեւ բերցէ նմա նոր զէնս: Հազիւ հազ զօրանան Յոյնք թափել զմարմին Պատրոկլի: Աքիլլեւս հրամանաւ Հերայ ելեալ երեւի արովեանց անզէն յեզր փոսոյն ահագնատեսիլ, եւ յահեղ գոչիւն բարբառոյ նորա տարափին տրովացիք, եւ մարմինն Պատրոկլի ելանէ յանդորր: Նաեւմաւ լաէ խաղս. տրովացիք խորհուրդ առարեալ կան մնան 'ի դաշտին: Աքիլլեւս աշխարէ. Թետիս գնայ առ Հեփեստոս ճարտարապետն աստուած, խնդրէ եւ ընդունի պատենազէնս վասն որդւոյն: Նկարագրութիւն զարմանագործ վահանին:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՈՒԹՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

### ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մրցէին այսպէս սոքա հանգոյն հրոյ բորբոքելոյ.
Իսկ երագոտն Անտիլոքոս առ Աքիլլեւս հասեալ հրեշտակ՝
Եգիտ զնա զառաջեաւ եղջերաբերձ նաւատորմին
Զի ածէր զայն ինչ ընդ միտ, որ վճարեալն էր եղեալ յանդ,
Եւ յոգւոց հանեալ ասէր 'ի մեծասիրտ անձին իւրում.
Վա՜յ աւաղ. ընդէ՞ր դարձեալ աքայեցիքն վարսագեղք
Խուճապին 'ի նաւսն կոյս ընդ դաշտավայրն ահաբեկեալք.
Քա՛ւ 'ի գէջ կատարել յոգւոյս զգալոյն աղետին զոյժ,
Զոր օրինակ յայտ երբեմն արարեալ մայր իմ պատմեաց ինձ,
Եթէ քաջն 'ի Միրմիդոնս, եւ առ իմով իսկ կենդանեաւս,
Ցարուէ արեգական անկանիցի տրովեանց ձեռամբ։
Անշուշտ ըստ ուղիղ մեռաւ որդին Մենետեայ քաջ.
Եղկելին. պատուիրեցի եւս՝ վանեալ զհուրն ոխերիմ
Դարձ այսրէն առնել 'ի նաւս, եւ մի՛ ընդ Հեկտոր շահատակել։
Մինչ զեւ նա զայսոսիկ խորհէր ընդ միտս իւր եւ ընդ սիրտ,
Նեստորի մեծափառին եկն եկաց մերձ որդին առ նա
Հոսելով ջերմ արտասուս, եւ ետ զգոյժն աղխողորմ.
Ո՛հ զինեւ, որդիդ Պեղեայ՝ քաջասրտին, լուիցես բօթ
Անհնարին դառնութեան, որ չէր ինչ պարտ յարդիւնս գալ.
Անկեալ կայ Պատրոկլոս, եւ զմերկ դիոյն տան պատերազմ.
Իսկ զզարդս զինուցն ունի Հեկտոր կորդակախորոս։
Զայս ասաց, եւ զնա պաշարեաց ամպ տրտմութեան թուխ.
Եւ ափովքն երկոքումբք զանձրեւախառն առեալ մոխիր՝
Ցանեաց զգլխովն, եւ զշնորհաշուք զարդեցոյց դէմսն,

Եւ զհոտանոյշ պատմուճանօքն էջ սեւաթոյր նուաստ գաղղաղ։
Ինքըն մեծ 'ի փոշւոջ անկեալ դընէր մեծատարած,
Եւ ինքնին իւրով ձեռօք զվարսաւըն փետեալ աղաւաղէր։
Աղախնայք՝ զորս Աքիլլեւս էր եւ Պատրոկլ աւար հարեալ,
Սրտատասուչ եւ սըրտաթունդ գուժիւ մեծաւ բառնային ճիչ,
Եւ 'ի դուրս ընթացեալ զկորովամտէնն Աքիլլէսիւ՝
Կոծէին զկուրծսըն բըռամբք, եւ լըքան ծունկք ամենեցուն։
Անդուստ յարտասուս համակեալ լայր Անտիլոքոս,
Եւ առ խեղթ՝ թէ գուցէ զերկաթն ընդ փողսըն անցուսցէ,
Ունէր ըզձեռան Աքիլլի, որ հառաչէրն 'ի մեծ սըրտէն,
Եւ գուժէր ահեղագոչ. լըւաւ զայն մայրըն մեծարոյ
Որ նըստէր յալըս ծովուն առ հարըն իւրով ալեւորաւ.
Ճիչ առ անդէն, եւ զնովաւ ժողովէին աստուածուհիք
Ամենայն որչափ յալուց ծովուն կային Ներէիդայք։
Եւ անդ իսկ էր Գլաւկէ, Կիմոդոկէ եւ Թալիա,
Նիսէէ, Թոյէ, Սպիով եւ աչաղեղն եւս Ալիէ.
Անդամոր Կիմոթոյէ, Լիմնորիա եւ Ակտէա,
Մելիտէ եւ Յերա եւ Ագաւէ ւԱմփիթոյէ,
Եւ Դոտով եւ Պրոտով, Դինամենէ եւ Փերուսա.
Անդէն Դեքսամենէ, Ամփինոմէ, Կալլիանիր,
Եւ Դովրիս եւ Պանոպէ եւ մեծանուն Գալաթիա,
Ներմերտէս ընդ նոսին, Կալլիանասսա եւ Ափսեւդէս.
Անդ էին եւ Կլիմենէ եւ Յանիրա եւ Յանասսա,
Որիթիա եւ Մէրա ւԱմաթիա գեղահիւսակ,
Եւ որ այլ եւս յանդընդոց կային Ներեայ դըստերք 'ի խորս,
Որովք էր սպիտակափայլ լըցեալ անձաւն, եւ համօրէն
Կըրծատէին կային սոքա, եւ կոծոյ սկիզըն առնէր Թետիս.
Լըւարուք, քորքըդ Ներեանք, որպէս զի սոքա 'ի լուր ամենայն
Թալըրկեցին սաչքս 'ի միտ զամենայն վիշտս անձին իմոյ։
Ո՛հ եղուկ ինձ հեզիս, ահ ինձ թըշուառ ծընողիս քաջին,
Որ զորդեակ մի ծընեալ արիական եւ անըստգիւտ,
Դիւցազանցըն գերագոյն, եւ ամենեցուն իբրեւ բողբոջ,
Եւ սնուցեալ հանգոյն ոստոյ յագարակի վայր արգաւանդ՝
Յիլիոն մահկաձեւ յղեցի նաւուք՝ պատերազմելոց 'ի մարտս,
Եւ յանդրէն դարձ 'ի տուն՝ չառից 'ի յարկսըն Պելէւսեան։
Զի մինչեւ ինքըն զարեւ տեսանիցէ կենդանութեամբ,
Թաղծագին է եւ կարեմ ինչ ոչ երթալ օգնել նըմա։
Այլ երթայց՝ զի զորդեակն տեսից սիրելին իմ, եւ լըւայց
Զինչ եհաս նըմա սուգ՝ մինչդեռ 'ի բաց կայր 'ի կըռուոյն։
Զայս խօսեալ՝ ել յանձաւէն, եւ նոքա խառն 'ի միասին
Գնային արտասուալիցք, հերձոյր զնոքօք ծովուն ծըփանք։
Եւ յորժամ 'ի Տրոյա ժամանեալ եղեն յարգաւանդաւոր,

Ի ծովափն ելին հասին՝ ուր խիտ առ խիտ եկին ձգեալ
Կարկառուրայք Միրմիդոնաց ըզքաջաժիրն Աքիլլեաւ շուրջ:
Մինչ հեծէր ծանրաթախիծ՝ մատեաւ առ նա մեծարոյ մայրն,
Եւ կական բարձեալ ճչչէր՝ կալաւ ըզգլուխ որդւոյն իւրոյ,
Եւ ըղբանս երագաթեւ բարբառեցաւ խաղաղաւեալ·
Զի՞ լաս եւ ո՞ր սուգ, որդեակ, ըզմիտըս քո հասեալ կալաւ·
Մի՛ ծածկեր՝ խօսեաց, ահա եւ քեզ 'ի ձեռաց յԱրամազդայ
Զոր կանխաւ ինչ միանգամ ձեռս ամբարձեալ աղաչեցեր,
Որդւոցդ աքայեցւոց ամենեցուն փակել յընաւս,
Լնեալ քեզ անձկակարօտ անհընարինս չարչարեալք:
Եւ քաջոտն Աքիլլեւս ասէ առ նա հեծեծելով·
Մայրիկ իմ, զայդոսիկ ինձ Ոլիմպեան ած կատարեաց,
Այլ ինձ զի՞նչ անտի հեշտանք, զի սիրելիս կորեաւ ընկեր,
Պատրոկլոս՝ զոր քան ըզբնաւ մեծարէի ես զընտանեաւս,
Հաւասար խմում գլխոյս· զայն կորուսի, եւ զզէնս Հեկտոր
Սպանեալ առաւ զահագինն՝ սքանչելատեսս եւ ըզչըքնաղս,
Զոր աստուածքըն Պեղեւսի պարգեւեցին օժիտ պայծառ
Յաւուրն՝ յորում եառուն զքեզ մահացուի առն յանկողինս·
Իցէ թէ անդ դու մնայիր ընդ ծովային անմահսըն բնակ,
Եւ ածեալ էր Պեղեւսայ մահկանացու զոք ամուսին:
Իսկ այժմիկ, ահա եւ քեզ լիցի անբաւ 'ի միտսըդ սուգ
Ընդ մահ որդեկիդ, զոր չընկալցիս դարձեալ 'ի տուն,
Զի չաւանու եւ սիրտ 'ի մէջ մարդկան զարեւ տեսանել,
Թէ ոչ նախ գեղարդեամբս հարեալ Հեկտոր փըչէ զոգին,
Եւ զմահուն Մենետեանըն Պատրոկլի լուծանէ վրէժ:
Եւ անդէն պատասխանի նըմա Թետիս արտասուաթոր·
Վաղաղգաւ լիցիս ուրեմն, որդեակ իմ, ինձ, որպէս ասես.
Քանզի քեզ յետ Հեկտորի անդէն օրհասն է մօտալուտ:
Երագոտն Աքիլլեւս ասէ առ նա խոր հեծութեամբ·
Թող արդէն իսկ մեռանիմ, որ զի չըսոյր ինձ յօգն հասանել
Մըտերմիս խոցոտելում, որ յոյժ 'ի հայրեն երկրէ բացեայ
Ծախեցաւ, յիս մերժելոյ ժամանին եղեալ կողկողագին:
Եւ զարդ իս, քանզի չդարձայց 'ի հայրենի քաղցըր գաւառ,
Եւ չեղէ Պատրոկլեա եւ ոչ այլոց ընկերաց լոյս,
Յորոց տասանս անկեալ 'ի Հեկտորէն աստուածային,
Այլ նըստիմ առ նաւէնտեալս անխերական բեռն ինչ երկրիս,
Այսպիսիս 'ի մարտ՝ որ ոչ 'ի զրահաւորեաց աքեանց ոք այլ·
Իսկ յատեան հրապարակին՝ են են եւ այլք յոյժ պերճաբանք:
Ո՛ տայր թէ հեռ 'ի կորուստ դընայր 'ի դից ու 'ի մարդկանէ,
Եւ զայրոյթ՝ որ զիմաստունն անգամ դըրդէ 'ի դըժնութիւն,
Որ եւ յոյժ անուշակ քան զծորածոյ մեղուն խորիսխ
Ի սիրտըս մարդկան յորդեալ առնէ ելեւ ըղծուխ,

Որպէս արդ զիս բարկացոյց արանց արքայն Ագամեմնոն ։
Այլ զանցեալսն եւ ըղձնացեալս 'ի բաց թողցուք՝ թէ եւ ցաւանք,
Ըզհողիս 'ի լանջըս մեր առ վըշտանդիս սանձահարել ։
Այժմ երթայց ես եւ գըտից ըզսիրելոյն գըլխոյն դահիճն
Ըզհեկտոր, եւ անդ յայնժամ ընկալայց մահ զոր կամիցին
Սահմանել Արամազդ եւ այլ եւս դիքն անմահականք ։
Զի չապրեցաւ յօրհասէն եւ Հերակլեանն իսկ զօրութիւն,
Որ Զըրոսանեան արքայէն Արամազդայ էր սիրասնունդ,
Այլ պարտեաց ըզնա մահ եւ Հերայի ծանըր ցասումն ։
Եւ ես նոյն, եթէ եւ ինձ հասեալ կայցէ համգոյն վիճակ,
Անկայց մեռեալ, իսկ այժմուս տարայց ըզփառսըն գեղեցիկ,
Եւ լցէ 'ի լանջագեղ դարդանուհիսն եւ տրովուհիս
Զոր ստիպեցից երկոքումբք ձեռաց ջընջել ըզցեղարտասուսն
Ի փափուկ այտից իւրոց եւ հառաչել կականաւէր ։
Ծանիցեն՝ զի ձեռընթափ կայի՛նդ երկար ես 'ի մարտէն ։
Մի՛ արգելուր զիս կըռուել, թէ եւ առ սէր, չոգըքեսցես ։
Դիցանոյշն արծաթաթաթիկ Թետիս անդէն դարձուած արար ։
Յիրաւի են այդոքիկ, որդեակ, եւ չէ ինչ ապիրատ
Յընկերաց տառապելոց հերքել զեղեռն դըժընդակ ։
Այլ քո զէնք գեղեցիկ, պղընձակերպք եւ պաղպաջունք
Յաւարի կան առ տրովեանս, եւ զայն Հեկտոր սաղաւարտաձօձ
Արկեալ զուսովքըն խայտայ, բայց ոչ կարծեմ թէ եւ նա ինքն
Յայնս ընդ երկար նազեսցի, զի առ ոտիւք կայ նորա մահ ։
Սակայն մի՛ դու բնաւ երբեք մըտանիցես յԱրէական խաղս
Մինչեւ զիս քոյով աչօք տեսանիցես այսըր եկեալ ։
Զի այգունն ընդ ելանել արուսեկին դառնամ այսրէն
Յարքայէն Հեփեստոսէ բերել քեզ զէնըս վայելուչ ։
Զայսոսիկ խօսեալ նորա՝ շըրջեցաւ Թետիսն յորդւոյն իւրմէ,
Եւ առ քորըսն դարձեալ անդընդայինս՝ ասէ ցնոսա ։
Արդ ալիք դուք մըտէք 'ի ծոց ծովուդ 'ի լայնալիր՝
Երթալ տեսանել ըզծովային ծերն եւ զպարկս հօր,
Պատմել նմա զամենայն ։ Գնացից յերկայնն ես Ողիմպոս
Առ Հեփեստոս արուեստող ճարտարապետ, թէ կամիցի
Որդեկիս իմոյ շնորհել զէնս հոյակապս արփիազեղս ։
Զայս ասաց, սուզան նոքա վաղվաղակի յալիս ծովուն ։
Իսկ Թետիս արծաթաթաթիկըն դիցանոյշ երթ յՈղիմպոս,
Փառացիս ածել սիրուն իւր որդեկին ըզպատուաղէնս ։
Եւ արդ ճեմք իւր տանէին զինքն յՈղիմպոս, իսկ աքայեցիք
Փախուցեալք 'ի մարդասպանձըն Հեկտորէ անհուն գոռմամբք՝
Երթեալ հասանէին 'ի նաւատորմն եւ յՀելլեսպոնտոս ։
Սակայն ոչ ըզՊատրոկլոս աքայեցիքն առոյգապարծք
Ի նետից կորզեալ էին զԱքիլլեսի սպասաւորն անշունչ ։

Զի անդրէն հասին առ նա կառք երիվարք եւ հետեւակք
Եւ Պրիամեան ձեռն Հեկտոր՝ կորովութեամբ բոցաւառեալ։
Բուռն երիցս եհար յետուստ զոտից նորա պերճն Հեկտոր,
Ցոլացեալ ձգել հանել, եւ առ տրովացիս ուժգին գոչէր.
Եւ երիցս Էասք կրկին՝ զգեցեալք ըղձուածն զօրութիւն՝
Վանեցին 'ի մեռելոյն, սակայն նա ակնդ. յոյժն ապաստան՝
Էր զի՛նդ ասպարին յարձակէր, էր զի զատեալ առեալ կացեալ
Աղաղակէր մեծաձայն, ամենեւին ընկրկէր ոչ։
Որպէս հովիւք բացօթեայք զառիւծ հրաշէկ սովալլուկ
Ի շաղղոյ չմարթեն վարել, նոյն քաջազէն կրկին Էասք
Ոչ բաւէին զՊրիամեանն Հեկտոր հերքել 'ի մեռելոյն։
Եւ Թափէր իսկ առաքէն եւ զանպայման փառաւորն առնէր,
Եթէ չէր առ Պելեանն աճապարեալ մրրկոտն Իրիս
Սլացեալ պատգամաւոր յՈլիմպոսէ՝ զի վառեսցի,
ՅԱրամազդայ գաղտ եւ յայլոց դից առաքեալ 'ի Հերայէ։
Եւ առ նա մատուցեալ՝ զհրապարակեալ խօսեցաւ բանս.
Օ՛ն արի, Պելիդեանդ, քան զամենայն արս ահաւոր,
Ի Թիկունս Պատրոկլի, յորոյ վերայ մարտ անհնարին
Առաջի նաւացն կայ, եւ ըսպառեն նոքա զիրեարս.
Սոքա՝ 'ի պաշտպանել ըզմեռելոյն գիակն անշունչ,
Իսկ տրովեանք՝ հրոսանըւէր զան յԻլիոս ձգել հողմուտ,
Մանաւանդ վեհանձն Հեկտոր ցանկայ շոգել, եւ ջերանի
Խրղեալ 'ի գերդ ուղանէն ըզգլուխ նորա վարել 'ի ձողս։
Այլ արի, մի՛ եւըս կար, 'ի սիրտ քո խնամ անկցի եւ զութ,
Խաղալիկ թէ մատնեսցի տրովացի շանցըն Պատրոկլոս.
Քեզ 'ի բիծ՝ թէ գիականըն գիւղեցին ինչ թշնամանք։
Երագոտն Աքիլլէւս զիւցազն առար պատասխանի.
Ո՞ զքեզ 'ի դից, դիցանոյշդ Իրիս, յղեաց առ իս հրեշտակ։
Պըրկնեալ անդրէն մրրրկոտն երագ Իրիս աստ առ նա.
Հերա զիս առաքեաց՝ Արամազդայ ամկին շըքեղ.
Ոչ բարձրագահ Զըրուանեանն, ոչ յանմահից այլ ոք գիտէ
Ցորոց անդ 'ի ձիւնեղէնն Ոլիմպոս շուրջ բնակեալ նըստին։
Քաջոտինն Աքիլլիսի պատասխանեալ ասէ ցընա.
Իսկ զիարդ երթայց 'ի կռիւն, ուր զի ունին նոքա զիմ զէնս,
Եւ մայրն իմ սիրելի չասնէ ինձ թոյլ 'ի զէն վառել,
Մինչեւ ըզնա ինքըն այսրէն իմով աչօք տեսից դարձեալ,
Զի բերել խոստացաւ ըզքնաղ անօթս 'ի Հեփեստեայ։
Իսկ զայլոց չգիտեմ թէ զո՞յր առից ընտիր ըսպառազէնս,
Բայց միայն թէ զասպարըն զԷասայ Տելամոնեանց.
Այլ եւ նա ինքըն, յուսամ, ընդ նահատակսն է անպարապ,
Նախաձիրըս նիզակաւն ընդ Պատրոկլի մահուն գործեալ։
Մըրըրկոտըն ժիր Իրիս կըրկնեալ անդրէն ասէ առ նա.

Քաջ իսկ և մեք նմա անզէնք՝ զի չգիտեմ զէնքս յաւարի կան ·
Այլ և այժմիկ 'ի փոսն երթեալ առաջնոց երևեսցիր ·
Զանգիտեալ Թերևս 'ի քէն՝ Տրովացին ընմարտողն առաջնորդք,
Եւ ողջ արիականքն աացին մանկունք աքայեցւոց
Նեղեալքն, և առնիցի դադարումն ինչ սուղ՝ պատերազմէն ։

Զայս այսպէս խօսեցեալ՝ եւ մեկնեցաւ ժիրաճն Իրիս ։
Իսկ Աքիլլէս՝ սիրելին Արամազդայ՝ յարեաւ եկաց,
Աթենաս զարի Թիկանցն էարկ զասպարն վերջաւոր,
Եւ զգլուխն յամպ ամրոց արտաքրոց աստուածուհեաց պսակեաց,
Եւ անդուստ բոց փայլակեալ բորբոքեցոյց ճաճանչաւէտ ·
Յատանէ որպէս յորժամ ծուխ ամբարձեալ գնայ յարփին
Ի հեռաւոր ուստեք կղզւոյ զորով զինեն Թշնամիք մարտ,
Եւ ընդ աւուրն ցերեկ ահեղ Արեաւ կռուին նոքա
Յատանէ անտի իւրեանց, և 'ի մտանել արեգական
Խիտ առ խիտ ջահք 'ի դիտակ անդր վառին, և համատարր
Ցոլացեալ ճառագայթն առ 'ի տեսիլ առհմանակցաց,
Զի Թերևս հասցեն նաւուք փրկել զինեալսն յեղերանէն ·
Ի գլխոյն Աքիլլևի այսպէս փայլակն յարփին կրցէր ։
Ըստ պատնէշն եկ կաց առ փոսն, այլ ոչ խառնէր յաքայեցիս,
Քանզի զմօրն մեծարէր իմաստութեան պատուէր խրատու ·
Անդ կացեալ գոչեաց, գոչեաց և Աթենաս Պալլասն ուրոյն,
Եւ ժխոր ահաւորն 'ի տրովացիս անդր ընդոստոյց ։
Եւ որպէս իսկ սաստիկ հնչէ բարբառ, մինչ գոչէ փող
Ի կենակուլ ոսոխաց պաշարելոց զքաղաքն ուրեք,
Այսպէս ձայն աղիեցին բարբառեցաւ Էակիդեայ ։
Եւ նոքա իբրև լուան զԷակիդեայն պղնձի զօրանն,
Թռանդ առ սիրտ բոլորեցուն, և երիվարք գեղեցկաբաշք
Ընկրկեցան յետս չորքեան՝ լեալ աղէտից գուշակ յանձինս ·
Եւ պահեալն կառավարք՝ տեսեալ ընդհուպն անշէջական
Ահագնատեսակն ընդ գլխով Պէլէածնին մեծասրտոյ
Բորբոքեալ 'ի խառնակն աստուածուհւոյն յԱթենասայ ։
Անդ առ փոսն երիցս ահեղ գոչեաց դիւցազն Աքիլլևս,
Եւ երիցս աղմկեցան տրովացիք և պերճ նիզակակիցք ·
Եւ անդէն իսկ առ ետեղ կորեան արք քաջք երկոտասան
Ի կառաց անտի իւրեանց և յաշտէիցն հարուածեալք ։

Իսկ աքայեանք խնդագին Թափեալ յարգանց ըզՊատրոկլոս՝
Համբուցին 'ի մահիճս, և ողբային պար ընդդեմ
Սոյն ընկերք, ընդ սոյս երթայր և երագոտն Աքիլլևս
Հեղլով ջերմ արտասուս՝ տեսեալ ընկերոն իւր մտերիմ
Տարածեալ անդ 'ի դագաղին վիրաւոր սուր պղնձոյ,
Զոր կառօք երիվարօք 'ի պատերազմ անդր առաքեալ՝
Եւ անդրէն վերստին դարձեալ եկեալ ոչ ընկալաւ ։

Իսկ զանխանիլ արեգական աչերն Հերա մեծապատիւ
Ցոլեաց պատանւոյ ակամայ յՈվկիանեան ուխս յորձանաց :
Արեգակն եմուտ եւ զուք ազդայեցերն դիւցազունք
Առատերն հզօր կռուոյն եւ զուգակից պատերազմին :
Ցայնժամ կարօտ եւ տրոհեալք անդի առեալ 'ի խիստ մարտէն՝
Ի կառացն արձակեցին զերիվարեանն արագաթռիչ,
Եւ մինչ չեւ փոյթ զնա ընթրեաց առնել՝ յատեան ժողովեցան :
Հրապարակին եկաց յատեն՝ չհամարձակեալ ուրուք նստել,
Դողումն ունէր ընդհանուր՝ զի Աքիլլեւս երեւեցաւ
Որ հարատ մի պարապեալ կայր 'ի դժնէ պատերազմէն :
Համճարեղն առ նոսա Պուլիգամաս խօսել կալաւ
Պանթոյեանն՝ որ նա միայն նշկատէր յետոյս եւ յառաջ.
Ընկերն էր Հեկտորեայ, 'ի գիշերի միում ծնեալք,
Նա ատեան 'ի բանից, սա նիզակաւ յաղթող յաւէժ :
Արդ նոցա խորհեալ զգուշուն՝ առէ յատեան հրապարակին.
Ցայս եւ յայն կողմ, սիրելիք, ըստ արժանի խորհեցարուք.
Այժմ ես յատեան խրատ տամ երթալ, մի մնալ Այգոյն առաւօտեայ
Ի դաշտի աստ առ նաւօքն եւ 'ի բացեայ 'ի պարըսպաց :
Մինչ զեւ այրն այն քինացեալ էր դիւցազանն Ագամեմնոնի,
Դիւրամճեան 'ի պատերազմ եւ մեզ էին աքայեցիք :
Խնդայի եւ ես ագանել առ արագաշու նաւատորմն
Ցուսացեալ ըմբռնել ըզերկրեփնակոր նաւահանգեան.
Իսկ 'ի Պելեայ քաջորդն որդւոյն զահի հարեալ եմ չարաչար :
Որպէս բուռն խիստ է հոգին իւր՝ չառնուցու նա յանձն երբէք
Կալ մնալ 'ի դաշտի, ուր տրովացիք եւ աքայեանք
Ի մէջի աստ երկդէմեանս հանդէս առնեն ուժոյն Արեայ,
Այլ 'ի վերայ քաղաքիս եւ ըզկանանցս 'ի կռիւ կացցէ :
Երթիցուք արդ յատեան, անսացէք ինձ, զի լիցի այդ :
Արդ գիշեր աստուածեղէն զքաջորդն հանդոյց Պելիածին,
Իսկ վաղիւ՝ 'ի յարձակել նորա 'ի մեզ ըսպառազէն՝
Քաջ ծանիցէ ոք ըզնա, թէ գտանիցէ զմեզ աստանօր.
Զի որ ոք փըրծանիցի՝ ուրախ հասցէ յԻլիոն սուրբ,
Եւ զբազմամբ կերիցեն շունք եւ անգեղք տրովադացիս.
Եւ ո՛ տայր եթէ բօթ հեռի լինէր յիմ ունկանէս :
Իսկ իմոց եթէ բանից ունկըն դիցուք, թէ եւ տըրտմեալք,
Ըզգիշերս անդ յատենի հրապարակին կազդուրեսցուք,
Եւ զզօրութիւն՝ աշտարակք, դըրունք բարձունք ամրախակեալք
Երկայնեալք եւ յղկելովք զօդեալք 'ի կարգ՝ պահպանեսցեն :
Եւ ընդ այգս առաւօտուն վառեալք 'ի զէն մեր եւ 'ի զարդ՝
Ցաշտարակս անդ կացցուք, եւ դըժնդակ լիցի նըմա
Ի նաւաց թէ գայ կամի կռուել ընդ մեզ ըզպարըսպաւս :
Դարձցի յետս անդրէն 'ի նաւսն, ըզբարձրավիզ երիվարեանն



Digitized by Google

Ցախուռն այսր անդր յընթաց ըզքաղաքաւքս պարտասեալ.
Իսկ 'ի ներքըս հրոսել՝ նորա հոգին ոչ տայէ թոյլ,
Ոչ երբէք աւերեսցէ. նախ զմեզն երագ կերիցեն շունք ։
Հայեցեալ ընդ նա խոժոռ՝ ասէ Հեկտոր կորդակաձօձ.
Ոչ դայդ ինձ, Պուլիդամաս, հաճոյական ինչ բարբառիս,
Զի յաստան անդըր դառնալ եւ ժողովել տաս մեզ պատուէր.
Չեւ տակաւին յափրացեալ իցէք փակեալ յաշտարակս անդ ։
Ըզքաղաքըս Պրիամու յառաջ մարդիկ բազմաբարբառք
Բազմոսկի եւ պղնձաւէտ քարոզէին բոլորեքեան,
Իսկ այժմիկ՝ կորեան ընտիր ընտիր սպասուցն յապարանից.
Բազումք առ փռիւգացիս եւ յըղձալին Մէոնիա
Ի վաճառ գնացին ստացուածք, երբեւ ցասեաւ մեծն Արամազդ ։
Իսկ զի արդ կորովամիտն Զըրուանեայ ետ ինձ որդին
Առնուլ փառս առ նաւակներոյն, զաքայեցիս մըղել ցըծով,
Մի եւս, անմիտ, ցուցցես զխորհուրդըդ դայդ յատեան ժողովըրդեան.
Զի ոչ ունկն ոք դընեսցէ 'ի տրովացւոց, եւ ոչ տաց թոյլ ։
Այլ եկայք, որպէս ինչ ես ասեմ, լուիցուք ամենեքին ։
Առ ժամայս առէք ընթրիս 'ի ճամբարի ըստ խումբ 'ի խումբ,
Եւ դէք ուշ ցայգապահուց եւ հըսկեցէք իւրաքանչիւր ։
Եւ որ յոյժ 'ի տրովացւոց է ոք հոգած զընչից իւրոց,
Ժողովեալ տացէ զօրուս 'ի վայելումն ամենեցուն,
Ցորոց լաւ իցէ ումեք ժառանգել զայն՝ քան աքայեցւոց ։
Եւ վաղիւ ընդ այգս այգուն վառեալ կազմեալ ըսպառազէն՝
Առ գոգեալ նաւատորմին յորդորեսցուք ըզբարկ Արէս ։
Թէ արդարեւ Աքիլլէւս յարեաւ գնացեալ անդ առ նաւուք,
Սոսըրջասցի ապաշաւ, թէ ժըտեսցի. ես ոչ փախիցայց
Ցերեսաց նորա յահեղ պատերազմին, կացից ընդդէմ
Անյողդողդ՝ եթէ տարցի յաղթութիւն մեծ, թէ տարայց ես ։
Հասարակ է Արէս, եւ զըսպանօղն ըսպանանէ ։
Զայս յատեանն ասաց Հեկտոր, եւ տրովացիք հարին ճայթիւ,
Ըռլամիտք, զի զմիտս իւրեանց եբարձ Պալլաս Աթենաս,
Եւ միաբանեալ խորհըրդոյն ըզհետ չոգան ըզհեկտորի,
ԶՊուլիդամայ՝ եւ ոչ ոք, որոյ զբարին տուեալ էր խրատ ։
Ընթրիս այնուհետեւ 'ի բանակին առին նոքա ։
Իսկ աքայեանք ըզգիշերն ողջոյն կոծեալ զՊատրոկլ աշխարէին,
Եւ նոցին ուժգին լալեաց Պէլէանծինն արար ըսկիզըն
Ըզձեռն իւր մարդասպանս 'ի մըտերմին եդեալ 'ի լանջս
Ըստէպ հեծեծանօք, որպէս առիւծ մի թաւալէս
Զորոյ զկորիւնս իւր որսորդ ոք գողացաւ եղջերուահար
Ի թաւուտ խարձից մայրւոյն, ինքն անագան եկեալ թախծեալ
Ընդ բազում շըրջի հովիտս հետազօտեալ զառնելն շաւիղս
Թէ ուրեք գըտանիցէ, զի յոյժ դաժան ունի զայրոյթ.

Այսպէս նա խոր թառանչմամբ ասէր 'ի դաս Միրմիդոնաց.
Ո՛հ աւա՜ղ, բան ապարդեւ հանի անտի յաւուրն յայնմիկ
Ըղձիցեալն անդ յապարանս փառաւորեալ զՄենետիոս.
Ասէի՝ թէ դարձուցից քեզ յՕպոյս զորդեակ շքեղ
Կործանեալ զԻլիոն եւ վիճակեալ յաւարառութեան:
Այլ Արամազդ զամենայն խորհուրդ մարդկան ոչ կատարէ.
Զի երկոցունցս են հրամանք՝ կարմիր զնոյն ներկանել հող
Աստ յերկիր Տրովայոյ. քանզի եւ զիս 'ի դարձ անդրէն
Ծերունին հեծեալ Պեղէւս 'ի յարկս իւր ոչ ժողովեսցէ,
Եւ ոչ մայր իմ Թետիս, այլ աստանօր կալցի երկիր:
Պատրոկլէ, արդ զի զկնի քո գնամ 'ի խոր սանդարամետս,
Ոչ արարից քեզ զթաղումն, մինչեւ ածեալ այսր ընկեցից
Զհեկտորի զէնսն եւ զգլուխ՝ ըզքոյ սպանանողին վեհոգւոյն.
Եւ առ ասըս խարուկիդ փողոտեցից երկոտասանս
Ի տրովեանց քաջազն որդւոց առ զայրացուցիս քոյ սպանմանն:
Եւ կացցես ցայն վայր ինձ առ մահկանձեւ նաւուքս այսպէս,
Եւ ըզքեւ արտասուօք հեծմամբ ըզտիւ եւ ըզգիշեր
Զայլեսցեն լանջաթեղ գարդանուհիք եւ տրովուհիք,
Զորըս մեք սուսերաւ յերկայն 'ի տեղ նիզակ կորովութեամբ՝
Ծախ քաղաքս յաւարի զբազմաբարբառ մարդկան առեալ:
Զայս զիւցազն Աքիլլէւս խօսեցաւ անդ, եւ ետ հրաման
Կառուցանել ընկերացն եռոտանի սան մեծ 'ի հրատ,
Զի փութով 'ի Պատրոկլէ լուասցեն զարիւնն եւ զապաժոյժ:
Որ 'ի հուր լուցեալ կանգնեալ զեռոտանին լոգանաց սան՝
Լցին ջրով եւ 'ի ներքոյ կըրկուաս արկեալ բորբոքեցին:
Ցոլանայր բոցն 'ի փոր կաթսային շուրջ, ջուրըն ջեռնոյր:
Իսկ յորժամ 'ի փայլուն պղնձին յեռանդն հարան կայլակք,
Լուացին նոյն հետայն եւ օծին յիւղ պարարտութեան,
Եւ ըզվէրսըն լըցին անոյշ իւղովք իննամենիւք.
Եւ յանկողինս հանգուցեալ՝ ըզգողեցին նուրբ կտաւով
Ի անարից մինչեւ յոտսս, եւ 'ի վերոյ սպիտակ լօդիկաւ:
Ապա զգիշայն 'ի բուն ողբ զքաջոտն առեալ Աքիլլիսիւ,
Կոծ եդեալ Միրմիդոնաց՝ աշխարէին ըզՊատրոկլոս: —
Իսկ Արամազդ ասէ ցՀերա՝ ցիւր հարազատն եւ ամուսին.
Արարեր հուսկ ուրեմն, աչեղդ Հերա դերամեծար,
Յարուցեր զԱքիլլեւսն երագաստ. եւ արդ անշուշտ
Անդրանիկ 'ի քէն ծընունդ են հերապանծ աքայեցիքդ:
Եւ նըմա պատասխանի աչեղն Հերա մեծապատիւ.
Ահաւորդ Զըրուանեան, բան որպիսի՞ նդ բերան հաներ.
Զի եւ մարդ մահկանացու կատարեսցէ զզոյն զայդ առ մարդ,
Որ 'ի մահ դատապարտեալ եւ ոչ այնչափ իմաստակէր.
Իսկ զիարդ, ես որ կարծեմս աստուածուհեաց զիս վեհագոյն՝

Երկրպագումք , եւ յաղթես եւ զի կոչիմ քոյդ անուամբն ,
Եւ դու ինքն ես անմահից բոլորեցուն ամենիշխան ,
Սրբամտեալ ընդ արժանցիս չէր ինձ օրէն չարիս կարգել ։
Արդ այսպէս ասաց զդառնացաւորելին զայս ընդ միմեանս ։ —
Իսկ Թետիս արծաթթաթիկ եհաս 'ի յարկսըն Հեփեստեայ
Ցանապականն՝ յաստեղազարդ՝ 'ի գերապանծն յանմահից կարգ ,
Ի պղնձակերտ՝ զոր նա ինքըն յօրինեաց Կաղոտանին ։
Եւ եգիտ ըզնա 'ի քրտանն Թարթափեալ շուրջ ըզփըքոցքըն
Եւ փութկոտ , քանզի գործէր եռոտանի կահըս քըսան ,
Զի կայցեն առ որմով հաստակառոյց ապարանիցն ,
Եւ ոսկի անիւս եդեալ իւրաքանչիւր էր 'ի յատակն՝
Ինքնաշարժ գալ յերախմանսըն մըտանել աստուածեղէնս ,
Եւ անդրէն դառնալ 'ի տուն • զարմանազանց տեսանելով ։
Այսչափ նոցա կատարումն առեալ գործոյն , բայց չեւ էին
Գեղարուեստ ունկունքըն յօդեալ , զորս հանդերձէր եւ կոփէր զօդս ։
Այն ինչ նա յայսոսիկ ներհուն մըտօք լինէր աշխատ ,
Մերձեցաւ առ նա Թետիս արծաթթաթիկն աստուածուհի •
Եւ ետես ըզնա Խարիս արկեալ սպիտակ շղարշատեաւ ,
Զըքնաղագեղն այն զոր կին Կաղակըրկինն ունէր իւր վեհ •
Զեռն 'ի ձեռնըն խառնեաց , կոչեաց զանուն իւր եւ ասէ •
Զի՞ է , Թետիս ծըփինասեաւ , զի այսր 'ի տունըս մեր եկիր
Մեծարոյդ եւ սիրելիդ , զի յառաջմէն ոչ յաճախես ։
Ե՛կ աղէ մատիր յառաջ , զի քեզ հիւրոյթըս պատրաստեցից ։
Զայս խօսեալ առաջնորդէր զըքնաղագեղն յաստուածուհիս ։
Եւ առեալ ապա նըստոյց ըզնա յաթոռ արծաթազամ
Ի գեղեցիկ՝ յօրինեալ , եւ ընդ ոտիւքըն էր պատուանդան ,
Եւ ձայնեալ զՀեփեստոս ճարտարապետ ասէ առ նա •
Արի՛ այսըր , Հեփեստէ , եկ , քեզ Թետիս պէտս ինչ ունի ։
Պատասխանի ետ նըմա Կաղակըրկինն հըռչակաւոր •
Մեծ արդարեւ ընդ յարկաւս եւ մեծարոյ է դիցանոյշ ,
Որ փըրկեաց զիս 'ի ցաւոցս յորժամ անկայ բացէ 'ի բաց
Շաղաշըշոյ մօրըս խելօք՝ որ կամեցաւ թաքուցանել
Զիս ըզկաղս , եւ սըրտաբեկեղ կայր ինձ տանջել յայնժամ ցաւովք ,
Թէ յիւր ծոցն Եւրինոմէ եւ Թետիս չէր զիս ժողովեալ ,
Եւրինոմէ՝ դըստրիկն այն յորձանապտոյտ Ովկիանու ։
Առ սոսա՝ ինն ամ բազում ինչ դարբնեցի զարմանագործ ,
Ճարմանդ , հիւսկէն քօղէք եւ ապարօշ եւ մեհեւանդ ,
Ի խորափոր անձաւի , եւ շուրջ հոսանքըն Ովկիանեան
Փըրփըրադէզ մըռմըռեալ խաղայր գընայր անբաւանդակ •
Եւ չգիտէր ոք յաստուածոց եւ ոչ ոք մարդ մահկանացու՝
Բայց 'ի Թետեայ ուԵւրինոմեայ 'ի կեցուցչացս որ գիտէին ։
Արդ սա եկն 'ի տունըս մեր , եւ ինձ արժան է զամենայն

Թեւակայ վարսագեղեն փոխարինել կենաց փըրկանս ։
Այլ դու գէթ արդ առաջի նորա հիւրոյթըս վայելուչ,
Մինչեւ ես թօթափեցից ըղձիւքս եւ զայլ ամէն գործիս ։
Ասաց՝ յարեաւ 'ի սալէն ահեղ տեսիլ հրաշխմական
Կաղ 'ի կաղ, եւ 'ի ներքոյ սրունգըն ներըքինք չութափէին ։
Ա՛ռ ըղձիւքըն 'ի հրոյն 'ի բաց, եւ զամենայն անօթ գործոյ
Ցոր առնուն էր վատատակել՝ եդ ամփոփեաց յարկղ արծաթի ։
Ըսպընգաւ զերեսս աղջոյն եւ զերկոսին ջընջեաց դաստակս
Եւ զթանձըր պարանոցն եւ զլանջըս իւր ըղթաւամաղ.
Արկաւ ձորձ, ըզգաւազանն էառ ըստուար եւ ել արտաքս
Խոշտալով, այլ արքայի հարկանէին սալաս աղախնայք
Ոսկեղէնք, շընչաւոր օրիորդաց հանգունակեալք,
Որոց 'ի լանջսըն են միտք, է եւ բարբառ եւ զօրութիւն,
Եւ 'ի դիցն անմահից ըղձեալագործըն են ուսեալ ։
Արդ սոքա ժըրանայէին առ արքայի որ ծանրաքայլ
Մերձ ուր էրըն Թետիս չոգաւ նըստաւ 'ի գահ պայծառ ։
Ձեռն 'ի ձեռըն կըցեաց, եւ յանուանէն ձայնեալ ասէ.
Զի՞ է, Թետիս ծըփխինատեա, զի այսր 'ի յարկըս մեր եկիր
Մեծարոյդ եւ ցանկալիդ, զի յառաջմէն ոչ յաճախէիս ։
Խօսեա՛ց զոր 'ի մըտիդ, զի կատարել սիրտս յօժարէ
Թէ կարեմ յարդիւնս ածել, եւ թէ եղէ ինչ հնարաւոր ։
Եւ նըմա պատասխանի ասաց Թետիս արտօսրահոս.
Հեփեստոս, ո՞վ յորոց զամ մի յՈլիմպոսն են դիցանոյշք
Այսչափ վիշտըս դըժընդակս յանձին իւրում կըրեաց երբեք,
Որչափ ինձ յամենեցունց ետ Զըրուանեանն Արամազդ ցաւս ։
Ցայլոց զիս ծովականաց զուգեալ նուաճեաց առըն մարդոյ,
Էակեանըն Պեղէւսի, եւ անկողնոյ առըն տարայ
Ակամայ բըռնադատեալ, եւ նա 'ի տան անկեալ դընի
Հաշեալ զառըն ծերութեամբ. եւ աւասիկ միւս եւս ինձ այլ ։
Իբրեւ շնորհեաց ինձ զաւակ ածել 'ի լոյս եւ 'ի սընունդ
Ըզքաջացըն վեհագոյն եւ զբարգաւաճ զերդ խաւարծի,
Զոր սնուցեալ իբրեւ ըզտունկ յագարակի վայր արդաւանդ,
ՅԻլիոն մահկաձեւ նաւուք յղեցի արտաքեանց 'ի մարտ,
Եւ չառից անդրէն 'ի տուն՝ 'ի Պեղէոսեանն անդ ապարանս.
Զի մինչեւ կենդանութեամբ ինքըն զարեւ տեսանիցէ,
Վըշտամբեր է եւ կարեմ ինչ ոչ երթալ օգնել նըմա ։
Զոր նըմին 'ի պարգեւ ընտրեաց մանկաւին աքայեցւոց՝
Ի ձեռաց նորա եհան զաղջիկն իշխանն Ագամեմնոն ։
Ընդ այն ըստրամեալ մաշէր հոգւով. այլ տրովացիք զաքայեցիս
Պաշարեալ զնաւուց խելօքն՝ ելս ազատս ինչ ոչ տային,
Եւ ըզնա ծերք մատուցեալ ողոքէին արգիւացւոց,
Եւ բազում երեւելի երեւելի թուէին պարգեւս ։

444

Իսկ նա յանձին ոչ կալեալ երթալ վանել ըզպատուհասն,
Այլ սակայն Պատրոկլի զգեցուցեալ զիւր ըզզէնսն եւ զարդ՝
Առաքեաց ըզնա 'ի կռիւն, ըսպայ բազում տըւեալ ընդ իւր։
Առ դըրամըքն Արեւմըտեց ըղաւիւն ողջոյն պատերազմեալք,
Անուեքն այն օր զքաջազքն, ըզքաջորդին թէ զՄենելաւայ՝
Որ բազում գործէր նախճիրս՝ Ապոլոնի չէր ըսպանեալ
Յառաջքն անդ նահատակն, եւ Հեկտորի տըւեալ պարծանս։
Այսորիկ վասն 'ի քո ծունկս հասեալ կամ արդ, թէ լիցիս հաճ
Վաղավախճան որդեկիս շնորհել տապար եւ սաղաւարտ
Եւ ըմոխր սըռնապանս ընդելուզեալըս ճարմանդօք,
Եւ զըրահ, քանզի զոր կայրն՝ հաւատարիմն ընկեր կորոյս
Լեալ նըկուն տրովեանց, իսկ նա յերկիր անկեալ կայ լերդակեղ։
Եւ նըմա պատասխանի Կաղակըրկինըն հոյանուն.
Քա՛ջ լեր, մի՛ այդոքիկ ըզմիտըս քո հարցեն հոգովք։
Երանի թէ զօրէի այնպէս ըզնա տանել պահել
Ի բօթաբեր մահուանէն 'ի ժամանել ժանտ օրհասին,
Որպէս արդ նըմա չըքնաղ մերձ կացցեն զէնք զարմանալիք
Որոց զամ մ՚ 'ի բազմաբիւր մարդկանէն ոք տեսանիցեն։
Զայս ասացեալ եւ ըզնա թողեալ անդէն՝ չոգաւ առ փուքսն,
Ի հուր զայնըս դարձուցեալ՝ հրաման 'ի գործ ետ անկանել։
Եւ քըսան փուքք անդ 'ի բովսըն փըչէին առ հասարակ
Ըզպէսպէս զիւրավառ օդոյն շողիսըն շըռնչելով,
Զի մերթ առ ձեռըն գըտցին բուռն փութոյն, եւ մերթ այլ մի՛,
Որպէս խնդէր տարժեցէ Հեփեստ՝ հանել ըզգործն 'ի գլուխ։
Ըզպըղինձն անպարտելի եարկ 'ի հուրն, եւս եւ զանագ
Եւ զոսկին պատուական ընդ արծաթոյն, եւ կանգնեցոյց
Ապա զմեծ սալն 'ի կոճղն, եւ բուռն հարեալ ա՛ռ 'ի ձեռին
Ըզկռանըն զօրաւոր, եւ 'ի միւսում կալեալ զաքծանն։
Եւ առնել արար նախ ասպար մի մեծ հաստահարուստ,
Գործ ճարտար՝ կարակնեակերտ, ածեալ զնովաւ ծիրոտ պայծառ
Եռեկկուղ, լուսաճաճանչ, եւ զբառնալիսն իւր արծաթի։
Հինգ էին վահանին պատուածք, իսկ նա 'ի ըննի անդ
Բազում ինչ հրաշակերտս իմաստութեամբ սըրտին գործէր։
Ցօրինեաց անդէն 'ի նմա զերկին, զերկիր եւ ըզծով,
Զարեգակն անաշխատ եւ ըզլուսին լուսապատար,
Անդ զարփիան ամենայն՝ որովք երկինք են պըսակեալ,
ԸզԲոյլսն եւ զԲազմաստեղս եւ զզօրութիւն Որիոնի,
Եւ զԱրջըն՝ զոր եւ Սայլ եւս անուանեն յորջորջանօք,
Որ ցանգ անդըր շուրջ եկեալ՝ դէտ յՈրիոն ակն ունի պէշ,
Եւ միայն է անհաղորդ լոգարանացն Ովկիանու։
Անդ արար յօդաձայնից մարդկան կըրկին քաղաքըս շէնս.
Ի միոջն էին հարսանիք եւ մեծապաս խրախունք կոչնոց,



Digitized by Google

Եւ զհարսանիս յառաջաստեաց բոցաձաձանչ վառեալ ջահիւք
Ածէին ընդ առաւօտն՝ հարսանեկան հրճուիւք բազում.
Եւ մանկունք պարաւոր շըրջան առեալ կաքաւէին,
Եւ փողք եւ փանդռունք բարբառէին ըղձալիս իւրեանց,
Եւ կանայք զարմանային՝ կացեալ առ դուրս իւրաքանչիւր։
Ժողովուրդն 'ի հրապարակ կային խռնեալ, յուզէր պայքար.
Այլք երկու կագէին ըզտուգանաց փոխարինի
Արկեալ առն ըսպանելոյ. մին լու 'ի լու հրապարակին
Գործէր ոսկոյն հատուցեալ, միւսոյն չառեալ ինչ կայր յուրաստ.
Խընդրէին երկոքեան իրաւարար՝ առնուլ վըճիռ։
Երկոցուն կողմանց 'ի նպաստ աստի անտի գոչէր ամբոխ.
Իսկ քարոզք ըզժողովուրդն հանդարտէին, եւ ծերունիք
Բազմէին յողորկ 'ի վէմս 'ի նուիրականն հոլեալ ակումբ,
Եւ զմականսն 'ի նուիրակացն օդաձայնից առեալ 'ի ձեռս՝
Եւ նոքօք յարուցեալ տային դատ մի 'ստ միոջէ։
Եւ ոսկւոյ կըրկին քանքար անդէն եդեալ կայր 'ի միջի՝
Տալ այնմիկ՝ որ զիրաւունս իւր 'ի նոսին ցուցցէ ճըշգրիտ։
Իսկ ըզմիւս քաղաքն՝ երկուք պաշարէին զօրաց բանակք
Սպառազէն փայլակնացեալք, որ յերկշաւիղ կային խորհուրդ.
Կամ 'ի սպառ սատակել, կամ բաժանել ըզբնաւն յերկուս
Որչափ 'ի ներքս էին ինչք 'ի ցանկալի յայնմ ապաստանին.
Իսկ նոցա 'մբոստացեալ՝ զինուորէին դաղտ 'ի դարան։
Ըզպարիսպն սիրելի կանայքն եւ տղայ մանկունքն պահէր
Ամբարձեալք 'ի նմա, եւ այրք ծեր ընդ նոսին յեցեալք յալիս։
Նոքա գնային, եւ Աթենաս Պալլաս ըԱրէս վարէր զնոսին,
Երկոքին ոսկեղէնք եւ պաճուճեալք ոսկեհանդերձ,
Գեղանիք եւ մեծանձունք 'ի զէն 'ի զարդ իբրեւ աստուածք,
Ընդ հանուրս երեւելիք. իսկ զօրականն էր դոյզն ընդհատ։
Մինչ նոքա հասանէին ուր 'ի դարան Թուէր նոցա դէպ,
Առ գետով՝ ուր եւ ջըրարբքն էին դուարաց բոլորեցուն,
Անդ նոքա բազմէին ամբածածուկք 'ի պըղինձ հրաշէկ։
Մեկուսի յամբոխէն նըստէին դէտք իւրեանց երկու,
Նըկատել՝ եթէ տեսցեն զհօտս եւ զանդեայս կարականեղջերս.
Եկանէին նոքա առէզ, ընդ որս գային կըրկին տաւարածք
Զուարճացեալք 'ի ձայն սրընգաց, եւ դաւաճանաց ինչ անըղձասացք։
Զայն տեսեալ նոցա հեռուստ, փութանակի արշեալ դըրդայթ
Անդէոց երամակս, ընտիր սպիտակ օդեաց ճահուկս
Օգտէին վըտարանդիս եւ զխաշնարածս հարկանէին։
Իսկ նոքա, լըւեալ ըզյոյժ դուժին շըշուկ առ անդէովք՝
Մինչ բազմեալ կային յատեան հրապարակի, անդէն եւ անդ
Ցերիվարս օդապարիկս հեծեալ ժաման լինէին շոյտ,
Եւ զանեղն առեալ զափամբ գետոյն, մարտ առեալ ճակատ,

Սատակէին ըզմիմեանս 'ի պղնձակուռ նիզակաց սայրս ։
Անդ գեգերէր Հեռ եւ Վըրդով, անդ եւ Օրհաս կորըստաբեր
Զոմն ըմբռնեալ կենդանի նորոգ խոցով, զայլ ոմն անխոց,
Եւ զայլ ոք կենազըրաւ՝ ձըգէր զոտիցն ընդ խաղմականսն ․
Եւ էին զգեստք իւրով ձորձք թաթաւեալ յարիւն արանց ։
Շըրջէին զօրէն մարդկան շընչաւորաց եւ կըռուէին,
Եւ զմիմեանց մեռելոց ձըգձըգէին ըզդիակունս ։
Եդ 'ի նմա եւ դեռահերկ արտ մի փափուկ, անդ արդաւանդ,
Լայնատարր՝ երեքկնարօր, եւ մաճակալք 'ի նմին յոգունք
Տանէին եւ բերէին շըրջեալ հարկիս այսըր եւ անդր ․
Որոց 'ի գլուխ ժամանեալ արտավարին դարձադարձիւ՝
Եկեալ այր մի անդէն մատուցանէր նոցին 'ի ձեռս
Դաշխուրան անոյշ գինւոյ, եւ դառնային նոքա 'նդ ակօսս,
Տենչացեալք 'ի խոր անդոյն գալ ժամանել անդրէն յաւարտ ։
Հորկանէր այն 'ի թիկանց, իբր արօրեալ, երփըն մըթին,
Թէպէտ եւ էր ոսկենիւթ, եւ հիացումն էր այս մեծ յոյժ ։
Եդ 'ի նմին եւ արտորայ մի հասկաթուռ, յորում մըշակք
Մայրասուր գերանդեօք 'ի ձեռս ըզհունձս հարկանէին ։
Եւ ոմանք՝ էր որ յերկիր թօթափէին թանձր ընդ ակօսս,
Էր զոր կապօղք որայիցն առնէին զայնս որորակապ ։
Եւ որ զորայն կապիցեն՝ երեք ըզհետ գնային նոցա ․
Հասկաքաղ մանկտի յետուստ բարձեալ 'ի գիրկըսն բերէին,
Մատուցեալ անդուլ 'ի նոսա ․ 'ի մէջ նոցա արքայն լըռիկ
Ցուպ 'ի ձեռին կայր 'ի վերայ գագըշէն ուրախ բերկրապատար ։
Կազմէին նուիրակք կոչունս ընդ թեղօշիւ մի մեկուսի,
Եւ զենեալ եզըն մի մեծ՝ հանդերձէին, եւ անդ կանայք՝
Մըշակացըն հայս յընթրիս՝ թրէին գերմակ ալիւր առատ ։
Եդ 'ի նմին եւ այգեստան մի բարդաւաճ ողկուզալիր,
Վայելուչ եւ ոսկեկուռ, եւ սեաւ 'ի խայծ անկեալ ողկոյզքն,
Եւ կանգուն կայր ձողաբարձ յարծաթի խեչըս ծայր 'ի ծայր ։
Առուամէջըս կապուտակս եւ յանագէ զնովին ած ցանկ ․
Մի եւեթ էր յայն շաւիղ՝ գընալ կըթելեաց 'ի կութս այգւոյն ։
Կուսազեղ օրիորդք եւ պատանեակք քընքշաբարոյք
Ի հիւսուածոյ տակառս զանուշահամ բերոյն ածէին ․
Ցոյց 'ի մէջ հընչուն քնարաւ մանուկ մի քաղցըր նըւագէր,
Եւ 'նդ աղիս բարեյարմար գողարիկ ձայնիւ զուգէր գեղգեղ ․
Նոքա 'նդ նոյն յերգ ու 'ի շըռինչ յոտին զոփիւն զհետ կայթեէին ։
Արար եւս 'ի նըմա եղջերաբերձ երընջուց ջոկս ․
Եւ երինջքն յօրինեալ էին յոսկւոյ եւ յանագէ,
Եւ ընչելով 'ի գոմոցն եղանէին յարօտըս կոյս
Ըստ վըտակ մի կարկաջուն եւ ըստ շամբուտըն նըրբաստեղն ։
Անդիորդք խառն ընդ երինջսըն ոսկեղէնք երթային չորք,

Եւ ըղձիւք նոցա զամփոփանք երազատեսանք ճնշին գնայլին ։
Ամէհի աւերծք երկու յաստղընթաց կոծուցն 'ի բոյլ
Զբառաչորս ցուլն ունէին յահեղ պոչելն վարեալ ընդ քարշ,
Եւ գիմեալ զամփոփանք 'ի նա համախմբէին եւ պատանիք ։
Իսկ նոցա պատառեալ զմեծամարմին զաւարակին մորթ՝
Զփորոտին եւ զարիւնն լափէին բազմաբերան .
Հովուքըն զուր վանէին՝ յորդորելով ըղձիւք զամփոփանս,
Որ խրախուսեալ յաւերծուցըն չառնուէին յանձըն գոչել,
Եւ եղեալ եւ մնացեալ մօտ հաչէին եւ խորշէին ։
Արդար եւս անդ լուսակեղն հօտից արօտ մի լայնալիր
Կաղաղերբրէնն հոյակապ՝ 'ի գեղեցիկ հովտի միում,
Գոմս եղանց, մակաղատեղս եւ համբրբուածս յարկածածուկ ։
Դրբրուագեաց անդ եւ ըղպար Կաղաղերբրէնըն հոյանան,
Այնըմ նըման զոր երբեմն 'ի մեծանիստն անդ 'ի Կնոսոս
Դեդալոսն յօրինեաց գեղահիւսակն Արիադնեայ ։
Պատանիք անգանոր եւ օրիորդք չըքնաղագեղուք
Ըղձեացըն զատակէ կալեալ միմեանց առնուէին պար .
Աղջկունք նուրբ բարակաման զգեցեալ ըեհեղըս կտաւեայս,
Մանկանցն բանձկան քաղցըր՝ լուսանըկար գոյըն ճենչ 'ի ձէթ .
Եւ նոցա՝ բոլորեալ էին պըսակք գեղեցկահիւսք,
Իսկ սոցա՝ դաշոյնք ոսկիք ըղկամարացն արծաթէից ։
Մերթ ոտիւք հանճարեղք մանեկաձեւ հեռ գայլին շուրջ,
Թեթեւակի յոյժ երբեմն բըրուտ մի զի կալեալ 'ի ձեռս ըզգուրգն
Եւ նըստեալ զփորձ առնուցու՝ թէ 'ի շըրջելն ընթանայցէ .
Եւ մերթ անդըրէն կարգ ընդ կարգ հարկանէին կայթս ընդ միմեանս ։
Ցոփահոյլք ըղձանըչալի պարուն կուտեալ կային զուարթք
Հեշտացեալք, եւ 'ի խըմբի նոցին գուսան աստուածեղէն
Երգէր քնարաւ, եւ երկուք ոք յաջախնթեռս անդ խաղալիկք՝
Ի սկըսանել նուագն յերգ՝ 'ի մէջ նոցա ճախր առնուէին ։
Եդ 'ի նմա եւ ըզգետոյն Ովկէանու մեծ զօրութիւն
Առ վերջին պարունակաւ ճարտարագործ վահանին այն ։
Իսկ յորժամ բովանդակեաց զաստղարն ըզմեծ եւ հաստատուն,
Յօրինեաց եւ զզրահս քան զճառագայթս հըրոյ պայծառ .
Յօրինեաց եւ սաղաւարտ ամուր յարմարեալ նորին պատշաճ,
Գեղաշուք՝ բազմաքանդակ, եւ զարդաման արկ ոսկեփետուր .
Յօրինեաց եւ սըռնապանս 'ի կռանական անագ թիթեղանց ։
Վըճարեալ զկազմածս ամենայն Կաղաղերբրէնն հըռչակաւորն,
Զամենայն բարձեալ առաջ մօրն Աքիլլեայ եդ առաջի ։
Նա սըլացաւ՝ իբրեւ շահէն՝ 'ի ձիւնեղէն Ողիմպոսէ,
Վառանս արփափայլս տանելով 'ի Հեփեստեայ ։

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԻՆՆՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Աքիլլէս առեալ 'ի մօրէն զչքնաղ զէնսն՝ զինի եւ ցնծայ. Թետիս ան-մահական հիւթիւ օծանէ զմարմին Պատրոկլի պահել 'ի նեխոյ: Աքիլլէս հրա-պարակաւ հաշտի ընդ Ագամեմնոնի. կամի անդէն անսուաղ արշաւել 'ի պա-տերազմ, խափանեալ յՈդիսեայ՝ թոյլ տանէ զօրացն ճաշել: Ագամեմնոն դար-ձուցանէ առ նա անարատ զԲրիսէիս ամէն պարգեւօքն զոր խոստացեալ էր. երդուեալ նորա զոհիւք: Ողբք Բրիսէիսի 'ի վերայ մարմնոյն Պատրոկլի: Յոյնք ճաշ առնուն, Աքիլլէս եւ ոչ ինչ. Արամազդ յղէ զԱթենաս՝ ընուլ 'ի սիրտ նորա կերակուր եւ ըմպելի աստուածեղէն: Վառի քաջն եւ ամբառնայ 'ի կառս. բանք իւր առ երիվարսն, եւ պատասխանի միոյն 'ի նոցանէ: Խրախոյս և ար-շաւ դիւցազինն:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ԻՆՆՈՒՏԱՍՆԵՐՈՐԴ

### ՀՐԱԺԵՇՏ ՔԻՆՈՒՆ

Առաւօտն 'ի յորձանացն Ովկիանու քրքմազգեցիկ
Ելանէր գայր լոյս բերել մահկանացուաց եւ անմահից .
Նա զպարգեւսն յաստուածոյն ածեալ եհաս 'ի նաւատորմն ,
Եւ եգիտ ըզՊատրոկլիւ փարեալ զորդին իւր սիրելի՝
Զի գոյժ առեալ կականէր , լային զնովաւ ընկերք բազում ։
Անց եկաց 'ի մէջ նոցին՝ աստուածուհեացըն մեծարգոյն ,
Ձեռն 'ի ձեռն իւր խառնեաց , եւ բարբառեալ ասէ առ նա .
Որդեակ իմ , եկ թողցուք զի կայցէ դա , թէպէտ ցաւանք ,
Քանզի զամ մի աստուածոցըն խորհրդով եղեւ նկուն .
Իսկ դու ընկալ զայս կազմածս 'ի Հեփեստոսէ պանծալափառս ,
Հրաշագեղս՝ որոց համազոյն չեւ է ուրուք յուսս իւր բարձեալ ։
Զայս խօսեալ աստուածուհւոյն , եւ առաջի անդր Աքիլլեայ
Եդ ըզզէնսն , շաչեցին բոլոր չքնաղ զարմանութիւնք ։
ԶՄիրմիդոնեան ամենայն կալաւ դողումն եւ չիշխեաց ոք
Կառուցանել աչս 'ի նոսին , այլ 'ի փախուստ դարձան անդէն ։
Իսկ յԱքիլլէս ընդ տեսիլն՝ եւս առաւել զայրթեան զայրոյթք ,
Աչքն ահեղ վառեցան՝ զարտեւանանցըն ներքեւ փայլակն ,
Եւ զաստուածոյն չքնաղ պարգեւսն 'ի ձեռսն առեալ զուարճանայր ։
Հեշտացեալ 'ի զէնսն հրաշակերտիցն 'ի միտս իւր ,
Առ մայր իւր նա ընդ նա բարբառեցաւ ըզթըռչուն բանս .
Մայր իմ , զէնս աստուած շնորհեաց , զոր անմահից գործ արժանի ,
Զոր ոչ այր մահկանացու կարող զլուցի առնել 'ի գլուխ .
Եւ արդ ես վառեցայց , այլ մեծապէս յոյժ երկընչիմ ,
Մի՛ գուցէ սպրըդեալ ճանճից ընդ պղնձահար խոցուած վիրաց՝

Ծնանիցին որդունս 'ի ներքս՝ տապականել զնա մինչ ցայնժամ
Զարի որդին Մենետեայ զանկեալն անշունչ դի անկենդան, —
Զի նորա հատաւ արեւն, — եւ նեխեսցի մարմինն ողջոյն։
Պատասխանի ետ Թետիս արծաթաթաթիկըն դիցանոյշ·
Որդեակ, մի այդպէսիկ տագնապեսցեն ըզմիտըս քո·
Ես խընամ տարից մերժել 'ի նմանէ զզուանդըն վայրենի՝
Ըզճանճեանն՝ որ զկոտորեալս յԱրեայ զմարդիկըն ճարակեն·
Զի թէպէտ եւ զտարին 'ի բուն համակ անկեալ կայցէ,
Անվըթար մնասցէ մարմինն, եւ բարեձոյն եւս մանաւանդ։
Սակայն քո կոչեալ յատեան ըզդիւցազունսն աքայեցիս,
Եւ յուրաստ լեալ 'ի քինուցդ առ Ագամեմնոն հովուէն ազանց,
Վառեսջիր ընդ փոյթ 'ի մարտ եւ ըզգեցիր ըզզօրութիւն։
Զայս խօսեցաւ, եւ ազդեաց աժխոյժս 'ի նա խրախուսական,
Եւ Պատրոկլի՝ զանուշունս եւ ըզկարմիր գեղն օշարակ
Ի ռընգունսըն կաթեցոյց առ անարատ պահել մարմնոյն։
Իսկ քաջազն Աքիլլեւս յարեաւ գնաց զեզերբ ծովուն,
Եւ ահեղ գոչմամբ զարթոյց զաքայեցիսըն դիւցազունս։
Որ առօրըն էին կանխաւ կալ 'ի նաւացն ասպարիսին,
Եւ որ քաշեաց նաւապետքն, եւ ղեկավարք նոցուն քեղեաց,
Եւ 'ի նաւս համբարապանք էին՝ առձկին մատակարարք,
Յայնժամ եւ այնք գնային յատեան, զի Աքիլլեւս երեւեցաւ
Որ յերկարն էր դադարեալ 'ի դըժընդակ պատերազմէն։
Երթային կաղ 'ի կաղ եւ պաշտօնեայք Արեայ երկուք,
Քաջակորովըն Տիդեան եւ Ոդիսեւսն աստուածային
Յեցեալք 'ի նիզակ, զի զհատատոյր վէրսն ունէին դեռ·
Եւ գնացեալ բազմեցան յառաջադասն ատենի անդ։
Հուսկ յետին ժամանեաց արանց արքայն Ագամեմնոն
Վիրաւոր, քանզի զնեզն 'ի կարեւոր պատերազմի
Խոցեաց Անտենորեան Կոոնն 'ի մխուճ աղեղնձակուս։
Իսկ յորժամ ժողով եղեւ աքայեցիք ամբոխահոյլ,
Անդ քաջոտն Աքիլլեւս 'ի մէջ անցեալ բարբառեցաւ·
Ատրիդէս, երկոցունցս ապաքէն լաւ եւս այս լինէր,
Քեզ եւ ինձ, յորժամ մեք առ զայրացութեան սրտից մերոց
Հոգեմաշ հեծեծ քինու սըրտամըրմեցաք յաղագս աղջկան,
Զոր արժան էր Արտեմեայ զըսպանել 'ի նաւս առ նետահար՝
Յաւուրն՝ յորում աւար ես առաւելեալ ըզԼիռնեսոս·
Զի չլինէր այսչափ աքեանց ատամնացեալ զերկիր անհուն
Ի ձեռաց թըշնամեաց՝ 'ի բարկութեանս իմում խեռել։
Հեկտորի եւ տրովացւոց այն շահ օգուտ, բայց զաքայեանս
Ընդ երկար յիշել կարծեմ զիմ եւ ըզքո գըժտութեան հեռ։
Այլ զանցեալն եւ ըզձնացեալ 'ի բաց թողցուք, թէ եւ ցաւածք,
Առ հարկի տագնապաւ զայրս 'ի լանջըս մեր նուաճեալ։



Digitized by Google

Իսկ արդ ես ցածուցանեմ ըզբարկութիւն, չէ իսկ 'ի դէպ
Բըրբաւերաւս ինձ յոխութեան յանդըրժանել. այլ ճն առն
Խըրախուսեա Ձեայես 'ի մարտ ըզհերապանծ աքայեցիս,
Զի միւսանգամ 'ի հանդէս մըտեալ Տրովեանց կալ ախոյեան,
Եթէ տըքնել կամիցին զնաւատորմիւս, այլ ինձ թըւի
Մըրատագիւր ոք 'ի նոցունց՝ հըրկինեսցէ ծունր որ փախնուցուն
Ի մերմէ նիզակէս 'ի դըժընդակ անդ ճակատու:
Զայս ասաց, եւ խընդացին աքայեցիքըն բարձաղէնք
Ընդ հրաժեշտ ոխեց քինու մեծահոգւոյն Պելէածնին:
Իսկ արանց արքայն ասէ Ագամեմնոն յատենի անդ
Անդըրատին 'ի բազմոցէն, եւ ոչ 'ի մէջ անդըր կանգնեալ.
Ո՛վ սիրելիք, դանայեանքըդ դիւցազունք՝ պաշտօնեայք Արեայ,
Ունկն արժան է կարկառել յառաջնախօսն, եւ չէ 'ի դէպ
Խառնամուխ լինել, զի այդ հըմտին անգամ է տագնապող:
Իսկ յարանց բազմամբոխի՝ լըսել զիա՞րդ է կամ խօսել.
Քաղցրաձայն թէ եւ իցէ յատեան խօսնակ, սակայն զըրկի:
Ա՛ռ Պելէածնն ես դարձուցից ըզխօսս, իսկ դուք արգիլեցիք,
Արկէք 'ի միտ, եւ բանիցս ամենեքին լերուք հասու:
Բազում անգամ զբայբանսերդ աքայեցիք ասացին ինձ,
Եւ կագեցան իսկ ընդ իս, սակայն ոչ իմ ինչ է վըրնասն,
Այլ Բաշխից Արամազդայ եւ մըթաձեմ Պատուհասին,
Որ 'ի միտս ըզժանտաժուտն արկին Եղեան յատենի անդ՝
Յորում աւուր զմըրցանակն ինքնին խլեցի ես զԱքիլլեայ:
Սակայն զի՞նչ էր ինձ առնել, աստուած ըզքնաւն հանէ 'ի գլուխ.
Արդոյ դուստր Արամազդայ Եղեան որ զըմնաւս խաբդաւանէ,
Կորուսիչն՝ որոյ փափուկ են գարշապարք ոտից իւրոց,
Զի չյենու 'ի գետին, այլ ընդ արանց շըրջի գըլուխս
Հասուցանել մարդկան զեան, եւ դէթ ըզմի ոք վարակէ:
Զի երբեմն Արամազդայ իսկ զըլխովին հասոյց վընաս,
Զոր 'ի մարդիկ եւ 'ի դիսն ասեն լինել յոյժ վեհագոյն,
Այլ Հերա իգութեամբն եւ զնա պատրեաց խորամանկեալ՝
Յաւուրն՝ յոր զՀերակլէսն էր հանդերձեալ ըզզօրութիւն
Ծընանել Աղկմենեի անդ 'ի Թեբէ գեղապարիսպ:
Քանզի էր նա պանծանօք առ միահոյլ ասացեալ դիս.
Մի՛տ դիք ինձ, դիք համօրէն եւ դիցանոյշք ամենեքին,
Զի զոր միտք իմ յորդորեն յիմում սըրտի՝ մերկացայց ձեզ:
Գեան երկանց Իլիթիա հանցէ 'ի լոյս այր մի այսօր,
Որ բոլորից տիրեսցէ սահմանորդաց առ հասարակ,
Տոհմակից այնոցիկ՝ որ յարենէ իմմէ են քաջք:
Նենգամիտ խորհըրդով ասէ ցըմա Հերայն արդոյ.
Ստեսցես, եւ ոչ 'ի լըրումն ածել ըզբանդ հանիցես յանդ.
Բայց ճն եկ լե՛ր ինձ երդմըմբ, Ովլիմպականդ, երդումն անյեղ,

Թէ ստուգիւ սահմանակցաց բոլորեցուն իշխեսցէ այր ,
Որ յաւուրս աստ յայսմիկ անկանիցի զոտիւք կընոջ
Յարանց անտի՝ որ միանգամ 'ի քո զարմից են արեանէ :
Զայս ասաց , իսկ Արամազդ ոչ 'ի վերայ եկաց դաւոյն ,
Այլ երդուաւ երդումըն մեծ , եւ ապա յոյժ ըստորըշխացաւ :
Իսկ Հերա սլացեալ մեկնեալ 'ի գագաթանց Ողիմպոսի՝
Էջ ըշտապ եհաս յԱրգոս աքայական՝ ուր ճանաչէր
Ըզքաջազն ամուսին Սթենելոսի Պերսէոսեան ,
Ըզյղին սիրուն մանկամբ , եւ եօթն ամիսն 'ի վերայ կայր .
Զոր ձգեալ ընդառաջ 'ի լոյս հան թերակատութըն ասարաժամ ,
ԶԱլկմենեայ ծընունդն արգել եւ խափանեաց զԻլիթիայս :
Եւ զրոյց առ Զըրուանեանն Արամազդ ինքն երթեալ ասէ .
Արամազդ , փայլակնացայտ հայր , բան մի յուշ առնեմ մըտացդ ,
Ահա ծընաւ այրըն քաջ՝ որ տիրեսցէ արգիացւոց ,
Եւրիսթեւս , Պերսէոսեան Սթենելոսի զաւակն՝ ազգ քո ,
Որում չէ ինչ անպատեհ արգիացւոց թագաւորել :
Զայս ասաց , եւ սաստկութեան հարան 'ի խորըս սըրտին ցաւք .
Եւ անդէն բուռն 'ի յԵղեան ըզգեղահերս հարեալ գըլխոյն ,
Յասուցեալ 'ի միտըս իւր , երդուաւ երդումն անդըրդուելի ,
ՅՈղիմպոս եւ յերկինան աստեղազարդ մի եւս երբեք
Դառն առնել Եղերան՝ որ յամենայն ոք մեղանչէ :
Զայս ասաց , եւ ձեռամբն յաստղաճաճանչ երկնից 'ի բաց
Գլորուտեալ ընկէց , եւ նա յարարս անդէն եհաս մարդկան :
Հեծէր ընդ այսմն հանապազ՝ տեսեալ զորդին իւր սիրելի
Յաժանեալ յերկս անարժան յԵւրիսթեւսեան մըրցամարտից :
Նոյնպէս անդ յայնժամ եւ իմ մինչ մեծն Հեկտոր սաղաւարտաճօճ
Առ խելըք նաւաստորմին զարգիացիս կոտորանէր ,
Զանկանէր 'ի մըտացս Եղեան յոր գամ մի վնասեցայ :
Իսկ զի հաս ինձ վըղեան , եւ զմիտս յինէն բարձ Արամազդ ,
Կամիմ անդրէն հաճել ըզքեզ եւ ընծայել անհուն փըրկանս .
Այլ արի արդ 'ի գուպար եւ յարուցես զայլ եւս ըսպայն :
Եւ զպարգեւսըդ բաժանեալ տաց ես աստէն զոր միանգամ
Ոդիսեւս դիւցազն եկեալ 'ի վրանդ երէկ քեզ խոստացաւ :
Թէ կամիս , անսա դու ինձ , թէպէտ ձեպեալ յարիսեան խաղս ,
Եւ զընծայսըդ քեզ ծառայքս յիմմէ անտի հանեալ նաւէն
Բերցեն այսր , եւ տեսցես զի քեզ շնորհեմ սըրտահաճոյս :
Երագոտն Աքիլլէս պատասխանի տուեալ ասէ .
Ատրիդէս մեծափառ , արանց արքայ Ագամեմնոն ,
Պարգեւել ըզմըրցանակդ եթէ կամիս ըստ արժանի ,
Կամ արգելուլ , առ քեզ է . իսկ մեզ այժմէն յուշ լիցի մարտ
Սոյն հետայն , զի ոչ 'ի դէպ կալ աստ խօսիւք ժամավաճառ ,
Կամ բընաւ իսկ ըսպասել , զի դեռ անգործ կայ մեծ վաստակ .

Զի ասացէ ոք վերջասածին ընդ նահապետականն զԱքիլլէւս
Պղնձաձայն՝ նիզակաւն ըզաւրավարացն վերկանգնել տաճս ։
Սոյնպէս մէն մի ումն 'ի ձէնջ յուշ լիցի մարտ գնել ընդ այրս ։
Առ նա պատասխանի բազմահանճարն ետ Ոդիսեւս .
Մի այդպէս, Աքիլլէւս աստուածանման, Թէպէտ եւ քաջ,
Անսուաղս յԻլիոն դըրդեր զորդիս աքայեցւոց
Գուպարել ընդ տրովացիս, զի ոչ Թէ սուղ ինչ լիցի կռիւ՝
Իբրեւ զամ մի քաղցրաց գումարտակաց լիցին խառնուրդք,
Եւ աստուած յերկոսին կողմանս եռանդըն շընչիցէ ։
Այլ հրաման տուր աքայեցւոց զերագ նաւուցք առնուլ ինչ ճաշ
Կերակրով եւ գինեաւ, զի այն է ոյժ եւ զօրութիւն ։
Զի ոչ Թէ այր, զաւրն ողջոյն մինչեւ 'ի մուտս արեգական,
Սովեալ 'ի կերակրոյ կարիցէ կալ դիմամարտել ։
Զի Թէպէտ եւ հոգւով յօժարամիտ իցէ 'ի ռազմ,
Այլ անդամք յանկըրծատակս ծանրանան, եւ հասանէ
Պապուք եւ նօԹութիւն, եւ կըննաւորին ծունկք յընԹանալ ։
Իսկ այր՝ որ 'ի գինւոյ եւ 'ի խահից առնուլ յագուրդ՝
Ընդ արանց ախոյենից զօրըն ցերեկ տայցէ ճակատ,
Սիրտ խիզախ է նըր 'ի լանջս, եւ ոչ անդամքըն աշխատին,
Մինչեւ հուսկ մեկնին ուրեմն ամենեքեան 'ի ճակատէն ։
Այլ եկ ծն ցրրուեա զաւրսն եւ հրամայեա ճաշ յօրինել .
Եւ ըզձիրսդ ածցէ 'ի մէջ արանց արքայն Ագամեմնոն
Այսր յատեան հրապարակիս, զի համօրէն աքայեցիք
Տեսցեն աչօք յանդիման, եւ քերկրեսցիս դու 'ի քո սիրտ ։
Երդմընի եւս եղիցի քեզ յարուցեալ յարքայացիս,
Զի չեւ յաղջկանն անկողինս եւ կամ քունեաց ըզնաւ ընդ նըր,
Որպէս օրէն է, արքայ, Թէպէտ արանց եւ Թէ կանանց .
Եւ հոգիդ քո 'ի սըրտի քում հանդուցեալ՝ եղիցի հաշտ ։
Եւ ըզկնի սաստ կոչնովք հաճեսցէ զքեզ յետ 'ի խորանսն,
Ցիրաւանց արդարուԹեան զի մի պակաս ինչ մնասցէ քեզ ։
Ատրիդէս, առաւել այսուհետեւ լիցիս եւ դու
Առ այլս իրաւաւէր . քանզի եւ չէ ինչ անպատեհ
Ողոքել զայր Թագաւոր՝ որ ինքըն նախ մեղիցէ ոք ։
Կըրկնեաց առ նա եւ ասէ Ագամեմնոն արանց արքայն .
Խընդամ, Լայերտեանդ, 'ի լուր բանից քոց այդոցիկ,
Զի ուղիղ ընդ ամենայն անցեր կարգաւ եւ ճառեցեր .
Կամ է ինձ երդնուլ զայդ, եւ յիս հոգիս իմ Թելադրէ,
Եւ չեղէց աստուածով երդմընաստուս . իսկ Աքիլլէւս
Կացցէ այժմ աստանօր, Թէպէտ փուԹկոտ յարեւան ռազմ,
Կացէք եւ դուք համօրէն միահամուռ, մինչեւ զայցեն
Մըրցանակք 'ի խորանէս եւ կըռեսցուք զերդումն անսուտ ։
Իսկ դու եւ քեզ ինքեան պատուէր տամ զայս եւ հրամայեմ,

Այրընտիր ընդ նեւ յաղնիւ պատանեկաց բոլոր աքեանցս
Ի բերել ընդդատարարապս յեմէն նաւէս, զոր խոստացաք
Տալ երէկ Աքիլլեայ, եւ ընծայական տանել ածցես ։
Եւ փութով Տալթիբիոս՝ ընդ աքայեանցդ մեծ բանակ՝
Պատրաստեսցէ կինճ 'ի զոհ Արամազդայ եւ Արեգական ։
Իսկ քաջողն Աքիլլէս դարձոյց նմա պատասխանի .
Ատրիդէս վեհափառ, արանց արքայդ Ագամեմնոն,
Ա՛յլ երբեք տաւել վայել էր ձեզ յայդ հոգալ,
Յորժամ թէ դուլ եւ դադար ինչ լինիցի պատերազմին,
Եւ ոչ այսչափ ահխոյժք յիմում սրտիս հարցեն յեռանդն .
Իսկ զարդիս տապաստ անկեալ կան մեռեալք զորս զբաւեաց
Հեկտորըն Պրիամեան՝ շնորհեալ նմա դիւրութեան Արամազդայ ։
Դուք 'ի ճաշ յորդորէք, իսկ ես այժմէն տայի հրաման
Նօթիս եւ անճաշակս աքայեցւոց որդւոց 'ի կռիւ .
Եւ ապա յետ այնորիկ, յարեգականն մտանել,
Մեծահաց կազմել ընթրիս, զանարգանացս վրէժ լուծեալ ։
Իսկ յառաջ՝ փարդասատ քաւ թէ կերակուր կամ ըմպելիք
Ընդ որկորս անցանիցէ յետ ընկերիս մեռանելոյ,
Որ անկեալ կայ 'ի վրանիս պատառոտեալ սուր պղնձով,
Դիմեալն 'ի դուռըն կոյս շրջեալ, եւ ընտանիք կոծապարոյք ։
Յայն աղագս՝ յիմում սրտիս ոչ այդոքիկ ինչ լինին փոյթ,
Այլ նախճիրք եւ արիւնք, եւ դառնահեծ մռնչիւնք արանց ։
Առ նա պատասխանի ետ Ոդիսեւս լիահանճար .
Ո՛վ Աքիլլէս, Պելեան ձետ, արիադոյնդ յաքայեցիս,
Քաջագոյն ես քան զիս եւ ոչ սակաւ կորովագէտ,
Իսկ ես գէթ խորհրդովք քան զքեզ կարի յառաջադէմ,
Զի ծընեալ իսկ եմ յառաջ, եւ խելամուտ եղեալ յոգունց .
Վասն որոյ՝ քո սիրտ բանիցս իմոց լիցի երկայնամիտ ։
Մարդկան փութանակի գայ հասանէ մարտի յագուրդ,
Յորում ոճ թանձրախուռն հարեալ հասկաց պղնձին յերկիր,
Սակայն որայն նիւաղ յոյժ, ուր Արամազդ հակէ զնժարսն,
Որ նա ինքն է մարդկան պատերազմացըն համարակ ։
Այլ չէ պարտ աքայեցւոց որովայնիւ սըգալ զմեռեալ,
Զի շատք յոյժ թօթափին հանապազօր եւ յոգնահոյլք .
Իսկ արդ երբ էցէ դուլ առնուլ երբեք 'ի հեծութեանց ։
Այլ արժան է հողոյ՝ զոր միանգամ մեռանին՝ տալ
Սրտապնդեալ 'ի հոգի, յետ մի եւեթ օր ողբալոյ .
Իսկ որ յահեղ ճակատէն ճողոպրեցին ողջանդամք,
Յիշել նոցա զըմպելի եւ զկերակուր, զի տաւել
Եւս ընդ արս ոսոխիմս անկասելի գոռասցուք ցանգ,
Զանվրկանգն 'ի մարմնի զգեցեալք պղինձ . եւ 'ի զօրուէս
Մի այլում ինչ ոք խրատու դէտակն եղեալ՝ յետըս կայցէ .



Digitized by Google

Զի եւ այլ ինչ յորդորումն լինէր չարոյ նշան՝
Որ առ նոսա արգելեալ մնայցէ, այլ խառն հորդան աղուեալ
Ի ձիախրոխտ արամացեալն շարժեսցուք ըզբարկն Արէս։
Ասաց, եւ զնետաձիգ վեհքն ընտրեաց զօրագլխոյն յընկեր,
Եւ զՓիլիկանըն Մեգէս եւ ըզԹոաս եւ զՄերիոն,
Ընդ նոսին զՄելանիպպոս եւ զԿրէոնեան Լիկոմեդէս.
Եւ եղեալ զնոսին 'ի վրան Ագամեմնոն Ատրիդեսի։
Եւ անդէն զոյգ ընդ բանին լինէր առաջ գործոյն վըճար.
Բերէին եօթն 'ի վրանէն եռոտանիս՝ ըզխոստացեալս,
Եւ քսան սանըս հրափայլ եւ երիվարս երկոտասան.
Եւ զկանայսն հանէին փութով հըմուտս ընտիր ձեռագործոց,
Եօթն եօթնեակ, եւ ութերորդ ըզգեղեցկայօքն Բրիսանդայ,
Եւ ոսկւոյ՝ տասն ընդ բընաւ կըշռեալ քանքար Ոդիսեւս
Յառաջէր, զայր աքայեանց միւս մանկանցն զհետ պարգեւաբեր։
Եդին 'ի մէջ ատենին. յարեաւ եկաց Ագամեմնոն,
Եւ ըստ ձայնին բարբառոյ Տալթիբիոսն աստուածահրաշ՝
Կալեալ ձեռացն ըզվարազն՝ երթեալ կայր մերձ հովուին ազանց։
Բուռն հարեալ Ատրիդեայ 'ի սուր դանակին եւ մերկացեալ,
Որ առ մեծի պատենիւք կախեալ կայր միշտ իւր սուսերին,
Ի սատւոյ կընճռին նուիրեալ երախայրիս, ամբարձեալ ձեռս,
Աղօթէր առ Արամազդ. արգիլացիք անդ համօրէն
Նըստեալ լուռ ըստ օրինի՝ Թագաւորին զընէին միտ։
Եւ յաղօթել իւր ասէ, զկնակն 'ի վեր յերկինս անդաւ.
Արդ նախ մեծն եւ վեհն 'ի գիս լիցի վըկայ ինձ Արամազդ,
Եւ Երկիր եւ Արեգակն, եւ վրէժխնդիրքըն Պատուհասք
Մարդկան 'ի խոր սանդարամետս՝ որ սուտերդումն ոք լինիցի,
Զի յաղջիկըն Բրիսէիս չէք իմ երբեք լեալ ձեռնամուխ,
Ոչ 'ի պատճառս անկողնոյ վարեալ բընաւ, կամ այլ իմիք,
Այլ 'ի վրանս իմ անմերձ եկաց մընաց եւ անշաղախ։
Իսկ թէ յայսմ իցէ ինչ սուտ, ցաւս յիմ գըլուխ կուտեսցեն դիք
Բազում յոյժ, որպէս եւ տան մեղուցելոյն երդմամբ 'ի նոյնս։
Ասաց, եւ զվարազըն փողոտեաց ժանտ պըղընձովն.
Եւ ըզնա Տալթիբիոս սպիտակ ծովուն 'ի մեծ անդունդս
Ընկէց թաւալ տըւեալ զըլոր՝ ձըկանց 'ի կեր. իսկ Աքիլլեւս
Յարուցեալ 'ի մարտասէր արգիացիս բարբառեցաւ.
Արամազդ հայր, մեծամեծ դու 'ի մարդիկ տաս վնասանս.
Զի բնաւ ոչ զոգիս 'ի լանջս իմ Ատրիդէս զըրգռէր երբեք,
Եւ ոչ ինձ 'ի հեճուկս՝ անսասանելի տանէր զաղջիկն,
Այլ Արամազդ աքայեանց յոգունց անշուշտ կամեցաւ մահ։
Բայց երթայք այժմ 'ի ճաշ, զի խըմբեսցուք զԱրեայ դուպար։
Զայս ասաց եւ արձակեաց ըզհրապարակն հապճեպելով.
Եւ նոքա սփռեալ իւրաքանչիւր 'ի նաւս իւրեանց։

Իսկ զընծայս՝ Միրմիդոնացիքն մեծանձնիք կալեալ խընամ
Եւ բարձեալ տարան 'ի նաւս աստուածայնոյն Աքիլլէսի .
Եւ եդեալ զայնս 'ի խորանսն եւ զետեղեալ ըզկանանսն ,
Ընչիւն ածին յերամակսն կայտառականք քաջարագօտիք :
Իսկ ապա Բրիսէիս , ոսկեղէնիկ Աստղկան նման ,
ԸզՊատրոկլ խողխողեալ տեսեալ խոց վիրաւոր 'ի սուր պղնձոյ ,
Հեղեալ ընդ նմա , եւ ճիչ բարձեալ ցրտեր ձեռօքն
Ըզլանջս իւր եւ զփափուկ ուլն եւ ըզգէմսն գեղեցիկ .
Եւ ասէ կականս ողբովք աստուածուհեաց համանման կին .
Պատրոկլէ , ինձ հեզիկս 'ի սիրտս ողբալ յոյժ սիրելի ,
Կենդանի թողի զքեզ ես՝ 'ի խորանէս աստի մեկնելն ,
Իսկ այժմիկ դարձ առաքեալ այսրէն գտանեմ մեռեալ ըզքեզ ,
Պետդ արանց . յիս ո՜ր անդադրուլ վիշտք 'ի վշտաց սաստին զկնաւոր :
Քանզի զայրըն զոր ետուն ինձ հայր եւ մայր իմ մեծարոյ՝
Տեսի հանդէպ քաղաքին վիրաւորեալ սուր պղընձով ,
Եւ զեղբարսն իմ զերեսեան ըզհամամայրս եւ զսիրելիս ,
Եւ նոքա բոլորեքին ըզվախճանին կրեցին օր :
Սակայն ինձ ոչ տայիր լալ՝ մինչ զայրս ըսպան Աքիլլեւս քաջ ,
Եւ զքաղաքըն աւարեաց ըզՄինեսեայ դիւցազնորդին .
Այլ հաստել զիս ասէիր աստուածայնոյն Աքիլլեսի
Ամուսին օրինաւոր , եւ 'ի Փթիա նաւուք տանել՝
Զհարսանեացն առնել խընճոյս ընդ երախանս Միրմիդոնաց :
Արդ ըզմիշտ հեզահամբոյրդ 'ի մահ մեռանեալդ՝ ողբամ անհատ :
Զայս ասաց արտասուաթոր , եւ կանայք կից հառաչէին
Բարբառնօք ըզՊատրոկլէ , սակայն անցնիւր զիւր աղէտս :
Իսկ զԱքիլլեւ ժողովեալ աքայեցւոցն երեցագոյնք
Պաղատէին առնուլ ճաշ , եւ նա մերժէր հեծեծելով .
Եթէ ինձ 'ի սիրելի ոք ընկերաց ունկըն դնէ ,
Մի աղաչէք զիս , աղաչեմ , 'ի կերակուր եւ յըմպելի
Նախ խմուլ սըրտի զմայլել . զի ցաւ սաստիկ հասեալ է յիս .
Ժուժկալեալ մինչեւ 'ի սպառ կացից ցըմուտ արեգական :
Ասացեալ զայս յուղարկեաց զայլ Թագաւորսն զամենայն ,
Երկոքեին մնացին Ատրիդք եւ Ոդիսեւս աստուածային ,
Եւ Նեստոր եւ Իդոմենեւ եւ ալեւորն հեծեալ Փիւնիքս ,
Փափագել անդուլ ուրախութեամբ ըզտրտմագնեցեալն , այլ ոչ իւիք
Սփոփէր 'ի սիրտ՝ մինչ չեւ մըտեալ ընդ արիւնոտ մարտին բերան :
Եւ ըսպէտ յիշատակաւն 'ի խոր յոգւոց ելեալ ասէ .
Եւ դու երբեմն ապաքէն , քան զամենայն ընկերս սիրեցեալդ հէք ,
Անձամբ քով 'ի վրանիս ըզճաշն համեղ ինձ մատուցեր
Անդանդաղ եւ ժիրաժիր , յաքայեցւոցն 'ի ճեպս 'ի փոյթս
Առ ձիախրոխտ տրովացիս զարտասուալին մըղել Արէս .
Իսկ այժմիկ վիրաւոր անկեալ դընիս դու , եւ իմ սիրտ

Անսուաղ 'ի կերակրոյ եւ յըմպելեաց, թէ եւ առ ձեռն,
Առ անձուկ քո, զի եւ ոչ աղխատագոյն ինչ գոյր կրբել,
Նա եւ ոչ իսկ եթէ զհօր իմոյ մահուան լսէի գոյժ, —
Որ թերեւս այժմ 'ի Փթիա խղճուցանէ զերամ արտասուս
Առ կարօտ այսպիսում որդւոյ, իսկ ես յօտար աղգէ
Ատելոյն վասն Հեղինեայ պատերազմեալ կամ ընդ տրովկեանս, —
Կամ զորդւոյ ինձ 'ի Սկիւրոս սնանի որդի սիրաբողբոջ,
Եթէ կեայ տակաւին Նէոպտողէմս աստուածատիպ:
Զի սիրտս ակն ունէր յառաջին ինձ միայնում մեռանելոյ
Ի ձիաւէտն Արգոսէ հեռի աստէն 'ի Տրոյիա,
Եւ 'ի Փթիա դառնալ քեզ, տանել զորդեակս 'ի Սկիւրոսէ
Յերագաթեւ նաւ սեւաթոյր, եւ ցուցանել նմա բոլոր
Զընտացուածս եւ զաղախնայս եւ զտունն իմ մեծ բարձրաձեղուն:
Զի զարդեօք ըզՊեղէոս կարծեմ մեռեալ անտարակոյս,
Կամ թէ գոյզն եւ տակաւին կենդանութեամբ հիւծեալ 'ի ցաւս
Յանհամբոյր ծերութենէ, եւ յամենայն ժամ ըսպասել
Բօթաբեր իմում գուժին՝ թէ երբ հասցէ մահուս գուժկան:
Զայս ասաց արտասուելով, հեծէր ընդ իւր աւագորեարն
Յուշ ածեալ իւրաքանչիւր զոր ինչ 'ի տան էին թողեալ:
Հայեցեալ յողբականսն Զքրոնեանն եկն 'ի գութ,
Եւ անդէն առ Աթենաս բարբառեցաւ զթեւաւոր բանս.
Դուստր իմ, անտես մինչ 'ի սպառ արարեր զայրն ազնուական:
Չիցէ՞ բնաւ ինչ խորհուրդ 'ի քում սրտի ընդ Աքիլլէս.
Աւանիկ առաջի բարձրածայրից նըստեալ նաւուցն՝
Ողբս առեալ աշխարէ զընկերակից իւր սիրելին.
Այլք 'ի ճաշ ընթանան, իսկ նա նօթի եւ անսուաղ:
Ե՛րթ աղէ, եւ զանուշակ զեղցն ըմպելիք եւ զխիստ անմահ
Կաթեցո 'ի սիրտ նորա, զի մի՛ գուցէ թէ սովեսցի:
Զայս ասացեալ գըրգեցոյց զինքնայորդորն իսկ զԱթենաս,
Որ հանգոյն հողաթեւեան ոսկեղաձայնին բըրդառոյ
Ոստուցեալ էջ յերկնից արփիաթեւեալ յօդըս վերին:
Նոյն ժամայն ընդ ճամբարն ատնուքին զէն աքայեցիք.
Իսկ նա 'ի սիրտ Աքիլլէի զանոյշ զանմահ զեղցն ումպ եւ չամբ
Ծորեցոյց՝ զի մի՛ սով դըժոխմանդ հասցէ 'ի ծունկսն,
Եւ ինքն 'ի յարկս հաստատաշէն՝ մեծազօրի հօրն էջ գընաց:
Իսկ նոքա յերագ նաւուց բացէ 'ի բաց տային հոսակ,
Եւ որպէս ձեան թանձրախուռն յԱրամազդայ թըռչին տարափք
Ցըրտաշիւնք՝ յապառաժէլ արփիածին Հիւսիսակի,
Նոյն յայնժամ խիտ ընդ խիտ 'ի նաւէնեւրոյն հոսէին կուռ
Գըլխանոցք լուսաճաճանչ փայլատակեալք, կըմբեայ վահանք,
Եւ զըրահք կարծրածածկոյթ կարաւանդօք, եւ հացի տէգք:
Նըշոյլքն յերկինըս զնային, երկիր բոլոր ծիծաղէր շուրջ



Digitized by Google

Ցերեւայց շողից պղընձոյն, գոռայր մարդկանն ոտնատրոփ թունդ,
Եւ 'ի մէջ նոցուն վառէր աստուածայինն Աքիլլեւս ։
Կրճտէին ատամունքն, աչք իւր իբրեւ հրոյ ճառագայթք
Ջահէին կայծակնացայտ, 'ի սիրտ իւր ցաւ դժոխըմբեր,
Մըռմըռեալ ինքն 'ի տրովեանս եւ զաստուածոյն զգենոյր պարգեւս,
Զոր աշխատ լեալ Հեփեստոսի եւ ճարտարեալ էր առ իւր պէտս ։
Եւ նախ ըզըրնապանսն արկեալ ագոյց շուրջ ըզբարձիւքն՝
Ըզգեղեցիկս եւ զարծաթի ճարմանդօք ընդելուզեալս ·
Եւ ապա զպատենաւորն լանջապանակն ըզկըրծիւքն առ ։
Եւ ած զարծաթազամ պղընձի սուսերն ուսընդաննովք,
Եւ եբարձ ապա զասպարըն մեծայաղթ եւ հաստատուն,
Որ բացարձակ զերդ լուսնի հատանէին փայլատակունք ։
Իբր 'ի ծովէ երեւեալ նաւավարաց բոցոյ ճաճանչ
Հրոյ բորբոքելոյ՝ առշօրելոյ 'նդ լերանց բարձունս
Ցատանձին ինչ հանդըրուան, բայց ըզնոսա բըռնի մըրրիկք
Ընդ անդունդսըն ձըկնաւէտ 'ի սիրելեաց վարեն 'ի տար,
Նոյն յԱքիլլեայ վահանէն 'ի գեղեցիկ եւ 'ի պաճոյճ
Փայլակն յերկինս ընթանայր ։ Ըզսաղաւարտն ապա բարձեալ
Եդ 'ի գլուխ իւր զամրականն, եւ գըլխանոցըն ձիաբաշ
Աստղանիշ ցոլս արձակէր, փողփողէին շուրջ գէսքն ոսկիք
Զորս արկեալ էր Հեփեստոսի խուռն համատիւ ըզգագաթամբն ։
Եւ փորձէր զանձն Աքիլլեւս դիւցազնայինն 'ի վառուածս անդ
Թէ 'ի դէպ գայցեն նըմին, տարբերիցին կայտառ անդամքն ·
Եւ էին նըմին 'ի թեւս, ամբառնային զհովիւն ազանց ։
Եւ եհան ըզնիզակն հայրենատուր 'ի դարանէն,
Ծանըր՝ մեծ՝ հաստահաստուտ, զոր ոչ ոք այլ յաքայեցւոց
Կարէր շարժել, այլ միայն հըմուտ 'ի ճօճն էր Աքիլլեւս,
ԸզՊելեանըն հացի՝ զոր սիրայնոյ հօրն ետ Քիրոն
Ի ծայրից Պելիոնին 'ի դիւցազանցըն սատակումն ։
Ձերիվարսն Աւտոմեդոն եւ Ալկիմոս հարեալ ըապատ
Լծէին, եւ սանձիք գեղապարոյրք պատէին շուրջ ·
Եւ հարեալ ճիմն 'ի կըզակըսն արըրկեցին զդանդաղանաւանդան
Ցետս 'ի կառսըն պընդակապեալս, եւ ըզմըրտրակն առեալ 'ի ձեռն
Ըզփայլունն եւ զխայելուչ՝ ոստեաւ 'ի կառսն Աւտոմեդոն ·
Եւ յետուստ՝ ըսպառազէն 'ի պատերազմ՝ եկ Աքիլլեւս
Փայլակերպ 'ի գէն 'ի զարդ իբր արեգակն արփիաճեմ ։
Եւ հրաման ահեղագոչ տայր հայրենի երիվարացն ·
Աշխէտ դու եւ Պիտակ, հըռչակաւոր ձագք Ճեպոտանեայ,
Այլ իմն այդ խորհեցարուք զերծուցանել ըզվարելակդ
Այարէն 'ի գունդ դանայեանց, իբրեւ յագիմք 'ի կըռուելոյ,
Եւ մի՛ զորէն Պատրոկլի թողջիք անդէն զի թաւալեալըր ։
Ի ներքուստ լըծոյն ասէ առ նա ժըրոտն Աշխէտըն ձի, —

Եւ անդէն խոնարհեցոյց ըզգլուխն, եւ բաշք իւր աղբախուռն
Ի վերուստ լըծոյն հոսեալք շուրջ ըզսամօքն հասին յերկիր,
Եւ զնա խօսուն եդ Հերա լուսածըղի աստուածուհին. —
Այժմ ըզքեզ դեռ անդարձեւ ապրեցուսցուք, քաջդ Աքիլլէս,
Բայց առ կամն կայ կորըստեան քեզ օրն, եւ մեք չեմք պատճառ,
Այլ աստուած մեծն եւ Օրհաս ճակատագրին ուժեղագոյն:
Զի եւ ոչ եթէ մերովս ինչ յուլութեամբ եւ դանդաղութեամբ
Տրովացըն Պատրոկլի առուծեանք զերծին զկարապաննակս,
Այլ արին յաստուածոց՝ զոր ծնաւ Լատոնըն վարսագեղ՝
Նա սպան անդ 'ի նախահառակսն, եւ Հեկտորի պարգեւեաց փառս:
Իսկ մեք՝ եւ Զեփիւռի շընչոյն 'ի գլոյգ ընթանայցեմք,
Զոր ասեն թեթեւագոյն. սակայն ահա եւ քեզ ճշգեան
Հրամանք են՝ յաստուածոյ եւ 'ի յառնէ պարտիլ ուժգին:
Ի խօսել նորուն զայս՝ զեղլին ըզձայն իւր Պատուհասքն,
Իսկ երագոտն Աքիլլէս ասէ առ նա ցասմամբ մեծաւ.
Է՛ Աշխեա, զի՞ գուշակես ինձ մահ, եւ չէ ինչ քեզ արժան.
Քաջ գիտեմ եւ ես ինձէն, հրամանք են ինձ մեռանել աստ
Ի հօրէս եւ 'ի մօրէս բացեալ, համայն եւ այնպէս իսկ
Ոչ կացից, մինչեւ առուծեանք պատերազմաւ ըզմայլեսցին:
Ասաց, վարէր գոչելով զասպարեզմբակ ձիսն յառաջեան:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Արամազդայ յառաջան ժողովեալ զգէս՝ Հրաման տայ երթալ պատերազմակից լինել մարտին՝ յոր կողմ եւ միտք իւրաքանչիւր վարեացեն։ Հերա, Պալլաս, Հերմէս, Պոսիդոն, Հեփեստոս իջանեն 'ի Թիկունս Յունաց, իսկ 'ի կողմ տրովադացւոց կան Արէս, Ապոլոն, Լետով, Արտեմիս, Աստղիկ եւ Սկամանդր։ Էնիաս նախ 'ի կռիւ կացեալ ընդ Աքիլլեայ, միգապատեալ զերծանի 'ի ձեռն Պոսիդոնի։ Աքիլլեւս 'ի խառն թշնամեաց կոտորելոց սպանանէ եւ զՊոլիդոր որդին Պրիամու. զՀեկտոր յարձակեալ յԱքիլլեւս՝ փրկէ Ապոլոն։ Քաջութիւնք Աքիլլեայ եւ նախճիրք տրովադացւոց։

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆԵՐՈՐԴ

### ԴԻՒՑԱԿՌԻՒ

Այսպէս 'ի զէն վառէին առ կոր նաւուցն աքայեցիք
Շուրջ ըզքեւ զանյագեալք 'ի պատերազմ, որդիդ Պելեայ,
Եւ տրովեանք յայնմ կուսէ՝ 'ի սարահարթ տափակողմանն։
Իսկ Արամազդ ետ Թեմիսի հրաման յատեան կոչել ըզդիս
Ի ծայրից բազմահովիտն Ողիմպոսի, եւ նա երթեալ
Պատուէր ետ 'ի տաճար անդր հասանել Արամազդայ։
Արդ ոչ ոք 'ի գետոց պակասէր բաց յՈվկիանէ,
Եւ ոչ ոք 'ի Հարսանցն բնակելոց 'ի զուարթ մայրիս,
Եւ 'ի վտակս աղբերականց ու'ի գալարուտ մարգագետինս։
Եւ եկեալ 'ի գաւիթս ամպրոպայինոյն Արամազդայ՝
Բազմեցան 'ի ողորկատաշ գահիւք զոր էր 'ի Հեփեստէ
Շինեալ հօրն Արամազդայ՝ հանճարամիտ ըղձօնութեամբ։
Այսպէս ապա յԱրամազդեան խմբէին յարկ, եւ Գետնադղորդն
Ոչ հեստեաց աստուածուհւոյն, այլ առ նոսին եկ 'ի ծովէն,
Եւ բազմեալ յակումբ նոցուն՝ զԱրամազդայ միտս որոնէր.
Առ ինչ գործեալ Շանթընկէցդ ձայնեցեր յատեան ըզդիս.
Ըզտրովեանց ինչ արդեօք եւ զաքայեցւոց առնուս խորհուրդ,
Զի սոցուն՝ այժմ հուպ ընդ հուպ վառեսցի մարտ պատերազմին։
Առ նա պատասխանի ամպայարոյցն ետ Արամազդ.
Խորհրդոցս 'ի վերայ հասեր արդարեւ, Երկրասասանդ,
Որոց վասն հոլովեցի. զի խնամ ունիմ կորուսելոցն։
Այլ սակայն կացից նստեալ յՈղիմպոսին ես յարտեւան,
Անդ դիտակէտ կալեալ զուարճացայց 'ի միտս իմ.
Իսկ դուք այլք երթայք հասէք 'ի տրովեցիսն եւ յաքայեցիսն,



Digitized by Google

Երկոցունց տուք Թիկունս, որպէս եւ միտք ուրուք խնդրեն.
Զի Աքիլլէս Թէ եւեթ ընդ տրովացիս մարտիցէ 'ի մարտ,
Եւ ոչ սուղ ինչ տոկասցեն երագոտին Պելիածնի:
Զի յառաջ եւ ընդ տեսիլն անգամ սարսեալ խուճապէին,
Իսկ այժմիկ՝ եւ զընկերէն ծանրացաւումն սրտամտեալ՝
Զանգիտեմ գուցէ զպարիսպն եւս քանդեսցէ տարաժամու:
Զայս ճառեալ Զրուանեանն, եւ կարեւոր բորբոքեաց խաղմ:
Ցարեան գնացին դիքն 'ի կռիւ, երկպառակեալք 'ի միտս իւրեանց.
Հերա, Պալլաս Աթենաս 'ի յասպարէս նաւատորմին,
Պոսիդոն երկրակալ, եւ օգտարար շահից Հերմէս,
Այն որոյ միտք զարդարեալ իմաստութեամբ էր հանճարով.
Ընդ նոսին գնայր Հեփեստոս՝ յոխորտացեալ յոյժ ալընդութեան՝
Կաղս 'ի կաղս եւ 'ի ներքոյ սրունքըն նրբինք գործէին գուն:
Իսկ Արէս սաղաւարտաճօճ՝ 'ի տրովացիս, եւ ընդ նմին
Գուշակըն գիսաւոր եւ Արտեմիս նետաձըգուարձ,
Լետով եւ Քսանթոս, եւս եւ Աստղիկ սիրաժըպիտ:
Մինչեւ դիք մեկուսի էին յարանց մահկանացուաց,
Խրախտային յոյժ աքայեանք, զի Աքիլլէս երեւեցաւ՝
Որ յերկարն էր դադարեալ 'ի դժընդակ գուպարածէն.
Եւ քըստմունք խիստ ընդ անդամս ամենեցուն գնային տրովեանց
Ընդ տեսիլըն զարհուրեալք երագոտին Պելիածնի
Սպառազէն փայլակնեալ՝ մարդասպանն Արեայ 'ի տես:
Իսկ յորժամ 'ի դուամարտակն արանց հասին Ողիմպականք,
Հեռ սաստիկ ամբոխագոյթ յարեաւ, գոչէր անդ Աթենաս
Կացեալ մերթ առ փոսոյն՝ որ ըստ պատնիշն 'ի դուրս հատեալ,
Եւ մերթ՝ առ բազմագոչ ծովուն ափանս ուժգին գոռայր:
Կանչէր անդուստ եւ Արէս՝ խաւարակուռ մըրրկի դունակ,
Մեծաձայն 'ի քաղաքին գլխէ գըրգեալ ըղտրովացիս,
Եւ երբեմն առ Սիմոյեաւ 'ի Գեղասար դիմեալ ըրըրուր:
Զերկոսին այսպէս կողմանս յորդորեալ դիքն երջանկաւէտք՝
Արկին 'ի դիրեարս, եւ ծարաշունչ բըրդեցին անդր 'ի մէջ գուպար:
Որոտաց ահեղաձայն եւ աստուածոց հայրն եւ մարդկան
Ի բարձանց, իսկ Պոսիդոն դղրդեցոյց 'ի ներքուստ
Զերկիր անվախճանական եւ զսարաբերձ լերանց կատարս:
Համօրէն ուղխապատար Իդայ հիմունք տատանէին
Եւ գագաթունք, եւ տրովեանց քաղաքն եւ նաւք աքայեցւոց:
Զահի հարաւ եւ յանդունդս Այիդոնեւս անդնդարքայեալ,
Սոսկացեալ՝ 'ի գահէն 'դատնեաւ, փարընչեաց, գուցէ զերկիր
Ի վերուստ պատառեսցէ դետնադըղորդըն Պոսիդոն,
Եւ կայեանք փեռեկեսցին՝ մահկանացուաց եւ անմահից
Ահաւորք, խըրթնատեսիլք, յորոց աստուածք իսկ քըստմընին.
Այնպիսի Թընդէր թոմբիւն՝ դիցն 'ի գուպար շահատակել:

Քանզի հանդէպ արքային Պոսիդոնի կայր հակառակ
Գուշակն Ապողոն թեթեւաթեւ նետից բարձող,
Եւ խաժակն Աթենաս աստուածուհին 'դդէմ Արիսի,
Իսկ Հերայի զխամամարտ ոսկեփրփրքին ամբոխադղորդ
Արտեմիսն նետաձգօս՝ կորովաձիգ աստուածոյն քոյր։
Լետովայ զինակ հզօրն եւ օգտարեր շահից Հերմէս,
Եւ ախոյեան Հեփեստի՝ մեծայաղթ գետն յորձախոր,
Որում դիք Քսանթոս անուն, եւ Սկամանդրոս կոչեն մարդիկ։
Այսպէս դիք դից զինակաց ելանէին, իսկ Աքիլլէս՝
Պրիամեան Հեկտորի անձկայր ներհակ գալ 'ի մարտ.
Զի լընուլ մանաւանդ քան զամենայն զբրդէր հոգին
Նորուն արեամբ զԱրէս ցլյագ՝ զանյաղթելին պատերազմող։
Զէնիաս նախ գէպուգէպ ըսպայագայթն արկ Ապողոն
Դէմ ընդդէմ Պելիադեանն, սաստիկ արկեալ 'ի նա կորով.
Եւ զորդւոյն Պրիամու զԼիկայոնի առեալ ըզձայն,
Նոյն 'ի կերպ՝ Արամազդայ ծնեան Ապողոն բարբառեցաւ.
Էնիաս, տրովեանց վեղուրիկ, քո յո՞վ գնացին ըսպառնալիքդ՝
Զոր 'ի նուագըս բաժակաց տրովեան պետացըն խոստացար,
Պելեանն Աքիլլեսի գնալ ախոյեան 'ի պատերազմ։
Փոխանակ Էնիաս պատասխանի տուեալ ասէ.
Առ ի՞մ, Պրիամեանդ, հրաման առ իս անձնս դու զայդ,
Վիրապին Պելիադեանի նահատակել յանկամս ընդդէմ։
Զի ոչ այժմ ինչ առաջին կամ Աքիլլեայ երագոտին,
Այլ յառաջ եւս այլ երբեմն աշտէիւ զիս փախոյց յԻդայ՝
Ցանկեայս արջառոց մերոց հասեալ ասպատակաւ,
Եւ քանդեաց ըզԼիռնեսոս եւ զՊեդասոս, բայց Արամազդ՝
Զօրութիւն յիս արծարծեալ եւ զծունկս երագս՝ ապրեցոյց զիս։
Եւ անշուշտ սատակէի յԱքիլլի ձեռս եւ յԱթենայ,
Որ նորին կարապետեալ ընծայէր լոյս եւ խրախուսէր՝
Ըզլելեգս եւ զտրովացիս 'ի պղընձաղէն կոտորել տէգ։
Վասն որոյ՝ չէք առն ումեք ընդ Աքիլլեայ կռուել ընդդէմ,
Զի կայ ցանկ մերձ առ նովին յաստուածոց որ վանէր զեղեռն.
Թող զի եւ ձիգք իւր թըռչին ուղիղ, եւ ոչ առնուն ըզկայ
Մինչեւ թափ ընդ մարդկեղէն եկեն մարմին. այլ թէ ոչ,
Աստուած զոյգ ձգէ գծէ զմարտին պայման՝ ոչ հեշտիւ յաղթ
Պարտեսցէ զիս, պղընձի թէպէտ լինել պարծեսցի ձոյլ։
Ցուցեալ Արամազդայ ծնեան Ապողոն ասէ արքայ.
Ո՛ն առեալ եւ դու զիւցազն՝ աղաչեա զդիսն յաւերժականս,
Զի ծնունդ եւ զքեզ Աստղիկեանն՝ Արամազդայ զդստերն ասեն,
Իսկ նա՝ 'ի ստորայնոյն է ումեքէ դիցանուշայ.
Քանզի նա՝ յԱրամազդէ, 'ի ծովայնոյն սա ծերունւոյն։
Արկ աղէ կըշիռ ըզպղինձն անյաղթ, եւ մի՛ ամենեւին

Դըժնէիւքըն խախտեսցէ բանիւք ըզգեղ եւ սպառնալեօք ։
Առաքեաց զայս՝ 'ի հոգին աղանց չքնաղեաց զօրութիւն մեծ ,
Եւ 'ի պղնձի հրաշէկ վառեալ՝ խաղաց գլխոյ 'ի Նահատակին ։
Ի լուսածգին հեռայէ ոչ ծածկեցաւ Ճեան Անքեսեայ
Մինչ յարանց անդ ամբոխէ՝ Պելեածնին երթայր գնալան .
Եւ ձայնեալ ըզգիս 'ի մի վայր՝ առ. նոսա բարբառեցաւ .
Պոսիդոն եւ Աթենաս , դուք 'ի խորհուրդըս ձեր աւաշէք ,
Թէ զինչ գործ առաջիկայ լինիս այս 'ի գլուխ ելանիցեն ։
Զինուորեալ 'ի պղինձ հրաշափայլ այդ Էնէաս դիմեալ չոգաւ
Ոստնել Պելեածնին , եւ Ապոլոն գրգռեաց Գուշակն ։
Այլ ո՛ն եկայք՝ զի զնա մեք դարձուսցուք յետս առ. 'ի նմանէ ,
Կամ թէ մի եւ Աքիլլեայ եկցէ 'ի մէնջ ոք զօրավիգն ,
Ազդել մեծ 'ի նա կորով , զի սըրտաթափ ինչ մի՛ լիցի ,
Եւ ասասցէ՝ թէ անմահիցըն վեհագոյնք սիրեն ըզնա .
Իսկ սոքա՝ չըքնաղք՝ որ յառաջմէ իսկ մինչեւ ցարդ
Գուն գործեն պաշտպանել տրովեանց 'ի մարտ պատերազմի ։
Իջաք մեք ամենեքեն յՈլիմպեայ յայս Ճակատամարտ ,
Զի նըմա 'ի տրովացւոց մի՛ հասցէ ինչ կըրել այսօր .
Իսկ ապա՝ կրեսցէ զոր զամ մի նըմա Բախտըն զամենայն
Ի ծնանել իւրում մանկաց , յորժամ երկնեաց ըզնա մայր իւր ։
Բայց Աքիլլեւս եթէ զայս 'ի դից ձայնէն չուսանիցի ,
Երկիցէ՝ 'ի պատահել ուրուք 'ի դից ընդ իւր 'ի մէգ .
Զի ահեղ իմն են աստուածք՝ դէմ յանդիման երեւելով ։
Առ նա պատասխանի ետ Պոսիդոն գետնադըղորդ .
Մի՛ , Հերա , եղեալ ըստ միտս ինչ ըզչարիր , չէ քեզ նըման ,
Եւ ոչ իմ ինչ կամք լիցին՝ գըրգռել 'ի կռիւ զաւպարածիգ
Մեզ զայլ դիս , զի զօրագոյն եմք առաւել եւս քան ըզնոյն .
Այլ երթեալ յուղւոյս արտաքս 'ի դիտանոց ինչ նըստցուք մեք ,
Եւ թողցուք ըզպատերազմ՝ արանց եւեթ լինել 'ի խնամս ։
Իսկ թէ Արէս կամ Գուշակն Ապոլոն ձեռն արկցեն 'ի կռիւ ,
Կամ կըրճիմ Աքիլլեսի անկեալ չտայցեն թոյլ մարտընչել ,
Նոյն ընդ նոյն եւ մեզ անդէն մըրցամարտի զարթնուցու խաղմ ։
Եւ կարծեմ հնազանդեալ վըճար եղեալ նոցին մարտամբոխէ՝
Դարձցին անդրէն յՈլիմպոս՝ 'ի հրապարակ անդր այլոց դից՝
Ընդ ձեռօքըս մերովք 'ի բուռն հարկէն պարտեալք ուժով ։
Զայս խօսեալ՝ խաղայր յառաջ կապուտաքէր Կապուտահերն
Ցորմափակ անդր Հերակլի դիւցազարմին 'ի բարձրակառ .
Զոր նըմա տրովադացիքն եւ Աթենասն եգին Պալլաս ,
Ապաւինել անդր ապրել 'ի նըհանգէն ծովականէ՝
Ի վանել սորա զինքն 'ի ծովափնէն 'ի դաշտըն կոյս ։
Անդ նըստաւ Պոսիդոն եւ միւս եւս դիք իւրոյ կողման՝
Բակ արկեալ շուրջանակի զուսովք իւրեանց ամպ անթափանց .

Իսկ միւս կողմն ընդ աղխարհաւն բարձրին Գեղասարայն ,
Շուրջ ըզգիւ , նստող Գուշակք , եւ զլինաւեր բուռն Արեսն :
Այսպէս ազգս նստեալք առաւ անաւ՝ ամնուլ խորհուրդ ,
Եւ հեզգայլին սկըսանել 'ի պատերազմն աղետաւոր .
Իսկ 'ի բարձունս Արամազդ նստեալ՝ հրաման տայր ըստիպէր :
Ծայր 'ի ծայր լըցաւ դաշտն յարի արանց ուերիվարաց՝
Ի պղինձ փայլատակեալ , եւ ընդ ոտիւքն երկիր Թընդայր
Ցընկմանաւըն գունդ 'ի գունդ , եւ արք երկու 'ի քաջաց քնքը
Խաղային յերկոցունց կողմանց 'ի մէջ գիմեալք 'ի կռիւ ,
Անքիսեանն Էնիաս եւ Աքիլլեւս աստուածազարմ :
Նախ Էնիաս շահատակեալ գիմեաց ընդդէմ բսպառնալեօք՝
Շարժեալ զհզօր գըլխանոցն , եւ ըզվահանըն հաստատուան
Առաջի կալեալ կըրծիցն , եւ զպըղնձին ճօճեալ նիզակ :
Իսկ Պելեանն յայնկոյս կուռէ եւ ախոյեան իբր առիւծ չար՝
Զոր արք արանց ամբոխ հնարին ճըգնին ըսպանանել
Շէնն ողջոյն ժողովեալ , եւ դայ նախ ինքն արհամարհոտ .
Իսկ յորժամ յարիական որք պատանեաց հարցէ 'ի ակզ ,
Ճողպատ կոկորդաբաց , ժայթքի փրփուր շուրջ ըզժանեօքն ,
Եւ հոգին իւր ամենի հառաչէ հառչէ 'ի սիրտ իւրում ,
Եւ ձետամբ յայս կոյս եւ յայն խարազանէ զկողմն եւ զազդերս ,
Եւ զանձն իւր մարտակեալ' գրգռեցանէ 'ի կռիւ մարտի ,
Նշկըրտեալ մոլեգին զայրանութեամբ խռժոռադէմ
Թէ յարանց զոք ծախիցէ , կամ ինքն յառաջս անկցի զընդգէն .
ԶԱքիլլեւս սըրտամըտութիւն եւ կորովն այսպէս յորդորէր
Ախոյեան ընդ մեծանձնին Էնիասայ դէմ պատահել :
Արդ յառաջ անցեալ ոգին եւ առ միմեանս մօտ հասեալ ,
Նախ քաջոտն Աքիլլեւս աստուածազան ասէ առ նա .
Զի՞ , Էնիաս , դու 'ստ ջոկդ եկեր այդչափ կացեր յառաջադէմ .
Միթէ սիրտ քո զքեզ ընդ իս պատերազմել յորդորեսցէ ,
Ակն եդեալ Թագաւորել ձիախրոխտից տրովադացւոց
Պրիամեան շըքով փառաց . սակայն Թէպէտ եւ սպանցես զիս ,
Ոչ մըրցանակ ըզպատիւն ընձեռեսցէ քեզ Պրիամոս ,
Քանզի են նորին որդիք , ինքն ողջամիտ եւ ոչ զառամ :
Կամ Թէ քեզ տրովեանք անդ ինչ զատուցին 'ի բնակութիւն
Քաջաբեր յայգեստան եւ յարտավար ընտիր քան զայլս
Եթէ զիս հարկանիցես . այլ դըժուարին կարծեմ քեզ զայդ :
Ինձ Թըւի՝ Թէ եւ այլուր զքեզ փախըստեայ տարայ տիգաւս :
Միթէ յուշ ինչ ոչ գայ քեզ , յորժամ յանդւոյ զքեզ մենաւորդ
Ցերագասուր ընԹացս ոտից խուճապեցի 'նդ Իդա լերինս .
Իսկ յայնժամ 'ի վանելդ՝ երբեք ուրեք չհայէիր յետս :
Եւ անտի հալածական փախստեայ գնացեր 'ի Լիւռնեսոս .
Հասեալ իմ հարըն Արամազդաւ եւ Աթենաւ՝ քանդեցի զայն ,

Եւ զգերեալ կանանին, յաղթական զըրկեալ օրէն,
Վարեցի, բայց Արամազդ փըրկեաց ըզքեզ եւ այլ աստուածք.
Այլ ոչ կարծեմ թէ եւ այժմ ըստ քում մըտի ըզքեզ թափեսցեն:
Իսկ ես տամ քեզ խըրատ, մեկնել 'ի բաց՝ խառնել 'ի վաշտդ,
Եւ մի՛ կալ ախոյեան արձանանալ իմ առաջի՝
Չեւ ինչ չարի պատահեալ. զի եղելումն՝ եւ խօլն է հմուտ:
Իսկ առ նա Էնէաս պատասխանի տըւեալ ասէ.
Մի, Պելեանդ, ինձ զերդ մանկան յուսար բանիւք արկանել ահ.
Բա՛ց գիտեմ եւ ես արդեօք կատակել զըրպարտս եւ ստանդապատակս:
Ըզմիմեանց գիտեմք եւ զազգ, եւ ըզծընօղըս մեր գիտեմք
Վաղեաց ըլսող համբաւուց եղեալ արանց մահկանացուաց,
Այլ ոչ դու ինչ իմոցն, ոչ ես քոյոցդ տեսանատես:
Ըզքեզ՝ 'ի քաջէն ասեն Պելեայ սերեալ ծընընդ,
Եւ 'ի մօրէ՝ 'ի Թետեայ 'ի ծովածին վարսագեղոյն.
Իսկ ես որդի մեծամեծին պանծամ լինել Անքիսեսի,
Եւ ինձ մայր է Աստղիկ, յորոց այսօր մին եւ կամ միւսն
Ողբասցեն զորդին սիրուն, զի տղայական չկարծեմ բանիւք
Որոշել մեզ 'ի միմեանց եւ 'ի կըռուոյս 'ի բաց դառնալ:
Իսկ թէ կամ է ուսանել քեզ զայսոսիկ, լինել հասու
Մերում ազգատոհմիս՝ զոր գիտեն շատք 'ի մարդկանէ,
Արամազդ ամպըռպայքն ծընաւ նախուստ ըզԴարդանոս
Որ կառոյց ըզԴարդանիա, զի չեւ շինեալ էր 'ի դաշտի
Նուիրականն Իլիոս քաղաք մարդկան յօդաձայնից,
Այլ յԻդայ բիւրակնեայ դեռ 'ի թիկունսն բնակէին:
Դարդանոս որդի ծընաւ ըզթագաւորըն զԵրիքթոն,
Որ մեծացաւ մեծութիւն քան զըմաւ մարդիկ մահկանացուս,
Որոյ ձիք մատակք 'ի մարգս արածէին երեք հազարք
Խաղացեալ ցընծացեալ մատաղերամ յաւանակօք: —
Ի սոցա հարեալ 'ի սէր եւ Հիւսիսակ յարօտըն անդ՝
Ընդ նոսին անկաւ 'ի կերպ կապուտաբաշ երիվարի,
Եւ նոցին սաղմնաւորեալ՝ ծընան մըտրուկս երկոտասան,
Որ 'ի խայտալն անդ իւրեանց 'ի կենսատուր երկրին երեսս՝
Արշաւեալ ընդ ծայրս արդեանց հասկաց՝ եւ ոչ բեկանէին.
Իսկ թինդս սաւեալ ընդ ծովուն մինչ կոյտակէին լայն մըկանունս,
Ընդ ծայրըս ծըփմանցն ընթանային սպիտակ ալեաց: —
Երիքթոն ապա ծընաւ ըզՏրովս արքայ տրովադացւոց.
Իսկ Տրովայ քաջածնունդք եղեն ապա մանկունք երեք,
Իլոս, Ասսարակոս եւ զուգաստուած Գանիմեդէս,
Որ 'ի մէջ մահկանացու մարդկան գըտաւ ամենագեղ,
Զոր եւ դիք վերացուցին՝ Արամազդայ կալ մատռուակ
Առ իւրում գեղեցկութեան, զի՛նդ անմահիցըն բնակեսցէ:
Իսկ Իլոս ծընաւ որդի զըսքանչելին Լաւոմեդոն,

Եւ ծընաւ Լաւոմեդոն ըզՏիթոնոս եւ ըզՊրիամ,
ԸզԼամպոս եւ զԿղիտիոս, զՀիկետաւոն արեսեան ոստ.
Ասսարակոս ըզԿապիս, սա զԱնքիսէս ծընաւ զաւակ,
Անքիսէս՝ զիս ծընաւ, եւ Պրիամոս զՀեկտոր դիւցազն։
Ի զարմէ սոսա պանծամ եւ յարենէ սոսա լինել։
Բայց Արամազդ ըզմարդկան աճէ՝ նուազէ զարութիւն,
Որպէս եւ կամք իցեն իւր, զի նա բնաւից է ուժգնագոյն։
Այլ եկ մի մանրիկ մանկանց պէս զայսոսիկ բարբանջեսցուք
Ի միջի սոսա կացեալք 'ի ճակատուս պատերազմի։
Վասն զի գոյ երկոցունց ասել բազում ինչ յոյժ նալեր,
Մինչեւ ոչ հարիւրաթի անգամ նաւու զբեռանցն բառնալ.
Քանզի ճապուկ է մարդկան լեզու, եւ խօսք 'ի նմա յոլով
Եւ պէսպէս, եւ 'ի ճարակ՝ արօտ բայից ցանդ աստ անդ ճախ.
Բան զոր դուն խօսիցես, ըզնոյն նըմանն եւ լուիցես։
Իսկ մեզ զի՞ պիտոյ են կագք եւ խաղմանական զըժտու պայքարք՝
Կալ մըրցել եւ զըժտել միմեանց ընդդէմ իբրու զկանայս,
Որ հոգեհաշ հեռեւ ջերեալք՝ կռուին 'ի փողոցս յանդըս դատեհեց,
Ի դէպ յաճախ եւ անդէպ, զոր եւ սադրէ սրտմտութիւն։
Բայց բանիւք՝ զիս զփափագողս յարութենէ ոչ դարձուցես
Չեւ պղընձով դէմ յանդիման պատերազմեալ. Եկ հա՛պա հապայ
Ըզմիմեանց առցուք ըզհամ 'ի պղընձակուռ տէգ նիզակաց։
Ասաց վարեաց զհըզօր մըկունդն յահեղ ասպարն 'ի սոսկալի,
Եւ վահանըն մեծայաղթ շուրջ մըռընչեաց յաշտէին սայր։
Իսկ Պելեանն յանձնէն 'ի բաց կալեալ զասպարն հուժկու բազկաւ,
Զանգիտեալ 'ի միտըս իւր, գուցէ նիզակն երկայնաստուեր
Մեծանձինն Էնէասայ՝ հեշտիւ ընդ թափ անցանիցէ.
Մանկամիտ, որ ոչ 'ի կուրծըս ոչ արար յիշումն սրտին,
Զի չէին դիւր ինչ պարգեւքն աստուածեղէնք պարտանչելութեանք
Տեղի տալ կամ նըկուն լինել արանց մահկանացուաց։
Եւ ոչ յայնժամ Էնէայ քաջամարտին տէգ կորովի
Զասպարն եհերձ, աստուածոյն պարգեւ ոսկին կալեալ ըզդէմ.
Ընդ կըրկին Թիթղունս եանց, սակայն էին այլ եւս երեք.
Զի պատեանս ած հընգեկին կըռեալ կոփեալ Կաղատանւոյն,
Զերկուսին պղընձաձոյլս, երկուս 'ի խորս անդ յանագէ,
Իսկ ըզմին ոսկեղէն, եւ անդ կասեաւ գեղարդն հացի։
Ապա երկրորդ Աքիլլեւս զերկայնաստուերն ընկէց մըկունդ,
Եւ եհար 'ի բոլորշի վահանն Էնեայ զվերջին ծնօտին՝
Ուր անօսր յոյժ ընթանայր պըղինձ, եւ յոյժ անօսր արկեալ
Էր կաշին արջառենի, եւ թափ թռուցեալ եղ սըլլացաւ
Հացեն Պելիոնեան, եւ ընդ իւրեւ թընդաց ասպարն։
Էնեայ նըգըճեալ կըծկեալ՝ զասպարն 'ի բաց կալեալ յանձնէն
Ար ահէն, եւ սլաթափիչ նիզակն ընդ ուսն՝ եկաց յերկիր,

Խորտակելով զերկոսին պարածածուկ վահանին ծիրս ։
Ճողոպրելով յերկայն անդէն եւ յարուցեալ կանգնեցաւ կաց ·
Ցաւ սաստիկ անհընարին զաչօքն 'ի մուժ մըռայլեցոյց ,
Սոսկացեալ՝ զի անդ հուպ վարսեալ կայր զէնն առ իւր ընթեր ։
Այլ Աքիլլի ձեռըներթաց զինեալ սուսեր սուր 'ի բըռին
Գոչելով ահագնաձայն , անդ Էնիաս առ բըռնալեր
Վէմ մի մեծ՝ գործ անհեդեդ , զոր չէր բերել արանց երկուց
Որպէս առ մեզ են մարդիկ , եւ նա միայն խաղ ձօձէր զայն ։
Եւ անդէն Էնիաս խոյացեալըն կոծէր ժայռին
Ի գըլխանոց , կամ յասպարն՝ որ զենըն 'ի ժանտ փըրկեաց մահուն ,
Եւ Պելեանն հուպ մատուցեալ՝ սուսերըն ըզնա յոգի զատէր ,
Եթէ չէր զեանադղորդեն Պոսիդոնի սուր նըկատեալ ,
Որ անդէն յանմահից 'ի դէցն երասա բարբառեցաւ ·
Ո՛հ , ցաւէ ինձ , ով դիք , ընդ մեծանձինն Էնիասայ ,
Որ իջցէ 'ի դժոխս ընդ հուպ՝ Պելիասեանին պարտեալ 'ի ձեռս ,
Ունկընդիր լեալ շըշընջմանց կորովաձիգն Ապողոնի ·
Խելաշո՛ւրջ · ոչ օգնեսցէ ինչ նա նըմին 'ի դառն մահուան ։
Իսկ ընդէր էջէ սըմա յանձն իւր անպարտ դըլել աղէտ
Զուր փոխան վըրժուց այլոց , որ ինքն անդուլ ձօնէ նըւէրս
Աստուածոցն հաճոյականս՝ 'ի մեծ երկինս օթացելոց ։
Այլ եկա՛յք աղէ զնա մեք ապրեցուսցուք 'ի մահուանէ ,
Մի գուցէ եւ Զըրօսանեանն խաղ բարկասցի , թէ Աքիլլէս
Ըսպանցէ զնա , զի նըմա ճակատագրեալ է զերծանել ,
Զի մի զարմն անզաւակ եւ աներեւել բարձցի ընաջինջ
Դարդանուն՝ զոր Զըրօսանեանն 'ի վեր քան զամենայն սիրէ զորդիսն
Ըզսերեալըն յէջքենէն եւ 'ի կանանց մահկանացուաց ։
Զի վաղ ատեաց Զըրօսանեանն ըզՊրիամու տոհմին զըրահ ·
Եւ արդ անշուշտ զօրութիւն Էնեայ արժանեացըդ տիրեսցէ ,
Եւ որդիք որդւոց իւրոց՝ որ 'ի յապայս գալոցեն 'ի ծնունդ ։
Եւ նըմա պատասխանի մեծապատիւ աչեղն Հերա ·
Դու քեզէն , Երկրադղորդ , 'ի միտըս քո խորհեաջիր զայդ ,
Թէ արդեօք զԷնիաս ապրեցուսցես թէ թողուցուս
Ընկանել քաջին՝ 'ի ձեռս Աքիլլէսի Պելիասեանին ։
Քանզի մեք՝ բազում երդմունըս կնքեցաք ես եւ Աթենաս
Ցասմնի հրապարակի դիցն անմահից բոլորեցունց ,
Մի երբեք պաշտպանել յաւուր չարի զտրովադացիս ,
Եւ ոչ այլոյն թէ Տրոյա հըրդեհակեզ տոչորեսցի ,
Եւ մանկունքն աքայեցւոց արիաքանք հարցեն ըզհուր ։
Եւ լըւեալ զայս Պոսիդոն զեանաստատն՝ յարեաւ գընաց
Ի ճակատ պատերազմին եւ 'ի շըռինդըն զեղարդանց ,
Եւ եհաս ուր Էնիաս եւ Աքիլլեսն էր վեհափառ ։
Եւ անդէն վարվաղակի յաչս Աքիլլեայ Պելիասեանին

Ցանկաց մէգ շամանդաղեալ, եւ ըղձացեալն աղջամղջականս.
Ձըգեալ հանեալ յաստղարէ անուր մեծանձն Էնիասայ՝
Եդ առ ոտս Աքիլլէսի, եւ զէնիաս յափըշտակեալ
Վերամբարձ 'ի գետնոյն՝ ընդ խուռնախիտ գնդացաղանց կարգս
Ու՛նդ շատ ձիոց ոտնեաւ վարեալ յաստուածեղէն ձեռան Էնիաս,
Եւ 'ի յետին եհաս ծագ շարաշըրշուկ գունդարանին,
Ի տեղին՝ ուր Կաւկոնայք 'ի պատերազմ առնուէին զէն:
Առ երի նորին եկեալ եւ Պոսիդոն երկրասասան՝
Կարդաց առ նա եւ ասէ յերագաթեւ ձայնի բարբառ.
Էնիաս, ո՛վ ոք 'ի դից դըրդէ զաղաշեալդ ընդդէմ այդպէս
Ախոյեան վայրենամիտ Պեղէասծնին յառնել 'ի կռիւ՝
Որ քան զքեզ ուժեղագոյն եւ սիրելին է անմահից.
Այլ դու երբ եւ դիպեսցիս ուրեք նմին՝ 'ի բաց խուսեա,
Զի քան զօրհասս առաւժամ 'ի դըժոխոց մի անկցիս տուն:
Իսկ երբեւ մահ եւ հրամանք հասանիցեն Աքիլլէսի,
Խրախուսեալ այնուհետեւ ընդ նահատակաւն կռուեսջիր,
Զի եւ ո՛չ ոք այլ ընդդէմ յաքայեցւոց հարցէ 'ի մահ:
Ասացեալ զայս, զամենայն տուեալ պատուէրս, եթող զինքն անդ
Ի նոյն յաչացն Աքիլլի ցըրուեաց ըզմէգն աստուածազօրն,
Եւ անդէն նա նոյնժամայն բացահայեաց տեսեալ աչօք
Եւ յոգւոց ելեալ ասէ ինքըն ցիւր անձըն մեծասիրտ.
Մեծ, ո՛վ զէք, ըսքանչելիս իմն աչօք տեսանեմ զայս.
Ի գետնի աստ կայ նիզակս, այլ նըշմարեմ զայրն ոչ ուրեք՝
Առ որ զայն արձակեցի՝ կըրթեալ զարեան իւր հասանել:
Արդ ուրեմն եւ Էնիաս էր անմահից դից սիրելի,
Եւ, ես այնպէս ինչ 'ի զուր կարծէի զնա մեծաբանել:
Ո՛ղջ երթիցէ, ոչ եւս այլ ընդ իս 'ի փորձ խիզախեսցէ,
Այն որ այժմ իսկ մըտադիւր 'ի մահուանէ փախեաւ կորեաւ:
Օ՜ն հապա քաջամարտից դանայեցւոցս հարեալ խրախոյս՝
Ի հանդէպ ընդ այլ տրովլեանս անցեալ մըտից ես շահատակ:
Ասաց՝ թըռեաւ ընդ դասակարգսն, եւ մին միում ասայր քաջալերս.
Մի՛ եւս արդ 'ի տրովլեանց, դիւցազն աքեանք, առնուցուք խոյս,
Այլ առէք, այր ընդ այր ճակատեսցի մըխեալ 'ի կռիւ:
Ինձ թէպէտ եւ քաջի՝ առաջնակ է յոյժ դըժուարաձեռն՝
Ընդ այսքան խուռնս անցանել եւ մաքառել ընդ բոլորից.
Նա եւ ոչ Արէսն աստուած անմահ եւ ոչ եւս Աթենաս
Ընդ կոկորդ այսչափ խաղմից թաւալեսցի պատերազմեալ:
Իսկ յոր եմըս կարող ձեռօք՝ ոտիւք եւ զօրութեամբ,
Եւ ոչ դոյզն ինչ յայնցանէ կասեցուցից տուեալ հրաժեշտ,
Այլ թափ անցեալ ընդ ամենայն մըխիմ ճակատն, եւ ոչ կարծեմ
Թէ ուրախ ոք 'ի տրովլեանց լիցի հասեալ աշտէիս հուպ:
Զայս ասաց 'ի խրախոյս, եւ տրովլեացւոց արքն Հեկտոր

Հրաման տայր աստուածութեանն, զանձն Աքիլլի 'նզգեմ տալ ասէր·
Մեծանձնիքդ արտաքացիք, մի՛նչ երկընչիք 'ի Պելիդեայ,
Զի բանիւք՝ ես ընդ անմահս իսկ գոտեայց 'ի պատերազմ,
Իսկ 'ի տէգ՝ դըժուարամարտ, զի են կարի կարշնեղագոյնք:
Ոչ Աքիլլէս ամենայն բանից իւրոց առնիցէ գլուխ,
Այլ իցէ զոր կըկնեսցէ, իցէ զի՛նչ մէջ հատցէ կըճեալ:
Ես նըմին ելից զդիմակ, թէ ձեռք իցեն հուր բոցանիշ,
Թէ ձեռքն իցեն բոցանիշ, կորով նըման յերկաթ հրաշէկ:
Զայս ասաց խրախուսանօք, տէգս ամբարձին արտեւանք ընդդէմ,
Որոց 'ի մի խառնեցաւ կորով, եւ գոռք յարեան կանչից:
Ապողոն յայնժամ Գուշակն հուպ մատուցեալ ասէ ցՀեկտոր·
Հեկտոր, մի՛ բնաւ յառաջս ընդ Աքիլլեայ նահատակիս,
Այլ այդրէն կացեալ 'ի խուռն եւ 'ի շըշուկ՝ ընկալ ըզնա,
Մի՛ զքեզ 'ի մօտ տիգախոց կամ առնիցէ սուսերահար:
Զայս ասաց, եւ Հեկտոր եմուտ անդրէն յարանցն ամբոխ՝
Պակուցեալ յաստուածոյն 'ի լուր ձայնին բարբառելոյ:
Իսկ Աքիլլէս քաջալանջ սաստիւ ուժով 'ի տրովացիսն
Ահագին գոչմամբ, եւ նախ յոյժ եհար զԻփիտիոնի՝
Ըզքաջն Ոտրինտեան՝ ըզզօրավար ազգայնց բազմաց,
Զոր ծընաւ հարսըն Նէիս շինակործանն Ոտրինտեաւ
Ի ձիւնեղէն Տմոլեայ ստորոտ՝ 'ի Հիդեայ ճոխ ժողովրդեան·
Ըզդիմեալըն դէպուղիղ՝ տիգաւ գիւցազն հար Աքիլլէս
Ըկէշտ ընդ մէջ կատարին՝ որ ընդ երկու հերձաւ ողջոյն·
Նա թնդեաց եւ թաւալգլոր, եւ Աքիլլէս պանծայր գիւցազն·
Անկեա՛լ կաս, Ոտրինտեան, քան զամենայն այր ահաւորդ,
Աստ քեզ մահ, բայց է քո տոհմ հուպ առ Գիգեան ծովակըն,
Ուր են քեզ անդաստանքըն նըւիրեալք հայրենատուրք
Առ ձըկնաւէտն Հիլլոսի եւ յորձնեռանդըն Հերմոսիւ:
Զայս խօսեցաւ պարծ պանծանօք, զաչըս նորա նա պատեաց խաւար,
Զոր երիվարք աքայեանց ընդ հեցս անուոցն յօշոտեցին
Յառաջնումն անդ ճակատուն· իսկ նա յաւել զԴեմոլէոն
Զկորովի զօրավիգըն մարտի զծնեան Անտենորեան,
Եհար յերանունսն ընդ գըլխանոցըն պղընձածնօտ·
Ոչ ժուժկալեաց սաղաւարտըն պղընձաձոյլ, այլ թափ ընդ այն
Դիմեալ տիգըն՝ եբեկ զոսկըրն, եւ ուղեղն 'ի ներքըս անդ
Խառնակեցաւ բովանդակ, եւ զամեհին արար նըկուն:
Եւ ապա զՀիպոդամաս, մինչ 'ի կառացն ոստնոյր նա գետ
Եւ յերեսաց իւրոց փախնոյր, 'ի թիկնամէջն եհար տիգաւ:
Ի թափել հանել զոգիսըն պոռոչէր նա իբրեւ ցուլ՝
Զի բռնչէ ածեալ ընդ քարշ զՀելիկոնեան արքայիւն
Ի ձըգել պատանեաց, եւ Գետնադղորդն յայնըս ցընծայ·
Այսպէս տարա 'ի մըռընչելն՝ արի ոգին զոսկերսն եթող:

Նա երթայր նիզակաձօձ յաստուածատեսըն Պոլիդոր
Ցորդեակըն Պրիամու՝ զոր չարձակէր հայրն 'ի ճակատ,
Զի յորդիսն էր կըրտսեր ծնընդեամբ եւ իւր սիրասընունդ,
Եւ ոտիւք թեւթեւութեամբ զանցուցանէր զամենեքումբք.
Եւ 'ի պատհուռն տըղայօրէն զոտիցըն շնորհ ցոյցս տանելով
Խոյանայր 'ի նախապատակսըն մինչ զոգին կորուսանել։
Ընդ քաջոտն Աքիլլեւս դիւցազն եհար ընդ արշաւելն
Ցաշտէին անգ՝ յողնափէջըն ուր կամարին ոսկի ճարմանդք
Խառնէին ընդ միմեանս եւ խաւ 'ի խաւ պատէր զըրահ,
Եւ սըլաքն նիզակին պատառեաց ել թափանց ընդ պորտն.
Ինքն գուժեալ դըեցաւ 'ի գուճս, եւ ամպ մըթին անկաւ զնովաւ,
Եւ 'ի կոր հակեալ՝ ձեռօք զընդերսն առ ինքըն ժողովեաց։
Իսկ Հեկտոր իբրեւ ետես ըզհարազատըն Պոլիդոր
Զի զաղիսն առեալ 'ի ձեռսն՝ 'ի գիլ ու 'ի գլոր թաւալայր յերկիր,
Մածեաւ յաչսըն մառախուղ, եւ ոչ եւս այլ համբերեաց կալ
Ընդ երկար 'ի բացէ, այլ Աքիլլեայ եւ ընդ առաջ
Ճօճելով անգ սայրասուր, իբր բոցաւոր. իսկ Աքիլլեւս
Ընդ տեսանելն եւ ցոլացաւ եւ խրոխտապանծ ընկէց բարբառ.
Ահաւասիկ այրն որ 'ի սիրտըս իմ եհար խոց կարեվէր՝
Ըսպանեալ ըզմըտերիմն իմ կարեւոր. ոչ եւս անշուշտ
Ի միմեանց խուսափեսցուք ընդ փողս ուղեաց պատերազմիս։
Ասաց, եւ առ դիւցազն Հեկտոր գոչեաց խոժոռ աչօք.
Ե՛կ մօտ եկ, զի փութապէս 'ի կորըստեան հասցես 'ի ծագ։
Աներկիւղ ընդ նմա խօսեցաւ առէ Հեկտոր կորդակաձօձ.
Մի, դու Պելեանդ, ինձ զերդ մանկան յուսար բանիւք արկանել ահ,
Զի գիտեմ եւ ես արդեօք կարել զըրպարտս եւ սանձարձակս.
Գիտեմ բա՝ դու քաջարի, ես քան ըզքեզ կարի նուաղ.
Այլ սակայն, բանդ այդ 'ի գիրկս անդ աստուածոց զընի առանդ,
Թէ արուպս առնից արդեօք զոգիդ՝ խոցեալ ըզքեզ անգահար,
Քանզի է եւ մերընդգէս խեղում սըլաքն իւր սայրասուր։
Ասաց ճօճեալ ըզնիզակն եւ արձակեաց, բայց Աթենաս
Ցեալըս զայն դարձոյց շընչիւ 'ի յԱքիլլեայ գեղափառէ
Փըչելով զոյգն ինչ 'ի նոյն, որ 'ի դիւցազն Հեկտոր շըրջեալ
Երթեալ ընդ կրունկ առաջի ոտից իւրոց անկաւ յերկիր։
Աքիլլեւս սակայն յորդոր դիմեաց մըլեալ 'ի մահ նըմին
Բարբառով ահեղագոռ, այլ Ապոլոն շաղեաց ըզնա
Դիւրագոյն իբրեւ աստուած, պատեալ 'ի թանձըր մառախուղ։
Երիցս այնուհետեւ հրոսեալ դիւցազն Աքիլլեւս,
Երիցս ըզմառախուղն բաստուարամած վիրաւորեաց,
Իսկ 'ի չորրեր նըւագին աստուածօրէն յարձակեալ՝
Սպառնալեօք ահագնացոյս բարբառեցաւ զթեւաւոր բանս.
Միւսանգամ փախեար, շուն, 'ի մահուանէ. կայր մն եւ մն

Տօտալըւա քեզ պատուհաս, բայց Ապողոն Թափեաց Գաւաղակին,
Որում 'ի գալ քեզ 'ի շաւիղըն ուըլըզգաց՝ մաղթես Թերբեա.
Այլ ոն եւ ոն, վերըլսամին գերալեալ՝ ընդ քեզ վճարեցէց,
Եթէ դը յաստուածոց ուրեք եւ ինձ կայ զօրավէր.
Բայց սա այլը այժմիկ մատեայց՝ զոր դը հասցէ ինձ ըմբըռնել։
Ասացեալ զայս՝ աշտէինն ընդ պարանոցն եհար զԴրիոփս,
Որ զի ստապատ տա. ասոն ամեկաւ. եւ ինքն անդէն Թաղեալ ընդ նա՝
ԶԴեմուքոս Փիլետորեան՝ ընդաշխարհօրն եւ պյապղթանգամ
Խոցեալ 'ի ծունկըն ահգամ՝ արգել ընդ նա եւ կասեցոյց,
Եւ ընկեն՝ սուսերաւն հարեալ մեծաւ՝ կորզեաց զհոգին։
Ապա զորդիս Բիասայ զԼաւոգոնոս եւ զԴարդանոս՝
Խոյացեալ յերկուսին՝ եւ 'ի կառացն յերկիր ընկէց,
Ըզմին 'ի տէգ վիրաւոր, սուսերահար զմիւսն 'ի մօտոյ։
Եւ ըզՏրովս Ալաստորեան, որ եկն 'ի ծունկս իւր փարեցաւ,
Զի Թերեւս անխնայելով արձակեսցէ զնա կենդանւոյն,
Մի զարեւն հասարակցէ՝ զայգ հասակին եկեալ 'ի գութ։
Անմար՝ զայն ինչ ոչ գիտէր, Թէ չէր յողոք ինչ ածելոց.
Քանզի չէր հեզահոգի դը այրն եւ ոչ ընդզօնամիտ,
Այլ կարի բըռնախոյեան, բայց բուռն հարեալ կայր նա զծնկացն
Աղերսել խղճ լինելով. խոկ նա մըխեաց 'ի լեարդն ըղսուրն,
Եւ լեարդըն վայթեցաւ, եւ Թոյրաթուխ անդուստ արեան
Ել եկից ընդգոգ նորին, զաչս անշընչին կափոյց խաւար։
Իսկ նորա Մուլիոսի մօտ հասեալ յունկն եհար մըկունդ,
Եւ ըըլաքըն պղընձաշէկա նոյնհետայն ել ընդ միւսն ականջ։
Նա զորդւոյն Ագենորի զԷքեկլոսին կատարին ընդ մէջ
Կոփեալ հարուածեաց 'ի մեծակոթ վաղակաւորըն,
Եւ արեամբ տապացեալ ջեռաւ նըրանըն բովանդակ,
Եւ կալաւ զաչըս նորին մահ ծիրանի եւ բուռն օրհաս։
Եւ ապա զԴեւկալիոն, ուր արմընկանն յօդքն ածանաք՝
Անդ ընդ նա պղընձի սայրիւն 'ի սերկելին խոցեաց բազուկ.
Նա ծըղւոյն ծանրացեալ՝ եկաց նըմա, զմահն հուպ տեսեալ,
Սա Թրով շեշտեալ զպարանոցն՝ ոստոյց 'ի բաց ըզգլուխ նորուն
Հանդերձ սաղաւարտիւն, եւ ցըռկեցաւ յողանցն ուղեղն,
Եւ ինքն ընդ գետին տախտապարեալ տարածեցաւ։
Եւ անցեալ նորա գնաց յընտրական Ձեա Պիրոոսի՝
Ի Հռիգմոս, 'ի սիրաւէտըն Թրակիոյ եկաւորեալն,
Եւ եհար տիգաւն ընդ մէջ, պղընձն 'ի Թոքան հաղըստեցաւ,
Եւ Թաւալգլոր եղեւ 'ի կառացն. իսկ նա զսպասաւորն Արէիթոոս՝
Ի շրջելն յետս ընձիանն՝ եհար 'ի մկունդ սուր ընդ միջնոյն,
Եւ վըրդովեցաւ 'ի կառացն, եւ երիվարք իւր խառնեցան։
Որպէս հուր սաստուածահրաշ ընդ խորաձորս երաշտ լերին
Մոլեգնեալ ճարակի, եւ Թանձրախուռն հըրդեհէին պուրակք,

Եւ մըրըկեալ ընդ ամենայն փոթորկէ հողմ ըզբոցոյն ցոլս .
Այնպէս նա շուրջանակի մոլեալ տիգաւն տատանածօրէն ,
Փաղաղէր զ՚ի մահ նուիրեալսն , եւ Թուխ երկիր յարիւն խաղայր ։
Որպէս ոք զի ածիցէ զլայնաճակատ եզինս ՚ի լուծ՝
Ի կասուլ ըզըլըմնագոյն գարին ՚ի կալ յօրինուորակ ,
Եւ բառաչոտ արջառոցն ընդ կըճղակօք փըշրին փութով ,
Նոյն երիվարք սալասըմբակք ընդ քաջալանջն Աքիլլեաւ
Առաթուր կոտորէին ըզդիականս եւ ըզվահանս ։
Ներքուստ համակ սեռն էր կառացն եւ շըրջապատն յարիւն Թաթախ ,
Ցոր կայլակեալ սըրըսկէին ՚ի սըմբակաց ձիոցըն ցայտք
Եւ յանուոցն անուի հեցից · խոկ Պելէանն ուշ անէր փառաց ,
Թաթաւեալ զանպարտելի ձեռսն յապաժոյժ եւ յապաւառ ։

Digitized by Google

Հ Ո Մ Ե Ր Ի

# Ի Լ Ի Ա Կ Ա Ն

ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Աքիլլէս հալածական տանի զտրովացիս, զորս 'ի քաղաքն, զորս 'ի գետն Սկամանդր. գերի վարէ երկոտասան պատանիս՝ զոհել ոգւոյն Պատրոկլի: Այլ եւ այլ մահուանք. մրցումն քաջին ընդ Սկամանդրի, յորում ճողոպրի 'ի ձեռն Հերայ եւ Հեփեստոսի: Մարտ դից ընդ միմեանս: Ագենոր ախոյեան ելեալ Աքիլլեայ, թափէ զնա Ապողոն, եւ ինքն առեալ զկերպարանս նորա՝ պատրէ զԱքիլլէս զհետ պնդել իւր եւ ընդ այն տարածի անկանել 'ի կատաղին, եւ տալ պարապ տրովացւոց ամփոփելոյ 'ի քաղաքն:

# ՀՈՄԵՐԻ

# Ի Լ Ի Ա Կ Ա Ն

## ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

### ՄԱՐՏ ԳԵՏՈՅՆ

Իսկ յորժամ եկեալ հասին կարկաջահոս գետոյն 'ի հուն
Ցարձնեռանդըն Քսանթոսի զոր Արամազդ ծընաւ անմահն,
Անդ ըղնոսին վարատեալ՝ վարէր ըղկէսս 'ի քաղաք կոյս
Ընդ դաշտն՝ ընդ որ յաւուրն անդ երեկի ազայեցիք
Խուճապեալ փախչէին 'ի Հեկտորի քաջին մոլել.
Խուժէին ընդ այն ադքա տագնապափոյթ հալածականք
Եւ մէգ թանձր առաջի սփռեաց նոցա Հերա կըրձիմ.
Եւ կէսք 'ի գետն յորդագէմ փոթորկէին յարծաթապտոյտ՝
Անդր 'ի մեծ դըլէալք ճողփիւն, եւ դոչեցին յորձանքըն խոր,
Եւ ափունք շուրջ մեծամեծս հընչեցին ձայնս արձագանգաց.
Լողէին նոքա մաքնչմամբ թաւալ այսր անդր 'ի գըրգամս անդ:
Զոր օրինակ 'ի ճախրել բոցոյ հրատի թեւեն մարախք
Ձերծանել 'ի գետ ուրեմն, եւ բորբոքի հուրն անվաստակ
Ցարուցեալ յեղակարծուստ, եւ թօթափին նոքա 'ի ջուրսն,
Նոյն յերեսաց Աքիլլեայ՝ յորձանահոսըն Քսանթոսի
Ուխք լընաւին խոխոջաձայնք՝ երիվարօք խառն եւ արամբք:
Իսկ դիւցազն ըղնիզակն եթող անդէն 'ի գետեզերին
Ցեցուցեալ 'ի մոշենիս, վաղեաց իւքն անդր աստուածապէս,
Սուր եւեթ 'ի ձեռսն, որոճելով ոճիր աղուես:
Հարկանէր յաջ եւ յահեակ, եւ ելանէր հեծութիւն ահեղ
Սըրակոխ կոտորելոցն եւ կարմրանայր ջրատակն արեամբ:
Եւ զորէն 'ի մեծ վիշապ դըլփինէ ձըկունք փախըստականք
Ըզնաւուց անձոյթ գոգոյ հանգըրուանաց խըռնեն զալուցն՝
Ահաբեկեալք, զի չարաչար ծամէ զոր ոք ըմբըռնիցէ.

Սոյնպէս արտաւազդացիք 'ի յորձանուտ ուղխիցն հոսանս
Ղօղէին ընդ գարեւանդս. իսկ ձեռք նորա սպառնամամբ խանչեալ,
Կենդանիս 'ի գետոյն երկոտասանս ընտրեալ մանկունս
Ի վրէժ մահու Մենիտեանըն Պատրոկլի քաւութեան զոհ:
Ա՛ռ եհան զնոսին արտաքս ըզարհափեալսն իբրեւ եղնորթս,
Եւ ձեռս յետս կապեալ ճարտարագործ փոկոց խոյացիւք՝
Զորս ածեալ ըզհիւսածոյ պարեգօտիւքն էին իւրեանց,
Եւ ցընկերսըն տանել 'ի գոգաձեւ նաւաց տորմիղն,
Իսկ ինքն անդրէն խոյացաւ յարեանց նախաճիրըս ճեպելով:
Անդ որդւոյ գարգանեանըն Պրիամու եւ ընդ առաջ
Ի գետոյն փախուցելոյ՝ Լիկայոնի, զոր իւր երբեմն
Ըմբռնեալ յայգեստանէ հօրն էր բռնի վարեալ գերի
Գիշերային հինահարեալ, մինչ 'ի պղինձ սուր զմոլաթզենոյն
Ըզշաբլեալ մորձս հատանէր՝ լինել կառաց 'ի շըրջանակ,
Անդ նըմա յանըզգաստից զըմբաղ գիւցազն եկն Աքիլլէս:
Եւ զնա յայնժամ նաւակօքն 'ի շինանիստն ածեալ Լեմնոս՝
Արար վաճառական, եւ զգինըն ետ ձեռան Յասոնեան.
Եւ անտի թափեաց ըզնա Իմբրոսացի հիւրն Էետիոն
Տըւեալ բազում փըրկանակս, եւ յԱրիսբէ յըղեաց չըքնաղ.
Իսկ անտի հատուցած գնացեալ 'ի հայրենիսն եկն եհաս տուն:
Եւ աւուրըս մետասան ընդ սիրելիսն ուրախ լինէր
Ի Լեմնեայ եկեալ այսրէն. յերկոտասանն անդրէն ըզնա
ՅԱքիլլի ձեռս արկ աստուած, որ յաճախայ կամըս նորուն
Հանդերձեալ էր ըզնա 'ի Դըժոխոց առաքել յարկս:
Իբրեւ քաջոտն Աքիլլէս գիւցազն ետես ըզնա մերկիկ
Առանց զըլխանոցի եւ վահանի եւ գեղարդան, —
Քանզի զայդ ամենայն յերկիր ընկէց ընդ քըրտն հարեալ
Ի փախչել անդ 'ի գետոյն, եւ կըլթուցեալ ծունկըն 'ի ճըգանց, —
Առ մեծասիրտ իւր հոգին սըրտմըտութեամբ բարբառեցաւ.
Մեծապանչ զայս, ո՜վ դիք, զարմանալիս յակն արկանեմ.
Արդարեւ իսկ տրովացիքըդ մեծանձինք զորս ըսպանի՝
Յարիցեն վերըստին 'ի մըգապատ մըթից ներքնոց,
Զոր օրինակ եւ սա եկըն փախուցեալ 'ի ժանտ ժամէն,
Որ երբեմն 'ի նուիրականն անդր 'ի Լեմնոս վաճառեցաւ.
Չարգել ըզնա ալեխառն ծովուն անդունդքն՝ յորդունց բռնի խափանն:
Այլ արդ՝ եւ զաշտէի տեգիս մերում ասցէ զճաշակ,
Զի տեսից եւ ուսայց, թէ նմանապէս դարձցի՞ անդրուստ,
Թէ կալցի հող կենսածին՝ որ զհզօրագին եւս ընթարգէ:
Զայս կացեալ խորհէր 'ի միտ. նա պակուցեալ մատեաւ յառաջ
Հըպել 'ի ծունկսըն ցանկացեալ, զի կաթոգին էր զերծանել
Ի դըժընդակ մահուանէ ու՛ 'ի սեւագէմ Օրահասէն.
Քանզի գիւցազն Աքիլլէս զերկայնաշուք մըկունդն ամբարձ

Հարկանել ձըգտելով. 'ի ծունկան անկեալ նա կորակոր
Բուռն եհար, որգն 'ի վերուստ ոլէնն յերկիր մըխեալ եկաց
Անձկացեալ մեծափափագ 'ի մարդկեղէն յագել մարմնոյ.
Նա միովն կալեալ ձեռամբ ըզծունկսն պաղատէր,
Եւ միւսովն ըզշեշտեալ նիզակն ունէր եւ ոչ թողոյր,
Եւ առ նա բարբառելով ըզաղերսաթախիծ խօսեցաւ բանս.
Փարեալ 'ի ծունկդ, Աքիլլէս, մաղթեմ յիս ակն ած եւ գթա.
Է իմն ինձ ընդ քեզ աղերս պատկառելի, դիւցազնածնունդ,
Զի առ քեզ է ճաշակեալ իմ նախ զարդիւնս Դեմետրի
Յաւուրն՝ յոր ձերբակալ արարեալ զիս յընտիր այգւոյն,
Ի հօրէ ու'ի սիրելեաց վտարանդի վաճառեցեր
Ի Լեմնոս սուրբ, եւ զբաւայ հարիւր եզինս ես քեզ արժէք:
Արդ երիցս այնչափ փրկանս ընդ անձին տաց, զի է աւ իմ
Առաւօտ երկոտասան յորմէ հետէ կամս յԻլիոն
Ցես բազում տառապանաց. արդ զիս անդրէն բաղդ անողորմ
Եդ 'ի ձեռսդ. Արամազդայ հօրն ատելի թըւիմ լինել,
Որ անդրէն զիս քեզ մատնեաց, եւ կարճակեաց ծընաւ զիս մայր,
Դուստրն Ալտեայ ալեւորին՝ Լաւոթոյէ,
Ալտեայ՝ մրրցասէրացըն Լելեգաց թագաւորին,
Տէառն Պեդասեայ բարձունն՝ զուխիւք Սատնիոյսի:
Ըզդուստրն ած Պրիամոս զուսար 'ի կնութիւն, եւ այլս յոլովս.
Ի նմանէ ծընաք երկուք, զերկոսին դու կոտորեսցես:
Զդիւցազնն Պոլիդոր 'ի նահատակս հետեւակաց
Սլաքաշէշտ հարեալ տիգաւ՝ արկեր զնա դի տապաստ 'ի մահ,
Եւ արդ եկեալ աստանօր լինելոց ինձ, զի չունիմ ակն
Ի ձեռաց քոց ապրել, մինչ զամ մի այսր հասոյց աստուած:
Այլ եւս ինչ քեզ ասացից, եւ դու 'ի միտս քո յեա զայն.
Մի զիս սպանաներ, զի համամայր չեմ Հեկտորի
Որ զընկերաց ըզմըտերիմդ հանճարաւորէր եւ զքաջազօր:
Այսպէս առ նա Պրիամու շքեղ որդին պաղատեցաւ
Բանիւք աղերսանաց, բայց անողոք լըւաւ բարբառ.
Մի, անմիտ, ինձ փրկանս ածեր 'ի յուշ եւ մի պատմեր.
Զի մինչ չեւ էր Պատրոկլի զճակատագրին վախճանեալ կեան,
Էր ինչ առաւել սիրելի խնայել յայնժամ 'ի տրովացիսդ,
Եւ զբազումս կենդանեայն ըմբռնեալ արկեալ զընոց եսաւ.
Իսկ զարդ եւս՝ որ ապրեսցէ 'ի մահուանէ չիք ոք ուրեք
Զոր յիմ ձեռս արկցէ աստուած դէմ յանդիման Իլիոնի
Յամենայն տրովացւոց, յորդւոցըդ մանաւանդ Պրիամու:
Մեռի՛ր եւ դու, սիրելի. զի՞ ողբաս այդպէս խաղապատառս,
Մեռաւ եւ Պատրոկլոս՝ վսեմականն յոյժ քան զըքեզ:
Ո՞չ տեսանես՝ որպիսի եւ ես անձնեայ, վայելչագեղ,
Եւ քաջի եմ հօր որդի, եւ դիցանոյշ ծընաւ զիս մայր.

Այլ ձեռք եւ յիս մահ եւ Օրահասըն բռնաւոր՝
Թէ այգ լիցի թէ՛նգ երեկս եւ կամ եթէ օր հասարակ,
Յորժամ ոք եւ յինէն առցէ զոգիս 'ի ձեռն Արեայ,
Կամ մըկունդ յիս ընկեցեալ կամ 'ի լարէն սուսուցեալ նետ ։
Զայս ասաց, եւ անդ նորա ծունկքըն լքան եւ սիրուն սիրտ,
Եւ Թո՛յլ ետ ըղնիզակն, եւ տարածեալ զթեւսըն նըստաւ.
Եւ ձըգեալ Աքիլլէս զկալաղակաւորն յեսանասուր՝
Եհար զանրակն առ ուլանն, եւ երկսայրի սուսերն ողջոյն
Մինչ 'ի ներքս անց եմուտ. նա 'ի վերայ երկրին 'գերես
Գաստացեալ անկեալ դընէր, վիժէր արիւն Թուխ՝ Թանայր զհող ։
Բռուն Աքիլլէս զոտանէն հարեալ 'ի գետն ընկէց տանել,
Եւ խրոխտալով 'ի վերայ նորա զթըռչուն խօսեցաւ բանս.
Կաց արդ այդր ընդ ձըկունս, որ յարտահոսելս լիզուցուն
Ըզվէրիդ աղաժոյժ, եւ ոչ մայրիկ քո կոծեսցի
Յանկողնի եդեալ ըզքեզ, այլ Սկամանդրոս յորձանաւոյղ
Յափըշտակեալ վարեսցէ 'ի ծոց ծովուն 'ի լայնատարր ։
Վազս առեալ ձուկն ընդ ալիս 'ի մըկանունս քըղմնատարութեան
Յարիցէ եւ կերիցէ զԼիկայոնի ճարպ ըսպիտակ ։
Կորիջիք, մինչեւ զոստանն առցուք զսրբոյն Իլիոսի,
Փախըստեայք դուք յառաջոյ, ես 'ի Թիկանց սատակելով ։
Ոչ օգնեսցէ ձեզ ձեր գետդ յորդահեղեղ՝ ականակիտ,
Որում յաշտն խոկ տանէք 'ի վաղընջուց զուարակ բազում,
Արկանէք եւ կենդանուոյն միասըմբակ յուխան երիվարս ։
Այլ մահու չարաւ եւ այնպէս կորիջիք մինչեւ բընաւքդ
ԸզՊատրոկլի մահուան վրէժ եւ զաքայեանց տայցէք տուժից՝
Զորս առանց իմ առ երագ նաւատորմին կոտորեցէք ։
Զայս ասաց. 'ի բարկութիւն Գետն 'ի սըրտին բորբոքեցաւ յոյժ.
Կայր լինէր մըտախոհ, Թէր ըզդիւցազնըն զԱքիլլէս
Ի մարտէն լռեցուսցէ, եւ մերժեսցէ զժանտն 'ի տրովեանց ։
Բայց անդէն որդին Պելեայ՝ նիզակ 'ի ձեռն երկայնաստուեր՝
ՅԱստերոպէոս խոյացաւ՝ մոլեալ սպանել սատակաման
Զորդին Պելեգոնեայ, զոր յորդասահ ծնաւ Աքսիոս,
Եւ դուստր Ակեսամենի Պերիբէա երիցագոյն,
Զի անկեալ ընդ նըմին եհար ըզնա Գետն ալեխաղջուր ։
Աքիլլէս դիմեաց 'ի նա, եւ նա կըրկին տէգ 'ի ձեռին
Ել եկաց դէմ 'ի գետոյն, եւ արկ Քսանթոս կորով 'ի սիրտն.
Զի բարկութեամբ սըրտմըտեալ ընդ կոտորումն էր պարմանեաց
Զոր վատնէրն Աքիլլէս 'ի ջուրսն, եւ ոչ արգահատէր ։
Արդ սոքա երբեւ մօտ եղեն յիրեարս ընթանալով,
Նախ երագոտն Աքիլլէս գիւցազն առ նա բարբառեցաւ.
Ո՞վ ուստեք իցես յարանց՝ որ խիզախեաց ինձ գալ ընդդէմ.
Եղկելեաց եղանէ մանկունք իմում ուժոյս դիմաց ։



Digitized by Google

Ետ նըման պատասխանի Պեղեգոնեայ չքնաղ որդին.
Մեծանձնըդ Պելեան, աւ ինչ ըզգըլուրմ իմ հարցանես.
Ցերկրէ հեռաստանէ՝ 'ի խոտաւէտն եմ Պէոնեայ,
Զպէոնեանն ածեալ որսար երկայնատէգ, եւ է ինձ արդ
Առաւօտըս մետասան՝ զի յԻլիոն այսր հասեալ կամ:
Իսկ ատոհմս իմոյ սերունդ՝ 'ի յորդաբուխն Աքսիոսէ,
Աքսիոս՝ որ ընդ երկիր առաքէ զուխան ամենագեղ,
Նա ծընաւ ըզՊեղեգոն նիզակաւորն, եւ աւանդեն
Զիս սորա ծընունդ, այլ այժըմ մարտիցուք, քաջդ Աքիլլեւս:
Զայս ասաց ըսպառնալեօք, բայց Աքիլլեւս գիւցազն ամբարձ
Ըզհացին Պելիոնեան, Աստերոպէոս գիւցազն համայն
Ցեգ կըրկին, զի յերկոցունց եւս 'ի ձեռացն էր աջողակ.
Եւ միով տէգիւ եհար զասպարն, այլ ոչ եհերձ
Ըզվահանն եկեալ ընդ թամբ, կըրձին ոսկին կայց գիւցազնորդ.
Իսկ միւսովն՝ յարմունկ աջոյ բազկին եհար մօտ քերելով,
Ցայտեաց արիւն սեւորակ, եւ այն զնովաւ անցեալ գնացեալ՝
Ընդ գետինն հարըստեցաւ, յագել մարմնով լեալ տարփատենչ:
Ըզհետ նորուն Աքիլլեւս ապա զհացին 'ի թափչս անվրէպ՝
Արձակեաց յԱստերոպէոս, 'ի սաստակել մոլեգնօտեալ:
Սըխալեալ 'ի նմանէն՝ եհար ըզբարձըր գարեւանդն,
Եւ միջով չափ անդ յափին զհացին 'ի ծօծ վարսեաց մըկունդ:
Իսկ Պելեանն յազդերէն ձըգեալ ըզխարբըն սայրասուր՝
Կատաղեալ ասատեաւ 'ի նա, եւ նա զհացին Աքիլլեան
Ոչ զօրէր կորզել բազկաւն հանել 'ի զառափնեէն.
Շարժեաց երիցըս թօթափեաց՝ քարշել խըլել զայն զուռն զօրծեալ,
Երիցս եւս ակամայ. չորրորդ անգամ կամէր 'ի մէջն
Կըքել եւ բեկանել զԷակեդեայ զհացի զեղարդն.
Այլ Աքիլլեւս առձաղարեալ հասեալ կորզեաց զոգին սուսերբ.
Զի զպորտովն եհար 'ի փորն, աղիքն 'ի հող խողխողեան ողջ,
Եւ խաւար զաչըսն ծածկեաց 'ի սարսնդալն անդ թաւալ ոգւոյն.
Ցեցան անդր յարձակեալ Աքիլլեւս եղերծ ըզզէնսն,
Եւ խրոխտող պարծանօք բարբառեցաւ ըզբանըս զայս.
Այդպէս կաց. ընդ մանկունս Զըրուանեան հզօրին
Խիստ է քեզ կալ 'ի դուպար՝ Թէպէտ եւ ծնունդ էիցես Գետոյ:
Ասէիր ըզքեզ սերունդ յորդախաղաց Գետոյն լինել,
Սակայն ես՝ յազգէ մեծին Արամազդայ լինել պանծամ:
Զիս այր ծընաւ իշխեցող յաճախագունդ Միրմիդոնաց,
Էակեանըն Պելէոս, եւ Էակոս էր յԱրամազդայ.
Որչափ վեհ է Արամազդ քան զծովամէժ Գետոց խոխոջս,
Այնչափ առաւել Արամըզդական ազնըւազգոյն քան ըզԳետոյ:
Հա՛ քեզ հուպ Գետդ հարուստ, թէ կարիցէ ինչ օգնել քեզ.
Սակայն չէք ընդ Զըրուանեանն Արամազդայ մըրցել 'ի կռիւ:

Զուգեսցի ոչ ընդ նըմին եւ ոչ արքայն Աքելլեայ ,
Նա եւ ոչ անդրընդդառնալոյն Աշխարհաձոյլ մեծ զօրութեան ,
Ցորմէ գետք ամենայն , ամենեքեան համօրէն ծովք ,
Եւ աղբերք առ հասարակ եւ խոր ջըրհորք ելեալ բըղխեն .
Համայն եւ նոյնպէս զոփայ յԱրամազդայ մեծին շանթէ
Եւ յահեղ որոտմանցն՝ յորժամ տայցէ ճայթիւնս յերկնուստ :
Ասաց , եւ 'ի դարէ անտի խըլեաց զարդինըն պղնձի :
Եւ զնա եթող անդէն 'ի աւազային հողւոյն թափուր
Թուալ 'ի խիճս անդ անկեալ , ողողէին զնա սեաւ ջուրք
Եւ զնովաւ զբաղեալ կային օձաձըկունք եւ այլ ձըկունք
Կըրծելով եւ ձըրձելով զերիկամանցն ըզճարպ թաղանթ :
Իսկ նա խաղաց ընթացաւ 'ի Պէոնեան ձիամարտիկս ,
Որ դեռ եւս 'ի փախուստ ըզյորձանուտ գնային գետոյն
Իբրեւ տեսին զքաջազօրն 'ի կարեւոր գուպարածի
Ի բազկէ Պելեանծնին եւ 'ի նորանէն լեալ ըզհեռամահ :
Անդ ըսպան զԹերսիլոքոս , զԱստիպիլոս եւ ըզՄիդոն ,
ԸզՄնեսոս , ըզԹրասիոս եւ զԷնիոս , զՈփելեստէս ,
Եւ զոլորս եւս սատակէր Պէոնացիս ժիրն Աքիլլեւս՝
Եթէ չէր սըրտմըտութեամբ գետն յորձանուտ զաւն առեալ զնմա
Եւ 'ի խորոց ըղտտուտեցն արձակեալ ձայն եւ բարբառեալ .
Ուժգին ես , ով Աքիլլեւս , եւ քան զմարդիկ գործես ոճիրս ,
Քանզի քեզ աստուածք իւրեանց կան 'ի թիկունս յամենայն ժամ :
Թէ Զըրուանեանն ետ քեզ ձեռս՝ ըզտրովացիս բառնալ ըմնայքն ,
Գէթ 'ի դուրս յինէն վարեալ երթ առա՛նդ դաշտն ըզտասկալեր .
Զի վըտակք իմ ցանկալիք արդ եւս լըցան մեռելոտւովք ,
Եւ ոչ եւս այլ հնար կարեմ զջուրս իմ 'ի ծովն աստուածային՝
Անձկացեալ 'ի դիականց , եւ դու վանդես ահեղապէս :
Այլ աղէ թո՛յլ տուր՝ զի ունի զիս ափշութիւն , առաջնոց իշխանդ :
Երագոտն Աքիլլեւս պատասխանի տուեալ ասէ .
Լիցի այդ քեզ , Սկամանդրէ դիւցազնըդ , որպէս ասես .
Այլ ըզնէս տրովացեաց 'ի կոտորել ոչ մերժեցայց ,
Մինչեւ յոստան անդր արկեալ՝ ընդ Հեկտորի դէմ առնուցեան
Զփորձ առից՝ թէ նա՛ նըկուն զիս առնիցէ , եթէ զնա ես :
Ընդ ասելն եւ խոյացաւ աստուածապար 'ի տրովացիսն ,
Եւ յայնժամ Գետն յորձնեռանդն առ Ապողոն արձակեաց ձայն .
Ո՛հ որդիդ Արամազդեան , Արծաթաղեղն , ոչ պահեր
Զհամբոյս մեծին Զըրուանեան զոր պատուիրեաց յաճախապէս
Առ ընթեր տրովադացւոց կալ օգնական , մինչեւ դարձցի
Ընդ երեկս արեւն 'ի մայր , եւ ածցէ ստուեր յանդս արդաւանդ :
Ասաց նա . իսկ Աքիլլեւս հոյռովարեալ սաստեաւ 'ի մէջն ,
Անդր ընդ թումբըն վազելով . յարեաւ եւ նիգն ալէկոծեալ ,
Եւ պղտորեալ՝ ըզըզըրգանեան ալիքըն զարթեայց , եւ զդիակունսն

Ապխաղխեալ վարելոյ՝ որ լի անդ յԱքիլլեայ ստանեալ կողին,
Եւ ընկէց 'ի ցամաք՝ մերձընթեցեալ երկու բազուկ,
Եւ պահեալ ըղկենդանիս յականակիտ ջուրցըն վտակս՝
Ի պղտորս անդ Թալքուցեալ 'ի մեծամեծս եւ յորձանուտս:
Եւ ահեղ գիզան ալիքըն խառնախուռն շուրջ զԱքիլլեաւ,
Վէտ վէտ յառաջոյն անկեալ մղէին, եւ ոչ կարէր կալ 'ի յոտոյ.
Բռնան հար յառաջ մեծ նոճնար, որ տապալեալ արմատախիլ
Զդարեւանդն ողջոյն փլուցոյ, եւ Թանձրախիտ ոստովք խռովք
Զգեղեցիկ հոսանս արգել եւ զինքնին զգետըն կամրջելով
Անդ տապալ անկեալ ողջոյն. նա 'ի պատուարէն 'ի բաց վազեալ՝
Ճեպ ընդ հարթըն եւ Թռչել երագ ոտիւք առ պատուղամանն:
Ոչ ցածեաւ մեծն աստուած, այլ 'ի կապոյտ կոհակաց ծայրս
Ամբարձաւ 'ի վեր 'ի վեր ըղձեւացողարգն Աքիլլեսի,
Նահանջել զինքն 'ի կըռուոյն եւ 'ի տրոյեանց հերքել զաղէտն:
Իսկ Պելեանն 'ի բաց ոստեաւ անկըննեցի մի տապարեալ
Արծուեոյ սեւաթեւ որսորդին արծուոյն այնմիկ՝
Որ սրաԹեւ եւ կարողագոյն է յամենայն հաւուց Թռչնոց:
Նման նորին արշաւէր, պղնձեն 'ի լանջս հնչէր ահեղ,
Եւ առ·չեղ խառնըրդնԹաց առ 'ի նմանէ փախչէր 'ի փախուստ.
Իսկ նա զհետ գայր 'ի Թիկանցն հեղեղատեալ մեծաւ գոչմամբ:
Որպէս մինչ այր ջրտուծու 'ի ծմակաջուր աղբերականց
Ի պարտէզս իւր եւ 'ի գրախտ ուղղէ առուակըն բանայցէ
Ի ձեռին կալեալ ըղբահ՝ կոտորելով զխորեաց կաւաւն,
Ի վտակացն յառաջ խաղալ՝ կորնծեք 'ի գիլ զգորին բոլոր,
Խոխոջէն նոքա յընԹացս իւրեանց ընդ վայր իջեալ զառ 'ի Թափ,
Եւ կանխեն երագելով զառաջնորդսն իւրեանց անդամ.
Նոյնպէս ցանդ զԱքիլլեայ կըրԹէին զհետ կոհակք ալիսացն,
Եւ դոյր իսկ էրգըն քաջարշաւ, այլ քան զմարդիկ դիքն են հզօր:
Եւ քանիցըս զօրն զինէր երագընԹաց քաջն Աքիլլէս
Ի հակառակ մըտանել, ասնոցն 'ի միտ՝ Թէ համօրէն
Վանեսցեն զինքն անմահքն՝ անդորրաւէտ երկնից իշխանք,
Նոյնքան կոհակ մեծ [illegible] յԱրամազդեայ հոսեալ գետոյն՝
Հարկանէր զուսան 'ի վերուստ, եւ նա յոտն իւր [illegible]
Վազվազէր 'ի վեր ոտիւքն. իսկ 'ի ներքուստ [illegible] գետն
Առ 'ի կողմըն Թաւալեալ՝ ըղծուրս ծունկըն պարտաւէր,
Եւ սըկախտան ըղփոշին գերփէր ներքուստ գարշապարացն:
Ձայն եբարձ Պելեանն 'ի լայն երկինս աչս ամբարձեալ.
Հայր Արամազդ, որպէս 'ի գէթ չեք ինձ հեքիս ոք ձեռնհաս
Ի գետոյս զերծուցանել. որ զինչ եւ էն կրեցից ապա.
Ոչ ոք այլ յերկնաւորաց այնպէս ընդ իս է մեղսառուկար,
Այլ մայրն իմ սիրելի, որ զիս սուտովք արկ 'ի պատրանս.
Զի ասէր՝ ընդ պարըսպաւ տրովանացւոց առաջնորդաց

Երագաթեւ ալըւգրքն Աստուծոյ կորընչել ինձ:
Չի՛ էր թէ զիս էր հեկտոր սպաննեալ արին սաս ածնյաւն,
Ցայնժամ քաջին սպաննեալ լինէր, եւ ընդքայժի տարեալ կապաւա:
Իսկ արդ ես չանարգապարդ մահու զրաւիմ վատախոստորակ,
Արգելեալ 'ի մեծըս գետ, որպէս մանուկ մի խաղարած
Ի ձորալիք հեղեղէ'նկըլեալ յանցին 'ի ձմերանի:
Զայս ասաց, եւ Պոսիդոն եւ Աթենաս անդէն եւ անդ
Հասեալ մերձ նորա կացին 'ի մարդկեղէն մարմնոյ ասեսիլ.
Եւ կալեալ ձեռամբ ըղձեան հաստատեցին ընդա բանիւք:
Եւ խօսից ըսկսըան արար գետնադղորդըն Պոսիդոն.
Մի՛ դու Պելիդդ յոյժ զարհուրիր եւ մի՛'նչ 'ի խէթ ընդդրամիցես.
Տես որպիսի՛ք ոք 'ի դից երկըզին մեք քեզ ձեռընտուք
Հաճոյիւքն Արամազդայ ես եւ Պալլասն եմք Աթենաս.
Քանզի չէ քեզ 'ի գետոյ նորուն լինել ճակատագիր,
Այլ գա փոյթ դադարեսցէ, եւ դու ինքնին տեսանիցես:
Բայց խորհուրդ մի քեզ տացուք զիմաստութեան, թէ հաւանիս.
Եկ մի՛ լինիր ձեռընթափ 'ի նմանավիշտ պատերազմէդ
Չեւ արկեալ զամրափ արովեան յԻլիոնի շըքեղ պարիսպն՝
Ո՛ր եւ ոք զամ մի զերծցի. դու զՀեկտորին հատեալ զարեւ՝
Դարձ անդրէն 'ի նաւս արա. տացուք մեք քեզ առնուլ ըղձանս:
Զայս նոցա խօսեցեալ՝ անցեալ գնացին յանմահից շուք:
Ինքն ընդ դիւրն ընթացաւ, — զի սաստիկ յոյժ զեցըն պատուէր, —
Եւ այն լի՛ ծածկէ 'ի ծագ ջուրցն հատածք էր ողողեալ,
Եւ բազում զէնք գեղեցիկք կոտորելոց պատանեկաց
Եւ մարմինքըն ծըփէին. նորա զալեօք վազէին ծունկք
Ցեսս ընդդէմ սուր յորձանացըն դիմելոց ընթացելոյն,
Եւ չարգել զետն յորդառէմ, զի մեծ կորով արկ Աթենաս:
Բայց եւ ոչ ըՍկամանդր ըզզօրութիւն իւր թուլացոյց,
Զոր եւս հեռայր ընդ Պելեանն եւ ամբառնայր զուղխից կոհակն
Ի բարձունս ամբարտակեալ, ու'ի Սիմոյիս բառնայր խըրախոյս.
Զանդրդ զոյժ, սիրուն եղբայր, մեք երկոքին սանձեմք անշարժ.
Զի զՊրիամոս արքային աչա զոստան մեծ քանդեսցէ.
Իսկ տրովեանք 'ի ճակատու կալ ժուժկալել բաւեսցեն ոչ:
Այլ եկ հաս չայս յօգնութիւն, եւ լըցո զձորդ յաղբերաց ջուրց,
Եւ զառուոց համօրէն վըտակահոսըս յարուցի՛ր.
Կառո մեծ ալեաց կոհակ, ամբոխութիւն գըրգեա բազում
Կոճղաց եւ վիմաց, 'ի խէթ ու'ի խռովթ անդրդ վիրապ.
Զի փոքրր մի՛ւս եւս եւ յաղթէ՝ աստուածօրէն ինչ արկեալ յուզ:
Բայց ասեմ, ոչ ուժգնութիւն ինչ օգնեսցէ նըմին, ոչ գեղ,
Եւ ոչ զէնքըն շըքնաղք՝ որ 'ի վիրապ անդընդախոր
Անկցին ուրեք աղղմասիկ, եւ ընդ ինքն իսկ խորասոյզ
Ընդ աւազ թաւալեսցի՝ հեղեալ անհուն խիճ ըղմովլաւ,



Digitized by Google

Մինչ ղօղերան անդամ քաղել մի գիտասցեն աղբերցիք,
Այնչափ ծեփեալ յայն կարակոյտ՝ հեռախաղաղ կորուսից:
Անդ մնասցէ նոր կափարուած, եւ չգտցեն աչեար հողակոյտ՝
Զինքն ՚ի շիրմին մինչ ՚ի Թաղուած աղբերցիքն յուղարկեսցեն:
Ասաց՝ խուժեաց յԱքիլլէս մըրրկածուփ մոլեալ ՚ի վեր,
Փրփրադէզ մըռմըռալով արիւնաղանդ գիտակուտիւ:
Կապուտակ կոհակունք յԱրամազդայ գիտեալ գետոյն
Կանգնեցին լեռնակարկառ՝ ընկլուզանել զՊելիածին:
Այլ Հերայ զարհուրեալ զԱքիլլէսէ՝ ուժգին գոչեաց,
Գուցէ զնա շառաչալիցէ մեծայարգ Գետն անդընդապատեալ:
Եւ անդէն առ Հեփեստոս սիրուն որդին արձակեաց ձայն.
Արի, Կաղաղն, իմ որդեակ. քանզի ըզՔսանթոսն ուղխաձնահոս
Ախոյեան նըմանաւոր քեզ Ճըչըղըրտեալք ՚ի մըրցամարտ.
Օ՜ն արի փոյթ ՚ի նըպաստ, հան ՚ի հանդէս բոց յորդառատ:
Աւասիկ ես զԶեփիւռն եւ ըզպայծառըն Հարաւոյ՝
Զաղամ մըրրկեկ ՚ի ծովէն յարուցանել անհընարին,
Որ հըրդեհ բորբոքախառն հարեալ կիզցէ զտրոյանացւոց
Ըզկառասփառաց եւ ըզզէնս. եւ դու զափամբըն Քսանթոսի
Ցոչորես զծառաստանս եւ ըզը ՚ի նա խնդն եւ հըրձիգ.
Մի՛ զդեղ ողոք քեզ բանիցս եւ սպառնալեաց արգելուցու,
Մի՛ դըլիր ՚ի քո սաստից, բայց թէ ձայնեալ կարդասցից ես,
Անդ անդէն սանձակոծեա զանշիջանելի քո հրահոսանս:
Ասաց զայս, եւ ընկենոյր Հեփեստոս ըղհուըն աստուածածին.
Նախ ՚ի դաշտըն բորբոքէր հրատն եւ այրէր ըզդիականսն
Որ էին անդ յաղթանակք յԱքիլլէսէ մեռանեալք ՚ի մահ.
Դաշտն ամենայն ցամաքեցաւ, զեղուն վէտ վէտ ալիք վըճնեալ:
Որպէս խոն հիւսիսային աշնանային վաղ ցամաքէ
Ջըրարբիւ արտորայն, եւ խրախ լինի մըշակ նորին,
Նոյն չորացաւ դաշտըն համակ, եւ ըզմեռեալսըն հրակիզեաց.
Եւ նա զբոցն արփիահրատ առեալ ՚ի գետ անդըր դարձոյց:
Այրէին ուռենիք, մոշափայլիք եւ ուռեաստան,
Խարակեալ խանձատեր նորդիւն, կընիւն, վաղամեռուկ,
Որ զըլխաւորն վտակօքն թանձրախիտ կային բուսեալ.
Ցասկոտեալքն եւ ձըկունք եւ այլ կոյտառք՝ որ ՚ի ալեացս,
Որ ընդ ոսկըն գեղեցիկս յայսկոյս յայնկոյս առնուին ձախոր,
Ի շընչոյն վըտանգեալք բազմահըրմուղ Հեփեստոսի.
Կիզուէն եւ կէնք Գետոյն, եւ ձայն արկեալ բարբառեցաւ.
Հեփեստոսէ, չիք ոք ՚ի դիցն կալ առաջի քո բաւական,
Եւ ոչ ես ընդ քեզ հըրով բորբոքելոյդ այդպէս մարտեայց:
Թող ըզհեռ, եւ Աքիլլէս զիւցազն ընդ հուպ ըզտրովացիս
Ցուսանէն անդամ խլեսցէ. իմ զի՞ կայ ՚նդ կռիւ եւ ընդ օգնան:
Ասաց հրայրեաց տոչորեալ, եւ եռայէր յըստակ հոսանքն.

Որպէս կաթսայ ներքուստ յեռանդն հարկանի հրով մեծաւ 'ի շտապ
Ի հալել ճենճերել զպարարտական խոզենայ ճարպ
Ցամենուստ պղպջակեալ, եւ չոր կըրկուռք փայտին ներքոյ.
Սոյնպէս ուխք իւր գեղեցիկք հրդեհէին, ջուրն եռանդնէր
Եւ չկամէր սահել, այլ կայր եւ տագնապէր ըզնա շոգին՝
Յոգնիմաստին Հեփեստոսեայ 'ի մեծազօր բռնութենէն :
Իսկ նա բազում աղերսանօք Հերայ՝ զթըռչուն խօսեցաւ բանս .
Հէ՛մ որդիդ, Հերա, քան յայլս՝ եկն յուխս անկեալ տառապեցուցանել զիս,
Ոչ այնչափ ապաքէն մեղաւոր եմ եղեալ առ քեզ,
Որչափ այլք ամենեքին տրովադացւոց ձեռնընկալուք :
Իսկ թէ քո հրամանք իցեն՝ դադարեցից ես յամենայնի,
Բայց եւ սա դադարեսցէ . զայս եւս երդնուլ եմ յաւելից,
Մի՛ երբեք թօթափել 'ի տրովադացւոց զժամին չար,
Թէ եւ Տրոյա համօրէն սաստկակիզական հրով խորովեսցի
Դանայեցի, եւ արիական կիզցեն մանկունք աքայեցւոց :
Զայն լուեալ Հերայի սպիտակաձեռն աստուածուհւոյն՝
Նոյնհետայն աղաղակեաց առ Հեփեստոս որդին սիրուն .
Հանդարտեա, Հեփեստոս որդեակ գերափառաշնորհ, զի չէ 'ի դէպ՝
Անձն առեալ մահկանացուաց՝ այսպէս տոչորել զաստուածն անմահ :
Զայս ասաց, եւ Հեփեստոս շիջոյց ըզհրաշէն աստուածավառն,
Եւ ալիքն անդրէն ընդ կրունկ 'ի գեղեցիկ գնացին յատակս :
Քսանթոսի զօրութիւնն յաղթահարեալ՝ հանդարտեաց ապա,
Զի Հերա 'ի բարկութեան եւս անդ խորհուրդ արգել կարծեաց :
Բայց էջ յայլ դիս փախեաւ կռիւ ահեղ ըղծախառնաբեկ,
Եւ 'ի միտս խառնակեալ ծըփեալ ոգիքն հերձուածողս շրջէին :
Բախեցան գոռգոռամբ մեծաւ, մռնչէաց երկիր լայնածաւալ,
Փող եհար մեծն Երկինք, եւ որ նըստէրն անդ յՈւղիմպոս
Լուաւ զայն Արամազդ, սիրտն առ խնդալին ծիծաղեցաւ,
Իբրեւ յանկն արկ զդիս զուգադարձիւ դըրդեալ յիրերաց :
Ոչ եւս նոքա մեկուսի կային՝ զերկար, զի սկիզբն արար
Արէս ասպարախոց, եւ պղընձակուռ 'ի ձեռին անդ
Խոյացաւ նախ յԱթենաս եւ լուտալից բանիւք ասէ .
Զի՞ դարձեալ, ո՛ շնաճանճ, յարուցանես ըզդիս 'ի կռիւ
Ուռուցեալ յանդգնութեամբ, եւ մեծ ըղձիւ զըրգռեաց զոգւոյդ .
Ո՞չ յիշես՝ մինչ ըզՏիդեան յիս Դիոմեդ ընդառնացեր
Դրդել վէրս, եւ դու ինքնին յայտ յանդիման առեալ նիզակ՝
Դիպուածիւ յիս մըխեցեր եւ զգեղեցիկս ցելեր մարմինս :
Այն ունիմ թէ զվրէժ բոլոր չարեացդ ընդ իս՝ լուծցես այժմիկ :
Զայս խօսեալ՝ եհար զասպարըն քղանցաւոր ահեղահրաշ
Զոր եւ ոչ Արամազդայ պատառեն հրացայտ փայլատակմունք .
Արիւնաշաղախն Արէս ընդ այն եհար ըզնա յերկայն գեղարդն :
Իսկ նորա յետս ընկըրկեալ, հըզօր ձեռամբ բուռն հար 'ի վէմ .

Ցանկեալն անդ 'ի դաշտին՝ 'ի Թուխ գըժնէ եւ անարգել.
Զոր սահմանն արտորէին էր վաղեմի արանց եղեալ.
Հարեալ նովին զբաւան Արէս ընդ պարանոցն՝ լուծ զանդամսն ։
Անկեալ գրաւեաց եօթն արտավար եւ Թաւթաւեաց դհերսն 'ի փոշի ,
Շառաչեցին զեւրեւ զէնքն , եւ Աթենաս Պալլաս ընդ այն
Ծաղր եհեղ եւ պարծելով զԹըւչունս առ նա խօսեցաւ բանս .
Խօթամիտ , առակաւին չսահեր 'ի միտ քանի զօրեղ
Պանծանամ ես լինել , զի զզօրութիւնդ ընդ իս կշռես ։
Այսպէս առես հատուցանիս ըղպատուհաս մօր քոյ մեծուց ,
Որ ոըրտմտեալ ընդ քեզ չարիս նիւթէ՝ զի քո Թողեալ զաքէացիս
Հասանես յօգն 'ի Թիկկն ամբարհաւաճ տրովադացւոց ։
Զայս խօսեալ՝ 'ի բաց դարձոյց ըզլուսաւորանն աչկապուտուհին .
Այլ Աստղիկ Արամազդայ դուստր հարեալ բուռն ըզձեռանէն՝
Առ երարձ զհառաչակոծն որ զշունչն հազիւ յինքն ամփոփեաց .
Զոր տեսեալ Հերայի լուսաձեռն աստուածուհւոյն՝
Իսկ եւ իսկ ըզզօրաԹեւս առ Աթենաս արձակեաց ձայնս .
Ո՛հ ահ դուստր անպարտելի՝ վահանակրողին Արամազդայ ,
Շանաճանճն այն միւսանգամ հանէ զԱրէս մարդախողխող
Յահեղմէ պատերազմէն ընդ խուռն , այլ դու ստիպեաց ըզկնի ։
Զայս ասաց , եւ Աթենաս զհետ մըտանէր խրախուսեալ .
Եւ Թափով դիմեալ յԱստղիկ՝ 'ի լանջսն եհար բռնութեամբ մի կռուփ .
Եւ նորա լուծան ծունկք եւ սիրելի սիրտն իւր անդէն ։
Երկոքեան դառեալ գնէին 'ի մարդաշատ երկրին երեսս ,
Եւ սորա խրոխտաձայնեալ՝ ասաց ըզբանս երագաԹռիչ .
Իցէ՛ւ այսպէս արդ բոլոր տրովադացւոցն իցեն Թիկունք՝
Յորժամ ընդդէմ զինաւորեալ աքէացւոց եկեսցեն 'ի կռիւ ,
Եւ այնպէս խիզախ եւ սըրտապնդեալք՝ որպէս Աստղիկ
Զօրավիգն եկեալ Արեայ՝ խմբել բաղխիս ընդդիմահար .
Վաղագոյն յայնժամ եւ մեզ 'ի ճակատուս լեալ հանգիստ՝
Ի կործանոյ զԻլիոնի զպարսպաւորն չէր եղեալ յաւէտ ։
Ժըպտեցաւ յայն բան Հերա սպիտակաձեռն աստուածուհին ։
Բայց արքայն Գետնադողորդ բարբառեցաւ առ Ապոլոն .
Մեք ըզմի՞ կամիք 'ի բացէ 'ի սկըսանել այլոց , Գոռչակ .
Չէ ինչ նըման , եւ յամօթ կըրթեսցի մեզ՝ Թէ անկըռիւ
Դառնայցեմք յՈլիմպոս՝ յԱրամազդայ պըղնձակերտ տուն ։
Ձեռն արկ՝ նախ , զի դու կըրտսեր ես 'ի տիոյ , ինձ չէ պատեհ ,
Զի երեց եմ հասակաւ եւ խելամուտ իրաց բազմաց ։
Մանկամիտ , ինչ անիմաստ 'ի քեզ է սիրտ , եւ ոչ յիշես
Որքանիք անցին ընդ մեզ վիշտք վտանգի զԻլիոնիւ ,
Մեք միայն յաստուածոց յորժամ եկեալք յԱրամազդայ
Ի վարձու մըտաք մեծին Լաւմեդոնի մինչեւ ցամ մի
Սակ արկեալ փոխարինացն , յայս արարեալ նա տայր հրաման ։

Արդ պարխալ ընդ քաղաքաւն ես կառուցի տրովադացւոց՝
Ընդարձակ եւ հաստատալինդ, զի լինիցի չէին անմըկանդ ։
Իսկ դու, Գուշակ, պլամբեղ անդեայն եւ զկորեղջիւր արածէիր
Ի գահս անդ հովտախիս եւ Թաւամաւր լերինն Իդայ ։
Իսկ ընդ էտ հատուցմանն իբրեւ անձին ցընծաւէտ ժամք,
Ցամենայն 'ի վարձուց յայնժամ զոռոզ Լաւոմեդոն
Բռնաբար զրկեաց ըզմեզ եւ արձակեաց ըսպառնալեօք ։
Քանզի զքեզ՝ սպառնացաւ կապեալ ձեռօք կապեալ ոտիւք
Ի կղզիս հեռաստանեայս վաճառել դերի վաճառականաց,
Եւ ակնդէր զերկոցունցս 'ի սուր պղինձ կտրել զականջս ։
Եւ մեք յետս դարձաք քինախանձ սրտմտութեամբ,
Բարկացեալք վասն վարձուն՝ զոր խոստացեալ ոչ վճարեաց ։
Արդ ուրեմն այսք աղագաւ ժողովրդեանն ամենես շնորհ,
Եւ ընդ մեզ չընդրելանիս՝ զի տրովացիքդ ամբարտաւանք
Կորիցեն 'ի սպառ չարաւ, պարկեշտ կանամբք որդւովք հանդերձ ։
Ետ նըման պատասխանի ակեան Ապողոն կորովաձիգ.
Երկրադղորդ, ոչ երբէք առ իմաստունս ունիցես զիս,
Ի վերայ մահկանացուաց եթէ եկից ընդ քեզ 'ի վէճ,
Թըշուառիցն՝ որ հազ ծաղկեալ բարդաւաճին իբրեւ զտերեւ՝
Ի պտղոյ երկրին սընեալք, եւ հազ ծիւրեալ ծորեն անշունչ ։
Ո՛ն անդր 'ի բաց Թողցուք ըզկռիւ, նոքայն զոքա Թող պարտին ։
Զայս խօսեալ՝ 'ի բաց դարձաւ, զի ակն ածեալ եւ պատկառէր
Ընդ եղբօր հօրն իւրոյ 'ի գուպարած ձեռըն խառնել ։
Ա՛յլ կըշտամբեաց ըզնա յոյժ՝ քոյր իւր բամբիշըն գազանաց
Վայրասունն Արտեմիս, եւ ձայն կարդաց նախատալից.
Փախչիս արդ, Հեռաձիգդ, եւ զյաղթութիւնըն բովանդակ
Թողեր Պոսիդոնի՝ տըւեալ անձամբ նըմին պարծանս ։
Խակամիտ, իսկ արդ առ ինչ կըրես զաղեղն այդպէս ունայն.
Մի եւս ապա 'ի հօր տուն լըւայց ըզքո մեծաբանելդ
Որպէս անդ ուրեմն երբեմն 'ի կաճառեալ աստուածոց անմահ,
Թէ զի՛նդդէմ Պոսիդոնի բըռնամարտիկ իսկ գոռայցես ։
Զայս նա. բայց Ապողոն նետողն առ նա ինչ ոչ ասաց,
Այլ բըրդեալ 'ի բարկութիւն Արամազդայ ամուսինն արգոյ՝
Սաստիւք Թըշնամանաց պատուհասեաց ըզՆետաղեղն.
Իսկ արդ դու զիա՞րդ իշխես, շուն լիրբ, յառնել ինձ զիմամարտ ։
Անհնարին եղէց ես քեզ՝ ընդ իս ուժով գալ 'ի կըշիռ,
Թէպէտ ես աղեղնաւոր. զի զքեզ սեաւ կանանց առիւծ
Երեւեցոյց Արամազդ, եւ զոր կամիս ես սատակել ։
Դիւրագոյն է ապաքէն հարուլ նետիւ գազանս 'ի սարս
Եւ զեղջերս վայրի, քան ընդ վեհից կըռուել ուժգին ։
Իսկ Թէ կամիս, հանդէս արա պատերազմի, զի ուսցիս քաջ
Քանիօն զօրագոյն իցեմ ես գալ քեզ 'ի վերայ ։

Ասացեալ, եւ բուռն եհար յերկաթին ձեռամբ ըղձատատկէն
Աջեկեան, իսկ աջովն յուսոյ նորին շոշեալ զաղեղն
Եւ ծոցեփառ ծեծէր զականջօքն ժպտելով, եւ նա հեւ գայր,
Եւ փքլքինքն երագաթեւք թօթափէին ցան առ անդ ցիր:
Դիցամայրն լալագին փախեաւ ներքուստ ձեռաց նորա
Իբր աղաւնեակ 'ի շահենէ սրացեալ 'ի վէմ մի խոռափոր
Ցատաեւէն, զի չէր նորա ճակատագիր անկանել որս.
Նոյն նա փախեաւ ողբագին, աղեղն եւ նետս անդէն թողեալ:
Իսկ առ Լետով խօսեցաւ պատգամաւորն Արգոսասպան.
Լետով, ես ոչ ընդ քեզ մաքառեցայց, զի խիստ է յոյժ
Կռուել ընդ ամուսնոյ ամպրոպայնոյն Արամազդայ.
Այլ ըստ սիրոյ երթ համարձակ 'ի հրապարակ դիցն անմահից
Պարծեցիր՝ թէ յաղթեցեր ինձ բռնութեամբ քոյ զօրութեանդ:
Զայս ասաց. իսկ Լետով քաղեաց ըղկոր աղեղն եւ զնետս
Որ այլ այլուր ցանդ կային 'ի մանրամաղ փոշւոյն յորձանս:
Արդ սա զնետսն ամփոփեալ՝ չոգաւ ըղհետ դստերն իւրոյ: —
Իսկ նա եհաս յՈլիմպոս՝ յԱրամազդայ պղնձահիմն յարկ,
Չոգաւ նստաւ արտօսրաթուրխ դուստր 'ի վերայ հօրըն ծընգաց,
Եւ զնորեւ պաղպաջեալ թրթռեաց խիլայն աստուածեղէն:
Զրբուանեան հօրն ընդգըրկեալ ըղնա եհարց քաղցրաժըպիտ.
Ո՞վ զայդ յՈւրկնաւորաց արար ընդ քեզ, սիրուն դստրիկ,
Տարապարտուց իբրեւ ընդ մի ոք խակագործ յայտ անփոյթ:
Եւ նըմա պատասխանի գեղապըսակն Անթափայոյ.
Անուշին քո զիս ըղկեաց, լուսածըղին Հերա, հայր,
Յորմէ կագք եւ կռիւք յանմահս հասեալ կան 'ի վերայ:
Սոքա զայսպիսեաց իմն ընդ իրեարս գայթն զբանիւք: —
Իսկ Գուշակն Ապոլլոն գընաց եմուտ յԻլիոս սուրբ,
Պարըսպի քաղաքին բարեկերտի ունել խընամ,
Զի մի՛ քան զօրահաս քանդեսցեն այն օր Դանայեանք:
Իսկ այլքն յՈլիմպոս դարձան աստուածքն յաւէժակայք,
Կիսոցըն խոժոռեալ, կէսք սիգաձեմ բերեալ նազանս,
Եւ բազմեցան առ ամպաթուխն Արամազդայ. բայց Աքիլլէս
Ըղտրոժեանս եւ զձիաձիւ երիվարս խառըն սատակէր:
Եւ օրինակ խմըն բոց ելեալ կըցի յերկին 'ի լայն
Ի հըրդեհս ոստանի, եւ բորբոքէ զայն դից ցասումն
Ածեալ երկս ամենեցուն եւ յոգունց վիշտս հասուցեալ,
Նոյն արտալացուցն Աքիլլէս եհար 'ի զլուխ վիշտ եւ զըմպայ:
Ծերունին Պրիամոս յաստուածանուէր կայր 'ի բըրգանն,
Հայեցեալ եաես զահեղն Աքիլլէս մեծ, եւ զտրովացիսն
Ի փախուստ հեղեալ զբազմեալս յերումէն, եւ չգոյր ինչ զօրութիւն.
Եւ զուժիւ մեծաւ ճչեալ՝ եկն էջ 'ի վայր յաշտարակէն
Տալ պատուէր քաջազօտի դարապետացն առ պարըսպին.

Բաց ըզդրունսդ կալարուք 'ի ձեռս մինչեւ խուճապեալ զօրն
Նեղեալ այսր յոստան մտցէ. զի Աքիլլէս է այն անշուշտ
Որ մրրկէն հուպ առ հուպ. այժմ համարիմ հասանել կորուստ:
Իսկ յորժամ 'ի պարիսպս ապաւինեալ ոգի առցեն,
Դիք անդրէն ընդդիմադարձականացն առաւկանել սեղմել զդրանդիս.
Խիթամ մի այրդն ժանտաժուտ փոթորկեսցի մինչ 'ի պարիսպս:
Ասաց զայս, բացին նոքա զդրունսն եւ զնիգսն պարզեցին.
Փեռեկեալք՝ լոյս ծագեցան, իսկ Ապողոն զիմեաց ընդդէմ՝
Զի զեղեալսն տառապեալսն 'ի տրոփեցուցն փարատել:
Իսկ նոքա՝ զեմ 'ի պարիսպ անդրր ուղղորդ եւ 'ի քաղաք
Պապակով երկթցեալք եւ փոշոտեալք 'ի դաշտայնոյն
Փախչէին, նա նիզակաւ վանէր սաստիկ, եւ զսիրտն ունէր
Մրրկատարութեամբ կատաղութիւն, եւ մոլեգնէր առնուլ զփառս:
Անդ բարձրադրանդն Տրովայ առնուին աքեանց որդիք,
Թէ զդիւցազնն զԱգենոր չէր Ապողոն գրգռեալ Գուշակ
Զայրն անարատ՝ զմեծաշուք հզօր որդին Անտենորեայ:
Եդ 'ի սիրտն յանդգնութիւն, կայ առ նմին զի մերժեսցէ
Զմահուն ծանր օրհաս՝ յեցեալ 'ի ծառ կաղնի, թանձր արկեալ մէգ:
Սակայն նա իբրեւ ծանեաւ ըզքաղաքաքանդն զԱքիլլէս,
Զետեղ էառ, եւ 'ի պատանեն անդ սիրտն յուզէր 'ի ծուփս բազում.
Եւ առ մեծամեծն իւր հոգին հառաչելով բարբառեցաւ.
Վայ զինեւ. զի յԱքիլլեայ բռնաւորէ թէ փախիցեմ
Ընդ որ այլք խուճապեալ ահաբեկեալ գնան 'ի փախուստ,
Հասցէ եւ մինչեւ առ իս եւ զանարիս խողխողեսցէ:
Իսկ թէ թոյլ տուեալ զսոսա վանել Պելեանն Աքիլլեի՝
Փախեայց յընթացս 'ի պարսպաէն յայլ դէմս ընդ դաշտն Իլիոնեան,
Հասանել յԻդայ սարսն եւ 'ի թփուտս անդ զօղիցիմ,
Ընդ երեկս այնուհետեւ ապա լուացեալ 'ի վտակէն
Եւ զքրտունս զովացուցեալ, մարթի դառնալ ինձ յԻլիոն:
Իսկ ընդէր է զայսոսիկ խոհել սիրտ իմ առ իս.
Գուցէ զիս ընդմեկնեալս 'ի քաղաքէն տեսեալ ընդ դաշտն
Եւ թեթեւ զարշապարօքն առ իս արշաւեալ ժամանեսցէ,
Ոչ եւս այլ լիցի ապրել 'ի մահուանէ եւ յՕրհասէն.
Զի կարի քան ըզբնաւ մարդիկ է նա զօրեղագոյն:
Իսկ քաղաքիս յանդիմանն եթէ 'նդ առաջ ելից նմա,
Ապաքէն եւ իւր մարմին է խոցելի սուր պղնձով,
Եւ մի յոգնեալ շունչ եւեթ, եւ մեռանի զինքն սոսկ մարդիկ.
Այլ Զրուանեանն Արամազդ կահաւորէ նմին պարծանս:
Զայս զրուցեալ՝ կծկեալ մնայր Աքիլլեսի, եւ սիրտն հզօր
Ի ծոցին իւրում կայտառէր մղել 'ի մարտ պատերազմին:
Օրինակ իբր որպէս ինձ որոյ ելեալ 'ի խոր մայրւոյն
Ընդ առաջ առն որսորդի՝ ոչինչ ըմբռնու պակշու 'ի սիրտս,

Ոչ խուճապի ահաբեկ՝ եթէ զհաչիւն լուիցէ շանց ·
Եւ թէ զնոքին անձառապարեալ հարցէ 'ի տեղ կամ 'ի վերջն ,
Նա խոցեալ եւս աշտէիւ՝ ոչ վատթարի յարութենէն ,
Մինչեւ կամ ճակատ առեալ պատահեսցէ , կամ պարտեսցի ·
Այսպէս ձեռն ընդարձակելոյն Անտենորի՝ քաջն Ագենոր
Չկամէր դառնալ 'ի փախուստ՝ չեւ 'նդ Աքիլլէ մերձեալ 'ի փորձ ·
Այլ զասպարն համաբոլոր զէտ երկաթի կարկառեալ
Եւ 'ի նա կշռեալ նիզակն՝ աղաղակէր մեծաբարբառ ·
Բա՛ն յոյս մեծ ամպաքէն եդեր 'ի միտ , Աքիլլէւս վեհ ,
Քանդել այսօր ըզքաղաքս տրովադացւոց քաջափառաց :
Խակամիտ , զի դեռ եւս յոլովք յայնր վերայ գործեսցին ցաւք ·
Քանզի եմք յաճախաբազումք 'ի ներքս արանց եւ կորովիք՝
Որ առաջի սիրելի ծնողաց , որդւոց եւ ամուսնոց
Պահպանեսցուք զԻլիոն · այլ կնքեսցես աստ դու զօրհաս
Ահագնեղդ այդպիսիդ , եւ ամբարհաւան քաջախրոխտդ :
Ասաց , եւ զփշատուր աշտէն թըռոյց ծանու ձեռամբ ,
Եւ զսրունսն 'ի ներքոյ ծընկանն եհար , ոչ վրիպեալ ,
Եւ զձայնս սրնապատանին նորակերտ 'ի յանագէ
Ղօղանջեաց ահագնալուր , եւ յետս ընդդէմ 'ի հարելոյն
Ոստեաւ պղնձին , ոչ շամփրելով , զի աստուածային արգել պարգեւքն :
Իսկ երկրորդ զհեռաց Պելեանն առ Ագենոր դիմեաց դուժնակ ,
Սակայն ոչ թողացոյց առնուլ նմա փառս Ապողոն ·
Այլ ըզնա յափշտակեալ , թանձրամառախուղ պատեալ միգով
Արձակեաց հանդարտիկ 'ի ճակատէն դառնալ 'ի բաց :
Իսկ ինքն օգնեալ յամբոխէն անխաբ նմանեաց ըզՊելեանն ·
Զի 'նմին Ագենորի առեալ ձեւ ճշգրտեալ կերպաձեւքն՝
Սոյն 'ի դէմս ընթացիցէն , եւ նա ձգտէր ոտիւքն ըզհետ :
Մինչ ինքն ըզնա հալածական վարէր ընդ դաշտ արդիւնաբեր
Շրջեալ առեալ ըզգետաւ յորձանախոր Սկամանդրոսի ,
Ապողոն դոյզն ինչ եւեթ յառաջելով պատրէր մանկան ,
Մինչ զի ակն ունել միշտ՝ իւրով ոտիւքն հասանելոյ ·
Ա՛յլ տրովեանք փախստականք՝ 'ի նմին պահու միահամուռ
Խռախուժամբ մըտին յաստանն · եւ դունդագունդ լըցանէր քաղաքն :
Այն զի ոչ կալան նոքա ժոյժ մնալոյ միմեանց արտաքս
Ի շինէն եւ պարսպացն , եւ գիտելոյ՝ թէ ով ապրեալ ,
Եւ ով մեռեալ 'ի խաղին · այլ 'ի քաղաքն հեղուին փոյթ
Զօ եւ որ 'ի նոցանէն ոտք իւր եւ ծունկք հանէին յանդորր :

607

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հեկտոր միայն մնայ արտաքոյ քաղաքին ընդդէմ Աքիլլեայ, հայր եւ մայր նորա աղաչմամբ գոչեն առ նա 'ի զուր՝ գալ մտանել 'ի ներքս։ Աքիլլեայ ծանուցեալ զխաբկանսն Ապողոնի՝ դառնայ 'ի քաղաքն կոյս, Հեկտոր փախչի յերեսաց նորա։ Արամազդ կշռէ զբախտ երկոցուն քաջացն, հակեալ խոնարհի Հեկտորեանն. յայնժամ Աթենաս զդէմս առեալ Դէիփոբեայ եղբօր նորա՝ խրախոյս տայ կալ կռուել ընդ Աքիլլեայ, եւ ապա աներեւոյթ լինի. 'ի մահ վիրաւորեալ Հեկտոր՝ աղաչէ զառիւծն տալ զմարմին իւր ծնողացն 'ի թաղումն. լսէ անգութ պատասխանի։ Բանք եւ մահ Հեկտորի, Թշնամանք Աքիլլեայ եւ խրախուսումն Յունաց։ Աքիլլէս զինազերծ արարեալ զնա եւ կապեալ զոտսն ընդ կառսն՝ 'ի քարշ առեալ տանի յիւր վրանն. զոր տեսեալ 'ի քաղաքէն հօր եւ մօր եւ կնոջ իւրոյ՝ ձայն բարձեալ ողբան զաւանակէն։

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ

### ՍՊԱՆՈՒՄՆ ՀԵԿՏՈՐԻ

Այսպէս սոքա փախուցեալք իբրեւ զեղջերուս՝ անկեալք յաստանւոյն,
Ի քըրտանց զովանային, ըմժըշկէին զծարաւս իւրեանց
Ցոյն երթեալք 'ի վերայ գեղեցկաշէն մահարձանացն.
Իսկ աքայեցիք արկեալ վահան զուսովք՝ գնային հուպ 'ի պարիսպն:
Այլ զՀեկտոր կապեաց Օրհաս կորստաբեր՝ մնալ անդէն
Ցանդիման Իլիոնի, առաջի դրանցն Սկեւմբրոյ:
Բայց Գուշակն Ապողոն բարբառեցաւ առ Պելիդեանն.
Արի՞մ, Պելեան զաւակ, արագավար ոտիւք զիս հալածես՝
Մահացուդ զանմահ աստուած, եւ ոչ ծանեար ինչ զիս համբուն՝
Զի աստուած եմ ես, եւ դու բանդագուշես ցանկդ անդադար:
Չէ ինչ քեզ փոյթ պատերազմ ընդ տրովացիս՝ զորս վանեցեր,
Եւ յաստանն են ամրացեալ, իսկ դու աստ յելեալս մոլորեալ կաս.
Չես քեզ զիս սպանանել, քանզի եւ չեմ մահկանացու:
Իսկ քաջոյն Աքիլլէս ցասմամբ մեծաւ ասէ առ նա.
Ինձ խոչընդոտն եղեր, Նետող, եղեռնաւորդ 'ի դէմ հանդերձ,
Շրջեալ այսր 'ի պարսպաւէն. ապա թէ ոչ՝ բազմաց անշուշտ
Զեւ յԻլիոն հասեալ՝ զերկիրն ատամանցն էր խածանել:
Արդ յինէն ըզփառսն մեծ խորամանկեր, փրկեալ զնոսա
Հեշտաբար՝ ոչ 'ի վրիժուց քինու երկիւղ ինչ ունելով.
Օ՜ն եւ ես ընդ կատարածիդ հանէի՝ թէ գոյր յիս կար:
Զայս խօսեալ՝ մեծամեծըս փութալով գնայր յառաջ՝
Փոթորկեալ իբր երիվար յաղթողագոյն կառամարտիկ
Որ թեթեւս արշաւեսցէ՝ դաշտն ալիքաւորէ եղեալ ընդ հարթ.
Համգունակ իսկ Աքիլլէս ոտս եւ ըրդունկս երագ շարժէր:



Digitized by Google

Ալեւորըն Պրիամոս նախ ինքն եղեւ ականատես
Զի՛նդ դաշտըն գայր սրավարեալ փայլակնացայտ՝ 'ի տեսիլ աստեղն
Որ ելանէ աշնանի, եւ ճառագայթք իւր լուսաբուխ
Կարկաջէն խոր գիշերաց 'ի բազմաբոյլ աստեղաց պարս,
Զոր եւ շունըն անուանեն Որիոնի՝ յորջորջանօք,
Քան ըզբնաւս ճաճանչաւէտ, բայց է նշան չարագուշակ,
Եւ յորձանս տօթ տապախառն ածէ 'ի հէք մահկանացուս.
Յընթանալըն այսպէս սորա՝ փայլատակէր պղընձեն 'ի լանջս:
Ճիչ եբարձ ծերունին, եւ ըզգաստակըն համբարձեալ
Ծեծէր ըզգլուխն, եւ գուժիւ կականալից աղաղակաւ
Աղաչէր զսիրուն որդեակն, իսկ նա հանդէպ դըրանցըն կայր
Բորբոքեալ սըրտի մըտօք ընդ Աքիլլէ տալ պատերազմ:
Կարկառեալ ծերոյն զբազուկսն՝ ողորմ ողորմ առ նա գոչէր.
Մի՛, Հեկտոր, մի՛ կալ մընար առնըդ այդմիկ, սիրուն որդեակ,
Միայնակ թափուր յայլոց, զի մի՛ հասցէ քեզ վաղ օրհաս
Ի Պելեան բազկէն մահուամբ, զի բըռնազօրն է կարի յոյժ:
Ժանտաժուտ, տա՛յր ոք ինձ՝ թէ այնչափ դից էր սիրելի՝
Որչափ ինձ, վաղ էր ծախեալ շանց եւ անգեղց ըզգէշ նորա,
Եւ սըրտիս ծանրաթախիծ ցաւ փարատեալ անհետեւան:
Նա զիս անզաւակեաց յորդւոց բազմաց եւ կորովեաց՝
Կոտորեալ եւ վաճառեալ կղզեաց կղզեաց հեռաւորաց:
Եւ զերկուս առ յորդւոցս, 'ի գալ կուտել տրովեանց յաստանս,
Ոչ կարեմ նըշմարել՝ ըզԼիկայոն եւ զՊօլիդոր,
Զորս երկնեաց ինձ 'ի կանայս ազնըւագոյն Լաւոթոյէ:
Իսկ կենդանի թէ կայցեն 'ի ճամբարին, ըզկնի ուրեմն
Ոսկւով եւ արծաթով հանցուք 'ի մեզ, զի կան 'ի տան.
Զի բազումս օժտեաց զըստեր իւրում Ալտէս հոյանուն ծեր.
Այլ զըլուեալ եթէ իցեն, անդ ընդ յարկաւ իսկ Դըժոխոց
Կըսկիծ դառն խոռում սըրտիս եւ մօր նոցին ծնողացս իւրեանց,
Իսկ այլոց 'ի ժողովրդոցս եղիցի սուգ դիւրամոռաց,
Եթէ մի՛ եւ դու մեռցիս յԱքիլլէսէ բըռնահարեալ:
Այլ, որդեակ իմ, եկ մուտ ընդ պարըսպաւ, զի կեցուցցես
Զարս եւ զկանայս տրովացւոց, եւ մի՛ տացես Պելեածնին
Պարծանըս մեծ, եւ 'ի քաղցրըր արեւէդ անկցիս եւ դու:
Ողորմեա եւ եղկելւոյս ինձ տակաւին ողջամըտի,
Թըշուառիս՝ զոր Զըրուանեանն հայր աստ առ սեամս ալեւութեան
Դըժնէ բախտիւ կորուսցէ զանցեալս ընդ փորձ բազում վըշտաց,
Ըսպանեալըս որդեկացս եւ զդըստերացըս գերեալըս,
Քանդեալըս առագաստից եւ մանկըտւոյս մատաղերամ
Ըզգետնի հարեալըս 'ի խոր խոցեալ պատերազմի,
Եւ նըւանդըս քարշեալըս 'ի ժանտ ձեռացն աքայեցւոց:
Եւ զիս թերեւս հուսկ ուրեմն, ուր սուր պղընձով 'ի տէգ կամ նետ

Հարեալ ուրուք՝ յանդամոց 'ի բաց զոգիս իմ կորուսցէ,
Գէշ գէշ ցըրցըրեսցեն շաղղակեր շունք ընդ անդաստանս,
Զորս 'ի սան իմում սնուցի՝ սեղանակից ինձ պահապանս,
Որ յարիւնս իմ արբեցեալ, գազանացեալ յոգիս սաստիկ՝
Ի գաւիթս իմ գընիցեն։ Պատանւոյ մեռեալ է վայելուչ
Անկանել մարտից 'ի սայրս պատառելով 'ի սուր պղնձոյ.
Զի գեղեցիկ է 'ի մեռեալն անդամ որ զինչ հոլանիցի։
Իսկ զալեւոր յորժամ գլուխ, եւ ըզմօրուս ալեւորեալս
Եւ զամօթ խայտառակեալն ըզծերունւոյ աղանեսցեն շունք,
Այն է յոյժ աղիողորմ Թշուառականն մահկանացուաց։
Ասաց ծերն, եւ իւրայն քարշեալ ձեռօք զծամկեալ ալեան
Ի գըլխոյն ցըռէր փետէր, այլ չողոքէր զմիտս Հեկտորի։
Մայրն անդուստ յայլմէ կուսէ գործէր ողբովք գեր եւ աշխար,
Լանջս եւ ծոց մերկացեալ, միւսով ձեռամբն հաներեալ զստինսն՝
Ըղձալայութեւ բանս առ նա հեկեկալով բարբառեցաւ.
Հեկտոր որդեակ իմ, յայսցանէ պատկառեսջիր եւ յիս գըթա,
Թէ երբեք ցաւալածոյց մատուցի քեզ ըստին 'ի շանք,
Յուշ քեզ այն, սիրուն զաւակ, եւ յախտրիմ աննեգ զերծիր
Մըտեալ 'ի ներքս 'ի պարիսպս, եւ մի 'նդմա կար նահատակ.
Վայրագ, որ թէ զքեզ սպանանիցէ, ոչ եւս ուրեմն
Յանկողինս ըզքեզ լացից, սիրուն բողբոջ՝ զոր ես ծընայ,
Եւ ոչ կին քո յոգնօժիտ, այլ մեկուսի զքեզ յոյժ 'ի մերձ
Առ նաւուքն արգիւացւոց շունք կերիցեն երագաստունք։
Այսպէս աղաչ'էին սիրելի որդին լալեօք բարբառելեն
Բազմապաղատ ալեւորն. այլ զՀեկտորի միտս ոչ հաճեալ
Աքիլլեայ նա կայր մընայր ահաւորին՝ որ հասանէր։
Եւ զորէն վիշապ վայրագ 'ի ժանտաբուսիւ ճարակեալ դեղ՝
Սպասէ առն 'ի կաղաղին, եւ բարկ 'ի նա մըտանեն զայրոյթք,
Եւ հայի ահագնացայն՝ գալարս առեալ զորջովին շուրջ,
Հեկտոր այսպէս անշէջ մըրրկեալ հոգւով ջերմայր սեռք,
Յեցուցեալ զփայլուն ասպարն 'ի կարկառեալ ոտն ինչ բըրգան։
Բայց առ մեծամեծն իւր ոգի բարբառեցաւ նեղասրտեալ.
Եղուկ զիս. զի թէ 'նդ դրունս եւ ընդ պարիսպս մտցեմ 'ի ներքս,
Առաջին Պուլիդամաս ինձ Թըշնամանս դընիցէ,
Որ խրատն ետ 'ի քաղաք առնուլ ածել ինձ ըզզօրականս
Ըզկորուսիչ գիշերաւ՝ յոր Աքիլլէս յարեաւ դիւցազն,
Եւ ես ոչ անսացի, եւ օգտակարն լինէր արդեօք։
Իսկ զի այժմ ըզժողովուրդս կորուսի՝ կամակորեալ,
Ամաչեմ 'ի տրովացւոց, 'ի քօղաշուք եւ տրովուհեաց,
Զի քան զիս գուցէ այլ վատթարագոյն ոք ասիցէ.
Հեկտոր յանձն եւ 'ի կորովն իւր ապաստան՝ զազգըն կորոյս։
Զայս ասասցեն. եւ ինձ յոյժ պատկանեսցի յայնժամ յօգուտ՝

Դէմ ընդ դէմ կամ զԱքիլլէս ըսպանանել այնպէս տանել դարձ,
Կամ առաջի քաղաքիս գերափառել եւ կորընչել:
Իսկ զասպարս եթէ զնկեցեայ, եւ զծանր 'ի բաց եդեալ կոփզակ,
Եւ ըզատէզս յորմ յեցուցեալ՝ քաջն Աքիլլի 'նդ առաջ երթայց:
Զհելենէ եւ զդոյան ոսկւոյն՝ զոր խոր նաւուքն Աղեքսանդրոս
Ած ընդ 'ի Տրովա եւ սկիզբն եղեւ պատերազմիս,
Խոստացայց տալ Ատրիդայց տանել, համայն եւ աքայեանց
Բաժանել զուգամասն յորոց քաղաքս յինչն ընդգրկէ.
Եւ տալ 'ի արտաքսելոց երդումն առեալ զաւագանւոյն՝
Մի՛նչ ընդ Թաքուցանել, այլ զամենայն արահել յերկուս
Զոր քաղաքս ըղձալիերս բովանդակէ յինչն բաւացուած:
Իսկ առ իմ է զայդպիսի խնամ սրտիս առ իս խօսել.
Գուցէ իմ ողոքուոր առ նա դիմեալ՝ չողորմեսցի,
Ոչ երկոտ ինչ արարեալ՝ սպանցէ զանզէնն զիս
Այնպէս որպէս ըզկին մի, թէ 'ի զէնուցս մերկացայց:
Չէ եւ չէ ինչ ընդունելի այժմ 'ի կաղնւոյ կամ 'ի վիմէ
Ընդ սմին հեզաբանել որպէս ինչ կոյս եւ պատանեակ,
Որպէս կոյս եւ պատանեակ լինին 'նդ միմեանս հեզաբանելի:
Լաւ էցէ մխել 'ի կռիւ, զի հուպ ընդ հուպ տեսանիցեմք՝
Ո՛ւմ արդեօք Ողիմպականն ըղձալին իցէ պարգեւելոց:
Զայսոսիկ կայր խորհէր, իսկ Աքիլլէս եհաս առ նա
Արիսի նմանակերպ սաղաւարտախրոխտ մրրկականին,
Ճօճելով յաջմէ ուսոյն զՊելիոնեան հացին ահեղ,
Եւ զիւրեւ շողշողէր պղնձն համայն փայլատակման,
Կամ հրոյ բորբոքելոյ, կամ արեւուն վաղորդայնի:
Յայն տեսիլ ըզՀեկտոր կալաւ դողումն, եւ ոչ իշխեաց
Մնալ անդ, այլ յերկիւղէ զդրունսն թողեալ՝ փախեաւ ահիւ,
Եւ Պելեանն յառաջ 'ի արագութեւ քաջախիզակն թռչելու ըղհետ:
Զոր օրինակ ցինն 'ի լերինս, օդապարիկն երագագոյն,
Խոյացեալ թեթեւաթռիչ 'ի դողդողուն մի աղաւնեակ՝
Որ խուսափեալ խուսափէ, իսկ նա մերձեալ սրաձայն կանչելով
Յարձակի հուպ ըստէպ, ունել ըղձեալ երեւեալ խրախոյս.
Ըղձոյն եւ սա զէպ ուղիղ մղեալ սլանայր, սակայն Հեկտոր
Ընդ տրովեան պարսպովն յահէն ըղծունկանն երագ շարժեալ սաւառնայր:
Արդ անցին ընդ դիտանոցն եւ ընդ հողմուտն մոլաթուզ
Անցեալ միշտ ընդ պարըսպաւն զարահետն կառականին,
Եւ եկին հասին յականսն գեղաբուխ, ուր աղբերքն
Երկոքին աղբեւրակք յորձանահոս Սկամանդրոսի.
Մին բղխեալ ջերմախառն, եւ 'ի նմանէ ծուխ ցոլացեալ
Իբր 'ի հրոյ վառելոյ. իսկ միւսն հոսեալ յաւուրս հնձոց
Զօրէն կարկտի կամ ցուրտ ձեան, կամ ջրատմած պատեալ սառին:
Անդ կային մերձ առ նոքօք լայնատարած լուացարանք

Գեղեցիկք, վիմատաշք, ուր ըղպայծառ ձորձսն փափուկ
Լուանային կանայքն եւ գեղապէշ դստերքն տրովեանց
Նախկին յաւուրս խաղաղութեան՝ չեւ աքայեանց եկեալ մանկանց:
Ընդ այն դիմեալ վարգէին, մինն 'ի փախուստ, միւսն հետամուտ.
Փախչէր քաջն յառաջոյ, զնա քաջագոյն վանէր շտապաւ.
Զի ոչ երէ առնուլ եւ ոչ որջանանի՝ եդեալ էր կէտ,
Որպիսի յաղթանակք պարշտապարաց են ոտերոյ,
Այլ զոգւոյն Հեկտորի ձիավարժին էին արշաւք:
Իբր ըղկիտենիւն երիվարք գուպարայաղթք սաւառնասմբակք
Ասպարիսին ձեռս 'ի ձեռաց, եւ կայ եդեալ մրցանակ մեծ
Եռոտանի կամ թէ կին՝ պատուիւ քաջին առըն մահու.
Նոյն օրէն զքաղաքաւըն Պրիամու սրաթռիչ ոտիւք
Պատեցան երիցըս շուրջ, դիք 'ի զննին կային հանուր.
Եւ սկըսաւ առնել խօսս հայրըն մարդկան եւ աստուածոց.
Ո՛վ դիք, զայր սիրելի հալածական ըզպարըսպաւն
Աչօք իմովք տեսանեմ ահա, եւ իմ մորմոքի սիրտ
Ընդ Հեկտոր, որ ձանձրերաց ինձ արջառոց յոլով այրեր
Ի կատար յոգնահովտին լերինն Իդայ, եւ յայլ նըւագս
Ի բարձրաւանդ քաղաքին. եւ զնա դիւցազն այժմ Աքիլլեւս
Զաստանիւըն Պրիամու արընթաց ոտիւքըն առաջնորդէ:
Այլ եկայք հարցփորձ արէք, դիք, եւ խորհուրդ առէք 'ի միջի,
Թէ արդեօք թափեալ ըզնա 'ի մահուանէն ապրեցուցանիցուք,
Թէ Պեղեան Աքիլլէ տացուք ըզքաջըն սանձել նըկուն:
Աթենաս աստուածուհին խաժակն առ նա բարբառեցաւ.
Ո՛վ հայրդ ամպաթուխ՝ կայծակնացո՛լ, զի՞նչ բանքդ իցեն.
Զայր ծընեալ մահկանացու, ճակատագրեալ վաղուց յօրհաս,
Կամի՞ս քեզ 'ի չարագոյժ մահուանէն արդ կեցուցանել.
Երթ արա. խակ միւս դիքս ամենեքին ոչ հաճեսցուք:
Առ նա պատասխանի ամպրոպայինն ետ Արամազդ.
Զօրացիր, Կառափնածին՝ դուստր սիրուն, ոչ ինչ սրտանց
Եւ սըրտի միտօք ասեմ, եւ քաղցր առ քեզ լինել կամիմ:
Արի՛ 'ստ կամաց խորհըրդոցըդ գործ առաջիր, եւ մի՛ դըլէր:
Զայս խօսեալ՝ յորդորեցոյց զյառաջամիտըն զԱթենաս,
Որ թռուցեալ 'ի գագաթանց Ողիմպոսին էջ ձեռ ընդ ձեռ:
Այլ զՀեկտոր՝ ժիրն Աքիլլեւս հար ըշտապաւ վանէր անդուլ:
Որպէս զեղջերու 'ի լերինս յորժամ բարակ հետավարէ
'Դրաստուցեալ 'ի խըշտակայն ընդ ձորամէջս եւ ընդ անտառս,
Եւ ըզնա՝ թըփամուտ թէպէտ յանհէն սալարիցի,
Բայց ըղկիտ հետաղօտեալ ընթանայ ցանդ մինչեւ գըտցէ.
Այսպէս ո՛չ թաքեաւ Հեկտոր 'ի սրայարձակ Պեղէասածնէն:
Եւ քանիցս անգամ դիմեալ 'ի դարդանեան դէպուղիղ դրունս
Առնոյր վազս արշաւասոյր ընդ ամրաշէն աշտարակօք,

Զի թերեւս 'ի վերուստ լքեալն օգնել նորին նետուք ,
Նոյնքանեաց անձապարեալ վանէր ընդոս յառաջ 'ի դաշտս ,
Բայց եւ նա դարձեալ անդրէն միշտ 'ի քաղաքն կոյս սլանայր :
Զոր օրինակ հասանել ընթացելոյ չէք ինչ յանուրջս ,
Ոչ փախչել մին 'ի միւսմէն , ոչ ժամանել կարէ միւսոյն ,
Ըմբռնել նոյնպէս ոտիւք սա զնա չմարթէր , ոչ նա զերծուլ :
Եւ զիա՞րդ էր Հեկտորի յորահասէ մահուն ապրել ,
Թէ վայր յետին նուագ եւ վերջին ոչ Ապողոն մատչէր առ նա ,
Որ զօրեղոյց ըզզօրութիւն նորին եւ զծունկսն ձեռնլիս :
Իսկ գլխացաղարն Աքիլլէս սաստէր գլխովն 'ի զօրականն ,
Եւ նետիւքըն դառնաթոյն՝ ձիգ 'ի Հեկտոր չըտայր զընել ,
Մի խոցեալ ուրուք տարցի զպարծանսն եւ ինքն երկրորդ գայցէ :
Իսկ յորժամ չորրորդ նուագ ժամեան եղեն յաղբերականսն ,
Անտի յայնժամ զոսկեղէն կշիռսն Հայրն եհան 'ի վեր ,
Ի նժարսն ընկէց երկուս երկարաքուն մահուն վիճակս ,
Ըզմինն՝ Աքիլլի , զմիւսն Հեկտորի ձիահալածին ,
Եւ զմէջըն կալեալ ամբարձ , եւ Հեկտորեան օրհասին բաժին
Ի դժոխս էջ մէտ 'ի մէտ . Գուշակին եթող զինքն Ապողոն :
Եւ առ Պելեանն՝ Աթենաս հասեալ խաժակն աստուածուհոյն ,
Առ ընթեր մատուցեալ՝ բարբառեցաւ ըզթեւաւոր բանս .
Այժմ ունիմ արդ , սիրելիդ Արամազդայ՝ վեհդ Աքիլլէս ,
Մեզ պարծանս մեծ տանել աքայեցւոց 'ի նաւատորմն
Ըսպանեալ ըզՀեկտոր զանյագագոյնն 'ի պատերազմ :
Չիք արդ այլ եւս նմա փախըստեան ապրել 'ի մէնջ ,
Եւ ոչ թէ յոյժ իմն Ապողոն կորովաձիգն աշխատ լիցի
Առ ոտս հօրն ամպարափայլն Արամազդայ թաւալելով :
Սակայն դու կաց առ անդէն եւ ողջ առ , եւ ես երթամ
Եւ ըզնա ես խաբ հաճեմ՝ կալ զուգապարել ընդ քեզ 'ի մարտ :
Զայս ասաց Աթենաս , եւ նա բերկրեալ հոգւովն անսաց ,
Եւ եկաց 'ի վերայ պղընձածայրեգ հացաւոյն 'ի յեց :
Իսկ նորա թողեալ ըզնա՝ 'ի գիւցայինն Հեկտոր չոգաւ
Անձամբ եւ անվրէպանդ ձայնիւ հանդոյն Դէիփոբեայ .
Եւ կացեալ առընթեր՝ բարբառեցաւ ըզթռչունս բանս .
Զիդ ըզհետ մղեալ , եղբայր , տագնապէ զքեզ ժիրն Աքիլլէս
Զքաղաքաւ Պրիամեան երագ ոտիւքն հալածելով .
Ե՛կ այժմ՝ զանեղի ասցուք եւ պընդապէս կացցուք ըզդէմ :
Եւ նմա պատասխանի մեծըն Հեկտոր սաղաւարտաձոյ .
Ցիրաւի , Դէիփոբէ , ինձ սիրելի էիր կանխաւ
Ի մէջ եղբարց զոր Պրիամոս եւ Հեկաբէ ծնեալ արդիւս ,
Եւ այժմ եւս առաւել զընեմ 'ի միտ մեծարել զքեզ ,
Քանզի՞ եդ յաչն արկաներ՝ յանձին կալար իմ աղագաւ
Ելանել ըստ պարսպաց , իսկ այլք 'ի ներքս անդ կան մնան :

Առ նա կըրկնեալ Աթենաս ասէ խաժակն աստուածուհին.
Եղբայր՝ յոյժ աղաչէին արդարեւ հայրն եւ մայր արգոյ
Եւ ընկերք միահամայն զծընկօք փարեալ մի՛ առ միոջէ
Մնալ ինձ անդ, զի այնպիսի զդողի հարեալ կան համօրէն.
Սակայն անձն իմ յիս 'ի ներքս յանհընարին սուգ տառապէր:
Օ՛ն արդ այժըմ դէմ ընդ դէմ մաքառեսցուք արիաբար,
Մի՛ արգելանոց ինչ անկցի խըխոյ, տեսցուք թէ Աքիլլէւս
Հարեալ ըզմեզ՝ արիւնոտ աւարըն կապուտ 'ի գոգեալ նաւսն,
Եթէ թերեւս 'ի քումմէ գեղարդանէդ անկցի տապաստ:
Զայս ասէր Աթենաս եւ նենգաւորք կարապետէր:
Իսկ յորժամ ընթացեալ հասին սոքա հուպ առ միմեանս,
Առ նա նախ բարբառեցաւ մեծըն Հեկտոր կորդակախոռոխ.
Ոչ եւս այլ, որդի Պեղեայ, երկեայց 'ի քէն որպէս յառաջն
Ըզ Պրիամու մեծ ոստանիւ փախեայ երիցս, ոչ ժուժեցի
Կալ առաջի եկեց քոյ. բայց այժմ հոգիս զիս յորդորեաց
Ի դիմի քեզ հարկանել, զի կամ սպանից կամ ըսպանցիմ:
Այլ արդ եկ՝ ըզդիսն ընդ մեզ կալցուք վըկայս, նոքին լիցին
Վըհագոյն երաշխաւորք եւ սահմանք պաշտպանք ուխտի.
Մի՛ ես ըզքեզ զըզուեցից զըժնէաբար թըշնամանօք՝
Թէ ինձ տայցէ ժոյժ Արամազդ, եւ ըզհոգիդ քո խլեցեմ.
Այլ ասար առեալ 'ի քէն ըզշքեղ զէնսդ, Աքիլլէւս,
Տաց աքայեանց ըզմարմինդ, ըզնոյն եւ դու 'նդ իս առնիցես:
Ակնարկեալ շոյտն Աքիլլէւս 'ի նա տխրօք աչօք՝ ասէ.
Մի՛ 'նդ իս, Հեկտոր՝ զըժպըհիդ, ըզպայմանաց ինչ բան ճառեր.
Զոր օրինակ առիւծուց եւ մարդկան չիք ինչ ուխտ աննենգ,
Եւ ոչ գայլք եւ գառինք համամըտեալք միաբանեն,
Այլ չարիս միշտ 'ի վերայ խորամանկեն միմեանց անդուլ,
Նոյնպէս ոչ գոյ ինձ եւ քեզ կալ 'ի համբոյրս, եւ ոչ դաշինք
Եղիցին մեզ ըզնաւ, չեւ միոյն զի անկեալ թաւալ
Տալ արեամբն յագուրդ Արեայ՝ զըժտախտեւ գուպարողի:
Զամենայն արդ քաջութիւն յաչըս քո դիր, պիտի յոյժ արդ
Լինել քեզ կորովաձեռդ եւ քաջասիրտ պատերազմօղ:
Չիք քեզ այլ եւս ինչ փախուստ, եւ Աթենասն ըզքեզ Պալլաս
Նուաճեսցէ փոյթ յիմ աշտէն, այժմ հատուսցես միահաղոյն
Զհամօրէն ցաւս ընկերացս որ 'ի մըկունդ մոլեալ սպաներ:
Ասաց, եւ ճօճեալ զերկայնաստուերն ընկէց նիզակ.
Զոր տեսեալ 'ի հանդիպոյն՝ խուսեաց Հեկտոր շըքեղաճոխ,
Զի նախատես լեալ նըստաւ, եւ պղընձի տէգն անց 'ի վերուստ՝
Վարսեցաւ 'ի գետին, զոր Աթենաս խըլեալ Պալլաս,
Աքիլլեայ՝ գաղտ յիշխանէն արանց մատոյց 'ի Հեկտորէ:
Իսկ Հեկտոր առ հրաշակերտըն Պելիդեան բարբառեցաւ.
Վրիպեցեր, Աքիլլէւս աստուածանման, եւ ոչ ծանեար

Թէ եհաս ճակատագիրս յԱրամազդայ, բայց աստեր·
Այլ խօսող դու գլուար եւ խաբեբայ նենգաւորաւոր,
Զի զկորով եւ զարութիւն յահէ քումմէ մոռացայց ես:
Բայց ոչ յիս 'ի փախչելումս հարցես նիզակ ընդ թիկնամէջս,
Այլ 'ի կուրծըս դէպուղիղ վարեալ մըխեա յարձակելոյս՝
Թէ աստուած ետ քեզ, եւ արդ յիմմէ պղնձէ տիգէս խուսեա,
Զոր ո՛ տայր՝ թէ ամենուիր զայն ընկղմնակ 'ի քո մարմինդ·
Ցայնժամ քոյդ սատակելովդ թեթեւագոյն լինէր արդեօք
Տրովացւոցըս պատերազմ, զի դու նոցին եղեան ես մեծ:
Ասաց, եւ ճօճելով զնիզակն կարի զերկայնաստուեր,
Եւ զետեղ անվրէպ 'ի պորտաւորն վահանի Պելեածնին·
Բայց 'ի բաց թօթափեցաւ անդէն յասպարէն, ցասեաւ Հեկտոր
Զի աշտէն երագաթեւ 'ի զուր սլացաւ յձեռաց բազկէն:
Եւ եկաց կոր 'ի գլուխ, եւ չէր իւր այլ զեղարդն հացի·
Եւ ձայնէր զԴէիփոբոս սպիտակավահանն ուժգին գոչմամբ,
Եւ խնդրէր 'ի նմանէ մեկուսն երկայն, իսկ նա չէր մերձ:
Խելամուտ եղեւ Հեկտոր յիւրում սրտին եւ խօսեցաւ·
Վա՜հ, անշուշտ դիք յայտնապէս հրաւիրեցին զիս առ 'ի մահ,
Զի զդիւցազն համարեցայ զԴէիփոբոս ընդ իս լինել,
Սակայն նիստն 'ի պարըսպին, եւ զառանցեաց զիս Աթենաս:
Իսկ արդ մերձ առ իս է մահ եղկանատոր, եւ ոչ հեռի,
Եւ չիք հրաժեշտ, զի հաճոյ 'ի նախնումէն այսպէս եղեւ
Արամազդայ եւ Նետողին՝ որդւոյ իւրում, որ զիս կանխաւ
Մըղապահուր պաշտպանեցին, իսկ այժմ Օրհաս յիս ժամանէ·
Սակայն մի վատաբար կորեայց բնաւ անփառունակ,
Այլ մեծապարծ ինչ յուշեալ եւ ապագայիցն արժանալուր:
Զայս խօսեալ եւ ձըգեալ ըղսուրն հատու վաղակաւոր՝
Որ կախեալ կայր զաղդերէն՝ ըղմեծամարմն եւ զմեծատարր,
Եւ կըծկեալ ընդոստեաւ խոյաւ արծուի բարձրաթըռիչ՝
Որ յամպոց խաւարային սըլացեալ 'ի դաշտ առապարէ
Ցափշտակել զորոջ մատաղ կամ զնապաստակ վատասիրտ,
Նոյնպէս Հեկտոր խոյացաւ շողացուցեալ ըզսուրըն սուր:
Սըրացաւ եւ Աքիլլէս, սիրտ ամեհի լի բարկութեամբ,
Եւ ծածկոյթ արկ ըզվահանն 'ի հանդիման լանջաց իւրոց
Ըզչըքնաղն արուեստակերտ, եւ սաղաւարտ չորեքխոյեան
Տատանէր փայլակնացայտ, եւ գեղափայլ ծածանէին
Ոսկեգէսք զորս Հեփեստոս էր 'ի խորանան անդ արկեալ հոծ:
Որպէս 'ի խոր գիշերի յարփիւցն աստղ ընթանայ
Գիշերավարըն կառուցեալ գեղեցկագեղ աստղ 'ի յերկինս,
Ցայտէին այսպէս նըշոյլք 'ի սուր սլաքէն զոր Աքիլլէս
Հեկտորի դիւցազնամարմին խորհեալ չարիք՝ ճօճէր յաջում
Ի կայտառ դիտեալ երանն, ընդ ո՛ր լիցի դէն դիւրամուտ:

Եւ զնորա մարմինն ողջոյն պատէին զէնքըն պղընձաձոյլք,
Գեղեցիկք, զոր կողոպտեաց 'ի Պատրոկլէ սպանեալ ըզքաջըն·
Այլ երեւէր, ուր անրակքն յօդեն յուսոց 'ի պարանոց,
Ըմբշափողն՝ յորում եւ է հոգւոյն կորուստ երագահաս։
Ընդ այն գիւցազն Աքիլլէս 'ի յարձակեալն 'ի վերայ իւր
Մխեաց զաշտն, եւ ընդ փափուկ ուլն եղ սլաքըն թափանցանց·
Բայց հատցէն պղընձաղէն ոչ ըզկոկորդըն խըղխատեաց,
Մինչեւ չկարել ինչ խօսել նորա բանիւք պատասխանի։
Զգետնեցաւ 'ի փոշւոջ, եւ Աքիլլէս պանծաց գիւցազն·
Անէիր երբեմն, Հեկտոր, 'ի կողոպտելդ ըզՊատրոկլէս,
Անպատուհաս կալ յինէն հեռաւորս անձն ինչ չածեալ։
Պանդխտիր, նորա մեծապօր քինախնդրողիդ անդ 'ի բացէ
Ի քաջախալըն դաղաւարս ըստ նորանէկն մնայի ես՝
Որ ըզծունկըս քո լուծի· եւ արդ ըզքեզ շունքն եւ հաւք
Կեղեքեսցեն դէշաղէշ, իսկ զինքն աքեանք յուղարկեսցեն։
Եւ յոգնեալ աղաղակաւ սաղաւարտածածն ասէ Հեկտոր·
Վասն արեւուդ եւ ծընկացդ, յանուն ծնողացըդ աղաչեմ,
Մի 'նկենուր զիս առ նաւուք՝ աքայեցւոց կեր լինել շանց,
Այլ պղինձ եւ ոսկի բազում առեալ քո 'ի պարգեւ,
Զորըս հայր իմ եւ մայրըս մեծապրոյ մատուսցեն քեզ,
Ըզմարմինս 'ի տուն դարձո, զի զմահացեալըս՝ 'ի հրոյ խարոյկ
Վիճակեսցեն տրովացիք եւ ամուսինք տրովադացւոց։
Երագոան Աքիլլէս խոժոռակնեալ ակամբ ասէ·
Մի դու, շո՛ւն, ծընկօքս ինձ զիս աղաչէր, եւ մի ծնողօքս·
Ցանկամրծ սիրտ իմ զիս ինքն եւ զայրացուցանէ յօժարէին,
Յօշեալ ողջ ողջ ուտէի զմարմինդ, յոր սակս ինձ արարեր·
Վասն որոյ եւ չիք ոք այն՝ որ 'ի գըլխոյդ վանեսցէ զշունս,
Նա եւ ոչ՝ տասնապատիկ, քսանապատիկ նոյնչափ պարգեւս
Այսր ածեալ թէ կըշռեսցեն, եւ ուխտեսցեն այլ եւս յոլով·
Նա եւ ոչ՝ եթէ'նդ ոսկւոյ բառնալ ըզքեզ տացէ հրաման
Դարդանեանըն Պրիամոս, եւ ոչ այնպէս արգոյդ քո մայր
Ցանկալին կողմնեցուցեալ կածեսցի զքեզ զորդըն ծընունդ·
Այլ ծըրձեսցեն զքեզ ողջոյն պատառ պատառ շունք եւ թըռչունք։
Իսկ Հեկտոր կորդակաձօձ յոգւոց պարզելն ասէ առ նա·
Հայեցեալ 'ի քեզ ուշիւ՝ 'ի մտա ածանեմ թէ չգոյր անել
Զքեզ յաղերս, զի սիրտ անշուշտ 'ի լանջըս քում է երկաթի։
Այլ արդ տես, գէց ինչ գուցէ վրէժխնդրութիւն քեզ ածեցից
Յաւուրն յորում Պարիս եւ Ապոլոն Գուշակն ըզքեզ
Կորուսցեն ըզքաջայաղթըդ հուպ առ դրունս Սկեւմեանց։
Ի խօսել իւրում զայս անկաւ զիւրեւ վախճան մահու,
Եւ հոգին յանդամոցըն սըլացեալ էջ 'ի դըժոխս
Ընդ բախտն իւր ճըչելով, թողեալ զարբունըն եւ զարութիւն։

Առ նա դիւցազն Աքիլլէւս եւ առ անշունչ բարբառեցաւ.
Մեռիր դու. իսկ ես զՕրհասն՝ ուր կամք իցեն Արամազդայ
Եւ այլոց դիցն անմահից դընել վըճիռ՝ անդ ընկալայց:
Ասաց՝ եւ 'ի դիոյն ձըգեալ եհան զարդնըին պղընձի,
Եւ եդեալ զայն 'ի մի կողմ, զարիւնոտ զէնսն յուսոց զերծոյր.
Իսկ 'ի վայրն ընթանային այլ եւս որդիք աքայեցւոց,
Հայէին պքանչացեալք ընդ հրաշալի զեղն եւ հասակ
Հեկտորի՝ առ որ չեկաց ոք մերձ առանց վէրըս տալոյ:
Եւ այր յընկեր ակնարկեալ՝ բարբառէին զայս առ միմեանս.
Ո՛վ զարմանք, քանի՛ կակուղ եւ ձեռնըմխել է այժմ Հեկտոր,
Քան յորժամ հուր 'ի նաւսն եհար բոցով բորբոքելով:
Զայս ասէր իւրաքանչիւր՝ եւ մատուցեալ խոցէր ըզնա:
Իսկ քաջոտն Աքիլլէւս դիւցազն առեալ ըզկողոպուտն՝
Ի մէջ անդր աքայեցւոց կացեալ զթըռուչուն խօսեցաւ բանս.
Ո՛վ սիրելիք, զօրավարք աքայեցւոց եւ առաջնորդք,
Քանզի զայրըդ զայդ աստուածք 'ի պարտութիւն մատնեցին ինձ,
Որ քան զայլսն ամենեսին բազում ընդ մեզ գործեաց ոճիրս,
Օ՛ն եկայք անցցուք զինուք ըզքաղաքաւ 'ի հանդէսի,
Զի խելամուտ լինիցիմք՝ տրովադացւոց զինչ միտք իցեն.
Թէ զքըղեակ քաղաքին լըքանիցեն անկմամբ սորա,
Եթէ տոկալ ժըտիցեն եւ յետ մահուանըն Հեկտորի:
Այլ ըզմէ՞ զայդոսիկ բարբառիցի առ իս իմ սիրտ:
Անդ անթաղ եւ անլաց անկեալ դընի մեռեալըս առ նաւս,
Պատրոկլոս, զոր չմոռացայց մինչեւ իցեմ 'ի կենդանիս
Եւ ծունկք իմ սիրելիք 'ի քայլափոխըս շարժիցեն:
Եւ 'ի Դըժոխս իսկ մեռեալքն եթէ իցեն անյիշատակ,
Սակայն ես եւ անդանօր զսիրունն ընկերըս ընդ ուշ տարայց:
Արդ եկայք, աքայեցւոց մանկունք, նուագեալ զյաղթողականն՝
Ի խորափոր նաւատորմն արասցուք դարձ, տարցուք եւ զսա:
Գործանք մեծ ժառանգեցաք, սատակեցաք զդիւցազն Հեկտոր,
Ում պաշտօն տանէին տրովեանք յաստուածն իբր աստուածոյ:
Ասաց, եւ 'ի դիւցազն Հեկտոր կազմէր գործ անարժան.
Զերկոցուն ոտից կըրընկանց ծակեալ յետուստ կուսէ զըղձըղունս
Ի ներբանից մինչ 'ի կոճս, եւ խրացս արկեալ արջառենիս՝
Ըզկառացըն կապեաց, եւ զգլուխն եթող դընալ ընդ քարշ.
Եւ յերկձիսն անդ ամբարձեալ՝ առեալ եւ զզէնսըն պերճափայլ՝
Մտրակեաց յառաջարկս, եւ թռչէին նոքա յօժար:
Եւ 'ի քարշ ձըգել նորա մըրրկէր փոշին, եւ գէսքըն սեաւք
Ըզվայրօք ածէին եւ կայր հողեալ գըլուխն ողջոյն,
Որ երբեմն էր շնորհալից, բայց Արամազդ մատնեաց յայնժամ
Ոսոխացն 'ի թըշնամանս 'ի հայրենի երկրին իւրում:
Այսպէս սորա գլուխն համակ հողաթաւալ գնայր ընդ փոշի:

402

Իսկ մայրն ըղձերաղն փետէր եւ զպայծառ քօղն ընկէց 'ի բաց,
Եւ յորդեակն իւր հայեցեալ՝ գուժեաց ուժգին մեծաձայն :
Աշխարէր ողորմ ողորմ ծերուկն հայր, եւ ժողովուրդն
Համօրէն ընդ տատանն 'ի ձիչ եւ յողբ կայր համակեալ·
Նման յոյժ էր կերպարանքն՝ իբր Իլիոս թէ բարձրայօն
Հիմն 'ի վեր հարթայատակ հրդեհակէզ տապալեսցի :
Հազիւ հազ թէ ամբոխք ըղձալիրալից ծերոյն ունէին
Որ ընդ դրունսն դարդանեան ելանել գուն գործէր 'ի դուրս,
Թախանձէր զամենեսին ընդ աղբ գալարեալ ու՛նդ աղաչաւոր,
Ցականէ յանուանէ կարդալով զայր իւրաքանչիւր·
Ի բաց կացէք, սիրելիք, թէպէտ 'ի սուգ, թո՛յլ տուք միայն
Ելանել ըստ քաղաքս եւ յաքայեանց գնալ 'ի նաւս·
Զայրըդ զայդ աղաչեսցից զեղեռնաւոր եւ ոճրագործ,
Թերեւս ակն 'ի հասակէս ածցէ, ալեացս ողորմեսցի :
Զի եւ նմա իսկ այսպիսի է տարաբէն հայրն Պեղեւս՝
Որ զնա ծնեալ եւ սնուցեալ արտեւապացեալ 'ի պատուհաս,
Տանուանդ ինձ տուաւել քան զոլորից՝ ցաւոց մորմոք :
Զի զայնչափ զիմ մանկանս զուարթածաղիկ արկ յարեւէ,
Զորս ոչ այնպէս ողբամ զամենեսին 'ի կրակիծս իմ,
Որպէս ըղձիդ զայդ որոյ սուգ ծանր 'ի Դժոխս իջուսցէ զիս,
Ըղձեկտոր, զոր ո՛ տայր թէ աստ 'ի գիրկս իմ մեռանէր·
Զի յայնժամ յագէաք ողբովք մերովք եւ արտասուօք
Մայրըն չուառական ծընող նորա եւ ես ինքնին :
Զայս ասէր լալահառաչ, եւ քաղաքին հեծէր ամբոխ :
Իսկ 'ի կանանց Հեկաբէ հեկեկանացն արար ըսկիզբն·
Դառնանայր հեծեծէր ա՛ւ ինչ լեցէ, որդեակ, յետ քո մահուդ
Զարեւ տեսանել, որ ինձ 'ի տուէ եւ գիշերի
Էիր փառք յոսաւոնիս, եւ ընդ քաղաքս հանուրց օգնան,
Տրովացւոց եւ տրովուհեաց, զոր իբր աստուած ողջունէին·
Զի էիր նոցա պարծանք մեծ ճշմարտիւ 'ի կեանս քում,
Իսկ այժմ ահաւասիկ Օրհաս ըղձկեղ ունի եւ մահ :
Զայս ասաց ողբաձայնիւ· կինն Հեկտորի չէր իմացեալ,
Զի ոչ չոգաւ ոք առ նա աւետապատում զրուցատար՝
Ասել նմա զի էր այր նորա մնացեալ արտաքոյ դրանցն·
Այլ նա յայլըս ներքին տանըն բարձու կըկէր ոստայն,
Ծիրանի ձորձ երկդիմի՝ պէսպէս ծաղկեալ նըկարակերպ :
Պատուիրեալ ընդ աղախինան էր աղախնանց վարսագեղից
Կազուցանել 'ի խարոյկ հրատին ըզմեծն յեռոտանիս
Ի ջերմաջուր Հեկտորի լուացուածն 'ի դարձ պատերազմին :
Մեռանիս· ոչ իմանայր՝ զի յոյժ 'ի բաց 'ի լոգանաց՝
Ըղձա խաժակն Աթենաս պարտեալ 'ի ձեռն էր Աքիլլեայ :
Ձայն գուժի եւ կականման յունէն իւր հընչեաց յաշտարակէն,

Ըղձալի հարսն անդաւանին, 'ի ձեռանէն անկաւ կրկոցն,
Եւ անդէն ձայնարկեաց առ գանգրագեղ նաժշտաւնսն.
Օ՜ն արիք ընդ իս երկուք, երթայց տեսից զինչ գործեցաւ.
Ձայն լըսեմ ըզմեծարոյ սկեսրիս, եւ յիս 'ի լանջըս իմ
Թըռնգայ վաղէ սիրտս 'ի բերան, ծունկքս 'ի ներքոյ 'ի պաղ մածնուն:
Մօտալուտ հասեալ արդեւոյն է Պրիամու եղեան անշուշտ.
Քա՛ւ բանդ այդ յունկանես, այլ մեծապէս յայժ երկընչիմ,
Գուցէ զիւցազն Աքիլլէս զքաջայանդուգն իմ ըղձեկեալ
Միմաւոր հասեալ ընդ դաշտն 'ի քաղաքէս հալածական'
Ասմիցէ նըմին զըրաւ 'ի չարաշուք արութենէն
Որ 'ի նմայն էր տարրացեալ, զի չկայր երբէք 'ի խառն արանց,
Այլ յառաջակ յառաջակ խաղայր, քաջութեամբ ոչ ումեք յետնորդ:
Զայս ասաց, եւ 'ի տանէն արագաւ հանգոյն ցըմոլեկեալ
Սիրտ 'ի թունդ եւ 'ի դող. զնոյին ընդ իւր եւ աղախնայք:
Իսկ հասեալ յաշտարակն եւ 'ի մարդկանն ամբոխակոյտ,
Եւ կացեալ 'ի պարըսպայքն' շուրջ ած զաչերն, եւ ետես ըզնա
Քաղաքին դէմ յանդղխման ընդ քարշ վարեալ, եւ ըձիսն երագ'
Զի ձգէին զնիգն անողորմ 'ի գոգաւոր նաւս աքայեցւոց:
Գիշեր խաւարական մածեալ ծածկեաց զականադեան,
Յետոյս կոյս գլորեցաւ, ոգի զոգւով անէր նուաղ:
Ի բաց հոսեաց 'ի գըլխոյն զպերճապայծառ զարդուցըն շուք,
Զապարօշն, ըզծածկակալ եւ զգինդըշաւկն իւր ըղձալիէն,
Եւ ըզքօղըն զոր Աստղիկն ոսկեղէնիկ նըմա շնորհեաց
Յաւուրն' յորում զնիգն էած Հեկտոր աղաւաղատանծօճ
Ի տանէն Էետիոնի' բերեալ 'ի բիւրուց տըւեալ վարձանս:
Եւ զնովաւ շուրջ այր տաեալ խըռնեալ կային տագրք իւր եւ ներք,
Ունէին զնիգն յիւրեանս' որ թալանայր ձեռաց 'ի մահ:
Մինչ յոգիսոյն զարձեալ' 'ի միտս եղեւ եւ զգայս անձին,
Կոծ առեալ արտօսրալեաց' 'ի տրոմագինն արձակեաց ձայնս.
Հեկտոր, վա՛յ ինձ հեղիս. ուրեմն 'ի մի ծընեալ վիճակ
Դու եւ ես. դու 'ի Տրոյա' 'ի Պրիամեանն անդ ապարանս,
Իսկ ես' 'ի Թեբէ, յանտառախիտ Պլակեայ ստորոտ,
Ընդ յարկաւ Էետիոնի' որ զիս սընոյց 'ի տղայ տիոց,
Եղկելին զողորմելիս. ո՛ տայր թէ բնաւ իսկ չէր ծընեալ:
Իսկ արդ 'ի տուն Դըժոխոց, 'ի ստորինս խորս սանդարամետաց
Երթաս դու, եւ զիս 'ի սուգ ծանրաթախիծ թողեալ այրի
Յապարանսդ թողուս, եւ զեռ մանկիկս 'ի տհամ հասակ'
Զոր ծընաքըս դու եւ ես թըշուառականքս, եւ ոչ լիցիս
Դու նըմա 'ի օգնութ, Հեկտոր, քանզի մեռար, եւ ոչ նա քեզ:
Զի թէպէտ եւ ապրեսցի յաղէտաբեր խաղմէս աքեայց,
Սակայն առա միշտ ընդ իւր եղիցին ցաւք եւ տառապանք.
Զի օտարք ըզսահմանս անդոց իւրոց փոփոխեսցեն:

Որբութեանն օր յամենայն ամոխախից զըրկէ զմանուկ,
Ինքն հանապազ դըլխակոր, արտասուալից ծընօտք նորա:
Կարօտեալ երթայ աղայինքն առ բարեկամացն հօր իւրոյ,
Զամն ըղըօգինէն ձըգելով, յայլ ոք զձորձոցն բուռն հարեալ:
Ցողոդմել ուրուք նոցա՝ գուն մի զըմայինըն կարկառէ՝
Ըշըըրթանաւն եւեթ թանալ, եւ զձեռացն ոչ ստոգանել:
Եւ զըւարթ ոք հայր եւ մայր՝ 'ի խրախճանէն խակ մերժէ զնա՝
Գանալից կըտփեալ ձեռօք եւ հալածեալ նախատակոծ.
« Երթ ույգալես 'ի կորուստ, չէք քո՛ նդ մեզ հայր սահմարակից » :
Եւ զատանայ կողկողագին առ այրի մայրըն զնայ մանուկն,
Ոստանիկչխանծ՝ որ երըեմն 'ի ծունկս 'ի գիրկըս հօր իւրոյ
Ուղըղմէք եւեթ կերակրէր եւ պարարակ խոյոց ճարպով.
Իսկ լըռեալ 'ի աղայական խաղուցն յորժամ 'ի քուն երթայր,
Ի մահիճըս նըմըշէր եւ 'ի ծոցի իւրոյ ստընդուսին
Ի կակուղ անկողինս, 'ի փափկութեանց ըղմայլեալ սիրտ:
Իսկ արդ չմա՛ իւնչ 'ի սիրտն հօրէն զըրկեալ՝ չարչարեալ
Ոստանիկչխանս, յոր անուն արտմագայե զինքն յորջորջէն,
Զի դու միայն պահէիր զըպարծըը պարխող նոցին եւ զցըրօնս:
Իսկ այժմիկ՝ առ մահկանձեւ նատութն հեռի զըեղ 'ի ծնողաց՝
Կերիցեն զեռուն որդուճք ըղմերկդ՝ յեա չանց քեւ յազելը.
Փոխանակ զի առ ոըներն կան մըլթերեալ քեզ պատմուճանք
Նըրբանիւթք եւ շնորհաշուք, ատարադագործ կանանց անկուած:
Այլ ընկեցեալ 'ի հուր ծախիչ այրեցից արդ զայն ամենայն,
Զի քեզ չեն իւնչ պիտոյ, զոր ոչ եւս այլ ազանիցես,
Բայց 'ի փառս առ արտմադերանս եւ արտմուհիս եղիցին քեզ:
Զայս ասաց ողբերգէն, կանայքն ընդ իւր ջայլէին կոծ:

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ

Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Կոծ Միրմիդոնաց զօրացն Աքիլլեայ զմարմնովն Պատրոկլի. Աքիլլեւս ընդ քարշ ածէ զմեռեալ զդիականն Հեկտորի: Միրմիդոնք ընթրեն 'ի նաւսն Աքիլլեայ առատապէս, մինչ հրաւիրեալ բազմի 'ի կոչունս Ագամեմնոնի. արդ 'ի քուն լեալ իբր 'ի ծովափին՝ տեսանէ 'ի տեսլեան զհոգւոյ զուրուականն Պատրոկլեայ. խօսք նոցա ընդ միմեանս: Ընդ առաւօտն հարկանի փայտ, կազմի խարոյկ, մեծաւ յուղարկաւորութեամբ այրի դիականն Պատրոկլի, հաւաքեն ոսկերքն, կատարի թաղումն, եւ լինին հանդէսք պէսպէս խաղուց 'ի պատիւ թաղման նորա, եւ պատուին յԱքիլլեայ յաղթող նահատակքն պարգեւօք ըստ արժանի:

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ

### ՀԱՆԴԷՍՔ Ի ՊԱՏԻՒ ՊԱՏՐՈԿԼԻ

Օրինակ զայս ընդ քաղաքն հեծեծէին տրտում քաղքորդք·
Իսկ 'ի նաւս եւ Հելլեսպոնտոս աքայեցւոց եկեալ ժամուն՝
Սփռեցան ամենեքին իւրաքանչիւր 'ի նաւս իւրեանց ։
Բայց Աքիլլէս ոչ ետ Թողուլ Միրմիդոնաց ցրուել զգնդն·
Այլ 'ի մէջ քաջամարտիկ զինուորակցացն ասացեալ ասէ·
Երագաձի Միրմիդոնք, ընկերակիցք իմ սիրելիք,
Մի լուծցուք 'ի կառաց զասպարազմամբ երիվարեանն,
Այլ անդէն իսկ կառօքս երիվարօքս հասեալ մատուցեալ՝
Լացցուք զՊատրոկլոս, զի մեռելոց այն է պատիւ·
Իսկ յորժամ յագեսցուք 'ի զազրալի աշխարանաց,
Արձակեալ զերիվարս՝ ամենեքեան ընթրեսցուք աստ ։
Զայս ասաց· գաղմաղն համբարձին ձայնիւ ամ., եւ սկիզբն ետ Աքիլլէս ։
Զգեղաբաշ ձիսն երիցս բոլորակամբն վարեցին
Մրրմընջելով, եւ ընդ նոսա Թետիս եւս անդն էած ողբոց·
Արտասուօք Թանային աւազքն, Թանային զրահք զէնքն՝
Առ անձնակ այնպիսոյ Հետորդեան խուճապանաց ։
Եւ Պելեանն յորդառատահաս կոծոյն բաժակեցին արար նոցա
Եդեալ 'ի լանջս ընկերին զձեռսն իւր մարդասպանս·
Ուրախ լեր, ով Պատրոկլէ, եւ անդ 'ի տան Սանդարամետին·
Զխոստացեալս յառաջագոյն քեզ՝ կատարեմ արդ զամենայն,
Ըզհեկտոր այսր ձգեալ՝ շաղղաղակերս շանց ընկենուլ զնա,
Եւ մանկունս երկոտասան տրովադացւոց երեւելիս
Առ խարուկիդ խողխողել՝ ընդ քո սպանմանն սրտմտեալ ։
Ասաց, եւ 'ի գետնադաշն Հեկտոր երկնեալ գործ անպատեհ՝

Առ դագաղըն Մենիտեան որդւոյն ընկեց զինքն 'ի բերանս
Ի փոշւոյն, իսկ նոքա զպըղընձի զէնսըն պաղպաջուանս
Յանձանց մերկանային, լուծանէին զկուրխընջոյս ձիս.
Բազմեցան ըմբռնառըք զնաւաւ քաջորդն Էակեայ,
Նա նոցա զպատուականին տայր ընթրիս մատուցանէր։
Ցուլք բազումք սպիտակ զենեալ թաւալէին ընդ երկաթով,
Եւ պատրուճանք 'ի հօտից եւ յոգն այծք վըռնջապատշաճ,
Եւ յոլով ըմբոստաժանիք խոզեան 'ի ճարպ զեղապատեալ
Ի խորովս անկանէին 'ի բոց հըրոյն Հեփեստական.
Յամենուստ ըղջլակամըն աղբերահոս խաղայր արիւն։
Բայց զարքայն Պէլէեան առեալ զզաշտանըն ամենեքին
Առ դիւցազն Աղամեմնոն աքայեցւոցըն Թագաւոր,
Հազիւ ածեալ 'ի հաւան զառ ընկերըն տրտմաբեկեալ սիրտ։
Որ երթեալ երբեւ հասին առքա 'ի վըրանն Աղամեմնոնի,
Իսկ եւ իսկ քաջախօսնակ նուիրակացն ետուն պատուէր
Կանգնել եռոտանի մեծ 'ի հրատեղն, թէ համոզեսցեն
ԶՊէլէեանըն լըւանալ յանձնէն զարիւնն եւ զապաժոյժ։
Նա ըմբռնեալ հրաժարէր, եւս եւ երդմամբ յաւել երդուեալ.
Ո՛չ, 'ի մեծըն զէց երդուեալ՝ 'ի վեհագոյնըն յԱրամազդ,
Ոչ արժան, ոչ օրէն լուացումն 'ի գլուխս մատուցանել
Մինչ չեւ Պատրոկլոս եդեալ 'ի հուր, կանգնեալ շիրիմ,
Եւ ըղհերս իմ խըզեալ. զի ոչ եւս այլ այսուհետեւ՝
Մինչեւ կեցեմ կենդանի՝ խոցեսցի այսպէս սիրտս 'ի խոր։
Այլ լեցի հըպատակել այժմիկ տաղտուկ կերակրանաց,
Եւ ընդ այգըն զարթուսցես, արանց արքայդ Աղամեմնոն,
Բերել փայտ եւ պատրաստել որ ինչ պիտոյ են մեռելոյթք
Վախճանելոյ գնալ մըտանել 'ի մառախլուտ վիհ խաւարին.
Զի զնա հուր անհնածախ բարձցէ յաչաց փոյթ ըղկաջինջ,
Եւ լեցի ապա զօրուն դառնալ անդրէն 'ի գործըս իւր։
Զայս ասաց, եւ մըտադիւր լըւեալ նըմա հաւանն եղեն։
Եւ հապճեպ ընթրիս կազմեալ բոլորեցուն՝ խրախճանայքն
Մինչ ոչ եւս այլ 'ի զուգապաշար խորտիկ ըղձանըն կարօտել։
Իսկ յորժամ ըղձարարուոյն եւ ըմպանցի հարեն փափաքը,
Այլք 'ի քուն 'ի վրանս իւրեանց մեն մի գնացին իւրաքանչիւր։
Բայց Պէլէեանն երթեալ անկեալ առ բաղմաձայն ծովուն եզերբ
Խոր յոգւոց հանեալ զէնէր յոգունք հանդերձ Մըրմիդոնօք,
Ի մաքուր ուրեք ուր վէմք ալեացըն զափն ողողէին։
Անդ քուն զինքն յափըշտակեաց՝ զհոգս 'ի մըտացըն փարատեալ՝
Քաղցրանուէրհ հեղեալ զիւրեւ. զի էր յանդամըն զեղծեալ
Յոգնեալ յոյժ՝ ընդ Իլիոն հալածեալ զՀեկտոր հալածելով։
Անդր եկն առ նա եհաս ոգին հեծեցելոյն Պատրոկլեայ,
Ամենայն ինչ իւր հանգոյն, հասակ՝ զինեալ զէն եւ բարբառ,

Եւ ըղձոյն նըման հանդերձըս ըղձարթնով խուռով արկեալ·
Եւ կացեալ 'ի մնարկյն եւ խօսեցեալ ասէ առ նա·
Ննջե՞ս, Աքիլլէս, եւ մոռացօն արարեր զիս·
Ոչ 'ի կենդանւոյ իմ Թողուլեր զիս անխնամ, այլ 'ի մահուս:
Թաղեսջի՛ր զիս փութապէս՝ զի 'նդ Դըժոխոց մըտից դըրունս·
Ի բաց մերժեն զիս հոգիք՝ հրաժարելոցն ուրուապատկերք,
Եւ բացէ 'ի բաց ոչ ներեն խառնել ինձ ընդ գետակին,
Այլ վայրապար մոլորիմ ընդ լայնադուռն յարկ Դըժոխոց:
Եւ ըղձեանըդ ձեր մատո, լալով խնդրեմ, զի ոչ եւս այլ
Դառնալոց եմ 'ի դըժոխոց՝ մինչ առնիցէք հրոյ զիս հաղորդ:
Զի ոչ եւըս կենօք 'ի սիրելեաց ընկերաց 'ի զատ
Նըստեալ խորհուրդ առնուցումք· այլ զիս Օրհասն զըժնեայ եկուլ՝
Որ հասեալն էր 'ի վիճակ ինձ անդըրանիկ 'ի ծնընդենէս:
Նա եւ քեզ իսկ, Աքիլլէս աստուածանման, պահին Հրամանք
Զպարըսպաւ քաջատոհմիկ Տրովադացւոցըդ կորընչել:
Քեզ եւ այլ իմն ասացից եւ դու պատուէր, եթէ լուիցես·
Մի՛ զոսկերս իմ 'ի քոյոցդ ուրոյն դընիցեր, Աքիլլէս,
Այլ զեւտեղ ամփոփ 'ի մի, որպէս սընանըս 'ի տան ձերում,
Յորժամ զիս 'ի տղայ տիոց Մենետեաս յՕպոյնթէ
Ած 'ի տուն ձեր տարաւ՝ առ աղտալի անկեալ արեան,
Յորում աւուր ըղմանուկն Ամփիդամայ հարեալ սպանի
Ընդ խոլ եւ յանկամայս, 'ի բարկութեան բըրդեալ յուլունս:
Յայնժամ զիս ժողովեալ Պելէոս առեալ յիւր ապարանս,
Մարդասէր խնամովք սընոյց եւ անուանեաց քեզ պաշտօնեայ·
Նոյնպէս նոյն զոսկերըս մեր ամփոփեսցէ դիր տապանին՝
Սափորն այն ոսկեղէն՝ զոր ետ քեզ մայրըդ մեծարոյ:
Առ նա քաջոտն Աքիլլէս պատասխանի տըւեալ ասէ·
Առ իմե՞, սիրելիդ գըլուխ, առ իս այսըր եկիր,
Եւ սոյն ինձ պատուէր մի՛ 'սա միոջէ զամենայն զայդ,
Զոր լըցեալ կատարեցից եւ հնազանդեալ քում հրամանիդ:
Այլ աղէ յիս հուպ մատիր, զի գիրկս արկեալ խառն մի միմեանց՝
Ըմփոփեալ յագեսցուք յարտասուք ողբոց ծանրաթախիծ:
Ընդ բանին կարկառեալ ըղձերալէր բազկաց ծըղխն՝
Ոչինչ կալաւ, զի հոգին երբեւ ըղծուխ էանց զընթաց
Ճըչելով 'ի խորս երկրի, եւ Աքիլլէս յարեաւ ապշեալ,
Եհար ծափ ըղծափի եւ ցաւագին բարբառեցաւ·
Ո՛վ դիք, է ինչ անշուշտ եւ անդ 'ի տան Սանդարամետին
Ոգի եւ ուրուական, բայց չիք ըղնաւ իրան 'ի նմա·
Զի ոգին Պատրոկլի հեծեծելոյ՝ դըժըխեղ ողջոյն
Եղն եկաց 'ի վերայ իմ լալագին եւ սըգաւոր՝
Տալ ինձ պատուէր զամենայն, նըման նըմա աքանչելապէս:
Զայս ասաց, եւ զարթոյց յամենեսին զողբոց անձուկ·

Ի կոծել նոցին ծագեաց անդ վարդաձեռն Առաւօտ
Զողորմելի մեռելոյն։ Իսկ Թագաւորն Ագամեմնոն
Ցամենուստ 'ի վրանաց յարոյց զուգակս եւ ըղջորիսն
Ելանել ածել փայտ. եւ առաջիկան եկաց նոցուն
Այրըն քաջ Մերիոնէս՝ սպասաւորի քաջին Իդոմենեայ։
Փայտահատս եւ քարշելոյ չուանս 'ի ձեռս նոքա գնային
Եւ ջորիք յառաջընթացք, եւ ընդ հարթաստ մի վայրս անցեալ
Ցեալս 'ի վեր, յետս 'ի վայր, մերթ ընդ ուղին, մերթ յանհետ,
Եւ 'ի կողս անտառի հասեալ աղբերաբերայ լերինն Իդայ՝
Իսկ եւ իսկ յեռանդնաւոր պղնձեաւ կացնիւ ամպաբարձունս
Հարկանէին ժիրաժիր փութով զկաղնեայ ուժգին զորոգանս։
Զոր պատառեալ բաժանեցին առաջ ջորւոցն Աքայեցիք.
Եւ նոքա զոտս որձակեալ հասանէին ընդ մայրապարհն
Ի գետս անդրը անձկացեալք ընդ մացառուտն Թաւաթուփ։
Եւ մայրեւորքն ամենայն բարձեալ կոճղըս տանէին.
Զայն Մերիոն հրամայեալ պատուէր՝ Իդոմենէի քաջին սպասաւոր։
Եւ արկին կարգ ըստ կարգէ 'ի ծովեզերն, ուր Աքիլլէս
Նշանակեալ էր Պատրոկլի եւ իւր շիրիմ մի մեծագոյն։
Իսկ զանհամար փայտակոյտն յորժամ ըզկնին սատար անկան,
Անդ նստեալ մնային այն ուժեղն. այլ նոյնհետայն
Հրաման ետ Աքիլլէս քաջամարտիկ Միրմիդոնաց
Վառել 'ի պղինձ եւ լծել իւրաքանչիւր 'ի կառս ըղձիս.
Եւ նոցա յարուցեալ փութանակի զգեցան ըզզէնս,
Եւ 'ի զոյգսն ելին հեծեալ պատերազմողք եւ կառավարք։
Ցառաջոյ կառամարտիկք, հետեւակացն ըղհետ գայր ամպ,
Բիւրաւորք, եւ 'ի միջի զՊատրոկլ ընկերքըն բառնային։
Ծածկէին ըզդին հերովք խուզելով հատեալ եւ ընկեցեալ,
Իսկ դիւցազն Աքիլլէս ըզգլուխն յետուստ ունէր՝ տրտմեալ,
Զի յուղարկէր զանարատ ընկերն 'ի վիհ Սանդարամետս։
Ի տեղին հասեալ նոցա յԱքիլլեայ նշանակեալ՝
Եդին 'ի վայր, եւ անդէն զդիզն ըզփայտին շեղջակեցին։
Յայնժամ քաջոտն Աքիլլէս դիւցազն եւ այլ ինչ արկ 'ի միտ.
Ի բացէ 'ի խարուկէն կացեալ կտրեաց զհերս իւր գեղձամ՝
Զոր պահոյն Սպերքիոսի ծաղկագեղուարձ սնուցանէր.
Եւ յոգւոց եղեալ տայ՝ ակընկառոյց 'ի ծովըն Թուխ.
Սպերքիէ, հայր իմ Պելէւս 'ի զուր նուիրեալ ուխտ եդ ընդ քեզ՝
Ինձ յանդրէն 'ի դարձիս 'ի բնագաւառն իմ սիրելին
Քեզ ըզվարսըս խըզել, հանել եւ զոհ սուրբ զանդեաց,
Եւ խոյոց որձըս յիսուն զենուլ անդէն յաղբերակունսն՝
Ուր կան քեզ սրբավայրք անդ եւ բագին անուշահոտ։
Զայս ուխտեաց ծերունին, այլ դու զխորհուրդ իւր ոչ լցեր։
Իսկ արդ զի չէք ինձ դարձ անդրէն 'ի քաղցրուենին իմ բնիկ աշխարհ,

Տաց ըզգիսակս 'ի գլխոյս Պատրոկղեայ՝ տանել ընդ իւր:
Զայս ասացեալ՝ եդ ըզգէսն 'ի սիրելւոյ ընկերին ձեռս,
Եւ զփափաք արտասուաց բորբոքեցոյց յամենեցուն.
Անդ ապա մինչեւ 'ի մուտս արեգական հեծեծէին լային,
Թէ Աքիլլէս մատուցեալ յԱգամեմնոն չասէր Ատրեանն.
Ատրիդէս, — քանզի ժողովուրդ աքայեցւոց գնդէ առ եւթեալն
Հրամանի քո մանաւանդ, — է յարմար 'ի լալեաց ժամ.
Իսկ զարդ ցրուեա 'ի խարուկէս արձակեա, զոր՝ տար եւ պատրաստել
Պատրաստեսցեն ընթրիս, իսկ յայս խնամ տարցուք յորոց վայելէ
Ի ջերմոցն է առաւել. սակայն իշխանքն աստ ընդ մեզ մնասցեն:
Արդ յորժամ լուաւ զայս արքայ արանց Ագամեմնոն,
Եւ ընդ եւս ցրուեաց զամբոխն 'ի հարթատախտակ խոնարհանց նաւակս,
Եւ մնացին յուղարկաւորքն անդ եւ ըզփայտսն շարեցին՝
Ցօրինեալ ամանաչափս հարիւր ոտից ամենայն զկողմանցն,
Եւ 'ի գլուխ փայտակուտին զդիակն եդին՝ խոցեալք 'ի սիրտ:
Եւ բազում պարարտ խաշինս եւ ծանրաքայլ կորնեղջեւր ցուլս
Առ խարուկաւն մորթեալ հանդերձեցին. եւ 'ի բնաւիցն
Աքիլլէս մեծահոգին զճարպն առեալ զդին ծածկեաց
Ցոտից ցգլուխ, եւ կուտէր շուրջանակի զմորթեալ շարեացն.
Եւ զմեղու եւ զիւղոյ սափորս եդ յեց յանկողինսն,
Եւ քառեակ երիվարս ուղղապարանոցս յաղթանդամս
Արկեալ անդր 'ի փայտակուտին՝ մեծամեծս յոգւոց եհան:
Էին արքային ինն ընտանի շունք սեղանակերք,
Զերկուսն 'ի նոցանէ առեալ 'ի խարուկն փողոտեաց,
Եւ զՏրովադացւոցն մեծանձանց երկոտասան արս մանկունս
Պղնձով խոշտեալ, չարեաց խորհուրդ ածեալ զմտաւ.
Ընկեցեալ անդր եւ զատանելի հրոյն բռնութիւն 'ի ներքուստ
Զայն էառ ողբոց հեծութեամբ եւ զսիրելին կարդաց ըզնկեր.
Ողջոյն քեզ, ով Պատրոկղէս, եւ անդ 'ի տան Սանդարամետականին.
Կատարեմ քեզ ամենայն զյառաջագոյն խոստմունս 'ի գլուխ.
Զտրովադացւոցն մեծանձանց երկոտասան մանկունս հուժկուս
Զայն ընդ քեզ ծախէ հուրըն զամենայն միանգամայն.
Իսկ զՀեկտոր ըզՊրիամեանն՝ ոչ տաց հրոյ ըմպել, այլ շանց:
Զայս ասաց ըսպառնալեօք, բայց շունք չէին յայն զբաղեալք,
Այլ 'ի տուէ եւ 'ի գիշերի Արամազդայ դուստրն Աստղիկ
Հալածէր անտի զշունսն եւ 'ի վարդէ օծանէր իւղ
Ցաստուածաբերելէն, զի մի զնա 'ի քարշ ձգելն երկնեցէ նոյն:
Իսկ Գուշակն Ապողոն արձակեաց դիւրեւ ամպ կապուտակ
Ի յերկնից մինչեւ յերկիր, եւ զամենայն վայրն ծածկեաց
Զոր զդիակն զբօսէր, զի բարկութեան արեգական
Մի զմարմինն անկեալ՝ ջիլօքն եւ անդամովք խորշակեսցէ.
Բայց փայտակոյտ մեռելոյն Պատրոկղեայ վառէր ոչ:

Ցայնժամ քաղցրան Աքիլլէւս դիւցազն ըղձեաց ընդ այլ ատրուշ.
Ի խարուկէն մեկուսի կացեալ մաղթեաց Հողմոց երկուց՝
Հիւսիսոյ եւ Զեփիւռին, ուխտեալ զոհեր ընտիրս յաջողից,
Եւ առատ հեղեալ նուէրս ոսկի նուագաւ՝ յաղերս ածէր,
Գալ ըստեղ՝ զի դիզափայտին ձեռնեսցի վառել 'ի բոց
Եւ գիակունքն հրդեհեսցին : Ցայնժամ Իրիս երագաթեւ
Ունկն եդեալ խնդրուածոյն՝ եկն առ Հողմունսն եհաս հրեշտակ :
Սոսակաշունչ Զեփիւռոսին նոքա 'ի տանն առեալ ակումբ՝
Խրախ լինէին 'ի կոչունսն . եւ ընթացեալ եկաց Իրիս
Առ սեամսն կրձեայս . զոր իբրեւ յակն արկեալ տեսին,
Ցոտն եկաց բազմականն, եւ մէն մի զնա կոչէր առ ինքն .
Իսկ նա չառ յանձըն բազմել, այլ ըզպատգամ իւր խօսեցաւ .
Ոչ բազմեմ, զի դառնայն հեռայն յՈվկիանոս գնացեալ հասանեմ
Ցերկիրն Եթովպացւոց՝ ուր անմահիցըն մատչին զոհք,
Զի 'նդ նոսին լիցիմ եւ ես հաղորդակից 'ի զոհանմունսն :
Այլ Աքիլլէւս զՀիւսիսայ եւ զպաշտաւորըն Զեփիւռոս
Աղաչէ գալ առ ինքն՝ ուխտեալ զոհեր ընտիրս յաջողից,
Զի զխարոյկն 'ի բորբոքումն արծարծիցէք՝ յոր կայն եդեալ
Պատրոկլոս զոր կոծեն աքայեցիք համագումար :
Ասացեալ զայս՝ ինքըն գնաց . նոքա յորեան անհուն գոչմամբ
Վարեալ զամպս յառաջոյ խուռնանց մեծաւ փոթորկելով :
Եւ եկին փութանակի շնչովքն 'ի ծով, այլքն ուռեան
Ի բարձրաձիգ փրփրմանէն, եւ յարդաւանդն հասին Տրոյա .
Եւ անկեալ 'ի խարուկին՝ մեծ գոչեաց բոցն աստուածահրաւառ :
Եւ զգիշերն 'ի բուն փչեալ ահեղամռունչ 'ի փայտակոյտն՝
Հանին բոց բորբոքատեան, եւ զգայզն 'ի գլուխ ժիրն Աքիլլէւս
Կրկնատակաշտ բաժակ 'ի ձեռըն յոսկեղէն 'ի Թակուկէն
Առեալ հեղոյր գինի յերկիր, Թանայր համակ զաղբատաբեան,
Եւ զոգի եղկելոյն Պատրոկլոսի ձայնեալ կարդայր :
Որպէս հայր յողբս հարկանի՝ յայրել զոսկերս որդւոյն իւրոյ
Փեսայի, որոյ մեռեալ ըղհէք ծնողացն 'ի սուգ նըստոյց,
Այնպէս ողբայր Աքիլլէւս յայրել զոսկերս ընկերականցն,
Սողելով առ խարուկաւն եւ առէպ ըստէպ յաղւոց ելեալ :
Իսկ յորժամ եկն Արուսեակն աւետաւոր լուսոյն յերկիր,
Ոյր ըղհետ 'ի ծով սփռի քրքմահանդերձն Առաւօտ,
Թուլացաւ անդ հրդեհն եւ դադարեաց բոցոյն բորբոք .
Եւ Հողմունք մեկնեցան գնացին դարձեալ անդրէն 'ի տուն
Ընդ Թրակեան ծովուն անդունդ՝ որ ուռուցեալ մռնչէր հեծէր :
Բայց ընդ այլ կոյս Պելեանն 'ի խարուկէն մեկուսացեալ՝
Կողմնեցաւ վաստակաբեկ, անկաւ զնովաւ քուն անուշակ :
Այլ նոքա զԱտրիդեաւ ժողովէին միահամուռ,
Որոց զինքն ոտից խօշնն եւ զաղմկելոյն խռնմանց զարթոյց .

Յարուցեալ նրբատու կանգուան եւ խօսեցաւ առ նոսա զայս.
Ատրիդէս, եւ որ հանուրց եւս այլ իշխանք աքայեցւոց,
Ի գինի սեւատեսակ նախ շիջուցէք զխարոյկդ ողջոյն
Յոր վայր հրոյն զօրութիւն ամբերաց կալաւ առ հասարակ:
ԶՄենետեան Պատրոկլի զոսկերսն ապա հաւաքեսցուք
Ընտրելով հաւատաւ. են խոկ ճիշտ դիւրածանօթ.
Զի նա 'ի մէջ խարուկին կայր, խոկ այլք առանձին
Զեզերօքն այրէին խառնիխուռն արք եւ անդրուվարք:
Եւ դիցուք զայնս յոսկեղէն շէշ եւ 'ի ճարպ կրկնապատիկ,
Մինչեւ իմ իսկ 'ի դժոխսն կափուցեալ թաղեսցիմ:
Իսկ զամբան՝ ոչ եթէ մեծ ինչ յոյժ գործել պահանջեցեմ,
Այլ առ անգամ մի այսչափ. ապա եւ զայն աքայեցիք
Մեծատարր եւ բարձրաբերձ կատարեսջիք զոր որ ապրեսջիք
Յետոյ իմ մնացորդք 'ի նաւատորմին յոգնաթիակս:
Զայս ասաց, նոքա Պելեանն երագոտին եղեն հլու:
Նախ ողջոյն ըզխարոյկն շիջուցին 'ի սեաւ գինի
Յոր վայր բոցն էր ծաւալեալ, եւ թանձր աճիւն զիջեալ նստաւ:
Եւ զոսկերսն ընկերին հեզահամբոյր զինուորակցին
Ժողովեցին լալով յոսկի շէշ եւ 'ի ճարպ կրկնապատիկ,
Եւ եդեալ 'ի խորանին ըզգեցուցին նուրբ կտաւով:
Եւ ծիրաբոլոր կարկնեալ ըզգերեզմանն՝ առ խարուկաւն
Արկին հիմն, եւ կուտեցին անդէն 'ի նմա զհողն քրքիր,
Եւ կանգնեալ զհողապատեան շիրիմն՝ անդրէն եկին 'ի բաց:
Բայց Աքիլլէս կալեալ զամբոխն անդէն նստոյց մեծ հրապարակ,
Եւ եհան մրցանակս 'ի նաւակներոյն, սանս եւ կաթսայս,
Ջորիս եւ երիվարս եւ անդէնոց յաղթ կառափոտնս,
Եւ երկաթ ճերմակ եւ փայլուն եւ կանանց գեղեցկագօտիս:
Եւ նախ՝ երագաձի կառամարտաց շքեղ պարգեւս,
Եդ ըզկին մի տանել՝ սքանչելարուեստ գործոց հմուտ,
Եւ կաթսայ մի ունկնեալ՝ որ քսան ու երկու տանէր կապիճս.
Այս առաջնոյն. իսկ երկրորդին՝ եդ երիվար մի մատակ
Անմոռ, վեցամեայ, եւ կրեալ յղի ջորի.
Երրորդին՝ սան մի կացոյց անփորձ 'ի հուր եւ գեղապէշ,
Որ տանէր կապիճս չորս, դեռ պայծառ սպիտակափայլ.
Այսպէս յետոյ չորրորդին կարգեաց կշիռս տաղանդ ոսկւոյ,
Հինգերորդին եդ զոյգ կուլաւ մի կրկնապատ՝ անմերձ 'ի հուր:
Եւ յոտնեալ յատեան եկաց, բարբառեցաւ յարգիկացն.
Ատրիդէս եւ համօրէն սաղաւարտաւոր աքայեցիք,
Մրցանակքս այս յատենի առաջեալ մնան կառամարտից.
Զայս զայլմէ թէ ումեքէ կայր հանդիսել աքայեցւոց,
Իմ անշուշտ զառաջինն առեալ 'ի վրանն իմ տանէի:
Զի քանիօն գիտէք առաւելագոյն են երիվարքս,

Որ զի են խակ եւ անմահք, եւ Պոսիդոն շնորհեաց զնոսին
Հօրն իմում Պելեւսի, եւ նա դարձեալ յիս աւանդեաց:
Այլ արդ ես եւ երիվարք իմ հանդիսէն առանձնանամք,
Զի զայնպիսի կորուսին ըզզօն վարչի մեծաշուք փառս,
Որ նոցա բազում անգամ ըզհոսանուտ իւղոյն ծորանս
Ըզբաշխաքըն հեղոյր՝ լուացեալ ՚ի ջուր ակնավըճիտ.
Կացեալ նոքա սուգ առնուն ըզնըմանէն արտասուաթոր,
Բաշք սփռեալք ընդ յատակս, ինքեանք սրտակեղ եւ սրտատառուչ:
Իսկ դուք այլք յաքայեցւոց զընդէ զընդէ կազմեցարուք,
Որ վըստահ ոք յերիվարսն իցէ ու՚ի կառսըն ամրակուռս:
  Զայս ասաց Պեղիածինն եւ կառավարք յարեան աշխոյժք:
Ցառաջեալ յամենեցունց եւ Եւմելոս արանց արքայն՝
Ադմետի սիրուն որդին՝ ՚ի վարչութեան պերճապայծառ:
Ցետ նորին յարեաւ Տիդեանն ըսկայազօր Դիոմեդէս,
Ըզտրովկեան ձիսն արկ ՚ի լուծ՝ զորս յաւուրն առ յԷնեայ,
Իսկ ըզնա ինքն Ապողոն թափեալ եհան եւ ազատեաց:
Ըզհետ նորուն Ատրիդեան յարեաւ խարտեաշ Մենելաւոս
Դիւցազնաշառն, եւ ընդ լըծով ած զերիվարսն երագաթռիչ,
Զագամեմնոնեան Սեաւըն ձայիկ, եւ ըզՃեպուկըն զիւրականն:
Անքիսեանն Եքեպովլոս Ագամեմնոնի մատոյց զայն ձի,
Զի մի՛ զհետ իւր յԻլիոն երթիցէ եւ ինքն ՚ի հողմաշունչ,
Այլ կացցէ վայելեսցէ յոր Արամազդն ետ ճոխութիւն.
Եւ էր ինքըն բնակեալ ՚ի Սիկիոն արձակաձիրս:
Ընդ լըծով արար նա զայն՝ զկարին յընթաց նախանձաւոր:
Եւ չորրորդ ըզգեղաբաշ կազմեաց ձիանն Անտիլոքոս՝
Նեստորի Նելեան մեծանձն արքային ձեռ շըքեղակերպ.
Պիլոսածին երիվարք արընթացք ըզկառս իւր ձըգէին:
Մատուցեալ հայրըն եւ նըման՝ ՚ի բնուստ ուշիմն՝ բարեաց խրատ.
  Զքեզ, Անտիլոքէ, Արամազդ եւ Պոսիդոն ՚ի մանուկ տիոց
Ըստորոգ սիրեալ ուսուցին զհեծելութեան արուեստ ամենայն.
Վասն որոյ՝ եւ չէն ինչ պէտք խրատել ըզքեզ այլ եւս յերկար,
Զի զիտես ըստ օրինի դառնալ զկիտիւն, այլ երիվարքդ
Հեղգագոյն իմն են յընթաց, ուստի վընաս ինչ կասկածեմ:
Իսկ նոցա ձիք արագաթռիչք, բայց ինքեանք չեն բազմահնարմունք
Խորագէտ իմաստութեամբ զանցուցանել ըզքեւ խելօք:
Համայ դու, սիրելի, յոգնօրինակ միտս արկ ՚ի սիրտ,
Որպէս զի մի՛ վրիպեսցեն մըրցանակաց ՚ի քէն պարգեւք:
Խորհրդով փայտահատ քան թէ ուժով առաւելու,
Խորհրդով եւ նաւավար դարձեալ ՚ի թուխ անդընդոց ծով
Ղեկավարէ զարընթաց ըզնաւատափայտըն մըրրկածուփ.
Խորհրդով եւ կառավար զեր զանցանէ զկառավարաւ:
Իսկ որ զամ մի՛ յերիվարս իւր եւ ՚ի կառսըն խիզախեալ՝

Խոլաբար այսր եւ անդր յասպարիսին շրջէ բազում,
Անդրուվարք իւր օգտին յարշաւանին եւ ոչ նուաճէ։
Իսկ խորագէտն մարդ՝ վատթարագոյն վարելով ձիս՝
Դէտ ածէ 'ի կէտն յառաջել միշտ, եւ մօտ քերեալ, չանդիտանայ՝
Ի՛բր ընկերքն սանձարձակ տայցէ փոկովքն արշաւանեաց.
Այլ եւ զկէտ ունի անդուլ եւ դնէ միտ 'ի նախընթացն։
Ցայտ ցուցից եւ զնպատակն, եւ ըզքեզ մի անցանիցէ։
Փայտ մի չոր գըրկաչափ յերկաս երկրէն ամբարձեալ կայ,
Կամ կաղնի եւ կամ սարոյ՝ զոր ոչ փտեալ անձրեւատարափ.
Եւ առոր անոր նորուն կանգնին կըրկին սպիտակ արձանք
Ցեղս ուղղոյն, եւ զնոքօք շուրջանակի հարթ ասպարէզ։
Գերեզման թերեւս եղեալ վաղամեռիկ ուրուն միում,
Կամ յառաջոց նախնի մարդկան կոթող կանգնեալ սահմանադրութիւն,
Եւ զարդիս զայն եդեալ կէտ դիւցազներունդ ժիրն Աքիլլէս։
Առ սովաւ մօտ քերեալ վարեա դու զկառսդ եւ զերիվարս,
Եւ դու ինքըն խոնարհեաց 'ի պընդակայ աթոռակիդ
Դոյզն ինչ նոցին յահեկէն. իսկ զերիվարն աջակողման
Մըտրակեա սպառնաձայն, եւ զերասանն իւր թուլացո։
Երիվարդ ահեկէն առ կիտիդ հուպ քերեալ անցցէ,
Մինչ կարծիս տալ թէ կընդան բարեկերտ՝ անիւոց իւր
Ի նպատակըն շփիցի, զգոյշ լեր սակայն բախել ընդ վէմն,
Զի մի զձիարդ խոցեսցես եւ փըշրեսցես ըզկառսըս քո,
Այլոց 'ի քրքիջ, եւ քեզ յամօթ եղեւանոց։
Այլ ըզգոյշ լեր, սիրելի, եւ անձնապահ ըզգօնութեամբ։
Զի թէ զամ մի ձեպեալ ըստ նպատակըն վարեսցես,
Ոչ դըտցի որ զհետ պընդեալ ժամանել լիցի քեզ կամ անցցէ,
Նա եւ ոչ թէ զդիւցազնեայն վարեսցէ զկնի քո զԱրիոն՝
ԶԱդրաստեայ սուր երիվարն, որ յաստուածուստ էր 'ի ծնընդոց,
Կամ զընտիրսն որ սնանէր Լաւմեդոնեանքըն են ազնեալք։
Զայս Նէլեանն ասաց Նեստոր, դարձաւ նըստաւ 'ի տեղի իւր,
Զհամառօտս ամենայնի որդւոյ իւրում ուսեալ պատուէր։
Հինգերորդ Մերիոնէս կազմեաց ըզձիս իւր գեղաբաշ.
Եւ 'ի կառսն հեծեալ, վիճակս արկեալ՝ շարժէր զայն Աքիլլէս,
Եւ վիճակ յառաջակարգ ել Նեստորեանն Անտիլոքեայ.
Իսկ արքայն Եւմելոս ըզկնի նորուն վիճակեցաւ,
Ըստ նոսին եկն Ատրիդէս Մենելաւոս կորովաւեկ,
Յետ նորա Մերիոնի եհաս վիճակ երիվարել,
Հուսկ Տիդեան քաջագունին վարել ըզձիսն անկաւ վիճակ։
Կացին կարգաւ, զընթացիցըն ցուցանէր կէտ Աքիլլէս,
Ի հեռուստ 'ի դիւր դաշտին, եւ դէտ կացոյց անդ առ նմա
ԸզՓիւնիքս աստուածատիպ ըղհօրն իւրոյ կապարճակիր.
Մեխ եղեալ արշաւանին՝ ըզճըշմարիտն արասցէ յայտ։

Իսկ նոցա բոլորեցուն բարձեալ համայն մըտրակ 'ի ձիան
Եւ շկահեալ փոկովքն առին ձայն բոցաշունչ խրախուսանաց.
Եւ նոքա թափանակի սրարշաւ ընդ դաշտն ընթանային
Ի բացէ 'ի նաւացն, եւ ընդ լանջօք նոցին փոշի
Ցանէր կայր ամպոյ նըման կամ մըրրկի փոթորկայոյզ,
Եւ 'ի շունչ հողմոյն հոսեալ ծածանէին բաշիցըն հոյլք։
Կառքըն մերթ ընդ գետինն արդիւնաբեր գնային 'ի սող,
Մերթ ընդ օդ իբրեւ 'ի թռիչս, իսկ վարիչք ալինդ կային 'ի նիստ.
Բոլորեցուն թընդէր սիրտ ստուցելոցն 'ի յաղթութիւն,
Ցորդորէին զյոյլսականն ընդ հարթըն թըռուցեալ, մըրրկեալ զփոշին։
Իսկ յորժամ ժիր երիվարք զյետինն ընթացս հանէին յանդ՝
Ցետս 'ի ծով սպիտակափառ, անդ քաջութիւն իւրաքանչիւր
Եւ 'ի վեր, անդէն ձիանն հարկանէին քաջ տապարեղ,
Անդ Փերետեան քաջին քաջոտն 'ի դուրս ճայիկքն սուրչէին շրա։
Ցետ նոցուն ցոլանային Դիոմեդեանքըն գեղազարդ
Տրովացիք՝ ոչ յոյժ 'ի բաց, այլ կարի շատ հուպ առ կըռան,
Մինչեւ այն խմըն թըւէր՝ եթէ 'ի կառսն համբառնայցեն,
Եւ շընչովքըն ջեռնուին թիկունք եւ լայն ուսք Եւմելեայ.
Քանզի զգլուխսն 'ի վերայ նորուն արկեալ սըլանային։
Անցանէին իսկ թերեւս եւ կամ յերկբայս առնէին դէթ,
Թէ Գուշակն Ապողոն՝ որդւոյն Տիդեայ ըրդամըտեալ չէր,
Որ ընկէց 'ի ձեռաց նորա զմըտրակն արփիադեղ։
Արտասուք առ զայրացուկն յաչաց նորա թօթափեցան,
Զի զզամբիկսըն տեսանէր երագափոյթ եւս յառաջեալ,
Եւ զի իւրքըն պատժեցան դատթել առանց ինչ մըտրակի։
Իսկ Ապողոն՝ որդւոյն Տիդեայ նենգող՝ չէանց զԱթենասաւ,
Որ դիմեալ վաղվաղակի եւ առ հովիւն հասեալ արանց՝
Մատոյց 'ի ձեռսն ըզմըտրակն, եւ յերիվարսն յաւել կորով։
Եւ ապա զհետ Ադմետի որդւոյն պընդեալ ըրրամըտագին՝
Խորտակեաց ըզլուծ ձիոցն աստուածուհին, սարսեան ճայիկքն
Այսր եւ անդր ըստ ճանապարհն, եւ գլորեցան սամիքն յերկիր։
Եւ նա ինքն առ անուին հոլովեցաւ 'ի բազմոցէն,
Արմըկունք իւր եւ բերան եւ քըթափողք ցըտեցան շուրջ,
Ճըմլեցաւ ճակատն առ յօնս, եւ ըլցան աչք իւր արտասուօք,
Եւ ոգեղ ձայնին հապաղ աղօտացեալ նըւաղեցաւ։
Իսկ Տիդեանն 'ի կողմ ելեալ՝ ըղձիս վարէր սալասըմբակ
Ցոյժ քան զայլս յառաջադէմ, զի ետ ձիոցն Աթենաս ոյժ,
Եւ նըմին պարծանս, որ զհետ շէկն Ատրիդէս զայր Մենելաւ։
Բայց զերիվարս հօր իւրոյ քաջալերէր Անտիլոքոս.
Գուն եւ գօւք դիք, ընդ ոլորս ըստէպ մըտէք ճեպ ըղձեալ.
Ընդ սոսին 'ի հակառակըս մըտանել ոչ հրամայեմ՝
Ընդ Տիդեան քաջին ձիոնս, ոյց առ տեղեաւս այժմ Աթենաս

Պարգեւեաց աշխուժութիւն եւ շունչ փառաց յաւել՝ ներմին.
Այլ զերկվարման Ատրիդեան ըմբռնեցէք, մի՛ յետնեսջիք.
Հանգստ շոյտ, մի՛ նախատեսն Մեսոնի զամբիկն հեղուցու զձեզ.
Եւ ընդէր իցէ ձեզ յետնիլ, ո՛վ քաջք, եւ լըքանիլ:
Ահա եւ զայս եւս ասեմ, եւ ճըշմարտեալ եղէ ՚ի գլուխ.
Ոչ եւս ձեզ տարցէն խընամք առ Նեստորի հովուին աղանց,
Այլ անդէն ընդ հուպ ըզձեզ սուր պըղընձով սատակեսցէ,
Թէ անփոյթ արարեալ՝ նըւաստագոյն տարցուք պարգեւ:
Այլ ըզհետ պընդեցարուք, ձեզ տուք ազէ ՚ի հաւալ ըշտապ.
Իսկ ապա յիմ պահանոց՝ խելս ինչ խառնել՝ հնարաւորել
Զի յանձկի ուրեք ուղղոյն սըպըրդեցիմ. եւ չըմըրկեմ:
Զայս ասաց, եւ ՚ի սաստէց երկեանեսն ահեն ածեալ նոցա՝
Վայր մի ուժգին ընթացան, եւ նոյնհետայն այնուհետեւ
Զներստագոյն ուղւոյ նեղուց ինչ Անտիլոք եաես արին:
Էր պախուստն գետնոյն՝ ուր ձմերային մրրկացեալ ջուրց
Խորխորեալ էր զարահետն եւ զվայրին ողջոյն փոսացուցեալ.
Զգուշացեալ ՚ի բախմանէ անուոց՝ ընդ այն գնայր Մենելաւ:
Անտիլոք առ ՚ի շեղ մըղեալ ըզձիս սալասմբակ
Զարտաւղի խուսափեալ յառաջ վարէր սուղ ինչ ՚ի բաց:
Զահի հարաւ Ատրիդէս եւ ձայն եբարձ առ Անտիլոք.
Խօլաբար ձիավարես, Անտիլոքէ, արգել ըզձիդ,
Քանզի նեղ են մեզ անցքս, ընդ հուպ ընդ լայնն անցցես յառաջ,
Գուցէ զեան երկոցունցս ածցես ընդ կառս իմ բախելով:
Զայս ասաց, բայց Անտիլոք եւըս քան զեւս յառաջ մըղէր
Մըտրակ ՚ի կուշտ տագնապաւ՝ չըլըւելոյն իբր արարեալ:
Եւ որչափ ինչ գընդակին է կորովի ծըղեկօք ձըգումն՝
Որ արկցէ երիտասարդ՝ հուժկու տիոյն առնել հանդէս,
Այնչափ ՚ի բաց ըրշացան, եւ Ատրիդեանքն հարթեան ճայեկք,
Քանզի նա ինքնին կամաւ իսկ արգելաւ ՚ի չվարելոյ,
Զի մի՛ զճանապարհայն ընդհարցեն ձիք սալասըմբակք,
Եւ ըզկառսն պընդակապ շըրջեսցեն վեր ՚ի վայր հարեալ,
Եւ ՚ի փոշի գլորեսցին նոքին ճեպեալքն ՚ի յաղթութիւն:
Եւ խարտեաշըն Մենելաւ գոչեաց առ նա կըշտամբանօք.
Անտիլոք, չիք որ քան զքեզ անօրէն յազգ մահկանացու.
Կորիր. զի սուտ ըզքեն քեզ չաւէաք աքայեցիքս.
Այլ ոչ այդպէս, ո՛ն եւ ո՛ն, առանց երդման տարցիս պարգեւ:
Զայս խօսեալ՝ առ երիվարսն իւր խրախոյս եբարձ, ասէ.
Մի՛ դուք ինձ ինչ կայք մընայք, ՚ի սըրտառուչ մի՛ ՚նկըղմիք սուգ.
Վաղագոյն նոցին քան ձեր պարտասեսցին ծունկք եւ թաթուք,
Զի անկեալ են երկոքին նոքա յատեաց առոգութեան:
Զայս ասաց, եւ յարքայէն սաստէց նոցա պատկառելով՝
Սաստկագոյն հարեալ արշաւ՝ հասին նոցա հուպ հապըշտապ:



Digitized by Google

Նըստէին Արգեացիք անդ 'ի զըմին ձիոյն յաւիտենին,
Եւ նոքա Թըռիչս առնուլ փափթորկէին զփոշըն ընդ դաշտն։
Եւ տեսանէ նախ զերիվարսն Իդոմենեւս կրետացւոց պետ,
Զի նըստէր արտաքոյ հրապարակին բարձր 'ի դիտէ·
Եւ Թէպէտ եւ 'ի բացէ, զգոչումըն լըսեալ զայրըն ծանեաւ,
Եւ նըշմարեաց զերիվարըն երեւելի զայլովք զանցեալ,
Որ այլով ամենայնիւ յոտից ցըգըլուխ երաշխ էր նա՝
Սպիտակ նիշ բոլորաձեւ լուսնաձեւեալ 'ի ճակատուն։
Յոտն եկաց՝ բարբառեցաւ առ հրապարակն Արգեացւոց·
Ո՛վ սիրելիք, առաջնորդք Արգեացւոց եւ զօրագլուխք,
Ե՞ս միայն նըշմարեցից արդեօք ըղձիս, եթէ եւ դուք։
Ինձ այլք աստանօր յառաջադէմ Թուէին երեւալք,
Եւ այլ ոք տեսանի կառավարիչ, իսկ այն զամբիկք
Ադմետեան յաղթականքն՝ որ ժըրագոյնքն էին ցայն վայր։
Քանզի նախ տեսի զնոսա զնըպատակաւն առնուլ պարոյր,
Բայց նըշմարել չմարթեմ այժմ, եւ աչք իմ շուրջ շըրջանակաւ
Ընդ դաշտըն տրովադական ակընկառոյց կան 'ի զըննին։
Կամ զերծան 'ի վարողէն զանգատանօք, եւ ոչ զօրեաց
Գինդ ունել առնձ ըղկիւթիւն, եւ չաղօղեաց ճախրել զընթացն·
Անդ կարծեմ գըլորեալ ըզնա, համայն եւ զկառսըն խորտակեալ,
Եւ օգնել ըղձայլկան աւիւն 'ի սիրտ մոլեգնութեան։
Յարուցեալ հայեցարուք եւ դուք՝ զի ոչ ճանաչեմ քաջ·
Ինձ Թըւի սակայն լինել Էտոլացի այր 'ի զարմէ,
Գեա յԱրգեանս, ձիախրոխտն Տիդեայ ձեա քաջըն Դիոմեդ։
Ոյլեանն երագ Էաս առէ առ նա քամահաբար·
Զի՞ տարաժամ բաջաղես, Իդոմենեւս, քանզի տակաւ
Բարձրաքայլեաց այն զամբիկք հեռուստ ընդ լայնն արշաւեն դաշտ։
Ոչ տիովք ինչ մանկագոյն գտանիս 'ի գունդ Արգեացւոց,
Եւ ոչ սըրատեսիլ ինչ ակնարկեն աչքդ 'ի գըլխոյդ·
Այլ 'ի բաց բանից անդուլ շաղակրատես, չէ քեզ վայել
Լեզուանգար լինել, զի գոն աստ քան ըզքեզ այլք լաւագոյնք։
Նոյն ձայլիկք են նախարշաւ՝ յառաջադէմքն իսկըզբանէ,
Եւմելեանքն, եւ ինքն առնուլ զերասանակն յառաջ սուրայ։
Սըրտամըտեալ կրետացւոց ընդ նա պետըն՝ զըմախօսեաց·
Էաս՝ քաջըդ խաղմարար՝ չարալեզու, յայլ ամենայն
Տըրպագոյն յԱրգեացիս, զի միտք են քեզ ապերասան։
Հա՛պա եկ, զկռատանի եւ կամ ըղսան դիցուք 'ի դըրաւ,
Դատաւոր զԱտրիդեան Ագամեմնոն մեզ կացուցեալ,
Ո՞ր երիվարք յառաջս իցեն· 'ի տոյժս անկեալ տացես 'ի միտ։
Զայս ասաց, Ոյլեանն յարեաւ անդէն երագն Էաս՝
Մըռամըռեալ զայրացեալ՝ պատասխանի տալ խիստ բանիւք·
Եւ անշուշտ իսկ անդրագոյն եւս անցանէր երկոցունց հեռն,

Աքիլլէս եթէ ինքնին չէր յարուցեալ եւ բարբառեալ.
Մի՛ եւս այլ այժմիկ, Այաս եւ Իդոմենէ, պայքարեսջիք
Դըժնէիւք գազանըն բանիւք, քանզի եւ է իսկ անպատեհ.
Նա՛ 'ւանէի եւ ցասնուցիք այլում ումեք որ յայդ իջնէր:
Այլ բազմեալ 'ի հանդիսիդ՝ կալջիք դէտակն երիվարացն,
Ինքնին նոքա նըկըրրտեալ երագափոյթ 'ի յաղթանակ՝
Այսր առ մեզ եկեալ հասցեն, յայնժամ տեսջիք ամենեքեան
Զերիվարս արգիացւոց՝ որ առաջինք եւ որ երկրորդք:
Զայս ասաց, եւ Տիդէանն յառաջ վարեալ մերձեցաւ յոյժ
Մըտրակեալ զուսաւըն անդուլ, ձիանն 'ի վազս՝ յուզին ձեռալեալք:
Եւ փոշւոյն ցընցուղք անհատ ըզկառապետն հարկանէին.
Կառքն ոսկեկազմ գըլրուալեալ եւ անագով պաճուճազարդ
Ի վերայ գըլէր երագոտն երիվարացն, հազիւ թէ հաղ
Հետս ինչ 'ի մանըր փոշւոյն ըզկնի անուոց թողուին խեցք.
Թըռչէին նոքա հապճեպ, եւ անց եկաց 'ի հանդիսին.
Բազում քիրտն հոսէր ձիոցն յերկիր յուլանցն եւ 'ի լանջաց:
Ինքն ատեաւ վազեալ 'ի վայր 'ի պայծառալոյս կառաց անտի
Ցեցուցեալ զմըտրակն 'ի լուծն, եւ Սթենեղոս քաջ չյուլացաւ՝
Զմըրցանակն էառ փութով, կին եւ ականջեղ եռոտանի,
Եւ ցընկերսն մեծանձինս ետ տանել, եւ ինքն ըզձիսն եցյծ:
Ըզնորին ըզհետ Նէլեանն Անտիլոքոս երիվարէր,
Նենգաւ՝ ոչ որընթացիւք կանխեալ անցեալ ըզՄենելեաւ.
Համայն եւ այնպէս զերագատն հուպ վարէր ձիս Մենելաւոս:
Եւ որչափ տարակաց լինի յանուոյ ձի կառամուտ
Որ զտէրն ընդ դաշտ ձըգէցէ կառաքն հանդերձ մեծայարդար,
Որոյ ծայրք ձարից ագւոյն շըփին ընդ հեցս անուոյն 'ի գնել,
Եւ նա յոյժ մերձ ընթանայ, եւ ոչ բազում ինչ վայր 'ի մէջ
Ցարշաւել անդ խուռամ ընդ լայնածիր դաշտավայրին,
Այնչափ յետնէր Մենելաւ 'ի սքանչելւոյն Անտիլոքեայ.
Իսկ յառաջ՝ եւ դընդակի տապարեաւ 'ի բաց մընայր,
Այլ 'ի ձեռս եհաս առ նա, զի յորդէին աշխոյժք հըզօր
Ի զամբիկն Ագամեմնեան՝ 'ի Սեւուկ անդըրը գեղապեղ:
Եթէ այլ եւս երկոցունցն տապարէսէր ընթացք յառաջ,
Անցանէր յայնժամ զնովաւ, եւ ոչ կըրըթէր 'ի տարակոյս:
Իսկ արի պաշտօնեայն Իդոմենի Մերիոնէս
Տեգընկէց մի կայր յետնեալ 'ի Մենելեայ մեծափառէ.
Զի դեղաբաշ երիվարք տարատամադայնք էին նորա,
Եւ էր ինքն անհըմտագոյն 'ի հանդիսել յասպարիսի:
Իսկ որդին Ադմետեան եհաս վերջին յամենեցունց
Քարշելով զկառսըն չըքնաղ եւ յառաջ վարեալ ըզձիս:
Զոր քաջոտն Աքիլլէս տեսեալ դիւցազնըն գըթացաւ,
Եւ կացեալ յարգիացիսն ըզթեւաւոր խօսեցաւ բանս.



Digitized by Google

Այրըն քաջ հուսկ զերիվարսն յետոյ վարէ զաստղասպիտակս,
Այլ մրցանակ՝ բեր տայցուք նմա զերկրորդն ըստ արժանի.
Բայց սակայն զառաջինն առեալ տարցի որդին Տիդեայ:
Զայս ասաց, և հաճեցան ամենեքին ըստ հրամանին.
Եւ զձայլեկըն տայր նմա 'ստ հաւանութեան աքայեցւոց,
Եթէ չէր Անտիլոքոս որդի մեծանձըն Նեստորի
Յարուցեալ և ընդ Պելեան Աքիլլեսի մրտեալ 'ի դատ.
Ո՛վ Աքիլլեւս, յոյժ սրտմտուցում ընդ քեզ թէ զբան զայդ առնիցես.
Հանդերձեալ ես աւաղել ըզյաղթութեանն հանել յինէն,
Ըզմըտաւ ածեալ զի կառք իւր և ժիր ձիք հարուածեցան,
Իսկ նա քաջ էր. սակայն պարտ էր աղերսել նմա զանմահս.
Զայդ արարեալ՝ ոչ վերջին քան զամենայն գայր նա վարեալ:
Թէ 'ի գութ ընդ իւր գըթաս և սիրելի է քում սրտիդ,
Է քեզ 'ի խորանիդ ոսկի բազում, է և պղինձ,
Են ոչխարք և աղախնայք և երիվարք սալասմբակք,
Յայնցանէ հան տուր նմին ապա յետոյ մեծ ևս պարգև,
Կամ թէ և այժմ իսկ ընդ հուպ, զի գովեսցեն զքեզ աքայեցիք:
Այլ ես ոչ տաց ըզզամբիկն, և թող եկեսցէ 'նդ այսր 'ի հանդէս
Ով ումեք յարի արանց կամ լիցէ 'նդ իս մրցել բազկօք:
Զայս ասաց, իսկ Աքիլլեւս գթացաղըն ժիր՝ ժպտեցաւ,
Խնդացեալ ընդ Անտիլոք, զի իւր ընկեր էր սիրելի.
Եւ պարձուած արարեալ ասէ առ նա զթեւաւոր բանս.
Քանզի հարկ առնես ինձ, Անտիլոքէ, 'ի համբարոյ
Պարգեւել զԵւմելոս, և զայդ ևս ես կատարեցից:
Տաց նմա վարապանակ զոր կապտեցի յԱստերոպէայ
Զպըղընձեն, զորով հեղուած ըլինջ անագի շուրջ ածէ ծիր,
Եւ յոյժ մեծագնի համարեսցի յաչըս նորուն:
Ասաց, և ակնարկեալ յԱւտոմեդոն սիրուն ընկերն
Առնուլ բերել 'ի վրանէն, որոյ գնացեալ ածեալ նմին,
Եւ 'ի ձեռան ետ Եւմելեայ, և ընկալաւ նա խնդութեամբ:
Յոտն եկաց 'ի նոսին և Մենելաւ, ցաւագին սիրտ,
Անհնարին բարկացեալ սրտմտութեամբ ընդ Անտիլոք:
Քարոզն 'ի ձեռս ետ նորին ըզգաւազանն և պատուէր ետ
Լուռ լինել արգիւացւոց, և զինի ասէ դիցանման այր.
Անտիլոք, մըտաւորդ յառաջագոյն, զի՞ գործեցեր.
Արարեր զփառս իմ յամօթ և նենգեցեր զիմ զերիվարս
Յառաջ ըզքոյսըդ մըղեալ ըզկարի յոյժ վատթարագոյնս:
Այլ եկայք, հեղինակք արգիւացւոց և նահապետք,
Դատ արարէք երկոցունցս 'ի մէջ, և մի առ շնորհուկս ինչ,
Զի մի ոք ասասցէ 'ի պղնձազգեստ աքայեցւոց,
Զըրպարտեալ Մենելաւի հըրըստութեամբ զԱնտիլոքոս՝
Շորթեաց գընաց ըզձայլեկն՝ ուր յոռեգոյն էին իւր ձիք,



Digitized by Google

Սակայն ինքն առաւելեալ զինու զօրու եւ քաջութեամբ ։
Այլ ո՛ն առեալ ըղձաատասանդ արարից ես . եւ ոչ կարծեմ
Փաշաման 'ի գանձայեանց ուսանք հրրել, զի պարզ լեցի ։
Հա՛ռ՛ արդ այսր, Անտիկոք զեցասընունդ, ընդ երասանց
Կայց կանգուն երկվարաց քոց եւ կառայրդ զառաջնաւ ,
Ճապուկ մրտրուկդ 'ի ձեռին՝ որով եւ այժմ իսկ վարեիր ,
Եւ մերձեալ 'ի ձիոց երդուեիր յաշխարհակալն 'ի Պոսիդոն ,
Ոչ կամաւ դու գործեալ խնուն կառացըս լեալ խափան ։
Ուշիմն Անտիկոքոս ետ փոխարէն պատասխանի .
Այլ համբերող լեր, զի կարի կրտսերագոյն եմ ես քան զքեզ ,
Գետակային Մենելաու, իսկ դու երէց եւ վեհագոյն ։
Խնլամոււ ես զինչ եղեն պատանեկի աւրն վարեպք ,
Այն զի միտք երագաասուր, սակայն անսոր ըղձանութիւն ։
Համբերեսցէ ապա քո սիրտ, իսկ ըղդամբերես որ ընկալայ՝
Եւ ինձէն քեզ մատուցից . թէ խնդրես մեծ եւս ինչ յինձ ,
Իսկ եւ իսկ տալ քեզ կամիմ, քան թէ յաւէժ քեզ, դիւցազնունդ ,
Ցաւչաց եղանել, ամպարշտել եւ առ աստուածս ։
Ասաց եւ ած ըղձայինն որդին մեծանձին Նեստորի ,
Եւ 'ի ձեռըս Մենելեայ . եւ նորա սիրտն զուարթացաւ ,
Որպէս այն թէ յուղձաղարդ 'ի հարաւունս ցօղ շառաւչաւել ,
Մինչ անդաստանք արտորեից քըստմընաճօճ ճեմին վէտ վէտ .
Նոյն եւ քոյդ, Մենելաու, պարարեցաւ սիրտ 'ի ծոցերդ ։
Եւ ձայնեալ՝ ըղբանս առ նա բարբառեցաւ երագաթեւս .
Անտիկոքէ, ոսրամըստեալս եւ ես զիջից այժմիկ ընդ քեզ .
Զի յառաջին ոչ զառանցեալ ինչ ոք էիր և ոչ խելար ,
Իսկ զարդիս ըղմիտըս քո յաղթահարեաց պատանութիւն ։
Յայսմհետէ զգոյշ լեր խորամանկել ըղվեհագոյնս ։
Զի ոչ ա՛յլ ոք յաքայեանց այր զիս գիւրեաւ ցածուցանէր .
Այլ՝ զի շատ տառապեցար դու եւ բազում ցուցեր վաստակս ,
Եւ հայր քո բարեբար եւ հարազատդ, իմ աղագաւ ,
Եկից յաղերս քո յայն գէմս, եւ ըղդամբերեկըն շնորհեցից՝
Թէպէտ եւ իմ իսկ էր . զի եւ սոքա լիցին հասու ,
Թէ բնաւ չէ ինչ իմ սիրտ փքացուցեալ եւ անողոք ։
Ասաց եւ ետ ընկերին Անտիկոքեայ Նոյեմոնի ,
Ըղձայինըն տանել, իսկ ինքն ըղսանն առ փայլունակ ։
Եւ Մերիոն զերկոսին քանքարս ոսկւոյն եբարձ տարաւ ,
Զի չորրորդ էր վարեալ . եւ հինգերորդ մընաց պարգեւ՝
Դուշխուրանըն կըրկնատաշտ, զոր Նեստորի ետ Աքիլլեւ՝
Ընդ ակումբն արգիւացուցեալ անձեալ, եւ մերձ կացեալ ասէ .
Ընկալ եւ դու զայս, ծերունիդ, եւ կացցէ ապա քեզ 'ի պահեստ ,
Յիշատակ լինել թաղմանըն Պատրոկլի, զի ոչ եւս այլ
Տեսցես զինքն յարդեաացես . զայս այսպէս տամ քեզ վարձանակ .

Քանզի ոչ մարդկան դաւաճանութեան, ոչ ըմբշամարտ,
Ոչ յորդորմանէկց գաւազանութեան և ոչ ոտից արշաւանաց.
Զի արդէն իսկ ազատութ դրժուածութեան տարածեալ ղեկ:
Զայս ասելով եդ 'ի ձեռան, և ընկալաւ նա խոնարհութեամբ,
Եւ արկեալ առ նա ձայն՝ գերադասութիւ ըղձանս տայ.
Այն զայդ ամենայն, որդեակ, ուղիղ բարբառեցար:
Սիրելի, ոչ ես անդամք են 'ի հաստատ, այլ բարձք ոտից,
Ոչ բազուկք յերկոցունց ուսոց թեթևս դերդեն թափով:
Ո՛ տայր զարթուն մտերութեամբ և զայր մարմնոյս կորով յասպարէս,
Զերդ մինչ զարգելն Ամարինկեայ յուղարկէին Եպէացիք
Ի Բուպրաս, և էին որդեայորդիքն հանդիսադիրք:
Նմանող ինձ անդամոր չգտաւ ոք այր յԵպէացւոց,
Նա և ոչ 'ի Պիւղոսէ, ոչ յԵտովլեացն մեծամեծաց:
Մրցեալ ներկուն եղի զԿղիտոմեդէս զԵնոպեայն ձեռն,
Ի գոտեմարտ զԱնկէոս ըզՊղեւրոնեան որ ինձ յարեաւ,
ԶԻփիկղէս անցի յասպարէս, թեթև և քաջ իսկ էր,
Իսկ նիզակաւ զանցուցի զՊոլիդորոս և զՓիլեւս:
Ակտորեանքն երկոքին ձիովք եւեթ գերազանցին զիս,
Բազմութեամբն յաղթող եղեալ, նախանձելով յիմ յաղթանակ,
Զի մեծամեծ փոխարէնք արկեալ կային այնմ հանդիսի:
Երկուորք էին եղբարք, ըղձանն ունէր մին անշեղաբար,
Անշեղաբար ըղձանն ունէր, յորդորէր միւսն մտրակաւ:
Այսպէս ոք էի երբեմն, այլ արդ կրտսերք անցցեն 'ի մէջ
Ի ձգնութիւնս այսպիսիս, ինձ հարկ անսալ է հէք ալեաց.
Սակայն անդ յայնժամ էի փառաւորեալ ընդ դիւցազունս:
Այլ երթ արա հանդիսիւք զյուղարկաւորութիւնդ ընկերի քում:
Իսկ զայս ես ընդունիմ սիրով կամաց և սրտանց,
Զի յիշող ես միշտ ինձ բարեկամիդ, չառնես անտես
Ի՛ւ արժան է զիս պատուել մեծարանօք յԱքայեցիս.
Եւ քեզ դիք պարգևեսցեն փոխարէն շնորհս առատապէս:
Զայս ասաց. և զամենայն Նելեան գովութս լուեալ Պելեանն՝
Անց գնաց ընդ հրապարակն աքայեցւոց ամբոխահոյլ,
Եւ եդոյց ըզմրցանակս դժնդակ կռփամարտին:
Եդ ջորի մի ձգնաւոր ածեալ կապեաց յասպարէսն անդ,
Վեցամեան, գեռ անվարժ և անհնարին դժոխատանջ.
Իսկ առաջ պարտելոյն կացոյց բաժակ մի կրկնատաշտ.
Եւ կացեալ կանգուն յոտին բարբառեցաւ յարգիւացիսն.
Ատրիդէս և ամենայն ասպարաբարձ Աքայեցիք,
Արս երկուս հզօրագոյնս առ այսոսիկ եւս հրամայեմք
Ցանկել կալ 'ի մրցել բռնցամարտիկ գաւազանելոյ.
Եւ ում տացէ Ապողոն զյաղթութիւն հանդերձ արիացն մեծարանաւ,
Ըզջորին վաստակաւոր տարեալ 'ի վրան իւր երթիցէ,

Իսկ մատնեալն 'ի պարտութիւն ընկերակցացն առաջէ բանակ։
Զայս ասաց, եւ յարեաւ անդէն այր քաջ եւ վեհափառ
Հրամատարն 'ի կղզեաքաղաքաց՝ Եղիշա Ձեռաքն Գանձակեան,
Եւ զասպետին ընկերակցին բուռն հարեալ բարբառեցաւ.
Մատուցէ՝ որ դու բարձեալ առաջի զօրագլխին հրեշտակաց.
Իսկ ընձայեա՝ ոչ դուք այլ կարծեմ ասնել յաղթութեանց
Գործեալ զէս մուրացաք, զի բռնաւորին լինել պանծամ։
Չիցէ չար՝ զի որոշ 'ի մարտս զբարանեամ պատերազմաց,
Չիք իսկ մարգարէ ամենայն երաց լինել քաջահզօրութ։
Նա եւ զայս եւս յայտ առնեմ, որ եւ 'ի զրուցս երանեցէ.
Զի զմարմինն պատրաստեալ 'ի սպառ՝ զաւերումն փրկեցից։
Խնամածուք սոս առ նոքա միաժողովք կացցեն զանխլեալ՝
Որ բարձեալ ընդ առաջին ընկերակցաց խմբով կռուեցուք։
Զայս ասաց եւ անմիաբանութ պատահմանցն ամենեքեան։
Բայց յարեաւ նորա միայն Եփրեմեան՝ այր զեղասէր,
Զաւակին արքային Մեկկանեան Տաւրոսեան,
Որ զնաց երբեմն 'ի Թերեք յոգնագոյն մեծհուն Թագուհի,
Եւ եղեւ անդ յաղթող Կապադովկացւոց բոլորեցունց։
Ընդ որդին Թեւադրեանթեան հայր եւ Տիգրանն արիական,
Սրբատագաւորեալ բանիւք յոյժ, ընդ յաղթութիւն կամէր նորուն։
Նախ մատոյց առ նա զկամար զօտւոյն, ապա յետ այնորիկ
Եւ ընծայս արուեստագործ փոխանակաց եղեն վայրի։
Երկոքեան կացին յորինեալք անցին 'ի մէջ մրցարաննին,
Եւ ամբարձեալ զէն ընդ զէն միանգամայն զկարշելով ծրարս՝
Դիմեցին, եւ ընդ միմեանս խառնեցան ձեռքն ծանունք։
Եւ կոփեալ սաստիկ հատաւ ծնօտից, եւ քերան յորդեալ վէժէր
Ամենասաստ յանդամոցն. իսկ խոյացեալ Եղիշա քաջ
Թաղեաց զայս ընդերկրեայ՝ որ այլ չեկաց յակառակն,
Զի խախտեալ խարխարեցան անդամք նորա սերտատարածեալք։
Իբր 'ի քերանել ծովուն 'ի շունչ Հիւսիսականին Թինդս առնու ձունն
Ի լուսանցս ծովեզեր, եւ Թողու ալիք ընկղմեալ ընդ խոր,
Զնոյն ստանաւ կղզաքաղաքն, իսկ մեծատարածն Եղիշա
Բուռն հարեալ յարոյց ընդ խոր, եւ շուրջ եղեալ սկսաւ ընկենուլ
Բերեգին ընդ 'նդ երասան՝ սակս խորոց զնալով 'ի քարս,
Ինքն արիւն Թանձր Թքանէր եւ արկանէր այսր անդր ընդ շրթունս.
Եւ տարեալ հանդուցեալ յերկրանս, զի էր նա յայլոց խելս,
Եւ խնդրանք եւ Թեւեալ առնէր ընդ արկարան նահատակաց։
Իսկ Գեղեանն՝ այլ եւս երրորդ եդ 'ի մէջն անդ զուղղորդ՝
Ի զանազանից յաղթեալ ամաքին՝ ընդ կուրծս ընդ ասպարէն.
Յաղթողին՝ մեծ եւս յոյժ եւ տանի հրաշափառական՝
Համարեալ ազգաց յերկրանս երկնասուան եղեն զընդոց.
Իսկ ասպետն պատուելոյ՝ կեն մ' 'ի մէջն ածեալ կայցայ



Digitized by Google

Բազմարուեստ ձեռահմտուհի՝ չորից եզանց 'ի համարէ ։
Եւ ընդ յառն կացեալ յարգիւացիսն ասաց ըզբանս .
Օ՜ն եւ այսրմ մըրցանաց հանդիսաւորք արիք ելէք ։
Զայս ասաց, եւ մեծն Էաս յարեաւ եկաց Տեղամոնեան,
Յարեաւ եւ Ոդիսեւսն խորհրդագէտ եւ Հնարագէտ ։
Երկոցուն զօտի ածեալ ելեալ 'ի մէջ կըռուանոցին՝
Ըզմիմեանց զիրերընդխառըն բուռն հարին հուժկու բազկօք,
Որդունեակ տանըն բարձու հեծանաձիգ զարանաւանդք
Զոր զգուշացեալ 'ի Թափոյ հողմոց մածոյց հիւսըն ճարտար ։
Եւ Թիկունքըն ճռընչեցին 'ի կաշկանդուսն հըզօր ձեռաց
Զըգձըգեալք ուժգնապէս, եւ հոսէր քիրտըն խռնաւուռ .
Եւ այտուցք արեանըդաւշտ կապուտակեալք ելին 'ի վեր
Խիտ առ խիտ 'ի կողս եւ յուսս, իսկ այնք անդուլ զուարթաբեկին
Առ անձուկ յաղթանակի՝ վասն յօրինեալ եռոտանւոյն ։
Ոչ Ոդիսեւս սայթաքել զարկուցանել կարէր յերկիր,
Ոչ Էաս զօրէր, զի 'նդդէմ կայր Ոդիսեայ տոկունն կորով ։
Իսկ յորժամ տաղտկացուցին ըզբարձաղէն աքայեցիս,
Յայնժամ մեծն առ նա Էաս բարբառեցաւ Տեղամոնեան .
Բազմահնարդ Ոդիսեւս Լայերտածին դիւցազնունդ,
Ամբարձ զիս, կամ ես ըզքեզ. Արամազդայ յանձն ամենայն ։
Ընդ բանին ամբարձ ըզնա, բայց Ոդիսեայ խելս խորհեցեալ՝
Հաս եհար զկարթ ոլոքացն յետուստ կռնէ, զանդամսն լուծ,
Յերկիր ընկեց յորսայսեալ, փըլաւ 'ի լանջսն եւ Ոդիսեւս ։
Ի զննին կայր ժողովուրդըն հիացեալ զարմանալեօք ։
Ապա դիւցազըն Ոդիսեւս երկրորդ եւ ինքըն զօրեաց զնա,
Շարժեաց խոյն մ' 'ի գետնոյն, բայց վերացոյց ինչ ոչ սակայն,
Այլ ըզծունկս իւր կըրկնեալ՝ երկոքին ընդ հուպ առ միմեանս
Թաւալ յերկիր զգետնեալ դըլոր եւ 'ի փոշի թաթաւեցան ։
Եւ երրորդ եւս անդրամ կանգնեալ անդըրէն ոգորէին,
Թէ ինքնին իսկ Աքիլլէս չէր յարուցեալ եւ արգելեալ .
Մի՛ եւս այլ զօտեմարտիք եւ մի՛ ճընշէք խոշտանգանօք .
Երկոցունցդ է յաղթութիւն, եւ զդոյդ աւարս առեալ գնասջիք,
Զի եւ այլոց եղիցի նահատակել աքայեցւոց ։
Զայս ասաց, եւ ունկընդիր լեալ նոցա յոյժ՝ հնազանդ եղեն,
Եւ 'ի բաց ջընջեալ զփոշին՝ ըզպարեգօտսն արկին զանձամբք ։
Իսկ Պեղեանն այլ եւս անդէն եդ մըրցանակս՝ երագութեան,
Թակոյկ մի արծաթի ճարտարագործ, տանէր վեց մար,
Առաւելեալ յոյժ գեղով ընդ ամենայն երեսս երկրի,
Զի գործած էր բազմարուեստ սիդոնացւոց գեղայօրէն,
Զոր արանց փիւնիկեցւոց ածեալ ընդ ծով մըթատեան՝
Եւ ընդ նաւաց հանգըրուանս անցեալ ետուն Թոասայ ձիր,
Եւ ըզնոյն՝ գինս ընդ որդւոյն Պրիամոսի 'նդ Լիկայոնեայ

Դիւցազին Պատրոկլեայ եւ Եւմեղոսին Ցամանեան ։
Եւ կարգեաց զայն Աքիլլէս 'ի յաղթանակ իւր մրցակացն,
Որ ոտիւքն արընթացիւք թեթեւագոյն ոք լինիցի ·
Երկրորդին՝ եցոյց արջառ մի յաղթանդամ ճարպապատարար,
Կէս քանքար ոսկւոյ յետնոյն, եւ յԱրգոսեանս կանգնեալ ասէ ·
Օ՛ն եւ յայս մրցութիւն արիք ելէք 'ի գուպարել ։
Զայս ասաց, եւ Այիլեանն յարեաւ անդէն երագն Այաս,
Ոդիսեւսն յարեաւ ըղձաստ, ապա զաւակըն Նեստորեան՝
Անտիլոք, որ զամենայն մանկահասակս ոտիւք գերէր ·
Եւ անցեալ կացին կարգաւ, եւ ցուցանէր զկէտն Աքիլլէս ։
Ի գլխոյ ասպարիսին զերծեալ արշաւ նոցին գնայր ·
Սրլացաւ փոյթ Այիլեանն, ընդ նմին սուրհայր Ոդիսեւս քաջ
Հուպ առ հուպ, զոր օրինակ գեղեցկագօտի կնոջ կրծից
Առընթեր յոյժ բէձըն կայ, զոր հրմտաբար ձգէ ձեռօքն
Ցարկանել թեղան յառէջս, եւ մօտ առ լանջըս իւր ունի ·
Այնպէս մերձ եւ Ոդիսեւս սըրթայր անդէն, եւ 'ի թիկանց
Հարկանէր զհետսըն ոտիւք՝ մինչ չեւ փոշւոյն հասեալ 'ի շուրջ,
Եւ 'ի գլուխ նորին ըղշունչն հեղոյր դիւցազնըն Ոդիսեւս
Անդըլակի թեթեւ թռուցեալ · գունդքն աքայեան աղաղակէր
Առ տըռփօղն յաղթանակի եւ խրախուսէր ըղփութեամբն ։
Այլ մօտ յելս ընթացիցն եկեալ՝ անդէն անդ Ոդիսեւս
Առ մեղուակն Աթենաս պաղատեցաւ յիւրում սրտին ·
Լուր, դիցանոյշ, եւ օգնական ոտից իմոց հաս բարեբար ։
Զայս ասաց աղօթելով, եւ Աթենաս լուաւ Պալլաս,
Եւ զանդամսն եդ փղքըրոգիս, զոտս եւ ըղձեռսն իւր 'ի վերուստ ։
Իսկ մինչ կայրն առաջի սլանալ թռչել 'ի մրցանակն,
Անդ Այաս ըսպըրծեցաւ յընթացս՝ հարեալ յԱթենասայ,
Ուրանօր մեծապոռաչ զենեալ եզանց հեղեալ կայր կու՝
Զորս 'ի վերայ Պատրոկլի վարեաց 'ի սպանդ ժիրն Աքիլլէս,
Եւ յապուշս արջառոյ լցաւ բերան նորա եւ ունչք ։
Իսկ դիւցազն Ոդիսեւս համբերատար՝ առաջացեալ
Բարձ տարաւ ըզթակոյկն, եւ պերճն Այաս առ ըզպարարն,
Եւ կալեալ զեղջերէ վայրի եզինն՝ եկաց կանգուն,
Եւ զքակորըն թըքթըքեալ՝ բարբառեցաւ յարգիւացիս ·
Ո՛վ աղէտ, օն եւ օն հարուածեաց զոտս աստուածուհին՝
Որ վաղուց մայրօրէն Ոդիսեայ մերձ կայ ձեռընտու ։
Զայս ասաց · բոլորեքեան զնովաւ քաղցրիկ ծիծաղեցան ։
Իսկ Անտիլոք ըզյետինն առեալ տարաւ իւր մրցանակ
Ծըպտելով, եւ 'ի մէջ արգիւացւոց զայս ասաց բան ·
Ասացից, բարեկամք, ամենեցուն ձեզ գիտակաց,
Զի արդ ահա եւ անմահք պատուեն զերէցըն հնաւուրց ·
Զի Այաս գոյզն ինչ յինէն երէցագոյն է հասակաւ,

Իսկ այս ազգի նախնականի եւ յառաջնոց 'ի մարդկանէ,
Եւ զնիզն յառաջս յուժի առեն ծերունի ժիր զօրախառնարս
Ի գուպար գորշաղաղարաց յաքայեցւոց, բայց յԱքիլլեայ։
Զայս ասաց պանծացուցեալ ըղձեթեւոտնքն Պելեան։
Աքիլլի պատասխանի ետ նա օրեալ բարբառելյաւ.
Անախինք, ոչ ընդունելոյն ինչ գովութիւնքդ եղեցին քեզ,
Այլ ես խնձէն աւատէկ յաւելեց քեզ եւ կէս տաղանդ։
Ընդ առեր եւ ետ 'ի ձեռան, եւ ընկալաւ նա բերկրալեր։
Իսկ Պելեանն՝ առեալ նիզակ մի հան 'ի գուպար երկայնատարածեր,
Եդ 'ի մէջ հրապարակին, եդ եւ սատար եւ սաղաւարտ,
Կաղմածք Սարպեդոնի՝ զորս 'ի Նամանէն կապուտեաց Պատրոկլ.
Եւ կանգնեալ արձանացեալ բարբառեցաւ յարգիւոցն.
Արք երկուս յորդորեմք արիականս՝ առ այսանիկ,
Զի զգեցեալ ըապատաղէնս, առեալ ըղպղնձեղն մարմնահերձ
Առաջի երախանիս միմեանց 'ի փորձ առնել հանդէս։
Որ կանխեալ ոք յառաջ 'ի գեղեցիկն հասցէ մարմին
Եւ մխեալ հարցէ յընդերս ընդ զէն՝ գորիւն բաստրաբուխ,
Տաց ըղսուրս արծաթազարդ գեղապալանօյն ըղԹրակացի՝
Զոր բարձի յԱստերոպեայ. իսկ ըղկազմածքըս զայսանիկ
Երկոքեան հասարակ առեալ տարցին ժառանգութիւն,
Եւ խրախուճս պատրաստեցից նոցա 'ի վրանս յորինեսցուք։
Զայս ասաց, եւ յարեաւ Տելամոնեանն մեծն Այաս,
Յարեաւ եւ Տիդեանն կորովին Դիոմեդէս։
Եւ ապա՝ յերկոցունց կողմանց զրահեալ զատ յամբոխէն,
Երկոքին եւս յառաջարկէս անդըր մատեան վառք 'ի գուպար՝
Սոսկալի հայեցուածովք, զարմանք կալան ըստաւ զաքայեցիս։
Իսկ յորժամ ընթացեալ եկեալ հասին մերձ առ իրեարս,
Երիցս յերեար խոյացան, յարձակեցան մօտաւատ երիցս,
Ապա Այաս ընդ ասպարըն բոլորշի եհար ըզնա՝
Ի մարմինն ոչ ժամանեալ, զի պահպանէր ներքուստ զրահ։
Իսկ Տիդեանն 'ի վերուստ այնուհետեւ մեծ վահանին
Յուղն անդուլ հարուած կըշռէր փայլակնաւէտ տիգին սլաքաւ։
Անդ յայնժամ զգուշաց յահի եղեալ աքայեցւոց,
Հրաման ետուն դադարել եւ հաւասար առնուլ պըրտակ։
Եւ զիւցազն 'ի Տիդեանն ըզմարտացուն ընձեռեաց մեծ
Հանդերձ բերեալ պատեանիւքն եւ բարեկազմ կամար գօտւոյն։
Իսկ Պելեանն եդ գունտ քըծուար մի երկաթոյ շանթ ինքնաձոյլ
Զոր երբեմն ընկենոյր Էետիոնի մեծ զօրութիւն.
Այլ երագոտն Աքիլլես դիւցազըն զնիզն էր ըսպաննեալ
Եւ բերեալ զայն նաւուքն՝ ըստացուածովքն այլովք հանդերձ։
Յոտն եկաց կանգնեցաւ, բարբառեցաւ յարգիւոցն.
Հա՛յ՝ արիք եւ որ 'ի սոյն հանդէս լինիք նահատակել։

Թէպէտ 'ի մեծ յոյժ հեռաւոր սփռուեցին անդր ուրուք պարզորոշ,
Ի պիտոյսն ընդ բոլորմանն ամաց հընդէց ունիցի զայդ.
Քանզի ոչ հողմքն նորա կամ հերկահար յերկաթոյ ակօս
Երթիցէ 'ի քաղաքս, այլ զայն առ ձեռքն մատուցէ:
Զայս ասաց, անդէն յարեաւ մարտիկըն զօր Պոլիպոյտէս,
Ցարեաւ եւ դիւցազնաւորն Լեւոնտեայ կըմեղ կարօղ,
Ել Այաս Տէլամոնեան եւ Եպէոս դիւցազնայքն:
Անցին 'ի կարգ, եւ ըղձուլածոն աստուածայինն առ Եպէոս,
Եւ ձըգեաց պըտուտակեալ. 'ի ծաղր հասանն ազգեանք բոլոր.
Լեւոնտեաս շառաւիղն արիական ընկէց երկրորդ,
Իսկ երրորդ արձակեաց Տէլամոնեանըն մեծն Այաս
Ի հաստատաբազուկն բազկէն, եւ 'առ բոլորեցն անցոյց նըշանս:
Այլ յորժամ ըղձուլածոն էառ Պոլիպոյտէս քաջամարտիկ,
Ծոր չափ այր ոք անդէորդ ըղհօժաւորականն ընկենուլ ցուայ,
Եւ այն Ճակատ առեալ Թըռչէ յերամացեալ երընջոց Ճակս,
Նոյնչափ եւ ըստ ասպարէսն ոլլոյն, եւ այլք հանէին ճայթիւս:
Եւ յարուցեալ համհարզեք մեծազօրին Պոլիպոյտեայ
Ի խարափարն ածին նաւ ըղմըրցանակ Թագաւորին:
Իսկ նա զկապուտակ երկաթ՝ որանց եդ աղեղանց,
Եդեալ առաջն փայտատ, եւս եւ զակաւ 'ի Թիւ տասնեակ.
Եւ առնելեալ կանգնեաց ըղկայմ կապուտակացանիկ նաւափայտի
Ցուպսն՝ 'ի հեռաստոյն, եւ ընդ այն նուրբ առասանաւ
Ա'ռ կապեաց զաղաւնեակն ըղդողդոջուն մի ոտանեաւ:
Ցոյն հրաման ետ ձիգ դընել. որ զաղաւնեակն հարցէ զողջոյն,
Զամենայն բարձեալ տապարս եւ 'ի խորանին առեալ տարցէ.
Իսկ որ վրիպեալ 'ի հաւէն՝ 'ի լարն եւեթ դիպեցուսցէ, —
Զի է նա խոնարհագոյն, — եւ նա զուրագայն առնուցու:
Զայս ասաց, եւ արքայեին Տեւկրի յարեաւ կորովութիւն,
Ցարեաւ եւ Մերիոն՝ Իդոմենի պինդ պաշտօնեայն:
Ըղվիճակն 'ի գըլխանոց առեալ պըղընձի՝ Թօթափէին.
Նախ Տեւկրի հասեալ վիճակ, նետ կորովի ձըգեաց անդէն,
Այլ չեղեւ ուխտադիր աղեղնաւոր աստուածորդւոյն
Անդրանկաց գառանց զոհից մեծապայծառ զենուլ ըսպանդ:
Սըխալեաց 'ի Թըռչնոյն, զի նմա խանդաց զայն Ապոլոն,
Այլ եհար յառասանն՝ 'ի կապս հաւուն՝ հուպ առ մատղըն,
Եւ ըզկարն 'ի սպառ ըստուար խըզեաց հերձակըն դըժընդակ.
Նա սըլացեալ եւս ընդ եւս փախեաւ յերկինս, եւ լարն յայնժամ
Թուլացեալ էջ ընդ երկիր, եւ աքայեանք հարին ճայթիւս:
Փութացաւ Մերիոնէս հան 'ի ձեռացն ըղլայնալիճն,
Իսկ ըղնետն ունէր առ ձեռն. խըրեւ ընդ զիրկըս մըտանէր,
Ուխտըս եդ նոյնժամայն կորովաձիգն Ապոլոնի՝
Անդրանկաց գառանց յաշտից մեծապայծառ յաղել ըսպանդ:

Ցակէն 'ի բարձունս ընդ ամպովք արկեալ զպողպատեղէն զաղաւնեակ՝
Մինչդեռ ճախր առեալ շըրջէր, խոցեաց ներքոյ թեւոյն ընդ մէջ.
Թափ անց փետրէնն՝, իջեալ զոտիւք Մերիոնի հարաւ յերկիր,
Իսկ հաւուն 'ի կայմ նըստեալ կապուտաաչուանկ լաստափայտին՝
Կախեաց զուլն, եւ թըռչարանքն անկան ընդ նոյն թաւափետուրք.
Եւ թեւթեւ յանդգամոյ՝ թըռեաւ հոգին, իսկ ինքն անկաւ
Բացադոյն 'ի ակըւտիքէն. հայէր ամբոխն եւ զարմանայր:
Մերիոն ըզփայտատապարսն տասնեակսն առեալ եբարձ,
Եւ զկիսատապարսն Տեւկրոս տարաւ 'ի նաւս իւր գոգաւորս:
Այլ սակայն Պելեանեան զեղարդըն մի երկայնաստուեր
Եւ սան մ՛ 'ի հուր դեռ անփորձ՝ ծաղկաւէտեալ, եզին արժէք,
Բերեալ եդ անդ յատենի, եւ այր նիզակաւ յարեան կայցին.
Յարեաւ Ատրիդէս Ագամեմնոն իշխանապետ,
Յարեաւ եւ Մերիոն ժիր արբանեակն Իդոմենի:
Իսկ քաջման Աքիլլեւս դիւցազն ասէ 'ի մէջ նոցա.
Ատրիդէս, քանզի գիտեմք քանի զըլես զամենեսեան
Եւ քանիօն յուժգնութիւն եւ յարձակելով ես վեհագոյն,
Առա քո զմըրցանակըս զայս կալեալ՝ չո՛գ 'ի խոր նաւս,
Իսկ զաշտէն՝ դիւցազանըն մատուսցուք Մերիոնեայ,
Թէ կամիս եւ դու սրտի մըտօք հաւան. ինձ հաճոյ է:
Զայս ասաց, չըմըստացաւ արանց արքայն Ագամեմնոն:
Մերիոնի ետ նա զընկուձնդըն պղնձաղէն, եւ նոյն՝ դիւցազն
Ի նաւպետին ատանէր Տալթիբիոս զչըքնաղ պարգեւն:

Հ Ո Մ Ե Ր Ի

# Ի Լ Ի Ա Կ Ա Ն

ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ



Digitized by Google

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ոչ դադարէ Աքիլլէս 'ի թշնամանելոյ զմարմինն Հեկտորի, ընդ որ դժկամակ լեալ դիք, առաքի Թետիս յԱրամազդայ պատգամաւոր առ նա՝ տալ զնա ընդ փրկանաց հօր իւրում. Հրաման առաքի եւ առ Պրիամոս՝ երթալ առնել փրկանս առ Աքիլլէս եւ փրկել զնա. եւ նա յօժարութեամբ կազմեալ բազում պարգեւօք՝ ելանէ ընդ քաղաքն։ Հերմէս հրամանաւ Արամազդայ 'ի կերպարանս առնի պատանեկի ընդ առաջ ելանէ նմա, եւ առաջնորդեալ տանի մինչեւ 'ի խորանն Աքիլլեայ. բանք նոցա ընդ միմեանս։ Շնորհէ ներողն մարմինն որդւոյն, զոր առեալ դառնայ ընդ արշալուսն 'ի քաղաքն՝ նորին Հերմեայ առաջնորդութեամբ. սուգ եւ ողբք բոլոր քաղաքին. եւ առաջ յապարանսն արքունի՝ ողբերգեն Անդրոմաքէ, Հեկաբէ եւ Հեղինէ ընդ ձայնարկու կանանց. Թաղումն Հեկտորի։

Digitized by Google

# ՀՈՄԵՐԻ

# ԻԼԻԱԿԱՆ

## ԵՐԳ ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ

### ՓՐԿԱՆՔ ՀԵԿՏՈՐԻ

Երախանքն լուծաւ, ցրուեցան այր իւրաքանչիւր
Ի նաւսն երթեալ երագունս, եւ ամենքն ընթրեաց լնուլ
Եւ անուշ քնոյ յագելոյ. իսկ Աքիլլէս զողբս հարկանէր
Յուշ զընկերն անեալ սիրուն, եւ ոչ նիրհումն ամենադրաւ
Նուաճէր զնին, այլ դառնայր եւ կողմանէ շրջէր 'ի կողմ
Առ գութ սիրոյ մանկութեան եւ արութեան Պատրոկլոսի:
Եւ որչափ ինչ միանգամ տարաւ ընդ իւր եւ ժուժկալեաց
Մարտից արանց եւ ջաւուց՝ ընդ խռով ալեաց անցեալ ընդ փորձ,
Զայն ուշ 'ի կուրծս արարեալ՝ հեղոյր արտասուս յորդամղեալ.
Էր զի անկեալ ընդ կողաց, էր զի յորսայս, էր 'ի բերանս,
Յարուցեալ ապա 'նդ ծովափն 'ի ձեռն զընայր յոգնատրտմեր:
Զմտրիմէր 'ի նմանէն այգուն ծագումն ընդ ծով՝ ծովեզր:
Այլ 'ի կառսն լծեալ զերիվարեանն երագաթռիչ՝
Եւ զՀեկտոր յետուսանէ կապեալ զուգելցն առ 'ի քարշել,
Եւ երիցս ըզՄենետեան մահացելոյն ձգեալ շիրմաւ,
Դառնայր հանգչէր 'ի վրանսն, թողեալ ընդ հող զայն 'ի յերեսս:
Իսկ բերեալ Ապողոնի գութ եւ ընդ առնըն մեռելոյ,
Ի մարմնոյն հերքէր զարատ՝ պատեալ ոսկւոյն յասպարն ոսկի,
Զի մի 'նդ քարշ անելն ըզնա՝ կեղեքեսցէ ծրուէնս 'ի ծուէնս:
Այսպէս սա սըրտամրտեալ՝ Թըշնամանէր զդիւցազն Հեկտոր:
Բայց հայեցեալ ընդ նա գիջն ողորմէին երանաւէտք,
Զքաջադէտն Արգոսասպան յորդորէին գողանալ գաղտ,
Որ այլոց ամենեցուն հաճոյ եղեւ, բայց ոչ Հերայ,
Եւ ոչ Պոսիդոնի եւ ոչ խաժակն օրիորդին.

Այլ կային որպէս նախուստ յառել ըզսուրբըն զԻ՛լիոս,
ԸզՊրիամ եւ զժողովուրդն առ 'ի վնասուէն Ա՛լէքսանդրի,
Որ երդիծ զաստուածուհիսդ յորժամ եկին յիւր հանդըրուանս,
Եւ պատուեաց զայն որ մատոյց նմա զգըժնէ հեշտ ցանկութիւն։
Այլ 'ի ծագել յայնմհետէ երկոտասան առաւօտուն,
Գուշակն յայնժամ Ապոլոն բարբառեցաւ 'ի դիցն ակումբ.
Անգութ էք, դիք, վնասակարք. ո՞չ ապաքէն երբեմն Հեկտոր
Ձեզ զանդեայց եւ զընտիր ընտիր այծից էկէզ ըզԹամբս.
Իսկ դուք այժմ, եւ յետ մահուն, չհանդուրժեցէք Թափել ըզնա,
Զի տեսցեն ամուսինն ըզնա եւ մայր իւր եւ որդեակ,
Եւ հայրըն Պրիամոս եւ ժողովուրդք, եւ այրեսցեն
Փութապէս ըզնա 'ի հուր, եւ տացեն յուղարկութիւն։
Այլ վիրապին Աքիլլեայ կամիք շընորհս առնել, աստուածք,
Որում ոչ միտք են ուղիղ, ոչ սիրտ 'ի լանջս ողոքելի,
Այլ հանգոյն իմն առիւծու խըժդըժականս ուսեալ գիտէ,
Որ մեծաւ մըղեալ ուժով եւ վիաական սըրտմըտութեամբ՝
Ի մարդկան խաշն ընԹանայ յափըշտակել իւր կերակուր,
Նոյն Աքիլլեւս կորոյս զողորմ, եւ պատկառումն ինչ չիք 'ի նմա,
Որ Թէպէտ մեծապէս վնասէ մարդկան, Թէպէտ օգնէ։
Ապաքէն եւ զառաւել ոք սիրելին կորոյս ուրեք,
Զեղբայր հարազատ ըզհամամայր եւ կամ զորդեակ,
Աշխարէ եւ կականի, այլ հուսկ ուրեմըն դադարէ.
Զի տընկեցին 'ի մարդիկ Հրամանք հոգի համբերատար։
Սակայն դա՝ զդիւցազն Հեկտոր, ըզքաղցր արեան յաչացն հատեալ.
Ըզկառաց կապեալ ձըգէ զշիրմաւ սիրուն ընկերակցին։
Իսկ այդ ոչ Թէ վայելուչ ինչ է նմին եւ ոչ յօգուտ.
Գուցէ ակն ինչ քաջութեան իւրում չառեալ՝ զչարիցիմք մեք,
Քանզի զհող անզգայուն Թըշնամանէ մոլեգնաբար։
Ի ցասումն ընդ նա բըրդեալ լուսածըզին ասէ Հերա.
Ճըշմարտեալ եւ այդ քո բան, ԱրծաԹաղեղն, եղցէ 'ի գլուխ,
Թէ զՀեկտոր զուգապատիւ ընդ Աքիլլի համարիցիք։
Այլ Հեկտոր մահկանացու, եւ ըզկըրծոց դիեալ ըստինս.
Իսկ Աքիլլեւս է զաւակ աստուածուհւոյ զոր իմ ինքնին
Ի սնուցեալ եւ դայեկեալ եւ տուեալ առն յամուսնութիւն,
Պելէոսի՝ որ քան ըզբնաւս սըրտահաճոյ գտաւ անմահից.
Եւ դուք դիք ամենեքին 'ի հարսանիսն եղէք հաղորդ,
Դու իսկ փանդռամբդ 'ի ճաշն էիր, զովող չարաց՝ միշտ ուխտադրուժ։
Առ նա պատասխանի ամպրոպային ետ Արամազդ.
Հերա, մի՛ դըժոխել ամենեւին ընդ աստուածոց,
Զի ոչ նոյն եղիցի դոցին պատիւ, բայց եւ Հեկտոր
Սիրելի յոյժ աստուածոց յԻլիոնեանն էր մարդկանէ,
Որպէս եւ ինձ, զի երբէք զհաճոյ ձօնիս չառնէր ապախտ,

Ոչ արդար դաշամունք պակասէին ընաւ յիմ բագինս ,
Ոչ նուէրք եւ ոչ ճենճերք . որ այդ է մեր բաժին պատուոյ :
Բայց 'ի բաց թողցուք բառնալ գաղտագողի զարին Հեկտոր ,
Զի եւ չէք հընար թաքչել յԱքիլլեւսէ , առ որում կայ
Ցանկորդեալ միշտ պաշտպան մայր իւր ընդտիւ եւ ընդգիշեր :
Այլ թէ ոք յաստուածոց երթեալ ձայնէ զԹետիս առ իս ,
Տաց խորհուրդ մի հանճարեղ՝ որով ընդունի իսկ Աքիլլեւս
Ընկալցեալ 'ի Պրիամէ փրկանս՝ անդրէն տացէ զՀեկտոր :
Զայս ասաց , եւ մրրկոտն յարեաւ Իրիս տանել պատգամ ,
Եւ ընդ մէջ Սամոսի եւ Իմբրոսի առապարին
Ոստեաւ 'ի ծով թըխատեսիլ , եւ հեծեցին ջրերոցն անդունդք :
Նա մըխիրճ հարեալ սուզաւ խոյս 'ի խորոց երբեւ զկապարն
Որ 'ի ծայր վայրագաստուն եղին եղջեր ըստորեքնեալ
Հասանէ մահաբեր հըմակերացըն լուղակաց :
Եւ 'ի գոգ քարանձաւին գիտ ըզԹետիս այլովքն հանդերձ
Որ ակումբ զիւրեւ առեալ կային ծովուցն աստուածուհիք .
Ինքն 'ի խումբ պարու նոցին լայր զանըստգիւտ որդւոյն օրհաս
Որում հեռի յիւր աշխարհէն մահ յարգաւանդ մընայր Տրովա :
Մատուցեալ երագոտն Իրիս առ նա բարբառեցաւ .
Արի , Թետիս . կոչէ անեղծ խորհըրդագէտն Արամազդ :
Եւ Թետիս արծաթաթաթիկ աստուածուհին պատասխանի .
Իսկ զի՞ առ իս մեծն աստուած յղէ հրաման . ես պատկառեմ
Ցաստուածս անդըր խառնել , զի ցաւք անթիւ են 'ի սըրտիս :
Այլ երթայց , ոչ 'ի զերեւ ինչ զոր տայցէն լիցի պատգամ :
Զայս ասացեալ մեծաշուքն յաստուածուհիս առկաւ ըզքօղն
Ըզթուխ՝ քան զոր եւ չէր ինչ սեւերագոյն արկանելի :
Ել գընալ , եւ մրրկոտն երագ Իրիս կարապետէր ,
Եւ հերձեալ ըզնոքօք սահեալ զհայլին ալիք ծովուն :
Եւ ելեալ 'ի ծովեզրըն սըլացան 'ի վեր յերկինս ,
Եւ գտին ըզՋըրուանեանն ահեղագոչ եւ զայլս համօրէն
Զի զնովաւ կային բազմեալ երջանկաւէտ աստուածքըն յաւէժք .
Ինքն առ հօրըն Արամազդայ նըստաւ , տեղի ետ Աթենաս ,
Իսկ Հերա զըրուագն ոսկի գեղեցկազարդ տուեալ 'ի ձեռսն՝
Եւ բանիւք առնէր ուրախ . Թետիս էարբ եւ ետ անդրէն :
Աստուածոց հայրըն եւ մարդկան առ նոսա սկըզբն արար խօսից .
ՑՈլիմպոս , աստուածուհիդ եկիր Թետիս , թէպէտ տըրտում ,
Եւ սուգ 'ի սիրտդ անմոռաց՝ զոր ես ինձէն իսկ գիտացի .
Այլ եւ այնպէս մերկացայց՝ յոր պէտս ըզքեզ կոչեցի այսր :
Այս աւուրք ինն են զի կռիւ բանամարտի յանմահս յարեաւ
ԶՀեկտորի դիականէն եւ զշինաւերն Աքիլլիսէ .
Գողանալ յորդորէին ըզքաջադէտն Արգոսասպան ,
Սակայն ես Աքիլլի նօթձեմ զայս փառս եւ ըզպատիւ՝

Զմեծարանս քո եւ ըզսէր պահպանելով մինչեւ յապայս :
Փութա երթ 'ի բանակն եւ տուր պատուէր քում զաւակիդ.
Պատմեա զցասումն յաստուածոցս, եւ սըրտմըտեալ զիս մանաւանդ
Յամենայնից բոլորեցունց, զի զայրագին հոգւով մոլեալ՝
Առ կորնթաւոր նաւակօքն ունի զՀեկտոր, եւ ոչ դարձոյց.
Թէ երկիւղած ինչ է յինէն՝ թող տայ զՀեկտոր ընդ փրկանաց :
Սակայն ես առ մեծանձնըն Պրիամոս յղեցից զԻրիս,
Յաքայեանց երթալ 'ի նաւս եւ փրկել զիւր սիրուն որդեակն,
Եւ ընծայս հաճոյարարս սըրտին տանել առ Աքիլլէս :
Զայս ասաց, լըւաւ Թետիս արծաթթաթիկըն դիցանոյշ,
Եւ յարեաւ սլացաւ էջ յՈղիմպականն 'ի գագաթանց.
Եւ հասեալ 'ի խորանս որդւոյն իւրոյ՝ եգիտ ըզնա
Զի հառ կըլեալ հեծեծէր, եւ սիրասուն ընկերք զնովաւ
Ժիրաժիր խընամ տարեալ պատրաստէին նըշխըն ըզճաշն,
Եւ ոչխար մեծ գեղմնաւոր զենեալ 'ի վրանըս նոցա կայր :
Մատեաւ մայրըն մեծարոյ եւ անց նըստաւ իւր առընթեր,
Եւ ձեռամբըն փայփայեալ ըզնա՝ ձայնեաց եւ խօսեցաւ.
Ցե՞րբ, որդեակ իմ, 'ի սուգ եւ տըրտմութիւն ընկըղմեալ խոր՝
Ըզսիրտ քո հաշեսցես, ոչ կերակուր բերեալ 'ի յուշ,
Ոչ անկողինս. այլ բարւոք է 'նդ կին սիրով ամուսնանալ.
Քանզի ոչ յերկարակեաց ինչ լիցիս ինձ, այլ ահա կայ
Մօտալուտ զօտիւըրդ քեզ մահ եւ Օրհասըն բըռնաւոր :
Արդ փութով ունկն ինձ մատո. յԱրամազդայ գամ քեզ հրեշտակ.
Խոժոռեալ ըզցխան ասէ, եւ առաւել զինքըն ըզչարեալ
Ի համուրց անմահից, զի բարկաժիրս կատաղութեամբ
Առ մահկաձեւ նաւկներոյդ պահեալ զՀեկտոր՝ չետուր 'ի դուրս :
Այլ արդ ծ՛ն արձակեսջիր եւ առ փրկանս ընդ դիականն :
Երագոտն Աքիլլէս պատասխանի տըւեալ ասէ.
Այդպէս լիցի. որ զփրկանսըն մատուսցէ՝ տարցի եւ զդին,
Եթէ զայդ Ողիմպականն յօրդոր սըրտիւ տայ ինձ պատուէր :
Այսպէս սոքա 'ի նաւաց անդ համդիսին մայր եւ որդի
Խօսս 'ի մէջ առնէին երագաթեւ բանիւք բազմօք :
Իսկ Զըրուանեանն յԻլիոն 'ի Նուիրական յարոյց զԻրիս.
Արի երթ, Իրիս երագ, թողեալ ըզգահդ Ողիմպական,
Տար պատգամ յԻլիոն առ մեծասիրտըն Պրիամոս,
Գրաւաթափ լինել սիրուն որդւոյն երթեալ յաքայեանց նաւս,
Եւ պատարագս Աքիլլեայ տանել սըրտին իւր ողոքիչս,
Առանձինն, եւ մի 'նդ իւր այլ ոք 'ի տրովեանց երթիցէ այր :
Նուիրակ ոք ծերագոյն ընդ իւր եկցէ վարել զջորիսն
Եւ ըզսայլն անուահոլով, ապա դարձեալ յոստանն անդրէն
Ըզմարմինն առնուլ տանել՝ զոր Աքիլլէս ըսպան դիւցազն :
Մի անկցի ամենեւին 'ի միտըս իւր մահ եւ մի ահ,



Digitized by Google

Զի առաջնորդ այնպիսի տացուք ՚ի ձեռս զԱրգոսասպանն՝
Որ ածեալ մինչեւ առ նոյն ինքն Աքիլլէս հասուցանէ։
Եւ յորժամ ՚ի խորանի անդ կացուսցէ զինքն Աքիլլէսայ,
Նա սպանցէ ոչ, այլ եւ զայլսն ամենեսին արգելուցու.
Զի անմիտ ինչ ոք չէ, ոչ անզգուշակ, ոչ անիրաւագործ,
Այլ յայր աղերսաւոր խնայեսցէ մեծաւ խնամով։
Զայս ասաց, եւ մրրկաոտն Իրիս յարեաւ տանել զպատգամսն.
Եւ ՚ի յարկսն Պրիամու հասեալ եգիտ ձայնս եւ լալիւն,
Որդիքն ընդ հայրն ՚ի գաւիթն շուրջանակի յակունս բոլոր՝
Արտասուօք ըզպատմուճանս իւրեանց թրջմեալ ողողէին.
Ի մէջ անդ ծերունին պատատեալ ծածկեալ յօթոց,
Եւ բազում ՚ի գլուխ ծերոյն ու՚ի պարանոց ցանեալ աղբեւք,
Յոր թաւալեալ եւ արկեալ էր կլանձեալ ափովք իւրովք։
Դստերքն իւր եւ հարսունքն կոծ յապարանս անդ ողբէին,
Ուշ ՚ի կուրծս արկեալ նոցունց որ միանգամ քաջքն յաղթութեամբ
Ի ձեռաց արգիւացւոց զետեղեցեալ կային տապաստ։
Եկն եկաց առ Պրիամու պատգամաւորն Արամազդայ
Եւ ասէ գաղտն ձայնիւ, այլ քստմնեցին մարմինք ծերոյն.
Դարդանեանդ Պրիամէ, քաջ լեր ՚ի սիրտ, մի երկնչիր,
Ոչ չարեաց ինչ խորհրդով, այլ բարեխօս ընդ քեզ միտօք
Հասեալ կամ առ քեզ, եւ եմ բանբեր Արամազդայ,
Որ քեզ՝ եւ ՚ի հեռաստ մեծաւ գթով արգահատէ։
Պատուէր տայ քեզ Ողիմպեանն՝ զդիւցաթագ տանել զՀեկտոր,
Եւ ընծայս Աքիլլէսայ տանել սրտին իւր հաճոյարարս,
Միայնակ, մի ոք ընդ քեզ ՚ի տրովացւոցդ գնասցէ այր,
Նուիրակ մի ծերունի ՚ընդ քեզ երթիցէ վարել ջորւոց
Եւ վաչկգ անուաշըրջկաց, որ եւ բարձեալ զմեռեալն անդրէն՝
Զոր սպան դիւցազն Աքիլլէս, դարձեալ յաստան այսր բերցէ։
Մի անկցի ամենեւին ՚ի միտս քո մահ եւ մի ահ,
Զի առաջնորդ այնպիսի եկեսցէ ՚ընդ քեզ՝ Արգոսասպանն,
Որ ածեալ տարցի զքեզ մինչեւ առ նոյն ինքն Աքիլլէս։
Եւ յորժամ ՚ի վրանի անդ Աքիլլէսայ զքեզ կացուսցէ,
Ոչ նա սպանցէ, եւ ոչ թոյլ ումեք տացէ յամենեցունց.
Զի ոչ շամբուշ ինչ ոք է, ոչ անզգամ, ոչ ժանտատուս,
Այլ գթասէր տացէ խնամովք աղաչաւոր երեսաց անձն։
Եւ զայս ասացեալ թեթեւաոտն Իրիս խուսեալ՝ էջ մեկնեցաւ։
Եւ նա հրաման ետ որդւոցն անուահոլով ջորեաց յարնեակ
Կազմել հանդերձել, եւ ՚ի վերայ կապել սապատ.
Եւ նա ինքն երթեալ էջ ՚ի մթերանոց բազմաբուրեան,
Ցեղենի, բարձրաձեղուն, զեղուն ընչիւք պատուականօք.
Եւ ՚ի ներքս զամուսին իւր զՀեկաբէ ձայնեալ ասէ.
Ով, ով հէք, յԱրամազդայ գիտնոց հրեշտակ եկն Ողիմպեան,

Յաքայեցւոյն երթալ նաւս եւ զանփրկելս փրկել որդեակ ,
Աքիլլեայ տարեալ ընծայս սրտին իւրում ողոքականս :
Սակայն եկ ասա դու ցիս , զի՞նչ թուի քեզ 'ի մտի քում ·
Զի հզօրս իմն զըջանքն եւ սիրտս զիս յորդորէ յոյժ
Գընալ անդր 'ի մեծ բանակն աքայեցւոց եւ 'ի նաւակնեար :
Զայս ասաց , եւ ճիչ բարձեալ կինոջն տայր պատասխանի ·
Եղո՜ւկ ինձ , և յո՞ գնաց իմաստութիւնդ որով էիր
Առ օտարս եւ իշխեցելոցդ քո երբեմն մեծանուն :
Ի քաշտոն աքայեցւոց զիա՞րդ կամիս երթալ միայն ,
Առնըն առն յանդիման՝ խողխող որդւոց քոց մերայնին
Բազմաց եւ կորովեաց · քո երկաթի է սիրտ անշուշտ :
Զի թէ զքեզ արկցէ զըբռնամբ եւ առաջի տեսցէ աչացն՝
Այրըն այն անագորոյն եւ դըրժաղաւ , չողորմեսցի ,
Եւ ոչ ակն ինչ քեզ ածցէ · այժմ առանձինն նըստեալ 'ի տան
Լացցուք առ ծունըր , զի նմա բըռնաւոր բախտ 'ի ծնընդեանն
Զայս 'ի թելըն մանեաց , մինչ երկնեցի զնա ինքըն ես ,
Ի ծնողաց իւրոց հեռի՝ կեր երագոտն անկանել շանց
Առ առնըն ժանտի , զորոյ ես եհ թէ զլեարդն որսեալ
Մարդկայլեալ ծամծամէի · այն փոխարէն լինէր որդւոյս :
Քանզի ոչ առ վատութեան ինչ թէ նորուն ըսպան ըզնա ,
Այլ 'ի վերայ տրովացւոց եւ լանջապնդեալ մինչ տրովուհեաց
Ախոյեան արձանացեալ կայր աներկիւղ եւ անփախուստ :
Ալեւորըն Պրիամոս աստուածանման՝ կրկնեալ ասէ ·
Ի բաց կաց , զի գնալ կամիմ · եւ մի՛ դու ինձ 'ի տան իմում
Լինիր հաւ չարագուշակ · քանզի եւ ոչ յանկուցես զիս :
Զի այլ ուրուք յերկրածնաց հրաման թէ ինձ էր առաքեալ ,
Յորոց ենն ըղձապատուածք , լերգահըմայք եւ կամ քըրմունք ,
Գոյր կարծել մեզ ստութիւն եւ տալ բացուստ 'ի բաց հրաժեշտ ·
Իսկ արդ զի ես լըւայ տեսի զաստուածուհին դէմ յանդիման ,
Երթամ , եւ ոչ ապախտ եղիցի բանն · իսկ եթէ ինձ
Մեռանել առ պղնձազգեստ աքայեցւոց նաւս իցեն հրամանք ,
Կամիմ · թո՛ղ միանգամ զըրկախառնեալ ընդ իմ որդեակն ,
Եւ սպանցէ զիս Աքիլլեւս , զողբոցս եւեթ թափեալ փըղձուկս :
Ասաց , եւ զարկեղացն ըզգեղեցիկ եբաց խուփսն ·
Եւ եհան անտի խըլամիսս երկոտասան չըքնաղագեղս ,
Եւ թիկնոցս երկոտասան մեկնակս , եւ նոյնչափ պատմուճանս ,
Եւ ամղանս նոյնչափ ընտիրս , եւ առ նոքօք շապիկս այնչափ :
Եւ ոսկւոյ կըշռեալ եբարձ ընդ ամենայն տասըն քանքար ,
Ա՛ռ երկուս հրափայլ կաթսայս եռոտանիս , եւ սանըս չորս ,
Ա՛ռ բաժակ մի գեղեցիկ՝ զոր արք Թրակեանք ետուն նըմա
Մինչ չոգաւ հրեշտակութեամբ , չըքեղ պարգեւ , յոր չըխնայեաց
Ծերունին 'ի տան իւրում , ցանկացեալ յոյժ սըրտի մըտօք

Թափել զորդին սիրելի · եւ զորովալցեան առհաւատչեակ
Արտաքսէր 'ի գաւթէն կոսկոծելի բանիւք սաստեալ·
Արիք երթայք 'ի կորուստ, արհամարհանք, այպանողքդ·
Եւ ձեր սուգք չիցեն 'ի տան՝ զի յիս եկիք յորդել թախիծ·
Չէ՞ ձեզ շատ՝ զի Զբրուանեանն Արամազդ զիս ցաւովք եհար,
Զի կորուսի զորդիս քաջ· այլ խելամուտ լիջիք եւ դուք,
Զի լիջիք այսուհետեւ աքայեցւոց յոյժ դիւրածախ
Ցետ նորա վախճանելոյն· բայց սակայն իմ մինչ չեւ եղեալ
Քանդելոյ քաղաքիս եւ սատակմանն ականատես,
Գնացեալ երթանայցեմ 'ի տուն դժոխոց Սանդարամետին:
Ասաց, եւ մականաւըն խոյէր զարսն որ տագնապեալ
Ի ծերոյն եւանէին · իսկ նա յորդիսըն կարկաչէր,
Նախատեալ ըզՀելենոս, զՊարիս եւ զվեհըն զԱգաթոն,
ԸզՊամմոն, զԱնտիփոնոս եւ զՊօլիտէս քաջամարտիկ,
ԶԴէիփոբ, զՀիպպոթոոս եւ ըզԴիոս զարմանալին:
Ինննեցունց սոցա հրամանն տայր ալեւորըն մեծաստատ·
Ճեպեցարուք, զաւակք չարք եւ ակընկորք · ո՜չ թէ բոլոր
Հեկտորի դուք փոխանակ սատակէիք զերագ նաւուքն:
Ինձ եղո՜ւկ չուառականիս, զի ծնայ մանկունս քաջակորով
Աստ 'ի Տրոյա լայնանիստ, յորոց չասեմ պահեալ մնացորդ·
ԸզՄեստոր դիցանման եւ զՏրովիլոս կառամարտիկն,
ԸզՀեկտոր՝ որ էր աստուած 'ի մէջ արանց, եւ չէր նըման
Զաւակի մահկանացուի առն երեւեալ, այլ աստուածոյ·
Ըզսոսա կորոյս Արէս, եւ համօրէն թողան դըսրովք,
Ստախօսք, կաքաւիչք, 'ի պարանցիկըս հըմտավարժք,
Գառանց եւ ուլուց ժողովըրդեանն յափշտակիչք:
Չե՞ւ իցէք տակաւին փութով ըզսայլն ինձ պատրաստեալ
Եւ բարձեալ զայս ամենայն, որպէս յուղի անկանիցիմք:
Զայս ասաց, եւ նոցա զահի հարեալ 'ի հօր սաստից
Հանին 'ի դուրս ըզյարմարակն անուաշըրջիկ եւ ջորեկիր,
Գեղեցիկ եւ նորակերտ, եւ կապեցին 'ի նմա զապալատն·
Իջուցին եւ 'ի ցցէն ըզջորեմուտ սամեացն ըզլուծ
Տօսախի, կըմբաւոր եւ յերիւրեալ օղալամբօք:
Ընդ լըծոյն եւ ըզփոկն առեալ բերին զինընկանգնեան·
Ագուցին զլուծն 'ի քեղին գեղաշինակ՝ յառաջսըն իւր,
Եւ 'ի սեպ անդըր քեղւոյն արկեալ յեռէին զօղամանեակն·
Եւ երիցս աստի անտի կաշկանդելով 'ի կուռս պորտոյն՝
Ապա պըրկեալ կարգ 'ի կարգ՝ ըզծայր փոկոյն ոլորեցին:
Եւ բերեալ 'ի գանձէն՝ դիզին 'ի սայլն 'ի սըրբատաշ
Զանբաւ եւ զանհամար ըզՀեկտորեան գըլխոյն փըրկանս:
Լըծեցին եւ ըզջորիս կարծրասըմբակըս սայլաձիգս,
Զորս երբեմըն Պրիամեայ Միսեանք ետուն շըքեղ պարգեւ:



Digitized by Google

Ընդ լծով արարին եւ զերիվարսն Պրիամու
Զոր ծերն ինքնին սնուցանէր 'ի քերածոյ ողորկեալ մըսուր .
Ըզստոյս լծեցին 'ի բարձրայարկ անդ ապարանս
Նուիրակն եւ Պրիամոս հանճարախոհաբար 'ի միտս խորհրդոց :
Հեկաբէ՝ սիրտ 'ի բեկման մաշեալ եհաս հուպ առ նոսին՝
Յաջ ձեռին գինի անուշ ունէր նուազաւ, զի նուէր հեղեալ
Սպաս գնասցեն, եւ ձեռացն հանդէպ կացեալ ձայնեաց առէ .
Արամազդայ հօրն առ ձօնես, եւ աղերսես դառնալ 'ի տուն
Այսրէն յարանցն ոսոխաց . որովհետեւ հոգին ըղձէ
Ի մարտիկս անդրը մըղէ՝ ըմբռնեալ քեզ յակամայից :
Այլ աղաչես զԶրուանեանն Իդայածին զամպրոպաթուխ
Որ զետակն այսր 'ի Տրոյա եղեալ ըղձանան իսկ տեսանէ,
Եւ հայցես զհաւուրն գայն, զերագ հրեշտակն՝ որ եւ նորին
Սիրելին է 'ի հաւուց եւ մեծազօր կարողութեամբ,
Յաջ կուսէ, զի քաջէն աչօք եղեալ ականատես՝
Յայն ապաստան գնասցես 'ի նաւս երագաձի դանայեցւոց :
Իսկ թէ չտայցէ Արամազդ ամենակալն զհաւուրն հրեշտակ,
Ոչ եւս ես այնուհետեւ տայց քեզ հրաման յորդորանօք,
Թէ եւ յոյժ խզճ ըմբռնեցես, յարդիւնացոյցն երթալ 'ի նաւս :
Պրիամոս աստուածանմանն՝ պատասխանի տուեալ առէ .
Ո՛վ կին դու, պատուիրանիդ այդմիկ չեղեց անունկնդրելի .
Առ Արամազդ ձեռս համբառնալ լաւ է, թերեւս ողորմեսցի :
Ասաց, եւ ետ հրաման մատակարար աղախնոյն ծերոյն,
Հեղուլ ջուր յըստակ 'ի ձեռսն, եւ աղախինն եկեալ եհաս
Ըմբռնեալ եւ կոնք 'ի ձեռին . լուացեալ, զբաժակն առ 'ի կնոջէն
Եւ կացեալ 'ի մէջ բակին՝ աղօթս առնէր, նուիրէր գինի
Հայեցեալ 'ի վեր յերկինս . եւ ձայն արկեալ բարբառեցաւ .
Արամազդ հայր, իշխեցող յԻդայ լերին եւ ահաւոր,
Տուր հասանել ինձ սիրելի եւ գթալի առ Աքիլլես,
Եւ ըղձաւոր առաքեա, զթեթեւ հրեշտակ, որ քեզ ինքնին
Սիրելագոյն է 'ի հաւս եւ մեծազօր ուժեղութեամբ,
Յաջմէ կուսէ, զի եղեալ ականատես խնդալ աչօք՝
Յայն վստահ՝ երթայց 'ի նաւս երագաձի դանայեցւոց :
Զայս ասաց աղօթելով, լուաւ նմա զգօնն Արամազդ,
Եւ անդէն յղեաց զարծուին՝ զանվրիպագոյն յօդապարիկս,
Ըզսեւաթոյրն որսական, զոր եւ կոչեն խայտախարիս :
Եւ որ ընչաւետի բարձրաձեղուն առագաստին
Որչափիք լինին դրանդիքն ամրափակաց եւ ողնդաւորք,
Նոյնչափ էին հոլաթեւք նորա թռուցեալք աստի անտի,
Երեւեալ նոցա յաջմէ, եւ յառաջնին վերայ պալատայ .
Խնդացին նոքա 'ընդ տեսիլն, ամենեցուն զուարթացան սիրտք :
Փութացեալ ծերունին եւ անկանէր 'ի կառս իւր,

Եւ վարեաց ընդ անդաստակաւն եւ ընդ գաւիթն արտաքոյ ։
Յառաջոյ ձգէին ջորիք ըղձայլքն քառաձիգուղ
Զորս Իդէոս վարէր հրմանաւն, եւ երիվարքն յետոյ կուսէ
Զորըս ծերըն առաջնորդէր ձնաղէր ընտէղ մտրակ 'ի կուշտ
Հասանել դըրպաղաքամէջն . այլ սիրելիքն առհասարակ
Ողբաձայն զհետ քայլէին ըղձեալ՝ որպէս 'ի մահ ընթացելոյ ։
Իսկ յորժամ ըստ առապարն եկին նոքա հասանել 'ի դաշտ ,
Յետոյն անդրէն նոքա դարձ արարին՝ որդիք եւ հորք ։
Սոքա չանցին զերեսաց ահեղագոչն Արամազդայ
Յերթալն ընդ դիւրն, եւ տեսեալ՝ յուզեցան խնամքն ընդ ալեւորն ,
Եւ իսկոյն ձայնեալ զորդին իւր սիրելի զՀերմէս՝ ասէ .
Հերմէս, քանզի քեզ հաճոյագոյն է քան այլոց ,
Լինել առն ընկերակից, եւ ում կամիս ես հեշտալուր ,
Արի էջ, եւ զՊրիամոս յաքայեցւոց խոր նաւատորմ
Այնպէս ած, զի տեսցէ եւ մի ոք մի, եւ մի՛ 'մացցէ
Յայլոց դանայեցւոց մինչեւ հասցէ 'ի Պելէխեանն ։
Ասաց զայս, ոչ անսաստեաց Արգոսասպանն պատգամաւորն ,
Եւ կապեաց անդէն 'ղոտիւքն ըղթեւամոյկսն գեղեցիկս ,
Ոսկեղէնս, անեղծականս՝ որ զնա բարձեալ թռուցանէին
Ընդ նայն տարր եւ ընդ անհուն երկիր՝ շնչոյ հողմոյն 'ի զուգ ։
Էառ եւ զգաւազանն՝ իւ արկանէ յաչսըն թըմբիր
Արանց՝ յորոց կամի, եւ զայլս 'ի քնոյն զարթուցանէ .
Զայն 'ի ձեռն առեալ սլանայր հզօրաստուածն Արգոսասպանն ։
Եւ եհաս վաղվաղակի յՀէլլեսպոնտոս եւ 'ի Տրոյա ։
Խաղայր գընայր կերպացեալ 'ի պատանի թագաւորազն
Այն ինչ զեռ հուժկու յորըրանս, ոյր քաղցրանոյշ են ամիք իւր ։
Արդ նոքա իբրեւ վարեալ ըստ մեծն անցին Իլեայ շիրիմ,
Կացուցին ըղջորիսն եւ զերիվարս ըմպել 'ի գետն ,
Զի անկեալ էր յերկիր եւ աղջամուղջ երեկորոյ ։
Այլ 'ի մօտաւոր հայեցեալ նուիրակին՝ ետես զՀերմէս ,
Եւ ձայն 'ի Պրիամոս կոյս արարեալ բարբառեցաւ .
Տես քաջ, Դարդանեանդ . ուշիմ մըտաց հասեալ կան իրք .
Այր տեսանեմ, եւ կարծեմ թէ զմեզ անդէն սատակեսցէ ։
Այլ եկ ծն երիվարօքըս փախիցուք, կամ փարեսցուք
Ըզծընկօքն աղերսահայց, զի ո՛ գիտէ դարձցի յողորմ ։
Զայս ասաց, եւ միտք ծերոյն խռովեալ՝ եղեւ յոյժ սըրտաթափ ,
Ի կարկամ անդամոցն իւր քըստմնեցին խըրշնդայոյն հերք ,
Պակուցեալ եկաց, այլ ինքըն Շահաբերն հուպ մատուցեալ
Զձեռանէ ալեւորին կալեալ եհարց եւ խօսեցաւ .
Իսկ յո՞, հայր, այսպէս զյոլովս եւ ըզջորիս վարեալ զընաս
Յանմահական գիշերի, մինչ այլք նընջեն մահկանացուք ։
Եւ չերկեա՞ր ինչ դու բնաւ յանհաղթագոյն աքայեցւոց .

Որ ոխերիմ Թըշնամիք շուրջանակի զքեւ մածեալ կան .
Յորոց թէ զքեզ ոք տեսցէ յերագագալոց սեաւ գիշերիս
Բարձեալ մթնշաղի կարասի , զի՞նչ լինիցին քո միտք յայնժամ .
Ոչ գոյ ինչ աւագանձն ոք եւ ընկեր քո ծերունւոյդ ,
Ի վանել ըզվրէժագործ ոք ձեռներէց եկեալ յեղեան :
Իսկ ես ոչ ինչ գործեցից քեզ չար , նա զայլս եւս հալածեալ
Մերժեցից 'ի քէն , զի հօրդս սիրելւոյ զքեզ նըմանեմ :
Եւ նըմա պատասխանի Պրիամոս ծերն աստուածանման .
Յիրաւի , սիրուն որդեակ , այդպէս է այդ որպէս ասեսդ .
Բայց եւ ինձ ոք յաստուածոց ունի զձեռ զոշ իւր հովանի ,
Որ այդպիսի ուղեկից ընդառաջել ինձ առաքեաց`
Բարենըշան` իբրու զքեզդ ըղձանչելի յանձն եւ 'ի դէմ .
Իմաստուն ես եւ մըտօք եւ 'ի ծնողաց բարեբախտից :
Եւ նըմա պատասխանի պատգամաւորն Արգոսասպան .
Եւ կարի քաջ , ծերունիդ , զայդ ամենայն արդար ասեր .
Այլ եկ ասա ինձ եւ զայս , եւ պատմեսջիր ճըշմարտութեամբ .
Մինթէ զա՞նձըս բազում եւ պատուականս յղես ուրեք
Առ արս օտարազգիս , զի գէթ դոքին մնասցեն քեզ ողջ .
Կամ թէ լնուցդ ահաբեկ լըքեա՞լ թողուք զԻլիոս սուրբ ,
Զի այր քաջ այնպիսի կորեաւ դընաց` քոյին որդեակ ,
Զի եւ 'ի վայր ինչ ոք չէր քան զաքայեանս 'ի պատերազմ :
Պրիամոս աստուածատիպ ծերն ետ նըմա պատասխանի .
Իսկ դու , քաջդ , ո՞վ իցես , եւ յորպիսի՞ ծնողաց սերեալ ,
Որ զկորուստ հէք որդեկիս գեղեցկապէս ածեր ինձ յուշ :
Պատասխանի ետ նըմա պատգամաբերն Արգոսասպան .
Փորձ առնուս զիմ , ալեւորդ , ըզքաջըն Հեկտոր արկեալ 'ի հարց :
Իմ ըզնա բազում անգամ 'ի փառաշնորհ ասպարիսին
Է իմով աչօք տեսեալ , եւ 'ի նաւացն երթալ վերայ
Կոտորել զարգիացիս 'ի սայրասուր մաշեալ պղընձ .
Հիացեալ կայաք մեք . զի Աքիլլէւս ընդ Ատրիդէս
Ցոխըս մըտեալ` չըտայր թոյլ շահատակել 'ի գուպարած :
Ես նորին եմ պաշտօնեայ , նոյն եւ զիս ած նաւ բարեկերտ .
Ի նորա Միրմիդոնացն եմ , եւ ինձ հայր է Պոլիկտովր
Մեծատուն , իսկ այժմ յեցեալ յալեւորոյթ այդպէս ըստ քեզ :
Են նորա եւ վեց որդիք , եւ ես նըշխին եմ եօթներորդ .
Ընդ նոսին արկեալ վիճակ` ինձ եկն եհաս գալ այսր ըզհետ :
Այժմ 'ի նաւացն 'ի դաշտ եկի , զի եւ վաղիւ ընդ այգս այգուն
Ճակատեսցին զաստանիւդ 'ի մերս խոյակն աքայեցիք .
Քանզի 'նդ նիստն են տաղտկացեալ` կաղակտորք 'ի պատերազմ ,
Եւ ոչ զօրեն թագաւորք աքայեցւոց սանձահարել :
Եւ նըմա պատասխանի` աստուածակերպ ծերըն Պրիամ .
Իսկ արդ ծառայ թէ իցես Պելիածնին Աքիլլէսի ,



Digitized by Google

Օ՛ն ուրեմն առեալ պատմեա ինձ զամենայն ըստ ստուգութեան,
Թէ որդեակն իմ կայցէ առ Նաւուն արդեօք, թէ Աքիլլէս
Ըզնա յօշ յօշ կոտորեալ ընկէց իւրոցըն շանց 'ի գէշ:
Ետ նըմա պատուիրակն Արգոսասպան պատասխանի.
Ոչ կերան, ով ծերունիդ, դեռ եւս ըզնա շունք եւ ոչ հաւք,
Այլ անկեալ նոյնպէս դընի առ Աքիլլեայ Նաւուն 'ի խորանսն,
Եւ ահա երկոտասան օր է նըմա զի անկեալ կայ,
Ոչ մարմինն նորա ժահի, եւ ոչ որդունք զինքն հարկանեն,
Որ սովորին են զայրս ուտել ըզխողխողեալըն յԱրէսէ:
Արդարեւ ըզդամբանաւ սիրեցելոյ իւր ընկերին
Անողորմ ածէ ըզնա 'նդ քարշ՝ յաստուածեղէն լուսոյն ծագել,
Սակայն ոչ ապականէ. եկեալ քեզէն իսկ զարմասջիր
Զիարդ առոյգ փափկամորթ դընի լուացեալ յապաժուժէն,
Եւ ոչ իւիք ինչ աղտեղեալ. կցեալ եւ վէրքըն բովանդակ,
Որչափ ինչ խոցեցաւ, զի շատք ըզգէնսն հարին 'ի նա:
Այսպէս դիցն երջանկաւէտք հոգ խնամոյ տանին որդւոյդ
Եւս եւ յետ մահուն իւրոյ, զի սիրելի սըրտից է յոյժ:
Զայս ասաց, եւ ցընծացեալ պատասխանի ետ ալեւորն.
Ո՛վ որդեակ, անշուշտ բարի է անմահից նուիրել ձօնս.
Զի եւ ոչ ուրեք երբեք՝ մինչ 'ի միջի էր որդին իմ՝
Մոռացօնս արար ըզդիս, որոց կայեանք են յՈլիմպոս,
Յիշեցին զինքն յայն աղագս եւ 'ի մահու ճակատագրին:
Այլ արդ եկ ընկալ յինէն զգեղեցկադրոշ բաժակըս զայս,
Պահեա զանձն իմ եւ տարեալ առաջնորդեա ինձ աստուածովքըն,
Ի խորան Պելիածնին մինչեւ երթեալ եղէց ժամանն:
Ետ նըմա պատուիրակն Արգոսասպան պատասխանի.
Ըզպատանիս փորձես, ծեր. այլ 'ի բանի չարասցես զիս,
Որ զպարգեւսըդ ընդունել դաղտ յԱքիլլեայ զիս ըստիպես:
Երկընչիմ ես 'ի նմանէն, եւ զնա զըրկել սիրտս յոյժ զըղջայ,
Գուցէ չար ինչ յիմ գլուխ յառաջիկայդ եկանիցէ:
Բայց ես քեզ առաջնորդ մինչեւ 'ի մեծն Արգոս գնայի
Մըտադիւր 'ի նաւ երագ կամ հետիոտս ուղեկցելով.
Եւ ոչ ընդ քեզ՝ զառաջնորդդ անգոսնելով՝ մարտընչէր ոք:
Ասաց եւ հեծաւ 'ի կառսն եւ յերիվարսըն Շահապետն,
Եւ անդէն զերասանակսն եւ ըզմըտրակն 'ի ձեռս առեալ
Զօրութիւն եռանդնալից շընչեաց 'ի ձիսն եւ 'ի ջորիս:
Մինչ 'ի մարտկոցըս նաւացն եւ 'ի փոսին հասին պարկէն,
Դեռ եւս անդ ըզբաղեալ կային զընթրեօք գիշերապահք.
Եարկ քուն զամենեքումբք պատգամաւորն Արգոսասպան,
Եբաց փութանակի զդուրսն եւ պարզեաց ըզփականս,
Եւ եմոյծ ըզՊրիամոս եւ զօրս 'ի սայլըն ընծայք շըքեղ:
Իսկ 'ի վրանն կերեւ հասեալ Պելիածնին 'ի բարձրաշուք՝

Զոր կանգնեալ եւ կառուցեալ Մերմիդոնացն էր արքայի,
Յաշեալ զեղեւնափայտս, եւ 'ի վերուստ յարկեալ ըզնա
Հարեալ ամենս 'ի գաւառաց մարգագետնոյ զօրս հընձեցին.
Եւ անդստանակ չերտափակ 'ի կուռ խուցից շուրջ ըզնովաւ
Կազմեցին արքային, եւ եղեւնեայ նիգ մի եւեթ
Գընդէր ըզդուրսն. երեք յայլոց աքայեցւոց փակէին զայն,
Եւ երեք բանային ըզմեծայաղթ զդրանցըն աղխակ,
Իսկ ինքն Աքիլլէւս եւ միայնակ զայն արկանէր:
Զոր եւ յայնժամ Հերմէս օգտամատոյց՝ երաց ծերոյն,
Եւ ըզպերճ ընծայսն եմոյծ երագաւոյն Պելիածնի,
Եւ իջեալ 'ի կառաց անտի յերկիր բարբառեցաւ.
Ես, ով ծերունիդ, աստուած անմահ եկի Հերմէս,
Քանզի Հայրըն առաքեաց զիս ուղեկից քեզ առաջնորդ.
Բայց արդ ես գնացից 'ի բաց եւ ոչ մտանեմ յաչս Աքիլլեայ,
Զի անպատեհ իսկ էր՝ յայտ յանդիման զայս օրինակ
Անմահի աստուածոյ 'նդ մահկանացուս սիրելութիւն:
Իսկ մտեալ քո եւ զծընկաց Պելիածնին բռնեալն հարեալ՝
Պաղատեսցիր յանուն հօր եւ մօր իւրոյ վարսագեղ
Եւ յանուն որդւոյն իւրոյ, զի շարժեսցես ըզսիրտ նորա:
Զայս խօսեալ՝ մեկնեցաւ գընաց Հերմէս բարձր յՈղիմպոս,
Եւ Պրիամոս 'ի կառաց անտի վազեալ էջ 'ի գետին,
Թողեալ անդ զԻդէոս՝ որ կայր ունէր զձիսն եւ զջորիս:
Ծերն ուղիղ 'ի տունն եմուտ՝ ուր սիրելին Արամազդայ
Նըստեալ կայր Աքիլլէւս, եւ անդ 'ի ներքս ըզնա եգիտ:
Նըստէին ընկերքըն ուրոյն, իսկ առ նըմա երկուք եւեթ՝
Դիւցազն Աւտոմեդոն եւ Ալկիմոս արիական ազատ՝
Ի սպասու նըմա կային, որ այն ինչ էր զճաշն աւարտեալ
Ուտելոյ եւ ըմպելոյ, եւ դեռ սեղանն առաջի կայր:
Ծածկեցաւ 'ի նոցանէ Պրիամոս մեծն 'ի մըտանելն,
Եւ մատուցեալ բռնեաց եհար յԱքիլլի ծունկս, եւ համբուրեաց
Զահեղ ձեռսն արիւնահեղս, որդւոց իւրոց յոգունց դահիճս:
Որպէս ծանր եթէ զըմբաղ ըմբըռնէ զայր՝ որ յիւր գաւառ
Ըսպանեալ զայր ոք՝ գաղթեալ գընայ յերկիր յայլ աստանդեմ
Ի տուն առըն ճոխի, եւ 'ի տեսողան անկանի ահ,
Նոյն զարմացաւ Աքիլլէւս 'ի Պրիամոս վեհին տեսիլ.
Հիացեալ կային եւ այլք, եւ ընդ միմեանս ակնարկէին:
Բայց առ նա Պրիամոս աղերսալից արձակեաց ձայն.
Յիշեսջիր ըզհայրըն քո, դիւցազնըմանդ Աքիլլէւս,
Յայն հասակ՝ յորում եւ եսս՝ առ դըժնեայ սեամս զառամութեան:
Եւ ըզնա գուցեն թերեւս որ ըզնովաւ շուրջ են՝ նեղեն,
Եւ ոչ ոք զըլանիք զերծեալ եւ զժանտըն փարատել,
Այլ սակայն՝ նորա զանէ լըւեալ ըզքո կենդանութիւն՝

Խընդրայ 'ի սրբութն, եւ սկին ոտնի զոր սանձնայն
Տեառնն ընդոծելի որդին դարձեալ 'ի Տրոյիս ։
Իսկ եւ Թեսաղոնայեցւոյս՝ արիական որդւոց ծընող
Ի լոյս Տրոյա՝ կարծեմ եւ ոչ զոք 'ի նոցունց թողեալ նշխար ։
Ցնծանաւորք էին նոն՝ մինչ աքայեանց եկին մանկունք ․
Իմնուստան 'ի մէջոջէ միայնոյ էր նոն արգանդէ,
Եւ զայլսն՝ այլ եւ այլ ծընան կանայք նոն յապարանս ։
Ըզբազմաց 'ի նոցանէն եւրջ ընծունկաղն բուռն Արէս,
Իսկ որ էրն նոն միակ, եւ պահպանէր զքաղաքս եւ զմեզ,
Դու զնա զերեն սպան պաշտէր ընդհայրենեաց մեքամարտելն
Ըզհեկտորս, զոր վասն ես եկեալ կամ այժմ 'ի նաւս աքայեցւոց՝
Գործառնութեան առնել 'ի քէն, անթիւ բերեալ քեզ փրկանակս ։
Աղէ ածի ած, Աքիլլեւս, 'ի դէց՝ եւ յիս ինձն ողորմեա,
Ըզքո հայրդ յուշ ածեալ․ իսկ եւ քան զնա եմ չուառագոյն,
Զի կրեցի՝ զոր ոչ ոք այլ յերկրակեցից մահկանացուաց,
Մինչ զի դնեմ արդեխոյշ առն 'ի բերան մատուցանել ։
Զայս ասաց, եւ զարտասուաց շարժեաց 'ի նա զհօրէն փղձկանս,
Որ կալեալ ըզձեռանէն մերժեաց ըզծերն յանձնէն մեղմով ։
Ուշ 'ի կուրծս ածեալ նոցա, սրտմո Հեկտոր մարդասպանն,
Ցորդանհաս լայր արտասուք թաւալեալ յառս Աքիլլեւի,
Իսկ Աքիլլեւս լայր զհայր հայր, ուրեք երբեք եւ զՊատրոկլոս ․
Եւ նոցա կականալից ողբմունք ընդ յարկաղն հնչէցին ։
Բայց զի եցաղն Աքիլլեւս, յորժամ յագեցաւ սա 'ի կոծոյն
Եւ փըղձուկն 'ի սրբունէն եւ յերանացն թափեցաւ,
Ցարեաւ անդէն յաթոռոյն, կարկառ ըզձեռն եւ զծերն յարոյց,
Գըթացեալ յալեւս գըլխոյն եւ 'ի մօրուսն ալեւորեալ,
Եւ ձայնեալ՝ երագաթեւ բարբառեցաւ առ նա բանիւք ․
Ա՜յ հէք, արդարեւ բազում վըշտաց տարար 'ի սիրտ ․
Ի՞բր իշխեցեր գալ միայն 'ի նաւատորմս աքայեցւոց
Առաջի առն որ ըզքո բազում որդիս քաջակորովս
Ցարեաւէ արիւն ․ քո երկաթի է սիրտ անշուշտ ։
Այլ եկ նիստ 'ի գահոյս ․ եւ զցաւըս մեր 'ի [illegible]
Ի հողոջ թողցուք ցածնուլ, թէպէտ եւ յոյժ խցեալք տըրտմեալ․
Զի եւ չիք ինչ օգուտ յանհագնեալ եղեն ողբարանաց ․
Զայս դէց հիւթեալ թըշուառական մահկանացուաց ճակատագիր՝
Զի կեցցեն ալեխոհութեամբ, նոքա միայն են անտրտում ։
Զի անդ առ սեամս Արամազդայ կըրկին եդեալ կան կարասք
Տըրոցըն զոր բաշխէ, մինն չարեաց, միւսն բարեաց ։
Ում խառնեալ տայցէ ումեք ինչ Արամազդ փայլակնաձգաւորն,
Ի ուրեք զի չարի պատահէ նա, է զի բարւոյ,
Իսկ ում տայցէ 'ի ժանտից, կացուցանէ վըշտակըրեալ,
Ըզնա դըժնեայ աղետաւորանք ըսկէն յերկիր կենսածաղիկ,



Digitized by Google

Մոլորի անպատիւ առ աստուածոց եւ մահացուաց։
Այսպէս եւստան դիք եւ Պեղեայ շքեղ պարգեւս 'ի ծննդենէն՝
Զարդարեալ քան զամենայն մարդիկ փառօք եւ մեծութեամբ,
Եւ տիրեաց Միրմիդոնաց. եւ աստուածն մահկանացուին
Արարին զաստուածուհի. համայն եւ այնպէս եւ նմա
Հրամայեաց աստուած չարիս, զի զաւակաց նմա սերունդ
Ոչ եկաց 'ի տան իւրում՝ պայազատել զիշխանութիւնն.
Այլ մի եւեթ որդի ծնաւ 'ի տարաժամ սահմանեալ մահ։
Եւ ոչ զալեա իւր խնամեմ, զի յոյժ բացեալ յիմ աշխարհէն
Աստ նստեալ կամ 'ի Տրովա՝ քեզ եւ մանկանց քոց պատուհաս։
Եւ զքեզ լսեմք, ծեր, ընչաւէտ լեալ յառաջագոյն,
Եւ զոր Լեսբոս 'ի վերոյ, Մակարայ գահն, յինքն ամփոփէ,
Եւ զոր վերին Փռիւգիա եւ Հելլեսպոնտ անեզրական,
Զքեզ ծերունիդ ճոխութեամբ նոցին ւորդւովք լեալ բարգաւաճ։
Բայց 'ի քեզ յորմէհետէ զայս երկնաւորքն ածին հարուած,
Զոստանիւ քով հանապազ պատերազմունք են եւ արիւնք։
Ժոյժ կալջիր, եւ մի անդուլ ողբովք սրդար 'ի սրտի քում,
Քանզի ոչ ինչ շահեսցիս աշխարհելով զորդին քո քաջ,
Եւ ոչ զինքն յարուսցես, նա եւ քեզ այլ ինչ հասցէ չար։
Եւ նմա պատասխանի Պրիամոս ծերն աստուածանման.
Մի՛ յաթոռ զիս հրաւիրեր, դիւցազնդ, մինչդեռ Հեկտոր
Կայ 'ի վրանս անկեալ անթաղ, այլ դարձո յիս փութանակի,
Զի տեսցեն աչք իմ 'ի նա, եւ դու զբազում փրկանս ընկալ
Զոր բերեալ եմք առ քեզ. վայելեսցես դու 'ի նոսին
Եւ յերկիր հարց քոց հասցես, զի խնայեցեր յիս միանգամ
Կենդանի մնալ եւ զլոյս արեգականն տեսանել։
Հայեցեալ 'ի նա խեթիւ՝ ասէ քաջոտն Աքիլլեւս.
Մի՛ եւս, ծեր, դրդռեր զիս. եւ ես ինքնին 'ի մտի ունիմ
Արձակել քեզ զՀեկտոր. մայրն իմ առ իս, որ զիս երկնեաց,
Դուստրն ծերոյն ծովայնոյ, յԱրամազդայ եկեր պատգամ։
Խելամուտ եմ, Պրիամէ, եւ զքեզ, եւ չէ յինէն զանխուլ
Թէ 'ի դից ոք ըզքեզ յաքայեցւոցս ած յերագ նաւս։
Զի չիշխէր ոք 'ի ճամբարս եւ քաջատոյգ մահկանացու
Մուտ առնել, զի եւ ոչ ըզպահապանս անցանէր ինչ,
Եւ ոչ դիւրաւ ինչ մղեալ բանայր ըզնիգս դրանց մերոց։
Վասն որոյ՝ մի եւս 'ի յոյզ ցաւոց ըզսիրտ իմ ամբոխեր,
Գուցէ քեզ եւս, ալեւոր, լուծեալ զպատուէրն Արամազդայ,
Նեղեցից ոչ 'ի վրանիս, չառեալ ինչ ակն ողորմին։
Զայս ասաց. եւ զարհուրեալ ծերոյն՝ հլու եղեւ բանիցն։
Իսկ Պեղեանն իբրեւ առիւծ վազեաց 'ի դուրս, ոչ միայնակ,
Ընդ նմա եղանէին եւ երկոքին սպասաւորք,
Դիւցազն Աւտոմեդոն եւ Ալկիմոս, զորս յոյժ պատուէր

Աքիլլեւս քան զայլ ընկերս յետ Պատրոկլի մեռանելոյ։
Ի լծոյն յայնժամ սոքա լուծին զջորիսն եւ զերիվարս,
Եւ ածեալ տարան 'ի ներքս ընդքաջաձայն քարոզ ծերոյն,
Եւ յաթոռ նըստուցեալ՝ ելեալ հանեին յողորկ սայլէն
Զհեկտորեան գըլխոյն անբաւ փրկանս, երկուս թողեալ ըզփիկս,
Եւ շապիկ մի նըրբանիւթ ծածկոյթ դիոյն՝ տանել 'ի տուն։
Եւ զաղախնայս կոչեալ՝ պատուէր ետ լուանալ եւ օծանել
Առանձինն ուրեք՝ զի մի տեսցէ զորդին իւր Պրիամոս,
Գուցէ առ ցաւըս սրտին չբերեալ զայրուցս յորդւոյն տեսիլ,
Եւ յուզեալ անդ Աքիլլեայ սիրային սիրտ՝ ըզնա սպանեալ
Մեղիցէ 'ի հրաման պատուիրանին Արամազդայ։
Արդ աղախնայց լուացեալ եւ օծանեալ ըզնա իւղով
Ըզշապիկըն զգեցեին եւ ըզլօդիկն արկեալ զիւրեւ,
Աքիլլեւս ապա ինքնին տարեալ ըզնա եդ յանկողին.
Ձեռն եւ ընկերըքըն առեալ՝ բարձեալ եդին յողորկ յողնակն։
Ապա յոգւոց եհան կարդաց յանուանէ զիւր սիրուն ընկեր.
Ընդ իս մի, Պատրոկլէ, սրտմտեսցիս՝ թէ լսիցես
Անդ 'ի տան Դըժոխոց՝ զի փրկեցի զդիւցազն Հեկտոր
Հօր իւրում սիրելւոյ, զի ոչ զըձուձ ինչ ետ փրկանս,
Յորոց որչափ եւ արժանն իցէ հանից եւ քեզ բաժին։
Ասաց դիւցազն Աքիլլեւս եւ 'ի խորանն անդրէն մըտեալ
Եւ նըստեալ 'ի նոյն բազմոց ճարտարարուեստ, ուստի յարեաւն,
Յորմայեցն 'ի հանդիպոյ, բարբառեցաւ առ Պրիամոս.
Որդին քո, ծերունի, ահա փրկեալ է'սա հրամանիդ,
Եւ դընի յանկողինս, եւ յերեւել առաւօտուն
Տեսցես եւ դու եւ տարցիս. մեզ արդ ընթրիք լինիցին յուշ։
Զի ճաշոյ խորհամ կալաւ եւ Նիոբէ գիսակագեղ,
Եւ սակայն երկոտասան 'ի տան իւրում կորեան զաւակք,
Վեցեքին դըստերք նորա եւ վեց ուստերք յարութեան տիս.
Ըզդոսա սպան Ապողոն յարծաթաձոյլ աղեղանէն՝
Սրտմտեալ ընդ Նիոբէ, զայնս Արտեմիս նետաձըգուարձ,
Զի կարծէր Լետոյայ գեղեցկայարին զանձն հաւասար,
Նա երկուս, ասէր, ծընաւ, իմ յոգնաթիւ եղեն ծընունդք.
Այլ նոքա, թէպէտ երկուք, բայց կորուսին զամենեսեան։
Աւուրս ինն անկեալ դնէին յարեան իւրեանց, չէր որ թաղէր.
Քանզի էր Զըրուանեանն ըզժողովուրդն յեղեալ 'ի վէմ,
Եւ զնոսա 'ի տասն աւուրըն թաղեցին դիք երկնաւորք։
Արդ եւ սա յարտասուացըն պարտասեալ՝ յիշեաց ըզճաշ։
Իսկ այժմիկ 'ի ծերպս ուրեք յամայաբնակ լերանցամէջս,
Ի Սիպիլ՝ ուր զօթեւանս աստուածուհեաց ասեն լինել՝
Ըզջարանցն որ խաղային զԱքելոյեաւ պարաւորակք,
Անդանոր, թէպէտ եւ վէմ, զաստուածառաք ճաշակէ ցաւս։

Ե՛կ, ծերունիդ աստուածակերպ, եւ ընթրեաց հոգ տարցուք եւ մեք,
Վերըստին ապա դարձեալ լացցես զորդիդ քո սիրելի՝
Յիլիոն տարեալ ընդ իս, եւ քեզ ողբոց լիցի արդիւնք :
Ասաց ժիրն Աքիլլէս, եւ յարուցեալ անդէն եղեն
Օդի մի սպիտակ, զոր եւ ընկերքն մորթեցին,
Հանդերձեցին ըստ օրինի եւ յօշեցին ճարտարապէս,
Շամփրեալ եւ խորովեալ խնամով 'ի բոց տային ողջոյն :
Զհացն 'ի խանձս գեղեցիկս տարեալ բաշխեաց Աւտոմեդոն
Ի սեղան անդր, իսկ զմիսսն բաժանեաց Աքիլլէս .
Ի խորտիկսն պատրաստեալս տային՝ ձեռն արկին նոքա :
Իսկ յորժամ զըմպելեաց եւ զկերակրոց հարին փափաքս ,
Դարդանեանըն Պրիամոս ընդ Աքիլլէս զարմանայր
Թէ որքան սոսկալի՛, զի նման էր դից յայտ յանդիմանն .
Իսկ Աքիլլէս զարմանայր ընդ Դարդանեանըն Պրիամոս
Զգուշացեալ 'ի դէմս ազնիւ եւ ըզբարբառ նորին լըւեալ :
Եւ 'ի տեսիլ երկոցունց մինչ յագեցան հայել միմեանց ,
Կանխեալ ծերըն Պրիամոս աստուածատիպ ասէ առ նա .
Վաղվաղայն արդ յանկողինս տարջիր զիս, դիւցազնածնունդ ,
Զի ննջեալ վայելեսցուք քաղցր եւ անուշ քնոյն հեշտութեամբ :
Զի 'նդ խնամ արտեւանունք ոչ փակեցան աչաց իմ երբեք
Յորմէհետէ քոյդ ձեռամբ կորոյս որդեակն իմ զկեանս .
Այլ հեծեմ հանապազ եւ 'ի բիւր վշտաց տառապիմ՝
Յորմածի անդ գաւթիս ընդ աղբախառն թաւալելով .
Այժմ ուտեցայն հաց կերեալ, եւ զանապակն սեւորակ
Ընդ որկորս տարաբերի՝ չեւ ճաշակեալ յառաջագոյն :
Ասաց, հրաման ընկերացն եւ աղախնանց ետ Աքիլլէս
Ի գաւիթս անդ զանկողինսն յարդարել, եւ արկանել
Ծիրանի չքնաղ ամոցս, եւ 'ի վերայ սփռել պաստառս ,
Դնել եւ պատմուճանս թաւամործս 'ի վերուստ :
Զահ 'ի ձեռին աղախնայք յարկէ անտի ելին արտաքս ,
Եւ ըսպաս հարեալ անդէն փոյթ անկողինս արկին երկուս :
Երագոտն Աքիլլէս ասէ առ նա յայնժամ ընդ խաղ .
Արտաքոյ ննջեսջիր, սիրելի ծեր, զուցէ գայցէ
Այսըր ոք յաւագանւոյն որ յանձնայն ժամ ընդ ինեւ
Ի խորհուրդ մըտանեն արկեալ աթոռս՝ ըստ օրինի .
Ի նոցունց թէ ոք ըզքեզ տեսցէ 'նդ երագ եւ թուխ գիշերս ,
Անսիցէ լուր նոյնհետայն յԱգամեմնոն հովուին ազանց ,
Եւ փրկանաց մեկնելոյդ լինի թերեւըս յապաղումն :
Այլ ո՛ն եկ ասա զաւ ցիս, եւ յայտ արա ստոյգ զըստուգաւ ,
Քանի՞ աւուրըս խորհիս 'ի յուղարկել զըգանձն Հեկտոր ,
Զի եւ ես մնացից յայնժամ, եւ արգելից զըզօրաժողովն :
Եւ նըմա պատասխանի Պրիամոս ծերըն աստուածատիպ .

Թէ զՀեկտորի քաջին կամիս ընդդիմահանդէս լինել կատարել,
Զայդ մյապէս արարեալ՝ ինձ, Աքիլլէս, հաստատեալես ճորհ:
Զի գիտես որպէս փակեալ կամք յոստանիս, եւ փայլուն հեռի,
Զոր բերել է 'ի լեռնէն, եւ արտաքոյք երկիւղէն յոյժ:
Առուրս յինն երեակ՝ արտասուօք կոծ 'ի վերայ իւր ·
Թաղեսցուք 'ի տասին, եւ հաց ազգոյ ժողովքն տացեն:
Ցարուսցուք 'ի վերայ նորա շիրիմ 'ի մետասանն,
Եւ ապա, թէ հարկ իցէ, յերկոտասաներորդն կռուեսցուք:
Եւ երագոտն Աքիլլէս դիւցազն առ նա պատասխանի ·
Լիցի քեզ, ծերունիդ Պրիամ, եւ այդ ըստ բանից քոց,
Մինչ յոր ժամ պատուիրեցեր՝ ըմբռնեսցից ընդպատերազմ:
Ասացեալ զայս՝ կալաւ զաջեւոյն ընձեռան ալոյ
Բուռն հարեալ ընդդաստակէն, զի յանձն իւր մի երկիցէ ինչ:
Արդ սոքա յանդաստակս անդ խորանին միջոյն 'ի քուն
Նուիրակն եւ Պրիամոս՝ իմաստնախոհք 'ի միտս իւրեանց ·
Իսկ յանկուց կողմն Աքիլլէս ննջեաց վրանին բարեկերտ,
Եւ առ իւր՝ չքնաղագեղեցիկ Բրիսէիս ընկողմնեցաւ:
Արդ այլք աստուածքն՝ դիք եւ որեար ձիամարտիկ
Ննջէին ընդ գիշերն 'ի քուն հեշտ եւ փափուկ քնով պարտեալք ·
Այլ 'ի Հերմէս Շահաբերս չանկաւ ինչ նիրհ, կայր մտածող
Ի խորհուրդս իւր թէ զիարդ ընդթագաւորն Պրիամոս
Ի սրբազանից բարեպաշտաց դարձուցէ զաղտ յետս 'ի նաւուցն:
Եկն եկաց 'ի սնարիցն եւ զայս առ նա բարբառեցաւ ·
Զերկեղէ ինչ չէ քեզ փոյթ, ով ծերունդ, զի դեռ քնանես
Ընդ արանց ոսոխաց, զի թողացոյց քեզ Աքիլլէս:
Այլ արդ զորդին քո սիրելի՝ տուեալ բազում ինչ՝ փրկեցեր ·
Իսկ ընդ քո կենաց երեքս այնչափ տայցեն ընծայս փոխան
Որդեակքդ մնացեալք ընդ կին քո, թէ զլուր առցէ
Ատրիդէսն Ագամեմնոն, եւ լուր լիցի բոլոր աքեայեանց:
Զայս ասաց · զարհուրեցաւ ծերն եւ յարոյց զնուիրակն ·
Եւ Հերմէս զերիվարսն եւ զջորիս նոցին լծեաց ·
Եւ ձեռամբ ընդ ճամբարն ինքնին վարեալ՝ չգիտաց ինչ ոք:
Բայց յորժամ երթեալ հասին գեղածփանակ գետոյն 'ի հուն՝
Ցորձանուտն Քսանթոսի՝ զոր Արամազդ ծնեալ անմահ,
Մեկնեցաւ այնուհետեւ Հերմէս յերկայնն եւ Ողիմպոս:
Արշալոյսն քրքմազգեստ տարածեցաւ ընդ աշխարհս,
Եւ նոքին՝ ողբ 'ի բերան հեծեծելով վարեցին զձիս,
Զորս ընդ քեն ածէին, եւ ոչ ոք այլ կանխաճանաչն
Զզաստ եղեւ՝ ոչ յարանց, ոչ 'ի կանանց գեղադիմեաց,
Բայց միայն Կասանդրէ՝ ոսկեղինիկ Աստղկան զոյգ,
Որ ելեալ 'ի Պերգամոն դղեակն՝ ծանեաւ զսիրելին հայր՝
Զի յաթոռն կայր կառացն, եւ ընդքաղաքն տասնանձայն,



Digitized by Google

Իսկ ըղձա՝ եռես անկեալ ընդ անկողինս 'ի յոյնակէն .
Եւ անդէն ճիչ առեալ ընդ ամենայն գուժեաց ստամանն .
Ելէք աւաղք , արտմագացիք եւ արտմուհիք , ըղձեկտոր ,
Թէ երբեք կենդանեաւն ընդ պարծելումն 'ի ճակատէ
Հըրճուեցայք , զի քաղաքիս եւ ամբոխին ցընծումն էր մեծ ։
Զայս ասաց , ոչ ոք մընայ 'ի քաղաքին , ոչ այր , ոչ կին ,
Զի սուգ անտանելի զամենեսեան եհաս կալաւ ,
Եւ առ դուրսըն կուտեցան առ որ ըղձլին ածեալ բերէր ։
Փետեցան նախ ըղձնովաւ սիրելի կինն եւ արգոյ մայր
Յարձակեալք յանուանհոլովն սայլն եւ կալեալ ըղձլուխ նորա ,
Եւ ժողով ամբոխին աշխար եդեալ շուրջ պար առնոյր ։
Անէրկծիտ զօրըն ցերեկ մինչեւ 'ի մուտս արեգական
Կոծէին ըղձեկտոր արտօսրագոչ առաջի դրանցն ,
Եթէ չէր ձայն 'ի կառաց բարձեալ ծերոյն առ ժողովուրդն .
Ինձ տեղի տուք մըտանել դրաստուցս , ապա յետ այնորիկ
Յագեսջիք յողբ լալումեան յորժամ տարեալ հանից 'ի տուն ։
Զայս ասաց , եւ նոքա մեկնեալ տեղի ետուն սայլին ։
Իսկ ինքեանք իբրեւ ածեալ մուծին 'ի յարկսըն հոյակապ ,
Ի դըրօշածոյս եդին մահիճս , եւ կացուցին մերձ ձայնարկուս
Սկըզբնապար լալեաց՝ որ երգըս քըքուանաց ողբանըւագս
Հանեալ կոծ մեծ ջայլէին , ելանէին կանայք յոգւոց ։
Լուսածըլին Անդրոմաքէ յողբումն ըսկիզբն արար նոցա
Զմարդասպանն Հեկտորի առեալ 'ի մէջ Թաթիցն ըղձլուխ .
Ո՛հ այր , 'ի ծաղկընձիւղ հասակ կենացըդ զըատեցար ,
Զիս այրի թողեալ 'ի տան , եւ որդիս դեռ տըղայ մանուկ ,
Զոր ծընաքըս դու եւ ես թըշուառականքս , եւ ոչ յուսամ
Թէ յարբունս հասանիցէ , զի նախ քաղաքըս սատակի .
Քանզի կորեար այցելուդ , որ եւ ըղձա պահպանէիր
Եւ զպարկեշտ ամուսինս եւ զմանկըտեակ մատաղերամ ։
Արդ նոքա վարեսցին ընդ հուպ գերի գոգեալ նաւուք ,
Եւ ես անշուշտ ընդ նոսա , իսկ դու՝ զաւակ իմ՝ կամ ընդ իս
Եկեսցես անդր՝ ուր յանարժան տառապեսցիս երկոց երկուէն
Վաստակեալ առաջն ժանտի , եւ կամ թէ ոք յաքայեցւոց
Բուռն 'ի քեզ հարեալ արկցէ յաշտարակէն , մահ դըժընդակ ,
Առ քինալ , քանզի զեղբայր նորա սպանեալ է Հեկտորի ,
Կամ ըղձայրն եւ կամ զորդին , զի յոյժ բազումք յաքայեցեաց
Ի բազկէն Հեկտորի զանեզըր յատակ խածին կեաւեռք .
Զի ոչ թէ մեղկ ինչ ոք էր 'ի կարեւոր մարտի՝ քո հայր ,
Վասն որոյ՝ եւ ժողովուրդքըդ աշխարհին զինքն ընդ սատանես ։
Հասուցեր եւ ծընողաց քոց սուգ եւ կոծ անպատմելի ,
Ա՛յ Հեկտոր , ինձ մանաւանդ թանձեալ պահէին դառնանթոյն ցաւք .
Զի առ իս 'ի մեռանելդ ոչ կարկառեր ձեռս յանկողնոյդ ,



Digitized by Google

Եւ ոչ բան մ' ինձ իմաստուն աւանդեցեր՝ զոր յիշէի
Միշտ ըզցայգ եւ ըզցերեկ հանապազօր արտօսրալից :
Զայս ասաց լալագին, եւ կից կանանցն հեծէին ձայնք.
Ընդ նոսին եւ Հեկաբէ աղի ողբոց ըսկիզբն արար.
Հեկտոր, իմում սրտիս քան զամենայն որդիս սիրուն.
Մինչ էիր ընդ ինձ կենդանի, աստուծոց եւ դից սիրուն էիր,
Որ եղեն խնամոտք առ քեզ եւ 'ի մահու ճակատագրին :
Զի զայլս յորդւոցս 'ի վաճառ հանէր քաջոտանըն Աքիլլէս,
Զոր գամ մի ձերբակալն առնէր, յայնկոյս անդէր ծովու՝
Ի Սամոս եւ յԻմբրոս եւ 'ի Լեմնոս անդր անմատոյց.
Իսկ ըզքեզ, երկայնաշեղբ յորժամ պղնձով կորզեաց զոգիդ,
Ած ընդ քարշ բազում անգամ ըզգամբարանաւ ընկերակցին,
Պատրոկլի՝ զոր սպաներ, այլ ոչ այնիւ յարոյց ըզնա :
Եւ զարդիս փափկամորթն մատաղածին զինս 'ի տան
Հանգոյն այնմ զոր ըսպան արծաթաղեղնըն Ապոլոն
Եկեալ հասեալ յանկարծաթափ նետիւք իւրովք աղուականօք :
Զայս ասաց գեր գործելով, եւ զարթոյց կոծ անդադրական.
Ի նոսին ապա երրորդ՝ ողբոց ըսկիզբն ա՛ռ Հելէնէ.
Հեկտոր, 'ի տայգերացս իմոց սրտիս սէրս սիրելի.
Այր է իմ ապաքէն Աղեքսանդրոս աստուածադէմ
Որ առ ած զիս 'ի Տրոյա. յանկարծ յառաջ կորընչէի.
Զի ահա քսաներորդ է այս տարի այժմ աւասիկ
Ցորմէհետէ անջատեալ 'ի բնաշխարհէս եկի անդուստ,
Բայց երբեք ոչ լուայ 'ի քէն բան խիստ եւ կամ ըստգիւտ.
Նա թէ եւ այլ ոք 'ի տայգերց, կամ գեղաշուք տալ ոք կամ ներ
Կամ սկեսուրս, — քանզի սկեսրայս միշտ էր ըստ հօր ներողամիտ, —
Կըշտամբէր ինչ զիս 'ի տան, դու քաղցրութեամբ եւ հեզ բանիւք
Սանձէիր ըզնա խրատելով. վասն որոյ զքեզ, համայն եւ զիս
Արտասուեմ զթըշուառականս, հարեալ ցաւովք սիրտ կարեվէր.
Քանզի չէք 'ի Տրոյա լայնածաւալ այլ ոք ընդ իս
Մարդասէր եւ բարեկամ. ամենեքին քաշքէին յինէն :
Զայս ասաց ողբաձայնիւ, եւ զհետ քըքջուէր ամբոխ անբաւ :
Աղեւորըն Պրիամոս առ ժողովուրդն ասէ ապա.
Արդ ածէք, տրոյացիք, փայտ 'ի քաղաքս, եւ մի՛ խիթայք
Դաւ ինչ գաղտ յարգիւացուց. զի յարձակեւն Աքիլլեայ զիս
Ի սեւաթոյր նաւէններոյն՝ այսպէս եղեւ զայս խոստովան,
Մի խըւել ինչ մինչեւ յեկս երկոտասան Առաւօտուն :
Զայս ասաց, նոքա ջորիս ուեղինս 'ի սայլսն լըծեցին,
Եւ երթեալ յանդիման աստանին գունդ եղեն ճեպով :
Զաւուրս ինն ածեալ սոցա դիզեալ անչափ փայտակոյտ,
Լուսաբեր մահկանացուաց մինչ տասներորդ ծագեցաւ Այգ,
Զարին յայնժամ ըզՀեկտոր բարձեալ հանին արտօսրաթոր,



Digitized by Google

Եւ 'ի ծագ խառնուկին եղեալ դղխակներն հարքն հուր ։

Եւ յորժամ այգածնիցն փարդաւանան եւ Արուսեակ,
Ժողովուրդն ըղձեկաւորք մեհեին հրաւիրումն գումարեալ,
Եւ եղեալ միահամուռ եւ խուռներամ կայտառք 'ի խումբս,
Շիջուցին նախ 'ի գլխոյ Թըլխատեանակ գեղարդին ողջոյն
Զօրութիւն հըրոյն ցոլմայր ածեալ կալեալ էր բովանդակ .
Եղբարք առաջ եւ ընկերք հաւաքէին աշխատակ գործերան
Ողբալիք, եւ ընդ ծընօտովն քամէին յորդ արտասուք ։
Եւ առեալ արկին զնոսա 'ի տապանակ մի ոսկեղէն,
Ծիրանեղէն փափկագոյն ըղջազարկեալ նըւարտանքը .
Եւ անդէն վաղվաղակի համբուրեցեալ զայն 'ի գուբ մի խոր,
Ի վերոյ ստուարակտուրեալ խիճ առ խիճ մինեւ հարեալ յատակ,
Զհողակոյտ հեղին շիրմին . շուրջանակի նըստեին գեղոյք,
Գուցէ կամեցեալ բարձրացեալ յարձակեալ նըզոյգեցին ։
Կարկառեալ զհողաբլուր շիրմին՝ անդրէն առաքին զարմ,
Անկանեալ առաջ խնամով աւէն արդոյ Դիոս հայեցեալ
Յառաջարանողն Գրիգորիոս զիմաստնոյն Թադէոսի ։
Հեկտորի ձիավարժականին այսպէս նորա առաս հարքին Թաղմանն ։

798

# ՎԱԽՃԱՆ

| ԵՋ | ՏՈՂ | ՎՐԻՊԱԿՔ | ՈՒՂՂԵԼԻՔ |
|---|---|---|---|
| 69 | 35 | խըղուըրութիւն | խըղճուըրութիւն |
| 96 | 29 | սկրունդ | սերունդ |
| 211 | 32 | Գոլիպպեանէս | Գոլլիպպիանէս |
| 221 | 23 | զպղըձասըմբակ | զպղընձասըմբակ |
| 209 — 240 | | Դէլփոյ, Դէլփոյայոս, Տէլփոյ | Դէլփոք, Դէլփոքայոս, Դէլփոք |
| 240 | 11 | Գոլիփփեանէս | Գոլլիպպեանէս |
| 254 | 7 | ալըմըրանեալ | ալըրամըրանեալ |
| 275 | 6 | զՄենալիպպոս | զՄելանիպպոս |

Bayerische
Staatsbibliothek
München

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google



Digitized by Google

Digitized by Google